



ԱՄԱՅԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԵ
ԵՎ ՆԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

ПЕРВАЯ МИРОВАЯ ВОЙНА И
АРМЯНСКИЙ НАРОД
ИСТОРИЯ И АКТУАЛЬНЫЕ ПРОБЛЕМЫ

WORLD WAR I AND
THE ARMENIAN PEOPLE
HISTORY AND ACTUAL PROBLEMS

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴՄԻԱ
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
NATIONAL ACADEMY SCIENCES OF THE REPUBLIC OF ARMENIA

Միջազգային գիտաժողով

ԱՄԱՅԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԵ ԵՎ ՆԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

1-2 ՆՕԿՏԵՄԲԵՐԻ, 2014 Թ.

ՉԵԿՈՒՅՈՒՄՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Международная конференция

**ПЕРВАЯ МИРОВАЯ ВОЙНА И
АРМЯНСКИЙ НАРОД**
ИСТОРИЯ И АКТУАЛЬНЫЕ ПРОБЛЕМЫ

1-2 ОКТЯБРЯ 2014 г.

СБОРНИК ДОКЛАДОВ

International Conference

WORLD WAR I AND THE ARMENIAN PEOPLE
HISTORY AND ACTUAL PROBLEMS

1-2 OCTOBER, 2014

COLLECTION OF PAPERS

Երևան
Ереван
Yerevan

2015

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ
«ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԸ ԵՎ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ
(ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ)»
1-2 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ, 2014 թ.

ԶԵԿՈՒՑՈՒՄՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

МЕЖДУНАРОДНАЯ КОНФЕРЕНЦИЯ
“ПЕРВАЯ МИРОВАЯ ВОЙНА И АРМЯНСКИЙ НАРОД
(ИСТОРИЯ И АКТУАЛЬНЫЕ ПРОБЛЕМЫ)”
1-2 ОКТЯБРЯ 2014 г.

СБОРНИК ДОКЛАДОВ

NATIONAL ACADEMY OF SCIENCES
OF THE REPUBLIC OF ARMENIA

INTERNATIONAL CONFERENCE
“THE FIRST WORLD WAR AND THE ARMENIANS.
(HISTORY AND ACTUAL PROBLEMS)”
1-2 OCTOBER, 2014

COLLECTION OF PAPERS

ԵՐԵՎԱՆ – 2015

ՀՏԴ
ԳՄԴ

ԶԵԿՈՒՑՈՒՄՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒՆ ՏՊԱԳՐՎՈՒՄ Է ՀՀ ԳԱԱ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՂ
ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈՎԱՆԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ

Խմբագիր՝ Ա. Մարուքյան

«Առաջին աշխարհամարտը և հայ ժողովուրդը (պատմություն և արդիական խնդիրներ)» միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու.– Եր., ՀՀ ԳԱԱ պատմ. ինստ., 2015.– 334 էջ:

Ժողովածուում ընդգրկված են 2014 թ. հոկտեմբերի 1-2-ին ՀՀ ԳԱԱ կայացած «Առաջին աշխարհամարտը և հայ ժողովուրդը (պատմություն և արդիական խնդիրներ)» միջազգային գիտաժողովի նյութերը:

Նախատեսված է Առաջին աշխարհամարտի ու Հայոց ցեղասպանության պատմության հարցերով հետաքրքրվող ընթերցող լայն հասարակայնության համար:

ՀՏԴ
ԳՄԴ

ISBN

ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ

ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏ – ՀԱՅՈՑ ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹՅՈՒՆ.

ՊԱՏՃԱՌՆԵՐ ԵՎ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ

Առաջին համաշխարհային պատերազմի 100-ամյակի բոլորման կապակցությամբ համայն մարդկությունը, մասնավորապես, հանրության գիտական և քաղաքական շրջանակներն առանձնակի հետաքրքրություն են ցուցաբերում խնդրի նկատմամբ: Ամենուր տեղի են ունենում զանազան միջոցառումներ, հրավիրվում են միջազգային գիտաժողովներ, ցուցադրվում են փաստավավերագրական ֆիլմեր: Նման հետաքրքրությունը պայմանավորված է ոչ միայն իրադարձության դարաբոլոր դառնալու հանգամանքով, այլև երկիր մոլորակի վրա մարդկության հետ տեղի ունեցած այդ աննախադեպ ծավալային ողբերգության իրողությունից դասեր քաղելու, Երկրորդ աշխարհամարտի կրկնության առեղծվածը խորությամբ հասկանալու և համանման նոր արհավիրքներից խուսափելու մտահոգությամբ: Այդ մտահոգություններն ավելի օրախնդիր են դառնում այսօր, երբ աշխարհը, հազիվ ձերբազատված սառը պատերազմի պայթույնավտանգ ժամանակներից, կրկին վերադառնում է Արևմուտք-Արևելք հակամարտության վտանգավոր դաշտ, կանգնում քաղաքակիրթ աշխարհ – իսլամական արմատականություն անխուսափելի բախման իրողության առջև:

Բնականաբար, հարյուրամյա հեռավորությունից յուրաքանչյուր ժողովուրդ ու երկիր փորձում է անհրաժեշտ հետևություններ անել իր համար, մշակել սեփական մարտավարություն ու ռազմավարություն, խուսափել կործանարար հետևանքների կրկնությունից:

Առաջին համաշխարհային պատերազմի մասին ստեղծված ահռելի գրականության մեջ հատուկ ուշադրություն է հատկացված աշխար-

համարտի պատճառների վերհանման խնդրին: Հանրահայտ է, որ Եվրոպայում ձևավորված Անտանտի (Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա և Ռուսաստան) ռազմաքաղաքական խմբավորման գլխավոր նպատակը՝ ունեցած լայնածավալ գաղութային տարածքները պահպանելն ու ընդարձակելն էր, իսկ աշխարհի բաժանումից ուշացած Եռյակ (ապա՝ Քառյակ) դաշինքի երկրներինը (Գերմանիա, Ավստրո-Հունգարիա, Բուլղարիա, Օսմանյան կայսրություն)՝ վերոհիշյալ ախտյան կայսրությունների թուլացումն ու նրանց գաղութներին տիրելը:

Աշխարհի գերտերությունների շահերի բախման կիզակետում էին հայտնվել երկրագնդի գրեթե բոլոր տարածաշրջանները: Այդ էր պատճառը, որ աշխարհամարտն ընդգրկեց լայն աշխարհագրություն, թեպետ գլխավոր թատերաբեմ մնաց Եվրոպան: Տերությունների շահերի բախման հարթակ էր նաև Փոքր Ասիա-Արևմտյան Հայաստան-Հյուսիսային Իրան-Անդրկովկաս տարածաշրջանը: Այստեղ առավել սրույթամբ ի հայտ էին գալիս Օսմանյան կայսրության ու Ռուսաստանի շահերը: Հստակ շահեր ունեին նաև Մեծ Բրիտանիան, Գերմանիան և այլ երկրներ:

Այս տարածաշրջանում Անտանտի երկրներն իրենց ծրագրերը վերջնականապես համաձայնեցրին 1916 թ. Մայքս-Պիկոյի համաձայնագրով: Դաշնակից երկրները՝ Անգլիան ու Ֆրանսիան սովեցին իրենց համաձայնությունը, որ Արևմտյան Հայաստանը, սևծովյան նեղուցները պատերազմից հետո անցնեն Ռուսական կայսրությանը: Օսմանյան կայսրության նպատակն էր տեղ դառնալ Անդրկովկասին, Հյուսիսային Իրանին, Կովկասին և դուրս գալ Միջին Ասիա, Մերձվոլգյան շրջաններ՝ կյանքի կոչելով դեռևս սուլթան Համիդ II-ի ժամանակներից պաշտոնական գաղափարախոսություն դարձած համաթյուրքականությունը՝ պանթյուրքիզմը: Հատկանշական է, որ ոչ բոլոր երիտթյուրք պարագլուխներն էին, որ կողմ էին Թուրքիայի մասնակցությանը պատերազմին և հանդես էին գալիս չեզոքություն պահպանելու կոչերով: Դրանց մեջ էր նաև Պաղեստինյան ճակատի հրամանատար, Հայոց ցեղասպանության ծրագրի հեղինակներից մեկը՝ Ջեմալ փաշան: Գերմանական

^{*} Ջեկուցումն առաջին անգամ տպագրվել է «Պատմաբանասիրական հանդես»-ի 2015 թ. N 1-ում:

խմբավորման կազմում պատերազմին Թուրքիայի մասնակցության ամենամոլի կողմնակիցը ռազմական նախարար Էնվեր փաշան էր, որի տեսակետն էլ ի վերջո հաղթանակեց, և Օսմանյան կայսրությունը 1914-ի աշնանը մտավ պատերազմի մեջ: Դրա առիթը դարձավ գերմանական «Գեբեն» ու «Բրեսլաու» ռազմանավերի մուտքը սևծովյան նավահանգիստներ, որը նշանակում էր Բարձր դռան կողմից իր իսկ հայտարարած չեզոքության խախտում: Թուրքերի կողմից Սև ծովի ռուսաստանյան նավահանգիստների ռմաբակոծումն էլ դարձավ Ռուսաստանի կողմից Թուրքիային պատերազմ հայտարարելու առիթ: Այսպես 1914-ի հոկտեմբերի վերջին ձևավորվեց Առաջին աշխարհահամարտի Կովկասյան ճակատը:

XIX դարի սկզբից ի վեր սա հերթական հինգերորդ ռուս-թուրքական Կովկասյան ճակատն էր: Մատնանշենք, որ սկսած 1806–1812 թվականների ռուս-թուրքական պատերազմից, այս ճակատում ռուսական կողմը միշտ մղել է արյունալի մարտեր և, որպես կանոն, հետագա բոլոր պատերազմներում (1828–1829, 1853–1856, 1877–1878) ևս տարել միայն հաղթանակներ, հայերի ամենագործուն մասնակցությամբ գրավել Արևմտյան Հայաստանի տարածքները: Բայց բոլոր պատերազմներում ռուսական արքունիքն այդ հաղթանակներն օգտագործել է օսմանցիների հետ շահավետ պայմանագիր կնքելու համար և միշտ տարածքների ձեռքբերման հարցում նախապատվությունը տվել Բալկանյան ճակատին. այն է՝ Հունաստանի, Բուլղարիայի և այլ երկրների խնդիրներին, 1853–1856 թթ.՝ Ղրիմի հարցերին: Արդյունքում ռուսական զորքերի կողմից գրավված Արևմտյան Հայաստանի գավառները դարձել են սակարկության առարկա. հաճախ վերադարձվել թուրքերին, հանգամանք, որը ռուսներին օգնած արևմտահայությանը կանգնեցրել է օսմանյան վրեժխնդրության իրական վտանգի առջև, հարկադրել տասնյակ հազարավոր հայերի ռուսական բանակի հետ հեռանալու Արևելյան Հայաստան և ռուսապատկան այլ շրջաններ:

Ներկա պատերազմում հայության վիճակն ավելի բարդ էր: Նախորդ պատերազմներում օսմանյան բանակին հայերի զինվորագրման

խնդիր չկար, քանի որ պաշտոնապես նպրանք ազատված էին զինծառայությունից: Այժմ հայությունը գործ ուներ «ժողովրդավար» թուրքական պետության հետ, որտեղ բոլոր ազգությունները հռչակվել էին կայսրության իրավահավասար ժողովուրդներ և հետևապես, պարտավոր էին կատարելու իրենց զինվորական պարտքը երկրի նկատմամբ ու մտնելու բանակ: Ավելին՝ պատերազմի նախօրյակին ներքին գործերի նախարար Թալեաթ փաշան պաշտոնապես դիմել էր Էրզրումում տեղի ունեցած ՀՅԴ ութերորդ ընդհանուր ժողովին՝ առաջարկելով սպասվելիք պատերազմում սատարել իրենց՝ նույնիսկ ակնարկելով Արևելյան Հայաստանը գրավելու դեպքում, այնտեղ հայերին տալ ինքնավարություն: Ջավեշտալի է, որ իր հերթին հասունացող պատերազմում հայերի աջակցությունը ստանալու նպատակով Կովկասի փոխարքա Ի. Վորոնցով-Դաշկովի խորհրդով 1914 թ. սեպտեմբերի վերջին հայ ժողովրդին ուղղված հատուկ դիմումով հանդես էր եկել ռուսական ցար Նիկոլայ II-ը: Ընդ որում՝ այդ դիմումը ռուսական կողմից որոշ մարդիկ ներկայացնում էին՝ Արևմտյան Հայաստանը գրավելուց հետո ռուսական կայսեր կողմից հայերի համար այնտեղ ինքնավար պետություն ստեղծելու խոստում:

Ինչպես երևում է, հայությունը կանգնած էր շատ ավելի բարդ իրավիճակի առջև, քան նախորդ բոլոր ռուս-թուրքական պատերազմներում: Ռուսների կողմում հանդես գալը, առավել ևս զինվորական ծառայությունից խուսափելը բացահայտ կնշանակելը ձեռնոց նետել օսմանյան իշխանություններին և առիթ տալ հայկական կոտորածների համար: Միաժամանակ, երկուստեք զինծառայությունից խույս տալը հավասարագոր էր իրենց երկրների նկատմամբ քաղաքացիական պարտքը կատարելուց հրաժարվելուն և ամենևին չէր նշանակում չեզոքության պահպանում: Բայց միաժամանակ, կողմերից մեկի բանակներին զինվորագրվելը, անկասկած, հակառակորդի կողմից ընկալվելու էր կամ ավելի ճիշտ՝ ներկայացվելու էր որպես դավաճանական քայլ:

Համանման պայմաններում հայ քաղաքական ուժերի մեծ մասը կարծում էր, որ թերևս ամենաճիշտ քայլը իրենց քաղաքացիական

պարտքի կատարումն է և ընդհանուր կարգով համապատասխան զինուժեր գորակոչվելը՝ ձեռնպահ մնալով ազգային կամավորական ջոկատների ստեղծումից: Արևմտահայությունը հիմնականում առաջնորդվեց այդ սկզբունքով և շուրջ 300 հազար զինվորականներով համալրեց օսմանյան բանակը: 250 հազար արևելահայեր էլ զինվորագրվեցին ռուսական բանակին: Շատերը, հայտնվելով Վորոնցով-Դաշկովի լարած ցանցի մեջ, ոգևորված ձեռնամուխ եղան նաև հայկական կամավորական ջոկատների ստեղծմանը, հանգամանք, որն անմիջապես օգտագործվեց երիտթուրքերի կողմից՝ մահմեդական բնակչությանը հայերի դեմ գրգռելու և ուղղորդելու համար:

Այստեղ տրամաբանորեն ծագում է Հայոց մեծ եղեռնի հարցում՝ կամավորական շարժման պատճառ լինելու խնդիրը: Ինչպես հայտնի է, թուրքական պատմագրությունն ու քաղաքական շրջանակները հայկական կոտորածների գլխավոր պատճառ մատնանշում են հենց այդ փաստը՝ հայերին ներկայացնելով դավաճաններ, ապստամբներ, կայսրությունը ներսից պայթեցնելուն հակված ուժեր: Մակայն այս շինծու թեզը շատ հեշտ հերքվում է, երբ ուսումնասիրողները բացահայտում են երիտթուրքերի համաթուրքական ծրագրերը, որոնց ակունքները ձգվում էին դեռ սուլթան Համիդ II-ի ժամանակները և վերջնականապես փաստաթղթային ձևակերպում էին ստացել 1911 թ. Մալոնիկում կայացած երիտթուրքերի համագումարում: Հայերին բնաջնջելու վերաբերյալ ընդունված որոշման մեջ հստակ ասվում էր, որ կայսրության «անհարազատ տարրը» ոչնչացնելու ծրագրի կենսագործման համար պատերազմը կլինի ամենահարմար ժամանակը: Այնպես որ՝ պատերազմը միայն առիթ էր վաղուց իսկ կազմված ծրագիրը կյանքի կոչելու համար:

Ժամանակի բազմաթիվ հեղինակների վկայությամբ՝ դեռ մինչև պատերազմը օսմանյան հասարակությունը տենդագին ձևով նախապատրաստվում էր հայկական ջարդերին: Ավելին՝ երիտթուրք պարագլուխների մի մասն անհամբերությամբ սպասում էր ռազմական գործողությունների սկսմանը՝ հայ երիտասարդներին բանակ գորակոչելու, ապա զինաթափելու և դավաճանության մեղադրանքով գնդակահարե-

լու համար: Աղբյուրների վկայությամբ՝ աշխարհամարտի նախօրյակին ամենուր զգացվում էր թուրքերի թշնամական վերաբերմունքը. կասկած չէր մնում, որ պատերազմի դեպքում հայերի ջարդն անխուսափելի է: Այնպես որ, ավելորդ են բոլոր այն ուսումնասիրողների ջանքերը, ովքեր ցեղասպանության մեջ փորձում են գտնել նաև մեր մեղքի բաժինը: Բայց դրանից ամենևին չի հետևում, որ եթե մենք չէինք կարող խուսափել Մեծ եղեռնից, չէինք էլ կարող զանգվածաբար զենքի դիմել և ունենալ անհամեմատ ավելի քիչ զոհեր:

Չանդրադառնանք կովկասյան ճակատում ռազմական գործողությունների մանրամասներին: Միայն նշենք, որ 1914 թ. նոյեմբերին Կարսի մարզի տարածքում անհաջողություններ ունենալուց հետո Սարիղամիշի հաղթական ճակատամարտով (1914 թ. դեկտեմբերի 9-ից մինչև 1915 թ. հունվարի 5-ը) սկսվեց ռուսական զորքերի հաղթարշավը, որոնք հայկական կամավորական ջոկատների գործուն մասնակցությամբ գրավեցին Վանը, Էրզրումը, Բիթլիսը, Մուշը, Տրապիզոնը և 1916 թ. ամռանը հասան Երզնկա ու Կամախ: Ռուսները Կովկասյան ճակատում երբևէ չէին ունեցել նման հաջողություններ: Փաստերի մանրագին ուսումնասիրությունը բերում է այն համոզման, որ ռազմական գործողությունները վարելիս պատերազմական կողմերը բացարձակապես հաշվի չէին առնում հայերի շահերը, հանգամանք, որն օսմանյան իշխանություններին հնարավորություն էր տալիս անարգել իրագործելու Հայոց ցեղասպանության և հայերի հայրենագրկման դիվային ծրագիրը:

Մասնագետներն Առաջին աշխարհամարտում մարդկության ունեցած կորուստների վերաբերյալ զանազան հաշվարկներ են անում: Առավել ընդունված տեսակետն այն է, որ պատերազմում զոհվել է ավելի քան 20,5 միլիոն մարդ, որից շուրջ 10 միլիոնը՝ ռազմի դաշտում: 10,5 միլիոն զոհերը խաղաղ բնակիչներն են: Վիրավորվել և հաշմանդամ է դարձել մոտ 18,3 միլիոն մարդ: Նյութական կորուստները հաշվվում են հարյուրավոր միլիարդներով: Անտանտի երկրներից զոհվել է 5,6 միլիոն զինվորական և մոտ 8 միլիոն խաղաղ բնակիչ, Եռյակ դաշինքի երկրներից՝ 4,4 միլիոն զինվորական և 3,4 միլիոն խաղաղ բնակիչ: Այ-

սինքն՝ պատերազմը տանուլ տված Գերմանական խմբավորման կորուստների մեջ 3,4 մլն խաղաղ բնակիչներից 2,8 միլիոնը վերաբերում է Օսմանյան կայսրությանը: Դրա մեծ մասը բաժին է ընկել կայսրության քրիստոնյա ժողովուրդներին՝ 1,5 միլիոն հայերին, 500–800 հազարը՝ ասորիներին, 100–350 հազարը՝ հույներին: Նշանակում է բնակչության թվաքանակի համեմատությամբ ոչ մի ժողովուրդ չի ունեցել այնպիսի կորուստներ, ինչպիսին հայությունը: Այստեղ մատնանշենք նաև այն հանգամանքը, որ թեպետ պատերազմի ընթացքում Օսմանյան կայսրության տարածքի մի զգալի մասը ռազմակալվել է Անտանտի երկրների զորքերի կողմից, այդուհանդերձ, մահմեդական բնակչությունը քրիստոնյաների համեմատությամբ ունեցել է չնչին կորուստներ: Հետևապես սին են թուրք քաղաքական ու «գիտական» շրջանակների այն պնդումները, թե տերության բոլոր ժողովուրդները, այդ թվում՝ թուրքերը պատերազմի ընթացքում հավասարապես կրել են մեծ կորուստներ:

Պատերազմը հատկապես աղետալի հետևանքներ է ունեցել Ռուսական կայսրության, Գերմանիայի և Ֆրանսիայի համար: Համապատասխանաբար, նրանք ունեցել են մոտ 2,7 միլիոն, 2,4 միլիոն և 1,4 միլիոն զոհ: Եթե հաշվի առնենք, որ պատերազմի ընթացքում Գերմանիայի և Ֆրանսիայի տարածքների մի մասը բռնազավթվել է հակառակորդի կողմից, իսկ Ռուսաստանի տարածքը մասնակիորեն է ռազմակալվել, ապա պարզ է դառնում, որ ռուս մասնագետների այն պնդումը, թե Ռուսաստանի բնակչությունը եղել է թնդանոթային միս, լիովին համապատասխանում է իրականությանը: Դա այն դեպքում, երբ բոլշևիկյան հեղաշրջման հետևանքով Ռուսական կայսրությունը հնարավորություն չի ունեցել ոչ միայն օգտվելու պատերազմի հաղթանակի պտուղներից, այլև Բրեստ-Լիտովսկի հաշտության պատճառով կրել է տարածքային կորուստներ: Համեմատության կարգով նշենք, որ եթե Առաջին աշխարհամարտից Արևմուտքի երկրները, մասնավորապես Ֆրանսիան, Մեծ Բրիտանիան, նույնիսկ Գերմանիան, որ հայտնվեցին գրեթե նույն վիճակում, ինչպես նախորդ պատերազմում, դասեր քաղեցին և Երկրորդ աշխարհամարտում ունեցան համեմատաբար ավելի նվազ կորուստ-

ներ: Չմոռանանք, որ վերջին պատերազմի մասշտաբներն անհամեմատ մեծ էին ու աղետալի: Այսպես՝ Մեծ Բրիտանիան առաջին աշխարհամարտում կորցրեց 702 հազար քաղաքացի, Երկրորդում՝ 378 հազար (որից 280 հազարը՝ մարտի դաշտում), Ֆրանսիան՝ 2,4 միլիոնի փոխարեն՝ 665 հազար, որից խաղաղ բնակիչներ՝ 412 հազարը: Նշանակում է Ֆրանսիայի դեպքում կորուստները կազմեցին չորս անգամ ավելի պակաս, մոտ կրկնակի՝ Անգլիայի դեպքում: Հիշենք, որ Մեծ Բրիտանիան Երկրորդ աշխարհամարտում ենթարկվել էր պատմության մեջ իր նախադեպը չունեցող օդային ամենասարսափելի ռմբակոծությանը: Համեմատության դեպքում պարզ է դառնում, թե ինչու ԽՍՀՄ-ի արևմտյան դաշնակիցները, առաջին հերթին՝ վարչապետ Ուիստոն Չերչիլն ուշացնում էին Երկրորդ ճակատի բացումը՝ այն ձգձգելով մինչև 1944 թ. հունիսի 6-ը:

Խնդիրն ավելի հստակ է դառնում, երբ փորձում ես վերլուծել ԽՍՀՄ-ի կորուստները՝ դրանք բաղադրելով Առաջին աշխարհամարտի տվյալների հետ: Այսպես՝ 1939–1945 թթ. ԽՍՀՄ կորուստները կազմեցին 29 միլիոնից մինչև 32,5 միլիոն (այս թվաքանակի մեջ ներառված են նաև բռնադատվածները, ռմբակոծություններից զոհվածները, սովամահ եղածները, համակենտրոնացման ճամբարներում մահացածները և մարտի դաշտում զոհված 6,5 միլիոն քաղաքացիները):

Հայ ժողովուրդը, որ այդ պատերազմի սանձազերծմանը որևէ մասնակցություն չունեց, վերոհիշյալ տվյալների համեմատության դեպքում միանշանակ ներկայանում է որպես այդ պատերազմի գլխավոր զոհ, հանգամանք, որը, ցավոք, ստեղծված ահռելի գրականության մեջ հիմնականում շրջանցված է:

Խոսելով պատերազմի մասին՝ կարևոր է անդրադառնալ նաև հետպատերազմյան շրջանում ստեղծված աշխարհաքաղաքական նոր իրողություններին: Հաղթանակած Անտանտի երկրներն աշխարհին պարտադրեցին իրենց մշակած Վերսալ-վաշինգտոնյան համակարգը: 1920 թ. այդ համակարգի մեջ փաստորեն ընդգրկվեցին նաև դաշնակից Հայաստանի Հանրապետության շահերը: Շատ կարևոր է իմանալ, որ Սև-

րի դաշնագրով, ապա՝ վիլսոնյան իրավարար վճռով Հայաստանին տրվում էին հողային այնպիսի սահմաններ, մասնավորապես՝ ելք դեպի Սև ծով, որով ցեղասպանության ենթարկված ժողովուրդը ստանում էր կենսագոյության ու զարգացման հնարավորություններ: Մակայն ցավոք, քաղաքական հանգամանքների բերումով, այդ ծրագիրը մնաց թղթի վրա: Բայց այն, այնուամենայնիվ, մնաց անկատար միջազգային իրավական գեոնի վրա, չեղյալ չհայտարարվեց ստորագրած երկրների կողմից: Այնպես որ, Առաջին համաշխարհային պատերազմից մնացած ամենաձանր հետևանքներից մեկը՝ Հայոց ցեղասպանության ու հայրենագրկման խնդիրը առ այսօր բաց է և իր իրավական լուծումը պետք է գտնի ճիշտ այնպես, ինչպես Երկրորդ աշխարհամարտից հետո՝ հրեական հարցը: Այս խնդիրն էլ պետք է դառնա մեր գործելակերպի ողնաշարը՝ Հայոց մեծ եղեռնի 100-րդ տարելիցի նախօրյակին:

АШОТ МЕЛКОНЯН

Институт истории НАН РА

ПЕРВАЯ МИРОВАЯ ВОЙНА – ГЕНОЦИД АРМЯН: ПРИЧИНЫ И ПОСЛЕДСТВИЯ

Особенный интерес мировой общественности к проблемам, связанным с Первой мировой войной, обусловлен не только 100-летием этого события, но и тем, что были извлечены уроки из беспрецедентной по масштабности трагедии человечества XX века и поняты причины Второй мировой войны.

Сформированный в конце октября 1914 г. Кавказский фронт Первой мировой войны был очередным, пятым русско-турецким фронтом, начиная с начала XIX в. Здесь Россия при активном участии армян захватывала территорию Западной Армении. Однако российское руководство часто использовало эти победы в целях подписания выгодных договоров с османцами, всегда отдавая предпочтение завоеванным на Балканском

фронте территориям. В ходе войны армянские политические деятели, предполагая, что с помощью русских станет возможным освобождение Западной Армении, создали восемь добровольческих отрядов. Это обстоятельство было использовано османскими властями для разжигания ненависти мусульман по отношению к армянам и реализации заранее спланированной программы Геноцида армян. Война имела катастрофические последствия особенно для Российской империи, Германии и Франции. Однако армянский народ, не принимавший никакого участия в развязывании войны, однозначно является основной жертвой – обстоятельство, которое, к сожалению, в существующей обширной научной литературе в основном упущено.

ASHOT MELKONYAN

Institute of History of NAS RA

THE FIRST WORLD WAR AND THE ARMENIAN GENOCIDE: REASONS AND CONSEQUENCES

International community shows huge interest on the 100th anniversary of the First World War. This is not only due to the fact that a whole century has passed from this event, but lessons have been learned from this unprecedented scale of human tragedy of the 20th century, and the concept of causality of World War II, too.

Since the beginning of the 19th century the Caucasian front of the First World War has been the fifth Russian-Turkish one, formed at the end of October, 1914. Here Russia with the active participation of the Armenians captured the territory of Western Armenia. However, the Russian leadership has often used these victories for the purpose of signing lucrative contracts with the Ottomans, always giving preference to the conquered territories on the Balkan front. During this war the Armenian political figures created eight volunteer corps, suggesting that with the help of the Russians the liberation of Western Armenia will be possible. This fact was used by the Ottoman authorities to incite hatred of Muslims against the Armenians, and

implementation of pre-planned program of the Armenian genocide. That war had disastrous consequences particularly for the Russian Empire, Germany and France. However, the Armenians who had no connection with the unleashing of the war are clearly the main victims. It is a circumstance that in the existing extensive literature is mostly being overlooked which can be stated with great regret.

ԳԵՂԱՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ

ՀԱՅ ԱՅԳԱՅԻՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՔՐ ՀԱՅՔՈՒՄ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՆԱԽՕՐՅԱԿԻՆ (1908-1914 ԹԹ.)

Մինչև 1908 թ. Փոքր Հայքում ազգային կուսակցություններից առավելապես ներկայացված էին հնչակյանները: 1908 թ. հետո Փոքր Հայքում կուսակցական մասնաճյուղերի ստեղծման ուղղությամբ ակտիվ քայլեր կատարեցին նաև դաշնակցությունը, վերակազմված հնչակյանները և նորաստեղծ հայ սահմանադրական-ռամկավար կուսակցությունը:

Կուսակցությունների գործունեությունն ուղղված էր հայ ժողովրդի ազգային-մշակութային ինքնության պահպանմանն ու հայրենասիրական ոգու ամրապնդմանը, ժողովրդին արտագաղթից ետ պահելուն, իսկ բալկանյան պատերազմներից սկսած՝ նաև ինքնապաշտպանության գործի կազմակերպմանը: Սակայն ինչպես այլ վայրերում, այնպես էլ Փոքր Հայքում ազգային-հասարակական կյանքի ղեկավարությունը ստանձնելու միտումով, կուսակցությունները մրցության ու հակամարտության մեջ էին միմյանց հանդեպ: Միջկուսակցական հակամարտության հետ մեկտեղ, այնուամենայնիվ, ազգային կուսակցությունների կողմից քայլեր էին կատարվում նաև համագործակցության ուղղությամբ: Օրինակ, 1909 թ. Փոքր Հայքի հնչակյան և վերակազմված հնչակյան մասնաճյուղերը համերաշխության մասին համաձայնագիր են ստո-

րագրում¹: Պատերազմի նախօրյակին համագործակցում էին Փոքր Հայքի վերակազմված հնչակյան և ՀՅԴ կոմիտեները²:

Դեռևս երիտթուրքերի հեղաշրջման արշալույսին հնչակյան որոշ շրջահայաց գործիչներ կանխատեսում էին այսպես կոչված «նոր ազատությունների» վտանգավոր հետևանքները հայ ժողովրդի համար և զգուշացնում էին հեռու մնալ անժամանակ ոգևորությունից: Դրա վառ օրինակը հնչակյան հայտնի գործիչ Ռուբեն Կարապետյանի (Վահան Պոյաճյան)՝ Կահիրեի հնչակյան մասնաճյուղին ուղղված նամակն էր³: Երիտթուրքական կարգախոսներից ոգևորված՝ շատ հնչակյաններ գտնում էին, որ ստեղծված իրավիճակում նույնիսկ ավերորդ է զբաղվել ինքնապաշտպանության խնդիրներով: Երբ այս հարցով դիմում են Ազատ Ոստանիկին, փորձառու գործիչը պատասխանում է. «Բայց ո՞վ ըստ, որ թուրքը մեկ օրէն միւսը կրցաւ Ազատութեան հերոս դառնալ: ... Բայց եթէ հակառակը պատահի, մենք պատասխանատու կը մնանք պատմութեան առաջ: Վաղը դժբաղդ անակնկալներ կրնան պատահիլ և նոյնիսկ Ժեօն թուրքերէն ոմանք կը դառնան մեր դահիճները: Պետք է հայ ժողովուրդը զինել այդ օրուան համար...»⁴: Հիրավի, մարգարեական խոսքեր էին: Հենց Ազատ Ոստանիկն էլ դարձավ Փոքր Հայքում հնչակյանների ամենաուժեղ կազմակերպության՝ Կեսարիայի մասնաճյուղի ղեկավար գործիչներից մեկը:

ՄԴՀԿ Կեսարիայի մասնաճյուղի պարբերականը «Շեփոր» ամսաթերթն էր, որը հայերենով և հայատառ թուրքերենով նյութեր էր տպագրում ազգային-հասարակական կյանքի մասին⁵:

1912 թ. հիմնվում է Կեսարիայի հնչակյան ուսանողական միությունը, որի օրգանը «Նոր սերունդն» էր Արամ Պետրոսյանի խմբագրությամբ⁶: Կեսարիայի հնչակյանները Ազատ Ոստանիկի գլխավորությամբ

¹ «Կոնակ», Կ.Պոլիս, 1909, թիւ 1, 30 մայիսի:
² **Հայկազ Արամ**, Շապին-Գարահիսար ու իր հերոսամարտը, Նյու-Յորք, 1957, էջ 117:
³ **Ճերեճեան Ե.**, Յաւերժի ճամբու կերտիչներէն, Պէրուք, 2014, էջ 147:
⁴ **Գայֆայան Գ.**, Գիրք ելից հայոց, Պէրուք, 1955, էջ 135:
⁵ ՀԱԱ, ֆ. 408, ց. 1, գ. 87, թ. 1:
⁶ **Ալլայոյաճեան Ա.**, Պատմութիւն հայ Կեսարիոյ, Գահիրէ, 1937, էջ 1273:

Իզմիրից և այլ վայրերից ինքնապաշտպանության համար զենք էին հայթհայթում⁷: Շապին-Գարահիսարի հնչակյան կազմակերպության ստեղծումը կապված է կուսակցության հայտնի գործիչ Արամ Աչըզ-պաշյանի անվան հետ: Նրա ջանքերով ենթակոմիտեններ են ստեղծվում Երզնկայում, Ակնում, Սեբաստիայում, Կամախում, Արաբկիրում, Խարբերդում, Մեծ և Փոքր Արմուտաններում⁸:

Մալաթիայում հնչակյան կազմակերպությունը ստեղծվել էր դեռևս 1890-ական թթ.: Այն կրկին վերականգնվել է 1908 թ. Փարամազի և Վահագն Նալբանդյանի ջանքերով և գործել է մինչև 1915 թ. ապրիլը⁹:

Սեբաստիայի հնչակյան մասնաճյուղի գործունեությունն ակտիվացնելու նպատակով կուսակցության կենտրոնը այստեղ է ուղարկում իր ներկայացուցիչ Ներսես Փիլիկյանին: Վերջինս զգալի աշխատանք է կատարում ինչպես կուսակցության մասնաճյուղի ամրապնդման ու ընդլայնման, այնպես էլ հնչակյանների հեղինակությունն ու ազդեցությունը տեղի հայության շրջանում բարձրացնելու ուղղությամբ¹⁰: Սեբաստիայի հնչակյան մասնաճյուղի օրգանը «Նշորակ» ամսագիրն էր¹¹:

1908 թ. հնչակյան գործիչ Սարգիս Թորոսյանը հիմնադրեց Էվերեկի հնչակյան մասնաճյուղը¹²:

Ատաբազարի մասնաճյուղի հիմնադիրն ու ղեկավարը Անդրանիկ Կենճյանն էր¹³:

Փոքր Հայքի հնչակյան կազմակերպությունները ունեին իրենց սպազիր օրգանները: Ամասիայում դա «Ամասիա» կիսամյա հանդես էր, որը հրատարակվել է 1911-12 թթ. հայերենով և թուրքերենով (օսմաներեն – Գ. Հ.)՝ Մինաս Իփեքճյանի խմբագրությամբ¹⁴:

⁷ Գալֆայան Կ., Գիրք ելից հայոց, Պէրոյթ, 1955, էջ 142:

⁸ Հայկազ Արամ, Շապին-Գարահիսար ու իր հեռուամարտը, Նյու-Յորք, 1957, էջ 98:

⁹ Ալպոյաճեան Ա., Պատմություն Մալաթիոյ հայոց, Պէրոյթ 1961, էջ 875:

¹⁰ ՀԱԱ, ֆ. 408, ց. 1, գ. 14, թ. 1:

¹¹ Նույն տեղում, գ. 94, թ. 1:

¹² «Կոհակ», Կ. Պոլիս, 1911, թիվ 49:

¹³ Կենճեան Ա., Հալաճականի յուղեր (1914-18թթ.) Պէրոյթ, 1964, էջ 6:

¹⁴ Սոցիալ-դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան մամուլը, Պէրոյթ, 1992, էջ 16:

Պարտիզակում լույս էր տեսնում «Պայքար» կիսամյա հանդեսը 1912-14 թթ.¹⁵:

Մարզվանում 1910-12 թթ. հրատարակվում էր «Հայկունի» հանդեսը՝ Գագիկ Օզանյանի խմբագրությամբ, իսկ 1911-14 թթ. «Բողոք» պատկերազարդ կիսամյա հանդեսը¹⁶:

Եվրոկիայում 1910-12 թթ. հրատարակվում էր «Իրիս» կիսամյա հանդեսը՝ Հակոբ Պոյաճյանի և Պետրոս Պոնտացու խմբագրությամբ¹⁷:

Փ. Հայքի հնչակյան կազմակերպությունների հեղինակությունը բարձրացնելու ու գործունեությունն աշխուժացնելու նպատակով 1911 թ. այստեղ է այցելում հայտնի հնչակյան ղեկավար գործիչ և կուսակցության տեսաբան Ստ.Սապահ-Գյուլյանը: Նա շրջում է Ամասիայում, Եվրոկիայում, Մարզվանում, Սեբաստիայում և ամենուրեք հանդես գալիս դասախոսություններով ու ճառերով: Այդ օրերին նա խիստ քննադատում է Իթթիհատի վարած ազգային քաղաքականությունը, արժարժում արևմտահայերի ինքնապաշտպանության նախապատրաստման, Հայաստանի ազատագրության և ինքնավար Հայաստանի խնդիրները¹⁸: Ա.Ալպոյաճյանը Սապահ-Գյուլյանի այդ քայլը իր աշխատության մեջ համարել է «անխոհեմություն»¹⁹: Այնուհանդերձ, արդարացի չէր լինի Սապահ-Գյուլյանի ծավալած գործունեությանը Փ. Հայքում տալ միանշանակ գնահատական:

1908 թ. երիտթուրքերի կողմից օսմանյան սահմանադրության հռչակումից հետո ՀՅԴ-ն փոխեց Արևմտյան Հայաստանի ազատագրության իր ռազմավարությունն ու մարտավարությունը: Մա արտահայտվեց 1909 թ. սեպտեմբերին Վառնայում տեղի ունեցած ՀՅԴ 5-րդ ընդհանուր ժողովում, որտեղ ընդունված հայտարարագրում, մերժելով անջատողականությունը, կուսակցությունը դրեց հայ ժողովրդի ազգա-

¹⁵ Նույն տեղում, էջ 41:

¹⁶ Նույն տեղում, էջ 29:

¹⁷ Նույն տեղում, էջ 25:

¹⁸ Ճիզմեճեան Մ., Պատմութիւն ամերիկահայ քաղաքական կուսակցութեանց (1890-1925թթ.), Ֆրեզնո, 1930, էջ 149:

¹⁹ Ալպոյաճեան Ա., Պատմութիւն Եվրոկիոյ հայոց, Գահիրէ, 1952, էջ 1186:

յին-մշակութային զարգացման խնդիրը²⁰: Անցնելով լեզու գործունեության՝ ՀՅԴ-ն քայլեր ձեռնարկեց Փոքր Հայքում հաստատվելու և ամրապնդվելու ուղղությամբ²¹:

1910-14 թթ. Կեսարիայում հրատարակվում էր տեղի դաշնակցականների օրգան «Հայեկ» թերթը: Նրա խմբագիրը սկզբում Կեսարիայի Միացյալ ուսումնարանի տնօրեն Վահան Քյուրքյանն էր: 1913 թ. «Հայեկի» խմբագիր է դառնում Հ.Դևեյանը, իսկ Քյուրքյանը խմբագրում է «Շեփոր» թերթը²²:

Շապին-Գարահիսարի ՀՅԴ կազմակերպությունը ստեղծվել է դեռևս 1897 թ., երբ օսմանյան բանկի գրավումից հետո Կ.Պոլսից Շապին-Գարահիսար վերադարձան դաշնակցականներ Գրիգոր Վահունին, Նազարեթ Կարմիրյանը, Հաճի Միսաք Օզանյանը և այլք²³:

Մալաթիայի ՀՅԴ կոմիտեն հիմնվել է 1908 թ. դաշնակցական գործիչ Բարսեղ Շահպազի կողմից:

Փոքր Հայքում հայ ազգային կուսակցությունների մեջ Մալաթիայի ՀՅԴ կազմակերպությունը առավել ազդեցիկ էր: Այնուամենայնիվ, դաշնակցականները Մալաթիայում իրենց կուսակցական գործունեության զգալի մասն իրականացնում էին իրենց կողմից հիմնված կրթամշակութային «Մասյաց ընկերության» քողի տակ²⁴: 1909 թ. հունվարին հրատարակվում է «Մասյաց ընկերության» «Ջահ» թերթը²⁵:

Երիտթուրքական հեղաշրջումից հետո ՀՅԴ գործունեությունը ծավալվեց նաև Սեբաստիայում: ՀՅԴ Սեբաստիայի մասնաճյուղը հրատարակում էր «Անդրանիկ» պարբերականը²⁶:

Փոքր Հայքում վերակազմյալ հնչակյան կուսակցության կառույցները ստեղծվեցին այդ կուսակցության կազմավորումից հետո՝ 1898 թ.: Վերակազմյալ հնչակյան ամենաուժեղ կառույցը գտնվում էր Շապին-

²⁰ **Ներսիսեան Ա.**, Հ.Յ.Դաշնակցութեան պատմութիւն, Երևան, 2013, էջ 9:

²¹ **Ալպոյաճեան Ա.**, Պատմութիւն հայ Կեսարիոյ, էջ 1402:

²² Նույն տեղում, էջ 1407:

²³ **Հայկազ Արամ**, նշվ. աշխ., էջ 107:

²⁴ «Պապ ուխտի», Կլիվլենդ, 1936, թիվ 2, էջ 5:

²⁵ **Ալպոյաճեան Ա.**, Պատմութիւն Մալաթիոյ..., էջ 797:

²⁶ Նույն տեղում, էջ 797:

Գարահիսարում: Այն ստեղծվեց 1909 թ. Վահագն Նալբանդյանի կողմից²⁷:

Շապին-Գարահիսարի վերակազմյալ հնչակյան մասնաճյուղի կորիզը կազմում էին մի խումբ հին ու փորձված հայդուկներ և մտավորականներ, ինչպիսին էին Ավագ Տուրիկյանը, Սեփոնիա քահ. Կարինյանը, Գարեգին Կարմիրյանը, Շապուհ Օզանյանը, Հակոբ Բուռնազյանը և ուրիշներ²⁸:

Փոքր Հայքում հայ ազգային կուսակցություններից համեմատաբար թույլ դիրքեր ունեին սահմանադիր-ռամկավարները: Չնայած դրան, սահմանադիր-ռամկավարները որոշակի աշխատանքներ տանում էին Փոքր Հայքում իրենց կուսակցական մասնաճյուղերը ստեղծելու ուղղությամբ²⁹:

Նշված ժամանակաշրջանում հնչակյանների և դաշնակցականների քաղաքական գործունեության տարբերությունը կայանում էր նրանում, որ հնչակյանները որդեգրել էին ընդգծված հակաիթթիհադական դիրքորոշում: ՀՅԴ-ն մինչև 1912 թ. համագործակցում էր Իթթիհադի հետ և ազգային խնդիրները փորձում էր լուծել խորհրդարանական ճանապարհով, իսկ վերջինիս հետ հարաբերությունների խզումից հետո մինչև Առաջին համաշխարհային պատերազմը բացահայտ հանդես չէր գալիս Իթթիհադի դեմ:

Չնայած ազգային կուսակցությունների գործադրած ջանքերին ու ձեռնարկած միջոցառումներին, այնուամենայնիվ, Արևմտյան Հայաստանի, ներառյալ և Փոքր Հայքի հայության ինքնապաշտպանության նախապատրաստման գործը պատշաճ կերպում չիրագործվեց: Դրա պատճառներից մեկը չդադարող միջկուսակցական հակամարտություններն էին, երիտթուրքերի նկատմամբ որդեգրած տարաբնույթ դիրքորոշումը, մյուսը՝ ժողովրդի նկատելի նախապաշարումն ու երկչոտությունը, թուրքական գերակշիռ ուժերի նկատմամբ ունեցած վախը:

²⁷ Հերոսապատում մեծ եղեռնի, Պէրոպ, 1978, էջ 138:

²⁸ **Հայկազ Արամ**, նշվ. աշխ., էջ 114:

²⁹ **Մարգարյան Ս.**, Հայ սահմանադրական-ռամկավար կուսակցություն, Երևան-2009, էջ 81:

Անշուշտ, չպետք է անտեսել նաև հայ ժողովրդի ոչնչացման ուղղությամբ թուրքական իշխանությունների ծրագրված ու հետևողական քաղաքականությունը: Վերլուծելով այս գործոնները՝ Ջոն Կիրակոսյանը գրում էր, որ պատերազմի նախօրյակին հայ ժողովրդի դիմագրավելու ոգին բարձիթողի վիճակում էր, ինքնապաշտպանությունը՝ տապալված: Հայոց քաղաքական նպատակների իմաստը պարզ էր երիտթուրքերին: Թեև ձեռնոց էր նետված թուրքական պետությանը, բայց առանց նախապատրաստության, առանց պայքարի տարրական կանոնների պահպանման³⁰:

Այսպիսին էր հայ հասարակական-քաղաքական կյանքի իրականությունը Փոքր Հայքում Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին:

ГЕГАМ ОГАННИСЯН

Институт истории НАН РА

ДЕЯТЕЛЬНОСТЬ АРМЯНСКИХ НАЦИОНАЛЬНЫХ ПАРТИЙ В МАЛОЙ АРМЕНИИ НАКАНУНЕ ПЕРВОЙ МИРОВОЙ ВОЙНЫ (1908-1914)

В 1908 году после младотурецкого переворота, армянские национальные партии получили возможность легальной деятельности на территории Османской империи. В городах Малой Армении (Малатия, Себастья, Кесария, Евдокия, Шапин-Караисар и др.) восстанавливались ослабевшие партийные организации или создавались новые. В данном регионе исторической Армении более сильные позиции имели партии Гнчакян и Дашнакцутюн. В основном эти партии были движущей силой общественно-политической жизни армян Малой Армении.

³⁰ Կիրակոսյան Ջ., Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, գիրք Ա, Երևան, 1982, էջ 345:

После них шла партия реорганизованных гнчакистов. Конституционные демократы были представлены в малом количестве.

В данный период армянские партии легальным, конституционным путем боролись за сохранение прав, за национальную самобытность и культуру, за поднятие и укрепление патриотического духа армянского народа.

Начавшаяся в 1912 году балканская война подстегнула национальные партии ускорить подготовку мер самообороны армянского народа.

Различие политической деятельности гнчакистов и дашнаков состояло в том, что гнчакисты имели более радикальную позицию, сотрудничали с оппозиционной партией Итилаф, критиковали национальную политику правящей партии Иттихат ве теракки (Единение и прогресс) и выдвигали идею автономной Армении.

Что касается партии Дашнакцутюн, то стоя на позициях защиты национальных интересов армянского народа, она до 1912 года сотрудничала с партией Иттихат, а после разрыва отношений, до начала Первой мировой войны, отошла в оппозицию, но открыто не выступила против нее.

GEGHAM HOVHANNISYAN

Institute of History of NAS RA

THE ACTIVITY OF ARMENIAN NATIONAL POLITICAL PARTIES IN LESSER ARMENIA ON THE EVE OF THE FIRST WORLD WAR (1908-1914)

In 1908 after the revolution of Young Turks Armenian national political parties were given an opportunity to act legally in the territory of the Ottoman Empire. In the cities of Lesser Armenia (Caesarea, Yedovkia,

Malatia, Sebastia, Shapin-Garahisar, etc.) dissolved parties were restored and new parties were established.

Hnchak Party and Dashnak Party were more powerful in Lesser Armenia, later restored Hnchaks and Constitutional Ramkavars were powerful. Armenian national parties were in conflict and struggle against each other for obtaining the control of Armenian political and social life, but they were cooperating with each other for the same matter against local rich class.

In this period the difference of political activity between Hnchaks and Dashnaks was that Hnchaks adopted anti-ittihad position, and presented the idea of Autonomous Armenia. Dashnaks standing in the position of protecting national interests of Armenians, cooperated with Ittihadists till 1912, and they tried to solve national problems in a parliamentary way, and they did not act obviously against the latter after breaking the relations by the beginning of World War I.

ՌՈՒԲԵՆ ՄԱՀԱԿՅԱՆ

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ

ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՌՈՒՍ-ԹՈՒՐԶԱԿԱՆ ՌԱԶՄԱՃԱԿԱՍԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Մարդկությունը ժամանակ առ ժամանակ սկսում է անդրադառնալ ոչ վաղ անցյալում տեղի ունեցած դարակազմիկ իրադարձություններին, ինչպես օրինակ Առաջին համաշխարհային պատերազմին: Պատերազմ, որի ավարտին տեղի ունեցան աշխարհաքաղաքական խոշոր իրադարձություններ և որոնք կտրուկ փոխեցին համաշխարհային պատմության ընթացքում ստեղծված իրադրությունը: Կործանվեցին ու պատմության ասպարեզից վերացան օսմանյան, ավստրո-հունգարական, գերմանական և ռուսական կայսրությունները: Նրանց փոխարեն հիմնվեցին մի քանի տասնյակ պետություններ, որոնցից շատերը կարճ

ժամանակ անց կուլ գնացին նորաստեղծ կայսրությունների կողմից: Մեր օրերում շարունակվում է նման աշխարհաքաղաքական փոփոխությունները, որոնք ընդունում են առավել արմատական տեսք:

Ռուս-թուրքական ռազմաճակատը ժամանակակիցների՝ քաղաքական և զինվորական գործիչների կողմից բնութագրվել է որպես երկրորդական, համաշխարհային պատերազմի ընթացքի վրա ոչ էական ազդեցություն ունեցող ռազմաթատերաբեմ: Հավանաբար, դա էր պատճառը, որ ռուս-թուրքական ճակատում գործող Կովկասյան բանակը միայն 1917 թ. մարտին վերանվանվեց Կովկասյան առանձին բանակի և պաշտոնապես ճանաչվեց որպես առանձին ռազմաճակատ:

Պատմագրության մեջ արմատացել է այն տեսակետը, որ Առաջին համաշխարհային պատերազմի գլխավոր ռազմաճակատը հանդիսացել է Եվրոպականը: Այս տեսակետը շարունակում է գերիշխել նաև ներկա ժամանակներում, չնայած ժամանակ առ ժամանակ լույս են տեսնում հետազոտություններ, որոնք հակառակն են ապացուցում: Այդ տեսակետի համաձայն, գլխավոր և արմատական նշանակություն ունեցող ռազմաճակատը հանդիսացել է ռուս-թուրքական ռազմաճակատը: Ինքնին հասկանալի է, որ պատերազմի տարիներին եղել են ռազմական գործիչներ, հատկապես Ռուսաստանում, որոնք ճգնել են ապացուցել Գերագույն գլխավոր հրամանատարությանը, որ անհրաժեշտ է ակտիվացնել մարտական գործողությունները Օսմանյան կայսրության դեմ, որը հանդիսացել է Քառյակ միության թույլ օղակներից մեկը: Վերջինիս պարտությունից հետո հնարավոր էր ներխուժել Բալկաններ, որից հետո պատերազմից դուրս կգային Բուլղարիան, Ավստրո-Հունգարական բազմազգ կայսրությունը: Այդ ամենի հետևանքով Գերմանիան կզրկվեր հումքից, որի հետևանքով նա ի գործու չէր լինի շարունակել պատերազմը և արդեն 1916 թ. հարկադրված կլիներ դադարեցնել մարտական գործողությունները և մարդկությունը կազատվեր նորանոր կորուստներից: Ցավոք, ինչ-ինչ ուժեր, որոնք հիմնականում գտնվում էին Մեծ Բրիտանիայում, չէին ցանկանում, որպեսզի պատերազմն ավարտվի նման կարճ ժամանակահատվածում, քանի որ ծրագրել էին

փոխել աշխարհաքաղաքական իրադրությունը: Դա էր պատճառներից մեկը, որ ողջ պատերազմի ընթացքում եվրոպական ռազմաբեմում այդքան կորուստներ կրած և պատերազմում վճռական դեր խաղացած Ռուսաստանը շատ արագ «հեղափոխականացվեց» ու ի վերջո բոլշևիկների օգնությամբ հնարավոր եղավ երկիրն արագ դուրս բերել պատերազմից:

Նման անհրաժեշտություն առաջացավ 1917 թ. ապրիլին, երբ պատերազմի մեջ մտան Ամերիկայի Միացյալ Նահանգները և այլևս անհրաժեշտ չէր ռուսական զինուժի մասնակցությունը: Դաշնակիցների կողմից մոռացության մատնվեցին այն ահռելի ջանքերը, որոնք Ռուսաստանը գործադրել էր նրանց վերջնական կործանումից փրկելու համար: Հանրահայտ փաստեր են, երբ ռուսական հրամանատարությունն ի վնաս իրեն մարտի էր նետում զորամասեր, որպեսզի փրկի վերջնական կործանումից բրիտանա-ֆրանսիական բանակները: Այս հանգամանքը, սակայն, որևէ նշանակություն չունեցավ: Բրիտանական դիվանագիտության երկդիմի քաղաքական հաշվարկների համաձայն՝ Ռուսական կայսրությունը պետք է կործանվեր, և այդ նպատակների համար չէր խնայվում որևէ միջոց:

Իր հերթին ռուսական Գերագույն գլխավոր հրամանատարությունը չկարողացավ ըմբռնել ռուս-թուրքական ռազմաճակատի նշանակությունը և արմատական դերն Առաջին համաշխարհային պատերազմում: Ռուսական հրամանատարությունը պատրաստ էր թուրքերին զիջել ահռելի տարածքներ, բացառությամբ Ռազմավիրական ճանապարհի, Բաքվի և փոխարքայության կենտրոն Թիֆլիսի¹: Սա էր ռուսական գլխավոր հրամանատարության ռազմավարական ծրագիրը: Թե ինչ էր լինելու հետագայում նրանց չէր հետաքրքրում: Ենթադրվում էր, որ Եվրոպայում հաղթանակ տանելուց հետո տարածքները ոչ միայն կվերագրավվեին, այլև կնվաճվեին նորերը, ընդհուպ՝ նեղուցները և Կ. Պոլիսը:

¹ **Масловский Е. В.**, Мировая война на Кавказском фронте 1914-1917 г. Стратегический очерк, Париж, 1933, с. 30-31; История первой мировой войны 1914-1918, том 1, М., 1975, с. 197.

Օսմանյան կայսրությունը պատերազմի մեջ մտավ անպատրաստ: Կայսրությունը հույս ուներ, որ ի գործու կլինի պարտության մատնել ռուսներին և ոտքի հանել Կովկասի փոխարքայության մահմեդականությանը: Շատերը պնդում են, որ Օսմանյան կայսրությունը պատերազմի մեջ մտավ մի քանի ամիս ուշ, քանի որ հաղորդակցության ուղիների անմխիթար վիճակը հնարավորություն չէր տալիս իրականացնել արագ զորահավաք: Մասնակիորեն նման պնդումը համապատասխանում է իրականությանը, սակայն թուրքական հրամանատարությունը սպասում էր, որպեսզի ռուսները Կովկասի փոխարքայությունից դուրս բերեն իրենց գլխավոր ուժերը, որից հետո փոխարքայություն ներխուժելը և սակավաթիվ Կովկասյան բանակի զորամասերին պարտության մատնելը դժվար չէր լինի²:

Միաժամանակ թուրքական հետախուզությունը զգալի աշխատանքներ կատարեց Կովկասի, մասնավորապես ռուս-թուրքական սահմանագծում բնակվող մահմեդականության շրջանում: Դրա վկայություններն են հանդիսանում ռուսահպատակ մահմեդականների զանգվածային ապստամբությունները Կարսի մարզում և հատկապես Բաթումի նահանգում³:

Կովկասյան բանակը, չնայած անբավարար մատակարարման և պահեստազորի սակավության, կարողանում է մի քանի հաջող կազմակերպված օպերացիաների ընթացքում ջախջախել թուրքական III բա-

² 1914-1916 թթ. ընթացքում Կովկասյան բանակը գրկված էր ամենատարրական օժանդակությունից և դա այն դեպքում, երբ Գերագույն գլխավոր հրամանատարությունը որպես օգնություն Սալոնիկի ճակատ է ուղարկում երկու բրիգադ (տե՛ս **Игватъев А. А.**, Пятьдесят лет в строю, том 2, Новосибирск, 1959, с. 236.) և մոտ 100 հազար զինվոր և սպա Ֆրանսիա (տե՛ս **Антохина-Московиченко В. И.**, История Франции. 1870-1918 гг., М., 1963, с. 717, 719).

³ Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս **Д.** Мартirosян. Трагедия батумских армян: просто «резня» или предвестник армянского геноцида?// Родина, Москва, 2010, N 4, с. 68-71, <http://regnum.ru/news/1236705.html>, **Ռ. Մահալյան** Փաստաթղթեր Առաջին աշխարհամարտի տարիներին ռուսահպատակ հայերի զանգվածային կոտորածների մասին. ՀՀ ԳԱԱ ԼՀԳ, թիվ 4, 2012, էջ 256-276, նույնի՝ Բաթումի նահանգի հայութեան կողոպուտն ու սպանությունները Ա. Համաշխարհային սկզբում 1914ի աշնան (փաստաթղթեր). Հայկազեան Հայագիտական Հանդես, Պեյրոթ, 2013, թիւ ԼԳ, էջ 7-45:

նակը: Ձորավարական տաղանդով փայլում է գեներալ Ն. Ն. Յուդենիչը, ինչպես նաև ռուս մի շարք այլ գորավարներ:

1915-1916 թթ. մարտական գործողությունների ընթացքում ռուսական զորքերը մեկը մյուսի էտևից գրավում են ռազմավարական նշանակություն ունեցող Վանը, Էրզրումը, Մուշը, Բիթլիսը, Տրապիզոնը և այլ բնակավայրեր: Սևծովյան նավատորմն աստիճանաբար կարողանում է չեզոքացնել գերամանա-օսմանյան ռազմանավերին և գերիշխող դիրք գրավել ծովում: Բացառիկ հնարավորություն էր ստեղծվում վերջնականապես ջախջախել հակառակորդի զինուժը և Օսմանյան կայսրությանը դուրս բերել պատերազմից: Դա հնարավորություն կտար բացել նեղուցները և ստանալ անհրաժեշտ զենքն ու զինամթերքն դաշնակիցներից և նրանց մատակարարել սննդամթերք, գլխավորապես հացահատիկ, ինչի կարիքը նրանք զգում էին: Միայն Գերագույն գլխավոր հրամանատարության անվճռականությունը և անհրաժեշտ քանակությամբ համալրման չուղարկելը փրկում են հակառակորդին վերջնական ջախջախումից և Օսմանյան կայսրությունը պարտությունից:

Ռուսական բարձրագույն հրամանատարության մի մասի կողմից չըմբռնվեց ռուս-թուրքական ռազմաճակատի կարևորությունը: Չկարողացան հասկանալ, որ Օսմանյան կայսրությունը, ինչպես նաև Բուլղարիան, հանդիսանում էին Քառյակ միության ամենաթույլ օղակը, որի պարտությունը վճռական նշանակություն կունենար պատերազմի հետագա ընթացքի վրա: Կարելի է ենթադրել, որ դաշնակիցների կողմից նախաձեռնված Դարդանեյան օպերացիան որևէ նպատակ չունեք գրավել նեղուցներն ու Կ. Պոլիսը⁴, քանի որ դա կնշանակեր նշված տարածքները հանձնել Ռուսաստանին, իսկ Մեծ Բրիտանիան որևէ նպատակ չունեք ռազմավարական նշանակություն ունեցող նեղուցները հանձնել Ռուսաստանին⁵:

⁴ Ամերիկյան դեսպան Հ. Մորգենթաուի վկայությամբ, Դարդանեյան օպերացիայի օրերին կառավարությունը պատրաստվում էր փախչել կայսրության խորքերը, տե՛ս **Ռուսան Ռ.**, *Հետախուզություն և հակահետախուզություն*, Ե., էջ 16:

⁵ Այս մասին ավելի մանրամասն տե՛ս **Օհանջանյան Ա.**, Մեծ Բրիտանիայի մեղսակցությունը հայոց ցեղասպանության, Բանբեր Հայաստանի արխիվների, 2008, թիվ 1, էջ 244-252:

Բրիտանացիները ցանկանում էին մշտապես ռուսներին կախվածության մեջ պահել և թույլ չտալ նրանց ազատ մուտքը Միջերկրական ծով: Դրանով փորձում էին կանխել Ռուսաստանի տնտեսական զարգացման լրացուցիչ հնարավորությունը, տարածաշրջանում նրա հեղինակության բարձրացումը և այլն: Այդ իսկ պատճառով, բրիտանական կառավարությունը յուրաքանչյուր հարմար պահ օգտագործելու էր, որպեսզի խաթարի ռուսական ցանկացած գործողություն նեղուցների գրավելու ուղղությամբ: Ուստի Ռուսաստանի դաշնակիցներն անուղղակի ճնշում էին գործադրում, որպեսզի ռուսները ռուս-թուրքական ռազմաճակատում չդիմեն որևէ լայնածավալ գործողության, այլ ունեցած ողջ ներուժն ուղարկեն ռուս-ավստրիական ճակատ:

Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի կողմից «չողջունվեց» 1915 թ. աշնանը ռուսական գլխավոր հրամանատարության կողմից Օսմանյան կայսրության դեմ նախատեսվող հզոր հարձակումը, որի արդյունքում հակառակորդը հարկադրված պետք է լինեք դադարեցնել մարտական գործողությունները և դուրս գալ պատերազմից: Դաշնակիցների կողմից անընդհատ շեշտվում էր, որ ռուս-թուրքական ռազմաճակատը երկրորդական նշանակություն ունեցող ռազմաճակատ է: Իսկ քանի որ պատերազմի սկզբնական շրջանում Ռուսաստանը մեծապես կախված էր Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի ռազմական առաքումներից, ուստի հարկադրված էր տեղի տալ:

Իրավիճակը կտրուկ փոխվում է 1916 թ. և հատկապես 1917 թ. սկզբներին, երբ ռուսական ռազմական արդյունաբերությունն արդեն ոտքի է կանգնում և ի գործ է լինում ապահովել իր բանակի կարիքների զգալի մասը⁶:

⁶ Պատմաբան Գ. Վ. Պիպլան իր ուսումնասիրությունում ընթերցողի ուշադրությունը հրավիրել է կարևոր մի փաստի վրա: 1916 թ. սկզբներին ռուս-թուրքական ռազմաճակատի տարբեր հատվածներ են ժամանում բրիտանացի և ֆրանսիացի սպաներ, որոնց հետաքրքրում էր ռուսական զորքերի հետագա ծրագրերը: Դաշնակիցները, որոնց լավ հայտնի էր Կովկասյան բանակի զուտ պաշտպանողական գործողություններ ունենալը, այժմ ապշել էին, թե ինչպես պատահեց, որ ռուսները պաշտպանությունից անցել էին ակտիվ հարձակողական գործողությունների: Պատմաբանը փաստում է. «Ռուսական Կովկասյան բանակի հաջողությունները լուրջ անհանգստություն էին առաջացրել ոչ

Անհասկանալի է, թե ինչու երկար տասնամյակներ պատմագրության կողմից անուշադրության են մատնված եղել փոխգնդապետ, հետագայում գեներալ Ալեքսանդր Վերխովսկու հուշերում եղած կարևոր ու արժեքավոր վկայությունները: Նա 1916 թ. մարտին նշանակում էր ստացել Սևծովյան նավատորմում և անմիջական մասնակցություն էր ունեցել 1916 թ. ապրիլի 5-ին Տրապիզոնի գրավմանը: Ա. Վերխովսկին վկայում է, որ նավահանգստի գրավումը նոր օպերատիվ հնարավորություններ էր բացում Կովկասյան բանակի և նավատորմի համար: Ռուսական նավատորմը երկու գծանավերի՝ «Իմպերատրիցա Մարիա» և «Իմպերատրիցա Եկատերինա Վելիկայա» համալրումով գերազանցում էր օսմանյան նավատորմին, որի կազմում գործում էին գերմանական երկու նորագույն հաճանավեր «Գյոթենը» և «Բրեսլաուն» և 4-ից 5 սուզանավ⁷: Ցավոք, Սևծովյան նավատորմի հրամանատարն էր ծովակալ Ա. Ա. Էբերգարդը, որը հիմնականում որդեգրել էր պաշտպանական մարտավարություն և հազվադեպ էր հակառակորդի դեմ ուղղում նավատորմի ռազմանավերը:

Նեղուցների գրավման անհրաժեշտությունը հասկանում էր Սևծովյան նավատորմի շտաբի պետ, փոխծովակալ Մ. Ի. Կասկովը: Նա երազում էր գրավել Բոսֆորը և դուրս գալ Միջերկրական ծով, որը հնարավորություն կտար դաշնակիցներից ստանալ անհրաժեշտ զինամթերքն ու հանդերձանքը:

Բոսֆորի, ապա Կ. Պոլսի գրավումն իրատեսական էր⁸, քանի որ դեպի ռուսական Սևծովյան նավահանգիստներն էին ուղղված հինգ երկաթուղագծեր, որոնք հնարավորություն կտային կարճ ժամանակում՝

միայն Կոստանդնուպոլսում և Բեռլինում, այլև Ռուսաստանի դաշնակիցների մայրաքաղաքներում՝ Լոնդոնում և Փարիզում», տե՛ս **Пиния Г. В.**, *Германский империализм в Закавказье 1910-1918 гг.*, М., 1978, с. 79-80.

⁷ **Верховский А. И.**, *На трудном перевале*. Москва, 1959 http://militera.lib.ru/memo/russian/verhovsky_ai/04.html

⁸ Բրիտանական հետախուզության ունեցած տեղեկությունների համաձայն, թուրքերը առավել մեծ տեղ էին հատկացրել Դարդանեյի ամրացմանը: Բր ամրություններով և սպառազինության քանակով Բոսֆորի պաշտպանությունը զգալիորեն զիջում էր Դարդանեյին: Տե՛ս **Астон Дж.**, *Британская контрразведка в мировой войне*, М., 1939, с. 40.

երկու շաբաթում, Սևաստոպոլ տեղափոխել վեցից յոթ բանակային կորպուսներ, իսկ Գերմանիան Օսմանյան կայսրության հետ կապված էր ընդամենը մեկ երկաթգծով: Մյսայիսով առավելությունը ռուսների կողմն էր:

Դուրս գալով Միջերկրական ծով, Ռուսաստանը հնարավորություն էր ունենում հարձակվել Գերմանիայի մեկ այլ դաշնակցի, դաշնակցային շրջայի մեկ այլ թույլ օղակի՝ Բուլղարիայի վրա, որը Գերմանիային ապահովում էր հացով: Բուլղարիայի պատերազմից դուրս գալը ծանր հարված կհասցներ Գերմանիային, քանի որ նա կզրկվեր հացամթերք ստանալու հնարավորությունից:

Բուլղարիայի պատերազմից դուրս գալը հնարավորություն կտար հարձակվել Ավստրո-Հունգարիայի վրա, որն ինչպես հայտնի է բազմազգ կայսրություն էր և այնտեղ բնակվող սլավոն ժողովուրդները երազում էին թոթափել ավստրիական լուծը:

Փաստորեն, այս երեք տերություններին պարտության մատնելուց կամ պատերազմից դուրս բերելուց հետո Գերմանիան մնալու էր միայնակ և, չունենալով պատերազմը վարելու անհրաժեշտ ռեսուրսներ, վերջիվերջո, պետք է հաշտություն խնդրեր:

Փոխծովակալ Մ. Ի. Կասկովը ևս հավանություն է տալիս ծրագրին և առաջարկում է կազմել համապատասխան գեկույց՝ ուղղված նավատորմի հրամանատարությանը և Ա. Ի. Վերխովսկուն ուղարկում է օպերատիվ բաժնի պետ, երկրորդ կարգի կապիտան Կետլինսկու մոտ:

Չեկույցում արված առաջարկությունները և Սև ծովում ստեղծված իրավիճակն այնքան պարզ ու մատչելի էին, որ նույնիսկ նավատորմի հրամանատար Ա. Ա. Էբերգարդը հասկացավ հարցի էությունը և հրամայեց Ա. Ի. Վերխովսկուն շտապ մեկնել Մոզիլյով՝ Գլխավոր շտաբ և անձամբ ներկայացնել գեներալ Մ. Վ. Ալեքսեևին⁹: Ցավոք, Ա. Ի. Վերխովսկու ներկայացրած մարտական գործողությունների պլանը հավա-

⁹ Նույն տեղում:

նության չարժանացավ գեներալ Մ. Վ. Ալեքսեևի կողմից, որը գտնում էր, որ պատերազմի բախտը վճռվում է Եվրոպայում¹⁰:

1916 թ. ամռանը Սևծովյան նավատորմի հրամանատար է նշանակվում նշանավոր փոխծովակալ Ա. Վ. Կոլչակը, որը առաջին իսկ օրից նախաձեռնում է մարտական լուրջ գործողություններ, հարկադրելով գերմանա-թուրքական նավատորմին, այդ թվում՝ գերմանական սուզանավերին խիստ սահմանափակել ծով դուրս գալը: Դրա վկայությունն ենք գտնում թուրքական ռազմանավատորմում տարբեր հրամանատարական պաշտոններ զբաղեցրած, գերմանացի սպա, հետագայում փոխծովակալ Հելմուտ Լորեյի հուշերում¹¹:

1917 թ. փետրվարյան հեղափոխությունից հետո ռուսական Գերագույն հրամանատարությունը ռազմաճակատ է ուղարկում զգալի քանակությամբ զենք և զինամթերք և նախապատրաստում է Բոսֆորի գրավման օպերացիան: Նշված օպերացիան պետք է իրականացվեր ռուսական Սևծովյան նավատորմի հատուկ առանձնացված դեսանտային ուժերի կողմից: Սակայն, նավատորմի և բանակի «արագ հեղափոխականացումը» հնարավորություն չտվեց իրականացնել մտահաղացումը¹²:

¹⁰ Նույն տեղում:

¹¹ **Лорей Г.**, Операции германо–турецких морских сил в 1914–1918гг. Перевод с немецкого Е. Шведе, с предисловием **Е. Лудри** и с примечаниями **Н. Новикова**, М., 1934, с. 226.

¹² Պատմաբան Ա. Բ. Աստաշովն իր հոդվածներից մեկում վեր է լուծել Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ռուս զինվորի բարոյահոգեբանական վարքագիծը: Դա առաջին հերթին վերաբերում էր բանակում ծառայող գյուղացուն, քանի զինվորների 80%-ից ավելին գյուղացիներ էին: Պատմաբանի կարծիքով, ռուս զինվորն իր համար առաջին հերթին հակառակորդ էր համարում մահեղականին: Այս հանգամանքն հատկապես ցայտուն կերպով դրսևորվում է ռուս-թուրքական ռազմաճակատում, քանի որ այստեղ Ռուսաստանը կռվում էր իր «մշտական» հակառակորդ Օսմանյան կայսրության դեմ: Ռուս զինվորի պատկերացումը թշնամու մասին՝ լիովին «բավարարում» էր թուրքիան, որի զինվորն այլադավան էր և ասիացի: Ա. Բ. Աստաշովն իր հոդվածում համեմատում է երկու ռազմաճակատներից՝ Արևելյան (ռուսական-ավստրիական) և ռուս-թուրքական, զինվորների տուն գրած նամակների բովանդակությունը: Պատմաբանն օգտվել է գրաքննության կողմից առանձնացված նամակներից: Ռուս-թուրքական ռազմաճակատից գրված նամակները լի էին լավատեսությամբ և հակառակորդին անպայման հաղթելու ցանկությամբ: Զինվորները հիմնական խոչնդոտը տեսնում էին միայն ռելիեֆը՝ լեռները, կտրտված տեղանքը և լեռնաշղթաները:

Ռուս ռազմական պատմաբան Անտոն Կերսնովսկին վտարանդիության տարիներին գրված իր ուսումնասիրություններից մեկում ավստոսանքով փաստեց, որ ռուսական զինավոր հրամանատարությունը հանիրավի թերագնահատել է ռուս-թուրքական ռազմաճակատի նշանակությանը: Նրա համոզմամբ, Առաջին համաշխարհային պատերազմի ճակատագիրը լուծվում էր ոչ թե Եվրոպական ռազմաթատերաբեմում, այլ ռուս-թուրքական ռազմաճակատում: Ա. Կերսնովսկին հետևյալն է գրում. «Ենթադրում էին, որ Բոսֆորի բանալիները Բեռլինում էին...Սյժմ մենք տեսնում ենք, որ Բեռլինի բանալիները գտնվում էին Բոսֆորի վրա»¹³:

РУБЕН СААКЯН

Институт истории НАН РА

ЗНАЧЕНИЕ РУССКО-ТУРЕЦКОГО ФРОНТА В ПЕРВОЙ МИРОВОЙ ВОЙНЕ

Мировые научные круги продолжают публиковать разные исследования о причинах, боевых действиях, дипломатических и других аспектах Первой мировой войны, однако большинство из них концентрируется на Западном и частично на Восточном фронтах. Не уделяется должного внимания русско-турецкому фронту, который ошибочно рассматривается как второстепенный. Между тем, по нашему мнению,

Նամակներից մեկում ասվում էր. «Թուրքի հետ կռվելը նույնն է՝ ինչպես լավ օրիորդի հետ պարելը»: Պատմաբանի կարծիքով, նման հոգեբանության ձևավորման պատճառը՝ Կովկասյան բանակի սակավ հեղափոխականացված լինելն էր: Դրան հակառակ, Արևելյան ռազմաճակատից ստացված նամակներում հակառակորդի՝ գերմանացիների մասին խոսվում որոշակի հարգանքով: Զինվորների շրջանում որոշ շփոթմունք է առաջացնում այն հանգամանքը, որ ավստրո-հունգարական զորքերում կային մեծ թվով ուղղափառներ, այդ թվում սլավոններ, սե և **Астапов А. В.**, Русский крестьянин на фронтах Первой мировой войны, “Отечественная история”, М., 2003, N 2, с. 78.

¹³ **Керсновский А. А.**, Мировая война. (Краткий очерк). К 25 летию объявления войны (1914–1939) Белград, 1939, с. 6.

именно на этом фронте решалась судьба войны. Анализ боевых действий на русско-турецком фронте показывает, что после взятия русскими войсками 3 февраля крепости Эрзрум и 5 апреля 1916 г. города-порта Трапезунд, русские имели прекрасную возможность овладеть Босфором и выйти на Балканский полуостров. Такое предложение поступило из штаба военно-морских сил Черноморского флота, однако было отвергнуто Верховным главнокомандованием. В докладе сделана попытка ответить на вопрос, почему не состоялась Босфорская десантная операция, которая могла коренным образом изменить историю.

RUBEN SAHAKYAN

Institute of History of NAS RA

THE SIGNIFICANCE OF THE RUSSIAN-TURKISH FRONT DURING THE WORLD WAR I

International scientific communities continue to publish a variety of studies on the root causes, military actions, diplomatic and other aspects of World War I, but most of them focus on the Western and partly Eastern fronts. No proper attention is paid to the Russian-Turkish front which is considered as secondary. However, in my opinion, that was exactly where the fate of World War I could have been determined. Our analysis of military operations on the Russian-Turkish front shows that the Russians had a great opportunity to seize the Bosphorus and gain access to the Balkans, after they had occupied fortress of Erzurum on February 3rd and the city-port of Trabzon on April 5th 1916. This offer had been made by the Black Sea Fleet Staff, but it was turned down by the Supreme Headquarters. In our report we will try to answer the question why the Bosphorus landing operation, which could have radically changed the history, did not take place.

ՍՈՒՍԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ գրականության ինստիտուտ

ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ ՌՈՒՍ ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՋԻՆՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ՀԵՏ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Հովհաննես Թումանյանը 20-րդ դարակազմի ամենաազդեցիկ հայ ազգային գործիչներից էր, անհանգիստ բնավորություն, ով երբեք չի բավարարվել ունկնդիր ու վկա լինելով. միշտ եղել է այնտեղ, ուր ժողովրդի կենաց ու մահու խնդիրներն էին լուծվում:

1914 թ. հուլիսին, երբ սկսվեց Առաջին աշխարհամարտը, բանաստեղծը Ձաղվեր ամառանոցից, ընդհատելով հանգիստը, անմիջապես վերադարձավ Թիֆլիս և օգոստոսի 1-ին դիմեց Լոռու և Բորչալուի գավառապետ Վ.Գավրիլովին. «Խնդրում եմ նկատի ունեցեք, որ ես պատրաստ եմ գալ Ձեզ մոտ՝ իմ հայրենիքը, և օգտակար լինել ինչով կարող եմ»¹: 1914 թ. սեպտեմբեր-հոկտեմբերին, ըստ ամենայնի Հայոց ազգային բյուրոյի գործողմամբ, նախատեսվում էր նրա մեկնումը Ռուսաստան՝ Նիկոլայ Երկրորդ կայսրին հանդիպելու նպատակով²: Աշխարհամարտի առաջին ութ ամիսների ընթացքում Թումանյանը երկու անգամ գնաց ռազմաճակատ, կոտորածների թարմ հետքերով, եղավ Ալաշկերտի հովտում, Բայազետում, Դիադինում, Վանում և այլուր, մերթ արտասվեց ու ծնկի եկավ հայ եկեղեցիներում, մերթ հուսադրեց ու գոտեպնդեց իր օրհանն ապրող արևմտահայությանը:

Կամավորական խմբերի ստեղծմանը նպաստելով հանդերձ՝ ռուսական իշխանությունները, անհանգստացած հայերի կողմից ինքնավարության հնարավոր պահանջից, հայ մարտիկներին անջատողական ու «ավտոնոմիստներ» անվանելով, խոչընդոտում էին նրանց գործունեությանը: Պաշտոնական շրջանները կեղծ լուրեր էին շրջանառում,

¹ **Հովհաննես Թումանյան**, Երկերի լիակատար ժողովածու 10 հատորով (այլուհետև՝ ԵԼԺ), հտ.10, Եր.,1999, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., էջ 588:

² Նույն տեղում, էջ 217:

իրը հայերը լավ չեն կռվում, վատ են վարվում թուրք ու քուրդ բնակչության հետ, թալանում են, չեն ենթարկվում, փախչում են և այլն: Ռուսական հրամանատարության վերաբերմունքի հստակեցման անհրաժեշտությունը Հայոց ազգային բյուրոյին և կաթողիկոսին ստիպում են հայ հոգևոր գործիչներից ու մտավորականներից ձևավորել պատերազմի դաշտ մեկնող մի խումբ, որի կազմում էր նաև Թումանյանը: 1914 թ. նոյեմբերի 15-ից մինչև դեկտեմբերի 15-ը ռազմաճակատ կատարած ուղևորության ընթացքում ռուս սպաների, գեներալների հետ հանդիպումների արդյունքում պոետը ծանոթացավ ռազմական վերնախավի՝ հայերի հանդեպ անարդարացի վարմունքի բազմաթիվ փաստերի:

Նոյեմբերի 18-ին Բգրիրում գրողը երկու անգամ հանդիպում և գրուցում է կորպուսի հրամանատար, գեներալ-լեյտենանտ Պ. Ի. Օգանովսկու հետ: Առաջին տեսակցությունը գորաբանակի շտաբի գլխավոր գեներալ-լեյտենանտ Վ. Պ. Լյախովի ներկայությամբ էր: «Լյախովը Թեհրանի հայտնի Լյախովն է, - գրում է Թումանյանը: - Խիստ հայատյաց և չի ծածկում»³: Առաջին անգամ էր, որ պոետը «հայատյաց» բնորոշումն օգտագործում էր ռուս գեներալի համար և դեռ հաճախակի պիտի կրկներ այն այլ բարձրաստիճան զինվորականների բնութագրելիս: Ողջ գրույցի ընթացքում, թեև Լյախովը լուռ էր, բայց դեմքի այնպիսի արտահայտություն ուներ, որ անթաքույց դրսևորում էր իր քամահրական վերաբերմունքը: Պ. Ի. Օգանովսկին արտաքուստ բավականին «սիրալիր» է ընդունել հայերին: Նա խոստովանել է հայ կամավորների, հատկապես Անդրանիկի դերը, բայց Լյախովի ներկայությամբ «հնարավորինս զուսպ»⁴ արտահայտվելով հանդերձ առաջացրել է նրա դժգոհությունը: Նույն օրը Օգանովսկին իր աղյուսանտ Բեկթաբեկովի հետ փոխայցի է գալիս հանձնախմբին և փորձում է ավելի մտերմական երևալ. առանց Լյախովի առավել համարձակ էր և ընդգծում է իր հայկական ծագումը.

³ Նույն տեղում, հտ. 8, Եր., 1999, էջ 351:

⁴ **Շիրվանզադե**, «Պատերազմի վայրերից», «Ձիթենի» գրական ժողովածու, Թիֆլիս, 1915, էջ 10:

«Ես հայերին համակրում եմ անկեղծ... իմ արյան մեջ էլ մի քիչ «Կարապետ» կա»⁵:

Նոյեմբերի 20-ին գրողը Արծափում էր և տեսնում է՝ ինչպես են ռուս զինվորներն ապրում հայերի տներում, անվճար օգտագործում նրանց ունեցվածքը: Նրա օրագրում կարդում ենք. «Կանանց բռնաբարություններ անխտիր՝ քրդի, թուրքի ու հայի, կատարվել է սոսկալի չափով՝ նահանջելիս համիդիականները, այնուհետև կազակները ...»⁶: «Ձիրո գյուղի մոտ՝ Քյուֆ դռան գյուղում, 6 տուն հայ են (միայն երեխաներն են փախցրել), մնացած ամենքին բռնաբարել են կազակները»⁷:

Թումանյանը ծանոթանում է Ղարաքիլիսայում և Թաղլիչայում տեղակայված Վոլցյան, Տվերյան կազակների գորքերի գնդի Առաջին հարյուրյակի հրամանատար գնդապետ Տուսկանի և նրա օգնական Յուզուլուկի զեկուցագրին, ըստ որի՝ ռուսները կողոպտում են և «Մա արդեն գործ է դառել»⁸: Ռուս զինվորներին՝ թալանի և պատժից խուսափելու համար մեղքը հայերի վրա բարդելու մասին Թումանյանին պատմում է նաև սպա Սվիրինը⁹: Գրողը վկայում է՝ Արծափում հրամայել էին «զինաթափ անել հայ թե քուրդ՝ ամենքին»¹⁰, «Բայագետի շրջանում հայերից գենք չեն առնում, իսկ Ղարաքիլիսայում հավաքում են»¹¹. ամենից շատ զինաթափել էին Ղարաքիլիսայում:

«Մշակի» թղթակից, Բայագետի ոստիկանապետ Արգար Տեր-Արքախանյանի խնդրանքով ու միջնորդությամբ նոյեմբերի 21-ի երեկոյան Թումանյանին ընդունում է ծնունդով երևանցի, միջոտ հայերի մեջ ծառայած ռուսական բանակի գեներալ-լեյտենանտ, նահանգապետ, այդ պահին պահեստային զորամասում ծառայող 64-ամյա Դրյագինը (Բայադին), ով իր կրթությունը ստացել էր Բաքվի ռեալական գիմնազիայում: Զրույցին ներկա էր նաև նախկին հյուպատոս, գեներալի քաղաքա-

⁵ Նույն տեղում:

⁶ **Թումանյան**, ԵԼԺ 8, էջ 377:

⁷ Նույն տեղում, էջ 387:

⁸ Նույն տեղում, էջ 8,367:

⁹ Նույն տեղում, էջ 8,385:

¹⁰ Նույն տեղում, էջ 8, 357:

¹¹ Նույն տեղում, էջ 8, 365:

ցիական գծով քարտուղար Ա.-ն, (ըստ ամենայնի՝ Ակիմովիչ): Դրյագինի՝ «Հայերը նեղում են քրդերին» ակնարկին գրողը հակադարձում է, թե հալածվողը հայն է, գեներալը պատասախնում է. «Մինչև այժմ՝ այո՛, բայց այժմ հայերն են սկսել նեղել քրդերին»¹²: Դրյագինը, թեև ժպտալով, բայց սպառնալիք է հնչեցնում¹³: Կարելի է պատկերացնել, թե որքան մեծ պետք է լիներ բանաստեղծի հիասթափությունը գեներալ-նահանգապետի՝ հայերին պատժելու բացահայտ սպառնալիքից:

1914 թ. նոյեմբերի 23-ին, Դիադինից Թաղլիչայ, ապա Ղազիքոյ, Զիրա կամ Զիրո գյուղերն անցնելով, հասնում են Ղարաքիլիսա, ուր այդ պահին գտնվում էր ռուսական զորաբաժնի շտաբը: Այստեղ գյուղացիները «վառված» էին ոչ միայն թուրքերի պատճառած դժբախտություններից, այլև Դ. Կ. Աբացիի թողտվությամբ ու հրահանգներով ռուսների թալանից ու իրենց պատճառած նեղություններից: Թումանյանը գրում է. «250 խանութ կողոպտել են մինազամայն ու ավերել ռուս կազակները: Այժմ 50-ի մեջ գորք է մնում»¹⁴: Բանաստեղծը Աբացիից թույլտվություն է խնդրում՝ անցնելու Դուրթախ և Բասեն՝ հանդիպելու հայ կամավորներին, սակայն կտրուկ մերժում է ստանում: Մահմեդական ծագումով, իբր ուղղափառ եկեղեցուն դավանող Աբացիը հեզնանքով է խոսում հայ կամավորների մասին: Այդ հանդիպմանը ներկա էր նաև գեներալի շտաբի գլխավոր գնադապետ, ավելի ուշ Կովկասյան ռազմաճակատի հրամանատար Եվ. Վ. Լեբեդինսկին: Պոետը գրեթե բառացի վերարտադրում է հայությանը զրպարտող ռուս գեներալների խոսքերը: Աբացիը հայ կամավորներին հոխորտացել էր. «Եթե եղպես պետք է լինեք, լավն էն է, որ դուք չլինեք»¹⁵: Երբ Թումանյանը Աբացիին բերում է քրդերի կողոպուտի բացահայտ փաստեր, գեներալը հակադարձում է, թե հայերն են խեղճ քրդերին «կողոպտել»¹⁶: Փորձում է գենք խնդրել Զի-

¹² **Շիրվանզադե**, Երկերի ժողովածու 10 հատորով, հտ. 9, Եր, 1961թ., «Հայաստան» հրատ, էջ 129:

¹³ Նույն տեղում, էջ 130:

¹⁴ **Թումանյան**, ԵԼԺ 8, էջ 371:

¹⁵ Նույն տեղում, էջ 374:

¹⁶ Նույն տեղում, էջ 373:

րոյից առևանգված աղջկա հարազատների համար, դարձյալ մերժում է. «Այսպես, թե այնպես ես հայերին գենք տալ չեմ կարող»:

Ղարաքիլիսայում Աբացիի հովանավորությունն էր վայելում քուրդ ցեղապետ Մելիմ փաշան, ով իբր «անձնատուր» էր եղել. նրա երկու որդիները՝ Մայիդ և Ռասուլ բեգերը շարունակում էին պատերազմել ռուսական զորքի դեմ: Մելիմ փաշան ամեն օր գաղտնի տեղեկություններ էր հաղորդում թուրքերին ռուսական զորքերի յուրաքանչյուր քայլի մասին: Աբացիի հետ հանդիպումներից հետո է բանաստեղծը եզրակացնում, որ ռուսները քրդերին ավելի շատ են պաշտպանում, քան հայերին: Թումանյանը նրան նույնպես բնորոշում է «հայասոյաց», զրպարտիչ: Մինչ Ղարաքիլիսա հասնելը գրողին քաջ հայտնի էր, թե ով է Աբացիը, ինչ ազգության է պատկանում, սակայն վերջինիս անձամբ հանդիպելը և նրա հերյուրանքները լսելը լցնում են պոետի համբերության բաժակը, և նա հարցնում է. «Ինչո՞ւ է Օսը գլխավոր զորքի մեջ»¹⁷:

Աբացիը հայերին ոչ թե զինում, այլ զինաթափում էր: Նույնիսկ թշնամին գիտեր, որ հանձին այդ գեներալի ինքը բարեկամ ունի հայերի դեմ: Նրա հովանավորությամբ ռուսները «Ձեղեքան ամեն բան առնում են առանց լճարելու... Ոմանք իրենց երեխանց սովորեցրել են՝ *Ей богы нет*, և միայն էսքանը գիտեն, կոզակի պատահելուն պես ասում են՝ *Ей богы нет*»¹⁸:

Դեկտեմբերի 3-ին գրողը Մոսուում ծանոթանում է ռուսների տարածած շրջաբերականին՝ «Խտրություն չդնել հայի, թուրքի ու քրդի մեջ»¹⁹: Վերադարձին Իզդիբում հանդիպում է գեներալ-նահանգապետի օգնական Պողոպովին, ով վկայում է, որ Արդահանի կողմերում «Կոզակները թալանում են ոչ միայն հայերի գյուղերը, այլև մալականների գյուղերը»²⁰:

1914 թ. դեկտեմբերի 11-ին, բանաստեղծը Սարիդամիշում էր: Նրան պատմում են տեղի կայագործի նախկին պետ Սոլոնենկոյի՝ հայերի դեմ

¹⁷ Նույն տեղում, էջ 349:

¹⁸ Նույն տեղում, էջ 381:

¹⁹ Նույն տեղում, էջ 385:

²⁰ Նույն տեղում, էջ 389:

իրականացրած պատժիչ գործողությունների մասին: Այստեղ առավել ակնհայտ է դառնում նաև վրացիների մասնակցությունը հայերին սեպարատիստներ ներկայացնելու գործում: Թումանյանը վերստին հանդիպում է «հայատյաց» գեներալ-լեյտենանտ Եվգենի Գեորգիևիչ Տրամբիցկուն և համոզվում, որ հայերի դեմ գործելիս նա համագործակցել է էվակուացիոն կետի ղեկավար Ապրևանաձեի հետ: Նշում է նաև Բաքվի գնդի հարմանատար դարձյալ «հայատյաց» Նիժարաձեի հակահայ բնույթը²¹:

1915 թ. գարնանը Վանի գրավումը շատերին խանդավառեց նոր հույսերով: Հունիսի 6-ին գրողը մեկնում է Վան, կրկին հանդիպում է Օգանովսկուն և Աբացիևին: Վերջինս Մանազկերտի կովից վերադառնալով կոտորել էր տվել հայերին, այնուհետև Խլաթի բնակչությանը մատնել էր կոտորածի: Օգանովսկին փորձում է արդարացնել Աբացիևի կողմից հայերի մուտքը Մանազկերտ արգելելը՝ պատճառաբանելով հայերի մեջ տարածված սև ծաղիկ հիվանդությամբ: Թումանյանի նոթատետրից տեղեկանում ենք, որ Աբացիևը կարգադրել էր. «Հայերի գյուղերը իրար հետ հարաբերություն չունենան, մի տեղից ցորեն չտանեն մյուս տեղը և այլն, և էս բոլորը առանց Օգանովսկու գիտության»²²:

Բանակում ծառայող մահմեդական ծագումով կամ պարզապես մահմեդական գեներալներն ու հրամանատարները, պարզապես պատուհաս էին դարձել հայերի համար: Դուրսիցում մնացած հայերին հալածում էին գարնիզոնի՝ ազգությամբ լեզգի փոխգնդապետ Բաբանովը և «բատարեյնի» հրամանատար Մամեդը: Նրանք հայերին արգելում էին փողոց դուրս գալ. «Հայհոյում էին, ասում էին՝ ձեր քոքը պետք է կտրել»²³: Հայերը կարողանում են «շունչ քաշել», միայն նրանց հեռանալուց և ռուս գեներալ Ամասիյսկու՝ Դուրսիցում նշանակվելուց հետո:

Թումանյանը գեներալների հետ հանդիպումների ընթացքում ամենևին պասիվ ունկնդրի դերում չի եղել: Հակադրաձեղ է նրանց՝

²¹ Նույն տեղում, էջ 390:

²² Նույն տեղում, էջ 392:

²³ Նույն տեղում, էջ 399:

բարձրաձայնել Դիադինում և Բայազետում ռուսների թալանի կոնկրետ օրինակներ, դժգոհել հայերին զինաթափելու հանգամանքից: Բանաստեղծը չէր կարող չնկատել և չարձանագրել քուրդ բեկերի՝ Բաքո Ինդոլու, Սելիմ փաշայի և այլոց ու ռուս որոշ գեներալների, հատկապես Աբացիևի և Դրյագինիևի համագործակցությունը հայերի դեմ: «Աբացիև մոտ երկու քուրդ եզիդ շատ վատ զեկուցումներ են տալիս»²⁴: Նահանջի ժամանակ Կարեի (Ղարա) պարետը թույլ չի տվել հայ գաղթականներին ջուր խմել աղբյուրից, իբր կվարակվեն: Դրանով զինվորներին փող աշխատելու հնարավորություն է ստեղծել: Նրանք աղբյուրի ջրի մի բաժակը գաղթականներին վաճառում էին 5-ից 20 կոպեկով, իսկ քրդերը ձյուն էին վաճառում՝ մի գունդը 5 կոպեկ: Նույն պարետը գաղթական հայերից խլած գենքերը վաճառում էր քրդերին, իսկ հակառակվողներին սպառնում էր գնդակահարել²⁵: Բանաստեղծը վկայում է նաև Լաբի-նովսկու գնդի գլխավոր հրամանատար Գաֆալովիչի և քաղաքի պարետ նշանակված Սկվորցովի առանձնակի դաժանությունների մասին: Միաժամանակ նշում է ռուսական Պենն գեներալի ու Բայազետի նախկին փոխնյուսատու, այդ պահին նահանգապետի օգնական Ակիմովիչի դրական վերաբերմունքը հայերի նկատմամբ²⁶:

Այս ուղևորություններից ստացած իր տպավորությունները գրողն արտահայտում է «Ավերակների ու դիակների աշխարհում» սևագիր հոդվածում, որն այդպես էլ ո՛չ ժամանակ, ո՛չ էլ ուժ է գտնում ավարտելու և տպագրության հանձնելու:

Թումանյանի վատառողջ թոքերը մի կերպ դիմացան առաջին ուղևորությանը, 1914 թ. դեկտեմբերյան դաժան սառնամանիքին և անհետևանք չանցան ու նպաստեցին նրա անժամանակ ծերացմանը: 1915թ. հունիսին գրողին վերստին մեծ ցավ պատճառեց հիասթափությունը ռուսական զոքից ու գեներալներից: Նա բարձր գնահատեց կամավորնե-

²⁴ Նույն տեղում, էջ 387- 388:

²⁵ Նույն տեղում, էջ 406:

²⁶ Նույն տեղում, էջ 353:

րի դերը. «ավելի քիչ է եղել կոտորածը»²⁷: Դուստրը՝ Նվարդը վկայում է որ հայրը «...Վերադարձավ...գարհուրելի տպավորություններով... պատմում էր սարսափելի մանրամասնություններով ... Հիասթափված էր, վրդովված ... հիվանդ...Օր օրի ավելի ընկճվեց, առողջական դրուֆունը վատթարանում էր »²⁸ :

Թումանյանը քայլեց գարհուրանքների ու ողբերգության վկա ճանապարհներով: Սակայն պոետի զգացմունքների պոթկումը ձուլվեց ու միահյուսվեց արթուն մտքին ու սառը դատողությանը, և նա հիասթափության ծովում փորձեց չկորցնել հավատն ու լավատեսությունը, լռեցրեց հոգու ճիչը, անդարմանելի ու անպատմելի ցավը, հանրության առջև լռություն պահպանեց՝ հայ զինվորին ու ժողովրդին հնարավորինս հեռու պահելով իր իսկ ապրած հուսախաբությունից և իրողությունը զեկուցեց միայն Ազգային Բյուրոյին: Նա ճանաչեց հայոց վշտի բուրբ մեղավորներին, համոզվեց, որ քաղաքակիրթ կոչված բոլոր պետությունները առաջնորդվում են միմիայն իրենց շահերով: Ռուսասեր ու միշտ ռուսական կողմնորոշում ունեցող բանաստեղծը պայծառ հոգիներին բնորոշ լավատեսությամբ հաղթահարեց շփոթմունքը, որովհետև ի վերուստ նրան տրված չէր որևէ ակնթարթ ազգի գոյությունը կասկածի տակ դնելու երկմտությունը, ապագային չհավատալու հնարավորությունը: Հնարավոր և անհնար բոլոր միջոցներով կատարեց իր պատմական առաքելությունը. ամեն գնով սատար կանգնեց ժողովրդին, պահեց ու պահպանեց հույսի ու լույսի հայրենիքի գաղափարը:

СУСАННА ОБАНЕСЯН
Институт литературы НАН РА

ВСТРЕЧИ ТУМАНЯНА С ВЫСОКОПОСТАВЛЕННЫМИ ОФИЦЕРАМИ РУССКОЙ АРМИИ В ГОДЫ ПЕРВОЙ МИРОВОЙ ВОЙНЫ

Ов. Туманян был одним из самых влиятельных армянских национальных деятелей начала XX века. В течение первых восьми месяцев войны поэт дважды побывал в зоне боевых действий – в Игдире, в районе Баязета, в равнине Алашкерта, в Басене, Диадине, Зеткане, Арцапе, в Зире, Караклисе, Тагличае, в поле Абага, в Ване, в Мосуне, Сарикамыше, Александраполе и других местах, чтобы выяснить отношение высшего офицерского состава русской армии к армянским добровольческим отрядам и армянскому населению. В результате встреч с русскими офицерами и генералами П.Огановским, В.Ляховым, Дрягиным (Баядин), Ев.Трамбицким, Подгуровым, Бектабековым, Свириным поэт ознакомился с многочисленными фактами предвзятого поведения высокопоставленных русских военных. Ознакомился с рапортом командира Первой сотни полка Волжской и Тверской казаческой армии полковника Тускана и его помощника Цугулиева о грабежах со стороны русских военных, с рапортом Солоненко о карательных действиях против армян. В своём дневнике поэт отметил особые жестокости, проявленные главным командиром Лабиновского полка Гафаловичем и комендантом города Каре (Гара) Скворцовым. Он особо отметил армянофобское поведение генерала Абациева, его сотрудничество с курдскими пашами и со всеми курдами, многочисленные факты разоружения армян и вооружения курдов, антиармянские действия Бабанова и “батареинного” командира Мамеда. В то же самое время он стал очевидцем дружелюбного отношения к армянам со стороны генерала Певнева, бывшего вице-консула Баязета, помощника губернатора Акимовича, Амасийского, Огановского.

²⁷ Նույն տեղում, հտ. 7, Եր., 1995, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., էջ 579:

²⁸ Թումանյան Ն., Հուշեր և գրույցներ, Եր., 2009, «Էդիթ Պրինտ» հրատ., էջ 117, 122:

Туманян пережил большое разочарование, узнав о виновниках страданий армян, среди которых были генералы русской армии мусульманского происхождения. Он убедился, что все государства, считающиеся цивилизованными, руководствуются только своими интересами. Всегда имевший русскую ориентацию, поэт сумел преодолеть свою растерянность и в качестве великого гуманиста остался верным своей сущности. Он никогда не ратовал за ненависть и вражду, продолжал выполнять свою историческую миссию: любой ценой помогать своему народу, хранить и защищать идею “родины надежды и света”.

SUSANNA HOVHANNISYAN
Institute of Literature of NAS RA

TUMANYAN'S MEETINGS WITH RUSSIAN HIGH-RANKING MILITARY OFFICERS DURING THE FIRST WORLD WAR

Tumanyan is one of the most powerful national figures of the beginning of the 20th century. During the first eight months of the World War I the writer twice followed the fresh tracks of massacre, visiting Igdır, Bayazet, Alashkert regions, Basen, Diadin, Zetkan, Artsap, Gharaqilisa, Taghlichā, Van, Sarighamish and elsewhere in order to determine the attitude of the Russian military commanders towards the Armenian volunteer groups and population. He met to Russian officers and generals like P. Oganovski, V. Lyakhov, Dryagin (Bayadin), Ev. Trambicki, Podgurov, Bektabekov, Svirin. During these trips the poet witnessed numerous cases of unfair behavior of the Russian military elite. At the same time he witnessed positive attitude of the Colonel Pevnev, assistant to the Governor Akimovich, Amasiski, Oganovski.

Tumanyan was disappointed, recognized all the sinners of the Armenian grief. He was convinced that all civilized states are guided solely by their own interests. The Russian-oriented poet overcame the confusion with the help of optimism typical of bright souls, continued to fulfill his historical mission: supporting people by maintaining the concept of “The Homeland of the Hope and Light”.

ՔՆԱՐԻԿ ԱՎԱԳՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ

ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՍԱՐՏՈՂ ԵՎ ԱՄԵՐԻԿԱԶԱՅՈՒԹՅՈՒՆԸ

1914-1918 թթ. Առաջին աշխարհամարտի ընթացքում ու դրան հաջորդող տարիներին առավելապես առաջին սերնդի ամերիկահայերի համար հայրենի ժողովրդի սատարմանն ուղղված ջանքերը եղել են գործնական ու ծանրակշիռ՝ կրելով թե՛ քաղաքական ու դիվանագիտական, և թե՛ հասարակական, տնտեսական ու ռազմական բնույթ: Վերջինս արտահայտվել է ռազմամթերքի, դրամական միջոցների, ինչպես նաև մարդկային ուժի՝ կամավորների առաքումով, որն իրականացվել է գլխավորապես հայ քաղաքական տարբեր կուսակցությունների ու կազմակերպությունների կողմից:

Ամերիկահայ հասարակական-քաղաքական կազմակերպությունների գործունեությունը.

Պատերազմի հենց սկզբից ամերիկահայ մի խումբ ազգայինների ջանքերով հնարավոր է դարձել համախմբել տեղի հայ քաղաքական տարբեր ուղղությունները, որոնք ժողովրդի ու հայրենի երկրի համար ճակատագրական այդ պահին, որոշ բացառությամբ, հանդես են բերել միասնաբար գործելու պատրաստականություն: Նման առաջին քայլն իրականացվել էր ամերիկահայոց առաջնորդ Մուշեղ եպս. Սերոբյանի ջանքերով, որը գաղութի ներսում կազմակերպված ու հավաքական շարժում սկզբնավորելու, ինչպես նաև կովկասահայության շրջանում ծագած ինքնապաշտպանական շարժմանն արձագանքելու նպատակով իր բնակարանում հրավիրել էր ժողով՝ չորս կուսակցությունների (Սոցիալ դեմոկրատ հնչակյան – ՍԴՀԿ, Հայ հեղափոխական դաշնակցական – ՀՅԴ, Վերակազմյալ հնչակյան – ՎՀԿ, Հայ սահմանադրական ռամկավար – ՀՍՌԿ) մասնակցությամբ: Այսպես 1914 թ. նոյեմբերին Բոստոնում հրավիրել է ***Միջկուսակցական խորհրդածողովը***, որն ընդունել է ազգային չորս կուսակցությունների համատեղ գործունեության

ծրագիր: Խորհրդաժողովին հաջողվել էր ԱՄՆ-ի Կոնգրեսի հետ համատեղ ջանքերով Վաշինգտոնում Ռուսաստանի դեսպանի միջոցով ստանալ ցարական կառավարության համաձայնությունն ու հովանավորությունը՝ Կովկասում ռուսական բանակի կազմում կրվելու պատրաստ ամերիկահայ երիտասարդ կամավորներ առաքելու և մի շարք այլ խնդիրների վերաբերյալ¹:

1914 թ. դեկտեմբերին Խորհրդաժողովին Ամերիկահայոց առաջնորդարանից երկուական ներկայացուցիչների մասնակցությունը համազգային բնույթ է հաղորդել հիշյալ միջկուսակցական մարմնին՝ այն վերանվանելով **Ազգային պաշտպանության ամերիկահայ հանձնախմբի** (ԱՊԱՀ)²:

Անտանտի տերությունների առջև Հայ դատը ներկայացնելու նպատակով 1912 թ. Փարիզում հիմնված Ազգային պատվիրակության նախագահ, Ամենայն հայոց կաթողիկոսի դիվանագիտական ներկայացուցիչ Պողոս Նուբարի և Կահիրեում գործող Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) ջանքերով, Եգիպտոսի օրինակով, մի խումբ ամերիկահայերի կողմից (դրկտոր Սմբատ Մ. Գաբրիելյան, Միհրան Սվազյան /Սվազը/, պատվ. Խաչատուր Կ. Պեննեյան և այլք) ԱՄՆ-ում ևս ստեղծվել էր **Ազգային շահերի պաշտպանության միությունը** (ԱՇՊՄ): Այն բաղկացած էր հայ քաղաքական երեք կուսակցություններից, Հայ առաքելական և Հայ ավետարանական եկեղեցիներից ու ՀԲԸՄ-ից ընտրված ներկայացուցիչներից: ՀՅԴ-ն հրաժարվել է ենթարկվել Ազգային պատվիրակության և անձամբ Պ. Նուբարի հսկողությանը և գործել է անկախ ընդհուպ մինչև 1917 թ. սկիզբը³:

Պ. Նուբարի ջանքերով Ազգային պաշտպանության ամերիկահայ հանձնախումբն ու Ազգային շահերի պաշտպանության միությունը համագործակցված զգալի օգնություն են առաքել Սբ. Էջմիածին՝ ի նպաստ

¹ Համերաշխական բանակցություններ (1914-1915), Պոսթոն, 1916, էջ 5:

² Տեղեկագիր Հայ Ազգային Միության Ամերիկայի. 1917-1921 թթ., Պոստոն, 1922, էջ 8:

³ Նույն տեղում, էջ 9, 10: **Հայկ Վ.**, Խարբերդ եւ անոր ոսկեղեն դաշտը, Նյու Եորք, 1959, էջ 994: The Armenians in Massachusetts, Boston, 1937, p. 52. **Թեոդիկ**, Ամենուն տարեցոյրը, ԺՁ տարի, Կ. Պոլիս, 1922, էջ 283:

հայ գաղթականների, Կովկասում ապաստանած փախստականների ու կամավորների: Ծրագրված էր նաև բոլոր միջոցներով սատարել Փարիզի Ազգային պատվիրակությանը՝ Կիլիկիայի ազատագրման ու Եվրոպայում և Ամերիկայում Հայ դատի պաշտպանությունը հետամտող նրա քաղաքական, դիվանագիտական և ռազմական բնույթի ջանքերին:

1915 թ. սեպտեմբերին ազգային վերոհիշյալ երկու կազմակերպությունները (ԱՊԱՀ և ԱՇՊՄ) միավորվել են որպես **Ազգային պաշտպանության Ամերիկայի միություն** (ԱՊԱՄ) աջակցելու Փարիզի Ազգային պատվիրակությանը: Միությունը բաղկացած էր ազգային վեց կառույցների ներկայացուցիչներից (ՄԴՀԿ, ՎՀԿ, ՀՍՌԿ, ՀԲԸՄ, Հայ առաքելական և Հայ ավետարանական եկեղեցիներ): Նոր միության կազմում էին Միհրան Սվազըն (ատենապետ), Ա. Նազարեթյանը (ատենադիր), Բաբկեն եպս. Կյուլեսերյանը և այլք⁴:

Ազգային պաշտպանության Ամերիկայի միության ջանքերով կազմակերպվել են հայրենանպաստ հանգանակություններ, որոնց արդյունքը բաժանվել է հետևյալ սկզբունքով. գումարի 100% բաժնի 25%-ը Հայոց կաթողիկոսի միջոցով՝ Կովկասի հայ կամավորներին, 25%-ը կրկին կաթողիկոսի կամ Պ. Նուբարի միջոցով՝ Կովկասում ապաստանած հայ կարոտյալներին, իսկ մնացած 50%-ը ուղարկվել է Փարիզի Ազգային պատվիրակությանը: Հետագայում, Պ. Նուբարի կարգադրությամբ, որոշվել է հանգանակությունների արդյունքները լիովին առաքել անձամբ կաթողիկոսին՝ գումարի կես բաժինը հատկացնելու Կովկասի կամավորներին, իսկ կեսը՝ փախստականներին: Միությունն իր գոյության ընթացքում նյութական ու բարոյական զգալի օգնություն է տրամադրել նաև Կիլիկիո կաթողիկոսին, Կ. Պոլսի հայոց պատրիարքին, Թիֆլիսում Հայաստանի վերաշինության հանձնախմբին, ինչպես նաև Ամերիկյան նպաստամատույց ընկերությանը, Ռուս-ամերիկյան նպաստից ընկերությանը և այլոց: ԱՊԱՄ-ը բժշկական օգնություն,

⁴ Տեղեկագիր Հայ Ազգային Միության Ամերիկայի, էջ 9, 10: **Ճիզմեճեան Մ. Գ.**, Պատմություն ամերիկահայ քաղաքական կուսակցության, (1890-1925), Ֆրեզնո, 1930, էջ 202:

անունը, հագուստեղեն է առաքել Կովկասում ապաստանած հայ փախստականներին, մշտապես կապ պահպանել ԱՄՆ-ի պետական շրջանների ու հայասեր ամերիկացիների հետ, ջանքեր գործադրել վերականգնելու ՀՅԴ-ի հետ համագործակցությունը⁵:

Կովկասում հայկական կամավորական շարժման կազմակերպումը.

Առաջին աշխարհամարտի սանձազերծումով արևմտահայության կյանքի ու գույքի անձեռնմխելիության պահպանման համար Օսմանյան կայսրությունում ստեղծված անբարենպաստ ու օրեցօր վատթարացող պայմանները (այդ թվում՝ հայ առևտրականների ու վաճառականների սեփականության և ունեցվածքի թալան և այլն) պատճառ են դարձել օսմանցիների դեմ Կովկասում կովոդ ռուսական ցարական զորքերին սատարելու նպատակով այդտեղ հայրենասեր հայերից բաղկացած ջոկատների կազմակերպմանը: Կամավորական շարժման նշանաբանն էր՝ «Ինքնավարութիւն վեց վիլայեթներու և անոնց անբաժան մասը կազմող Կիլիկիայի՝ Ռուսաստանի հօրը հովանաւորութեան տակ»⁶:

Կամավորագրման գործընթացն աննախադեպ աշխուժություն առաջացրեց հայկական գաղթօջախներում: Շուտով կամավորական շարժման կենտրոններ ստեղծվեցին ԱՄՆ-ում, ինչպես նաև Բուխարեստում, Թիֆլիսում: Ազգային բյուրոն՝ մասամբ Արևմտյան (Եվրոպական, ամերիկյան) և Արևելյան (կովկասյան) բյուրոներով, համակարգում էր բացառապես ՀՅԴ-ն, իսկ ԱՄՆ-ի և Բալկանների բյուրոները՝ հիմնականում ՄԴՀԿ ազդեցության տակ էին⁷:

Արդեն 1914 թ. աշնանը կամավորական շարժման կազմակերպումն ընթացքի մեջ էր: Ազգային բյուրոյի կոչերից ոգևորված կարճ ժամանակում ոչ միայն Կովկասից և Ռուսաստանի մյուս շրջաններից, այլ նաև Եվրոպայից և աշխարհի տարբեր կողմերից (Բուլղարիա, Ռումինիա, Եգիպտոս, Կիպրոս, Ֆրանսիա, Պարսկաստան) և հատկապես՝ հեռավոր ԱՄՆ-ից, մեծ խանդավառությամբ խումբ-խումբ Կովկաս են

⁵ Տեղեկագիր Հայ Ազգային Միության Ամերիկայի, էջ 10, 11:

⁶ **Լազեան Գ.**, Հայաստանը եւ Հայ Դատը ըստ դաշնագրերու, Գահիրէ, 1942, էջ 81:

⁷ Պատմություն Ս. Դ. Հնչակեան կուսակցության. 1887-1962, խմբ. Արսէն Կիտուր, հ. Ա, Պէրոյթ, 1962, էջ 469:

շտապել վրեժով ու ատելությամբ, բայց և ազատատենչ ոգով տոգորված հարյուրավոր հայազգի անձնուրաց երիտասարդ կամավորներ՝ համալրելու նոր կազմվող զնդերը⁸: «Զմայլումով կրեինք անճառելի եռանդն ամեն անոնց, որոնք տուն, գործ ու քույր կամ համալսարան կլքեին՝ դեպի Հայաստանի ռազմաճակատը վազելու աճապարանքով»⁹, - նշել է ակնատեսը:

ԱՄՆ-ից ժամանած ՀՅԴ կամավորները գտնվել են Թիֆլիսի Հայոց ազգային բյուրոյի հսկողության ներքո և ներառվել են գործող հինգ գործախմբերում (հրամանատարներ՝ Անդրանիկ, Դրո, Համազասպ, Քեռի, Վարդան):

ՄԴՀԿ Ամերիկայի բյուրոյի հրամանատարության ներքո գործել է կովկասյան կամավորական Վեցերորդ գունդը (իրարիաջորդ հրամանատարներ՝ Զանփոլադյան, Գրիգոր Ավշարյան /Ավշարով/, Հայկ Բժշկյան /Գայ/, Պանդուխտ /Միքայել Մերյան/), որը հետագայում մասամբ ներառել է նաև Վերակազմյալ հնչակյան և Հայ սահմանադիր ռամկավար կուսակցությունների, ինչպես նաև անկուսակցական ներկայացուցիչների փոքրաթիվ խմբերը, որոնք Ազգային բյուրոյի կուսակցականակենտրոն գործունեության հետևանքով դուրս էին մնացել¹⁰:

1915 թ. մարտի 12-ին մեկնել է ամերիկահայ կամավորների առաջին խումբը, որը Արխանգելսկով հասել է Կովկաս: Նրանց ղեկավարն էր մշեցի Պանդուխտը: Երկրորդ խումբը նույն ճանապարհով դուրս է եկել մարտի 10-ին Ալեքսանդր Մնացականյանի գլխավորությամբ, երրորդ խումբը՝ նոյեմբերի 21-ին՝ Ս. Շահենի գլխավորությամբ¹¹:

⁸ **Կարապետյան Մ.**, Հայկական կամավորական խմբերը և ազգային գումարտակները կովկասյան ռազմաճակատում (1914-1917 թթ.), Երևան, 1999, էջ 38: **Լազեան Գ.**, նշվ. աշխ., 1942, էջ 81:

⁹ **Կիրակոսյան Ջ.**, Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը. 1914-1916 թթ., Երևան, 1965, էջ 187:

¹⁰ Պատմություն Ս. Դ. Հնչակեան կուսակցության. 1887-1962, հ. Ա, էջ 469: **Ճիզմեճեան Մ. Գ.**, նշվ. աշխ., էջ 208: **Մխննյան Հր.**, Անդրանիկի ժամանակը, գիրք Ա, Երևան, 1996, էջ 387: **Ճիզմեճեան Շղ.**, Պանդուխտ, Պէրոյթ, 1999, էջ 19:

¹¹ **Կարապետյան Մ.**, նշվ. աշխ., էջ 40:

Անուշավան Տեր-Մկրտիչյանի ղեկավարությամբ հավաքվել է ռամկավար կամավորների խումբը, որը 1915 թ. օգոստոսի 5-ին ռուսական նավով մեկնել է Արխանգելսկ, այնտեղից՝ Պետրոգրադ, ապա՝ Թիֆլիս¹²:

Արդեն 1917 թ. Նյու Յորքի հայկական եկեղեցու գավիթում հավաքագրվել էր ամերիկահայ կամավորների թվով յոթերորդ խումբը:

Ընդհանուր առմամբ, պաշտոնական տվյալներով բոլոր կամավորական զնդերում կռվող զինվորների ընդհանուր թիվը կազմել է 6.000-7.000, որոշ տվյալներով՝ 10.000, ընդ որում՝ ԱՄՆ-ից և եվրոպական երկրներից տարբեր ճանապարհներով հայրենիքի ազատագրմանը մասնակցելու նպատակով եկել էր շուրջ 3.000 հայ¹³:

Ամերիկահայերի նյութական աջակցությունը կովկասյան կամավորական շարժմանն ու կարոտյալներին.

Ամերիկահայության հայանպաստ ջանքերի շնորհիվ 1916 թ. հոկտեմբերի 21-22-ը ԱՄՆ-ի նախագահի ու Կոնգրեսի որոշմամբ երկրով մեկ հայտարարվել է «Հայոց օր», և, ի պաշտպանություն Հայ դատի, շուրջ 400 քաղաքներում կազմակերպվել են Օսմանյան կայսրությունում հայերի նկատմամբ իրականացվող բռնությունները դատապարտող հավաքներ, բողոքի ելույթներ ու ցույցեր, ինչպես նաև ազգանպաստ բազմաթիվ միջոցառումներ, հանգանակություններ և այլն: Ամերիկյան ժողովուրդն իր սրտակցությունն ու համերաշխությունն է արտահայտել իթթիհատական պետությունում հետապնդվող ու հալածվող քրիստոնյա ազգություններին:

Ընդհանուր առմամբ, ԱՄՆ-ը արևելյան այդ տարածաշրջանում (ներառյալ՝ Մերձավոր Արևելքը) իր ծրագրերի իրականացման համար հատկացրել էր 30 մլն դոլար¹⁴:

Ամերիկահայությունը Կովկաս կամավորներ տրամադրելուց բացի, զգալի նյութական նպաստ է հատկացրել վերոհիշյալ շարժմանը՝

¹² Նոյն տեղում, էջ 209, 210:

¹³ Կիրակոսյան Ջ., նշվ. աշխ., էջ 187:

¹⁴ Հայկ Վ., նշվ. աշխ., էջ 994: Թեոդիկ, նշվ. աշխ., 1922, էջ 284:

ընդհանուր առմամբ՝ շուրջ 342.000 դոլար¹⁵: Ամերիկահայությունն իր նպաստն է բերել նաև փախստականների փրկության ջանքերին: Այսպես, ԱՄՆ-ի հայ գործավորները 1-2 տարվա ընթացքում կամավորական շարժմանն ու փախստականներին ի նպաստ հանգանակել էին մոտավորապես 2 մլն դոլար¹⁶:

Կիլիկիայում հայկական կամավորական շարժման կազմակերպումը և Ամերիկայի հայ ազգային միությունը.

Կովկասում կամավորական շարժման լուծարումով արևմտահայության շրջանում չի մարել հայրենի տարածքներն ազատագրելու և հայ ժողովրդի ապրելու բնական իրավունքը պաշտպանելու սրբազան զգացումը, և նա ձեռնամուխ է եղել սեփական ուժերով կամավորական նոր շարժում կազմակերպելուն: Այդ նպատակով արտասահմանի, մասնավորապես, ԱՄՆ-ի հայությունը կարևոր բացատրական աշխատանք է իրականացրել դաշնակից տերությունների շրջանում՝ նրանցից ակնկալելով ինչպես քաղաքական ու դիվանագիտական, այնպես էլ նյութական ու ռազմական աջակցություն¹⁷:

1916 թ. նոյեմբերի 26-ին հիմնվել էր օսմանյան հպատակներից կամավոր հիմունքներով հավաքագրված «Արևելյան լեգեոնը»: Կամավորագրումը սկսվել է Եգիպտոսում, որի կորիզը կազմել են 600 մուսալեռցիներ (Ֆրանսիայի շնորհիվ Փորթ-Սայիդում ապաստանածներից)¹⁸, ապա նաև 300 եգիպտահայեր, օսմանյան բանակից ու այլ վայրերից փախստական 236 հայեր¹⁹:

¹⁵ Համառոտ տեղեկագիր Հ. Կ. Ազգային Բիւրօի գործունեութեան. 1915-1917 թթ., Թիֆլիս, ա.թ., էջ 7:

¹⁶ Զովուրեան Եղ., Մեծ պատերազմը եւ հայ ժողովուրդը (Անդրանիկ, Մուրատ եւ Պօղոս Նուպար), հ. 1, Կ. Պոլիս, 1920, էջ 79:

¹⁷ Ավելի մանրամասն տես՝ Ավագյան Ք., Ամերիկայի Միացյալ Նահանգների հայ գաղութի պատմությունը (Սկզբնավորումից մինչև 1924 թ.), Երևան, 2000, էջ 111-120:

¹⁸ Մահակյան Ռ. Գ., Թուրք-ֆրանսիական հարաբերությունները և Կիլիկիան. 1919-1921 թթ., Երևան, 1970, էջ 115, 116:

¹⁹ Յուշամատեան Մուսա Լերան, խմբ. Մ. Գուշագճեան, Պ. Մատուտեան, Պէրյոյօ, 1970, էջ 426: Մալխազունի Օ. Թ., Ամերիկահայ կամավորները եւ իրենց յաղթանակը, «Արագած», թիւ 12, Ապրիլ 12, 1919, էջ 172: Մահակյան Ռ. Գ., նշվ. աշխ., էջ 116:

Եզիպտահայ պատվիրակության ջանքերով և համախմբման նկատմամբ ամերիկահայ ազգայինների դրսևորած բարձր գիտակցության շնորհիվ հնարավոր էր դարձել 1917 թ. մարտի 16-26-ը Բոստոնում անցկացնել քաղաքական չորս կուսակցությունների միջև համերաշխության բանակցությունների յոթ նիստեր, որոնց ընթացքում էլ կազմակերպվել էր Ամերիկայի հայ ազգային միությունը (ԱՀԱՄ): Միությունը բաղկացած էր քաղաքական չորս կուսակցությունների (ՄԴՀ, Վերակազմյալ հնչակյան, ՀՅԴ, ՀՄՌ), ազգային երկու եկեղեցիների (առաքելական, ավետարանական) և ՀԲԸՄ ներկայացուցիչներից (ատենապետ՝ Միհրան Սվազյան)²⁰:

Առաջին աշխարհամարտի սկսվելուց ի վեր առաջին անգամ էր, որ հայ քաղաքական կուսակցությունները (մասնավորապես՝ ՀՅԴ-ն), միասնականություն էին հանդես բերել ազգային կարևոր ձեռնարկների իրականացման գործում: Կարճ ժամանակում ԱՄՆ-ում արդեն ստեղծվել էր միության 187 մասնաճյուղ: Ամերիկայի հայ ազգային միության նպատակն էր ամերիկահայ նյութական ու բարոյական ուժերը համախմբել և դրանք ի սպաս դնել Հայաստանի և Կիլիկիայի ազատագրմանը, վերաշինությանն ու կարոտյալների անմիջական օգնությանը, ինչպես նաև՝ ԱՄՆ-ում հայանպաստ քարոզչություն և դիվանագիտական ձեռնարկներ իրականացնել²¹: Միությունն իր գործունեությունը համաձայնեցնելու էր Փարիզի Ազգային պատվիրակության հետ՝ հանդիսանալով նրա լիազոր ներկայացուցչական մարմինն ԱՄՆ-ում²²: Միաժամանակ, ամերիկյան պաշտոնական շրջանների կողմից ճանաչվել էր որպես ամերիկահայ գաղութը ներկայացնող մարմին՝ դառնալով հայկական առաջին լոբբիստական կազմակերպությունը ԱՄՆ-ում²³:

²⁰ Տեղեկագիր Հայ Ազգային Միութեան Ամերիկայի, էջ 11, 12: Սահմանադրություն և կանոնադրություն Հայ Ազգային Միութեան Ամերիկայի, Պոսթոն, 1917, էջ 2, 19, 20: **Թեղիկ**, նշվ. աշխ., 1922, էջ 286:

²¹ **Ճիզմեճեան Մ. Գ.**, նշվ. աշխ., էջ 353:

²² Նույն տեղում, էջ 352: Սահմանադրություն և կանոնադրություն Հայ Ազգային Միութեան Ամերիկայի, էջ 1, 2:

²³ Ավելի մանրամասն տես՝ **Ավագյան Բ.**, Հայ առաջին լոբբիստական կազմակերպությունը ԱՄՆ-ում, «Հայոց պատմության հարցեր», Երևան, 2003, թիվ 4, էջ 98-104:

Հայաստանի ազատագրության նպատակով Ամերիկայի հայ ազգային միության իրականացրած կարևոր ձեռնարկներից՝ ամերիկահայության շրջանում կամավորական նոր շարժման կազմակերպումը, մեծ խանդավառություն էր առաջ բերել գաղութում. «Հազարաւորներ կը ձգէին հանգիստ աշխատանք ու գրասեղան, ապահով կեանք ու փայլուն ապագայ՝ զօրացնելու համար կորիզը «հայկական բանակին»²⁴:

Կարճ ժամանակում՝ ընդամենը վեց ամսում (1917 թ. հունիսի 9 - նոյեմբերի 3), ֆրանսիական հովանավորության ներքո սկսված կամավորական շարժմանն իրենց մասնակցությունը բերելու նպատակով զինվորագրվել էր 5.000 ամերիկահայ, սակայն, հակառակ ամերիկահայության շրջանում ստեղծված աննախադեպ խանդավառության, փոխադրական միջոցների տղության պատճառով մեկնելու հնարավորություն էր ընձեռվել ընդամենը 1.172-ին (որոնցից վերապրել է ընդամենը 250 հայ²⁵, իսկ մնացյալը հետագայում զինվորագրվել է ԱՄՆ-ի բանակին՝ կռվելով Գերմանիայի դեմ արևմտյան ճակատներում)²⁶:

Մեծ մասամբ քեսայցի, սեբաստացի, խարբեղոցի, արաբկիրցի, չնքուշցի, տիգրանակերտցի, հուսեյնիկցի այդ երիտասարդները ներառում էին ԱՄՆ-ի գրեթե բոլոր հայաշատ նահանգները: Կամավորագրվածների մեծ մասը կուսակցականներ էին՝ վերակազմյալ հնչակյաններ, դաշնակցականներ, սոցիալ-դեմոկրատ հնչակյաններ, ռամկավարներ: «Արևելյան լեգեոն» կամավորագրված ամերիկահայերի կազմում կային նաև մի շարք բարձրաստիճան զինվորականներ (հրամանատարներ Ջիմ Չանգայան, Հայկ Ազատյան, Տիգրան Պոյաճյան, Ռուբեն

²⁴ **Տամատեան Մ.**, Իմ յուշերես, խմբ. եւ ծանօթ. Վ. Ղազարեան, Պեյրոս, 1985, էջ 114: Յուշամատեան Մեծ Եղեռնի, էջ 891:

²⁵ **Yeretzian, A. S.** A History of Armenian Immigration to America with Special Reference to Conditions in Los Angeles. A Thesis. California, 1923, p. 11.

²⁶ Տեղեկագիր Հայ Ազգային Միութեան Ամերիկայի, էջ 27: **Տեղիկեան Պ. Յ.**, Միհրան Տամատեան (1863-1945), Գահիրե, 1956, էջ 196:

Հերյան, Վահան Չուրկենց, Վաղարշակ վրդ. Արշակունի, Ջոն Շիշմանյան և այլոք)²⁷:

Ամերիակահայ կամավորներն «Արևելյան լեզեոնի» իրենց քաջարի հայրենակիցների հետ միասին լուրջ ավանդ են ներդրել 1918 թ. սեպտեմբերի 19-ին Պաղեստինում՝ Արարայի անառիկ բարձունքների վրա թուրքական բանակին պարտության մատնելու գործում²⁸:

1917 թ. ապրիլի 6-ին Առաջին աշխարհամարտին ԱՄՆ-ի ներքաշումով, ինչպես նաև, ելնելով փոխադրությունների կապակցությամբ առաջ եկած դժվարություններից, դադարել էր հայ կամավորների փոխադրումը Ֆրանսիա, ուստի ամերիկահայությունն իր ողջ ուժն ու կարողությունը ծառայեցրել է նաև հանուն հյուրընկալ երկրի պաշտպանության՝ անդամագրվելով դաշնակցային զինված ուժերի շարքերը:

Պատերազմի ավարտից հետո ԱՄՆ-ի կառավարությունը, գնահատելով ամերիկահայերի նվիրվածությունը, նրանցից շատերին արժանացրել է բարձր պարգևների, շնորհել մեծ արտոնություններ ու նպաստներ: Բացի այդ, ԱՄՆ-ի բանակում ծառայած ամերիկահայ զինվորականները, վերադառնալով, ավելի մեծ արտոնություններից են օգտվել, քան ֆրանսիական դրոշի ներքո մարտնչած ամերիկահայ լեզեոնականները, որոնք վերջին հաշվով զրկվել են ամեն տեսակի նպաստներից, իրավունքներից և արտոնություններից՝ հանձնվելով բախտի քմահաճույքին: Միայն Ամերիկայի հայ ազգային միության շնորհիվ էր, որ նրանց վիրավոր ու կարիքավոր մասը ստացել էր ընդհանուր առմամբ շուրջ 1.193 դոլարի օգնություն, իսկ բազմաթիվ ամերիկարենակ կամավորների շնորհիվ էր Միության Պատվո վկայագիր²⁹:

²⁷ Յուզամատեան Մուսա Լերան, էջ 426, 428: The Armenians in Massachusetts, p. 54. **Պոյաճեան Ս. Յ.**, Հայկական Լեզեոնը. Պատմական յուշագրություն, Ուոթթոսուն, 1965, էջ 86: **Պարթևեան Ս.**, Արարա. Հայկական Լեզեոնը, Ադեքսանդրիա, 1919, էջ 88, 102:

²⁸ Ավելի մանրամասն տես՝ **Ավագեան Զ.**, Կիլիկիահայությունը ԱՄՆ-ում եւ նրանց նպաստը Բնօրրանին. Ամերիկահայերը եւ «Արեւելեան-Հայկական լեզեոնը», «Հասկ». Հայագիտական տարեգիրք, Նոր Շրջան, ԺԱ Տարի, 2007-2008, Անթիլիաս-Լիբանան, 2009, էջ 61-79:

²⁹ **Պոյաճեան Ս. Յ.**, նշվ. աշխ., էջ 87: Տեղեկագիր Հայ Ազգային Միութեան Ամերիկայի, էջ 28:

Ամփոփելով նշենք, որ հայ ժողովրդի համար ճակատագրական դարձած Առաջին աշխարհամարտի տարիներին և հետո բաղձալի երկրի ազատագրման համար ԱՄՆ-ի հայության գործադրած բազմակողմանի ջանքերը, ընդ որում՝ մասնակցությունը Կովկասում և Կիլիկիայում մղված կամավորական շարժումներին, բախվելով արևմտյան տերությունների աշխարհաքաղաքական խարդախ շահերին և երկդիմի խաղերին, ինչպես նաև որպես արդյունք՝ Օսմանյան կայսրությունում և ցարական Ռուսաստանում տեղի ունեցած քաղաքական արմատական փոփոխություններին ու ճգնաժամային իրավիճակին, վերջին հաշվով ի դերն են եղել՝ տարագիր հայությանը վերջնականապես ամրացնելով որդեգրած նոր երկրին:

КНАРИК АВАКЯН

Институт истории НАН РА

ПЕРВАЯ МИРОВАЯ ВОЙНА И АМЕРИКАНСКИЕ АРМЯНЕ

В ставшие роковыми для армян годы Первой мировой войны (1914-1918 гг.), американские армяне объединили весь свой умственный, финансовый, социальный и политический потенциал в целях оказания дипломатической, военной, людской (Кавказское и Киликийское добровольческие движения) и прочей всевозможной помощи родине и народу. Они активно участвовали в акциях в защиту Армянского вопроса в Европе и в США.

KNARIK AVAKIAN

Institute of History, NAS RA

THE FIRST WORLD WAR AND THE ARMENIAN-AMERICANS

During the years of the First World War (1914-1918), which were disastrous for the Armenian people, the Armenian community of the US, assembling its entire intra-communal intellectual, financial, public and political resources, has assisted the Motherland and its people by all the possible diplomatic, military and human means (Caucasian and Cilician voluntary movements) and has taken part in the enterprises aiming at the defense of the Armenian Action in Europe and in the USA.

ՎԵՐԺԻՆԵ ՄՎԱԶԼՅԱՆ

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ

ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԸ ԵՎ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ ԱԿԱՆԱՏԵՍ ՎԵՐԱՊՐՈՂՆԵՐԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1915-1923 թթ. Հայոց ցեղասպանությունը վերապրած ականատեսները, ովքեր այլևս չկան, 1955 թ.-ից՝ շուրջ վեց տասնամյակների ընթացքում ամենայն մանրամասնությամբ վերհիշել և մեզ են հաղորդել քսաներորդ դարում իրագործված առաջին ցեղասպանության պատմա-քաղաքական հանգամանքները: Նրանց ավագ սերնդի ներկայացուցիչները նույնիսկ հիշել են Օսմանյան կայսրության 1908 թ. Սահմանադրության հռչակումը, որի կարգախոսն էր՝ «*Հիրրիէթ, աղալէթ, մուսավաթ, էաշասըն միլլէթ*» («Ազատություն, Արդարություն, Հավասարություն, Կեցցե՛ ժողովուրդը» - թուրք.):

Սակայն թուրքական սահմանադրության հռչակման մեկ տարին դեռ չէր բոլորել, երբ համիդյան կոտորածներից գերծ մնացած Ադանան

ու նրա շրջակա հայաշատ գյուղերը 1909 թ. իթթիհատականների ատելության թիրախ դարձան և 30.000 անմեղ հայեր ողջակիզվեցին:

Ըստ էության, այդ Մեծ եղեռնի սկիզբն էր, երբ երիտթուրքերը, հիմք ընդունելով «Իթթիհատ վե թերաքքի» կուսակցության դեռևս 1911 թ. Սալոնիկում կազմակերպած գաղտնի ժողովի որոշումները, տենդորեն նախապատրաստվում էին հիմնովին բնաջնջել հայ ժողովրդին՝ սպասելով հարմար առիթի: Այդ առիթն ստեղծվեց, երբ բռնկվեց Առաջին համաշխարհային պատերազմը: Թուրքիան պատերազմի մեջ մտավ զավթողական նպատակներով և հայերի բնաջնջումն իրականացնելու իր հրեշային ծրագրով:

1914 թ. օգոստոսի 6-ին Կ. Պոլսում կնքվում է գերմանո-թուրքական զինակցության համաձայնագիրը: 1915 թ. փետրվարին «Միություն և առաջադիմություն» կուսակցությունն ստեղծում է հատուկ հանձնաժողով՝ «Երեքի գործադիր կոմիտե» (Բեհաեդդին Շաքիր, դոկտ. Նազըմ, Միդիաթ Շյուքրի) Օսմանյան կայսրության հայերի տեղահանությունն ու կոտորածը կազմակերպելու համար: Այն մշակել էր հայերի բռնագաղթերի ժամկետները և ուղիները, ոչնչացնելու վայրերը, ջարդարարների գործելակերպը, բանտերից ազատել քրեական հանցագործներին, կազմել երիտթուրքական խմբապետերի հրամանատարության տակ գործող չեթեններ (հրոսակախմբեր), որոնք «*Թեշքիլաթը մահունե*» («Հատուկ կազմակերպություն» - թուրք.) անվան տակ պետք է իրագործեին հայերի ցեղասպանությունը:

1915 թ. ապրիլի 15-ին, թուրքական կառավարության ներքին գործերի նախարար Թալեաթ փաշայի, ռազմական նախարար Էնվեր փաշայի և Իթթիհատի գլխավոր քարտուղար ու լուսավորության նախարար դոկտ. Նազըմի ստորագրությամբ, գաղտնի հրաման է ուղարկվում իշխանություններին՝ հայերի տեղահանության ու բնաջնջման վերաբերյալ:

Իթթիհատի գործադիր կոմիտեն նախատեսում էր այդ տեղահանությունն ու կոտորածը իրագործել ոչ թե բանակի և ոստիկանության միջոցով, այլ՝ բանտից ազատված ռճրագործներին, մարդասպաններին,

ինչպես նաև՝ քրդերին, չերքեզներին ու չեչեններին հանձնելով այդ գործը:

Պատմաքաղաքական այս հանգամանքներում Օսմանյան կայսրությունում ապրող քրիստոնյա ազգերի, այդ թվում նաև հայերի համար մեծագույն չարիք էր դարձել ընդհանուր գորահավաքը (*Մեֆերբեր-լիք* - թուրք.): 18-45 տարեկան հայ տղամարդկանց, գորակոչի անվան տակ, ներգրավում էին աշխատանքային գումարտակների (*Ամեղե թաբուր* - թուրք.) մեջ և ըստ ռազմական նախարար Էնվեր փաշայի հատուկ հրահանգի՝ աչքից հեռու, ծածուկ վայրերում՝ սպանում: «...1914 թ. *Թուրքիան ընդհանուր մոբիլիզացիա հայտարարեց*, - պատմել է խարբերոցի վերապրող **Սարգիս Խաչատրյանը** (ծնվ. 1903 թ.), - *հայ երիտասարդներին թուրքական բանակ գորակոչեցին: Տարան, աշխատացրին Ամեղե թաբուրի մեջ, հետո էլ բոլորին սպանեցին*»¹:

Թուրքական գորահավաքին հաջորդում է զինահավաքը: Այն ուղեկցվում էր համատարած շուրջկալներով, որոնց ընթացքում «զենք» հավաքելու պատրվակի տակ թուրք ոստիկաններն ավերում էին հայերի տները, կողոպտում նրանց ունեցվածքը, ձերբակալում, սպանում շատերին:

Զորահավաքին ու զինահավաքին հաջորդում է հայ մտավորականների ձերբակալությունը, որպեսզի հայ ժողովուրդը զրկվի ոչ միայն իր ռազմունակ ուժից, այլև՝ ղեկավար մտքից: 1915 թ. ապրիլի 24-ին, շաբաթ կեսգիշերին, Կ. Պոլսում ապրող հարյուրավոր երևելի դեմքեր բռնությամբ տարվում են ոստիկանատուն, այնուհետև՝ արքայապետի անապատներ և բնաջնջվում:

Ամենուրեք փակվում են հայկական դպրոցներն ու վարժարանները: Հայկական կրթական օջախների հետ ավերվում են նաև հայկական եկեղեցիները: Ռուսական հետախուզությունը 1915 թ. մարտի 15-ին և ապրիլի 3-ի թուրքական պետության վերաբերյալ հաղորդագրության մեջ նշել է, որ ամբողջ երկրում տեղի են ունենում հայերի ձերբակալությո-

¹ **Մվազյան Վ.**, Հայոց ցեղասպանություն. Ականատես վերապրողների վկայություններ, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2011, վկայություն 116 (այսուհետև՝ վկ.), էջ 269:

յուններ, սիստեմատիկ կոտորածներ՝ Էրզրումում, Դյորսոյում, Զեյթունում և շրջակայքում. արյունալի ընդհարումներ՝ Վանում, Բիթլիսում, Մուշում. բռնություններ, թալան, սպանություններ՝ Ակնում և ամբողջ Փոքր Հայքում, ժողովրդի տնտեսական քայքայում, ընդհանուր կոտորած...

Առաջին համաշխարհային պատերազմի հենց սկզբից թուրք կառավարողները արևմտահայերի նկատմամբ կազմակերպեցին նոր, դաժան հալածանքներ, կողոպուտներ և սպանություններ՝ գլխավոր հարվածն ուղղելով Մուշի և Սասունի դեմ, որոնք անցյալում հայտնի էին որպես հայ ազգային ազատագրական շարժման կարևոր կենտրոններ:

1915 թ. գարնանը թուրքական կանոնավոր զորամասերը քրդական աշիրաթների հետ հարձակվեցին այդ գավառների հայ բնակչության վրա: Սասունցի ականատես-վկա **Եղիազար Կարապետյանը** (ծնվ. 1886 թ.) հանգամանորեն մեկնաբանել է պատմական այդ իրադարձությունների մանրամասները և վերջում, ամփոփել. «...*Այսպես, դարերի ընթացքում հողին ու մաճին կառչած հայաշատ այդ գավառը մի ցերեկվա և մի գիշերվա մեջ դարձավ ամայի՝ անմարդաբնակ: Իսկ նրա սեփական տերերը անողոր թուրքերի ու քրդերի ձեռքով հրեշային գործողությամբ՝ սրով մորթվեցին, կրակով այրվեցին, ջրով խեղդամահ եղան՝ 105 գյուղերի 70.000-80.000 երկու սեռի պատկանող հայ բնակիչները: Թալանի տրվեց միլիոնների հասնող նրանց հարստությունը: ...Հունիսի 28-ի օրը ոչ բարով Վարդավառի կիրակին էր. հայ ժողովրդի ուրախության տոնը, ավա՛ղ, դարձավ «մարդավառի» կիրակի՝ Տարոնի դաշտի հայության համար...»²:*

«*Տաք արյան հոտ*» էր բուրում նաև հերոսական Շապին-Գարահիսարում, Շատախում, Կարինում, Պոնտոսում, Մուշում, Սվազում, Խարբերդում, Մալաթիայում, Դիարբեքիում, Արևմտյան և Կենտրոնական Անատոլիայի հայաբնակ վայրերում՝ Իզմիրում, Բուրսայում, Անկարայում, Կոնիայում և այլուր: Աննկարագրելի դաժանությամբ ոչնչացնում էին բոլորին՝ չխնայելով նույնիսկ մանուկներին:

² Նույն տեղում, վկ. 1, էջ 75:

Արևմտահայության ահավոր վիճակի մասին է վկայել 1905 թ. Վանի Հայոց ձորի Կեմ գյուղում ծնված **Միրակ Մանասյանը**. «1915 թ. մարտի 4-ին լուր հասավ, որ հասարակական-քաղաքական գործիչ պարոն Բշխանին մեր հարևան Հիրձ գյուղում սպանել են: ...Մենք, որ այդ լսեցինք, հայրենակիցներով իրար անցանք: Մենք սկսեցինք պատրաստվել թուրքերի հարձակմանը: ...Վասպուրականցիները, որ հավաքվել էին այնտեղ, մեծ կամքի ուժով պաշտպանեցին և՛ Այգեստանը, և՛ Վանի կենտրոնը՝ Քաղաքամեջը: ...Մայիսի 6-ին Վանի բերդի վրա ծածանվեց Հայաստանի դրոշակը: Վասպուրականցիները մեծ սիրով ընդունեցին ռուսական զորքերին և հայ կամավորներին՝ Չորավար Անդրանիկի ղեկավարությամբ»³:

Իսկ Վանի շրջակա գյուղերում թուրքերը հասցրել էին տեղում բնաջնջել հազարավոր հայերի: Երբ ռուսական զորքերը մտնում են Վանին, նրանց ետևից նաև հայ գրողներ՝ Հովհաննես Թումանյանն ու Ալեքսանդր Շիրվանզադեն, ականատես են դառնում սահմուկեցուցիչ տեսարանների. «...Որտեղ հասցրել են՝ կոտորել են հայերին, - գրել է Հովհաննես Թումանյանն իր հուշերում, - գլխավորապես՝ տղամարդկանց ու հետները տարել գեղեցիկ կանանց: Եվ եթե ժամանակ են ունեցել, ռուսական բանակի և հայ կամավորների սարսափը շատ մոտ չի եղել, բարբարոսական զվարճություններ են հորինել. խաչել են, կենդանի մարդկանց զանազան մասերը կտրատել են, զանազան կերպ դասավորել, խաղեր են արել՝ մինչև կեսը դրել են պղնձի մեջ ու կեսից ներքև եփել, որ մյուս կեսը՝ կենդանի տեսնի ու զգա...: Շիկացած երկաթներով կտրել են մարմնի զանազան տեղերը և կրակի վրա խորովել, կենդանի խորովել են: Ծնողների առաջ երեխաներին են կոտորել, երեխաների առաջ՝ ծնողներին...»⁴:

Ուստի, ինչպես Վանում, Շատախում և այլ վայրերում մղված ինքնապաշտպանական հերոսամարտերը իթթիհատական կառավարության կիրառած բռնությունների դեմ ըմբոստացող արևմտահայության

³ Նույն տեղում, վկ. 35, էջ 138-139:

⁴ **Թումանյան Հովհ.**, Երկերի ժողովածու, հ. 6, Երևան, 1959, էջ 212-213:

ազնիվ պոռթկումն էր, նրա բողոքի ձայնը՝ ուղղված աշխարհի մեծ տերություններին: Սակայն ո՛չ Եվրոպան, և ո՛չ Ամերիկյան չմիջամտեցին, միայն ազգային հերոսներն էին, որ սատար էին կանգնում անօգնական ժողովրդին: Եվ երբ ռուսական զորքերը նահանջում են, ստիպված նրանց ետևից Արևելահայաստան են գաղթում նաև Վանի, Մասունի, Շատախի, Շապին-Գարահիսարի, Մուշի, Բիթլիսի, Ալաշկերտի, Բայազետի, Բաբերդի, Էրզրումի և այլ բնակավայրերի հայերը:

Ահավոր մղձավանջ ապրեց նաև Կիլիկիայի հայությունը: Հայաշատ Կիլիկիայով էր անցնում բացառիկ կարևորություն ներկայացնող Բեռլին-Բաղդադ երկաթուղին: Այդ հանգամանքը մտահոգում էր Թուրքիայի կառավարությանը, քանի որ Կիլիկիայի աշխատասեր ու գործունյա հայությունն իր բարգավաճ վիճակով կարող էր տիրապետող դառնալ թուրքական տնտեսության մեջ: Լեռնային Կիլիկիայում Հաճընից, Ջեյթունից մինչև Դյորտյոլ սփռված էին հայկական գյուղերն ու ավանները, որոնց բնակիչները թեև զբաղվում էին մետաքսագործությամբ, ջուլիակությամբ, գորգագործությամբ և այլ տոհմիկ արհեստներով, սակայն նոր սերունդը բավական լուսավորյալ էր՝ այնտեղ գործող հայ և օտար դպրոցների ու քոլեջների շնորհիվ, որոնք կարևոր դեր էին կատարել նրանց հոգեգիտակցական աշխարհի ձևավորման վրա: Բացի այդ, 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո խոստացված, բայց չիրականացված «բարեփոխումների» առնչությամբ, կայսրության շատ գավառներում ծայր առած բռնություններն ու կոտորածները դեռևս վերջնականապես չէին բնաջնջել ի բնե ազատատենչ կիլիկիացիներին: Կիլիկիայի արծվաբույն Ջեյթունն արդեն վաղուց թուրքական բռնակալության զայրույթի կիզակետն էր դարձել: Հետևաբար, ժամանակն էր հին հաշիվները մաքրել նաև համարձակ գեյթունցիների հետ:

1915 թ. զարնանից սկսվում է Կիլիկիայի հայության բռնազաղթն ու կոտորածը: Մեկը մյուսի հետևից դատարկվում է Մարաշը, Այնթապը, Հաճընը, Անտիոքը, Իսկենդերունը, Քեսաբը և այլ հայաբնակ վայրեր. «Հայերի բռնազաղթը լոկ նենգամտորեն քողարկված մահվան դատավճար էր»:

ճիշտ էր», - գրել է ֆրանսիացի հրապարակախոս Ռընե Պինոնն իր «Հայերի ոչնչացումը. գերմանական մեթոդ՝ թուրքական գործ» աշխատության մեջ⁵:

Տարագրության ճամփաներին անխիղճ ոստիկաններն ու զինվորական համազգեստ հագած բանտերից դուրս բերված ոճրագործ մարդասպանները կողոպտում, թալանում էին բոլորին, առևանգում, պատվազրկում կանանց ու աղջիկներին:

Անգեն ու անդեկ մնացած անօգնական հայ ժողովուրդը, մտրակի ու ավիաների հարվածների ներքո, արցունքն աչքերին, քշվում էր իր պապենական շեն օջախներից: Թուրքական կառավարության նախաձեռնած ցեղասպանության քաղաքականությունն ընդգրկել էր Օսմանյան կայսրության գրեթե բոլոր հայաբնակ վայրերը:

Հայերի բնաջնջումն իրականացվում էր և՛ տեղերում, և թե՛ արտարավայրերում՝ Միջագետքի անձայրածիր անապատներում, հատկապես՝ Ռաքքայում, Հավրանում, Ռաս ուլ Այնում, Մեսքենեում, Մուրուճում, Դեյր էլ Ջորում և այլուր:

Եվ քանի որ հայերեն խոսելն արգելված էր, նրանք ստիպված իրենց վիշտն ու տառապանքն արտահայտել են նաև թուրքերեն.

<i>«Դեր Զոր դեղիքլերի բիսիք քասաբա, Քեսիլեն էրմենի գելմեզ հեսափա, Օսմանը էֆրաթը դեօնմիշ դասափա, Դինինին ուղրունա էօլեն էրմենի»:</i>	<i>«Դեր Զոր կոչվածն էր մի մեծ տեղավայր, Մորթված հայերին էլ հաշիվ չկար, Օսմանցի պետերը մսագործ դարձան, Հայերն են մեռնում հավատքի համար»⁶:</i>
---	---

Մալաթիացի **Մարի Վարդանյանը** (ծնվ. 1905 թ.) ևս նույն փաստի մասին է վկայել. «...Մահմեդական թուրքերն ասում էին. «Ուլ գյավուր մը սպանի, անտր հոգին դրախտ կերթա»...»⁷: Բացի այդ պատահում էր նաև այնպես, որ տղաներին փախցնում էին, թլպատում, ստիպում միայն թուրքերեն խոսել, իսկ աղջիկներին՝ բռնաբարում էին և կամ՝ խաչելով սպանում:

⁵ Pinon, R. La suppression des Arméniens. Méthode allemande – travail turc. Paris, 1916, p. 27.

⁶ Մվազյան Վ., նշվ. աշխ., վկ. 467, էջ 589:

⁷ Նույն տեղում, վկ. 132, էջ 289:

Հուսահատ հայ կանայք ստիպված ամուսնացել են շեյխերի կամ արաբ գյուղապետերի հետ: Այդ մասին է վկայել արաբ անապատական **Աբդուլ Ղաֆուրը** (ծնվ. 1915 թ., Ռաս ուլ Այն). *«Իրենց պատմական հայրենիքից բռնի կերպով տեղահանված հայերը, ծայրաստիճան ուժասպառ հասնելով Ռաս ուլ Այն կամա, թե՛ ակամա իրենց կյանքը փրկելու համար ծառայեցին արաբների տներում: Նրանց կանայք գեղեցիկ աչքեր ունեին և շատ աշխատասեր էին: Այդ կանայք ստիպված ամուսնացան մեր անապատական շեյխերի և կամ գյուղապետերի հետ: Անոնց մեծ մասը կրոնափոխ եղավ, իսկ ոմանք՝ ոչ: Բացասական հետևանքները հայտնվեցին ժամանակի ընթացքում՝ կամաց-կամաց նրանց հոգեբանության մեջ ստեղծելով տխուր ապրումներ և հոգեկան տանջանք: Հետագայում նրանք փորձեցին փնտրել և գտնել իրենց ողջ մնացած հարազատներին, կապ պահպանել նրանց հետ, միաժամանակ, որպես պարկեշտ կանայք՝ ընդունելով իրենց նոր կյանքը, ընտանիքը և զավակները: Մի հայ աղջիկ, որի հորն ու մորը սպանել էին թուրքերը, արքայի ճամփաները քայլել էր իր երկու փոքր եղբայրների հետ: Հոգնած ու սպառված՝ եղբայրները ճամփին մահացել էին, իսկ ինքը միայնակ հասել էր Ռաս ուլ Այն և հուսահատ ամուսնացել Շամամա աշիրաթի շեյխի հետ: Նա ծնել է ինձ՝ դառնալով իմ ու իմ քույր, եղբայրների հոգատար և սիրելի մայրը»⁸:*

Հետևաբար, ինչպես սիրիական անապատներում, նույնպես և կայսրության տարածքում, ստիպողական հանգամանքների բերումով իրենց մայրենին կորցրած, իրենց անունները փոխած, հավատափոխ դարձած հարյուր հազարավոր դժբախտ հայերի սերունդները մինչև օրս գոյատևում են՝ հավատարիմ մնալով իրենց նախնիների հիշատակին: Ծպտյալ հայերի այդ վիթխարի զանգվածն ինքնին կենդանի վկայությունն է Հայոց ցեղասպանության իրողության:

Հուլիսի 18-ին ստացվում է Քեսաբի հայության բռնագաղթի հրամանը: Տեսնելով, որ հերթն իրենց է հասնելու, հուլիսի 19-ին Մուսա Լեռան յոթ գյուղերի գրեթե բոլոր բնակիչները միաբանվելով, որոշում են՝

⁸ Նույն տեղում, վկ. 305, էջ 517:

չենթարկվել տեղահանության կորստաբեր հրամանին: 53 օր համառ մարտեր են մղվում՝ Եսայի Յաղոբյանի, Պետրոս Դավաթյանի և վերապատվելի Տիգրան Անդրեասյանի գլխավորությամբ: Այդ ընթացքում Քըզըլջայի, Քուզըղազի, Դավաջըքի և Ղափլան Դուզալիի բարձունքներում չորս լուրջ ճակատամարտ է տեղի ունենում: Ըստ այդմ էլ հյուսվել է ժողովրդական պատմական խրոխտ վիպերգը.

*«Մենք մուսալեռցի քաջ կտրիճներ ենք,
Բոլորս ալ վարժ զենք կրողներ ենք,
Թուրքը մեզ կուզե տեղահան անել,
Անապատներում մեզ բնաջնջել:*

*Մենք չենք կամենար լինել շանաստակ,
Մենք կուզենք թողնել մի լավ հիշատակ,
Փառքով մեռնելը մեզի պատիվ է,
Նահատակվելը ազգին պարծանք է...»⁹:*

Մուսա Լեռան հերոսամարտն աշխարհը ցնցեց: Այն ցույց տվեց մարդկությանը, թե ինչի է ընդունակ մի բուռ ժողովուրդ, եթե ունի հերոսական ավանդույթներ և միասնական կամքի ուժ:

Հոկտեմբեր ամսին կազմակերպվում է Ուրֆայի հերոսական ինքնապաշտպանությունը՝ Մկրտիչ Յոթնեղբայրյանի և Հարություն Ռաստկելենյանի գլխավորությամբ: Ոտքի է կանգնում Ուրֆայի ողջ հայությունը: Մանուկ ու ծեր, տղա ու աղջիկ, բոլորը մեկ մարդու նման ինքնամոռաց կռվում են 25 օր ու գիշեր անդադար: Հայոց թաղամասերը բաժանվում են վեց մարտական շրջանների, որտեղ տեղաբաշխված էին 800 մարտիկներ: Ուրֆացիները երդվում են. «Մենք պատրաստ ենք մեռնելու զենքը ձեռքներին»¹⁰:

Սակայն թուրք ոստիկաններն ու խուժանն անցնում են նոր հարձակման. գրավում են հայ կաթոլիկ եկեղեցին: Ուրֆացիները թշնամուն

թույլ են տալիս ներխուժել հայկական թաղամասը և, դարանակալելով, ոչնչացնել: Ասելիք էր դարձել նրանց խիզախությունը.

<i>«Ուրֆա բիւյիք՝ այրըլմագ, Դիբի դայիմ՝ դաղըլմագ, Ուրֆանըն եհղիթլէրի Հիչ բիր եերդէ բուլունմագ»:</i>	<i>«Ուրֆան մեծ է՝ չի բաժանվի, Հինքն ամուր է՝ չի փլվի, Ուրֆայի կտրիճները Ոչ մի տեղում չի գտնվի»¹¹:</i>
---	--

1920 թ. օգոստոսի 10-ին թուրքական կառավարության և Համաշխարհային Առաջին պատերազմում հաղթած դաշնակից պետությունների միջև կնքված Սևրի (Փարիզի մոտ) հաշտության պայմանագիրը կարող էր նպաստել Հայկական Հարցի լուծմանը և հայ ժողովրդին տրամադրել նրա ազգային համախմբման համար բավարար տարածքներ: Այդ նպատակին էին ուղղված նաև ԱՄՆ-ի 28-րդ նախագահ Վուդրո Վիլսոնի ջանքերը:

1921 թ. քեմալականները, օգտվելով միջազգային նոր իրադրությունից, որը ստեղծվել էր բոլշևիկյան Ռուսաստանի և քեմալական Թուրքիայի մերձեցման հետևանքով, հասան Սևրի պայմանագրի վերանայմանը:

Ավելին, 1923 թ. Լոզանի պայմանագրով դաշնակից տերությունները ճանաչեցին Մուստաֆա Քեմալի Անկարայի կառավարությունը և նրա իրավունքը Արևելյան Թրակիայի, Իզմիրի, Կիլիկիայի նկատմամբ, ինչպես նաև՝ բոլոր այն տարածքների նկատմամբ, որոնք Սևրի հաշտության պայմանագրով պիտի անցնեին Հայաստանին: Բացի այդ, նրանք ճանաչեցին Թուրքիայի նոր սահմանները, որոնք ընդգրկում էին նաև Արևելյան Հայաստանի նախկին շրջանները՝ Կարսը, Արդահանը, Սուրմալուն (Իգդիր): Դա Թուրքիայի հաղթանակն էր, իսկ Պատմական Հայաստանի մի փոքրիկ մասը՝ 1/10-ը, շարունակեց գոյություն ունենալ որպես Հայաստանի Առաջին, Երկրորդ և Երրորդ Հանրապետություն, սակայն հայ ժողովրդի մեծագույն մասը մնաց ցրված աշխարհի տարբեր երկրներում:

Եվ ստեղծվեց Հայ Միյուռքը որպես պատմական իրողություն:

⁹ Նույն տեղում, վկ. 635, էջ 622:

¹⁰ **Մանակեան Ա.**, Դիցագնական Ուրֆան և իր հայորդիները, Պեյրուֆ, 1955, էջ 818:

¹¹ **Մվազյան Վ.**, նշվ. աշխ., վկ. 638, էջ 623:

Հետևաբար, ավելի քան 150 բնակավայրերից տեղահանված ակա-նատես վերապրողները ոչ միայն պատմել են իրենց տխուր անցյալը՝ տեսածն ու զգացածը, այլև նշել են իրենց կրած անթիվ ու անհամար կո-րուստները և հանգել որոշակի քաղաքական եզրակացությունների, ինչ-պես այնթապցի վերապրող **Պարզև Մակարյանը** (ծնվ. 1915 թ.), որն ամ-փոփել է. «...Մեծ տերությունները հայերուն խաբեցին՝ Կիլիկիան թուր-քին տվին. Զեյթունը, Ադանան, Միսը, Մարաշը, Քիլիսը, Այնթապը, Ուր-ֆան, Կամուրջը և այլ քաղաքներ ամբողջապես հայաթափվեցան: Մեզի ստիպեցին, որ Կիլիկիայեն դուրս ելլանք: Մենք ստիպված մեր հայրե-նիքը լքեցինք: 1922 թ. ալ Իզմիրի աղետը սարքեցին. հայերն ու հույները կրակներուն մեջեն փախան, ծովը նետվեցան. ով կրցավ ինքզինքն ազատել՝ ուրիշ երկիր անցավ: Այսպիսով, Թուրքիան «մաքրեցին» քրիստոնյաներեն: Թուրքիան մնաց թուրքերուն, Արևմտյան Հայաս-տանն ու Կիլիկիան ալ հետը»¹²:

Մինչդեռ, այսօրվա պաշտոնական Թուրքիան, փոխանակ առերես-վի իր պատմության հետ, ընդհակառակը, իր կեղծ քարոզությամբ ու նենգափոխված պատմագիտությամբ ճգնում է խեղաթուրել պատմա-կան ստույգ փաստերը՝ սերունդներից խնամքով թաքցնելով 20-րդ դա-րասկզբին գործադրված Հայոց ցեղասպանությունը: Նրանք փորձում են շրջանցել պատմական այն իրողությունը, որ 1919 թ. թուրքական զինվո-րական տրիբունալը կազմակերպել է երիտթուրք պարագլուխների դա-տավարությունը՝ նրանց դատապարտելով մահվան: Հայ ժողովուրդը, որն ավելի քան 1,5 միլիոն անմեղ գոհ է տվել, կորցրել է իր բնօրրանի 9/10 մասը, այսօր 100-ամյա հեռավորությունից իր բարոյական, նյութա-կան և տարածքային կորուստների պահանջատերն է: Մանավանդ, Սև-րի պայմանագրով վավերացված պատմաքաղաքական փաստաթղթերը կարող են իրավական անժխտելի հիմք հանդիսանալ Հայկական հարցի արդարացի լուծման գործում:

¹² Նույն տեղում, վկ. 272, էջ 470:

ВЕРЖИНЕ СВАЗЛЯН

Институт археологии и этнографии НАН РА

ПЕРВАЯ МИРОВАЯ ВОЙНА СОГЛАСНО СВИДЕТЕЛЬСТВАМ ОЧЕВИДЦЕВ

Первая мировая война стала роковой для армянского народа, так как одновременно начался Геноцид армян (1915-1923 гг.).

Воспоминания свидетелей-очевидцев охватывают различные темы: они отображают красоту их родной природы, патриархальный уклад, обычаи и традиции армян, общественно-политическую жизнь, важные исторические события, чинимые главарями правительства младотурок жестокости – сборы налогов, военные сборы, сборы оружия, массовое истребление, насильственное выселение, резню, погромы, организованную ими депортацию в пустыни Месопотамии, невероятные страдания армян, которых заставляли идти по пустыням до изнеможения, а также справедливая и честная борьба армян в различных областях Западной Армении во имя защиты своего элементарного права на жизнь.

VERJINE SVAZLIAN

Institute of Archaeology and Ethnography of NAS RA

THE FIRST WORLD WAR ACCORDING TO THE TESTIMONIES OF THE EYEWITNESS SURVIVORS

The First World War proved fatal for the Armenian people, since the Armenian Genocide (1915-1923) began simultaneously.

The popular memoir-testimonies narrated by the eyewitness survivors cover a wide range of topics: they reflect the beauty of the native land, their daily patriarchal life and customs, the era in which they lived, the conditions of the communal-political life, the important historical events, the cruelties

committed in their regard by the leaders of the government of Young Turks, the forcible deportation organized by the latter to the uninhabited deserts of Mesopotamia, the inexpressible afflictions of the Armenians, as well as the righteous and noble struggle of the various sections of the Western Armenians against violence to protect their elementary right for life.

ԻՆԳՍ ԱՎԱԳՅԱՆ

*ՀՀ ԳԱԱ Շիրակի հայազհտական
հետազոտությունների կենտրոն*

ՄԵՐ ԳՆԴԻ ՆԱՀԱՆՁԸ (ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՂՈՒՆՅԱՆ - ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՀՈՒՇԱՊԱՏՈՒՄԸ)

Հովհաննես Հովհաննիսյան-Թոչունյանի հուշապատումը գրվել է 1915 թ. Մեծ եղեռնից 53 տարի անց՝ 1968 թ.: Վերապրածը իր հուշապատումը վերնագրել է «Մեր գնդի նահանջը», սակայն հուշապատման մեջ նա ներգրավել է անհամեմատ ավելի մեծ ժամանակահատված. Աբդուլ Համիդի կոտորածներից (1894-96 թթ) մինչև 1924 թ.: Վերապրածի հուշերում անգին են պատմական այնպիսի տեղեկությունները, որոնք վերաբերում են համիդյան և 1915 թ. Կամախի և Մանսայի կիրճերում կազմակերպված Երզնկայի խաղաղ բնակչության և թուրքական բանակ գորակոչված հայ զայթիկների, ասկյարների և ամալիա թաքուրների, դաբախանայում ծառայող հայ երիտասարդների կոտորածներին, Էրզրումի քարավանի դաժան ջարդին, Հասանդալայի բերդի և Բասենի դաշտում ջերմուկի վրա կառուցված բաղնիքի, Մարիդամիշի անտառներում փայտի մշակման ցեխի, սողցարանի աշխատանքներին, Էրզրումից խայտառակ նահանջի և զինվորական հիվանդանոցի հիվանդներին թշնամու հարձակման ժամանակ լքելու, Էրզրումի բերդի և բերդի դռների, Երզնկայի հայկական թաղի, Էկեղեցու, Եփրատի կամուրջների նկարագրությունը: Վերապրածը խոստովանում է. «Անշուշտ քար չէր իմ սիրտը. ես, ապրելով ցեղիս դահիճների կողքին, կհավաքեի փաստեր ու

իրողություններ մի օր լույս արևի հանելու և հրապարակելու հույսով»: Վերապրածը թե՛ իր, թե՛ մեր առջև դնում է մի կարևոր խնդիր. հավաքել, գրի առնել դաժան իրողությունները և վերապրածների հուշերը: Նա քաջ գիտակցում է ցեղասպանության համաշխարհային նշանակությունը նաև եղելությունը գրի առնելու, տարբեր լեզուներով թարգմանելու, միջազգային հանրությանը ներկայացնելու անհրաժեշտությունը: Վերապրածը Հայոց ցեղասպանությունը որակավորում է ոչ միայն որպես հայոց պատմության ողբերգական էջ, այլ համաշխարհային պատմության խոշոր ոճրագործություն, որից աշխարհը պիտի դասեր քաղի, հետազայում նման այլ ոճրագործություններից խուսափելու համար: «...Վաղը պատմությունը կդատի մեզ, մենք պետք է գրենք, թե ինչ է կատարվել 1915 թ. Թուրքահայաստանում: Համաշխարհային պատմության մեջ պետք է բոլոր լեզուներով գրվի. թող բոլոր, բոլոր ազգերն իմանան թուրք բարբարոսների վայրագությունների մասին», գրում է վերապրածը: Ուշագրավ է վերապրածի դիմելաձևը մեզ.«Ապագա հայրենիքի սերունդներ՝ աղջիկ թե պատանի, լավ լսեցեք էս բոլորը, էս իրողությունը, որ եղել է 1915թ. գարնանը Ձեր պապերու, մամերու, եղբայրներու, քույրերու հետ դուք Ձեր կյանքում չնոռանաք»: Վերապրածը իր հուշերում ներգրավել է նաև իր ընկերների, ազգականների, մերձավորների, հարևանների, անգամ թուրք զայթիկների հուշերը և փոքրիկ պատանիկներ, որոնք անգին տեղեկություններ են պարունակում պատմա-քաղաքական, սոցիալ-տնտեսական, ազգագրական և կրթական առումով: Այս ամենով հեղինակը փորձում է հաստատել, փաստագրել իր պատմածի ճշմարտությունը, առավել արժեքավոր ու ցնցող դարձնելով հիշողությունները: Հուշապատումը անավարտ է, պահպանված մասը՝ Գիրք առաջինն է և Գիրք երկրորդի մի հատվածը: Առաջինը գրեթե ամբողջական է, բացակայում են պահպանված ձեռագրի որոշ հատվածներ էջ 49, 135-148, 176-177, 233-ը: Հուշապատման այս հատվածը, որ վերապրածը նախապես վերնագրել է Գիրք առաջին.«Մեր գնդի նահանջը», բաղկացած է ութ տետրերից ընդհանուր հաշվով 369 էջ: Գիրք երկրորդը, որ հե-

ղինակը սկսում է Էջմիածնում Անդրանիկի գորախմբի լուծարումից հետո, մնում է անավարտ:

Հովհաննեսը ծնվել է 1899-1900 թթ., քանի որ ինքն է գրում, որ Մեծ եղեռնի ժամանակ տասնվեց տարեկան էր, Երզնկայի գավառի Ղարա-դեկին գյուղում, որ ութ կմ է հեռու Երզնկա քաղաքից¹: Տասնվեց-տասնյոթամյա պատանին, որ իր եղբոր և քրոջ հետ մագապուրծ էր եղել կոտորածից որբահավաքի արդյունքում հայտնվում է նախ Երզնկայի, ապա՝ Էրզրումի որբանոցում: Ցավոք դեռահաս աղջիկների առևանգման դեպքերը շարունակվում էին նաև ռուսական բանակի կողմից վերանվաճված տարածքներում գործող որբանոցներից, մասնավորապես նշենք 1917 թ. վերապրածի քրոջ՝ տասներեքամյա Հագարվարդի առևանգումը Էրզրումի որբանոցից²: Քրոջը փնտրելու նպատակով Էրզրումի որբանոցից հեռանում է նաև Հովհաննեսը իր երկու ընկերների՝ Մանուկի և Սիմոնի հետ: Քրոջ անհաջող որոնումներից հետո տղաները որոշ ժամանակ բանվորություն են անում Էրզրումի երկաթուղային կայարանում, ապա բանվորական խմբով տեղափոխվում Սարիղամիշ: 1917 թ. տղաները զինվորագրվում են նոր կազմավորված Հայկական կորպուսին և ծառայում բանակային առաջին բրիգադի Երզնկայի գնդում³: Տղաները ականատես են լինում հայկական ազգային զորամասերի նահանջին՝ Երզնկայից-Ալեքսանդրապոլ: Այս նահանջը ծանր հետք է թողնում վերապրածի գիտակցության և հոգեկան աշխարհի վրա, այդ իսկ պատճառով նա ամբողջ հուշապատումը վերնագրում է. «Մեր գնդի նահանջը»: «Մի օր առավոտյան,-պատմում է վերապրածը,-զինվորները հավաքվել էին բերդի⁴ վրա և նայում էին դեպի արևմուտք. «Այս ի՞նչ բան է, տղե՛ք, թուրքը գալիս է»,-մենք էլ վազեցինք, ելանք բերդի վրա, տեսանք, որ իրոք մի սև կետ շարժվում է: Հիմա ես ինչ որ պիտի

¹ Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան (ՀՏԲ), հ. III, էջ 542: **Մտեփանյան Գ.**, Երզնկա, (հնագույն դարերից մինչև մեր օրերը), Պ. Հովհաննիսյանի և **Ա.Տեր-Մտեփանյանի** խմբագրությամբ, Եր. 2005, էջ 607:

² **Մտեփանյան Գ.**, նշվ. աշխ., էջ 607:

³ Նույն տեղում, էջ 608:

⁴ Էրզրումի բերդի:

ասեմ Էրզրումի նահանջի մասին, գիտեմ, որ դուք չէք հավատալու, քանի որ ինչպես կարելի է առանց կռվի քաղաքը հանձնել թշնամուն: Հավատացեք, իմ պատմածի մեջ ոչ մի սուտ չկա, կան մարդիկ, որոնք կհաստատեն, որ իրոք այդպես էլ եղել է: Կանգնել ենք բերդի վրա, նայում ենք թե ի՞նչ է տեղի ունենալու: Մանուկը վազեց կազարմա, տեսնեմ իմ ու իր զենքը բերել է. «Վերցրու, ահա քո զենքը»: Մի քար բերեց, խշտիկը հանեց, սկսեց սրելը: «Ի՞նչ ես անում, Մանու՛կ»: «Չգիտե՞ս ինչ եմ անում: Պատրաստվի՛ր, հիմա կռիվը կսկսվի, դու էլ խշտիկդ սրիր, հարկավոր է մեր հարազատների վրեժը հանել: Երբ մեր գորքը սկսի հարձակվելը, մենք էլ պիտի մասնակցենք»:

-Տե՛ս, թշնամին հա մտենում է:

-Դու շատ ճիշտ ես ասում, Հովհաննե՛ս, չէ որ եթե կռիվը սկսվի, հենց այստեղից պիտի սկսվի,-Մանուկը սառեց, մնաց զենքը ձեռքին, զարմացած նայում է թշնամու շարժվելուն: Նիկոլ եղբայրը գոռաց. «Հովհաննե՛ս, Մանու՛կ, շուտ եկեք այստեղ»: «Ես չեմ գա, Մանու՛կ, գնա՛ տես, թե ինչ է ասում»,-տեսա մեր տղեքը բոլորը գնացին դեպի քաղաք: Քսան բռպե չէր անցել, հետ եկան, յուրաքանչյուրի ձեռքին մեկ-մեկ փթանոց երկու ժեշտից աման: Հիսնապետը խմբերի բաժանեց, ես նայում եմ թե ինչ են անում մեր տղեքը: Սիմոնը վազեց. «Շուտ արի՛, նահանջում ենք, ես ձեր պայուսակները պատրաստել եմ՝ սուխարի, պահածո եմ դրել, հիմա պահեստները պիտի վառենք»:

Մենք նայում ենք, թե ինչպես թուրքը դանդաղ առաջ է շարժվում, բերդի վրա լիքը զինվորներ նայում էին: Երբ ուրիշ գյուղից հարս էին բերում, դուրս էին գալիս նայելու, հիմա էլ մենք էինք թշնամուն նայում: Իսկ թշնամին գալիս էր ուղիղ ճանապարհով, ոչ մի վախ, երկու շարքով հանգիստ գալիս էր: Հիսնապետը գոռաց. «Եկե՛ք, ճանապարհի համար ուտելիք վերցրե՛ք: Ի՞նչ էք նստել, վե՛ր կացեք, նահանջ է»: «Ինչպե՞ս թե նահանջ է, կռիվ չպիտի՞ լինի»: «Կլինի, թե ոչ, չգիտեմ, իսկ հիմա նահանջ է, մերոնք շարժվում են»: Գնացինք հասանք մերոնց, պայուսակներս վերցրեցինք, շարժվում ենք: Քաղաքի բոլոր կողմերից գորքը շարժ-

վում է դեպի արևելք՝ Ղարսի դռան կողմը⁵: Վերջապես հասանք Ղարսի դռաը, այստեղ լիքը զինվոր էր, քաղաքի բոլոր կողմերից դեպի այս կողմ էին շարժվում: Մեր պահեստի զինվորները մոտ հարյուր հոգի կլինեին: Դռնից դուրս գալն անհնար էր, իրար էին ջարդում: «Եկե՛ք այս կողմ», - ասաց Նիկոլ եղբայրը. բերդի տակը կանգնեցինք: Մանուկը թե. «Հովհաննէս, եկ բարձրանանք վերև, տեսնենք թուրքը մտա՞վ քաղաք»: «Այսպիսի էլ բան լինի, այսքան զինվոր կա ու առանց կովի բերդաքաղաքը թողնում են, այսպիսի դավաճանություն էլ լինի»: «Ե՛կ իջնենք ներքև, Հովհաննէս, մերոնք պատրաստվում են դռնից դուրս գալ»: Իջանք ներքև, չորս-հինգ ձիերի վրա բարձած եկան ծանր գնդացիները, հետևից էլ՝ հետևակը, բոլորն էլ երիտասարդ, բայց ինչու՞ ենք նահանջում, մենք էլ չզիտենք: Հարգելի ընթերցողներ, որպեսզի դուք հավատաք, որ այս բոլորը իսկություն է, ես մի վկա ունեմ, նա կհաստատի: Հիմա ապրում է Երևանի Կոնդ թաղամասում, տունը «Օիծեռնակ» ճուղա-նուղու մոտ է: Վկաս Գաբրիել աղայի տղան է՝ երգնկացի Մուկուչը:

Քաղաքից բավականին հեռացել էինք, մեկ էլ տեսնենք «Խաբարդա, խաբարդա»⁶, - մի տաս ձիավոր պլետները⁷ ձեռքերին գոռում են աջ ու ձախ նահանջող գործի վրա: Մենք քաշվեցինք, կանգնեցինք մի կողմի վրա, որպեսզի տեսնենք, թե ինչ բան է: Երեք սահնակ անցավ, մեջն էլ լիքը, շուրթերի⁸ մեջ փաթաթված, սպիտակ փափախներով մարդիկ էին նստած: Ամեն մի սահնակին երեք ձի էր լծված, որոնք հետևում հազիվ քաշում էին սահնակները:

Ես հարցրի. «Ովքե՞ր են, Նիկո՛լ եղբայր»: «Չգիտե՞ս ովքեր են, մեր ազգի դավաճանները, - ասաց Մանուկը, - սատանան ասում է, խփի այս շներին, տես թե առանց ամոթի ինչպես են փախչում, քաղաքն էլ հանձնին թշնամուն»:

⁵ Երզրումն ուներ չորս գլխավոր դարպաս՝ Ախալցխայի, Երզնկայի, Թավրիզի, Խաբբերդի: ՀՏԲ, հ. III, էջ 44:

⁶ Ճանապարհ տվեք:

⁷ Մտրակ:

⁸ Մուշտակ:

Վերջապես հասանք Հասանդալա, հավաքվեցինք մի տեղ, կրակ վառեցինք, թեյ դրեցինք, հաց կերանք: «Նիկո՛լ եղբայր, - ասաց Մանուկը, - ես մի բան եմ ուզում իմանալ, դու մեծ ես, ավելին գիտես քան մենք, ինչի՞ համար առանց կովի թողեցինք քաղաքը»: «Ես էլ քեզ պես, Մանու՛կ ջան: Բոլորիս համար էլ ցավալի է»: Մանուկը թե. «Եկեք գնանք մեր Բասեյնի բաղնիքում⁹ լողանանք, ես գիտեմ, որ այլևս չենք տեսնելու մեր հայրենիքը»: «Ու՞մ դարդն է կտրել, - ասաց Նիկոլ եղբայրը, - որ քեզ համար բաղնիք վառի, դու էլ լողանաս»: «Իմ ասածը հանքային տաք ջուր է, հեռու չէ, եկեք գնա՛նք»: Գնացինք, այնքան էլ հեռու չէր, մի գեղեցիկ շենք էր: Մտանք, տեսանք զինվորները լողանում են, մենք էլ լողացանք: Գետնի տակից դուրս էր գալիս ոչ տաք, ոչ էլ սառը հանքային ջուրը:

Երեկոյան մեր կազարմեն մտան մի տաս-տասներկու մարդ, սկսեցին տրորվելը. «Այս ինչ անաստվածություն է, որ սրանք արեցին, առանց նախազգուշացնելու հանձնեցին քաղաքը, եթե այդպես պիտի լինեք, ինչու՞ վիրավոր, հիվանդ զինվորներին ժամանակին չուղարկեցին թիկունք»: Նրանցից մեկն ասաց. «Ա՛խ, ես կխելագարվեմ, իմ աչքի առջև է, թե ինչպես բոլոր հիվանդները լաց էին լինում»: Այդ տասներկու մարդն էլ լալիս էին՝ խփելով իրենց ծնկներին: Մենք մոտեցանք, որպեսզի իմանանք իսկական եղելությունը, եղբայր Նիկոլն հարցրեց. «Ի՞նչ է պատահել»: «Ի՞նչ ես ասում, ի՞նչ ես հարցնում, երեք շենք լիքը վիրավոր հիվանդ թողեցինք, որ թուրքը գա սպանի»: «Ա՛խ դուք ազգի դավաճաններ, - ասաց սրանցից մեկը, - եթե ես գիտենայի, թե ով էր նահանջի հրաման տվողը, տուն ու տեղը կայրեի, գոնե սիրտս կհանգստանար»: «Պատմե՛ք, գոնե մի բան հասկանանք»: «Ա՛յ տղա, չե՛ս հասկանում»: «Չէ՛, չե՛մ հասկանում»:

⁹ Արաքսի ձախակողմյան վտակ Մուրցը (Հասանկալա) հոսում է Հասանկալայի միջով: Քաղաքից ոչ հեռու բխում են երկաթային և ծծմբային հանքային ջրեր՝ 35-40՝ ջերմությամբ: Այդ աղբյուրներից երեքը վաղ ժամանակներից տեղացիներն օգտագործել են բուժման նպատակով: Հին ժամանակներից ի վեր քաղաքում եղել են բնական տաք ջրերով գործող բաղնիքներ: Նոր ժամանակներում քաղաքից մոտ 2 կմ հեռավորությամբ կային այդպիսի 2 քարաշեն բաղնիքներ, որոնցից մեկը գտնվում էր Մուրց (Հասանկալա) գետի աջ կողմում, իսկ մյուսը՝ ձախ: ՀՏԲ, հ. III, էջ 368-369:

- Այս տասներկու մարդս հիվանդանոցի աշխատողներն ենք, սովորականի նման այսօր էլ հիվանդանոցում աշխատում էինք, առավոտվա գործերս պրծանք, սկսեցինք ճաշվա պատրաստությունը: Մեկ էլ տեսնենք զորք է գնում դեպի Դարսի դուռը: Դեռ դրանք չէին հեռացել, տեսնենք ուրիշ տեղից է զորք գնում էլի նույն կողմը, քաղաքը մի քանի տեղից սկսեց վառվելը, մենք ոչ մի տեղեկություն չունեինք նահանջի մասին: Քանի գնաց, զորքի շարժը շատացավ, մեր բժիշկները հայտնեցին, որ նահանջ է: Այս անսպասելի լուրը լսելով՝ վիրավոր զինվորները, հիվանդները խառնվեցին իրար, այնպես էին լալիս. «Մեզ ու՛ր էք թշնամուն թողնում, լավ է դուք սպանեք»: «Խառնվել ենք իրար, չցիտենք ի՞նչ անենք: Մեր պալատի բժիշկը թե. «Շոր բերեք, ով կարող է թող հագնի հեռանա քաղաքից, ուրիշ միջոց չկա, ով ծանր է, մնում է, մենք ի՞նչ կարող ենք անել»: «Եվ այդպես էլ հիվանդներին թողեցինք հիվանդանոցում: Լալով, ողբալով թողեցինք հիվանդներին ու հեռացանք...»:

Թողնելով Էրզրումը՝ Երզնկայի գունդը Հասանդալայից նահանջում է Խանդարա և տեղակայվում Մելիմ գյուղում, ապա նահանջում դեպի Կարս, Ալեսադրապոլ, Ադին: Հետագա իրադարձությունների մասին վերաբաժը պատմում է. «Չգիտեմ 1918 թ. մայիսի 14-ը, թե 15-ն էր¹⁰, Երևանից առավոտյան իննի-տասի կողմ գնացքով ուղևորներ եկան Ադինի կայարան: Դեռ ուղևորները չէին կանգնել, թուրքի թնդանոթը արկ արձակեց դիմացի սարից: Ուղևորները այլևս Ալեքսանդրապոլ չգնացին, նորից հետ դարձան Երևան: Տագնապ տվեցին: Պատրաստ զորքը հավաքվեց գյուղի մեջ, շարժվեցինք դեպի կայարան: Երեք ծանր գնդացի դիրքավորեցինք գծի վերևում, հրամանատարները դիրքավոր-

¹⁰ 1918 թ. մայիսի 15-ին թուրքերը գրավեցին Ալեքսանդրապոլը: Իրենց կատարած գործողություններին օրինական տեսք տալու համար նրանք օգտագործում են տեղական ինքնակառավարման մարմինները: **Ալեքսանյան Կ.**, Տեղական կառույցների օգտագործման թուրքական քաղաքականությունը Ալեքսանդրապոլի գավառում 1918-1921 թթ., Գիտական աշխատություններ, հ. 8, Գյումրի, էջ 49-52: 1918թ. մայիսի 17-ին թուրքական զինվորական իշխանության կարգադրությամբ քաղաքացիների ընդհանուր ժողովն ընտրում է 29 հոգուց բաղկացած քաղաքային խորհուրդ, որն ընտրում է 15 հոգուց բաղկացած վարչություն: **Ալեքսանյան Կ.**, Փաստաթղթեր 1918թ. մայիսին թուրքական բանակի կողմից Ալեքսանդրապոլի գրավման և քաղաքային ինքնավարության նոր մարմինների ստեղծման մասին, Բանբեր Հայաստանի արխիվների, Եր., 2011, թիվ 1, էջ 24-37:

րեցին զորքին: Գյուղացիները փախան դեպի արևելյան կողմում գտնվող սարը: Կով, ոչխար ու մարդ խառնվել էին իրար, իսկ թշնամին ումբակոծում էր գյուղացիներին: Մի ժամի չափ սպասեցինք, մեկ էլ տեսնենք երեք ձիավոր առջևից, հետևից հետևակը՝ մոտ հինգ հարյուր հոգի, երկու շարքով դասավորված, կարմիր դրոշակը պարզած, շարժվում են առաջ: Իջան ներքև, հասան ջրի ափին: «Ինչ լավ կլինի, թո՛ղ գան, եղբայր Հովհաննես, - ասաց Մանուկը, - մի լավ դաս տանք այդ ավագանիներին, մենք բարձունքին ենք, իրենք ներքևում: Վերջապես հասավ ատելի թշնամու հետ հաշիվ տեսնելու ժամը, - գնդացիքը ուղիղ թշնամու վրա ուղղելով՝ ասաց Մանուկը, - Հովհաննես՛ս, նայի՛ր, լավ սովորել եմ գնդացիքով կրակել»: Մանուկն այնպես էր ոգևորվել, կարծես միանգամից ուզում էր իր վրեժը հանել բարբարոս գազան թուրքերից: Գնդացիքը պատրաստ պահած սպասում էր կռվելու հրամանին: Բայց կռվելու փոխարեն նահանջի հրաման տվեցին: Գնդացիների հրամանատար տասնապետ Թումասը հրամայեց. «Քանդե՛լ գնդացիները»: «Ես չե՛մ քանդի գնդացիները, ով ուզում է թող քանդի, - ասաց Մանուկն ու թքեց հեռացավ,-ինչի՞ համար ենք նահանջում»: «Մեզ Ալեքսանդրապոլից հրամայել են նահանջել դեպի Համամլու¹¹», - խոսեց Թումասը: Ես կանգնած նայում էի Թումասի ծուռ քթին, կարծես մեկն ինձ ասելիս լինեք. «Լավ գննիր Թումասի ծուռ քիթը, որ հետագայում պատմես քո գնդի ճակատագրի մասին»: Երեք տարի հետո՝ 1922 թ., Կրասնոդարի նոր շուկայում Հովհաննես Թոչունյանը պատահում է Երզնկայի գնդի գնդացիների տասնապետ Թումասին, ով պատմում է նրան գնդի հետագա ճակատագրի մասին:

Գնդի հետագա ուղին անցնում էր Ալազյազի փեշերով դեպի արևելք, թուրքերը կրնկոխ հետևում էին գնդին: Վերապրածի համար սուկալի հարված է դառնում Բաշ գյուղում մտերիմ ընկերոջ՝ Մանուկի սպանությունը: Հոգեկան ծանր վիճակում հայտնված զինվորին թույլ են տալիս մի քանի օրով մեկնել ընկերոջ գյուղ՝ Շահառլու հանգստանալու, որից հետո նա անկարող է լինում ետ վերադառնալ Երզնկայի գունդ

¹¹ Տե՛ս չՏԲ, հ. III, էջ 323, հ. IV, էջ 677-678:

և զինվորագրվում է Անդրանիկի կամավորական ջոկատ: 1918-22 թթ. ընթացքում վերապրածը, բազում զրկանքներ կրելով, հայտնվում է Հյուսիսային Կովկասում, որտեղ էլ պատահաբար հանդիպում է գնդացիների տասնապետ Թումասին և իմանում գնդի դաժան վախճանի մասին:

«...Մեր գունդը Համամլուում մնաց չզիտեմ յոթ, թե ութ օր, - պատմում է Թումասը, - Ալեքսանդրապոլից բավականին գորք եկավ մեծ թնդանոթներով ու ծանր գնդացիներով: Համամլիից սկսեցինք շարժվել դեպի Ղարաքիլիսա, կանգ առանք Ղշլաղում: Ղշլաղից բավականին հեռու սկսեցինք դիրքեր փորել ու սպասել թշնամուն: Վերջապես երևացին թուրքերը, գալիս էին շատ հանգիստ, ինչպես Էրզրումում էին գալիս, առանց վախի: Լավ մոտեցան... մերոնք սկսեցին ուժբազոճել: Սկսեցին աշխատել գնդացիները: Թշնամին մոլորվել էր, այսպիսի բանի չէր սպասում, թուրքը առաջ շարժվելու հույսը կորցրեց: Վեցերորդ օրը Վարդանլուի¹² կողմից ուժեղ զենքի ձայն էր գալիս: Դու մի ասի տեղական թուրքերը, որոնք տեղանքին շատ լավ ծանոթ էին, կլինեին հազար հոգի, սարերով Վարդանլուից իջնում էին մեր թիկունքը: Խուճապն ընկավ գորքի մեջ՝ Նահա՞նջ: «Ո՞վ էր լսողը: Ամբողջ ճակատով նահանջում ենք: Թուրքերը Վարդանլուի կողմից լցվեցին Ղարաքիլիսա: Հասանք Ղշլաղ, գնդացիները զցեցինք ջուրը, որ հեշտ նահանջենք, ուզածիդ չափ էլ զինվոր ենք: Հասանք Սանահին¹³, մեր պարուչիկը Թբիլիսիից էր: «Տղե՛ք, ո՞վ է ուզում ինձ հետ գալ Թբիլիսի»: «Ութսունի չափ տղա, մեկն էլ ես էի, առավոտյան պատրաստվեցինք գնալ Թբիլիսի: Հասանք Ջոջկան¹⁴, այնտեղից էլ մի մարդ մեզ տարավ Խաչեն Պոլիս¹⁵: Ահա տես, թե ինչ օյին բերեցին մեր գլխին խաչենցիները: Ո՞վ էր հայ գյուղացուց այսպիսի բան սպասում: Մի վեց հոգի, բավականին տարիքով

¹² Տե՛ս չՏԲ, հ. IV, էջ 778-779:

¹³ Նույն տեղում, էջ 493:

¹⁴ Նույն տեղում:

¹⁵ Բոլիս-Խաչեն, Բոլիս Մեծ, Բոլիս-Քաղատիպ ավան, Վրացական ՍՍՀ Բոլիսի շրջանում, նրա վարչական կենտրոնը: 1907թ. ուներ 380, 1914թ.՝ 607 հայ բնակիչ: չՏԲ, հ. I, էջ 720-721:

մարդիկ, եկան մեզ խնդրեցին, որ մեր զենքերը տանք իրենց. «Մեր գյուղում, ասում էին նրանք, - զենք չկա, չորս կողմերս էլ թուրքերն են, գոնե զենքով մենք թուրքերից պաշտպանվենք, փոխարենը ձեզ ապահով Թբիլիսի կհասցնենք»: «Շատ լավ էք մտածել, - ասաց մեր պարուչիկը ու զենքերս հանձնեցինք գյուղացիներին»: Իսկ խաչենցիները ահա թե ինչ էին մտածել. «Եկեք սրանց հանձնենք թուրքերին, թուրքերի մոտ մենք լավ մարդ կլինենք», - ու այսպես էլ արեցին: Իրենց հարևան թուրքերին հայտնել էին, որ իրենց մոտ ութսուն հայ զինվոր կա, որոնց կբերեն այս տեղը, թող թուրքերը այդտեղ սպանեն հայ զինվորներին:

Երկրորդ օրը՝ երեկոյան մեզ ասացին, որ պատրաստվենք, քանի որ շուտով պիտի գնանք: Մութը բավականին ընկել էր: Ելանք, գնում ենք Վալադի հետևից: Չզիտեմ, թե ինչքան գնացինք, մի ձորի մեջ Վալադն անհետացավ: Մեկ էլ տեսնենք բոլոր կողմերից մարդիկ են մոտենում մեզ: Սկսեցին մեր վրա կրակելը, մենք իրար էինք խառնվել: Լսվեցին վիրավորների ճիչերը: Իմ վրա եկողներին ես կրակեցի, ատրճանակը մոտս էր: Երկուսին սպանեցի: Ես ու մեր զինվորներից մեկը սկսեցինք դեպի անտառ փախչել: Մեզ հետապնդող չեղավ, երկուսով բարձրացանք սարնիվեր: Ցերեկները թաքնվում էինք, իսկ գիշերները՝ քայլում: Ութ օր հետո հազիվ Թբիլիսի հասանք, իսկ մեր ընկերները բոլորը զոհվեցին դավաճանների երեսից»:

ИНГА АВАГЯН

Ширакский центр арменоведческих

исследований НАН РА

ОТСТУПЛЕНИЕ НАШЕГО ПОЛКА (МЕМУАРЫ ОВАНЕСА ОВАННИСЯНА-ТРЧУНЯНА)

В статье представлен очередной том из серии „Пережившие Великий геноцид“, в котором к юбилею 100-летия Великого геноцида будут изданы воспоминания Ованеса Ованнисяна-Трчуныяна „Отступление

ние нашего полка”. Рукопись состоит из восьми блокнотов - 369 страниц. Мемуары содержат важные сведения и факты об исторических событиях 1915-1922 гг. и представляют масштабы этой страшной трагедии. На протяжении всей жизни Ованес Ованнисян-Трчунян пытается психологически преодолеть ужасы прошлого, но сделать это не только ему, но и другим пережившим Великий геноцид практически не удается. Во время Великого геноцида Ованесу Ованнисяну-Трчуняну было 16-17 лет. Едва избежав смерти, он обосновался в городе Ленинанкане-Гюмри. Мемуары были написаны спустя 53 года после великой трагедии армянского народа – в 1968 г.

INGA AVAGYAN

Shirak's Center of Armenological Studies of NAS RA

THE RETREAT OF OUR REGIMENT (MEMORIES OF HOVHANNES HOVHANNISYAN-TRCHUNYAN)

In the article has presented the series of publications and the next volume devoted to “People who experienced genocide” where the memorials of “The retreat of our regiment” by Hovhannes P. Hovhannisyan- Trchunyan is coming out. The memorial includes various dialogues, quotations, folklore (song, epic literature, stories, proverbs and sayings, blessings, curses, prayers, oaths and ashug songs), oral traditions. It consists of eight note-books (totally 369 pages). During the genocide the eye-witness was 16-17 year old teenager. Having a narrow escape he settled down and for a long time lived in Leninakan (Gyumri). The memorials of Hovhannes Hovhannisyan-Trchunyan were written in 1968 after 53 years of 1915 genocide.

ԱՐՄԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ,

ԱՐԵՎՍՏԱՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԳԱՎԱՌՈՒՄ 1914-1918 թթ.

Առաջին աշխարհամարտի տարիներին թուրքական յաթաղանից մազապուրծ հարյուր հազարավոր հայեր՝ Պարսկաստանից, Օսմանյան կայսրությունից, ինչպես նաև ռազմական գործողությունների թատերաբեմ դարձած սահմանամերձ շրջաններից, անցան Արևելյան Հայաստան և Անդրկովկասի տարբեր շրջաններ: Ռուսական տիրույթներ անցածների մի հոծ զանգված հաստատվեց նաև Ալեքսանդրապոլի գավառում:

Առաջին 281 պարսկահայերը այստեղ հայտնվեցին 1914 թ. նոյեմբերի կեսերին¹: Սրանց հետ միաժամանակ Ալեքսանդրապոլ քաղաքում և Արևելյան Շիրակի գյուղերում հաստատվեցին նաև առաջին 587 կարսեցիները²: Հաջորդ երկու շաբաթների ընթացքում Ալեքսանդրապոլի գավառ Կաղզվանից և Կարսի Խոջգեղի ու Կալկոս գյուղերից տեղափոխվեցին 792, իսկ Սարիղամիշից՝ 603 մարդ³:

Փախստականների արտահոսքն ավելի մեծ մասշտաբներ ընդունեց ռուսական զորքերի դեկտեմբերյան նահանջից հետո: Այսպես, Արդահան քաղաքի և համանուն գավառի քրիստոնյա ազգաբնակչությունը՝ թվով 2021 մարդ, տեղավորվեց Ալեքսանդրապոլ, Կարս և Ախալքալաք քաղաքներում: Նույն կերպ վարվեցին նաև 3221 օլթեցիները: Հիմնականում Ալեքսանդրապոլ, մասամբ նաև Կարս և Ախալքալաք քաղաքներում հաստատվեցին Արդվինից փախած 649 ու Բաթումից փախած 404 մարդը⁴:

¹ ՀԱԱ, ֆ. 50, ց. 1, գ. 20, թթ. 12, 139, գ. 21, թթ. 141-165:

² Նույն տեղում, գ. 20, թթ. 151-158:

³ Նույն տեղում, թթ. 149-252:

⁴ Նույն տեղում, թթ. 254-256:

1915 թ. հունվարի առաջին օրերին Երևանից Ալեքսանդրապոլ հասան ևս 400 պարսկահայեր⁵ և նաև առաջին 2000 արևմտահայ գաղթականները⁶: Եվս 800 կիսամերկ ու ռուսաբոբիկ փախստականներ Արևելյան Շիրակի գյուղերում հաստատվեցին Ծննդյան տոներից անմիջապես հետո՝ Օլթիից և Կարսի Թախտա գյուղից⁷: Այս նոր համալրումներից հետո ըստ Ալեքսանդրապոլի ազգային կենտրոնական հանձնաժողովի գաղթականական բաժնի հաշվումների՝ միայն քաղաքում և շրջակա մի քանի գյուղերում 1915 թ. հունվարի 8-ի դրությամբ փախստական-գաղթականների թիվը հասավ 3250-ի⁸:

Արիսիվային վավերագրերում և ժամանակի մամուլում տեղ գտած հաղորդումների համաձայն՝ հայերի հետ միասին Երևանի նահանգ, ապա նաև Անդրկովկասի այլ շրջաններ անցան նաև մեծ թվով հույներ ու ասորիներ: Ընդ որում, եթե առաջինները հիմնականում Կարսի մարզից էին, ապա ասորիները գաղթում էին Պարսկաստանից և մասամբ նաև Օսմանյան կայսրությունից:

Ալեքսանդրապոլի գավառում հաստատված փախստական-գաղթականների մեջ հայերից հետո թվով երկրորդը հույներն էին: Ընդ որում սրանք, ի տարբերություն հայերի, ռուսական հրամանատարության կողմից նախապես տեղեկացվում էին գորքերի տեղաշարժերի մասին, այնպես որ գաղթում էին իրենց իսկ սայլերով ու ունեցվածքով: Կովկասյան ռազմաճակատում ռազմական գործողությունների ընթացքում առաջին երկու ամիսների ընթացքում միայն Արդահանի գավառից Ալեքսանդրապոլի գավառ էր տեղափոխվել 1030 հույն: Նույն ժամանակահատվածում Մարիդամիշի գավառից Ալեքսանդրապոլի գավառի Շորագյալի շրջան էր տեղափոխվել մոտ 2500 հույն, որից 1000-ը հաստատվել էր Բայանդուր գյուղում⁹: Մինչև 1914 թ. դեկտեմբերի վերջ

⁵ «Գաւառի ձայն», Ալեքսանդրապոլ, 1915, N 1, 11 յունւարի, էջ 3:

⁶ **Մարգարյան Հ.**, Արևմտահայերի գաղթը Արևելյան Հայաստան 1915թ. հետո, Հայոց ցեղասպանության պատճառները և դասերը, մաս 3, Եր., 1995, էջ 9:

⁷ «Մշակ», Թիֆլիս, 1915, N 9, 16 յունւարի, էջ 3-4:

⁸ «Գաւառի ձայն», Ալեքսանդրապոլ, 1915, N 1, 11 յունւարի, էջ 3:

⁹ «Մշակ», Թիֆլիս, 1915, N 4, 9 յունւարի, էջ 3:

ևս 4000 հույներ Արևելյան Շիրակ էին տեղափոխվել Օլթիի շրջանի յոթ հունական գյուղերից¹⁰:

Արդյունքում՝ միայն Ալեքսանդրապոլ քաղաքում 1915 թ. հունվարի 3-ի դրությամբ տեղավորվել էր 600 հույն փախստական¹¹:

Ասորիներն անհամեմատ ավելի փոքրաթիվ էին: Մինչև 1914 թ. դեկտեմբեր Ալեքսանդրապոլի գավառում հաստատվել էր 64 ասորի՝ մի մասը Սալմաստի գավառի Խոսրովա, Փաթավուր և Ուլա գյուղերից էին, իսկ մյուս մասը՝ Վանի նահանգի Բաշկալեի գավառի Արջ և Սաբա գյուղերից¹²: Հաջորդ ամսվա ընթացքում Արդահանի գավառից Արևելյան Շիրակի և Զավախքի գյուղեր տեղափոխվեցին ևս 360 ասորիներ¹³:

1914 թ. նոյեմբերից մինչև 1915 թ. հունվարի վերջն ընկած ժամանակահատվածում Օսմանյան կայսրությունից, Պարսկաստանից և սահմանամերձ շրջաններից գաղթածների թվաքանակի մասին սպառիչ տեղեկություններ հավաքելու նպատակով Երևանի Վիճակագրական հանձնախումբը «Եղբայրական օգնության» տեղի Հայկական կոմիտեի հանձնարարությամբ հունվարի 30-ին Երևանի նահանգի յոթ գավառներում, Կարսի մարզի չորս շրջաններում և Թիֆլիսի նահանգի Ախալքալաքի գավառում անցկացրեց գաղթականության մեկօրյա ցուցակագրում:

Ալեքսանդրապոլի գավառում գաղթականության ցուցակագրումն անցկացրած «Եղբայրական օգնության» տեղի կոմիտեն¹⁴ արձանագրեց հետևյալ ցուցանիշները. ոչ լրիվ երեք ամիսների ընթացքում Ալեքսանդրապոլ քաղաքում և համանուն գավառի 63 գյուղերում հաստատվել էր 6909 մարդ, որից 4468-ը հայեր էին, 2270-ը՝ հույներ, 109-ը՝ ասորիներ,

¹⁰ Նույն տեղում, N 54, 13 մարտի, էջ 2:

¹¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1242, թ. 2: Արևմտահայ գաղթականությունը Ալեքսանդրապոլի գավառում 1914-1922թթ., փաստաթղթերի ժողովածու, խմբ. **Կ. Ալեքսանյան**, Եր., 2012, փաստ. N 4, էջ 48-54:

¹² ՀԱԱ, ֆ. 50, ց. 1, գ. 21, թթ. 251-258:

¹³ Նույն տեղում, թթ. 267-280:

¹⁴ Մանրամասն տե՛ս Ալեքսանդրապոլի գավառը վիճակագրական նյութերում (XIX դ.-XX դ. սկիզբ), փաստաթղթերի և նյութերի ժողովածու աշխատասիրությամբ **Ա. Հայրապետյանի**, Եր., 2011, էջ 232-235:

իսկ մնացած 62-ը՝ ռուսներ, վրացիներ, լեհեր, հրեաներ ու օսեր: Նույն ցուցակագրման համաձայն՝ միայն Ալեքսանդրապոլ քաղաքում փախստական-գաղթականների թիվը կազմում էր 3652 մարդ, որից 2262-ը հայեր էին, 1243-ը՝ հույներ, իսկ 85-ը՝ ասորիներ: Գավառի գյուղերում նորեկներն անհամեմատ ավելի քիչ էին. ընդամենը 3257 մարդ, որից 2206-ը հայեր էին, 1027-ը՝ հույներ, իսկ 24-ը՝ ասորիներ¹⁵:

1915 թ. գարնանը փախստական-գաղթականների թիվն Ալեքսանդրապոլի գավառում հասավ 8000-ի, որից 6000-ը հայեր էին, 1400-ը՝ հույներ, 570-ը՝ ասորիներ, իսկ 30-ը՝ ռուսներ: Համաձայն «Մշակ»-ի թղթակից Գևորգ ք. Մկրտումյանի հաշվումների՝ սրանից 3300-ը տեղավորվել էր Ալեքսանդրապոլի 15 հանրակացարաններում և 200 մասնավոր տներում, իսկ 4700-ը՝ Արևելյան Շիրակի 80 գյուղերում¹⁶:

Գաղթականության՝ երրորդ մեծ հոսքը սկսվեց 1915 թ. հուլիսին: Սարիղամիշի տակ թուրքերին ծանր պարտության մատնած ռուսական զորքերը մինչև 1915 թ. մայիս գրավեցին Թավրիզը, Ուրմիան, ապա նաև Ալաշկերտը, Բաշկալեն, Մանազկերտը, Շատախը, Արձեշը և Վանը: Ռուսական զորքերի այս հաղթարշավը հնարավորություն տվեց տասնյակ հազարավոր գաղթականների վերադառնալ հայրենի բնակավայրերը: Մակայն 1915 թ. հուլիսի 13-ին ռուսները, թուրքերին թողնելով գրեթե բոլոր գրավված շրջանները, մի քանի օրով անակնկալ նահանջեցին, ինչը մեծ խուճապ առաջացրեց արևմտահայության շրջանում՝ առիթ տալով անկազմակերպ ու քառասյին նոր գաղթի:

Միայն հուլիսի վերջին տասնօրյակում Վանից, Մանազկերտից, Մուշից և Բուլանդի Համգաշեխ, Կողակ ու Փկաշեն գյուղերից Ալեքսանդրապոլի գավառ գաղթեց շուրջ 5653 մարդ: Սրանցից 1688-ը, ըստ Բ. Իշխանյանի, հաստատվեց Ալեքսանդրապոլ քաղաքում և Արևելյան Շիրակի գյուղերում¹⁷, իսկ մնացած 3965-ը՝ «Եղբայրական օգնության»

¹⁵ Однодневная перепись беженцев из Турции, Персии и из мест, пограничных с Турцией (армян, айсоров, греков и пр.) 1914-1915 гг., перепись произведена 30-го января 1915 г, Эривань, 1915, стр. 26-31.

¹⁶ «Մշակ», Թիֆլիս, 1915, N 100, 13 մայիսի, էջ 3:

¹⁷ Նույն տեղում, N 204, 18 սեպտեմբերի, էջ 2-3:

Մեծ Ղարաքիլիսայի կոմիտեի հաղորդած տվյալների համաձայն, Փամբակի տեղամասի 23 գյուղերում¹⁸: Արևմտահայության ներհոսքը դեպի Ալեքսանդրապոլի գավառ իր բարձրակետին հասավ օգոստոսի վերջին: Համաձայն Ալ. Խատիսյանի Համառուսաստանյան քաղաքների միության կովկասյան բաժանմունք ներկայացրած զեկուցագրի գաղթականների թիվը գավառում հասավ 31000-ի¹⁹:

Գաղթականների աճին զուգահեռ գավառում մեծ մասշտաբներ ընդունեցին համաճարակային հիվանդությունները, որոնք հայտնվում էին Երևանից ու Էջմիածնից եկած արևմտահայերի միջոցով: Ըստ Ատրպետի՝ օգոստոսի 27-ից մինչև նոյեմբերի 1-ը Քաղաքների միության Ալեքսանդրապոլի հիվանդանոցն ընդունել էր այսպիսի 518 հիվանդ: Սրանցից 121-ը հաջորդ երկու ամիսների ընթացքում մահացել էր²⁰: Իսկ ընդհանուր առմամբ հարկ է նշել, որ Ալեքսանդրապոլի գավառում, շնորհիվ հասարակական կազմակերպությունների և հատկապես Քաղաքների միության կոմիտեի կողմից բացված հիվանդանոցների, մահացության մակարդակը ընդհանուրի համեմատ խիստ ցածր էր: Համաձայն Ալեքսանդրապոլի փոխանորդ Արտակ վարդապետի 1916 թ. հունիսի 16-ին Գևորգ Ե կաթողիկոսին ներկայացրած տեղեկագրի՝ ցրտից, սովից ու համաճարակային հիվանդություններից Ալեքսանդրապոլի գավառում 1915 թ. ընթացքում մահացել էր ընդամենը 1164 գաղթական²¹: Համեմատության համար նշենք, որ Էջմիածնում հաստատված 32000 գաղթականներից ըստ Բ. Իշխանյանի հաշվումների միայն 1915

¹⁸ Նույն տեղում, N 187, 26 օգոստոսի, էջ 3: «Համբաւարեր», Թիֆլիս, 1916, N 42, 16 հոկտեմբերի, էջ 1328:

¹⁹ Краткие сведения о волне беженцев из Турецкой Армении в июле 1915г. и о мерах, принятых Кавказским Комитетом Союза городов для борьбы с эпидемией среди них, Тифлис, 1915, стр. 26.

²⁰ «Մշակ», Թիֆլիս, 1915, N 249, 10 նոյեմբերի, էջ 3:

²¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1306, թ. 3-7:

թ. օգոստոսի վերջին տասնօրյակում սովի և համաճարակի գոհ էր դարձել 2135 մարդ, օրական միջին թվով՝ 236 մարդ²²:

1915 թ. օգոստոսին ռուսական զորամասերը վերագրավեցին հուլիսյան նահանջի արդյունքում կորցրած տարածքները, ինչը հնարավորություն տվեց տասնյակ հազարավոր արևմտահայերի կրկին վերադառնալու հայրենի օջախներ: Այս նոր տեղաշարժը, ըստ Ալեքսանդրապոլի փոխանորդ Արտակ վարդապետի, պիտի հնարավորություն տար ձմռան նախաշնամին զգալիորեն բեռնաթափել գավառը գաղթականներից: «Եղբայրական օգնության» տեղի կոմիտեի անցկացրած նոր ցուցակագրման համաձայն՝ Ալեքսանդրապոլում և գավառի 139 գյուղերում 1915 թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ գաղթականների թիվը նվազել էր մինչև 22815 մարդ (6844-ը՝ քաղաքում, 15971-ը՝ գավառի գյուղերում)²³: Սակայն, բեռնաթափումը կրեց ժամանակավոր բնույթ: Երևանում և Էջմիածնում տեղավորված արևմտահայության շրջանում դեռևս հուլիսի վերջերից ծայր առած համաճարակային հիվանդությունների և դրանցով պայմանավորված մահացության ահռելի մասշտաբների դեմ պայքարելու համար տեղի «Եղբայրական օգնության» կոմիտեի առաջարկությամբ որոշվեց գաղթականներին տեղափոխել նահանգի մյուս գավառներ: Արդյունքում 1915 թ. հոկտեմբերի 20-ին Ալեքսանդրապոլի գավառում գաղթականների թիվը կրկին հասավ 26000-ի²⁴: Հաջորդ երկու տասնօրյակների ընթացքում Երևանից Ալեքսանդրապոլի գավառի Մահմուդջուղ, Տաշղալա, Մասլուխլի, Ղըրխ, Փոքր Ղարաքիլիսա, Արթիկ և Քյաֆթառլի գյուղեր տեղափոխվեցին նախկինում Բուլանդից, Մանազկերտից, Ալաշկերտից և Բասենից գաղթած ևս 1261 արևմտահայեր²⁵: Իսկ արդեն դեկտեմբերին, համաձայն իշխան Ա.Մ. Արդուրյան-

²² «Մշակ», Թիֆլիս, 1915, N 203, 17 սեպտեմբերի, էջ 2: Ի դեպ 1915թ. օգոստոսի վերջին տասնօրյակում Էջմիածնում մահացածների թիվը հաշվելիս Ա-Ռոն նշում է 2613 մարդ (Տե՛ս Ա-Ռո, Մե՛ծ դեպքերը Վասպուրականում 1914-1915թթ., Եր., 1917, էջ 485):

²³ ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1287, թթ. 3-5:

²⁴ Краткие сведения о положении беженцев на Кавказе и оказанной им Союзом городов помощи за время с 20-го сентября по 1-ое ноября 1915г., вып. 2, Тифлис, 1915, стр. 12: «Մշակ», Թիֆլիս, 1915, N 229, 17 հոկտեմբերի, էջ 3:

²⁵ «Մշակ», Թիֆլիս, 1915, N 251, 12 նոյեմբերի, էջ 3:

Երկայնաբազուկի Քաղաքների միության կովկասյան բաժանմունք ներկայացրած զեկուցագրի, գաղթականներով բնակեցվեցին գավառի բոլոր 186 գյուղերը: Միայն Փամբակի 26 գյուղերում տեղավորվել էր 4000 արևմտահայ²⁶:

Ցավոք, գաղթականությանը վերաբերող վիճակագրական նյութի առատությունը հատուկ է միայն 1915 թ.: 1916 թ. սկսած Ալեքսանդրապոլի գավառում հաստատվածների վերաբերյալ վիճակագրական տեղեկություններն արխիվային վավերագրերում և մամուլի էջերում տարեցտարի դառնում են կցկտուր, իսկ հաճախ՝ նաև իրարամեծ, ինչն էլ ավելի է բարդացնում նորեկների թվաքանակի և, հատկապես, տեղաշարժի ուսումնասիրությունը: Օրինակ, 1916 թ. փետրվարի 14-ին Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերության կողմից անցկացվեց գաղթականության նոր ցուցակագրում, համաձայն որի, Ալեքսանդրապոլի գավառում կար 32000 գաղթական²⁷: Չորս ամիս անց՝ հունիսի 20-ին, ըստ տեղի թեմակալ առաջնորդ Արտակ վարդապետի կաթողիկոսին ներկայացրած հաշվետվության, սրանցից մնացել էր 19799-ը (4739 տղամարդ, 6122 կին, 8938 երեխա)²⁸: Թե ո՞րն էր գաղթականների թվի նվազման պատճառը, և ի՞նչ ուղղությամբ նրանք հեռացան այսօր հայտնի չէ:

Ռուսական զորքերի հուլիսյան (1916 թ.) թվով չորրորդ նահանջը պատճառ դարձավ գաղթականության նոր ալիքի:

Դեպի Ալեքսանդրապոլի գավառ շարժվող արևմտահայերի առաջին խմբերն այս անգամ հաստատվեցին Փամբակում: Եթե 1916 թ. հունիսի դրությամբ շրջանի 26 գյուղերում կար 3884 գաղթական (941 տղամարդ, 1133 կին և 1810 երեխա)²⁹, ապա օգոստոսին այդ թիվը հասավ 4475-ի (1060 տղամարդ, 1334 կին, 2081 երեխա)³⁰: Օգոստոսին Ալեքսանդրապոլ և շրջակա գյուղեր տեղափոխվեցին նաև 8000 սասունցի-

²⁶ Նույն տեղում, N 271, 8 դեկտեմբերի, էջ 3:

²⁷ ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 429, թ. 1-7:

²⁸ Նույն տեղում, ֆ. 57, ց. 2, գ. 1306, թ. 10:

²⁹ «Աշխատանք», Եր., 1916, N 17, 29 յունիսի, էջ 4:

³⁰ ՀԱԱ. ֆոնդ 50, ցուցակ 1, գործ 18, թթ. 148-149:

ներ³¹: Ի դեպ, սասունցիների ներգաղթը շարունակվեց մինչև տարեվերջ: Վերջին 1370 հոգին Արևելյան Շիրակի գյուղերում հաստատվեցին դեկտեմբերին³²:

Թե 1917 թ. ընթացքում և թե 1918 թ. առաջին երեք ամիսներին արևմտահայության ներգաղթը դեպի Ալեքսանդրապոլի գավառ ինչ ծավալներ է ընդունել, ո՛չ արխիվային վավերագրերում, և ո՛չ էլ ժամանակի մամուլի էջերում մեզ գտնել չհաջողվեց: Ալեքսանդրապոլի գաղթականական գործերով զբաղվող հաստատությունների կողմից ընտրված պատգամավորներ Ս. Տեր-Գրիգորյանի և Սմբատ Բորոյանի Գևորգ Ե կաթողիկոսին ներկայացրած հաշվետվությունից հայտնի է միայն, որ 1917 թ. սեպտեմբերի 20-ի դրությամբ գավառում, բացի որբանոցների սաներից, կար 25754 արևմտահայ գաղթական (14333 արական և 11421 իգական սեռերից): Նույն հաշվետվության համաձայն՝ 1915-1917 թթ. ընթացքում գավառն ընդունել, նյութական օժանդակություն հատկացրել ու ճանապարհել էր մոտ 85-95000 գաղթականի³³:

Ինչպես գիտենք, 1918թ. գարնանը տարածաշրջանում ռազմաքաղաքական իրավիճակը կտրուկ փոխվեց ի վնաս հայ ժողովրդի: Բրեստ-Լիտովսկի ամոթալի պայմանագրով Խորհրդային Ռուսաստանը դուրս եկավ պատերազմից: Անդրկովկասյան Սեյմը՝ չճանաչելով հաշտության պայմանները, փորձեց թուրքերի հետ Տրապիզոնում առանձին բանակցություններ վարել, սակայն հաջողության չհասավ, իսկ ապրիլի 1-ին սկսված թուրք-անդրկովկասյան պատերազմը հաշված օրերի ընթացքում վերածվեց թուրքական զորքերի հաղթարշավի: Թուրքական հարձակումը հայության շրջանում կրկին խուճապ առաջացրեց՝ առիթ տալով նոր քառսային տեղաշարժի:

Փախստականների առաջին խմբերն Ալեքսանդրապոլ հասան մարտին³⁴, սակայն զանգվածային բնույթ գաղթն ընդունեց ապրիլի 12-ից հետո, երբ Սեյմի ապաշնորհության պատճառով Կարսն առանց դի-

³¹ «Մշակ», Թիֆլիս, 1916, N 244, 1 նոյեմբերի, էջ 3:

³² Նույն տեղում, N 282, 18 դեկտեմբերի, էջ 3:

³³ ՀԱԱ ֆ. 57, ց. 2, գ. 1311, թ. 23-24:

³⁴ «Մշակ», Թիֆլիս, 1918, N 69, 1 ապրիլի, էջ 2:

մադրության հանձնվեց թուրքերին: Ըստ Կարսի շրջանային կոմիսար Ջամոյանի Անդրկովկասյան Սեյմ ուղարկած կանխատեսումների՝ մինչև 1918 թ. մայիսի 1-ը Բասենի և Կարսի շրջաններից Ալեքսանդրապոլի գավառի գյուղեր կարող էին անցնել 200000 փախստականներ³⁵: Սրանց մի մասը, ով կփրկեր իր ունեցվածքն ու անասուններին կփորձի Լոռիով ու Դիլիջանով հասնել Թիֆլիս, ապա նաև Հյուսիսային Կովկաս, իսկ մյուս մասը, կմնա տեղում: Ուրեմն և անհրաժեշտ էր շտապ միջոցներ ձեռք առնել գաղթականների այդ լավան ընդունելու, սնունդով ապահովելու և տեղավորելու համար, որովհետև հասարակական այն կազմակերպությունները, որոնք վերջին տարիներին զբաղվել էին նմանօրինակ խնդիրներով, գաղթականների այսպիսի քանակին օգնել ի գորտ չէին:

Թե ապրիլյան այս օրերին փախստական քանի՞ ընտանիք տեղափոխվեց Ալեքսանդրապոլի գավառ, և թե քանիսը՝ հետագայում այստեղ մնաց հայտնի չէ: 1918 թ. մայիսի 15-ին գավառի մեծ մասը զինակալվեց թուրքերի կողմից, և ալեքսանդրապոլցիս՝ ինքը դարձավ փախստական:

АРМЕН АЙРАПЕТЯН

Институт истории НАН РА

ЗАПАДНОАРМЯНСКИЕ БЕЖЕНЦЫ В АЛЕКСАНДРАПОЛЬСКОМ УЕЗДЕ В 1914-1918гг.

В годы Первой мировой войны Александропольский уезд стал прибежищем для десятков тысяч армян из Западной Армении. Их первые группы, общим числом около 3000 человек, прибыли в уезд в ноябре 1914 г. Поток беженцев усилился в дни Сарикамышской операции. Согласно данным однодневного регистрационного списка от 30 января 1915г. в период с декабря 1914 г. до конца января 1915 г. в уезд

³⁵ Նույն տեղում, N 81, 17 ապրիլի, էջ 2:

из Карса, Кахзвана, Олти, Ардагана и Сарикамыша эмигрировало 6909 человек.

В последующие месяцы эмиграция приняла массовый характер. Так если согласно данным регистрационного списка от 1 октября 1915г. в уезде проживало 22815 западных армян, то уже 3 января 1916г., согласно аналогичному списку, их число достигло 32000. В общей сложности в период 1914-1917гг. Александропольский уезд принял и отправил более 95000 беженцев.

Данная ситуация изменилось только после оккупации большей части Александропольского уезда со стороны турок в 1918 г.

ARMEN HAYRAPETYAN

Institute of History NAS RA

WESTERN ARMENIAN'S MIGRATION IN THE PROVINCE OF ALEXANDRAPOL (1914-1918)

In the course of the World War I the province of Alexandrapol became the shelter of approximately ten thousands of Western Armenians. Their first groups (about 3,000 people) got here in November, 1914. The flow refugees made great scales on the days of Sarighamish operation. According to the data of a day registration, made on the 30th of January, 1915, from 1914 December to 1915 January 6,909 people migrated from Kars, Kaghzvan, Olti, Ardahan and Sarighamish.

In the course of the next months the immigration of Western Armenians was of mass nature. Thus, if the new data of registration made on the 1st of October, 1915 showed the number of Western Armenians in the province 22,815, on the contrary, on the 3rd of January, 1916 the number was 32,000. On the whole in 1914-1917 the province of Alexandrapol received and accompanied more than 95,000 migrants.

The situation was different in 1918, when the great part of the province was equipped with the Turks.

ԿԱՐՏԻՆԵ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

*ՀՀ ԳԱԱ Շիրակի հայազիտական
հետազոտությունների կենտրոն*

ՀԱՍՏԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԳԱՎԱՌՈՒՄ ԱՊԱՍՏԱՆԱՍԾ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻՆ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՍՏԱՐՏԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի շեմին թուրք քաղաքագետներն ու պատմաբանները, օգտագործելով թուրքական դիվանագիտական զինանոցի բոլոր հնարավորությունները, փորձում են ժխտել անժխտելին՝ հայ ժողովրդի ցեղասպանվելն իր իսկ հայրենիքում:

Մասնավորապես, հավասարության նշան դնելով Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին կայսրության գոհված քաղաքացիների (գոհի և դահիճի) միջև, նրանք պատճառաբանում են, թե հայերի տեղահանությունը պատերազմական իրավիճակից բխած անհրաժեշտ միջոցառում էր, որի ժամանակ մահացել են նաև կայսրության մյուս ազգության ներկայացուցիչները, այդ թվում՝ թուրքերը ևս: Ավելին, թուրքական դիվանագիտական միտքը հնարավոր է համարում Թուրքիայում ինտեգրել Սփյուռքի հայությանը, գտնելով, որ սփյուռքահայերը ոչ թե Հայաստանի Հանրապետության, այլ Թուրքիայի քաղաքացիներ են, քանի որ նրանք հեռացել են Օսմանյան կայսրությունից:

Մինչդեռ հազարավոր արևմտահայեր ոչ թե հեռացել, այլ մազապուրծ թուրքական յաթաղանից սփռվել են աշխարհով մեկ: Առաջին համաշխարհային տարիներին իր հայրենիքից տարագրված, անլուր տառապանքներ կրած արևմտահայ գաղթականները ոչ թե պատերազմի հետևանքով երկրից հեռացած քաղաքացիներ են, այլ՝ ցեղասպանության գոհեր: Եղեռնից փրկված հայերի մի ստվար զանգվածի՝ մոտ 300 հազար գաղթականների գոյությունը և օրհասական վիճակն Արևելյան Հայաստանում, մասնավորապես, Ալեքսանդրապոլի գավառում, որտեղ նրանք հաստատվել էին արդեն 1914 թվականի վերջերից, վկա-

յում է հայ ժողովրդի նկատմամբ տեղի ունեցած հրեշավոր ոճրագործության՝ հայությանը ոչնչացնելուն միտված հատուկ մշակված քաղաքականության մասին: Թուրքական յաթաղանից մազապուրծ հազարավոր արևմտահայեր, հաստատվելով Արևելյան Հայաստանում, չփրկվեցին, այլ, գաղթականության վերադարձն ամեն կերպ կանխելու թուրքական քաղաքականության արդյունքում, սպանվեցին առավել դաժան մահով՝ դառնալով սովի և համաճարակի զոհեր:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին օսմանյան կառավարության կողմից իրականացված Հայոց ցեղասպանությունը ծանր հետևանքներ ունեցավ հայության բոլոր հատվածների համար: Այն ոչ միայն հայրենագրվեց արևմտահայ բնակչությանը՝ շեղելով նրան բնականոն կյանքից և վերածելով գաղթականի, այլ խոր կնիք թողեց արևելահայ հասարակական կյանքի վրա՝ սպառելով նրա ներուժը և կարողությունները: Տնտեսապես և բարոյապես թուլացած արևելահայությունը, ի մասնավորի Ալեքսանդրապոլի գավառի բնակչությունը, որը 1918 թ. ի վիճակի չեղավ կասեցնել թուրքական արշավանքը: Ներխուժելով Արևելյան Հայաստան, թուրքերն այստեղ շարունակեցին Հայոց ցեղասպանության քաղաքականությունը, կոտորելով ոչ միայն արևմտահայ գաղթականությանը, այլև արևելահայության մի սովորական զանգված ևս:

Այսօր, թուրքերի կողմից շարունակվող հակահայ, մասնավորապես Մերձավոր Արևելքի հայկական գաղութների քայքայման և ժխտողական քաղաքականության պայմաններում արդիական են ինչպես արևմտահայ գաղթականության դրության, այնպես էլ հասարակական կառույցների աջակցության վերաբերյալ ուսումնասիրությունները: Թերևս ոչ մի հարց այնքան տեսանելի չի դարձնում ցեղասպանության իրողությունը, այնքան չի օգնում հասկանալու որբերգության չափերը, ցեղասպանության ենթարկված հայ ժողովրդի հետ պատահած աղետի սարսափները և հետևանքները, որքան գաղթականության և որբության խնդիրները:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Արևելյան Հայաստանի ամենահոծ հայկական բնակչություն ունեցող Ալեքսանդրապոլի գավառն ապաստան է դառնում եղեռնից մազապուրծ հազարավոր արևմտահայ գաղթականների համար¹⁶³:

Վերջիններիս օգնության հարցը, բնականաբար, հայտնվում է արևելահայ հասարակության ուշադրության կենտրոնում: Ամենայն հայոց Գևորգ Ե կաթողիկոսի կոնդակի համաձայն¹⁶⁴՝ այստեղ 1914 թ. հոկտեմբերի 30-ին, Ալեքսանդրապոլի թեմի առաջնորդական փոխանորդ Արտակ վարդապետ Ամբաստյանի գլխավորությամբ ստեղծվում է Ազգային հանձնաժողով՝ կամավորների և ինքնապաշտպանության, գաղթականներին, վիրավորներին օգնող և վիճակագրական տեղեկություններ հավաքող բաժիններով¹⁶⁵: Հանձնաժողովի կազմում էին քաղաքում հայտնի մտավորականներ¹⁶⁶:

Ազգային կոմիտեն սկզբում լուրջ ուշադրություն է դարձնում հատկապես գաղթականների մոտ տարածված վարակիչ հիվանդությունների կանխմանը, որոնք սպառնում էին նաև գավառի բնակչությանը: Աստիճանաբար գաղթականների խնամատարության գործը դրվում է կանոնավոր հիմքերի վրա: Կազմակերպվում են առաջին հանգանակությունները, վարձակալվում՝ բնակարանները: Գաղթականների մեծ մասը տեղավորվում են գավառի գյուղերում, որտեղ ստեղծված տեղական կոմիտեները ձեռնամուխ են լինում հանգանակությունների հավաքմանը և գաղթականների օգնությանը¹⁶⁷: 1915 թ. հոկտեմբերին Ալեքսանդրապոլի գավառում գաղթականների թիվը հասնում է արդեն 22815-ի,

¹⁶³ **Ալեքսանյան Կ**, Ալեքսանդրապոլի գավառում հաստատված գաղթականությունը Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, հանրապետական գիտական նստաշրջան, Լյուսերի ժողովածու, Գյումրի, 2007, էջ 144-147: Նույնի, Արևմտահայ գաղթականներն Ալեքսանդրապոլի գավառում Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին (փաստաթղթերի հավաքածու), Բանբեր Հայաստանի արխիվների, Եր., 2008, թիվ 2, էջ 40-56:

¹⁶⁴ ՀԱԱ, ֆ. 57, ց. 3, գ. 73, թթ. 114-116:

¹⁶⁵ Նույն տեղում, ց. 2, գ. 1242, թթ. 1-4

¹⁶⁶ Նույն տեղում, թ. 5: Ազգային հանձնաժողովի անդամների ցանկից բաց է թողնված Մաղաթել Թաբաղյանի անունը, որը հետագայում լրացված է:

¹⁶⁷ Նույն տեղում, թթ. 1-4:

որից 6844-ը՝ Ալեքսանդրապոլում¹⁶⁸: Գաղթականների անընդհատ հոսքի պայմաններում քաղաքում երևան են գալիս հասարակական կազմակերպություններ, որոնք փորձում են միահամուռ ուժերով լծվել այս դժվար գործին: Ալեքսանդրապոլում ստեղծված բազմաթիվ ընկերություններ, կազմակերպություններ, ինչպես նաև անհատներ ձեռնամուխ են լինում որբանոցների, արհեստանոցների ու դպրոցների բացմանը: Մասնավորապես մեծ թափ են ստանում որբախնամ աշխատանքները: 1915-1917 թթ. ընթացքում Ալեքսանդրապոլում բացվում են ութ որբանոցներ, որտեղ ապաստանում են ավելի քան 500 արևմտահայ որբեր: Առաջին որբանոցը բացվում է 1915 թ. նոյեմբերի 20-ին, Երիտասարդական միության կողմից, որը մեծ դժվարությունների գնով, միայն իր սեփական միջոցների հաշվին պահում է որբանոցը մինչև 1916 թ. փետրվարը¹⁶⁹, երբ Ալեքսանդրապոլի մի քանի ընկերություններ Եղբայրական օգնությունը, Երիտասարդական ընկերությունը, Օրիորդաց կոմիտեն և Բարեգործական ընկերությունը համաձայնության են գալիս այսուհետև որբանոցը պահել միացյալ ուժերով և նույն վարչության հսկողության ներքո: Այդ որբանոցն անվանվում է Միացյալ ընկերության առաջին որբանոց¹⁷⁰: Այն ուներ 5-ից 13 տարեկան 30 երեխա: 1916 թ. ապրիլի 25-ին բացվում է Միացյալ ընկերության երկրորդ որբանոցը՝ 62 որբերով: Մակայն Միացյալ վարչություն ստեղծելուց հետո Բարեգործական ընկերության և նրան կից պատերազմից տուժածներին օգնող Հայկական կենտրոնական կոմիտեի կողմից նորից ստեղծվում են առանձին որբանոցներ¹⁷¹: Մասնավորապես, 1916 թ. հունիսի 7-ին Բասենի Բաշքեյ գյուղից Ալեքսանդրապոլ տեղափոխված որբերի համար իր առաջին որբանոցն է բացում Կովկասի հայոց բարեգործական ընկերության Ալեքսանդրապոլի ճյուղը, իսկ 2-րդ որբանոցը բացվում է 1916 թ. հունիսի 27-ին Սասունից գաղթած 108 որբերի համար¹⁷²: Երկու որբանոցներն էլ

¹⁶⁸ ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1287, թթ. 4-5:

¹⁶⁹ ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 506, թ. 125:

¹⁷⁰ Նույն տեղում:

¹⁷¹ Նույն տեղում, գ. 587, թ. 2:

¹⁷² Նույն տեղում, գ. 428, թ. 15:

Բարեգործական ընկերության Ալեքսանդրապոլի ճյուղի նախագահ Հակոբ Խաչվանքյանի ջանքերի արդյունք էին¹⁷³:

Իր որբանոցներն է բացում նաև Կովկասի հայոց բարեգործական ընկերությանը կից պատերազմից տուժածներին օգնող հայկական կենտրոնական կոմիտեն: Առաջին որբանոցը, որի վերահսկողությունը պատկանում էր Ալեքսանդրապոլի գաղթականական դպրոցի ուսուցչական խմբին՝ Հովսեփ Միրզոյանի գլխավորությամբ, բացվում է 1916 թ. ապրիլի 1-ին (Պատերազմից տուժածներին օգնող Հայկական կենտրոնական կոմիտեի առաջին որբանոց)¹⁷⁴, 1916 թ. հուլիսին նույն խմբի և Միրզոյանի վերահսկողությամբ բացվում է երկրորդ որբանոցը (Պատերազմից տուժածներին օգնող Հայկական կենտրոնական կոմիտեի երկրորդ որբանոց), 1917 թ. նաև՝ երրորդը¹⁷⁵: Այս որբանոցներն այլ հոգաբարձություն չունեին և ամբողջովին ենթարկվում էին Կենտրոնական կոմիտեին: 8-րդ որբանոցը, որ հատկացրած էր զուտ քոսոտ-քաչալներին, զատված էր մյուս որբանոցներից և ոչ մի առնչություն չունեին նրանց հետ¹⁷⁶: 1917 թ. հունվարի 15-ին Լոնդոնի Հայկական կարմիր խաչի և փախստականների կոմիտեի հիմնադիր Էմիլի Ռոբինսոնի միջոցներով 8-12 տարեկան 40 սասունցիների համար Ալեքսանդրապոլում մի նոր որբանոց է բացվում, որն անվանվում է նրա անունով Ռոբինսոն¹⁷⁷:

Գաղթականների և որբերի օգնության գործում անսահման մեծ էր Գևորգ Ե Ամենայն հայոց կաթողիկոսի դերը, ով թե՛ բարոյապես, և թե՛ նյութապես աջակցում էր գաղթականների գործով զբաղվող կազմակերպություններին: 1915 թ. հունվարի 28-ին նա հատուկ կոնդակով օրհնում է իր հովանավորությամբ ստեղծված Ալեքսանդրապոլի Եղբայրական օգնության հանձնաժողովի գործունեությունը, հորդորում շարունակել

¹⁷³ Նույն տեղում, գ. 506, թ. 129:

¹⁷⁴ Նույն տեղում, գ. 587, թ. 116:

¹⁷⁵ Նույն տեղում, գ. 547, թթ. 122-123:

¹⁷⁶ Նույն տեղում, թթ. 4-5:

¹⁷⁷ Նույն տեղում, գ. 901, թ. 2:

մարդասիրական գործը՝ ուղարկելով 5000 ռուբլի¹⁷⁸: Իսկ ընդհանուր առմամբ, նշված որբանոցները բացվում էին անհատների սեփական միջոցներով, որոնց ծախսերն այնուհետև վճարվում էր Կովկասի հայոց բարեգործական ընկերության կողմից: Հասարակական գործիչները, շատ հաճախ չապաստելով Կովկասի հայոց բարեգործական ընկերությունից փող ստանալուն, իրենց միջոցներով կամ պարտք վերցնելով էին լուծում գաղթականների օգնության հարցերը: Լինելով քաղաքում հայտնի և վստահելի մարդիկ, նրանք առևտրականներից առանց փողի ապրանք էին վերցնում՝ հետո վճարելու պայմանով: Սակայն փողի արագ արժեզրկման պայմաններում հաճախ հայտնվում էին անելանելի վիճակում՝ մի կողմից կորցնելով վստահությունը քաղաքի հասարակության առջև, մյուս կողմից՝ մեղադրվելով չարաշահումների մեջ: Պատահական չէր, որ Բարեգործական ընկերության Հայկական կենտրոնական կոմիտեի վերահսկիչները բազում թերությունների էին գտնում այդ որբանոցների աշխատանքներում: Այս առումով հատկանշական էին Կովկասի հայոց բարեգործական ընկերության Ալեքսանդրապոլի ճյուղի նախագահ Հակոբ Խաչվանքյանի և Ընկերության կենտրոնական կոմիտեի միջև առաջացած տարաձայնությունները¹⁷⁹:

Գաղթականների օգնության և որբախնամ գործունեության մեջ աչքի էին ընկնում նաև Ալեքսանդրապոլի կանայք, որոնք ստեղծելով զանազան միություններ, բացում էին որբանոցներ, արհեստանոցներ, կատարում հանգանակություններ: 1916 թ. հուլիսին որբ մեծահասակ աղջիկների համար որբանոց է բացում Ալեքսանդրապոլի «Տիկնանց միությունը»: Սակայն հարկ է նշել, որ սկզբնական շրջանում կանանց չէին վստահում և թեև, միությունը 30 հոգու համար որբանոց էր բացել, նրանց որբեր չէին ուղարկում: Ալեքսանդրապոլում տեղի ունեցած խորհրդակցությունից հետո միայն Էդիլյանը գտնում է, որ կանանց պետք է վստահել և նպաստ ուղարկել որբախնամ աշխատանքների և

¹⁷⁸ ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1242, թ. 8:

¹⁷⁹ ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 428, թթ. 2-3:

արհեստանոցներ բացելու համար¹⁸⁰: 1916 թ. նոյեմբերին Ալեքսանդրապոլի հայուհիների «Տարոն» ընկերության վարչությունը Գևորգ Ե-ին տեղեկացնում է «Աշխատանքի տան» բացման մասին, որի նպատակն էր աշխատանք հայթայթել և նոր արհեստներ սովորեցնել գաղթական կանանց¹⁸¹: Մեծ էր կանանց դերը հատկապես որբերի խնամքի և դաստիարակության գործում: Նրանք աշխատում էին դպրոցներում՝ հաճախ անվճար կամ շատ ցածր աշխատավարձով:

1917 թ. ապրիլի 7-ին Ամենայն հայոց կաթողիկոսը, գիտակցելով հայ ժողովրդի համար այդ ծանր պահերին հասարակության բոլոր ուժերի օգտագործման անհրաժեշտությունը, իր կոնդակով վերականգնում է կանանց իրավունքները համայնական գործերի մեջ. «Այս օրանից սկսած, - ասված էր այդ կոնդակում, - արտօնում եմ կանանց սեռի իրաւունքների վերականգնումը համայնական գործերի մեջ: Կանանց սեռի իւրաքանչիւր անհատ իրաւունք ունի՝ տղամարդկանց հետ միասին մեր կեանքի ամեն մի գործի մեջ հանդես գալու...»¹⁸²:

Գաղթականների գործով զբաղվող կազմակերպությունները հատուկ ուշադրություն էին դարձնում գաղթական երեխաների համար դպրոցների բացման գործին¹⁸³: 1915 թ. Ալեքսանդրապոլի գավառում ապաստանած Հայոց մեծ եղեռնից մազապուրծ հազարավոր արևմտահայ գաղթականների մեջ մեծ թիվ էին կազմում երեխաները: Մինչև 1915 թ. հոկտեմբերը Ալեքսանդրապոլ քաղաքում նրանց թիվը հասնում էր 10045-ի¹⁸⁴: Պատահական չէր, որ 1915 թ. հունվարին Գևորգ Ե Ամենայն հայոց կաթողիկոսի հովանավորությամբ ստեղծված Եղբայրական օգնության կոմիտեն իր գործունեության մեջ կարևորում էր հատկապես գաղթական երեխաների համար դպրոցների բացումը և նրանց տարրա-

¹⁸⁰ Նույն տեղում, գ. 587, թ. 7:

¹⁸¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1311, թ. 4:

¹⁸² Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, գիրք գ. Արտակ եպիսկոպոս Մմբատյան/Տատուշեցի/, հոգևոր, գրական, պատմա-բանասիրական գործունեությունը և գնդակահարությունը /1876-1937/, կազմ. Սանդրո Բեհբոդյան, Եր., 1997, թ. 144:

¹⁸³ **Ալեքսանյան Գ.**, Գաղթականական դպրոցներն Ալեքսանդրապոլի գավառում 1915-1917 թթ., ԳՊՄԻ 75 ամսական նվիրված գիտաժողովի նյութեր, Գյումրի, 2009, էջ 92-95:

¹⁸⁴ ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1287, թթ. 3-5:

կան կրթության ապահովումը: Ալեքսանդրապոլի թեմի թեմակալ առաջնորդ Արտակ վարդապետի գլխավորությամբ «Եղբայրական օգնության կոմիտեն» գաղթականներին տեղավորելուց հետո անմիջապես ձեռնամուխ է լինում գաղթական երեխաների համար դպրոցներ բացելու գործին: Դեռևս 1915 թ. ամռանը «Եղբայրական օգնության կոմիտեի» հանձնաժողովի որոշմամբ Հովսեփ Միրզոյանը ամառային դպրոց է բացում թվով 280 գաղթական երեխաների համար, որում անվճար դասավանդում էին Արդույան դպրոցավարտ օրիորդները: 1915 թ. սեպտեմբերից այդ ամառային դպրոցը վերածվում է հատուկ դպրոցի, որին գուգահեռ բացվում է Ս. Փրկչի վիճակային դպրոցի դասարանը: Այս դպրոցում ևս դասավանդում էին Արդույան դպրոցի օրիորդները: Մանկավարժական ամբողջ կազմն աշխատում էր ամենայն եռանդով և սիրով էր կատարում իր պարտականությունները գաղթական երեխաների հանդեպ: Իրենց հիմնական գործից բացի, նրանք անվճար կատարում էին նաև քարտուղարի, վերակացուի, գրադարանավարի, դաստիարակչուհու պարտականությունները: Երեխաների զարգացման հորիզոնն ավելի լայնացնելու համար մանկավարժները «Եղբայրական օգնության կոմիտեի» հանձնաժողովի անդամների օգնությամբ կազմակերպում էին զբոսանքներ, մանկական ներկայացումներ և հանդեսներ: Ուսուցչական կազմը հաճախ կազմակերպում էր ծնողական ժողովներ և մանկավարժական նիստեր՝ տնտեսական հարցերը լուծելու համար¹⁸⁵: Ալեքսանդրապոլ քաղաքում փախստական երեխաների համար բացված դպրոցների թիվը հասել էր չորսի, որոնցից երկուսն երթնեկ երեխաների համար, իսկ երկուսը՝ որբերի: Փախստական երեխաների դպրոցն առանձնակի պարծանքի առարկա էր «Եղբայրական օգնության հանձնաժողովի» գործունեության մեջ: Հետևաբար, կոմիտեն ջանք չէր խնայում դպրոցն ընդարձակելու, հնարավորինս շատ երեխաներ ընդգրկելու և նպաստավոր պայմաններ ստեղծելու համար: Դպրոցներ էին բացվում ոչ միայն Ալեքսանդրապոլում, այլ գավառի բոլոր գյուղերում: Որոշ գյուղերում գաղթական աշակերտների թիվը հասնում էր

¹⁸⁵ ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1242, թ. 11:

մինչև 80-100-ի: Այս դպրոցներում ուսուցիչները գաղթական երեխաների հետ պարապում էին կամ առանձին, կամ տեղի երեխաների հետ միասին: 1916 թ. դեկտեմբերին գաղթական երեխաների թիվը, հատկապես գյուղերի դպրոցներում գնալով պակասում էր՝ կապված ձմռան ցրտերի հետ, քանի որ նրանցից շատերը շոր չունենալու պատճառով չէին հաճախում դպրոց, չկային նաև գրենական պիտույքներ և նստարաններ¹⁸⁶:

Չնայած թափած ջանքերին՝ դպրոցներում գաղթական բոլոր երեխաներին տեղավորել և նրանց համար բարենպաստ պայմաններ ստեղծել չի հաջողվում: Ավելին, 1917 թ. գաղթականների թիվը գնալով մեծանում է, մինչդեռ Ալեքսանդրապոլի բնակչության տնտեսական վիճակը՝ վատանում: Ալեքսանդրապոլի հասարակությունը գնալով դժվարանում է աջակցել գաղթականներին: Հասարակության սկզբնական ոգևորությունը կամաց-կամաց մարում է, նվիրատվությունները նվազում են և նույնիսկ՝ դադարում: Այս միտումն իր արտահայտությունն էր գտնում գաղթականական դպրոցների ուսուցիչների բողոքներում, որոնց սկզբնական ոգևորությունը ևս մարել էր, և որոնք, ոչ միայն արդեն չէին ցանկանում անվճար աշխատել, այլև նույնիսկ բազմիցս բողոքներ էին ներկայացնում իրենց աշխատավարձի բարձրացման համար¹⁸⁷:

Ալեքսանդրապոլ քաղաքում գործող, գաղթականների հոգածությանը զբաղվող միությունները հատուկ ուշադրություն էին դարձնում նաև արհեստանոցների բացմանը և գաղթականներին ներգրավելով աշխատանքի մեջ՝ փորձում էին մեղմել նրանց վիճակը: Բացի այդ, հատկապես հայրենակցական միությունները արհեստներ էին սովորեցնում գաղթականներին՝ հույս ունենալով, որ պատերազմից անմիջապես հետո վերջիններս կվերադառնան երկիր և ձեռնամուխ կլինեն վերաշինության գործին: Ընդ որում, պատերազմը դեռ չավարտված,

¹⁸⁶ ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 428, թ. 1:

¹⁸⁷ Նույն տեղում, գ. 347, թթ. 8-9:

շատ գաղթականներ էին դիմում իրենց հայրենի օջախները վերադառնալու հնարավորություն ստանալու խնդրանքով:

Ալեքսանդրապոլի «Եղբայրական օգնության կոմիտեի» նախագահը Կովկասի հայոց բարեգործական ընկերությանը կից պատերազմից տուժածների օգնության Հայկական կենտրոնական կոմիտեին 1917 թ. փետրվարի 4-ին տեղեկացնում էր այն մասին, որ Ալեքսանդրապոլի գավառում գտնվող բազմաթիվ տղամարդ գաղթականներ դիմել են իրեն՝ հայրենի օջախները վերադառնալու խնդրանքով¹⁸⁸:

Գաղթականների մոտ այս տրամադրություններն ավելի ակնհայտ են դառնում 1917 թ. վերջերին, երբ գաղթականների անընդհատ նոր հոսքի պայմաններում, Ալեքսանդրապոլի հասարակությունն այլևս դժվարանում է նույն թափով և ոգևորությամբ շարունակել իր որբախնամ գործունեությունը և բավարարել գաղթականների մեծաքանակ կարիքները:

Մինչև 1917 թ. Ալեքսանդրապոլն ընդունել և ճանապարհել էր 85-95 հազար գաղթականների: Բուն Ալեքսանդրապոլում 1917 թվականին նրանց թիվը հասնում էր 25754-ի¹⁸⁹: Հետագայում ևս նրանց թիվը չի նվազում: Ավելին, սկսվում է գաղթականության նոր հոսք: Գաղթականների և որբերի խնամատարության գործով զբաղվող կազմակերպություններն ու անհատները հայտնվում են անելանելի դրության մեջ: Արևելահայ հասարակությունը ինչքան էլ փորձում է մեղմել գաղթի արհավիրքները, եղբայրության և բարեգործության գաղափարները կամաց-կամաց տեղի են տալիս տնտեսական ահազանացող դժվարություններին: Ալեքսանդրապոլի գաղթականական գործերով զբաղվող հաստատությունների կողմից ընտրված պատգամավորներ Ս. Տեր-Գրիգորյանը և Ս. Բորոյանը 1917 թ. սեպտեմբերի 20-ին դիմում են Գևորգ Ե-ին՝ խնդրելով հաշվի առնել քաղաքի տնտեսական վիճակի վատթարացումը և նվիրատվությունների պակասելը, որոշ գումար տրամադրել

¹⁸⁸ Նույն տեղում, գ. 889, թ. 8:

¹⁸⁹ Արևմտահայ գաղթականությունը Ալեքսանդրապոլի գավառում 1914-1922թթ., Փաստաթղթերի ժողովածու, կազմ, **Ալեքսանյան Գ.**, Երևան, 2012, թ. 171:

իրենց՝ գաղթականների գործը կազմակերպելու համար, ինչպես նաև պատվիրակություն ուղարկել Կովկասի և Ռուսաստանի հայաշատ վայրերը, կոչ անել հարուստ հայերին՝ օգնության հասնել թուրքական կոտորածից ազատված տաճկահայ վերջին բեկորներին¹⁹⁰: Նմանօրինակ խնդրանքով նրանք դիմում են Գևորգ Ե-ին նաև 1917 թ. նոյեմբերի 4-ին: «...Հարկադրական սովից գաղթականությունը ամեն օր շրջապատում է «Եղբայրական օգնության» գրասենեակը, - գրում են նրանք, - և պահանջում կամ անմիջական օգնություն կամ՝ մահ: Գաղթականության պահանջմամբ մենք եկել ենք Ձեր Վեհափառության մօտ յայտնելու ծով կարիքների մասին, թե ինչպիսի անախորժ յանգամանքեր յառաջ կը գայ, եթե մենք այստեղից վերադառնանք դատարկաձեռն»¹⁹¹:

1918 թվականի գարնանը սկսված թուրք-հայկական պատերազմն առաջ է բերում գաղթականության նոր ալիք՝ ավելի խորացնելով ճգնաժամը: Արևելահայ հասարակությունը գերմարդկային ճիգերով փորձում է փրկել արևմտահայ գաղթականության վերջին բեկորները, սակայն աղետը չափազանց մեծ էր սեփական ուժերով հաղթահարելու համար: Անհուսության մատնված գաղթականությունը դիմում է Ամենայն հայոց կաթողիկոսին՝ խնդրելով հետ վերադարձնել իրենց բնակության վայրերը: «...Վեհափառ Տեր,- ասված էր նրանց դիմումում,- որովհետև ցարդ մեզ լսող, մեր խօսքը կատարող չի եղել, եթե մեր այս վերջին յոյսը յանձին իր ընտրած հովուապետի չիրականանայ շուտով, այն ժամանակ հուսահատուած և անտեր ժողովուրդը ինքն իր գլխի ճարը կգտնի»¹⁹²:

Պատահական չէր, որ թուրքական նոր արշավանքի նախօրեին Ալեքսանդրապոլի գավառի տնտեսապես քայքայված, հոգեպես անկայուն վիճակում հայտնված հասարակությունը և այստեղ ապաստանած անհուսության գիրկն ընկած գաղթականությունն ի վիճակի չեղան դիմագրավելու նոր փորձություններին: Կարծում ենք, 1918 թվականի մա-

¹⁹⁰ ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1311, թ. 23-24:

¹⁹¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1311, թ. 32:

¹⁹² Նույն տեղում, ց. 5, գ. 178, թ. 2:

յիսի 15-ին՝ թուրքերի կողմից Ալեքսանդրապոլը գրավելու ժամանակ, առաջացած անօրինակ խուճապը, այլ պատճառներից բացի, պայմանավորված էր նաև այստեղ թուրքական սարսափներն ապրած մեծաթիվ գաղթականների առկայությամբ և այդ գաղթականության տառապանքերին ակնհաստես ու նրանց դժվարություններն ամբողջ չորս տարի կիսած հասարակության հոգեկան ծանր վիճակով:

КАРИНЕ АЛЕКСАНИЯН

*Ширакский центр арменоведческих
исследований НАН РА*

**СОДЕЙСТВИЕ ОБЩЕСТВЕННЫХ СТРУКТУР БЕЖЕНЦАМ
ПРИЮТИВШИХСЯ В АЛЕКСАНДРАПОЛЬСКОЙ ГУБЕРНИИ
В ГОДЫ ПЕРВОЙ МИРОВОЙ ВОЙНЫ**

Александропольский уезд – имевший самое густонаселенное армянское население, в годы Первой мировой войны стал пристанищем для тысячи чудом спасшихся от геноцида беженцев. Помощь западно-армянским беженцам оказалась в центре внимания восточноармянской общественности.

При поддержке Армянского благотворительного общества Кавказа и Католикоса Всех Армян Геворга V-го созданные в Александрополе многочисленные общества, общественные организации, а также и отдельные деятели стали открывать детские дома, мастерские и школы.

В условиях непрерывного притока беженцев, организации, занимающиеся их попечительством оказались в безвыходном положении.

Несмотря на все трудности, общества Александропольского уезда продолжали активно поддерживать и по мере возможности помогать выжившим соотечественникам, пока трагические события турецкой оккупации мая 1918 г. их также превратили в беженцев.

KARINE ALEKSANYAN

Shirak's Center of Armenological Studies of NAS RA

**THE ASSISTANCE PROVIDED BY PUBLIC INSTITUTIONS TO
REFUGEES SHELTERED IN THE PROVINCE OF ALEXANDROPOL
DURING THE FIRST WORLD WAR**

During the First World War the Province of Alexandropol with the largest population of Armenians in Eastern Armenia became a haven for thousands of refugees who had barely survived the genocide.

Assistance for Western Armenians assumed the center of attention in the Eastern Armenian public.

The Armenian Benevolent Association of the Caucasus, many associations created in Alexandropol through the support of Patriarch Gevorg V of All Armenians, as well as individuals, opened workshops and schools.

With the endless flow of refugees, the organizations and individuals providing assistance to them found themselves at an impasse.

Despite all difficulties and to the extent their means, the population of the province of Alexandropol continued to help their compatriots who had barely escaped the genocide until the Turkish occupation of the province of Alexandropol in May 1918, when they joined the ranks of the refugees, too.

ՆՈՐԱՅՐ ՄԱՐՈՒԽԱՆՅԱՆ

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ

**«АРМЯНСКИЙ ВЕСТНИК» ՊԱՐԲԵՐԱԿԱՆԸ (ՇԱԲԱԹԱԹԵՐԹԸ)
ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ
ՀԱՐՅԻ ՄԱՍԻՆ**

Առաջին համաշխարհային պատերազմի իրադարձությունները, Օսմանյան կայսրությունում հայերի զանգվածային կոտորածները և Արևմտյան Հայաստանի հայաթափումը, հայերի սփռվելն աշխարհով

մեկ, մեծ տերությունների քաղաքականությունը, պատերազմի տարիներին հայ փախստականներին օգնելու, Ռուսաստանի հասարակայնությանը հայերի կրած տառապանքներին իրազեկ պահելու և այլ հարցերի լուսաբանման նպատակով է ձեռնարկվել «Армянский вестник» շաբաթաթերթի (պարբերականի) հրատարակումը:

«Армянский вестник» հասարակական-քաղաքական, գրական պատկերազարդ շաբաթաթերթի հրատարակիչ-խմբագիրը Իվան Ամիրովն էր, որի հետ սերտորեն գործակցել և հետագայում պարբերականը փաստացի խմբագրել է պատմաբան, արվեստաբան և հրապարակախոս Ալեքսեյ Ջիվելեգովը: Շաբաթաթերթը հրատարակվել է Մոսկվայում 1916 թ. հունվարից մինչև 1918 թ. ապրիլը:

Պարբերականում ուշագրավ ուսումնասիրություններով, արժեքավոր հրապարակախոսական հոդվածներով հանդես են եկել հայ և ռուս հասարակայնության ժամանակի հայտնի ներկայացուցիչներ Լեոն, Տիգրան Հախումյանը, Գևորգ Չուբարը, Ալեքսեյ Ջիվելեգովը, Ա-Դոն, Վահան Տոտեմյանցը, Գրիգոր Չալխուշյանը, Փանոս Թերլեմեզյանը, Վալերի Բրյուսովը, Մերգել Գորոդեցկին, Վլ. Նեմիրովիչ-Դանչեկոն, Յուրի Վեսելովսկին, Մերգել Կոտլյարսկին, Նիկոլայ Նիկոլանը և շատ ուրիշներ, որոնք լուսաբանել են հայության հասարակական-քաղաքական կացությունը, բացահայտել Արևմտյան Հայաստանում թուրքական կառավարության քաղաքականության ջարդարարական ընթացքը, անդրադարձել արևմտահայության բռնագաղթի գործում Գերմանիայի խաղաղացած դերին, փախստականների դժոխային կացությանը:

Այս իրողության հաշվառմամբ է, որ «Армянский вестник»-ը ճիշտ էր համարում և պաշտպանում պատերազմը մինչև հաղթական ավարտին հասցնելու տեսակետը, կարծելով, որ Գերմանիայի լիակատար ջախջախմամբ կվերջանա նաև շովինիստ երիտթուրքերի մեծապետականության մոլուցքը¹:

«Հայաստանի ճակատագիրը» հոդվածում Ալ. Ջիվելեգովը, դատապարտելով մեծ տերությունների քաղաքականությունը, Հայկական

¹ Տե՛ս **Ալ. Ժիվելեգով**, Судьба Армении, «Армянский вестник», 1916, N 1, стр. 5.

հարցում, արևմտահայության փրկությունը տեսնում էր գերմանական խմբավորման պարտության մեջ: Խոսելով Գերմանիայի աշխարհաքաղաքական հակառուսական ծրագրերի մասին, Ջիվելեգովը բացահայտել է նրանց անմիջական մեղսակցությունը Հայոց Մեծ եղեռնին: Ըստ այդ ծրագրերի, սահմանային գոտիները հայերից մաքրելը դիտվում էր որպես ռուս-թուրքական ռազմաճակատի ռազմավարական խնդրի լուծում: Հայերի տեղահանման ծրագրերը ծագել են գերմանական ուղեղներում, թուրքերը պարզապես դրանք դարձրել են դյուրակատար և ընդլայնել իրագործման շրջանակները:

Այսօր էլ խիստ արդիական են «Армянский вестник»-ում տպագրված Բագրատ Ավագյանի («Մյունիք» կեղծանունով) «Նեոթուրանիզմը և Հայաստանը» և Ն. Նիկոլանի «Երիտթուրքերի քաղաքականության ճգնաժամը և նեոթուրանիզմը» հոդվածները:

«Նեոթուրանիզմը որպես քաղաքական գաղափար,- կարդում ենք Բագրատ Ավագյանի հոդվածում,- իր առաջ նպատակ ունի սերտ դաշինք ստեղծել բոլոր թուրքական ցեղերի միջև՝ առանց հավատի և լեզվի տարբերության, իսկ որպես ազգային գաղափար պետք է ձգտի թուրանական ծագման բոլոր թուրքական ցեղերի ազգային-մշակութային սերտ միավորման: Դա կհանդիսանա առաջին պայմանը քաղաքական միավորման այս կամ այն ձևի մեջ»²: Պանթուրանիզմի ծրագրի ուսումնասիրությունը պարբերականին բերում է այն եզրակացության, որ Բարձր դոան բոլոր հարաբերությունները (հայ ժողովրդի հետ, նրա բոլոր միջոցառումները Փոքր Ասիայի հայկական երկրամասերում XIX դարասկզբից մինչև Առաջին աշխարհամարտը) հանգել են մի նպատակի՝ մեթոդաբար կյանքում իրագործել հայ ժողովրդի ոչնչացման կանխորոշված նախագիծը, մի «անհանգիստ ժողովուրդ», որն իր գոյության մեջ քաղաքական մղձավանջ է դարձել «քաղաքակրթվող» թուրք կառավարողների համար, որովհետև Հայաստանն ու Կիլիկիան իրենց աշ-

² «Армянский вестник», 1916, N 41, стр. 2-3.

խարհագրական դիրքով խիստ տարանջատում էին Թուրքական Անատոլիան մուսուլմանական Միջագետքից և Իրանից»³:

«Երիտթուրքերի քաղաքականության ճգնաժամը և նեոթուրանիզմը» հոդվածի հեղինակ Ն. Նիկոլանը, հենվելով Սալոնիկի երիտթուրքական կոնգրեսի նյութերի, «Речь» և այլ թերթերի հրատարակումների վրա, դատապարտում է երիտթուրքերի ծրագրերի զավթողական նկրտումները: «Նեոթուրանիզմի գաղափարը վաղ թե ուշ,- գրում է հեղինակը,- մեծ կամ փոքր չափով պետք է դառնա Ռուսաստանի քաղաքական և պետական շահերի համար սպառնալիք, և պետք է ժամանակին ընդունել այնպիսի միջոցառումներ, որոնք ուժ ունենան վնասագրեծելու մեզ համար վտանգավոր պանթուրանական շարժումը...»⁴:

«Армянский вестник»-ը Արևմտյան Հայաստանի ինքնավարության ջերմ պաշտպան էր: Շաբաթաթերթի 1916 թ. սեպտեմբերյան առաջնորդողներից մեկում Ալ. Ջիվելեզովը գրում էր, որ ոչ մի սպառնալից ակնարկ և ոչ մի քաղաքական անբարենպաստ վիճակ մեզ չեն կարող ստիպել հրաժարվելու այն մտքից, որպեսզի հայ ժողովրդի ապագա ճակատագրի միակ ճիշտ որոշում համարենք ինքնավարությունը⁵: «Վերջապես եկավ վաղուց սպասված հեղափոխությունը... Ռուսաստանն այս օրերին ապրում է առանց ցարի, ազատ և ուրախ շնչում է ազատության օդը և կոչում իր ապագան», - այսպիսի խոսքերով պարբերականը դիմավորեց Փետրվարյան հեղափոխությունը: Շաբաթաթերթը հույս էր հայտնում, որ «նորոգ» Ռուսաստանում պետք է թագավորի ազատությունն ու հավասարությունը բոլոր ժողովուրդների համար: Հայ ժողովուրդը ողջունում է հեղափոխությունը և հույս ունի, որ Թուրքահայաստանը պետք է քաղաքական ինքնորոշման իրավունք ստանա: Մինչդեռ, Փետրվարյան հեղափոխությունից հետո, Ռուսաստանի Հանրապետության ժամանակավոր կառավարությունը Արևմտյան Հայաստանին

³ Նույն տեղում:

⁴ Նույն տեղում, 1917, N 4, էջ 24:

⁵ Տե՛ս նույն տեղում, 1916, N 32, էջ 1:

ինքնավարություն ապահովելու ոչ մի նպատակ չունեի, շարունակում էր ցարական կառավարության միակցման քաղաքականությունը:

Ռուսական բուրժուազիայի լիբերալ հոսանքի դիրքորոշումն առավել որոշակի էր արտահայտվում կադետների կուսակցության պարագլուխ Պավել Միլյուկովի Հայկական հարցի վերաբերյալ ելույթներում և հոդվածներում: Թուրքիայում հայերի կացությանը վերաբերվելով «կարեկցանքով» և շարունակ նշելով ռուսահայերի հավաստարությունը, նա երբեք չէր պաշտպանում հայկական անկախ պետություն ստեղծելու գաղափարը. ավելին, նա ուղղակի դեմ էր ինքնավարությանը՝ ընդունելով միայն հայերի վերամիավորումը Ռուսական կայսրության սահմաններում:

Հայ մտավորականության տարբեր շերտերում մոռացության կամ անուշադրության էր տրվում այն իրողությունը, որ Փետրվարյան հեղափոխությունը ռուսական բուրժուազիայի կողմից դիտվում էր պատերազմը շարունակելու, այն հաղթական ավարտին հասցնելու գլխավոր միջոցի, ի հակակշիռ ցարական կառավարության անկարողության: Բնորոշ էր, որ Փետրվարյան հեղափոխության հաղթանակից հետո ժամանակավոր կառավարությունը ոչ մի անգամ չի էլ ակնարկել Արևմտյան Հայաստանը Ռուսաստանին կցելու ցարիզմի ուղեգրած քաղաքականությունից իր հրաժարականի մասին: Փետրվարյան հեղափոխությունից հետո «Армянский вестник»-ը գտնում էր, որ ռուս ժողովրդի պարտքը և ռուսական դեմոկրատիայի արժանապատվությունը հրամայաբար պահանջում են, որպեսզի Հայաստանը դառնա Ռուսաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության ուշադրության առարկան⁶:

Պարբերականի խմբագիրը Ռուսաստանի Հանրապետության խորհրդում արտասանեց իր նշանավոր ճառը՝ շատ խիստ քննադատության ենթարկելով ժամանակավոր կառավարության և նրա արտաքին գործերի նախարարության «տարօրինակ» տատանումները Հայկական հարցում:

⁶ Տե՛ս «Армянский вестник», 1917, N 43-44, էջ 4-5:

«Դեմոկրատական Ռուսաստանից,- ասում է Ջիվելեզովը,- հայերը սպասում են այլ վերաբերմունք, Արևմտյան Հայաստանի նկատմամբ հայերը դեմոկրատական Ռուսաստանից այլ քաղաքականություն են սպասում»: Ջիվելեզովը գտնում էր, որ «ռուս ժողովրդի պարտքը և ռուսական դեմոկրատիայի արժանապատվությունը հրամայաբար պահանջում են, որպեսզի Հայկական հարցը դառնա Ռուսաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության ուշադրության առարկան, այն չթողնվի բախտի քմահաճույթին»⁷:

Ինչպիսին էր պատկերացնում «Армянский вестник»-ը Հայաստանի քաղաքական կարգավիճակը 1917 թ. աշնանը: Պարբերականն այն համոզմունքն ուներ, թե Թուրքահայաստանի լիակատար ինքնավարությունը Հայկական հարցի միակ իրական և հնարավոր լուծումն է: Նրա կարծիքով ինքնավար Հայաստանը պետք է զբաղեցնի հայկական վեց վիլայեթները: Միաժամանակ այդ վեց վիլայեթներից պետք է անջատվեն այն ծայրամասերը, որոնք ռուս-թուրքական 1870-ական թվականների պատերազմից հետո միակցվել էին նրանց՝ նպատակ ունենալով փոխել եթնիկական վիճակը:

«Армянский вестник»-ի խմբագիր Ջիվելեզովը չէր պատկերացնում Հայաստանն առանց Ռուսաստանի, այդ իսկ պատճառով Հայաստանի ինքնավարության ստեղծման և գոյատևման երաշխիքը տեսնում էր Ռուսաստանի հովանավորության ներքո: Նա գտնում էր, որ ինքնավար Հայաստանի մանդատը պետք է հանձնվի Ռուսաստանին:

«Армянский вестник»-ը դրական է արտահայտվել Խորհրդային Ռուսաստանի կառավարության «Թուրքահայաստանի մասին» դեկրետի վերաբերյալ, ընդամենը հուսալով, որ «Ռուսաստանի օգնությունը կարող է արտահայտվել միայն նրանում, որ Հայաստանում թողնվի ռուսական բանակի գոնե մի մասը»⁸:

⁷ Տե՛ս **Ալ. Ժիվելեզով**, Речь в Совете Республики 20 октября 1917 г., «Армянский вестник», 1917, N 44-44, էջ 4-5.

⁸ **Ալ. Ժիվելեզով**, Советский декрет о независимости Армении, «Армянский вестник», 1918, N 3, стр. 1.

Ի դեպ, նման տեսակետի էին նաև ՀՀԴ-ն հիմնադիրներից Ռոստոմը (Ստեփան Զորյան), բոլշևիկներ Վ. Տերյանն ու Ստ. Շահումյանը, ձախ էսէժ Պոռոշ Պոռոշյանը:

Հանուն հայության ազգային համախմբման Վ. Տերյանն իր ծրագիրը հիմնավոր շարադրեց 1917 թ. նոյեմբերին Ռուսաստանի ժողովուհորհին ներկայացրած Թուրքահայաստանի մասին զեկուցագրում («Докладная записка о Турецкой Армении»): Վ. Տերյանի զեկուցագրում ընդգծվում էր. «Ռուսական զորքերը դուրս չեն բերվի պատերազմի իրավունքով մեր կողմից գրաված Հայաստանի մասից, մինչև այնտեղ չստեղծվեն անձնական անվտանգության հաստատուն երաշխիքներ, և մինչև այնտեղ նոր կարգ չհաստատվի: Անհրաժեշտ է, որ «պատերազմի իրավունքով» գրաված Հայաստանի մարզերի կառավարումը անմիջականորեն կապված լինի կենտրոնական իշխանության հետ և թույլ չտրվի ենթարկելու հատուկ Անդրկովկասյան կոմիտեի կամ այլ տեղական իշխանության, քանի որ ինչպես փորձը ցույց է տվել, կառաջացնի տեղական քաղաքական և հասարակական պայմաններից բխող մի ամբողջ շարք բարդություններ»⁹:

Ինչպես վերևում նշեցինք, ռուսական զորքերի՝ Արևմտյան Հայաստանից դուրսբերմանը դեմ էր Ստ. Շահումյանը: Վերջինս դեկրետի ընդունումից ինն օր առաջ, «Բակինսկի ռաբոչի» թերթի դեկտեմբերի 20-ի համարում լույս տեսած «Կովկասյան բանակի ետ քաշվելու առթիվ» հոդվածում գրում էր, որ հարկավոր է ազատված տարածքներում պահպանել որևէ պաշտպան զորամաս, որ «Ռուսական զորքերի անակնկալ ետ քաշվելը չափազանց ծանր դրություն է ստեղծում Թուրքահայաստանում: Մենք գիտենք այս անիծյալ պատերազմի ժամանակ հայերի կրած հարյուր հազարավոր զոհերի մասին..., ռուսական զորքերի ետ քաշվելու լուրը առաջ կբերի հարազատ վայրերից փախած, մի կողմից՝ թուրքերի և քրդերի, մյուս կողմից՝ հայերի շարժում: Իմանալով իրերի դրությունն այդ դժբախտ երկրում, մենք պետք է հավատացած լինենք,

⁹ **Տերյան Վ.**, Երկեր, Երևան, 1989, էջ 28:

որ այնտեղ մի նոր դժոխք է ստեղծվում, անսեր խաղաղ բնակչության արյան նոր գետեր են հոսելու»¹⁰:

Եղա՛վ ճիշտ այնպես, ինչպես կանխատեսում էին Ստ. Շահումյանը և «Армянский вестник»-ի խմբագիր Ալ. Ջիվելեգովը:

НОРАЙР САРУХАНЯН

Институт истории НАН РА

**ОСВЕЩЕНИЕ ПЕРВОЙ МИРОВОЙ ВОЙНЫ И АРМЯНСКОГО
ВОПРОСА В ПУБЛИКАЦИЯХ ЕЖЕНЕДЕЛЬНИКА
«АРМЯНСКИЙ ВЕСТНИК»**

Общественно-политический и литературный еженедельник на русском языке издавался в Москве с января 1916 г. по апрель 1918 г. Редактором-издателем был Иван Амиров, при непосредственном участии историка и публициста Алексея Дживелегова. На страницах еженедельника публиковались разнообразныe материалы, статьи, исследования, художественные произведения, переводы, корреспонденции видных представителей русской и армянской общественности (Ю. Веселовский, В. Брюсов, С. Котляревский, П. Долгоруков, Ал. Дживелегов, В. Немирович-Данченко, С. Городецкий, В. Тотемянц, Лео, Т. Ахумян, Гев. Чубер, Гр. Челкушян, Ав. Агаронян, Ал. Цатурян, М. Шагинян и другие), которые освещали общественно-политическую жизнь армянского народа, раскрывая суть политики младотурецкого правительства в Западной Армении, положения беженцев, поднимали вопросы экономического возрождения Армении. Публиковались отклики мировой и русской общественности на варварское истребление армянского народа во время мировой войны. Особое место уделялось Армянскому

¹⁰ Շահումյան Ստ., Երկեր, հ. 3, Երևան, 1958, էջ 38:

вопросу, действиям Кавказской армии, армянскому добровольческому движению, вопросам национального самоопределения западных армян.

NORAYR SARUKHANYAN

Institute of History of NAS RA

**PUBLICIZING OF THE FIRST WORLD WAR AND THE
ARMENIAN QUESTION IN PUBLICATIONS OF THE
“ARMYANSKY VESTNIK” WEEKLY**

Aleksey Jivelegov was a well-known historian, art critic, publicist, whose main specialization was the history of Europe-periods of the middle ages and Renaissance. At the same time he was the author of a series of works, devoted to the modern history of the Western Europe. The great scholar paid special attention to the problems of political Armenology and the Armenian question in his studies and social activities.

In 1916 Jivelegov became one of the organizers and then the editor of the magazine «Armenian Bulletin». He succeeded in his attempts to create a circle of Russian intellectuals around the magazine, who spoke at that time in the interests of the Western Armenia.

АЛЕКСАНДР ШУБИН

Институт Всеобщей истории РАН

ОСМАНСКОЕ НАСТУПЛЕНИЕ 1917-1918 ГГ.

Как и в европейской части «большой России», важнейшей внешне-политической проблемой, от которой зависела судьба как Советской системы в России, так и национальных движений в Закавказье, стал выход из мировой войны. Тем более, что Германия и Османская империя

не желали упускать шанса, который давала им революционная дестабилизация противника.

5 декабря 1917 г. Закавказский комиссариат и командование Кавказского фронта подписали с Османской империей Эрзинджанское перемирие, которое в советской историографии характеризуется как «сепаратное»²⁰³, хотя 2 декабря советское правительство подписало перемирие с Германией и ее союзниками, тоже не спрашивая мнения Закавказского комиссариата. Ситуация, в которой оказались два режима, была подобной при всем различии их социально-политических проектов. Вполне естественно, что эта ситуация была близка и к украинской модели.

1 декабря командующий армией генерал Пржевальский из-за «создавшегося крайнего затруднения в вопросах продовольствия фронта» объявил о демобилизации пяти возрастов. «Эта частичная демобилизация сильно дезорганизовала Кавказскую армию. Солдаты других возрастов тоже рвались домой»²⁰⁴, - комментирует советский историк Е.К. Саркисян, и продолжает: «Закавказский секретариат и национальные советы... в эту критическую пору бросили в солдатскую массу, истомленную более чем трехлетней войной, призыв оставить все и отправиться домой для формирования национальных частей. На эту уловку попались многие солдаты, жаждавшие вернуться к мирному труду. Фронт быстро разлагался. В войсках происходил разлад, доходивший до открытых вспышек вражды. Производился самовольный раздел военного имущества»²⁰⁵.

Характерно, что большевики выступили против приказа о частичной демобилизации: «Приказ генерала Пржевальского, написанный под диктовку Кавказского комиссариата, под диктовку

²⁰³ Саркисян Е. К., Экспансионистская политика Османской империи в Закавказье накануне и в годы Первой мировой войны. Ереван, 1962, с. 323.

²⁰⁴ Там же, с. 327.

²⁰⁵ Там же.

националистов-сепаратистов, не только оголяет фронт перед внешним врагом, но и создает невероятную анархию внутри страны.

Роспуск единого российского войска и создание национальных корпусов наносит удар не только российской революции, но и ставит на карту существование кавказских народов»²⁰⁶, - заявил С. Шаумян.

На II съезде Кавказской армии в декабре 1917 г. большевики смогли создать самую крупную фракцию. В новом совете Кавказской армии преобладали большевики и левые эсеры, совет возглавил большевик Г. Корганов. Краевой Совет Кавказской армии в своем воззвании от 28 декабря 1917 г. выступил против действий национальных партий: «Произвольными расформированиями, демобилизацией и системой национализации полков они внесли полную дезорганизацию в ряды армии»²⁰⁷.

Организованный отход большевизированной армии через Кавказ угрожал национальным режимам, так как большевики могли «по ходу движения» свергнуть их. К тому же каждое из национальных движений стремилось создать вооруженные формирования, а источником оружия были солдаты Кавказского фронта. Как пишет историк В.Г. Меликян, «в ноябре 1917 г. начался массовый отход российских воинских формирований Кавказского фронта. Эти части встретились с препятствиями, организованными грузино-татарским большинством руководства Закавказского Комиссариата, краевым антибольшевистским центром Совета рабочих и солдатских депутатов, Мусульманским национальным комитетом, руководимым партией «Мусават». Эшелоны Кавказской армии останавливались в важнейших узлах Закавказской железной дороги от Баку до Тифлиса. Происходило хищение оружия и убийства солдат...

8-12 января 1918 г. близ станций Елизаветполь и Шамхор произошла ужасающая резня русских солдат, жертвами которой стали более 2000 солдат. Было захвачено 15000 ружей, 20 орудий и 70 пулеметов.

²⁰⁶ Цит. по: Саркисян Е.К., указ. соч., с. 327-328.

²⁰⁷ Там же, с. 328.

Оставшиеся в живых солдаты бежали в Баку. Погромы имели место также на станциях Акстафа, Доллар, Джульфа, Евлах, Хачмас, Алабашли и в других участках Закавказской железной дороги. Непосредственными руководителями погромов являлись члены мусульманского национального совета А. Зиятханов, А.-б. Сафикюрдский, князь Л. Магалов, М.-б. Рустамбеков и другие»²⁰⁸.

Весть о Шамхорском побоище распространилась среди солдат, и на митингах они грозили разгромить Тифлис. 31 января (13 февраля) председатель Тифлисской городской думы А. Ломтатидзе выехал на встречу к приближающимся эшелонам. Солдатский комитет объявил А. Ломтатидзе, что «солдаты ничего не имеют против мирного населения, но считают необходимым низвержение власти Закавказского комиссариата»²⁰⁹. В итоге договорились, что националисты гарантируют беспрепятственное прохождение эшелонов.

В условиях кризиса Брестских переговоров 9 февраля 1918 г., ссылаясь на «армянские насилия» против турецкого населения, турецкий командующий Вехиб-паша заявил, что перейдет демаркационную линию, что и было сделано 12 февраля (турки несколько опередили германское наступление против Советской России 18 февраля).

Еще 28 декабря М. Пржевальский сложил с себя полномочия главнокомандующего в пользу начшаба генерала Е. Лебединского. Кавказской армией с октября командовал генерал И. Одишелидзе, поощрявший создание национальных частей. К февралю 1918 г. армия фактически распалась. Одишелидзе приступил к отводу ее остатков. Турецкой армии численностью 45-50 тыс. человек противостоял армянский корпус под командованием Т. Назарбеяна численностью более 35 тыс. Андраник возглавил сводный армянский отряд, занявший позиции в районе Эрзерума. В районе Батума армяны могли поддержать

еще 10 тыс. грузинских войск, но они не торопились выступить. Казалось бы, принципы демократического федеративного государства исключали такой военный сепаратизм, напоминая о временах средневековья. Но как только проснулись воспоминания об архаичных нашествиях, национальная стратегия выживания оказалась сильнее демократической витрины. Как говорил Н. Жордания, «если армяне тонут, то грузины не обязаны тонуть вместе с ними»²¹⁰.

После возобновления военных действий отряд Андраника сумел 19 февраля (6 марта) взять Агадир. Но на этом успехи кончились. Сам Андраник был храбр и полон энтузиазма, но это нельзя было сказать о большинстве солдат. Андраник кричал им:

«- Ребята, вперед, ура! Перед вами турок, который истреблял ваших отцов и матерей, он хочет уничтожить и нас!

Но никто не услышал его, кроме нескольких бойцов, которые вместе с Андраником предприняли свою самую дерзкую атаку»²¹¹. 14 марта Андраник сдал Эрзерум. Вместе с разваливающимся фронтом Андраник в марте отступил до Александрополя. С переменным успехом он воевал против турок в Армении, но в решающих сражениях не участвовал. Узнав о заключении мира с Османской империей, Андраник отказался его признать и в июне со своим отрядом отошел в Нахичевань.

Военное поражение поставило Закавказский сейм в положение большевиков – нужно было договариваться о мире в условиях, когда противник был заведомо сильнее. Как и лидерам украинской Центральной рады, лидерам Закавказья казалось, что у них получится лучше, чем у Ленина и Троцкого (эта самоуверенность уже как-то подвела грузинских социал-демократов в Петрограде, но урок оказался не впрок).

²⁰⁸ Меликян В. Г., Грузино-татарские антироссийские мятежи в районе Закавказской железной дороги и армянская позиция (ноябрь 1917 г. – март 1918 г.). // Историческое пространство. Проблемы истории стран СНГ, М., 2010, с. 58-64.

²⁰⁹ Там же, с. 66.

²¹⁰ Саркисян Е. К., указ. соч., с. 363.

²¹¹ Андраник Озаян. Документы и материалы, М., 1991, с. 275.

11 марта Закавказский сейм отверг Брестский мирный договор, по которому в Батумской, Карской и Ардаганской областях должен был быть проведен референдум об их государственной принадлежности.

14 марта начались переговоры между Османской империей и Закавказским секретариатом в Трапезунде. Глава турецкой делегации Хусейн-Рауф-бей выдвинул идею создания буферных государств в Закавказье. Потратив ради приличия три недели на обсуждение, 6 апреля турки выдвинули ультиматум – передача Османской империи Батумской, Карской и Ардаганской областей. 7 апреля турки заняли Ван. Пока закавказские политики готовили контрпредложения с частичными уступками, турецкая армия подошла к Батуму и Карсу. 10 апреля Чхенкели был вынужден заявить о принятии условий Брестского мира. Турецкую сторону это не впечатлило, Рауф-бей напомнил, что Закавказье не является пока независимым государством, с которым можно заключить договор. 14 апреля пал Батум.

22 апреля под давлением турок и мусаватистов Закавказский сейм провозгласил независимость от России. Характерно, что против этого особенно активно выступали кадеты и левые эсеры²¹².

Чтобы облегчить переговоры о мире, Чхенкели приказал армянскому командованию сдать Карс, что и было сделано 25 апреля. После этого путь турецкой армии в Закавказье был открыт, и османская сторона могла диктовать любые условия. В силу географического положения от падения Карса больше всего страдала Армения, в то время как Грузия почти ничего не теряла. Это еще сильнее ухудшило грузино-армянские отношения и подрывало всю конструкцию закавказского государства (азербайджанская сторона вообще считала турок союзниками).

11 мая начались новые мирные переговоры в Батуме, а уже 15 мая турки взяли Александрополь. С каждым днем переговоров ситуация для Армении и отчасти Грузии ухудшалась. 26 мая турки предъявили новый

²¹² **Байков Б.**, Воспоминания о революции в Закавказье (1917-1920 гг.). // Архив Русской революции, т. 9., М., 1991, с. 100-101.

ультиматум, претендуя уже на Нахичевань, Александрополь и половину Эриванского уезда.

Эти условия были неприемлемы только для Армении и терпимы для Грузии. Азербайджанская сторона в этот период видела в турках родственную силу, которая могла бы помочь в борьбе с большевиками за Баку. Закавказское государство было обречено на распад. Н. Жордания заявил: «Грузия не привыкла быть под властью турок, а армяне привыкли, и если мусульмане отделяются от Закавказья, то Грузия идет за ними»²¹³.

Турецкий ультиматум вскоре будет принят уже независимой Грузией.

22 мая армянским отрядам удалось остановить турецкое наступление под Сардарабадом.

4 июня Грузия, Азербайджан и Армения заключат мирные договоры с Османской империей на условиях ультиматума 26 мая. Но продвижение турецкой армии в «дружественные» кавказские государства продолжится.

26 мая Закавказский сейм распался на национальные депутатские группы, которые приступили к созданию трех независимых государств – Грузии, Армении и Азербайджана.

Пока националисты создавали три государства, в Баку установилась советская власть, не признававшая национальную государственность на Кавказе.

25 апреля 1918 г. в Баку была оформлена Советская власть. По общероссийскому подобию Бакинский совет избрал Совнарком во главе с Шаумяном.

4 июня министр иностранных дел АДР М. Гаджинский подписал договор о дружбе с Османской империей, «ставший гарантией азербайджанской независимости в начальный период ее существования»²¹⁴, -

²¹³ **Саркисян Е. К.**, указ. соч., с. 363.

²¹⁴ **Балаев А.**, Мамед Эммин Расулзаде (1884-1955), М., 2009, с. 109.

апологетически характеризует этот акт современный азербайджанский историк А. Балаев. Но очень быстро выяснилось, что турецкое руководство ничего не намерено гарантировать, а лишь ищет удобную политическую форму для дальнейшего продвижения к Каспию с его нефтью и выходом в Среднюю Азию.

Командующий турецкими войсками Нури-паша (близкий родственник пантюкистского турецкого лидера Энвер-паши) без труда нашел среди местной элиты сторонников присоединения к Османской империи («илхагистов») во главе с беком А. Агаевым и приблизил их к себе. Впрочем, дело было не только в личных склонностях Нури-паши. Биограф Расулзаде А. Балаев признает: «По нашему мнению, поддержка Нури-паши «илхагистов» исходила из самой сути тогдашней политики правящих кругов Турции в отношении тюркских народов, в том числе Азербайджана.

Так, еще в марте 1918 года в ходе Трапезундских переговоров Энвер-паша настоятельно рекомендовал азербайджанским представителям согласиться на государственный союз Азербайджана с Турцией наподобие Австро-Венгрии»²¹⁵.

Создатели Азербайджанского государства признавали, что сохранить его без иностранных штыков не представляется возможным²¹⁶. Но когда правительство АДР и Национальный совет 16 июня переехали из Тифлиса в Гянджу, Нури-паша не признал их право на власть и предложил им обсуждать гражданские вопросы с его советником А. Агаевым. Несмотря на многочисленные уступки отцов азербайджанской независимости, которые сводили ее к минимуму, уговорить пантюкиста Агаева не удавалось: он требовал роспуска органов АДР и формирования правительства самим Нури-пашой и его окружением. 17 июня Национальный совет распустился, предварительно подтвердив полномо-

²¹⁵ Там же, с. 114.

²¹⁶ Там же, с. 115.

чия Хойского по формированию из членов того же совета нового правительства (не признанного даже турецким командованием).

Реальная власть на территории АДР принадлежала турецкому командованию, которое распоряжалось здесь как в провинции империи. Крестьяне обязаны были сдавать в пользу турецкой армии десятую часть урожая²¹⁷. Независимость АДР стала эфемерной, да и националистические силы находились в состоянии распада²¹⁸. Ничто не мешало Османской империи по окончании войны просто присоединить к себе Азербайджан. Серьезного внутреннего сопротивления этому акту со стороны тюркского населения не последовало бы – оно было готово поддерживать Мусават против армян, но не во имя независимости. Спасти азербайджанскую государственность могло только чудо, а именно – крах Османской империи.

Фактически отправленный в почетную ссылку в Стамбул во главе делегации АДР, Расулзаде без большого успеха пытался убедить Энвер-пашу в необходимости для Османской империи сохранить Азербайджан независимым, прославлял турецких воинов, протестовал против признания Германией российских прав на Баку, писал своим сторонникам, что они должны первыми взять Баку – до турок²¹⁹. Это, конечно, было совершеннейшей утопией. А Кавказская исламская армия (две турецкие дивизии и подконтрольные туркам отряды местных тюрков из бывшего Азербайджанского корпуса А.-А. Шихлинского) продолжала продвигаться к Баку. Но пополнить армию за счет местного населения не удавалось и туркам. Попытка Нури-паши провести призыв добровольцев для штурма Баку дала 36 местных рекрутов²²⁰. Местные крестьяне не хотели умирать ни за пантюкистскую идею, ни за неведомую им АДР, ни за советскую власть.

²¹⁷ Азербайджанская демократическая республика, с. 48.

²¹⁸ Балаев А., Мамед Эммин Расулзаде, с. 128.

²¹⁹ Там же, с. 131-135.

²²⁰ Там же, с. 136.

Однако Баку оставался частью России – в том числе и формально. С Россией Османской империей был подписан Брестский мир. Наступление турок на Баку вызывало раздражение в Берлине, причем по многим причинам: во-первых, учитывая важность бакинской нефти для России, могло привести к разрыву Брестского мира в случае угрозы захвата Баку (до начала широкомасштабной гражданской войны в конце мая - июне РККА действительно могла оказать более существенную помощь Баку); во-вторых, Германия сама была заинтересована в получении нефти через Россию, что было удобнее в условиях мира; в-третьих, движение турецкой армии в Закавказье отвлекало силы от войны с Великобританией.

15 мая заместитель начальника Полевого генерального штаба Германской армии Э. Людендорф требовал от заместителя начальника штаба армии Османской империи и представителя Германии при турецком военном командовании Х. фон Секта «срочно удержать Энвер-пашу от требований, выходящих за пределы территории, установленной Брест-Литовским договором». А в своих мемуарах Людендорф писал: ««Энвер-паша и турецкое правительство больше думали о своих панисламистских целях на Кавказе, чем о войне с Англией. Ввиду этого мы поневоле оказались в противоречии с целями, которые преследовали турки...»²²¹.

25 мая Людендорф снова потребовал от Секта «использовать все... влияние, чтобы со стороны Турции были приостановлены дальнейшие военные действия против Закавказья» и даже угрожал, что если из-за своих авантур Османская империя потеряет собственную территорию в результате наступления англичан (что и произойдет на деле), то Германия не будет содействовать в ее возвращении²²² (финал войны виделся Людендорфу как некоторый компромисс). Но Сект не мог ничего поделать – турки продолжали рваться на восток даже в ущерб безопасности своих южных провинций – империя османов трансформи-

ровалась в империю тюрок, ради мечты о Туране она была готова жертвовать арабским населением и нефтью Месопотамии.

9 июня уже начальник германского генштаба П. фон Гинденбург потребовал от Энвера вернуть войска к границам, предусмотренным Брестским договором и направить их против британских войск в Иране и Месопотамии. С тем же успехом.

Советско-германский дополнительный договор 27 августа 1918 г., в котором Германия обязалась содействовать предотвращению захвата Баку турецкой армией, вызвал недовольство османской дипломатии. Таким образом, борьба держав была фактором, который мог решить судьбу Бакинского социального проекта. Он оказался сильнее Азербайджанского национального проекта, но в итоге не смог противостоять военной силе турок, которую не уравнивали дипломатические и военные усилия других государств.

В условиях начавшейся осады Баку турками 31 июля Бакинская коммуна пала²²³. Власть перешла к Диктатуре Центрокаспия и временного президиума Исполкома Совета, опиравшейся на блок эсеров, меньшевиков и дашнаков. Новые власти рассчитывали на британскую помощь. 4 августа в Баку высадилось всего около тысячи британских солдат. Оценив обстановку, британцы эвакуировались 14 сентября. На следующий день Баку пал.

Как пишут азербайджанские историки, «турецкие войска воздержались от вхождения в город до 16 сентября, что дало местным мусульманам, азербайджанским партизанам и турецким мародерам полную свободу действий в армянских районах города.

Проект «Азербайджан» был еще неустойчив. Для османского руководства АДР была формальностью. В случае победы германо-османского блока в войне АДР в любой момент могла быть присоединена к

²²³ О Бакинской коммуне, роли в ней армянского фактора и османском походе на Баку подробнее см.: Бакинская коммуна и возникновение Азербайджанской республики: перекрестье факторов. // Европейские сравнительно-исторические исследования, М., 2014, с. 9-44.

²²¹ Цит. по: Саакян Е. К., указ. соч., с. 368.

²²² Там же, с. 369.

Османской империи, которая стремилась превратить Баку в свой глубокий тыл и ринулась на Северный Кавказ. Последней победой турок стало взятие Порт-Петровского у русского отряда Бичерахова.

30 октября 1918 г. Османская империя капитулировала. Однако у трех государств, образовавшихся к югу от Кавказа после отступления османских войск, были неясные границы и неустойчивые социально-политические конструкции. Им предстоял трудный путь обретения реальной государственности, междоусобные брани, а Армении – новое столкновение с обновленной Турцией.

ALEXANDER SHUBIN

Institute of General History of RAS

OTTOMAN AGGRESSION OF 1917-1918.

In 1917-1918 South Caucasus faced three strategies - Soviet, pan-Turkic and local national state-building in Armenian, Azerbaijan, and Georgian versions.

The Bolsheviks had no clear program of nation-building in the Caucasus. They considered national issues are secondary in relation to social, and solution of the national question is the cooperation of people of different nationalities without regard to ethnic differences.

Part of the Caucasus was necessary for the implementation of pan-Turkic project - create a new giant nation-state, which, as hoped supporters of this idea, had to change the legacy of the Ottoman Empire. This new state was to be comparable in size, but to adopt a different configuration.

Azerbaijani national movement, which hoped to create an independent state of Azerbaijan (first as an Autonomous part of Russia), was in a difficult relationship with the young Turks and the local pan-Turkism, where allied relations combined with competition of projects.

After that the Ottoman campaign in the East continued, the Turks were able to capture Port-Petrovsk, hoping to create puppet regimes in the North Caucasus. This attack stopped only total capitulation of the Ottoman Empire October 30, 1918. However, the three States formed in the South Caucasus after the retreat of the Ottoman army had unclear boundaries and unstable socio-political constructs. They had a difficult way of getting real statehood, ethnic wars, and for Armenia - new confrontation with the reboot of Turkey.

АНУШАВАН ЗАКАРЯН

НАН РА

СВИДЕТЕЛЬСТВО РУССКОГО ПИСАТЕЛЯ – ОЧЕВИДЦА ТРАГИЧЕСКИХ СОБЫТИЙ В БАКУ 1918 Г.

Русский писатель, драматург Сергей Рафалович приехал в Закавказье, в Баку, в начале декабря 1917 г. К сожалению, о его деятельности здесь у нас нет достоверных сведений. Известно только, что писатель был очевидцем мартовских и сентябрьских армяно-азербайджанских столкновений в городе в 1918 г. В конце октября 1918 г. С. Рафалович из Баку переехал в Тифлис. По случаю его приезда видный русский поэт, писатель, публицист, переводчик и общественный деятель Сергей Городецкий, который в те годы жил и творил в Закавказье, выступил в газете «Кавказское слово», представив читателям литературный путь писателя¹. В частности, узнаем, что Рафалович – известное имя в литературных кругах Петербурга, что своими стихами он близок к символистам, а его книги – «Стихи России» (Париж, 1916) и «Стихотворение» (Петроград, 1916) – имели определенный успех.

В Тифлисе С. Рафалович развернул активную общественно-

¹ См.: Кавказское слово, 2. XI. 1918.

литературную деятельность. Одновременно он считал своим долгом представить истину о произошедших событиях в Баку. 3(20) декабря «Кавказское слово» опубликовало его статью «Правда о бакинских событиях». Поводом для ее написания, как отмечает автор, послужила статья, напечатанная в газете «Грузия» (1918, N72), – «Будущее Кавказа и армяне» за подписью «Русский». Статья искажала факты и события мартовских и сентябрьских дней в Баку и была пропитана «скрытым пристрастием к азербайджанским мусульманам и явной и резкой враждебностью к армянам». Прежде чем привести факты, которые «в корне» опровергают утверждения «Русского», Рафалович делает оговорки, равно важные и лично для него, и «для читателей этих строк». Вот эти оговорки: на Кавказе находится он впервые, нет у него никаких связей в трех главными национальностями Закавказья, ему чужды их разногласия. «Свидетельство мое должно быть воспринято как показание совершенно объективного очевидца», «побуждаемого исключительно возмущенным чувством справедливости и правды дать настоящее и беспристрастное освещение фактам, искаженным с недопустимым... легкомыслием»².

Затем С. Рафалович обстоятельно описывает сентябрьские события. Говоря о резне, русский писатель пишет: «В продолжение многих дней большими возами и грузовиками вывозились трупы из города. Еще на

² Речь идет о резне армянского населения в Баку и его окрестностях, устроенной турецкими оккупантами и мусаватистскими бандами 15–20 сентября 1918 г., в ходе которой было истреблено около 30 тыс. армян. Известно, что мусаватисты были пособниками турецких захватчиков на Кавказе. Вот, например, что написано 6 апреля 1918 г. в «Бюллетене Комитета революционной обороны г. Баку и его районов» в дни обороны Бакинской коммуны: «Победа «Мусавата» неминуемо должна была подготовить почву для победы Турции. Турецкие войска действуют на Кавказском фронте, а «Мусават» – в тылу». Или: «С провокационной целью турецкие интервенты вместе с мусаватистами устраивали армянские погромы, грабили имущество армянских крестьян, истребляли тысячи людей». И еще: «Оккупантам и мусаватистам удавалось на время отравить ядом шовинизма наиболее отсталую часть населения... В самом Баку, с одобрения оккупантов, было основано отделение турецкого пантюркистского общества «Тюрк оджаги», служившее одним из основных центров политики османизации Азербайджана. Средством насаждения пантюркистско-панисламистских идей являлась и мусаватская печать» (см. об этом: **Токаржевский Е. А.** Из истории иностранной интервенции и гражданской войны в Азербайджане. Баку, 1957, с. 54, 168 – 169).

восьмой день после погрома в центральной и привокзальной части города, где я сам обходил улицы и дома, стоял невыносимый трупный запах». Рафалович рассказывает о событиях в городе после резни: «А о разгроме, сопутствовавшем ей, и говорить не приходится. Это было нечто действительно феноменальное. И если в убийствах главным образом повинны местные татары, то ответственность за грабежи в полной мере делят с ними и турецкие аскеры». Далее писатель приводит слова коменданта города, полковника Назым-бея по поводу погрома: «И когда, наконец, я вступил в город, то, что я увидел, – было чудовищно».

Рафалович говорит и о действиях мусаватского правительства: «Но все вышеизложенное касается момента анархии во время и непосредственно после падения города и было совершено дикими и безответственными массами.

Гораздо значительнее и возмутительнее планомерные действия ответственных правителей, всего азербайджанского кабинета, переехавшего из Ганжи в Баку и взявшего в свои руки власть». Еще раз акцентируя, что он это передает «не по слухам, а по личному опыту...», Рафалович фактами представляет противоречивую политику мусаватского правительства. Так, он приводит неоднократные высказывания министра внутренних дел мусаватского правительства об армянах, об Армянском вопросе, за достоверность которых он ручается. Министр, пишет он, во время одной из бесед говорил, что «когда я разговариваю с армянами, во мне подымается такое озлобление, что я сам себя не помню...». Один из присутствующих замечает, что при наличии таких эмоций и настроений ему не следовало брать портфель министра, тем более – внутренних дел. На это министр цинично отвечает: «Что вы говорите? Да я ведь пошел в министры только для того, чтобы разделаться с армянами».

Конечно, не все мыслили так, как вышеназванный государственный деятель. Рафалович цитирует слова одного «нейтрального, нравственного, здравомыслящего, порядочного» мусульманина, который считал, что вместо того, чтобы правительство занималось социально-

экономическими, культурными и общими положениями республики, оно «занято только двумя делами – истреблением армян и формированием азербайджанских войск». Резюмируя статью, русский писатель пишет: «Такова правдивая история о бакинских армянских событиях и о политике азербайджанского правительства в Армянском вопросе».

3 и 8 марта 1919 года в Тифлисе Комиссия по расследованию насильственных действий над армянами за время всемирной войны допрашивала Рафаловича в качестве свидетеля погромов армянского населения Баку. Акценты в вышеупомянутой статье и в допросе расставлены почти идентично, но поскольку текст допроса представляет исключительный исторический интерес, приводим его полностью:

«В городе Баку я находился с начала декабря 1917 года по 20 октября 1918 года и был свидетелем зверств, учиненных мусульманским населением, и погромов, учиненных турками над армянским населением. В городе Баку я жил на углу Николаевской и Садовой улиц в доме Садыхова. Начиная с понедельника 16 сентября по новому стилю, т. е. на второй день после вступления турецких войск в г. Баку, турецкие солдаты начали грабить дома, главным образом – армянские, вынося оттуда различное имущество как лично, так и при помощи амбалов. На моих глазах, в тот же день, местные татары ворвались в дом Шахгиданова, расположенный против дома, в котором я жил, и потребовали выдачи одного из братьев Шахгидановых, именно – старшего, который в это время находился у себя дома. В течение двух дней татары неоднократно производили обыск этого дома, разыскивая Шахгиданова, которого успела спрятать воспитанница – русская девушка. Спасти его удалось благодаря вмешательству моей квартирохозяйки княгини Лидии Николаевны Адрионовой, которая прибегла к содействию турецких офицеров, отправивших Шахгиданова под конвоем турецких аскеров в местный турецкий штаб, откуда его спустя некоторое время освободили, и он снова поселился у себя на квартире. Здесь поместилось также несколько турецких офицеров, которые разграбили у него много ценного

имущества, как то: ковров, посуды, белья и платья и т. п.

Мусульмане, которых мы своевременно просили принять меры к охране личности Шахгиданова, как, например, Селим Садыхов, отказались это сделать, несмотря на то, что во время мартовских событий Шахгиданов укрыл у себя несколько мусульманских семейств, как, например, Садыховых, Мустафаевых и др. На моих глазах убийств совершено не было, так как в той части города, где я жил, поместились турецкие штабы, почему аскеры и местные татары здесь особых бесчинств не чинили; в других же частях города массовые убийства продолжались около трех дней, и я лично видел много трупов армян: мужчин, женщин и даже детей, как на улицах, так и в домах, куда я заходил. Помню, что два переулка по Телефонной улице были настолько завалены трупами, что по этим переулкам трудно было пробираться. И, между прочим, подробно осматривал громадный дом по Гоголевской улице, расположенный против дома, в котором находился 6-й участковый домовый комитет. Все квартиры здесь снизу доверху были дочиста разгромлены и разграблены, причем в двух квартирах я лично видел несколько трупов женщин, раздетых и явно изнасилованных; в одной из квартир, в луже крови, рядом с матерью лежал и труп грудного ребенка. На одном из женских трупов, под левой грудью, я видел колотую рану. Трупы валялись неубранными около 10-ти дней, за недостаточностью перевозочных средств для вывоза такого большого количества. Вывозили трупы целыми возами и на грузовых автомобилях в течение почти двух недель. Невыносимый трупный запах стоял не только на окраинах, но и на многих улицах в центре города. Вид торгового центра был ужасающий. На многих улицах почти сплошь все магазины и лавки, главным образом – армянские, были разгромлены и дочиста разграблены. В самом начале бакинских событий группа жильцов одного из больших домов по Торговой улице, среди которых было много армян, в том числе родственники известного рыбопромышленника Маилова – Тер-Мартirosов с женой отправились в один из

местных лазаретов, имея в виду там укрыться. По пути они были остановлены бандой местных татар, которые отобрали мужчин-армян, тут же на улице расстреляли их, о чем мне говорил профессор Левин (врач), находившийся в этой группе. Остальных татары отпустили, после чего, добравшись до лазарета, родственница Маилова послала за трупом мужа, который был доставлен раздетым и ограбленным на сумму, как говорили, до миллиона рублей, так как он имел при себе большую сумму денег и все драгоценности жены. По прибытии в Баку азербайджанского правительства из Елизаветполя безответственные выступления мусульманских масс отчасти прекратились, но зато началось планомерное преследование армян местным азербайджанским правительством. Так, стали производиться, как на улицах, так и в домах, облавы на армян и аресты отдельных видных армянских деятелей, во время которых арестованы были два брата Меликовых, Сергей и Георгий; о последних хлопотала жена Сергея – Ашхен Манучаровна, которая неоднократно, при мне, приходила в дом Мирзы Асадулаева, вся семья которого, в марте, убивалась у армян Бегларовых и названных выше Меликовых. В доме у Асадулаевых часто бывал министр внутренних дел азербайджанского правительства – Бебут хан Джеваншир, близкий друг Мирзы Асадулаева и его жены Тамары-ханум. Сам Мирза Асадулаев, отчасти под влиянием своей жены, отчасти благодаря своему мировоззрению и уравновешенному характеру никогда не был шовинистом и еще задолго до мартовских событий резко осуждал действия своего брата Али и агрессивную политику большинства членов мусавата. Когда госпожа Меликова обращалась к нему и к его жене с просьбой ходатайствовать перед министром внутренних дел о заключенных Сергее и Георгии Меликовых – это ходатайство очень горячо поддерживалось Тамарой-ханум, которая и через мужа и лично неоднократно обращалась к Бебут-хану. Мирза Асадулаев пытался говорить об этом вопросе с членами правительства, с которыми был в самых тесных отношениях и виделся ежедневно, но все эти попытки были безуспешны. Однажды, вернувшись

домой, он ответил, при мне, на вопрос жены о судьбе Меликовых следующее: «Об армянах совершенно невозможно разговаривать с правительством, оно всецело поглощено двумя делами: образованием азербайджанской армии и искоренением армян». Совершенно в таком же духе говорил при мне и сам министр внутренних дел Джеваншир. Когда Тамара-ханум однажды вновь затронула вопрос о Меликовых, он ей ответил таким образом: «Сегодня ко мне приходили по армянским делам Тагианосов и Авдалов; я им посоветовал ко мне не обращаться, так как разговаривая с армянами я только еще больше озлоблялся, и это может только послужить им во вред». Когда одним из присутствовавших было высказано министру соображение, что с такими настроениями не следовало бы принимать министерского портфеля – Бебут-хан Джеваншир ответил буквально следующее: «Что вы говорите, да я согласился стать министром исключительно для того, чтобы разделаться с армянами».

Разделялось азербайджанское правительство с армянами следующим образом. Арестовало самых видных деятелей, к которым в какой-то ни было мере возможно было придаться за принадлежность к партии Дашнакцутюн, что им необходимо было для оправдания своего образа действий перед лицом турецкого командования. Арестованных отправляли по дороге в Елизаветполь и затем приканчивали. Таким образом погибли, например, Самсон Амиров и управляющий и личный друг Мирзы Асадулаева и многих мусульман – Сероп Бабаев. Разделялись с армянами и другим путем, пытались их разорить. Об этой экономической борьбе, довольно наивной, как-то даже высказался, со слов правительства, Мирза Асадулаев; слова его были таковы: «Они (т. е. правительство) разоряют армянские квартиры, разбрасывая обстановку по всему городу, из одной части в другую, так что невозможно будет найти и собрать в одно место все предметы каждой данной обстановки». Я слышал от некоторых своих приятелей, не армян, бакинцев, имен и фамилий которых без их разрешения назвать не могу, что некоторыми азербайджанскими министрами высказывалось такое отношение к

бывшему в Баку погрому, учиненному местными татарами: «Наши мерзавцы (местные татары) дело не доделали, – увлеклись грабежом, а армян не дорезали». Другой министр, указывая на то, что главным образом резня коснулась армянской бедноты, а из видных деятелей были убиты сравнительно немногие, сказал: «Хвост отрубили, а голову оставили». Эту ошибку, допущенную мусульманской массой, адербейджанское правительство пыталось исправить. Адербейджанское правительство не скрывало своего желания в той или иной форме насильственно очистить Баку от армян, чтобы Баку был мусульманский город»³.

Статья и протокол допроса С. Рафаловича еще раз подтверждают тот факт, что после падения Бакинской коммуны, захвата Баку турецкими войсками и создания мусаватского правительства были осуществлены продуманный погром и резня армянского населения.

ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ

ՀՀ ԳՍԱ

ԲԱՔՎԻ 1918 Թ. ՈՂԲԵՐԳԱԿԱՆ ԴԵՊՔԵՐԻ ԱԿԱՆԱՏԵՍ ՌՈՒՄ ԳՐՈՂԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Ռուս գրող Սերգեյ Ռաֆալովիչը, 1918–1920 թթ. ապրելով ու ստեղծագործելով Բաքվում և Թիֆլիսում, հանդես է եկել նաև Հայաստանի, հայ ժողովրդի շահերի պաշտպանությամբ, նրա կյանքի ողբերգական դրվագների վերհանմամբ: 1918 թ. դեկտեմբերի 3-ին «Կավկասկոյե սլովո» թերթում տպագրվել է Ս. Ռաֆալովիչի «Ճշմարտություն Բաքվի իրադարձությունների մասին» վերնագրով հոդվածը: 1919 թ. մարտի 3-ին և 8-ին Համաշխարհային պատերազմում հայ ժողովրդի կրած վնասների քննիչ հանձնաժողովում ռուս գրողը հարցաքննվել է որպես Բաքվի 1918 թ. մարտյան ու սեպտեմբերյան ողբերգական դեպքերի վկա:

³ НАА, ф. 200, оп. 1, д. 199, л. 152–153 и об. Копия. Машинопись.

Ե՛վ հոդվածը, և՛ հարցաքննության արձանագրությունը գալիս են մեկ անգամ ևս հաստատելու այն իրողությունը, որ Բաքվի կոմունայի անկումից, Բաքուն թուրքական զավթիչների կողմից գրավվելուց և մուսավաթական կառավարության ստեղծումից հետո քաղաքի հայ ազգաբնակչության նկատմամբ իրականացվել է մտածված և պլանավորված ջարդ ու կողոպուտ:

ANUSHAVAN ZAKARYAN

NAS RA

THE TESTIMONY OF THE RUSSIAN WRITER, THE WITNESS OF THE BAKU 1918 TRAGIC EVENTS

Russian writer Sergey Rafalovich living and creating in Baku and Tiflis in 1918–1920 spoke also about Armenia, protecting the interests of the Armenian people, exploring the episodes of the tragic events of their life. On December 3, 1918 S. Rafalovich’s article named “Truth about the Baku events” was published in the newspaper “Kavkazskoye slovo”. On March 3 and 8, 1919 the Russian writer was examined by the Bureau of establishing the losses of the Armenian people during World War as a witness of tragic events in Baku in March and September 1918. Both the article and the record of interrogation once more come to assert the fact, that after the fall of the Baku commune, the capture of Baku by Turkish invaders and the formation of the Musavat government, there was realized a well-thought and well-planned massacre and plunder against the Armenian population of the city.

ԱՆԱՀԻՏ ԽՈՍՐՈՇՎԱ

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ

ԱՍՈՐԻՆԵՐԻ ԿՈՏՈՐԱՍՆԵՐՆ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՄՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՍԱՐՏԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1914-1918 թթ.) «ՄՈՌԱՅՎԱՏ» ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Ցեղասպանության մասին հետազոտություններում բավական երկար ժամանակ հայերի զանգվածային սպանությունները համարվում էին Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած միակ ցեղասպանությունը: Տվյալ հոդվածի շրջանակներում կանդրադառնանք «մոռացված» մի ցեղասպանության՝ ասորիների զանգվածային կոտորածներին, որոնք Օսմանյան կայսրության պարագլուխների կողմից իրականացվեցին Հայոց ցեղասպանությանը զուգահեռ:

XX դարի սկիզբը և, մասնավորապես, Առաջին համաշխարհային պատերազմը ասորիների պատմության ամենամութ էջերից է, որը հիմնավորապես փոխեց այդ ժողովրդի հետագա ճակատագիրը: Ասորիները դարձան երիտթուրքերի հարձակումների, դաժանությունների և բռնությունների զոհը: Օսմանյան զինվորները քրդական խմբավորումների օգնությամբ հարյուր հազարավոր ասորիների միտումնավոր կերպով պարբերաբար ենթարկում էին դաժան կոտորածների, խոշտանգումների, առևանգման, արտաքսման, մշակութային և էթնիկ հալածանքների: Մեր խորին համոզմամբ, Առաջին աշխարհամարտի տարիներին ասորիների հանդեպ կիրառված այդ լայնատարած բռնությունները միանշանակ կարելի է որակել որպես ցեղասպանություն, ինչը ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից 1948 թ. դեկտեմբերի 9-ին ընդունված «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժի մասին» կոնվենցիայի համաձայն՝ ժամանակակից տերմին է ազգային, էթնիկ, ռասայական կամ կրոնական խմբի մասնակի կամ ամբողջական ոչնչացման նպատակով իրականացվող սպանու-

յան որակման համար¹: Զանգվածային «էթնիկ զտման» այդ հանցագործության մեղքն ամբողջովին և արդարացիորեն ընկնում է երիտթուրքերի կառավարության վրա:

Թուրք բարձրաստիճան սպանների խոստովանությունները մեծ տերությունների դիվանագետների², օտարագրի միսիոներների³, տվյալ ժամանակի մամուլի⁴, արխիվային փաստաթղթերի⁵ և վերջապես ակադեմիկների վկայությունները⁶ հաստատում են, որ ասորիների ցեղասպանությունը նախորդ ծրագրավորած, կազմակերպած և նպատակային ոճրագործություն էր:

Օսմանյան կայսրությունում ԱՄՆ-ի դեսպան Հ. Մորգենթաուն, նկարագրելով հայերի հալածանքները, նշում է, որ «մի փոքր փոփոխված ձևով՝ նույնը կարելի է ասել նաև հույների և ասորիների մասին»⁷: Նա պնդում է, որ «աքարի և զանգվածային կոտորածների ճիշտ նույն մեթոդները ավելի մեծ ծավալով իրագործվել են ոչ միայն հույների, այլև

¹ UN General Assembly Resolution 260 (III) of 9 December 1948.

² **James Bryce**, preface to *Shall This Nation Die?* By Joseph Naayem (New York: Chaldean Rescue, 1921); **Henry I. Morgenthau**, *Ambassador Morgenthau's Story* (Garden City, NY: Doubleday, Page & Co., 1918; reprint, Reading, UK: Taderon Press, 2000); **Leslie A. Davis**, *The Slaughterhouse Province: An American Diplomat's Report on the Armenian Genocide* (New Rochelle, NY: Caratzas, 1990).

³ *The Treatment of Armenians in the Ottoman Empire, 1915–1916*, by James Bryce and Arnold Toynbee, ed. **Ara Sarafian**, 146–49 (Reading, UK: Taderon Press, 2000),

⁴ “Syrian Tells of Atrocities,” *Los Angeles Times*, 15 December 1918, I-1; “Native Christians Massacred; Frightful Atrocities in Persia,” *Los Angeles Times*, 2 April 1915, I-1; “Turks Kill Hundreds,” *Washington Post*, 2 April 1915, 1; “More Violence by Turks,” *Los Angeles Times*, 27 March 1915, II-1; “People Flee From Kurds,” *Los Angeles Times*, 3 May 1915, I-2; “Turkish Horrors in Persia,” *New York Times*, 11 October 1915; “Chaldean Victims of the Turks,” *Times (London)*, 22 November 1919, 11; “Urumiah Massacres. Death of 12,000 Nestorian Christians,” *Times (London)*, 9 October 1915; “Massacres Kept Up,” *Washington Post*, 26 March 1915, 1; “Massacred by Kurds; Christians Unable to Flee from Urmia Put to Death,” *Washington Post*, 14 March 1915, 10; “40 Die Daily in Mission,” *Washington Post*, 11 April 1915, R4; «Մշակ», Թիֆլիս, N 41, 25 փետրվարի 1915; N 55, 14 մարտի 1915; N 59, 19 մարտի 1915; N 62, 27 մարտի 1915; N 121, 6 հունիսի 1915; N 163, 28 հուլիսի 1915:

⁵ **Ara Sarafian**, ed., *United States Official Documents on the Armenian Genocide*, vol. 1, (Watertown, MA: Armenian Review Press, 1993); **Ara Sarafian**, ed., *United States Official Documents on the Armenian Genocide*, vol. 2 (Watertown, MA: Armenian Review Press, 1994).

⁶ **Thea Halo**, *Not Even My Name*, (New York: Picador USA, 2000).

⁷ **Henry I. Morgenthau**, *Ambassador Morgenthau's Story*, p. 214.

հայերի, ասորիների, նեստորականների հանդեպ»⁸: Ըստ դիվանագետի, զոհերի թիվն ընդգրկում էր ոչ միայն 1,5 միլիոն հայեր, այլ՝ երկու միլիոն քրիստոնյա բնակչություն՝ «հույներ, ասորիներ և հայեր»⁹:

Այնուամենայնիվ, ասորիների կոտորածները միջազգայնորեն մոռացվել են և չեն որակվում որպես ցեղասպանություն, ինչն էլ հարուցում է զոհերի ժառանգների արդարացի բողոքը: Այս հնագույն քաղաքակրթ ժողովուրդը ստիպված էր դիմակայել երիտթուրքերի պանթուրքիստական ցնորական ծրագրերն ի կատար ածելու նպատակով իրականացվող զանգվածային ֆիզիկական բնաջնջման սպառնալիքներին: Երիտթուրքերի արյունահեղ հարձակումները նպատակ ունեին իրագործել ոչ միայն հայերի, այլև այլ քրիստոնյա ազգերի, տվյալ դեպքում՝ ասորիների ցեղասպանություն: Այն պատմաբանները, ովքեր զիտակցում են, որ քրիստոնյա խաղաղ բնակչության դեմ երիտթուրքերի բնաջնջման քաղաքականությունը պետք է վերլուծել և ներկայացնել ոչ թե որպես հայերի, ասորիների կամ հույների առանձին ցեղասպանություններ, այլ մեկ ամբողջական հանցագործություն, այն բնութագրելով որպես Օսմանյան կայսրության, իբրև «ցեղասպան պետության» կողմից իրագործված քրիստոնյաների ցեղասպանություն:

Հայ և ասորի խաղաղ բնակչության ոչնչացումը երիտթուրքերի խելահեղ ծրագրի՝ քրիստոնյաների բնաջնջման գործընթացի մի մասն էր, որովհետև ասորի ժողովրդի կոտորածները տեղի են ունեցել նույն հանգամանքներում, նույն միջավայրում և նույն ժամանակահատվածում, ինչ՝ Հայոց ցեղասպանությունը: Թուրքերը ասորիների՝ քրիստոնյա ինքնությունը պահպանելու կամքը և մշակութային տոկունությունը ընդունում էին որպես պանթուրքական ազգության ստեղծման խոչընդոտ: Հայերի հետ մեկտեղ՝ ասորիները հետապնդվել են որպես ոչ թուրք քրիստոնյաների մի խումբ, իսկ թե ինչի համար՝ կարող է բացատրվել միայն «Միություն և Առաջադիմություն» կուսակցության էթնիկ և կրոնական բացառիկության մասին վճռական գաղափարախոսությամբ:

⁸ Նույն տեղում:

⁹ “Morgenthau Urges Carving of Turkey,” Los Angeles Times, 12 December 1918, I-1.

Ըստ թուրք պրոֆեսոր Թ. Աքչամի՝ «Միություն և Առաջադիմություն» կոմիտեն Առաջին համաշխարհային պատերազմից առաջ «Օսմանյան կայսրությունում ձևավորել էր քրիստոնյա ազգերի դեմ ուղղված քաղաքականություն, որն սկսեց իրագործվել հույների դեմ և պատերազմական տարիների ընթացքում ընդարձակվեց՝ ընդգրկելով ասորիներին, և մասնավորապես՝ հայերին: Դա մի քաղաքականություն էր, որն ի վերջո վերածվեց ցեղասպանության»¹⁰: Թ. Աքչամի կարծիքով գոյություն ունեն քրիստոնյա բնակչության արտաքսումը նկարագրող մանրամասն զեկույցներ¹¹:

Եթե չլիներ Օսմանյան կայսրության մեջ բնակվող քրիստոնյաներին ոչնչացնելու երիտթուրքերի կառավարության բուռն հակվածությունը, ապա Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ գրեթե անհնարին կլիներ իրագործել կայսրության մեջ բնակվող քրիստոնյաների նման լայնածավալ կոտորածները, առևանգումները, բռնի տեղահանություններն ու իրավազրկումը: Առանց երիտթուրքերի կառավարության կազմակերպման ու ուղղորդման, հնարավոր չէր լինի այս խմբերին կոտորելու, կանանց ոչնչացնելու կամ հարեմներ քշելու, երեխաներին որբացնելու, ժողովրդի ունեցվածքը կողոպտելու այդչափ դաժան և հրեշավոր ծրագրերի նման կազմակերպված ձևով իրագործումը:

1908 թ. երիտթուրքական հեղաշրջումից հետո, Հունաստանում Գերմանիայի դեսպանը հայտարարեց, որ «թուրքերը որոշել են բնաջնջման պատերազմ սկսել իրենց քրիստոնյա ազգերի դեմ»¹²: Համաձայն ԱՄՆ-ի դեսպան Հ. Մորգենթաուի գրառումների՝ երիտթուրքերը որոշել էին «ստեղծել մի պետություն՝ բացառապես միայն թուրքերի համար», և այդպիսով նրանց «ազգը թուրքացնելու բուռն ցանկությունը տրամաբանորեն պահանջում էր քրիստոնյաների բնաջնջում»¹³: 1910 թ. «Միություն և առաջադիմություն» կուսակցության պարագլուխները հրավիրե-

¹⁰ **Taner Akcam**, “The Ottoman Documents and the Genocidal Policies of the Committee for Union and Progress (Ittihat ve Terakki) Toward the Armenians in 1915,” pp. 133-134.

¹¹ Նույն տեղում:

¹² **Thea Halo**, Not Even My Name, p. 126.

¹³ **Henry I. Morgenthau**, Ambassador Morgenthau’s Story, p. 193.

ցին համագումար, որի ընթացքում նրանք քննարկեցին, թե որքան «արդյունավետ կլինի բոլոր ոչ թուրք ազգերի լիակատար օսմանացումը, բայց պարզ է, որ այդ ցանկությունը հնարավոր չէ իրագործել համոզելու միջոցով և պետք է դիմել բանակի ուժի օգնությանը»¹⁴: 1911 թ. մի հայտնի երիտթուրք հայտարարեց, որ «ազգերը, որոնք մնացել են իրենց կայսրությունում հնագույն ժամանակներից, պատկանում են օտար և վտանգավոր մոլախատերի դասին, որոնց պետք է արմատախիլ անել»¹⁵: «Մաքրագործելու» քաղաքականությունը, որի նպատակն էր ձերբազատվել «օտար ժողովուրդներից», ի կատար էր ածվում տեղական սպաների և կենտրոնական կառավարության սերտ կապի միջոցով: Ստեղծվեց «Հատուկ կազմակերպություն»-ը (Teşkilat-ı Mahsusa), որն ավելի քան 30.000 զինյալներից կազմված ուժ էր, իր մեջ ընդգրկում էր սպաներ և հանցագործ խմբավորումներ, որոնք ենթարկվում էին Օսմանյան բանակի բարձրաստիճան սպաներին և երիտթուրքական կուսակցության քաղաքական առաջնորդներին: «Հատուկ կազմակերպությունը» դարձավ քրիստոնյա ազգերի միջև «խտրականություն չդնող զանգվածային սպանության գործիք»¹⁶:

Վանի նահանգապետ Ջևդեթ Բեյը ստեղծել էր 8 հազար զինյալներից բաղկացած «մսագործների գունդ», որոնք կազմակերպում էին այնպիսի ջարդեր, որոնք նախադեպը չէին ունեցել¹⁷: Ասորիների կոտորածները, որոնք ունեին ցեղասպանական բնույթ, շարունակվում էին Օսմանյան կայսրության գրեթե բոլոր ասորաբնակ շրջաններում. զանգվածային արյունահեղությունները հասնում էին աննախադեպ մակարդակի: Ասորական գյուղերն ու քաղաքները թալանվեցին կազմակերպված

¹⁴ **Panayiotis Diamadis**, “The Assyrian in the Christian Asia Minor Holocaust,” paper presented at the international conference Assyrians after Assyria: Persecutions and Massacres of Syriac-speaking Christians, University of Sydney, Australia, 2 July 2000.

¹⁵ Նույն տեղում:

¹⁶ **Donald Bloxham**, “The Armenian Genocide of 1915–1916: Cumulative Radicalization and the Development of a Destruction Policy,” Past and Present 181 (2003), p. 152.

¹⁷ **Khosroeva A.**, “The Assyrian Genocide in the Ottoman Empire and Adjacent Territories,” (The Armenian Genocide: Cultural and Ethical Legacies, Ed. by Richard Hovannisian, New Brunswick, New Jersey, Transaction Publishers), p. 270.

ամբոխի կամ քրդական հանցախմբերի կողմից: Հարյուր հազարավոր մարդիկ տարհանվեցին իրենց բնօրրանից, նրանց ունեցվածքը կողոպտվեց, հազարավոր ասորի կանայք և աղջիկներ բռնությամբ քշվեցին թուրքական և քրդական հարեմներ: Արյունահեղությունը կատարվում էր այնքան բարբարոսաբար, որքան հնարավոր էր՝ առանց հաշվի առնելու սեռ կամ տարիք:

Այսպիսով, երիտթուրքերի դաժանությունը վերածվեց քաղաքականության: Այն ծրագրավորված, համակարգված ցեղասպան քաղաքականություն էր, որն իրագործվեց նաև ընդդեմ ասորիների: Առաջին աշխարհամարտը կատարյալ հնարավորություն էր, որով Օսմանյան կայսրությունը կարող էր հասնել իր նպատակին: Պատերազմը ոչ միայն կլանել էր աշխարհի գլխավոր ուժերի ռեսուրսները և ուշադրությունը, այլև ստեղծել էր այնպիսի մի մթնոլորտ, որտեղ զանգվածային դաժանություններն ու սպանությունները կարող էին արդարացվել կամ անգամ չնկատվել:

Երիտթուրքերի կողմից ցեղասպանություն իրագործելու հատուկ մտադրությունը վկայակոչվում էր ականատեսների վկայությունների և իրեղեն ապացույցների միջոցով, և այս դեպքում խոստովանությունը և ցեղասպանության դիտավորության ընդունումը նույնիսկ դառնում են ոչ անհրաժեշտ, որովհետև այն արդեն ակնհայտ է: Հանցավոր գործողությունները, որոնք կատարվում էին պարբերաբար նույն էթնիկ խմբի հանդեպ, բավարար են որպես դիտավորության ապացույց: Ասորի կանանց և երեխաների զանգվածային բռնաբարումները, նորածինների կոտորածը և խմբի վերարտադրողականության վտանգումը պարզորոշ կերպով ցույց են տալիս ցեղասպանության դիտավորությունը: Բնակավայրերի և գյուղատնտեսական հողատարածքների բռնագրավումը նպատակ ուներ զրկելու ասորիներին գոյատևման համար անհրաժեշտ պայմաններից, քաղաքակիրթ և արժանապատիվ կյանքից, և, հետևաբար, ոչնչացնել այդ ժողովրդին: Նրանց աքսորը, ապրուստի միջոցներից, ապաստարանից և արժանապատիվ կյանքից զրկելը ցեղասպանության հանցակազմի բնորոշ հատկանիշներ են:

Ամփոփելով նշենք, որ ասորիների հանդեպ անարդարացի վերաբերմունքը, տանջանքը, սպանությունները, ծանր մարմնական կամ հոգեբանական վնասները, երեխաների նկատմամբ բռնությունները, կանանց բռնաբարությունները, զանգվածային աքսորը, ինչպես նաև նրանց տների և սրբավայրերի դիտավորյալ ավերումները, ապացուցում են երիտթուրքական կառավարության նպատակային մտադրությունը՝ բնաջնջել կամ ոչնչացնել ասորի ժողովրդին:

Այսպիսով, Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում երիտթուրքերի հանցագործ քաղաքականությունն ընդդեմ ասորի ժողովրդի թույլ է տալիս եզրակացնելու, որ կատարվածը միջազգային իրավունքի չափանիշներով միանշանակ ցեղասպանություն էր: Իրենց ազգը զտելու համար երիտթուրքերի կատարած գործողությունների հետևանքով այսօր ասորիները ստիպված են բնակվել սփյուռքում՝ պետականություն չունեցող ժողովրդի կարգավիճակով: Նրանք հուսով են, որ ցեղասպան պետությունը՝ Թուրքիան, վաղ թե ուշ հարկադրված կլինի օբյեկտիվորեն առերեսվել իր անցյալին՝ դրանով իսկ կանխելով ապագայում նման չարիքների կրկնությունը: Միջազգային հանրության բարոյական պարտքն է բարձրաձայնել և ճանաչել այս հանցագործությունը և պայքարել այդ պատմական անարդարության դեմ:

АНАИТ ХОСРОЕВА

Институт истории НАН РА

РЕЗНЯ АССИРИЙЦЕВ В ОСМАНСКОЙ ИМПЕРИИ ВО ВРЕМЯ ПЕРВОЙ МИРОВОЙ ВОЙНЫ (1914-1918 ГГ.). ЗАБЫТЫЙ ГЕНОЦИД

Во многих исследованиях по теме геноцида Геноцид армян представляется, как единственная массовая резня, осуществленная в начале 20-го века в Османской империи.

Доклад посвящен „забытому” и не признанному международным сообществом ассирийскому геноциду, осуществленному в Османской империи в годы Первой мировой войны, который происходил в тех же обстоятельствах, что и Геноцид армян. Война позволила младотуркам реализовать свои планы, целью которых было избавление от всех христианских национальностей империи: не только армян, но и ассирийцев и греков.

Резня и погромы ассирийцев в Османской империи во время Первой мировой войны являются геноцидом, согласно определению этого термина по международному праву, так как действия против ассирийцев, совершались с намерением полностью или частично уничтожить эту группу как таковую.

АНАИТ ХОСРОЕВА

Institute of History of NAS RA

THE ASSYRIAN MASSACRES IN THE OTTOMAN EMPIRE DURING THE FIRST WORLD WAR. FORGOTTEN GENOCIDE

In many genocide researches and books, and in political pronouncements by genocide and area studies scholars, the “Armenian Genocide” is described as the only major mass murder taking place in the early twentieth century.

This paper focuses primarily on the history one of the internationally “forgotten” and not recognized as genocide mass atrocities of the Assyrian population of the Ottoman Empire during the Great War which occurred in the same circumstances as the Armenian genocide. The wartime emergency situation provided the opportunity to put into action Young Turks’ wild plans to get rid of all Christian minorities, including not only the Armenians but Assyrians, also.

The Ottoman Empire's widespread persecution of Assyrian civilians during the First World War constituted a form of genocide, the present-day term for an attempt to destroy a national, ethnic, or religious group, in whole or in part.

ԳԵՎՈՐԳ ՊՈՂՈՍՅԱՆ

*ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության,
սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ*

ՀԱՅԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԿԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ԺԱՄԱՆԱԿ (ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՄՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԵՎՍՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ)

Առաջին համաշխարհային պատերազմից առաջ և այդ ընթացքում Օսմանյան կայսրությունում հայերի թիվը կազմում էր մի քանի միլիոն, որոնք հիմնականում բնակվում էին Արևմտյան Հայաստանի 6 վիլայեթներում, Կիլիկիայում և Կոստանդնուպոլսում:

Ըստ թուրքական վիճակագրության, արևմտյան փորձագետների և Կոստանդնուպոլսում հայոց պատրիարքարանի տվյալների՝ Օսմանյան կայսրությունում մինչև 1915 թվականը ապրել են 1,6-ից մինչև 2 միլիոն հայեր: Խնդիրը նրանում է, որ Օսմանյան կայսրությունում մարդահամարը հաշվի չի առնում էթնիկական կազմը, նրանք գրանցում էին միայն կրոնական պատկանելիությամբ, և այդ համատեքստում էթնիկ հայերը գրանցվում էին միայն որպես հայ առաքելական եկեղեցու հետևորդներ:

Հասկանալի է, որ իրականում հայերի թիվը կարող էր էապես գերազանցել վիճակագրական տվյալներին: Հայերի մեծամասնությունը բնակվում էր երկրի արևելյան մասի գյուղական շրջաններում և զբաղվում էր գյուղատնտեսությամբ, սակայն մեծ և փոքր քաղաքներում բնակչության մեջ հայերը, որպես կանոն, ներկայացվում էին միջին սո-

ցիալական վիճակում և զբաղվում էին արհեստագործությամբ, առևտրով, բժշկությամբ և մանկավարժությամբ:

Մինչդեռ հենց Կոստանդնուպոլսում հայերը ներկայացված էին հասարակության բարձր խավերում. նրանց մեջ կային բժիշկներ, գրողներ, ճարտարապետներ, երաժիշտներ, իրավաբաններ, ֆինանսիստներ, բարերարներ, դպրոցների և գիմնազիայի մանկավարժներ, ինչպես նաև խոշոր առևտրային կազմակերպությունների սեփականատերեր: Քաղաքի բնակչության մեջ հայերի կրթական մակարդակը ավելի բարձր էր, քան բնիկ թուրքական բնակչությանը:

Առաջին Համաշխարհային պատերազմը, ինչպես հայտնի է, տևել է 4 տարի 6 օր - 1914 թվականի հոկտեմբերի 24-ից մինչև 1918 թվականի հոկտեմբերի 30-ը: Առաջին Համաշխարհային պատերազմի Կովկասյան ռազմաճակատում նույնպես թե՛ մարտեր էին ընթանում: Կովկասյան ճակատի բանակում մասնակցում էին մի քանի ստորաբաժանումներ: Մի կողմից ռուսական Կովկասյան բանակը, հայ կամավորական ստորաբաժանումները, անգլիական ջոկատը: Կովկասյան ճակատի բանակում ընդգրկված Ռուսական կայսրության զինված ուժերը 1914 թ. ունեին մոտ 160000 զինվոր: Իսկ հակառակորդի կողմից մասնակցում էին Գերմանական արշավային ուժերի 3-րդ և հետո 2-րդ բանակները, իսլամական բանակը, Ադրբեջանի զինված ուժերը:

Մինչ պատերազմի սկիզբը Կովկասի փոխարքա Իլարիոն Վորոնցով-Դաշկովի ղեկավարությամբ Ռուսաստանի կազմում գտնվող Արևելյան Հայաստանում ապրում էր 100000 մարդ: 1914 թ. ռուսական Կովկասյան բանակի կազմում սկսվեց հայ կամավորական ջոկատների կազմավորման գործընթացը Անդրանիկ Օզանյանի, Դրաստամատ Կանայանի, Արշակ Գաֆայանի, Սարգիս Մեհրաբյանի և ուրիշների հրամանատարությամբ:

1917 թվականին Կովկասյան զորքը ցրվեց, քանի որ մշտական ռուսական զնդերը ռուսական հեղափոխությունից հետո լքեցին ճակատամարտի զիծը: Նույն թվականի դեկտեմբերին հայ ազգային ազատագրական շարժման գործիչները ստեղծեցին նոր ռազմական ուժ: Շենքը կա-

ռուցվեց գեներալ Թովմաս Նազարբեկյանի գլխավորությամբ: Դրաստամատ Կանայանը նշանակվեց քաղաքացիական կոմիսար: Առաջին գծում կային երեք հիմնական ստորաբաժանումներ՝ Մովսես Սիլիկյանի, Անդրանիկ Օզանյանի և Միքայել Արեշյանի ղեկավարությամբ: Վանից դեպի Երզնկա տանող գիծը կազմակերպվել էր հենց այդ ստորաբաժանումների միջոցով:

1917 թ. Ռուսաստանի և Կովկասյան Հայաստանի գորքերում կար 110000 -120000 հայ զինվոր. այդ թիվը մոտենում էր 150000-ի: Օսմանյան ուժերը դիմակայում էին 3-րդ բանակի ուժերով: 1916 թ. նրանք ձևավորեցին երկրորդ բանակը: Ռազմական գործողությունների սկզբում Օսմանյան միացյալ ուժերը տատանվում էին 100000-ից մինչ 190000:

1914-1918 թթ. Օսմանյան կայսրության դեմ հայկական ռազմական արշավի ժամանակ գրանցվել է պատմական ռեկորդ: Համաձայն Պողոս Նուբարի, հայ ազգային պատվիրակության նախագահի կամավորական կազմավորումների ընդհանուր թիվը հասնում էր մոտավորապես 150 000 զինվորի: Նրանք միակն էին Կովկասի ժողովուրդներից, որոնք բուլղարիկների հեռանալուց հետո դիմադրում էին թուրքական բանակի առաջխաղացմանը¹:

Հայերի զինված հակամարտությունը Օսմանյան կայսրության հետ տեղի ունեցավ 1918 թ. Սարդարապատի, Բաշ-Ապարանի և Ղարաքիլիսայի հերոսամարտերում, ավելի ուշ տեղի է ունեցան նաև հայ-վրացական և հայ-ադրբեջանական պատերազմները: Առնվազն 10000-ից մինչև տասնյակ հազարավոր մարդ մահացավ հայերի այս զինված դիմադրության ընթացքում, երբ սկսվեց թուրքական գորքերի արշավանքը դեպի Արևելյան Հայաստան: Հայերի զոհերի թիվը հրապարակված չէ առաջին հանրապետության իրավահաջորդի՝ Հայաստանի Հանրապետության կողմից:

1915-1918 թթ. հայերի զոհերի թիվը տատանվում է ըստ տարբեր աղբյուրների: Օսմանյան և թուրքական տվյալների համաձայն՝ Ջեմալին ներկայացված օսմանյան պաշտոնական տվյալներով սպանվել են

¹ Letter to French Foreign Office - December 3, 1918

800000 մարդ: Ամենայն հավանականությամբ, զոհերի մեջ ներառվել էին նաև նրանք, ովքեր սպանվել էին տարհանման ժամանակ, որպեսզի մահացած մարդկանց թիվը ճշտվի²: Պետք է նշել, որ 800000 մեջ չեն մտել Օսմանյան բանակում սպանված հայ զինվորները:

Գերմանական աղբյուրները տալիս էին հայերի կորուստների վերաբերյալ ամենաբարձր տվյալները, չնայած նրան, որ թուրքերը գերմանացիների դաշնակիցներն էին: Գերմանական զեկույցում նշվում է, որ 1916 թ. փետրվարին 1,5 մլն. հայ է սպանվել³: Արտաքին գործերի նախարարության հետախուզության բաժնի պետ Էրցբեռգերն իր 1916 թ. զեկույցում, ինչպես նաև 1916 թ. հոկտեմբերի 4-ին Կ.Պոլսում Գերմանիայի ժամանակավոր դեսպան Ռադովիցը նշել են այդ նույն թիվը: Հետևաբար, կարելի է ենթադրել, որ հայերի զոհերի 1.5 մլն. թիվն առաջացել է այդ գերմանական աղբյուրներից:

Աղբյուրներից մեկի համաձայն, երբ թուրքերը 1915-1918 թթ. ներխուժեցին Հյուսիսային Իրան (որը պատմական Հայաստանի մասն էր, Պարսկահայ նահանգը և հյուսիսային Վասպուրականը), նրանք սպանեցին մոտ 80000 հայ: Իսկ երբ նրանք ներխուժեցին Անդրկովկաս (1918-1920 թթ.), սպանեցին 175 000 հայ:

Հետազոտողներից ոմանք փորձել են ներկայացնել պատերազմի ժամանակ որոշ կորուստների տվյալներ, սակայն դրանց մեծամասնությունը մոտավոր կամ ուրիշների տվյալների կրկնություններ են:

Ազգերի Լիգայի հետազոտություններում նշվում է Հովհաննես Քաջազունու կառավարության ժամանակ փախստականների վերաբերյալ մի թիվ, որը հրապարակվել է 1926 թ⁴. և «Հայ փախստականների փոխանցումը Կովկաս և այդ տարածքներում հայկական օջախի

² **Yakm Tarhimiz**, 3, (1962), p. 179, cited in **Vahakn N. Dadrian**, The History of the Armenian Genocide: Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus.

³ Գրված է հուլիս 2, 1916-ին, Volkswirtschaftliche Studien in der Türkei, AA Türkei, 134/35, A18613. Չեկույցը մայիսի 27, 1916.

⁴ League of Nations. Assembly: Fifth Committee published reports: “Armenian and Russian Refugee Problems”, Report... Geneva: np, 1926.

ստեղծումը»⁵ գեկույցում: Ըստ այդ աղբյուրների, 1919 թ. սկզբին Հայաստանում ապրելու համար դիմել են մոտ 393 700 հայ փախստականներ Թուրքիայից: Դրանք տեղակայվել են ապրելու Սարդարապատի, Էջմիածնի շրջանի 8 գյուղերում, Աշտարակում և այլն: Ընդհանուր թիվը պատկերված է աղյուսակում:

Համայնք	Երևան	Աշտարակ	Ախտա-Ելենովկա	Բաշ-Գառնի	Նոր Բայազետ	Դարավազուց	Բաշ-Ապարան	Էջմիածին	Ղարաքիլիսա	Գիլջան
Փախստականների թիվը	75,000	30,000	22,000	15,000	38,000	36,000	35,000	70,000	16,000	13,000

Թուրքերին ընձեռնվեց մի այնպիսի հնարավորություն թուրքական հողերը մաքրելու քրիստոնյաներից, որոնք կանգնած էին թուրքերի առաջ իրենց ազգային պահանջներով: Ամեն ինչ սկսվեց 1919 թ. ապրիլի 23-24-ը ընկած ժամանակահատվածում Կոստանդնուպոլսում, երբ նոր բռնություններ կատարվեցին հայ լրագրողների, գիտնականների, քաղաքական դեմքերի նկատմամբ: Ընդհանուր առմամբ մի քանի օրում մոտ 600 մարդ ձերբակալվեց: Նրանք բոլորը ուղարկվեցին Անատոլիա, որոնցից շատերը ճանապարհին սպանվեցին:

Գնահատելով հայ ժողովրդի՝ Առաջին աշխարհամարտի տարիներին ունեցած դերը՝ թուրք-գերմանական բլոկի դեմ տարած հաղթանակում՝ Գերմանիայում ԱՄՆ-ի դեսպան Ջեյմս Ջերարդը 1919 թ. ասում էր. «Ամերիկացիք պետք է մի վայրկյան կանգ առնեն և խորհեն, թե ինչ

կլինեք պատերազմի ելքը և տևողությունը արևմուտքում, եթե թուրքերն ուր ամիս առաջ հասնեին Բաքու, եթե հայերը չդիմադրեին»:

Իսկ գերմանական բանակի փաստացի ղեկավար գեներալ Էրիխ Ֆոն Լյուդենդորֆը խոստովանում էր. «Գլխավոր ազդակը, որ առաջ բերեց գերմանական արևմտյան բանակի խորտակումը, վառելանյութի պակասն էր, որովհետև թուրքերը չկարողացան ժամանակին գրավել Բաքուն, և հայերն էին, որ թուրքերին արգելք եղան Բաքուն գրավելու ժամանակ»:

Օսմանյան կայսրությունում մինչ Առաջին աշխարհամարտը 2-3 միլիոն հայությունը 100 տարում պետք է բազմանար և հասներ մինչև 10 միլիոնի: Հայաստանի բնակչությունը 1920թ.-ից հետո մինչ մեր օրերը պետք է հասներ մոտ 5 միլիոնի: Հարևան Վրաստանում ու Ադրբեջանում հայության քանակը մեր օրերին պետք է հասներ մոտ կես միլիոնի ամեն երկրում: Այսպիսով՝ այսօր տարածաշրջանում հայությունը կարող էր հասնել $10+5+0,5+0,5 = 16$ միլիոնի: Մինչդեռ այսօր մեր տարածաշրջանում բնակվում են մոտ 4 միլիոն հայեր: Փաստորեն, Առաջին աշխարհամարտից ամենաշատը տուժեցին հայերը. կորցրեցին իրենց տարածքի կեսից ավելին և բնակչության մեծ մասը:

Արդեն մեր օրերում փորձեցինք պարզել, թե մեր բնակչությունը ինչ գիտի Առաջին համաշխարհային պատերազմի և հայերի մասնակցության մասին: Սոցիոլոգիական հարցում անկացրեցինք Հայաստանում 2014 թ. սեպտեմբերի 15-ից 25-ը: Եվ ահա թե ինչպիսի պատասխաններ ստացանք մեր կողմից տրված երկու հարցերին:

Դուք գիտեք, թե որ թվականներին է եղել Առաջին Համաշխարհային պատերազմը:

- 1914-1918 թթ. – 35,5%
- Այլ տարիներ – 30,3%
- Չգիտեմ – 34,2%

Ձեր կարծիքով հայերը այդ պատերազմին մասնակցե՞լ են:

- Այո, մասնակցել են – 64,1%
- Ոչ, չեն մասնակցել – 18,1%

⁵ "Transfer of Armenian Refugees to the Caucasus and Creation of an Armenian National Home in That Region", Report... Geneva: np, 1924.

Զգիտեմ – 17,8%:

Ինչպես տեսնում ենք, 1000 հարցվածներից միայն 35,5 տոկոսն է ճիշտ նշել Առաջին Համաշխարհային պատերազմի տարեթվերը: Նրանց մեծ մասը մեծահասակներն են: Այսինքն, մեր երիտասարդությունը արդեն լավ չի պատկերացնում, թե երբ է եղել Առաջին Համաշխարհային պատերազմը: Կային մարդիք, ովքեր նշել էին 1946 թ., կամ նույնիսկ՝ 1955 թ.: Ուրախալի է, որ հարցվածների մեծ մասը՝ 64,1 տոկոսը, գոնե տեղյակ է, որ հայերը նույնպես մասնակցել են Առաջին համաշխարհային պատերազմին: Սակայն նշենք, որ հարցվածների 17,8 տոկոսը պարզապես տեղյակ չեն, իսկ 18,1 տոկոսը կարծում են, որ հայերը ոչ մի մասնակցություն այդ պատերազմում չեն ունեցել: Սրանց մեջ մեծ մասը նույնպես երիտասարդներ են կազմում: Եթե մեր միջնակարգ դպրոցներում պատմություն առարկան շարունակվի դասավանդվել նույն ձևով, ապա շատ շուտով Առաջին աշխարհամարտը հնարավոր կլինի որակել որպես **մոռացված պատերազմ**:

ГЕВОРК ПОГОСЯН

Институт философии, социологии и права НАН РА

**СОЦИАЛЬНО-ДЕМОГРАФИЧЕСКОЕ СОСТОЯНИЕ АРМЯН ВО
ВРЕМЯ ПЕРВОЙ МИРОВОЙ ВОЙНЫ (ОСМАНСКАЯ ИМПЕРИЯ И
ЗАПАДНАЯ АРМЕНИЯ)**

В период до и во время Первой мировой войны армянское население Османской империи насчитывало несколько миллионов человек, проживающих в основном в шести вилайетах Западной Армении, в Киликии и в Константинополе. По данным турецкой статистики, западных экспертов и Армянского патриархата Константинополя в Османской империи до 1915 года проживало от 1,6 до 2 миллионов армян. Дело в том, что переписи населения в Османской империи не учитывали этнический состав, они регистрировали только религиозную принадлежность, и в этом контексте этнические армяне регистрировались

фактически только как приверженцы Армянской Апостольской Церкви. Понятно, что в реальности число этнических армян могло существенно превосходить эти статистические данные.

Большинство армян проживало в сельских районах восточной части страны, они занимались сельским хозяйством. Но среди жителей малых и больших городов армяне, как правило, были представлены в среднем социальном сословии и занимались ремесленничеством, торговлей, врачеванием и преподаванием. Между тем в самом Константинополе армяне были хорошо представлены в высших слоях общества и среди них были врачи, писатели, архитекторы, музыканты, юристы, финансисты, меценаты, преподаватели школ и гимназий, а также владельцы крупных торговых компаний. Уровень образования среди городского армянского населения был гораздо выше, чем среди местного турецкого населения.

GEVORG POGHOSYAN

Institute of Philosophy, Sociology and Law of NAS RA

**SOCIAL AND DEMOGRAPHIC SITUATION OF ARMENIANS DURING
THE WORLD WAR I (OTTOMAN EMPIRE AND WESTERN ARMENIA)**

In the period before and during World War I Armenian population of the Ottoman Empire employs several million people living mainly in the six vilayets and in Constantinople. According to the Turkish Statistics, Western experts and the Armenian Patriarchate of Constantinople to the Ottoman Empire until 1915 lived from 1.6 million to 2 million Armenians. The fact that the census in the Ottoman Empire did not consider the ethnic composition, they recorded only religious affiliation, and in this context ethnic Armenians actually recorded only as followers of the Armenian Apostolic Church. It is clear that in reality the number of ethnic Armenians could significantly exceed these statistic data. Most Armenians lived in rural areas in the eastern part of the country, and they were engaged in agriculture. But among the inhabitants of small towns and cities Armenians

were usually presented in the middle social classes and doing crafts, trade, healing and teaching.

Meanwhile, in Constantinople Armenians were well represented in the higher strata of society, and among them were medical doctors, writers, architects, musicians, lawyers, financiers, philanthropists, teachers of schools and gymnasiums, as well as owners of large trading companies. Education level among the Armenian population of the city was much higher than among the local Turkish population.

ԼԵՎՈՆ ՇԻՐԻՆՅԱՆ

*ՀՀ ԳՍԱ Փիլիսոփայության,
սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ*

ԲԱԼԿԱՆՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ ԵՎ ԱՐԵՎՍՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ (ԵՐԿՐԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԷՏՅՈՒՐ)

«Աշխարհագրական առումով Հայաստանը իրենից ներկայացնում է բնական և գրեթե անառիկ ամրոց: Մի կողմից նա սահմանակցում է Ռուսաստանին, մյուս կողմից՝ իջխում է համաշխարհային այն բոլոր ուղիների վրա, որ Փոքր Ասիայով անցնում են իր բնական պատնեշների փեշերով, միացնելով Եվրոպայի հետ հարստագոյն երկրներ ու ծովեր: Կորցնելով Հայաստանը Թուրքիան կղաղարի գոյություն ունենալուց: Կարելի է գրեթե առանց չափազանցության ասել, որ ժամանակակից Թուրքիայի համար անգամ նեղուցներին տիրելը չպետք է որ այնպիսի ուշադրության արժանանա, ինչպես Հայաստանն իր համար պինդ պահելը՝ իր գոյատևման այդ վերջին և ամուր պատվարը»:

Պաուլ Ռոբբախ*

Օսմանյան կայսրությունը XX դար թևակոխեց տարածքային զգալի կորուստներով: Բեռլինի կոնգրեսի (1(13) հունիսի - 1(13) հուլիսի 1878) սահմանած հավասարակշռությունը կորցնում էր իր ներքին կայունութ-

յունը: Փարիզի խաղաղության տրակտատի (18(30) մարտի 1856 թ.) կողմից թուրքական պետությանը տրված անձեռնմխելիության երաշխիքները անտես «գոլորշիանում էին»: Առաջինը, որ խախտեց «տաբուն», հզորության գազաթնակետ մագլցող Բոսլիան էր:

1911 թվականի սեպտեմբերի 29-ին համաշխարհային քաղաքականության մեջ ակտիվ դերակատարության հայտ ներկայացրած այդ երկիրը սկսեց Օսմանյան կայսրությունից իլել նրա հյուսիսաֆրիկյան տիրույթները՝ հռոմեական պատմական պրովինցիաները (գավառները)՝ Տրիպոլիտանիան և Կիրենայիկան: Այս ուղղությամբ նա դեռևս XIX դարի 90-ական թվականներին ստացել էր Գերմանիայի համաձայնությունը: «Գերմանիան Բոսլիային «carte blanche» էր տվել Տրիպոլիտանիայում և Կիրենայիկայում»: «Ավելին, Բոսլիան ոչ միայն իր դաշնակիցներից՝ Գերմանիայից և Ավստրո-Հունգարիայից էր ստացել իր ծրագրերի ճանաչում, այլև Եռյակ համաձայնության տերությունների կողմից»¹:

Պահը հարմար էր ընտրված: Խոշոր տերություններից «Ֆրանսիան զբաղված էր Մարոկկոյի գործերով, Թուրքիան չուներ բավարար նավատորմ, Գերմանիան Տրիպոլիտանիայի համար մտադիր չէր վիճել իր դաշնակցի հետ, Անգլիան բարյացակամորեն էր վերաբերվում Բոսլիայի հանդեպ՝ ձգտելով նրան վերջնականապես պոկել Եռյակ միությունից»²: Ավստրո-Հունգարիային ընդհանրապես ձեռնտու էր Բոսլիայի ուշադրության տեղափոխումը (կենտրոնացումը) Ադրիատիկի ափերից արևմտյան Հյուսիսային Աֆրիկա՝ Տրիպոլիտանիա: Ռուսաստանը դեմ չէր իտալական ձգտումներին: Դեռևս 1909 թվականին Ռակոնիջիում Բոսլիան պարտավորվել էր «բարյացակամորեն վերաբերվել Ռուսաստանի շահերին՝ Նեղուցներում»՝ փոխադարձորեն ճանաչելով Բոսլիայի «հատուկ իրավունքները» Տրիպոլիտանիայում:

¹ Могилевич А.А., Итало-турецкая война, Могилевич А.А., Айрапетян М.Э., На путях к мировой войне 1914-1918 гг., М., с. 91.

² Նույն տեղում, էջ 92:

* «Deutseh-Asiatische Gesellschaft» ընկերության 1913 թվականի նոյեմբերի 23-ի խորհրդակցության ելույթից:

Այսպիսով, շրջագիծը փակվում էր «Եվրոպայի հիվանդ մարդու» և քրիստոնյա ժողովուրդների «հավերժական սպանդանոցի» շուրջ: Եվ, ինչպես նկատել է Ավստրո-Հունգարիայում և Իտալիայում ռուսական ռազմածովային գործակալ Բոյլը, **«տեղի ունեցավ զարմանալի բան՝ Իտալիան գնաց Թուրքիայի վրա Եվրոպայի ընդհանուր համաձայնությամբ** (ընդգծումը իմն է.- Լ.Շ.)»³: Սկսվել էր թուրքական պետության արտամղումը Եվրոպայից:

Ընդամին, «Օսմանյան կայսրության արտաքին քաղաքական մեկուսացումը և պատերազմից ծնված ներքաղաքական ճգնաժամը մեծավ մասամբ պայմանավորեցին բալկանյան ժողովուրդների՝ թուրքական պետության դեմ հանդես գալու պահի ընտրությունը և Բալկանյան առաջին պատերազմի սկիզբը»⁴:

Իրո՛ք:

1912 թվականի հոկտեմբերի 18-ին Լոզանում (Ուշի) Տրիպոլիտանիան և Կիրենաիկան ստանում էին «լիակատար ինքնավարություն»: (Իտալիայի «Ժամանակավոր» տիրապետության տակ էին անցնում նաև Դոդեկանեզյան կղզիները): Սկիզբ էր դրվում ապագա Լիբիայի անկախությանն ու նրա ժողովուրդների ազատագրության տևական գործընթացին: Իսկ 1912 թվականի հոկտեմբերի 18-ին, նույն օրը, Բուլղարիայի և Հունաստանի, ի պաշտպանություն Չեռնոգորիայի, մարտական գործողություններով սկսվում էր Բալկանյան առաջին պատերազմը ընդդեմ նույն «Եվրոպայի հիվանդ մարդու»:

Բալկանյան պատերազմները, ինչքան էլ տարօրինակ հնչի, Արևելքի քրիստոնյա ժողովուրդների՝ առաջին հերթին հույների և հատկապես հայերի համար ունեցան աղետալի և թերևս անդառնալի հեռագնա երկրաքաղաքական հետևանքներ...

«Թուրքերի կողմից ստրկացված Բալկանների ժողովուրդները, գրում են Ա. Գ. Ջադոխինը և Ա. Յու. Նիզովսկին,- ազգային ազատագ-

³ Նույն տեղում, էջ 93:

⁴ **Зябрилов В.В.**, Итало-турецкая война –1911-12. – “Большая Российская Энциклопедия”, М., 2008, с. 12, с. 216.

րության ճանապարհ թևակոխեցին աստիճանաբար: Առաջին էտապում ձևավորվեցին կիսահինքնավար, այնուհետև ինքնավար Չեռնոգորիան և Սերբիան, ապա Վալախիան և Մոլդավիան, որոնք հետագայում միավորվեցին Ռումինիայի մեջ: 1830 թվականին անկախություն նվաճեց Հունաստանը: 1875-1878 թվականների Արևելյան ճգնաժամի արդյունքում անկախություն ստացան Սերբիան, Չեռնոգորիան և Ռումինիան և ձևավորվեց ինքնավար Բուլղարական իշխանապետությունը, որը 1909 թվականին դարձավ անկախ: 1912 թվականին անկախության հասավ Ալբանիան: Վերջապես, Առաջին համաշխարհային պատերազմից հետո կազմավորվեց Հարավսլավիան՝ հարավային սլավոնների պետությունը»⁵:

Անդրադառնալով բալկանյան առաջին պատերազմի (9 հոկտեմբերի 1912 - 30 մայիսի 1913) նպատակներին և արդյունքներին՝ նույն հեղինակները գրում են. «Ուզնորված իրենց փայլուն հաղթանակներից, նրանք (Բալկանյան միությունը.- Լ.Շ.) թուրքերի հետ բանակցում էին ծայրահեղ դաժանորեն. **Թուրքիան պետք է ամբողջովին հրաժարվի իր բոլոր եվրոպական տիրույթներից** (ընդգծումը իմն է.- Լ.Շ.): Թուրքերը հուսահատ դիմադրում էին, սակայն, հայտնվելով դիվանագիտական մեկուսացման մեջ, ստիպված էին համակերպվել դաշնակիցների բոլոր հիմնական պահանջների հետ»⁶: Այնուհետև. «Օսմանյան կայսրությունը տապալված է: Մլավոնական ռեկոնկիստան (հետ նվաճումը.- Լ. Շ.), որ սկսվել էր սերբական առաջին ապստամբությամբ, ավարտվեց թուրքերից Բալկանների լրիվ ազատագրումով»⁷: 1913 թվականի մայիսի 5-ին ստորագրվեց Լոնդոնի խաղաղության դաշնագիրը, «համաձայն որի Թուրքիան կորցնում էր եվրոպական իր տիրույթները Էնեզ-Միդյա գծից հյուսիս և ճանաչվում էր Ալբանիայի անկախությունը»⁸:

⁵ **Задохин А. Г., Низовский А.Ю.**, Пороховой погреб Европы. Балканские войны XX века, М., 2000, с. 19-20.

⁶ Նույն տեղում, էջ 41:

⁷ Նույն տեղում, էջ 42:

⁸ St´ u Балканские войны –1912-13. – “Большая Российская Энциклопедия”, М., 2005, с. 3, с. 709.

Անկախ այն բանից, որ բալկանյան երկրորդ պատերազմը բռնկվեց նախկին դաշնակիցների միջև և այս անգամ ջախջախվեց Բուլղարիան, որի հետևանքով, ըստ «Բուխարեստի խաղաղության դաշնագրի (1913 թ. օգոստոսի 10) Բուլղարիան Ռումինիային զիջեց Հարավային Դոբրուջան, Հունաստանին՝ Հարավային Մակեդոնիան և Արևմտյան Թրակիայի մի մասը, իսկ Սերբիային ողջ Հյուսիսային Մակեդոնիան, իսկ Կոստանդնուպոլսի խաղաղ դաշնագրով (1913 թ. սեպտեմբերի 29) Օսմանյան կայսրությանը վերադարձվեց Արևելյան Թրակիայի մեծ մասը և Էդիրնեն (Ադրիանապոլիսը.- Լ. Շ.)»⁹, թուրքերի ճակատագիրը Եվրոպայում կասկածելի էր. թուրք նախամարդը եվրոպական մտրակի հարվածների տակ իր արյունոտ հայացքը շուտ էր տալիս դեպի արևելք՝ հայության սրբազան հայրենիք՝ Արևմտյան Հայաստան:

Այլևս կանխորոշված էր հայության ապագան Արևմտյան Հայաստանում, Կիլիկիայում և Օսմանյան կայսրության ողջ տարածքում: Հանգամանքների չարաղետ դասավորումով՝ այնուհետև նաև Այսրկովկասում:

Թերևս Բալկաններից հետո, անտես, փոխվում էր միջազգային հավասարակշռությունը Օսմանյան կայսրության շուրջ: Ժամանակի ռազմավարական համայնապատկերի խորքային ընկալումով քաջածանոթ անգլիացի պատմաբան Ալան Թեյլորը, արձանագրելով կայսրության շուրջ նշյալ տեկտոնական տեղաշարժը, գրում է. «Բալկանյան պատերազմների ավարտից հետո միջազգային հարաբերությունների վճռական հարցը դարձավ ասիական Թուրքիայի ապագան: Բալկանները մեծ հետաքրքրություն չէին ներկայացնում. **Ասիայում բացվող հնարավորությունները թվում էին վիթխարի** (ընդգծումը իմն է.- Լ. Շ.): Այդ հարցը բաժան-բաժան արեց գոյություն ունեցող միությունները»¹⁰:

Այսպիսով, բալկանյան պատերազմները ծայրահեղորեն սրեցին միջազգային հակասությունները, արագացնելով Առաջին աշխարհամարտի գալուստը: Այդ հակասությունները խոշոր տերությունների

⁹ Նույն տեղում:

¹⁰ **Тейлор А. Дж.**, Борьба за господство в Европе 1848-1918, пер. с англ., М., 1958, с. 506.

(Անգլիա, Գերմանիա, Ֆրանսիա, Ռուսաստան, Ավստրո-Հունգարիա) շահագրգռությունների ու խարդավանքների կենտրոնը տեղավորեցին **Օսմանյան կայսրության սրտում՝ Կոստանդնուպոլսում և Փոքր Ասիայում**¹¹:

Այս նույն շրջանում է, որ ծնողաների հնչյունների ուղեկցությամբ կյանքի կոչվեց «հայկական բարենորոգումների ռուսական ծրագիրը»՝ կոթնած Բեռլինի մեռնող տրակտատի 61-րդ հոդվածին: Ուշագրավ է այստեղ Վահան Փափագյանի (Կոմս) դիտարկումը. նախաձեռնությունը, գրում է նա, գալիս էր «Թիֆլիզի և Մոսկվայի առաջավոր հայ մտավորականությունից»: Այն «խորհրդակցություն կունենա ռուս կառավարության և Կովկասյան փոխարքայության հետ՝ Ռուսաստանի հովանավորությունը խնդրելու Հայկական բարենորոգումներու վերաբերմամբ, թե՛ Ամենայն Հայոց Կաթողիկոսին կողմե հեղինակավոր հայ հանրային գործիչներու թելադրությամբ՝ Կովկասյան փոխարքայի խողովակով, հիշատակագիր մը հանձնված էր Ռուսիո կայսրին, խնդրելով **ստանձնել նախաձեռնությունը հայ դատի լուծման**» (ընդգծումը իմն է.- Լ. Շ.): «Անակնկալ էր մեր ռուսահայ եղբայրներու այս քայլը», «հետաքրքրականը այն էր, որ բոլոր այս վճռական և ճակատագրական քայլերուն ձեռնարկած էին, առանց գոնե ի տեղեկություն հաղորդելու Ազգային Պատրիարքարանին...»: Իսկ հաջորդիվ, ցավով խոստովանում է. «Մենք, անշուշտ, խորապես կգիտակցեինք մեր փափուկ դիրքը - ապրիլ օսմանյան կայսրության մեջ, լինել անոր հպատակը, վայելել ազգային սահմանադրական ինքնավարություն, բնականոն հարաբերություններ պահել կառավարության հետ և միննույն աստեն դավադիր գործ կատարել, այսինքն՝ օտար պետություններուն դիմել և անկե սպասել օգնություն: Անըմբռնելի հանդգնություն մըն էր այս, որուն արդյունքը վայելեցինք երեք տարի վերջը...»¹²: Ահա այսպե՛ս:

Բալկանյան պատերազմները տարբեր գնահատականներ և հույզեր առաջացրին հայոց մեջ: Առաջինը և գերիշխողը ավանդական էր՝

¹¹ Տե՛ս նույն տեղում:

¹² **Փափագյան Վ.**, Իմ հուշերը, Բեյրութ, 1952, հր. երկրորդ, էջ 185-186:

գաղափարականը - առարկայագուրկը: Այս տեսակետը լավագույնս արտացոլված է Նիկոլ Աղբալյանի մտածումներում: Նա գրում է. «Շատերի հետ՝ մենք ևս մեր ուրախությունն ենք հայտնում կայացած հաշտության առիթով: Հայերը դարեր շարունակ տարել են թյուրքական լուծը. նրանք լավ են հասկանում, թե ինչ է նշանակում այդ լուծից ազատվել, և զարմանալի չէ, որ հազարավոր վերստեր հեռու՝ մենք սրտանց ուրախանում ենք բալկանյան ժողովուրդների ազատագրության համար:

Մենք ունենք ուրախության և մի ուրիշ պատճառ,- շարունակում է Ն. Աղբալյանը:- Եվրոպական մեծ պետությունները խոստացել էին, որ Բալկանյան պատերազմի վախճանից հետո՝ կհարուցանեն հայոց հարցը: [Եվ գլուխկոտրուկ «կանխատեսումը»]: Ամեն նշաններից երևում է, որ պատիժը խոսքեր չեն եղած այդ խոստումները: Բնական է այն ուրախությունը, որ պիտի զգա ամեն հայ, լսելով հաշտության լուրը, որով հետև Բալկանյան հաշտություն՝ նշանակում է հայոց հարցի հարուցում և ո՞վ գիտե՞ գուցե նաև լուծում այնպիսի ձևով, որ հայությունը ազատվեր թյուրքական լուծից... «Եվրոպական Թուրքիայի» ազատագրությամբ Եվրոպայի հանցավոր խղճից ընկնում է մի բեռ. մնում է մի ուրիշ ծանր բեռ - Հայաստանը և իր անհամար զոհերի արյունը...»¹³:

«Եվրոպական Թուրքիայի» այդ ազատագրության համար կովում էր նաև «հայկական կամավորական վաշտը (270 մարդ) պողպորուչիկ Գ. Նժդեհի և վոյեվոդա Անդրանիկի (Օզանյան) հրամանատարությամբ»¹⁴:

Երկրորդը իրատեսական էր, դոգմաներ չհանդուրժողը, թելադրված ազգային շահի գիտակցումով և Օսմանյան կայսրության շուրջ առաջացած հավասարակշռությամբ: Այն առավել քան պարզորոշ արտահայտել է Ռուբենը (Մինաս Տեր-Մինասյան): Հռչակավոր «Հայրենիք» (Բոստոն) ամսագրի հեղինակ Ռուբեն Դարբինյանը իր հուշերում գրում է. «Երբ Բալքանյան պատերազմը արդեն բավական առաջացած էր և

¹³ «Հորիզոն», 1913, թիվ 111:

¹⁴ Հայկական հարց, Հանրագիտարան, Եր., 1996, էջ 74:

թյուրքերը պարտված էին, հանկարծ իրմե (Ռուբենից, Կ. Պոլսից - Լ. Շ.) ստացա նամակ մը, երկար նամակ մը, որուն մեջ խիստ հետաքրքրական մտքեր էր հայտնած և բախտորոշ առաջարկ մը կըներ: Ան կաշխատեր համոզել զիս, որ անկարելի էր զուտ դիվանագիտական ճանապարհով հետապնդել և լուծել Հայկական հարցը, ինչ որ ճիշտ էր, անկասկած: Բայց ան միաժամանակ կաշխատեր նաև համոզել զիս, որ չափազանց նպաստավոր պայմաններ ստեղծված էին այդ օրերուն՝ ապստամբություն մը կազմակերպելու համար Թրքահայաստանի մեջ: **Պետք է, կըսեր, օգտվիլ թյուրքերու պարտությունեն և Բալքաններու մեջ և Պոլսո շուրջ չափազանց զբաղված ըլլալեն և ոտքի հանել Թրքահայաստանը** (ընդգծումը իմն է - Լ. Շ.):»: «Միաժամանակ կհաղորդեր, որ եթե ապստամբության ծրագիրը ընդունվեր, ինքը անմիջապես պիտի ձգեր ժնըր և պիտի ուղևորվեր Թրքահայաստան՝ ապստամբության մասնակցելով»¹⁵:

Մակայն խելահեղ աշխարհը Բալկաններից հետո մղվում էր աշխարհամարտ: «Հայկական բարենորոգումների» նեցուկ և ներշնչող Ռուսաստանը գնաց իր տեսլականի հետևից, գերադասելով, ինչպես նկատում է Բ. Հ. Լիդլ-Հարթը, «մեկուսացումը» և «չցանկանալով զոհաբերել Կոստանդնուպոլսի և նեղուցների անբախտի իր երազը»¹⁶, իսկ Եվրոպայից արտամղված և ներքին հավասարակշռություն որոնող իր Օսմանյան կայսրությունն իր տեսլականին հետևեց՝ Հայկական հարցի վերջնական ու ամբողջական «լուծման», գերադասելով Հայոց Մեծ եղեռնը երաշխավորող կայսրության՝ Գերմանիայի հետ դաշինքը:

Եվ այսպես, Բալկաններից արձակված «Թուրքական Եվրոպայի» ազատագրության թունավոր նետերը «ահարկու ողջակիզեցին» («ghastly holocaust»՝ Ջոզեֆ Հոքինգ, 1918 թ.) հայությանն իր բնօրրանում՝ **Հայաստան հայրենիքում**:

¹⁵ Դարբինյան Ռ., Կյանքիս գրքեն, Բեյրութ, 1972, հտ. Ա, էջ 421:

¹⁶ Лиддел Гарт Б. Г., Правда о войне 1914-1918 гг., пер. с англ., М., 1935, с. 121.

Եռյակ համաձայնության՝ Անտանտի կառավարությունները Մանկտ-Պետերբուրգում, Լոնդոնում և Փարիզում 1915 թվականի մայիսի 24-ին արձանագրելու էին.

«Գրեթե մեկ ամսից ի վեր **Հայաստանի** քուրդ և թուրք բնակչությունը հայերին կոտորելու հարցում գործում է օսմանյան իշխանությունների թողությունների և հաճախ աջակցությամբ: Այդպիսով, կոտորածները տեղի են ունեցել ն. տ. ապրիլի կեսերին... (Արևմտյան Հայաստանի տեղանունների թվարկում - Լ. Շ.) և համայն Կիլիկիայում... Միաժամանակ Կ. Պոլսում օսմանյան կառավարությունը դաժանորեն է վարվում անպաշտպան **հայ բնակչության** հանդեպ»:

Եվ ի լուր ողջ աշխարհի ազդարարելու էին.

«Մարդկության և քաղաքակրթության դեմ ուղղված **Թուրքիայի** այս նոր **հանցագործություններին** ի տես՝ դաշնակիցների կառավարությունները հրապարակայնորեն տեղյակ են պահում Բարձր Դռանը, որ իրենք նշված հանցագործությունների համար անհատապես պատասխանատու կճանաչեն **օսմանյան կառավարության բոլոր անդամներին**, ինչպես նաև նրա **այն գործակալներին**, որոնք ներգրավված կլինեն համանման կոտորածներում (ընդգծումներն իմն են - Լ. Շ.):»:

Վճռի կատարումը մնում է առաջօր օդում կախված...

ЛЕВОН ШИРИНЯН

Институт философии, социологии и права НАН РА

БАЛКАНСКИЕ ВОЙНЫ И ЗАПАДНАЯ АРМЕНИЯ (ГЕОПОЛИТИЧЕСКИЙ ЭТЮД)

В Первой мировой войне каждая участвующая страна имела свою собственную мотивацию. Османская империя, с точки зрения глубокого понимания сложившихся вокруг нее геостратегических реалий, которая тщательно скрывается, имела свою собственную мотивацию.

В результате балканских войн окончательно выброшенная из Европы, а также вследствие итало-турецкой войны изгнанная из Среди-

земноморского региона, Османская империя пыталась найти свой центр стратегического баланса в Малой Азии и в Армянском нагорье. Это привело империю к амбициям уничтожить Армению и армян.

Программа российских реформ и противоречия крупнейших держав в отношении турецкого государства усилили сформированную тенденцию. Об этом свидетельствует еще и выбор Германии как союзника. Первая мировая война дала для этого возможность.

Таким образом, Османская империя вступила в Первую мировую войну, чтобы решить Армянский вопрос по турецкому пониманию. Идея Арменоицида и его исполнение уже были вопросами времени.

LEVON SHIRINYAN

Institute of Philosophy, Sociology and Law of NAS RA

BALKAN WARS AND WESTERN ARMENIA (GEOPOLITICAL ETUDE)

During the First World War each participating country had its own motivation. The Ottoman Empire, from the viewpoint of a deep understanding of the prevailing geo-strategic realities around him, which carefully concealed, had its own motivation.

As a result of the Balkan wars, finally thrown out of Europe, and later, the Italo-Turkish War, banished from the Mediterranean region, the Ottoman Empire was trying to find its own center of the strategic balance in Minor Asia and in the Armenian Highlands. This led to the empire's ambitions to destroy Armenia and Armenians.

Russian reform program and contradictions of major powers on the Turkish issue intensified the formed trend. This is evidenced also the choice of Germany as an ally. The First World War gave the opportunity to do so.

Thus, the Ottoman Empire entered the First World War to solve the Armenian question in the Turkish understanding. The idea of Armenocide and its execution has been a matter of time.

ՀԱՅԿ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի
և իրավունքի ինստիտուտ

«ՄԻՋԻՆ ԵՎՐՈՊԱՅԻ» ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ ԵՎ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԸ

Առաջադրված հիմնախնդրի շրջանակներում անհրաժեշտ ենք համարում պարզել, թե Առաջին աշխարհամարտի և Հայոց ցեղասպանության հանցավոր քաղաքականության իրագործման ժամանակ գաղափարական ի՞նչ ուսմունքներ են ազդել թուրք ռազմաքաղաքական վերնախավի գաղափարաբանության վրա: Ակնհայտ է, որ թուրքական եղեռնաբաղձ բնագոյների մեջ հային ցեղասպանելու մոլուցքը թուրքի ինքնության մեջ է և դրա մաս է, սակայն պետք է նշել, որ Հայոց ցեղասպանության իրագործումը ունեցել է նաև որոշակի ռազմավարական հենք:

Հայ պատմաքաղաքագիտական գրականության մեջ արդեն բավականաչափ ուսումնասիրվել և հիմնավորվել է ֆրանսիական պոզիտիվիզմի ազդեցությունը թուրք վերնախավի վրա: Սուբյեկտիվ-իդեալիզմի՝ թուրք ռազմաքաղաքական վերնախավի վրա ազդեցության վերաբերյալ հետազոտություններ իրականացրել է Հր. Միմոնյանը:

Ըստ Հր. Միմոնյանի բավական հիմնավորված մոտեցման՝ Օ. Կոնտի արտահայտած մտքերը և գաղափարները չափազանց մեծ ազդեցություն են գործել թուրքերի ազգային բուրժուազիայի գաղափարաբանության վրա: Օ. Կոնտի ուսմունքը, նրա պոզիտիվիզմի տեսությունը կոնկրետ գործողությունների փիլիսոփայություն է, որն իրեն ձեռնադրող իրքերից է մեկնաբանում հասարակական երևույթները՝ հաշվի չնստելով ռացիոնալ մտածողության, տրամաբանության հետ¹: Օ. Կոնտի պոզիտիվիզմի ազդեցությունը հատկապես ուժեղ էր երիտթուրքերի՝ Փա-

րիզի «Միություն և առաջադիմություն» կազմակերպության ղեկավարների աշխարհայացքի ձևավորման վրա: Երիտթուրքական գաղափարներին և գործելակերպին քաջ ծանոթ հայ կաթոլիկ բարձրաստիճան եկեղեցական Հովհաննես Նազյանը վկայում է, որ «երիտասարդ թուրքերը իրանք զիրենք կեռչակեին իբրև Օլյուստ Կոնտի դպրոցին սկզբունքներով կառապարուածներ...»²:

Կարելի է բավական երկար խոսել թուրք վերնախավի վրա ֆրանսիական պոզիտիվիզմի ազդեցության մասին, սակայն բավարարվենք այսպանով և փորձենք հասկանալ, թե ի՞նչ ազդեցություն է ունեցել այս անգամ արդեն գերմանական ռազմավարական միտքը թուրք հայատյաց վերնախավի վրա: Նախ հարկ է նշել, որ ռազմավարական հարցերը բավարար չափով ուսումնասիրված չեն:

Կարծում ենք, մեզ համար մյուս հարցերի հետ զուգահեռ պակաս կարևոր չէ Առաջին աշխարհամարտում և Հայոց ցեղասպանության իրականացման հարցերի ուսումնասիրության գործում գերմանական գեոստրատեգիական մտքի ուսումնասիրությունը: Այդ իմաստով բացառիկ նշանակություն ունի գերմանացի Ֆրիդրիխ ֆոն Նաումանի «Միջին Եվրոպա» (Mitteleuropa) հայեցակարգի³ ուսումնասիրությունը և նրա հնարավոր ազդեցությունը թուրք վերնախավի վրա և Առաջին աշխարհամարտի ընթացքում: Մեր կարծիքով՝ այն մեծ ազդեցություն է ունեցել թուրք զինվորական, ստրատեգիական վերնախավի վրա: Ենթադրելի է, որ այն կարող էր ազդել նաև Օսմանյան կայսրության՝ Առաջին աշխարհամարտի մեջ ներքաշվելու և իր հերթին նպաստել ցեղասպանության ոճրի մտահղացման վրա: Եվ ինչպես նշում է դեսպան Հենրի Մորգենթաուն՝ հղում անելով գերմանացի ռազմավարական մտքի ներկայացուցիչներ Ֆ. Նաումանի և Պ. Ռորբախի մոտեցումների վրա.

² Միմոնյան Հր. Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությունը և քաղաքականությունը, Երևան, 1986, էջ 268-269:

³ Науманъ Ф. Срединная Европа (Mitteleuropa). Пер. В. Фань-дерь-Флита. К-Во "ОГНИ", Петроградъ, 1918, 136 с.

¹ Միմոնյան Հր. Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությունը և քաղաքականությունը: Երևան, 1986, էջ 268:

«Համագերմանականության ներայացուցիչները մասնակից են հայկական հարցին»⁴:

Չենք բացառում, որ այդ ազդեցությունը այսօր էլ չկա կամ չի փոխանցվել միջնորդավորված կամ փոխանցված ձևով այսօրվա թուրք վերնախավին:

Փորձենք պարզապես ընդհանուր գծերով ներկայացնել Ֆ. Նաումանի «Միջին Եվրոպայի» հայեցակարգը, իսկ թուրքերի գործողությունների հետ դրանց զուգահեռները արդեն կբացահայտվեն ինքնըստինքյան:

Ըստ էության՝ «Միջին Եվրոպայի» գերմանական հայեցակարգը տարածքների զավթման միջոցով ծավալման, կայսրություն ստեղծելու հայեցակարգ է: Միջին Եվրոպան պետք է ստեղծվեր Գերմանիային Ավստրո-Հունգարիայի միավորման միջոցով:

«Միջին Եվրոպան» երկրաքաղաքական հայեցակարգ է, որն արտահայտում է Գերմանիայի ձգտումը ճշգրտելու սեփական աշխարհագրական տարածքները՝ մյուս պետությունների հաշվին սեփական կենսատարածքը ընդլայնելու միջոցով: Ըստ Նաումանի՝ «Միջին Եվրոպան» ունենալու է գերմանական առանցք: Գերմանականության շուրջ ծնվելու է Միջին Եվրոպայի մշակույթը⁵: Գերմանական առանցքին, ըստ Նաումանի, պետք է միավորվեն փոքր պետությունները, որոնք ունակ չեն գոյատևելու առանց մեծ տերությունների հետ դաշինքի: Սակայն մինչև պետությունների միավորման մասին մտածելը, պետք է նախ և առաջ ավարտվի գլխավոր միջուկի (առանցքի) բյուրեղացման գործընթացը⁶: Եվ ինչպես կայսերապաշտական ոգով գրում է Ֆրիդրիխ Նաումանը. «Այսօր այլևս ժամանակավրեպ է հաշվի առնել միջին եվրոպական փոքր ժողովուրդներին՝ որպես մեծ ծրագրի իրագործման համար դրական մեծություններ»⁷: Պետք է հասկանալ, որ փոքր ժողովուրդները

ինքնակամ չեն միավորվի միջին եվրոպական միության կազմում⁸: Դե իսկ միավորման համար կան բազմաթիվ գործիքներ՝ պատերազմ, ցեղասպանություն:

Գովերգելով իր ընկեր Ռոբբախի գաղափարները՝ Նաումանը գրում է. «... Ազգային մտածողություն ունեցող ոչ մի չէիս կամ հունգարացի չի դատապարտի մեզ այն բանի համար, որ մենք երգում, երագում և հոգ ենք տանում Գերմանիայի վեհացման մասին»⁹:

«Միջին Եվրոպայի» գերմանական ծրագրի իրականացման մասին Նաումանը նշում է. «Մենք չենք հերքում նրանց (Ավստրո-Հունգարիայի - Հ. Ս.) ֆորմալ իրավունքը զբաղեցնելու մեզ համար ոչ բարենպաստ դիրքեր, սակայն մենք հաստատում ենք միայն այն, որ Ավստրո-Հունգարիայի կողմից միության (Միջին Եվրոպայի - Հ. Ս.) գոյությունը սպառնացող գործողությունները հավասարազոր կլինեն նրանց ոչնչացմանը: Գերմանիայի հետ ավստրո-հունգարական դաշինքը ոչ թե բարոյական պարտք է, այլ սեփական ինքնապահպանման անխուսափելի անհրաժեշտություն»¹⁰:

Ըստ Նաումանի՝ Միջին Եվրոպան կարելի է համեմատել լճի հետ, որտեղ լողում են ամենատարբեր տեսակի ձկներ: Միաձուլել այդ ամբողջը մեկ պետական օրգանիզմում և բերել մեկ քաղաքական հայտարարի՝ մարդկային ցանկացած տեսակի ուժից վեր խնդիր է, բայց մինչև ժամանակ՝ մեծագույն պետական գործիչներին արժանավայել նպատակ, որոնց կամքից է կախված պատմության ոգին¹¹: Ահա ևս մեկ ապացույց այն բանի, որ Օ. Կոնտի, նաև Նիցշեի գերմարդու գաղափարները ուրույն տեղ են ունեցել պատմության հայասպանների գաղափարներում:

Նաումանը նշում է, որ «Եթե մենք պարտվենք, ապա, ամենայն հավանականությամբ, դատապարտված կլինենք մնալու «ազգ-արբանյակ», եթե հաղթենք կիսով չափ, ապա ստիպված կլինենք ևս մեկ անգամ

⁴ **Моргентау Г.** Трагедия армянского народа. История посла Моргентау. Центрполиграф, М., 2009, с. 319.

⁵ **Наумань Ф.** Срединная Европа (Mitteleuropa), с. 55.

⁶ Նույն տեղում, էջ 3:

⁷ Նույն տեղում, էջ 2:

⁸ Նույն տեղում, էջ 67:

⁹ Նույն տեղում, էջ 11:

¹⁰ Նույն տեղում, էջ 24:

¹¹ Նույն տեղում, էջ 54:

մտնել պայքարի մեջ, իսկ եթե մենք հաղթենք, ապա մենք կթեթևացնենք մեր երեխաների և թոռների գործը, և Միջին Եվրոպան կգրանցվի գալիք դարերի երկրային գրքի մեջ»¹²:

Գերմանացի հայտնի քաղաքական գործիչ Պ. Ռոբբախը բավականին պարզ կերպով նշում է, որ «Նա, ով տիրում է Հայաստանին անմիջականորեն գերիշխում է ինչպես ամբողջ Փոքր Ասիայի, այնպես էլ՝ Միջագետքի վրա»: Ըստ Ռոբբախի՝ «Թուրքիան և՛ քաղաքական, և՛ ռազմական առումներով կկորցնի իր կենսունակությունը Հայաստանը կորցնելու դեպքում...»¹³:

Հայաստանի ոչնչացման խնդիրը բարձրացվեց պետական քաղաքականության մակարդակի այն ժամանակ, երբ ձևավորվեց պանթուրքիզմի գաղափարաբանությունը: Պանթուրքիզմի գաղափարաբանները քարոզում էին Արևելքի ժողովուրդների միավորումը Օսմանյան կայսրությունում¹⁴: Կարծում ենք՝ սա ևս մեկ ապացույց է, որ գերմանական «Միջին Եվրոպայի» հայեցակարգը ազդեցություն է ունեցել թուրքական ռազմավարական գաղափարաբանության վրա:

АЙК СУКИАСЯН

Институт философии, социологии и права НАН РА

НЕМЕЦКАЯ КОНЦЕПЦИЯ "СРЕДИННОЙ ЕВРОПЫ" И ПЕРВАЯ МИРОВАЯ ВОЙНА

Очевидно, что на военно-политическое руководство младотурок влияли различные идеологические течения. Доказано, например, что большое влияние на них имел французский позитивизм. Однако очевидно, что этим все не ограничивалось. Наше исследование привело нас к выводу, что на военное крыло элиты младотурок воздействовала

¹² Նույն տեղում, էջ 94:

¹³ **Степанян Ст.** Армения в политике империалистической Германии: (конец XIX - начало XX века. Айастан, Ер., 1975, с. 15.

¹⁴ Նույն տեղում, էջ 37:

разработанная накануне 20-ого века немецкая геостратегическая мысль, в особенности концепция "Срединная Европа" (Mitteleuropa).

Разъяснение этого вопроса имеет большое значение для понимания идеологических аспектов и геостратегических глубин осуществления Геноцида армян.

HAYK SUKIASYAN

Institute of Philosophy, Sociology and Law of NAS RA

THE GERMAN CONCEPT OF "MIDDLE EUROPE" AND THE FIRST WORLD WAR

Obviously, the military-political leadership of the Young Turks was influenced by various ideological currents. It is proved, for example that a great influence on it had French positivism. But apparently it is not limited to positivism. Our research led us to the conclusion that the on the eve of the 20th century the German geostrategic thought, especially the concept of "Middle Europe" (Mitteleuropa) impacted the military wing of this elite.

The clarification of this issue has a great importance for ideological understanding of the Armenian genocide and the understanding of its geostrategic depths.

ԳԱՅԱՆԵ ՄԱԽՍՈՒՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՈՒ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԱՄՆ-Ի 1917-1918 ԹԹ. ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՂՈՐՏՈՒՄ

1917 թվականը ճգնաժամային էր Հայաստանի և Հայկական հարցի պատմության մեջ: Կովկասյան ռազմաճակատում ձեռք բերած նվաճումները վտանգվել էին Փետրվարյան և էլ ավելի շատ՝ Հոկտեմբերյան

հեղափոխությունների պատճառներով: Ռուսական բանակի հաղթանակներին փոխարինել էին ճակատի քայքայումը և թուրքական հարձակման վտանգը, կանոնավոր գումարտակները բռնել էին կամավորական շարժման տեղը, ցարական վարչակարգի փոխարեն հաստատվել էր Թուրքահայաստանի գեներալ-կոմիսարություն, արևմտահայ գաղթականների զանգվածները կորցնում էին տունդարձի հնարավորությունը, իսկ Անդրկովկասի կազմալուծումը սաստկանում էր ռուսական հեղափոխության խորացմանը գուզընթաց՝ հանգեցնելով երեք անկախ հանրապետությունների ձևավորմանը մեր երկրամասում:

Նույն այդ հեղափոխությունները վտանգել էին Անտանտի հաղթանակը Արևմտյան ռազմաճակատում, և ԱՄՆ-ի՝ 1917 թ. ապրիլի 6-ին պատերազմին միջամտելու փաստն իսկ բարեհաջող ավարտ էր ապահովում Անգլայի և Ֆրանսիայի համար: Ընդ որում, ԱՄՆ-ը Թուրքիային պատերազմ չէր հայտարարել.¹ Վաշինգտոնում գերադասում էին որքան հնարավոր է երկար ժամանակ օգտվել համաշխարհային տնտեսության ասպարեզում ամրապնդվելու հնարավորությունից²: Թուրքամերիկյան հարաբերությունները չէին փոխվել նույնիսկ 1917 թ. փետրվար - ապրիլին: Դրանք մնում էին «ընկերական, ավելի լավ, քան առաջներում, և դրանց՝ այդ հար ու նման ընթացքն ընդհատելու պատճառներ չէին նշմարվում»³: Այդ համատեքստում հայերին վերապահում էին միայն մարդասիրական այն օգնությունը, որը ձեռնարկվում էր Կոնգրեսի որոշմամբ ու Պետդեպարտամենտի հրահանգներով: Այդ օգնությունը կազմակերպում և իրականացնում էր նախագահ Վ. Վիլսոնի մերձավոր շրջապատը՝ նրա անմիջական մասնակցությամբ:

¹ Դիվանագիտական հարաբերություններն անգամ խզել էր ոչ թե ամերիկյան, այլ օսմանյան կողմը՝ United States National Archives, Washington D. C., Record Group 59 General Records of the Department of State (այսուհետև՝ US NA, RG 59), class 763.72/document 5428/Encl. 2 ներ-գրավվել է՝ Papers Relating to the Foreign Relations of the United States. 1917 Supplement 1, The World War (այսուհետև՝ Papers Relating). Wash., 1931, p. 603: Տես նաև՝ Payasian S. United States Policy Towards the Armenian Question and the Armenian Genocide. NY, 2005, p. 119, 130, 132Է

² Papers Relating, p. 134,

³ Ibid., p. 206.

Օգնությունը մարդասիրական ներխուժում էր. այն բազմաթիվ կյանքեր էր փրկում, բայց միաժամանակ յուրատեսակ քաղաքականության արտահայտություն էր: Այնպիսի մի քաղաքականություն, որն իրականացնող նպաստատուն բոլորովին անկախ էր նպաստառուներից, նա ազատ էր պարտավորություններից և չէր հայտարարում իր նպատակների մասին: ԱՄՆ-ի հաջորդ նախագահ Հ. Հուվերը ասում էր, որ պահանջներ ներկայացնելուց առաջ մարդկանց կերակրել է հարկավոր: Իրավ է: Սակայն, երբ քաղաքականությունը ծավալվում է ոչ թե հասարակական-տնտեսական կամ ռազմական բնագավառներում, այլ զբաղված է ժողովրդին փրկելու հարցով, նպաստամատույցի շահագրգռվածությունը կարող է ցանկացած պահի վերանալ, իսկ ԱՄՆ-ի որևէ միջամտություն կարող է չեղյալ հայտարարվել: Անշահասիրությունը վատ խթան է, և պետությունների կամ կողմերի փոխգործողությունը կարող է մշտապես սահմանափակվել լոկ մարդասիրությամբ:

Մեր պարագայում, հայկական շահերը առաջ էին տանում բնակչության լայն խավերը, համալսարանական մտավորականությունը, քարոզիչները: Բայց պատերազմից խուսափելու վարքից շահում էր առևտրական, արդյունաբերական և փոխադրական դրամագլուխը: Բացի դրանից, արևմտահայությունը ԱՄՆ-ի՝ Օսմանյան կայսրություն տնտեսության մեջ ներթափանցելու թիրախ ու տարածիչ էր, բայց երբեք՝ նրա նպատակը: Քաղաքական գործիչները, խոշոր դրամատերերը, առևտրականներն ու քարոզիչները ձգտում էին կապ հաստատել թուրքական այն իշխանավորների հետ, որոնք բոլորովին ազատ էին գործնական հարաբերություններ հաստատելու ցանկությունից: Ի տարբերություն նրանց, հայությունը պատրաստակամ էր օժանդակել ամերիկյան ներկայությանը Արևմտյան Հայաստանում:

ԱՄՆ-ը պատերազմի էր գնում հողային փոխհատուցումների սկզբունքն ընդունելուց և Օսմանյան կայսրությանը վերաբերող՝ անգլո-ամերիկյան «անոսասլի համաձայնագիրը» 1916 թ. փետրվարի 14-ին

կնքելուց հետո միայն⁴: Այդ գործարքի մասնակիցներից մեկը՝ բրիտանացի արտգործնախարար Ա. Բալֆուրը, 1917 թ. ապրիլի 30-ին այցելում է Սպիտակ տուն ու Վ. Վիլսոնին պատմում է Կ.Պոլսին վերաբերող՝ անգլո-ռուսական, Ասիական Թուրքիայի բաժանմանն առնչվող՝ անգլո-ֆրանսիական և այլ գաղտնի համաձայնագրերի մասին: Հետևաբար, ԱՄՆ-ի նախագահի հետագա պնդումները Փարիզի հաշտության վեհաժողովում, ինչպես և 1919 թ. օգոստոսին Օբերակույտում արած՝ իբր անտեղյակ լինելու մասին նրա հայտարարությունը, իրականությանը չէին համապատասխանում⁵: Ավելին, Վաշինգտոնը պարտավորվում էր պահպանել Օսմանյան կայսրության ամբողջականությունը⁶, ինչն արտացոլում էր նաև Վ. Վիլսոնի՝ ԱՄՆ-ի Կոնգրեսում 1918 թ. հունվարի 8-ին հնչեցրած «14 կետերից» 12-րդը:

Այս ամենով հանդերձ, Վաշինգտոնի քաղաքականության երկդիմությունն ու բարդությունը չեն ժխտում ռազմավարական գլխավոր գործոնը, այն է՝ ամերիկյան բանակը կռվել է Քառյակ տերությունների դեմ, նա վճռորոշ դեր է խաղացել գերմանա-թուրքական դաշինքը պարտության մատնելու գործում: Լրացնենք՝ վտանգավոր ու խռովալից պայմաններում պետության որդեգրած երկակիությունը դեռևս անորոշության նվազագույն աստիճանն է: Այս վարքագիծն ըստ հանգամանքների գործելու հնարավորություն է ընձեռում:

Շատ չանցած, «անորսալի համաձայնագիրը» լրացվեց նոր միջազգային ատյան՝ Ազգերի Լիգա գումարելու նախագծով, այդ համալիր և հեռու գնացող գաղափարը ամերիկացիներին փոխանցել է Անգլիան: Առաջին համաշխարհային այդ կազմակերպության հիմնադրումը, որն ԱՄՆ-ին էր հանձնելու հայկական մանդատը, ներառվել էր 1916 թ. հու-

⁴ Международные отношения в эпоху империализма. Серия III, т. 7, ч. I, с. 373; т. 10, с. 245; **Buehrig E.H.** Woodrow Wilson and the Balance of Power. Bloomington, 1956, p. 211-218; **Уткин А.И.**, Вудро Вильсон, М., 1989, с. 24-25, 32-33, 58, 63, 97-98, 100, 104; **Козенко Б.Д.**, Посредничество без кавычек. Миротворчество США в 1914-1916 гг. (характер и цели), Первая мировая война: дискуссионные проблемы истории. М., 1994, с. 81-82; **Романов В.В.**, Полковник Эдвард Хауз, "Вопросы истории," 2005, № 7, с. 53, 67.

⁵ **Lippmann W.**, Public Opinion. NY, 1947, p. 209-210.

⁶ **Payaslian S.**, op. cit., p. 36.

նիսին հաստատված՝ նախագահի ընտրական ծրագրում: Մանդատը, միջանկյալ կարգավիճակ էր գաղութի և անկախության միջև, ենթամանդատային գոտին առևտրաարդյունաբերական հավասար իրավունքներ էր առաջարկում բոլոր շահագրգիռ պետություններին: Ավելին, մանդատը տրվում էր մնացած բոլոր տերությունների որոշումով ու նրանց քվեարկությամբ: Սա խճճում էր Հայկական հարցի լուծումը, և այն նորից մտնում էր «ելրոպական համաձայնությանը» բնորոշ բազմակողմ դիվանագիտության հին հունը:

Փետրվարյան փաստաթուղթը կազմելուց հետո, 1916 թ. հուլիսի 10-ին ԱՄՆ-ի Կոնգրեսն ընդունում է հայերին սատարելու բանաձև: Այդ փաստաթղթով նա դիմում է նախագահին ու նրան առաջարկում հայերին նյութական աջակցություն ցույց տալու օր նշանակել: Իր հերթին, Վ. Վիլսոնը հոկտեմբերի 21-22-ը հայտարարում է որպես հայերին ու սիրիացիներին նպաստ մատուցելու համազգային օրեր դարձնելու մասին⁷: Այնուհետև, Հայաստանին ու Սիրիային ամերիկյան նպաստամատույց կոմիտեն (ՀՄԱՆԿ) հավաքում է 2,5 մլն. դոլ. ու հիմնում 6 մասնաճյուղ: Եթե Թիֆլիսում բացված նրա բաժանմունքը վայելում էր ռուսական բանակի բարյացկամությունը, օգնում էր 250 հազ. փախստականներին, ապա Կ.Պոլսի մասնաճյուղը՝ իր 60-ից ավելի կայաններով, ընդգրկում էր շատ ավելի քիչ՝ մի քանի տասնյակ հազար տուժածների: Ընդ որում, տեղական ՀՄԱՆԿ-ում գանձապահի պարտականությունները ստանձնել էր ԱՄՆ-ի քարոզչական ատյանի գանձապահ Վ. Պիտը, իսկ Ամերիկայի դեսպանը նշանակվել էր բաժանմունքի նախագահ⁸: Ինչպես նշում էին Հ. Մորգենթաուն, Չ. Է. Հյուզն ու Ք. Դոջը, 1 երեխայի հաշվով, ամիսը առնվազն 3 դոլար ծախսի անհրաժեշտության պայմաններում, կոմիտեին հարկավոր էր ամսական 6 մլն. դոլ.՝ տարածաշրջանում կործանման եզրին հայտնված 2 մլն. մարդկանց օգնություն հասցնելու համար:

⁷ Papers Relating, 1918: The World War. Suppl. I. Wash, GPO, 1933, p. 892.

⁸ The One Hundred and Six Annual Report, American Board of Commissioners for Foreign Missions. Boston, 1916, p. 84, 94.

Թեպետ արտաքուստ լավ ու հաշտ էին թուրք-ամերիկյան հարաբերությունները, միայն 1916 թվականին ամերիկացի չորս քարոզիչ վարակվեցին տիֆով ու մահացան Սեբաստիայում, երկու հոգու մեծ դժվարությամբ Բիթլիսից տարան Խարբերդ, ևս երկուսը՝ առանց պատճառաբանությունների, պահակախմբի ուղեկցությամբ քարոզվեցին Դիարբեքից, երեքը վտարվեցին Մարդինից, որտեղ ևս երկու հոգի մահացան, իսկ մնացած երեք քարոզիչներին իշխանությունները թույլ տվեցին օգտվել Ամերիկայի հյուպատոսարանի պաշտպանությունից ու հեռանալ Ուրֆա: Կանայք, չկամենալով թողնել իրենց խնամարկյալներին, գրավոր դիմում են իշխանություններին՝ խնդրելով այլևս չփորձել իրենց դուրս քշել ծառայության վայրից: Եվս մեկ կին քարոզիչ վախճանվեց Խարբերդում, իսկ Արևմտյան Հայաստանում բնակություն հաստատած հինգ աշխատակիցների մի ամբողջ տարի բաց չէին թողնում Բեյրութից՝ արգելելով նրանց տունդարձը: Հաշվի առնելով ցեղասպանության անմիջական վկաների իմացածն ու հետագայում նրանց գրչին պատկանող այնպիսի գրքերի հրապարակումները, ինչպիսիք են «Ողբերգության օրերը Հայաստանում. անձնական փորձառությունը Խարբերդում 1915-1917 թթ.» (Հենրի Ռիզգի) կամ «Ամերիկացի բժիշկը Թուրքիայում՝ խաղաղության և պատերազմի արկածների վիպակ» (Քլարենս Աշերի և Գրեյս Կնեյի)՝ օսմանյան իշխանությունների ի հայտ բերած վերաբերմունքը հասկանալի էր⁹:

Այժմ տեսական դրույթներից վերջինը՝ Միացյալ Նահանգների քաղաքականությունը երկարատև էր ու դանդաղ. նա խուսափում էր տարածաշրջանում իշխող Բրիտանիայի հետ հարաբերություններ սրելուց: Անգլիային դուրս էին մղում շրջահայաց քայլերով՝ միաժամանակ ամրապնդելով բացառիկ կապեր ու հատուկ վերաբերմունք նրա հանդեպ:

⁹ **Riggs Henry H.**, Days of Tragedy in Armenia: Personal experiences in Harpoot, 1915-1917. An Arbor, Mich., 1997; **Usher Clarence D.** and **Knapp Grace H.**, An American Physician in Turkey: a Narrative on Adventures in Peace and in War. Boston and NY, 1917; **Knapp G. H.**, War Time at Van. NY, 1916; Նոյնի՝ The Tragedy of Bitlis. NY, 1919. Տես նաև՝ **Atkinson H.**, Eyewitness Account of the Massacres at Harpoot. "Armenian Review," 1976, vol. 29, № 1, p. 3-21; **Atkinson T.**, The German, the Turk and the Devil Made a Tripple Alliance: Harpoot Diaries, 1908-1917. Ann Arbor, Mich., 2000.

Դանդաղ առաջընթացը օգնում էր հասկանալ՝ արդյո՞ք նրա դաշնակիցն ի վիճակի է լուծել խնդիրը, որքա՞ն է տանդ է ներդրվում գործի մեջ, և ի՞նչ այլ՝ ավելի շահավետ առաջարկներ են հնարավոր: Մեր դեպքում, քաղաքական ռազմավարությունն ու անգլիացիների հետ փոխգործողությունը ծրագրվել են նախորոք, իսկ դանդաղ շարժումը ուղեկցվում էր հայերին տված խոստումների դրժումով ու մեղմացվում կենսական նշանակություն ունեցող պարենի մատակարարումներով: Այդ դրժումը վերաբերում էր ինչպես 1917 թ. արևմտահայ գորամաս (դիվիզիա) ֆինանսավորելու առաջարկին¹⁰, այնպես էլ՝ հայկական մանդատը ստանձնելուն առնչվող բազում խոստումներին: 1919-1920 թթ. դրանք հաճախակի հնչում էին ԱՄՆ-ի բարձրագույն պաշտոնյաներից: Միացյալ Նահանգները չէին վնասում, այլ օժանդակում էին, սակայն «չափից քիչ ու չափից ուշ»: Գործելու նման եղանակը սին հույսեր էր ներշնչում՝ սխալ հաշվարկների մղելով և՛ արևմտահայերին, և՛ Հայաստանի Հանրապետության ղեկավարությանը:

1917 թ. ապրիլին, երբ ԱՄՆ-ը միացավ աշխարհամարտին, հայերի առաջ մի կարևոր հարց ծառայեց, թե որքանո՞վ էր գործուն Կովկասի ռազմաճակատը: Հարկավոր էին ինքնակազմակերպման մարմիններ, իսկ Պետդեպարտամենտը, Ռուսաստանում ԱՄՆ-ի դեսպան Դ. Ֆրենսիսն ու Թիֆլիսում այդ երկրի հյուպատոս Ֆ. Վ. Սմիթը առաջ էին քաշել Ռուսաստանի ընդհանուր ռազմունակության խնդիրը¹¹: Ե. Ռուտի առաքելությունը ուղևորվում է Մոսկվա և Պետերբուրգ՝ ռազմունակ Ռուսաստանից չգրկվելու և դրա համար անհրաժեշտ ծախսի ու ռազմական օգնության չափերը գնահատելու համար¹²: Թիֆլիսից անդադար հաշվետվություններ էին գալիս՝ ճակատում տիրող իրավիճակի ու

¹⁰ Դիվիզիայի առումով ԱՄՆ-ի հայկական քաղաքականությունը դիտվում էր որպես նրա՝ ռուսական ընդհանուր քաղաքականության բաղադրիչը: Այդ գորամասը պետք է ենթարկվեր Կովկասի ռազմաճակատի հրամանատարությանը՝ դաշնակիցների հսկողության իրավունքով:

¹¹ US NA, RG 59, 763.72/6430z.

¹² Papers Relating, 1918 Russia, in 3 vols., vol. I, Wash., 1931, p. 120, 133-135, 138-139, 146, 148, 150; vol. II, Wash., 1932, p. 579.

երկրամասում ազգամիջյան հարաբերությունների մասին¹³: Հայերն անմիջապես ստանում են առավել ռազմունակ տարրի որակում՝ հաշվի առնելով հատկապես այդ ազգի՝ առավել մեծ և ուղիղ սպառնալիքի տակ հայտնվելու հանգամանքը¹⁴: Ֆ. Վ. Սմիթը առաջարկում է 10 մլն. դոլ. հատկացնել՝ Կովկասյան բանակը ուժեղացնելու¹⁵ և հայ զինվորներին այլ ռազմաբեմերից այստեղ տեղափոխելու համար: Կառավարությունը կարող էր Հայ օգնության կոմիտեին փոխզիջման տարբերակով շնորհել կամ վարկավորել 1 մլն. դոլ., ինչը կապահովեր նոր զորամասերի հանդերձավորումը¹⁶:

1917 թ. մայիսի 29-ին Թիֆլիսում Ամերիկայի հյուպատոսը Ա. Օզանյանին առաջարկում է կազմակերպել ու գլխավորել արևմտահայերից կազմած դիվիզիա. այն նախատեսված էր երեք ազատագրված նահանգների պաշտպանության համար և պետք է լիներ ռուսական բանակի մի մասը: Հանդիպմանը մասնակցում են Անդրանիկի թիկնապահ Լ. Կ. Լյուկեճյանն ու հարցազրույցի թարգմանիչ Վ. Թոթովենցը: ԱՄՆ-ը և նրա եվրոպական դաշնակիցները պատրաստ էին ապահովել զինվորների հագուստն ու զենքը՝ նրա գործողությունները հսկելու պայմանով: Հունիսի 2-ին ամերիկացի հյուպատոսը ստանում է Անդրանիկի կազմած ռազմական քարտեզն¹⁷ ու նախագիծը հիմնավորող փաստաթղթեր, որոնք անմիջապես տանում է Պետրոգրադ՝ ԱՄՆ-ի դեսպան Դ. Լ. Ֆրենսիսին, եվրոպական գործակիցներին և Ա. Ֆ. Կերենսկուն

¹³ US NA, RG 59, 861.00/1102, 1456, 1810, 2010; Армения в документах Государственного департамента США 1917-1920 гг. Сост. и пер. Г. Г. Махмуриян, изд. 2-е, доп. Ереван, 2012, с. 25-26, 29 (այսուհետև՝ Армения в документах): 1918 թ. դրանք լրացնում էին գլխավոր հյուպատոս Մ. Սամերսի հեռագրերը Մոսկվայից:

¹⁴ US NA, RG 59, 861.00/3478; **Գալոյան Գ.**, Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923թթ. Երևան, 1999, էջ 20:

¹⁵ US NA, RG 59, 861.00/683; Армения в документах, с. 13-14.

¹⁶ Великая Октябрьская социалистическая революция и победа Советской власти в Арме-нии. №6. док., сост. А. І. Инацакян. Ареван, 1957, с. 149-150.

¹⁷ **Մարմարյան Ա.**, Ջոր. Անդրանիկ եւ իր պատերազմները, Կ.Պոլիս, 1920, էջ 263-264: **Միւննյան Հ. Ռ.**, Անդրանիկի ժամանակը, 2 գրքով, գիրք Ա, Երևան, 1996, էջ 673-674. այստեղ ընդգծվում է Թիֆլիսում գործող բրիտանական ռազմական առաքելության դերը՝ Առաջին հեղինակի տեղեկությամբ՝ քարտեզը ձևավորվել է երկու թուրքահայ սպաների մասնակցությամբ և Ֆ. Վ. Սմիթին է հանձնվել մայիսի 30-ին:

ներկայացնելու համար: Նույն վավերագրերի պատճեններն ուղարկվում են Լոնդոն, Փարիզ ու Վաշինգտոն: Եվրոպայում հավանում են նախագիծը, սակայն Դ. Ֆրենսիսի և պետքարտուղարի արձագանքը զուսպ էր:

Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ 1917 թ. օգոստոսին ամերիկացի ակնավոր քարոզիչ Է. Յարոուն և հյուպատոս Ֆ. Վ. Սմիթը Ա. Օզանյանին ծանոթացնում են Թիֆլիսում գործող բրիտանացի գեներալ Օ. Շոռի և գնդապետ Ջ. Գրեյսիի հետ¹⁸: Քառյակը քննարկում է 8 գունդ (յուրաքանչյուրում՝ 3 զումարտակ) հավաքագրելու հնարավորությունը: Ֆինանսավորումը ապահովելու դեպքում, սրանք պետք է համախմբեին 10-20 հազար հայ մարտիկների և ստանային 150-ից մինչև 350 բրիտանացի խորհրդական: Քիչ ավելի ուշ՝ հոկտեմբերի 5-ին, ԱՄՆ-ի ռուսաստանյան դեսպանատունը հրաժարվում է փող հատկացնելուց, քանի որ չէր ցանկանում միջամտել Ժամանակավոր կառավարության գործերին: Նման մոտեցումը հակասում էր նախագահ Վ. Վիլսոնի ուղերձին, որտեղ հայտարարվում էր ակտիվ միջամտության անհրաժեշտության մասին: Դեսպանատունը անտեսում էր և Ֆ. Վ. Սմիթի զգուշացումները, թե՛ «առանց մեր եռանդուն աջակցության, խորհուրդների և այս երկրի ներքին գործերի մասնակցության շատ դժվար կլինի պատկերացնել կամ հույսեր կապել մինչ եկող գարուն կարգ ու կանոնի վերականգման հետ»: Տեղական իշխանությունները երբեմն «վհատվում էին իրավիճակի դժվարություններից ու Պետրոգրադի ցուցաբերած շատ սուղ օժանդակությունից»¹⁹:

Ֆ. Վ. Սմիթը այն կարծիքին էր, թե ինքը խափանել է Հայաստանը քաղաքական մեկուսացման ենթարկելու գերմանական ծրագիրը, թեև հետագա զարգացումները չեն հաստատում նրա գնահատականը: Միաժամանակ, Ֆ. Վ. Սմիթը զանգատվում էր, թե Ժամանակավոր կառավարությունը վախենում էր ազգային հարցից ու անջատողական

¹⁸ Ջորավար Անդրանիկի Կովկասեան ճակատի պատմական օրագրութիւնը 1914-1917: Պոսթոն, 1924, էջ 62-63; **Hovannisian R.**, Armenia On the Road to Independence, 1918. Berkeley and Los Angeles, 1967, p. 82:

¹⁹ US NA, RG 59, 861.00/734/Encl.

հնարավոր պահանջներից, թեև թուրքերին հաջողությամբ դիմադրելու գործին հայրենասիրությունից բացի այլ հենարան չի մնացել:

Նա ռուսական գործի ռազմունակության հետ հույս չէր կապում ու պահանջում էր իր երկրի անհապաղ միջամտությունը, այլապես եկրամասին չափազանց լուրջ վտանգ էր սպառնում: Հակառակ դեպքում՝ կորուստները մեղմելու և սեփական մեղքը քավելու համար, նրա երկիրը ստիպված կլինի հարյուրապատիկը ծախսել: Հյուսիսում չէր ուզում տեսնել ԱՄՆ-ի՝ «Կովկասի քրիստոնյա բնակչության առաջ մեծագույն անարդարության ու վնաս պատճառելու համար»²⁰ մեղավոր դառնալու իրողությունը: Նոյեմբերի 18-ին դիվանագետը ծանուցում է, որ պաշտպանության միջոցները բավարարում են միայն 10 օրվա: Նույն ամսվա 25-ին նա տեղեկացնում է Պետդեպարտամենտի ղեկավարին, որ բանակն ու երկրամասի ժամանակավոր կառավարությունը ամբողջությամբ հավատարիմ են Ռուսաստանին և Սահմանադիր ժողովին, բայց դա չէր տարածվում բոլշևիկների վրա: Փակագծերում նշենք, որ բանակին վերաբերող՝ Ֆ. Վ. Մմիթի պնդումը ճիշտ չէր: Հաջորդ օրը դիվանագետը ստանում է պատասխան. Ռ. Լանսինգը թերևս դեմ էր Ռուսաստանի մասնատման կամ քաղաքացիական պատերազմի²¹ քաջալերմանը:

1917 թ. նոյեմբերին ու դեկտեմբերի սկզբին՝ Թիֆլիսում բրիտանական ռազմական առաքելության ղեկավար գեներալ Օ. Շորի հետ հանդիպումների ժամանակ Անդրանիկին հայտնում են Ժամանակավոր կառավարության՝ 30 հազար արևմտահայերին զինելու և հանդերձավորելու պատրաստականության մասին: Անգլիացիները տրամադրում էին փողը, ԱՄՆ-ն էլ ամսական 10 դոլ. կվճարեր զինվորների ընտանիքներին²²: Ավելի բարձր ատյանները չեն հաստատում այդ տեղեկությունը. երբ դեկտեմբերի 1-ին Անգլիայի, Ֆրանսիայի և Իտալիայի վարչապետները Փարիզում խորհրդակցում էին Միացյալ Նահանգների նախագա-

²⁰ Армения в документах, с. 13.

²¹ Նույն տեղում, էջ 15:

²² Զօրավար Անդրանիկի Կովկասեան ճակատի պատմական օրագրությունը, էջ 65-66, 164:

հի անձնական ներկայացուցիչ Է. Հաուզի հետ, եվրոպացիները պաշտպանում էին Անդրկովկասին աջակցելու տեսակետը: Մակայն ամերիկյան կողմը համաձայն չէր նրանց կարծիքին ու չէր ցանկանում միջոցներ տրամադրել²³:

Դեկտեմբերի 29-ի դրությամբ Լոնդոնում ԱՄՆ-ի դեսպանը պետքարտուղար Ռ. Լանսինգին է փոխանցում Դաշնակիցների կարծիքը Կովկասի ռազմաճակատը ֆինանսավորելու պարտադրված անհրաժեշտության մասին, թեև նրանք կասկածներ ունեին, թե արդյոք այն վերականգնելը այլևս ուշ չէր: Եվրոպական կողմը կենսական անհրաժեշտություն էր համարում «գործակալներ և խորհրդական-սպաներ ունենալ՝ տեղական կառավարություններին ու նրանց բանակներին աջակցելու համար»²⁴: 1918 թ. հունվարի վերջին - փետրվարի սկզբին եվրոպա-ամերիկյան բանակցություններում բեկում է նկատվում: Այդ պահին Օ. Շորը գտնում էր, որ Կովկասյան ճակատը վերականգնելու ժամանակն արդեն անցել է, իսկ երկրամասի իշխանություններին հոսանքը տանում էր թուրք-գերմանական դաշինքի հետ մերձեցման, և նրանք ներքաշվում էին անջատ բանակցությունների մեջ:

Այնուամենայնիվ, 1918 թ. մարտ ամսին ամերիկացի քարոզիչ Է. Յարրոուն թախանձագին խնդրում էր իրեն գոնե 400 հազ. դոլ. հատկացնել Կարմիր խաչի խողովակներով՝ զինվորական հիվանդանոցներ կազմակերպելու, և լրացուցիչ՝ ամիսը 10 հազարից ոչ պակաս՝ դրանց աշխատանքի համար²⁵: Ապրիլի 3-ին Ռ. Լանսինգը վերջնականապես մերժում է ամերիկյան ֆինանսավորման հեռանկարը, թեև նման զարգացումների պարագայում Թիֆլիսում խոստանում էին առնվազն 6 ամսվա դիմադրություն և Բաքվի բարեհաջող պաշտպանություն թուրքական հարձակումից: Դրստորված անգործության հետևանքով այդ նախագծի մյուս՝ Թեհրանում տեղակայված անգլիական կողմը, այլևս կով-

²³ US NA, RG 59, 763.72/7926.

²⁴ US NA, RG 59, 861.00/3478; Մարմարյան Ա., նշվ. աշխ., էջ 288:

²⁵ Армения в документах, с. 23.

կասյան իրադրությունը փրկելու որևէ հույս չէր տաձում²⁶:

Քիչ ավելի ուշ Ռ. Լանսինգը տեղեկացնում է Վաշինգտոնում կաթողիկոսի ներկայացուցիչ Գ. Փաստրմաճյանի լրացուցիչ նախաձեռնության մասին: Ապրիլի 25-ին նա առաջարկում է ամերիկահայերի ուժերով դրամահավաք սկսել, եթե հյուպատոս Ֆ. Վ. Սմիթը ստանձնելու է ընկերային փոխառության պետական երաշխավորի դերը: Պետքարտուղարը խնդրում է այդ գաղափարի մասին զեկուցել Դաշնակիցների՝ Փարիզում գումարվող Գերագույն ռազմական խորհրդին ու հարցնում՝ որքանո՞վ է մեծացել հայկական ռազմական անձնակազմը, արդյո՞ք հայերը ի վիճակի՞ են վերահսկել Վանը, և նրանց հաջողվո՞ւմ է պաշտպանել Բաքուն²⁷:

ԱՄՆ-ի՝ հայ ժողովրդին տարբեր եղանակներով աջակցելու, նույնիսկ ռազմական ներխուժման կարելիությունը քննարկվել է մինչև Առաջին աշխարհամարտի ավարտը: Թեև մեկ ամիս պահանջվեց, որ 1918 թ. մայիսի 24-ին Ռ. Լանսինգը ստանար Ֆ. Վ. Սմիթի կազմած՝ Անդրկովկասը պաշտպանելու նախագիծը: Մայիսի 28-ին Պետդեպարտամենտը ցանկություն հայտնեց այն ուսումնասիրել, և հունիսի 17-ին փորձագետները քննեցին դրա հիմնադրույթները²⁸: Ամռանը հյուպատոսը հայտնեց, որ ողջ Անդրկովկասն ու նրա երկաթուղային ցանցը վերահսկող թուրքական բանակը հազիվ հասնում է 20 հազարի: Ավելին՝ նրա անձնակազմի մատակարարումը ամբողջությամբ ապահովվում էր գրավված տարածքներում «հայտնաբերված» ռազմական պահեստների պաշարներով²⁹:

²⁶ Նույն տեղում, էջ 24:

²⁷ US NA, RG 59, 867.22/22.

²⁸ Армения в документах, с. 27-28.

²⁹ Նույն տեղում, էջ 30:

ГАЯНЭ МАХМУРЯН

Институт истории НАН РА

АРМЕНИЯ И АРМЯНСКИЙ ВОПРОС В ПОЛИТИКЕ США 1917-1918 ГГ.

В 1917-1918 гг. Армения, на которую обрушился геноцид 1915 г., принимавшая западноармянских беженцев и лишенная внешних коммуникаций, стала главным объектом нападения на Кавказском фронте. Президент В. Вильсон, госсекретарь Р. Лансинг, посол США в Петрограде Д. Р. Френсис и консул в Тифлисе Ф. В. Смит пытались оценить, возможно ли восстановить боеспособность России и Кавказского фронта в условиях двух ее революций и обострявшейся гражданской войны. Было предложено набрать западноармянскую дивизию в составе русской армии, чтобы защищать три провинции, оставшиеся под русским контролем. Планировалось, что при контроле за ее действиями, США выделят деньги, а Британия направит офицеров-советников. В ходе переговоров, в конце января – начале февраля 1918 г. ситуацию оценили как безнадежную и в апреле США передали задачу организации и финансирования войск Великобритании. Сами они ограничились материальной и продовольственной помощью армянам, а также ведением боев в Европе.

GAYANE MAKHMOURIAN

Institute of History of NAS RA

ARMENIA AND ARMENIAN QUESTION IN THE U.S. POLICY OF 1917-1918

In 1917-1918, when Russia went through two Revolutions and intensification of the Civil War, the U.S. made an attempt to evaluate if it was possible to restore combativity of this country in general and of the Caucasus

Front in particular. President W. Wilson, Secretary of State R. Lansing, the U.S. Ambassador in Petrograd D. R. Francis and its Consul in Tiflis F. W. Smith had been engaged in this task. Armenia, put to Genocide in 1915, burdened with Western Armenian refugees and deprived of external communications, had become principal and direct object for assault on the Caucasus Front. So, it attracted special attention. It had been offered to enroll Western Armenian Division in the Russian Army to defend three provinces, which remained under Russian control. The USA allotted money; British should assign officers to advice; and both partners could control its operations. During negotiations, the Caucasus situation was evaluated as irreparable in the end of January – in the beginning of February, 1918; then USA had surrendered the initiative and financial job to British in April. They confined themselves to material and food aid for Armenians; as well as to warfare in Europe.

ՖԵԼԻՔՍ ՍՈՎՄԻՍՅԱՆ

ՎՊՄՀ

ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Առաջին աշխարհամարտի նախօրյակին Ռուսաստանը արտաքուստ ստանձնել էր արևմտահայության գլխավոր պաշտպանի պարտականությունները: Հայկական բարենորոգումների վերաբերյալ 1914 թ. հունվարի 26-ին Կ. Պոլսում կնքված ռուս-թուրքական համաձայնագիրը չարդարացրեց արևմտահայության սպասելիքները: Կ. Պոլսում ռուսական հավատարմատար Կ. Ն. Գուլկնիչը արտաքին գործերի նախարար Ս. Դ. Սազոնովին հղած զեկուցագրում գրում էր, որ չնայած վավերագիրը «չի տալիս հայերին ինքնավարության այն լայն իրավունքները, որն առաջարկում էր ռուսական ծրագիրը», այնուամենայնիվ, այն ահագին նշանակություն ունի հայ ժողովրդի ապագա պատմական ճա-

կատագրի համար»¹: Նրա համոզմամբ՝ «վավերագիրը պետք է համարել հայ ազգի պատմության ավելի բախտավոր դարաշրջանի սկիզբ: Հայերը չեն կարող չգիտակցել, որ հիշյալ օրից արված է առաջին քայլը ազատելու նրանց թուրքական բռնակալությունից»²:

Ռուս դիվանագետը միաժամանակ գտնում էր, որ վավերագիրը կարող է «ամենանպաստավոր հետևանքներ» ունենալ նաև Ռուսաստանի միջազգային հեղինակության համար, քանզի դրանով ընդգծվում է «Ռուսաստանի դեկավար դերը հայկական բարենորոգումների հարցում»³: Սակայն վավերագիրը այդ նպատակին չձառայեց, որին խանգարեց շուտով սկսված Առաջին աշխարհամարտը: Պատերազմի ընթացքում Ռուսաստանի արտաքին քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ քանիցս փոխվեց՝ կապված միջազգային իրադրության փոփոխության և պատերազմում ձեռք բերած ռազմական հաջողությունների հետ: Աշխարհամարտի նախօրյակին Ս. Դ. Սազոնովը Կ. Պոլսում ռուս դեսպան Մ. Ն. Գիրսին հորդորում էր Բարձր Դռանը հայտնել, որ «Ռուսաստանը պարտավորվում է չօժանդակել ազգայնական հայկական հոսանքներին»⁴:

Պատերազմի բռնկումից հետո Ռուսաստանը ջանքեր էր գործադրում Օսմանյան կայսրության հետ համաձայնության գալ, որպեսզի խուսափի երկու ճակատով կռվելու հեռանկարից: Մինչդեռ հայ հասարակական շրջանները Ռուսաստանից այլ սպասելիքներ ունեին: 1914 թ. օգոստոսի 5-ին Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ V-ը Կովկասի փոխարքա Ի. Ի. Վորոնցով-Դաշկովին հղած նամակում հայության անունից ցանկություն էր հայտնում, որ պատերազմի ավարտից հետո Ռուսաստանը «հայկական գավառներից կազմի մեկ միասնական նա-

¹ Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, **Զ. Կիրակոսյանի** խմբ., Ե., 1972, էջ 347:

² Նույն տեղում, էջ 350-351:

³ Նույն տեղում, էջ 351:

⁴ МОЭИ, серия 3, т. 6, М.-Л., 1935, с. 181.

հանգ», որը կունենար ներքին ինքնավարություն՝ Ռուսաստանի խնամակալության ներքո⁵:

Կաթողիկոսի նամակն առաքելով Ռուսաստանի նախարարների խորհրդի նախագահ Ի.Լ. Գորեմիկինին, Ի. Բ. Վորոնցով-Դաշկովը օգոստոսի 9-ին նրան հայտնում էր, որ «ամբողջ հայ բնակչությունն ուղղակի փափագում է, որ պատերազմ լինի Թուրքիայի դեմ»⁶: Ի. Լ. Գորեմիկինի պատասխան նամակից հետո Կովկասի փոխարքան Գևորգ V-ին հայտնեց, որ «Ռուսաստանը կպաշտպանի հայերի պահանջները 1913 թ. ամռանը Կ. Պոլսում եվրոպական տերություններին Ռուսաստանի առաջարկած բարենորոգման նախնական ծրագրի իմաստով⁷: Մինչդեռ Ս. Դ. Սազոնովը օգոստոսի 17-ին Ի. Լ. Գորեմիկինին պարզաբանում էր, որ «քաղաքական հանգամանքներում և առաջիկայում Թուրքիայի հետ հարաբերությունները խզելու հնարավորության պայմաններում» հայկական վեց վիլայեթներում բարենորոգումների անցկացումը համարում է «միանգամայն տարածում և անիրագործելի»⁸: Նա գտնում էր, որ չնայած քաղաքական իրադրության լարվածությանը, այդ պահին Օսմանյան կայսրության հետ հարաբերությունները խզելու հարկ չկա, քանի դեռ «չի բացառվում դիվանագիտական բանակցությունների միջոցով խզումը կանխելու հնարավորությունը», քանզի Ռուսաստանին գործնական աջակցություն են ցույց տալիս դաշնակիցներ Անգլիան և Ֆրանսիան: Փորձառու և զգուշավոր դիվանագետը Ի. Լ. Գորեմիկինին հորդորում էր նախքան քաղաքական իրադրության լիակատար պարզաբանումը հայությանը չդրդել թուրքական իշխանության դեմ ապստամբության, որը «կարող է ունենալ խիստ ցավալի հետևանքներ», եթե Ռուսաստանը չկարողանա հայերին «օգնություն ցույց տալ զինված ուժով»⁹:

1914 թ. նոյեմբերի 8-ին Ի. Բ. Վորոնցով-Դաշկովին հղած նամակում Գևորգ V-ը հույս էր հայտնում, որ ոչ միայն հայկական վեց վիլայեթներ-

⁵ Архив внешней политики России, Политархив, д. 3484, л. 1-9.

⁶ Հայաստանը միջազգային դիվանագիտության ... փաստաթղթերում, էջ 367:

⁷ Նույն տեղում, էջ 372:

⁸ Նույն տեղում, էջ 367:

⁹ Նույն տեղում, էջ 368:

րին, այլև «նրանցից անբաժան Կիլիկիային մեծ Ռուսաստանը կշնորհի ինքնավարություն, որով կավարտվի քրիստոնյա ժողովուրդներին ազատագրելու նրա պատմական առաքելությունը»¹⁰: Նույն խնդրանքով նոյեմբերին նա դիմեց նաև Թիֆլիսում գտնվող Նիկոլայ II-ին: Կայսրը կաթողիկոսին հուսադրեց, թե «հայերին սպասվում է պայծառ ապագա», և ինքը հավատում է, որ «հայկական հարցը հայերի սպասելիքներին համեմատ կլուծվի պատերազմի ավարտից հետո, հաշտության բանակցությունների ժամանակ»¹¹:

Սակայն Նիկոլայ II-ին վիճակված չէր հաղթողի կարգավիճակով թուրքական պետությանը թելադրել հաշտության պայմաններ, իսկ հայության համար ապահովել «պայծառ ապագա»: Երիտթուրքերի կառավարությունը, օգտվելով պատերազմական իրադրությունից և դաշնակից Գերմանիայի հովանավորությունից, 1915 թ. գարնանն իրականացրեց արևմտահայության զանգվածային կոտորածներ: Ապրիլի 7-ին Գևորգ V-ը, Ս. Դ. Սազոնովին հայտնելով հայերի զանգվածային կոտորածների մասին, «թախսանձագին» խնդրում էր պաշտպանության տակ վերցնել հայությանը և փրկել «անմեղ կոտորվող քրիստոնյաներին»¹²:

Ս. Դ. Սազոնովը և Ի. Բ. Վորոնցով-Դաշկովը դեմ չէին, որ Գևորգ V-ը արևմտահայությանը պաշտպանելու խնդրանքով դիմի նաև Իտալիայի թագավորին և ԱՄՆ նախագահին:

Ապրիլի 22-ին Ս.Դ. Սազոնովը Հռոմում և Վաշինգտոնում Ռուսաստանի դեսպաններին կարգադրեց աջակցել Գևորգ V-ի դիմումին և իտալական ու ամերիկյան կառավարությունների առաջ պաշտպանել կաթողիկոսի խնդրանքը: Օրեր անց ռուսական կառավարությունը առաջինը հանդես եկավ հայաջինջ քաղաքականություն որդեգրած երիտթուրքերի գործողությունները դատապարտող հայտարարությամբ: Ապրիլի 25-ին Ս.Դ. Սազոնովը Փարիզում ռուսաց դեսպան Ա. Պ. Իզվոլսկուն և Լոնդոնում ռուսաց դեսպան կոմս Ա. Կ. Բենկենդորֆին

¹⁰ ՀԱԱ, ֆ. 1, գ. 1, գ. 209, թ. 5:

¹¹ Հայաստանը միջազգային դիվանագիտության ... փաստաթղթերում, էջ 39:

¹² Архив внешней политики России, Политархив, д. 3508, л. 4.

հանձնարարեց ֆրանսիական և անգլիական կառավարություններին առաջարկել Ռուսաստանի հետ միասին թուրքերի և քրդերի կողմից հայերի կոտորածների մասին դիմում հղել Բարձր Դռանը:

1915 թ. ցարական կառավարությունը Հայկական հարցի վերաբերյալ վերջնական ծրագիր չէր մշակել, սակայն գտնում էր, որ հայությունը կարող է բավարարվել, եթե Ռուսաստանը եվրոպական տերություններին առաջարկի հետևյալ պայմանները:

Առաջին, Օսմանյան կայսրության սահմաններում ինքնավարության սկզբունքներով կառավարվող Հայաստանի ստեղծումը: Երկրորդ, թուրքական իշխանությունները հաստատում են տերությունների կողմից ընտրված գեներալ-նահանգապետին, չեն միջամտում Արևմտյան Հայաստանի գործերին և այնտեղ գործ չեն պահում: Երրորդ, Արևմտյան Հայաստանի նկատմամբ խնամակալություն իրականացնում են Ռուսաստանը, Անգլիան և Ֆրանսիան: Չորրորդ, Արևմտյան Հայաստանի տարածքն ընդգրկում է հայկական վեց վիլայեթներն ու Կիլիկիան՝ ներառյալ Մերսին նավահանգիստն ու Ալեքսանդրետի ծովածոցը: Հինգերորդ, Արևմտյան Հայաստանի ինքնավարության ծրագրի հիմքում ընկնելու էր 1913 թ. ամռանը Կ. Պոլսում Ռուսաստանի առաջարկած բարենորոգումների առաջին նախագիծը¹³:

Մայիսի 17-ին Ա. Պ. Իզվոլսկին Ս. Դ. Սազոնովին հայտնում էր, որ Կիլիկիան հայկական մարզի մեջ ներառելու հայերի ցանկությունը «չափազանց նուրբ հարց է, որովհետև Ֆրանսիան արդեն հայտարարել է այդ մարզի նկատմամբ իր ունեցած հավակնությունների մասին»¹⁴:

Ս. Դ. Սազոնովը տեղեկացված էր, որ Լոնդոնում և Փարիզում Հակոբ Զավրիսի և Պողոս Նուբար փաշայի հետ «գրույցները կրում էին ակադեմիական բնույթ»¹⁵, ուստի չէր ցանկանում Կիլիկիայի հարցում հակադրվել Ֆրանսիային:

Ստացվում էր, որ Ռուսաստանն իր ծրագրերից պետք է հրաժարվեր լուրջ այն պատճառով, որ Ֆրանսիան հայտնել էր իր հավակնությունը Կիլիկիայի նկատմամբ:

Նա առանձնապես հույսեր չէր փայփայում նաև երեք տերությունների համատեղ հայտարարության հետ: Բայց առաջնորդվելով ամենից առաջ Ռուսաստանի քաղաքական շահով, նա գտնում էր, որ համատեղ հայտարարությունը «համենայն դեպս կբարձրացնի հայերի ոգին, որոնք կարող են մեզ օգտակար լինել Թուրքիայի դեմ մղվող պատերազմում»¹⁶:

Ընդառաջելով Պետդումայի հայազգի պատգամավորներ Մ. Աջեմովի և Մ. Պապաջանյանի խնդրանքին, Ս. Դ. Սազոնովը «չափազանց ցանկալի էր համարում» քաղաքական նկատառումներից ելնելով՝ «հայ ժողովրդի վրա մեր ազդեցությունն ավելի ամրապնդելու նպատակով»¹⁷ 500 հազար ռուբլու օգնություն ցույց տալ արևմտահայությանը, «ովքեր տուժել են մասամբ նաև Ռուսաստանին նվիրված լինելու պատճառով»¹⁸:

Արևմտահայությանն օգնություն ցույց տալու Ռուսաստանի ձգտմանը խանգարեց ստեղծված միջազգային իրադրությունը, և Մերձավոր Արևելքը միմյանց միջև բաժանելու շուրջ Ֆրանսիայի և Անգլիայի սկսած բանակցությունները: 1916 թ. մարտին Պետրոգրադում Ռուսաստանը համաձայնվեց Մարկ Սայքսի և Ժորժ Պիկոյի առաջ քաշած ծրագրի հետ, որով Ռուսաստանին անցնում էին Էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի մարզերը՝ ընդհուպ մինչև Սև ծովի ափը, ինչպես նաև Վանից և Բիթլիսից հարավ ընկած Քուրդիստանի մարզը¹⁹: Ռուսաստանը բավարարվեց իրեն խոստացված տարածքային զիջումներով, թեպետ Սարիղամիշում տարած փայլուն հաղթանակից հետո Նիկոլայ II-ը ձգտում էր ձեռք բերել ավելին: 1916 թ. մայիսի 30-ին Նիկոլայ II-ը

¹⁶ Հայաստանը միջազգային դիվանագիտության... փաստաթղթերում, էջ 39:

¹⁷ МОЭИ, серия 3, т. 9, М.-Л., 1935, с. 389-390.

¹⁸ Հայաստանը միջազգային դիվանագիտության... փաստաթղթերում, էջ 380:

¹⁹ Նույն տեղում, էջ 385-386:

¹³ Հայաստանը միջազգային դիվանագիտության... փաստաթղթերում, էջ 372-373:

¹⁴ Նույն տեղում, էջ 375:

¹⁵ МОЭИ, серия 3, т. 7, М.-Л., 1935, с. 471-472.

գրում էր. «Եթե մեր բանակին հաջողվի հասնել մինչև Սինոպ, ապա այնտեղով էլ պետք է անցնի մեր սահմանագիծը»²⁰:

Արևմտյան Հայաստանի տարածքների գրավումից հետո ռուսական կառավարող շրջանները մտածում էին այդ տարածքն ընդգրկել Ռուսական կայսրության կազմում և լուծում տալ Հայկական հարցին:

1916 թ. Ս. Դ. Սազոնովը այդ խնդիրը համարում էր ամենամեծ դժվարությունն ու բարդությունը: Նրա հետ համամիտ էր Կովկասի նոր փոխարքա Նիկոլայ Նիկոլանիչ Ռոմանովը, ըստ որի՝ «Ռուսական կայսրության ներկա սահմանների ներսում Հայկական հարց ... բնավ գոյություն չունի»²¹: Նրա կարծիքով՝ «Հայաստանի ինքնավարության հարցը ... ամենայն հավանականությամբ առայժմ կյանքի չի կոչվելու և ... կարող է միայն վտանգավոր կերպով բարդացնել այս պատերազմի ժամանակ ծնունդ առած հարցերի լուծումը»²²: Փաստորեն, Ռուսաստանը պատերազմի սկզբում Հայաստանի նկատմամբ որդեգրած քաղաքականությունից աստիճանաբար նահանջեց՝ հրաժարվելով ինքնավարություն տալու գաղափարից:

1917 թ. փետրվարյան հեղափոխության արդյունքում իշխանության եկած Ժամանակավոր կառավարությունը նախ՝ իշխան Գ. Ե. Լվովի, այնուհետև Ա. Ֆ. Կերենսկու գլխավորությամբ պատերազմի և խաղաղության, ինչպես նաև ազգային, այդ թվում՝ Արևմտյան Հայաստանի հարցում փորձեց որոշ խմբագրումներ մտցնել ցարիզմի քաղաքականության մեջ, օրինակ՝ ստեղծվեց «Պատերազմի իրավունքով գրավված Թուրքահայաստանի շրջանների կառավարման գեներալ-նահանգապետությունը»: Այդ որոշմամբ Արևմտյան Հայաստանը դուրս բերվեց Կովկասի փոխարքայության և ռուսական Կովկասյան բանակի իշխանությունից և անմիջականորեն փոխանցվեց կենտրոնական իշխանության ենթարկայության տակ: Սակայն Ռուսաստանում տիրող

երկիշխանությունն ու անընդհատ հեղափոխական գործընթացներն ի վերջո հանգեցրեցին հոկտեմբերյան իրադարձություններին:

Ռուսաստանի արտաքին քաղաքականությունը Արևմտյան Հայաստանի նկատմամբ արմատապես փոխվեց, երբ 1917 թ. հոկտեմբերին իշխանության եկած բոլշևիկները որդեգրեցին միանգամայն նոր արտաքին քաղաքականություն:

1917 թ. դեկտեմբերի 31-ի Ժողովուրդի «Թուրքահայաստանի մասին» դեկրետը ճանաչում էր ցարական Ռուսաստանի նվաճած «Թուրքահայաստանի հայերի ազատ ինքնորոշման իրավունքը՝ ընդհուպ մինչև լիակատար անկախություն»²³:

Սակայն հայությանը վիճակված չէր օգտվել անկախ պետականություն հռչակելու բոլշևիկյան իշխանության ընձեռած հնարավորությունից: Պատճառը ոչ միայն Թուրքիայի նվաճողական ձգտումն էր, այլև Առաջին աշխարհամարտն անհապաղ դադարեցնելու, հաշտություն կնքելու և ցարական Ռուսաստանի նվաճողական քաղաքականությունից հրաժարվելու Խորհրդային Ռուսաստանի դիրքորոշումը: 1918թ. մարտի 3-ի Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագիրը ոչ միայն կատարյալ դավաճանություն էր ռուս ժողովրդի ազգային շահի իմաստով, այլև ճակատագրական նշանակություն ունեցավ հայ ժողովրդի համար: Խորհրդային Ռուսաստանը հրաժարվում էր պատերազմի ժամանակ ռուս զինվորների և հայ կամավորների արյան գնով Թուրքիայից նվաճած բոլոր տարածքներից, որոնք «այլևս չեն գտնվելու Ռուսաստանի գերագույն իշխանության ներքո», հնարավորություն էր տալիս Կարսի, Արդահանի և Բաթումի մարզերում «Թուրքիայի համաձայնությամբ հաստատել նոր կարգ»²⁴, պարտավորվում էր գորացրել և արձակել թուրքահայատակներից ու ռուսահայատակներից կազմված հայկական կամավորական ջոկատները, որոնք գտնվում էին ինչպես Ռուսաստանում, այնպես էլ ցարական Ռուսաստանի նվաճած նահանգներում²⁵:

²⁰ Նույն տեղում, էջ 396:

²¹ Նույն տեղում, էջ 401:

²² Նույն տեղում, էջ 401:

²³ Образование СССР. Сборник документов, 1917-1924. М.-Л., 1949, с. 28.

²⁴ Документы внешней политики СССР, М., 1957, том 1, стр. 121.

²⁵ Там же, стр. 200.

Բրեստ-Լիտովսկի պայմանագրի կնքումից հետո Թուրքիան, օգտվելով Անդրկովկասի հակախորհրդային ուժերի բռնած դիրքերից, վերսկսեց պատերազմը, որով վտանգի տակ դրվեց Արևելյան Հայաստանի գոյությունը:

1918 թ. մայիսի 28-ին Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումից հետո հանրապետության ղեկավարության ջանքերը, գեներալ Ա. Բ. Դենիկինի վկայությամբ, «նպատակաուղղված էին հայ ժողովրդի ֆիզիկական գոյության ապահովմանը, այդ պահին առավել քան երբևէ կենսունակ էր Ռուսաստանի հետ պետական կապ հաստատելու գիտակցության անհրաժեշտությունը: Ցանկացած Ռուսաստանի, անկախ նրա պետական կարգից, նույնիսկ խորհրդային, միայն թե նա ուժ և հնարավորություն ունենա փրկելու հայ ժողովրդին: Բայց այդպիսի Ռուսաստան գոյություն չունեի»²⁶: Գեներալն իրավացի էր: Ռուսաստանն այլևս միասնական և ուժեղ չէր, երկիրը քաղաքական առումով պառակտված էր, ընթանում էր քաղաքացիական պատերազմ:

Չնայած դրան, ՀՀ ղեկավարությունը, խախտելով Բաթումի 1918 թ. հունիսի 3-ի պարտավորագիրը և հունիսի 4-ի պայմանագրի կետերը, գաղտնի պատվիրակություններ ուղարկեց Ռուսաստան՝ բոլշևիկների և ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ հարաբերություններ հաստատելու համար: Մոսկվայում Վ. Բ. Լենինի համաձայնությամբ ստեղծված հանձնախմբի հետ օգոստոսի 27-ին նախատեսված քննարկումը չկայացավ, իսկ Հայաստանի պատվիրակները ձերբակալվեցին²⁷:

Օգոստոսին Բեռլինում Խորհրդային Ռուսաստանի և Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչների միջև առաջին իսկ հանդիպման ժամանակ Համո Օհանջանյանը հասկացավ, որ Խորհրդային Ռու-

²⁶ Деникин А.И., Очерки русской смуты. Белое движение и борьба Добровольческой армии. Май-октябрь 1918 (Воспоминания. Мемуары), Минск, 2002, стр. 85.

²⁷ Հովհաննիսյան Ռ., Հայաստանի Հանրապետություն, հատոր 1, Առաջին տարի. 1918-1919թթ., Երևան, 2005, էջ 432-437; «Իրոշակ», Բոստոն, 1928թ. N 8-9, օգոստոս-սեպտեմբեր, էջ 233:

սաստանը դեմ է Հայաստանի Հանրապետության անկախությանը²⁸: 1918 թ. հոկտեմբերի 1-ին Բեռլինում Խորհրդային Ռուսաստանի դեսպան Ա. Ա. Իոֆֆեն Հայաստանի անկախության ճանաչման հարցը բարձրացրած հայ պատվիրակներին հանդիմանեց՝ հայտարարելով. «Մենք ձեզ՝ հայերիդ փրկում ենք կոտորածից ու ոչնչանալուց և հիմա սպասում ենք, որ դուք խոսք չէք բարձրացնի անկախության մասին»²⁹: Նրա կարծիքով՝ ստեղծված իրադրությունում «Ամենաբնականն այն է, որ դուք հիմա մեզ հետ միասին դուրս գաք Տաճկաստանի դեմ, հայտարարեք, որ դուք Ռուսաստանի հետ եք և նրա հետ միասին դնում եք այս և այս պահանջները»³⁰:

Խորհրդային Ռուսաստանի մերժողական դիրքորոշումը Հայաստանի Հանրապետության անկախությունը չճանաչելու հարցում պայմանավորված էր նրանով, որ Առաջին աշխարհամարտից միակողմանի դուրս եկած Ռուսաստանը Հայաստանի Հանրապետությանը դիտում էր որպես Անտանտի դաշնակից: Ռուս բոլշևիկները Հայաստանի Հանրապետությունը համարում էին բուրժուական, միջազգային իմպերիալիզմի կամակատար ու գործակալ, ուստի 1918 թ. հուլիսի դեկրետով Ռուսաստանում գործող հայ ազգային խորհուրդներն ու կոմիտեներն ազատ արձակեցին՝ դրանք որակելով որպես բուրժուական հակահեղափոխական մարմիններ³¹:

Խորհրդային Ռուսաստանի իշխանություններին դուր չէր գալիս նաև անկախ Հայաստանի ձգտումը՝ կապեր հաստատել Ռուսաստանի հարավի զինված ուժերի հրամանատարության «Հատուկ խորհրդակցության» հետ: Դժբախտությունն այն էր, որ Հայաստանի Հանրապետության անկախությունը չէին ցանկանում ճանաչել նաև Ռուսաստանի հարավի և Սիբիրի ոչ խորհրդային կազմավորումները: Նրանք չէին ընդունում ցարական Ռուսաստանից անջատված անկախ պետությունների գոյությունը, չէին ճանաչում նաև Հայաստանի Հանրապետության

²⁸ ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 135, թ. 6:

²⁹ Նույն տեղում, գ. 11, էջ. 73; գ. 1, գ. 73, մ. I, թ. 68:

³⁰ ՀԱԱ, ֆ. 4047, գ. 1, գ. 251, թ. 67:

³¹ Декреты советской власти, том 3, М., 1964, стр. 15-16.

անկախությունը և ցանկանում էին վերականգնել Ռուսաստանի 1914 թ. սահմանները: Նրանք հանդես էին գալիս «Միասնական և անբաժանելի Ռուսաստան» վերականգնելու ծրագրով:

Հայաստանի Հանրապետության և «Հատուկ խորհրդակցության» միջև հաստատվեցին ռազմա-քաղաքական բնույթի կապեր: Գեներալ Մ. Վ. Ալեքսեևը օգնեց Հայաստանի համար ձեռք բերել միլիտնավոր ռուբլու հացահատիկ, շաքար և առաջին անհրաժեշտության այլ ապրանքներ³²:

Կովկասյան բանակի կազմալուծումից հետո շատ ռուս սպաներ և զինվորներ մտան հայկական բանակ³³, իսկ Հայաստանի իշխանությունները նպաստեցին, որպեսզի ռուս զինվորները, սպաները և պաշտոնյաները անարգել վերադառնան հայրենիք: Նրանց հատկացվեց գնացք, ճանապարհաձախս և սնունդ³⁴:

Հայկական բանակն ստեղծվեց ռուսական բանակի սկզբունքով և ղեկավարվում էր ռուսական զինվորական կանոնադրությունով³⁵: Պատահական չէր, որ հայոց բանակը համարում էին Ա. Դենիկինի բանակի մասը³⁶, իսկ գեներալ Ա. Դրագոմիրովը Հայաստանի Հանրապետությանն առաջարկում է դաշնակցել իր հետ³⁷:

Վարելով զգուշավոր արտաքին քաղաքականություն՝ Հայաստանի Հանրապետության ղեկավարությունը Կամավորական բանակի հետ դաշինք չկնքեց և նպատակահարմար չհամարեց պատվիրակություն ուղարկել ինչպես Եկատերինոդար, այնպես էլ Յասսի, որտեղ 1918 թ. նոյեմբերի 16-ին քննարկվելու էր բոլշևիզմի դեմ պայքարի հարցը:

Ռուսաստանի հարավի ոչ խորհրդային կազմավորման հետ Հայաստանի Հանրապետության հարաբերությունները պահպանվեցին մինչև Անդրկովկասում բրիտանական զորամասերի հայտնվելը: Առա-

³² ՀԱԱ, ֆ. 223, ց. 1, գ. 113, թ. 21:

³³ Նույն տեղում, ֆ. 200, ց. 2, գ. 56, թ. 13; ֆ. 276, ց. 1, գ. 116, թ. 127:

³⁴ «Հայրենիք», Բոստոն, 1928, հոկտեմբեր, N 12, էջ 130-131; 1959, մայիս, N 5, էջ 68-69:

³⁵ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 498, թ. 33:

³⁶ **Ռուբին**, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. 7, էջ 332-333:

³⁷ ГА РФ, ф. 446, оп. 2, д. 33, л. 198.

ջին աշխարհամարտի ավարտից հետո իրադրությունը Անդրկովկասում փոխվեց, և նոր պայմաններում Խորհրդային Ռուսաստանի և Հարավի կամավորական բանակի հետ Հայաստանի Հանրապետության հարաբերություններն այլ ընթացք ստացան:

ФЕЛИКС МОВСИСЯН

ВГТУ

ЗАПАДНАЯ АРМЕНИЯ В СФЕРЕ ВНЕШНЕЙ ПОЛИТИКИ РОССИИ В ГОДЫ ПЕРВОЙ МИРОВОЙ ВОЙНЫ

В годы Первой мировой войны внешняя политика России по отношению к Армении неоднократно менялось в зависимости от сложных международных отношений, военной ситуации и геополитических посягательств. В начале войны Россия считала опасным самостоятельные выступления армян в Западной Армении, затем первой осудила массовую резню и депортацию армян в Турции, а в июне 1916 года рассматривала вопрос включения Великой Армении в Российскую империю. Декрет большевистской Россией от 29 декабря 1917 года „О Турецкой Армении” признавал право на самоопределение армянского народа, а Брест-Литовский мирный договор от 3 марта 1918 года поставил под угрозу существование Восточной Армении. Советская Россия не признала независимость Республики Армения и отказалась от установления с ней дипломатических отношений.

FELIKS MOVSIYAN

VSPU

**WESTERN ARMENIA IN THE YEARS OF THE FIRST WORLD WAR
IN THE FIELD OF RUSSIAN AFFAIRS**

In the years of the First World War Russian foreign affairs towards Armenia changed many times in connection with problematical international relations, war condition and geographical and political intentions. In the beginning Russia considered the Armenians' independent speeches in Western Armenia deleterious exhorting them to follow its instructions. In November 1914, Nicolas II affirmed that the solution to the Armenian issue would live up to the Armenians' expectations after the war. In April 1915, Russia was the first to condemn in Turkey for the Armenians' massacres and eviction. In June 1916, the Russian governing states thought of capturing and including it into the empire. After the February Revolution the temporary government created a special committee to realize the governing of the captured areas of Western Armenia. The decree of the Soviet Russia of December 29, 1917 about "Turkish Armenia" acknowledged the Armenians' right of free self-determination. The fourth article of the conciliation treaty of Brest-Litovsk of March 3, 1918 was disastrous for Armenia. Regarding the Republic of Armenia as an ally of Entente, the Soviet Russia did not admit its independence and refused to affirm diplomatic relations.

ԼԻԼԻԹ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀՀ ԳՍԱ պատմության ինստիտուտ

**1915-1916 ԹԹ. ԱՆԳԼՈ-ՖՐԱՆՍ-ՌՈՒՍԱԿԱՆ ԳԱՂՏՆԻ
ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅ
ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ**

Հետխորհրդային տարիներին Հայկական հարցի ուսումնասիրումը դարձավ հայ պատմագիտության առանցքային ուղղություններից մեկը:

Դա բացատրվում է ոչ միայն հիմնախնդրի գիտական կարևորությամբ, այլև հայկական անկախ պետականության վերականգնմամբ պայմանավորված հասարակական-քաղաքական նոր իրադրությամբ: Այն նախադրյալներ ստեղծեց Արևմտյան Հայաստանի ազատագրության, հայկական անկախ պետականության վերականգնման, ինչպես նաև այդ հարցերի նկատմամբ մեծ տերությունների քաղաքականության ու դիվանագիտական պայքարի գիտական ուսումնասիրությունը շարունակելու, արդեն կատարված աշխատանքի արդյունքներն ամբողջացնելու և վերաափմորելու համար: Այս տեսանկյունից որոշակի հետաքրքրություն է ներկայացնում Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակահատվածը, որը ճակատագրական եղավ հայ ժողովրդի և նրա ազգային նպատակների համար: 1915-1916 թթ. հայ ժողովուրդն իր պատմական հայրենիքում՝ օսմանյան կայսրության տիրապետությանը ենթակա Արևմտյան Հայաստանում, ինչպես նաև կայսրության հայաբնակ շրջաններում ենթարկվեց ցեղասպանության: Մինևս ժամանակ, Օսմանյան կայսրության դեմ պատերազմող Անտանտի պետությունների՝ Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի կողմից մշակվեց Հայկական հարցի տեսանկյունից կարևոր գաղտնի դիվանագիտական փաստաթուղթ՝ Օսմանյան կայսրության ասիական տիրույթների, այդ թվում նաև Արևմտյան Հայաստանի ու Կիլիկիայի բաժանման վերաբերյալ ծրագիրը, որն աշխարհի վերաբաժանման համար Մեծ տերությունների պայքարի դրսևորումներից մեկն էր: Դրանով Անտանտի տերություններն ուրվագծեցին թուրքական պետության հետ ապագա հաշտության սկզբունքները:

Մեծ չէ այն հայ պատմաբանների թիվը, ովքեր հետխորհրդային տարիներին անդրադարձել են Օսմանյան կայսրության ասիական տիրույթների բաժանման վերաբերյալ 1915-1916 թթ. անգլո-ֆրանս-ռուսական գաղտնի բանակցություններին, վերլուծել Արևմտյան Հայաստանի ու Կիլիկիայի ապագա վարչաքաղաքական կարգավիճակի և կառուցվածքի հարցերն ինչպես բանակցություններում, այնպես էլ դրանց արդյունքում ստորագրված գաղտնի համաձայնագրերում: Այդ պատմա-

բանների թվում է ավագ սերնդի ներկայացուցիչ ակադեմիկոս Գ. Գալոյանը, ով վերոնշյալ հարցերը ներկայացրել է XVI դարից մինչև 1917 թ. ընկած ժամանակահատվածում մեծ տերությունների աշխարհակալական առճակատումների և Հայաստանի ու հայ ժողովրդի ճակատագրում դրանց ազդեցության ու հետևանքների տեսանկյունից¹: Հիմնախնդիրը կենտրոնական տեղ է գրավում պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Լ. Հովհաննիսյանի գիտական ուսումնասիրություններում, որոնցում այն ներկայացված է Հայկական հարցում Մեծ տերությունների որդեգրած մոտեցումների ու քաղաքականության տեսանկյունից²: Մեկ այլ հեղինակ՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հ. Հակոբյանը, հիմնախնդրին անդադարձել է Հայոց Մեծ եղեռնի հետևանքով տարագիր հայության հայրենիք վերադառնալու պահանջի տեսանկյունից՝ վերհանելով դրա պատմական ու իրավական հիմքերը³: Ուշագրավ է նաև պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Ա. Մարուքյանի աշխատությունը, որում Օսմանյան կայսրության ասիական տիրույթների համար Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի դիվանագիտական պայքարը պատմաքննական վերլուծության է ենթարկված քաղաքական և միջազգային իրավունքի տեսանկյունից⁴:

Վերոնշյալ հեղինակների կողմից Ասիական Թուրքիայի բաժանման վերաբերյալ անգլո-ֆրանս-ռուսական բանակցությունների լուսաբանման գիտական նորույթը, փաստորեն, ապահովում է գլխավորա-

¹ **Գալոյան Գ.**, Հայաստանը մեծ տերությունների աշխարհակալական առճակատումներում (XVI դարից 1917 թ.), Ե., 2004:

² **Հովհաննիսյան Լ.**, Հայկական հարցը և մեծ տերությունները 1914-1917 թվականներին, Ե., 2002: Նույնի, *Западная Армения в 1914-1916 гг.*: Ст и «ԼՀԳ» №3, Ե., 2013, էջ 68-76:

³ **Հակոբյան Հ.Վ.**, Հայրենիք վերադառնալու գաղափարը և ժամանակակից միջազգային իրավունքը, Ե., 2000: Նույնի, *Տարագիր հայության հայրենիք վերադառնալու պահանջի պատմական ու իրավական հիմքերը*, Ե., 2002:

⁴ **Марукян А.**, *Армянский вопрос и политика России (1915–1917 гг.)*, Ер., 2003. **Մարուքյան Ա.**, Արևմտյան Հայաստանի բաժանումը և Ռուսաստանը Սայրս-Ուիկոյի բանակցությունների ժամանակ, «ԼՀԳ», N 3, Եր., 2003, էջ 106-113: Նույնի՝ Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմաիրավական հիմնավորումները, Ե., 2014:

պես պատմական փաստերի վերաարժևորումը: Ըստ այդմ, հողվածի շրջանակներում կներկայացնենք 1915-1916 թթ. Անտանտի կամ Եռյակ համաձայնության պետությունների միջև գաղտնի բանակցությունների պատճառների, նպատակների, արդյունքների, Հայկական հարցի հետագա ընթացքի վրա դրանց ազդեցության վերաարժևորման, վերագնահատման առավել կարևոր դրույթները:

➤ 1914 թ. առաջացել էր թուրքական պետության նկատմամբ Անտանտի տերությունների քաղաքականության արմատական վերանայման անհրաժեշտություն: Ռուսաստանի, Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի կառավարությունների միջև բանակցություններով դրվեց այդ քաղաքականության նոր փուլի սկիզբը:

Նշենք, որ Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության պահպանմանն աջակցելու պարտավորություն դեռևս 1840 թ. ստանձնել էին Ռուսաստանի, Մեծ Բրիտանիայի, Ավստրիայի և Պրուսիայի կառավարությունները՝ Լոնդոնում թուրքական իշխանությունների հետ ստորագրած համաձայնագրով: Այդ պարտավորության ոգուն համահունչ 1878 թ. ստորագրվել էր Բեռլինի տրակտատը, որով էլ Հայկական հարցը վերածվեց միջազգային դիվանագիտության քննարկման առանձին հիմնահարցի: Եթե 1878 թ. Բեռլինի վեհաժողովից հետո մինչև Առաջին համաշխարհային պատերազմն ընկած ժամանակահատվածում Արևմտյան Հայաստանի և հայերի նկատմամբ եվրոպական տերությունների քաղաքականությունը գլխավորապես պայմանավորված էր եղել Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականությունը չխախտելու և նրա անձեռնմխելիությունը պահպանելու սկզբունքով, ապա կայսրության մուսոն Առաջին համաշխարհային պատերազմ որպես կայգերական Գերմանիայի դաշնակից, ցրեց Անտանտի տերությունների վերջին հույսերն անգամ թուրքական պետության չեզոքությունն ապահովելու մասին: Վերջիններս, առանց հապաղելու, մի կողմ դրեցին Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության պահպանման դիվանագիտական սկզբունքը: 1914 թ. սեպտեմբեր-նոյեմբերին առաջ քաշվեց թուրքական «ժառանգության», այ-

սինքն՝ ասիական տիրույթների բաժանման խնդիրը, որի բաղկացուցիչ մասերից մեկն էլ Արևմտյան Հայաստանի ու Կիլիկիայի ապագայի հարցն էր: Մեծ Բրիտանիայի վարչապետ Ասքվիթի բնորոշմամբ՝ «ժամանակի հարց էր, մինչև որ թուրքական կայսրության անկայունությունը Ասիայում ևս նախապատրաստեր նրա անկումը»⁵: Այդ օրերին ցար Նիկոլայ II-ը ևս հայտարարեց, որ «Թուրքիային վերջ պետք է տրվի»⁶: Շուտով Լոնդոնի և Պետերբուրգի կառավարությունների հայտարարություններին միացավ Փարիզի կառավարությունը: Այս հանգամանքը Հայկական հարցի ընթացքի վրա ազդող լուրջ գործոն դարձավ:

1915 թ. փետրվարին բրիտանական և ֆրանսիական ռազմածովային ուժերի իրականացրած Դարդանեղի գործողությունը, ինչպես նաև թուրքական պետության դեմ պատերազմին մասնակցության վերաբերյալ Լոնդոնի ու Փարիզի և Աթենքի կառավարությունների միջև բանակցությունները արագացրին Օսմանյան կայսրության ասիական տիրույթների բաժանման հարցի բարձրացումը: «Այլ պայմաններում, իրավացիորեն նկատում է ակադեմիկոս Գ. Գալոյանը, այդ պայքարը կարող էր ոչ միայն խզել հարաբերությունները, այլև պատերազմի պատճառ դառնալ դաշնակիցների միջև: Սակայն գերմանական բլոկի սպառնալիքը ստիպում էր նրանց առժամանակ ետին պլան մղել իրենց միջև գոյություն ունեցող հակասությունները և միավորել ուժերն ընդհանուր թշնամու դեմ: Այժմ դաշնակիցները մեծ նշանակություն էին տալիս 1914 թ. օգոստոսի 25 (սեպտեմբերի 5)-ին կնքված համաձայնագրին, որով պարտավորվել էին, «որպեսզի ամբողջ պատերազմի ընթացքում իրենցից որևէ մեկն անջատ պայմանագիր չկնքեր թշնամու հետ»⁷:

1915 թ. մարտ-ապրիլին հուշագրերի փոխանակմամբ, ապա ապրիլի 26-ին Լոնդոնի գաղտնի համաձայնագրի ստորագրումով Ռուսաստանի, Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի կառավարությունները հստակ ձևակերպեցին ոչ միայն Կոստանդնուպոլսի և սևծովյան նեղուցների

⁵ Քաղվածքն ըստ **Նասիպեան Ա.**, Բրիտանիա եւ Հայկական հարցը 1915-1923, Պեյրուք, 1994, էջ 70:

⁶ **Գալոյան Գ.**, նշվ. աշխ., էջ 670:

⁷ **Գալոյան Գ.**, նշվ. աշխ., էջ 669-670:

կարգավիճակը, այլև կայսրության ասիական տիրույթները մասնատելու իրենց մտադրությունը: Արևմտյան Հայաստանն անցնելու էր Ռուսաստանին, Կիլիկիան՝ Ֆրանսիային:

Ամբողջացնելով վերոշարադրյալ փաստերը, ինչպես նաև ամփոփելով անգլո-ֆրանս-ռուսական գաղտնի բանակցությունների նպատակի ու նշանակության վերաբերյալ պատմագիտության մեջ մինչ օրս արտահայտված տեսակետները՝ հետխորհրդային հայ պատմաբանները ևս ընդունում են, որ 1878-1914 թթ. ընդգրկող ժամանակահատվածում թուրքական պետության նկատմամբ եվրոպական Մեծ տերությունների քաղաքականության հիմքում դրված էր Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության պահպանման և անձեռնմխելիության ապահովման սկզբունքը: Միաժամանակ, հիմնախնդիրը դիտարկելով ճնշված ժողովրդի ազատագրական պայքարի և դրա վերաբերյալ միջազգային իրավունքի հիմնարար նորմերի ու սկզբունքների տեսանկյունից՝ նրանք հավելում են, որ 1878-1914 թթ. ընդգրկող ժամանակահատվածում Մեծ տերություններն անտեսում էին ճնշված ժողովրդի ինքնորոշման իրավունքը, իսկ ճակատագիրը դիտարկում որպես իշխող պետության սահմաններում ճնշված ժողովրդի ֆիզիկական անվտանգության ապահովման, այդ նպատակով հումանիտար ինտերվենցիայի, որպես տվյալ ազգային խմբի անդամների անձնական և ունեցվածքային իրավունքների պաշտպանության հարց: Առաջին համաշխարհային պատերազմը սկիզբ դրեց Օսմանյան կայսրության ասիական տիրույթների բաժանման ծրագրի մշակման դիվանագիտական գործընթացին:

➤ Օսմանյան կայսրության ասիական տիրույթների բաժանման վերաբերյալ Մայքս-Պիկոյի ծրագիրը պետք է դիտարկել որպես նախնական համաձայնություն կողմերի միջև և ոչ բնավ որպես վերջնական դիվանագիտական փաստաթուղթ, քանի որ Անտանտի տերությունները դեռևս 1914 թ. օգոստոսի 25 /սեպտեմբերի 5/-ի համաձայնագրով ստանձնել էին թշնամու հետ անջատ պայմանագրեր չկնքելու, ինչպես նաև խաղաղության բոլոր պայմանները միմյանց հետ համաձայնեցնե-

լու փոխադարձ պարտավորություններ⁸: Հետևաբար, ցանկացած ծրագիր ու որոշում պատերազմի կամ ապագա հաշտության վերաբերյալ, որն ընդունվել էր Անտանտի տերությունների մի մասի կողմից ու չէր քննարկվել և համաձայնեցվել դաշինքի բոլոր անդամների միջև, չէր կարող համարվել վերջնական: Սայքս-Պիկոյի մշակած նախագիծը դարձավ հիմնարար փաստաթուղթ, որը դրվեց թե՛ հետագա բանակցությունների, թե՛ համաձայնագրերի, այնուհետ՝ նաև Սևրի հաշտության պայմանագրի հիմքում:

➤ Ինչպես գիտենք, 1915 թ. ստորագրված անգլո-ֆրանս-ռուսական հուշագրերի և Լոնդոնի համաձայնագրի հիման վրա նույն թվականի նոյեմբերին բրիտանական ու ֆրանսիական կառավարությունների միջև դաշնակից Ռուսաստանից անջատ բանակցություններ էին սկսվել Օսմանյան կայսրության ասիական տիրույթների բաժանման նպատակով: Անհանգստացած լինելով Կովկասյան ռազմաճակատում ռուսական բանակի հաղթանակներով՝ Լոնդոնի ու Փարիզի կառավարությունները շահագրգռված էին նախապես հստակեցնել ու սահմանազօծել իրենցից յուրաքանչյուրին անցնելիք տարածքները և կանխել Ռուսաստանի դիրքերի ամրապնդումը Մերձավոր Արևելքի այն մասերում, որոնց նկատմամբ լուրջ հետաքրքրություններ ունեին Մեծ Բրիտանիան ու Ֆրանսիան: Բանակցությունների արդյունքում 1916 թ. հունվարի 3-ին կայացավ նախնական համաձայնություն, որը կրում էր նախագծի հեղինակներ Բեյրութի ֆրանսիական նախկին գլխավոր հյուպատոս Ֆրանսուա Ժորժ Պիկոյի և բրիտանական կառավարության արտակարգ լիազոր ներկայացուցիչ, Մերձավոր Արևելքի փորձագետ Մարկ Սայքսի անունները՝ Սայքս-Պիկոյի համաձայնագիր: Վերջինս 1916 թ. փետրվարի 25 /մարտի 9/-ին հաղորդվեց Ռուսաստանի ցարական կառավարությանը, որպես դաշնակից երկրների պատրաստած անակնկալ: Ինչպես գիտենք, հայկական տարածքների բաժանման հարցում

⁸ Համաձայնագիրը ստորագրել էին Լոնդոնում ռուսական դեսպան Ա. Բենկենդորֆը, Մեծ Բրիտանիայի արտգործնախարար Է. Գրեյը և Լոնդոնում ֆրանսիական դեսպան Պ. Կամբոնը: Համաձայնագրի ամբողջական բովանդակությունը տե՛ս Сборник договоров России с другими государствами (1856-1917), էջ 425:

Ռուսաստանի արտգործնախարարությունը դժգոհ էր, որ Ուրմիա լճի հյուսիսային առափնյա տարածքը ու Բիթլիսի լեռնանցքները ընդգրկվել էին Ֆրանսիային անցնելիք գոտում: Թեև տեղագրական տեսակետից այդ սահմանը «բնական էր, որովհետև ընթանում էր գլխավոր լեռնազանգվածի ուղղությամբ, սակայն քաղաքական ու ռազմագիտական կշռադատությունների տեսակետից», արտգործնախարար Ս. Մազունովի համոզմամբ, «այն հազիվ թե կարելի էր ընդունելի համարել»⁹: Ի վերջո, երկարատև ու լարված բանակցությունների արդյունքում բրիտանական ու ֆրանսիական կողմը տեղի տվեց: Հուշագրերի փոխանակմամբ 1916 թ. ապրիլի 13 /26/-ին, մայիսի 9 - 16-ին և մայիսի 10 /23/-օգոստոսի 19 /սեպտեմբերի 1/-ին ստորագրվեցին համապատասխանաբար ռուս-ֆրանսիական, անգլո-ֆրանսիական և ռուս-անգլիական համաձայնագրերը՝ Օսմանյան կայսրության ասիական տիրույթները միմյանց միջև մասնատելու վերաբերյալ: Հետագայում թուրքական «ժառանգության» բաժանման ծրագիրն միացավ նաև Իտալիան՝ իր տարածքային պահանջներն ամրագրելով Սեն-Ժան-դե Մորիենի անգլո-ֆրանս-իտալական գաղտնի համաձայնագրում¹⁰:

➤ Ասիական Թուրքիայի բաժանման վերաբերյալ անգլո-ֆրանս-ռուս-իտալական համաձայնագրերն ունեին առավել լուրջ միջազգային-իրավական նշանակություն, քան դրանց խորհրդային պատմագիտության մեջ տրված գնահատականն է: Ինչ խոսք, Անտանտի տերությունների մշակած ծրագիրը որևէ ընդհանուր բան չունեւ Հայկական հարցի բովանդակության հետ: Ընդհակառակն, այն վկայում էր Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի քաղաքականության նվաճողական, գաղութատիրական, հակահայկական էության մասին: Այդուհանդերձ, կարևոր է նկատի ունենալ, որ Անտանտի տերությունների համաձայնագրերով ճանաչվում էր թուրքական ցեղասպան պետության իշխանությունից Արևմտյան Հայաստանը Անտանտի տերություններից մեկի

⁹ «Հայաստանի ավտոնոմիան» և Անտանտան: Վավերագրեր իմպերիալիստական պատերազմի շրջանից, Ա. Հովհաննիսյանի առաջաբանով, Ե., 1926, փաստ. № 43, էջ 30:

¹⁰ Հովհաննիսյան Լ., նշվ. աշխ., էջ 98:

կողմից զինագրավման միջոցով ազատելու անհրաժեշտությունը, ինչը արդեն 1916-1917 թթ. իր արտահայտությունը գտավ պատերազմի նպատակների, ճնշված ժողովուրդների ազատագրության և ինքնորոշման մասին Համաձայնության երկրների, դրանց կառավարությունների, արտաքին գերատեսչությունների ղեկավարների հրապարակային ելույթներում ու պաշտոնական հայտարարություններում¹¹: Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո ճնշված ժողովուրդների ազատագրության և կարգավիճակի հարցերը դրվեցին Օսմանյան կայսրության հետ հաշտության պայմանագրի հիմքում:

Այսպիսով, 1915-1916 թթ. անգլո-ֆրանս-ռուսական գաղտնի բանակցություններով և դրանց արդյունքում ստորագրված համաձայնագրերով միջազգային դիվանագիտության մեջ սկիզբ դրվեց քաղաքական նոր մոտեցման, որը նախադրյալներ էր ստեղծում թուրքական տիրապետությունից հպատակ ժողովուրդների ազատագրման համար:

Ներկայացված դրույթները, բացառությամբ վերջինի, լավագույնս ներկայացված են հայ պատմաբանների ուսումնասիրություններում: Թերևս, ամրապնդման կարիք ունի դրույթներից վերջինը, քանի որ այն բացատրում է Անտանտի տերությունների նվաճողական քաղաքականության բովանդակությունը և պատճառահետևանքային կապը Փարիզի հաշտության միջազգային վեհաժողովում ճնշված ժողովուրդների ճակատագրի հարցի քննարկումների հետ:

ЛИЛИТ ОГАНЕСЯН

Институт истории НАН РА

ОСВЕЩЕНИЕ АНГЛО-ФРАНКО-РУССКИХ ТАЙНЫХ ПЕРЕГОВОРОВ 1915-1916 ГГ. В ПОСТСОВЕТСКОЙ АРМЯНСКОЙ ИСТОРИОГРАФИИ

Восстановление независимой армянской государственности создало предпосылки для продолжения исследования научных проблем, касающихся освобождения и независимости Западной Армении, позиций и дипломатической борьбы Великих держав в отношении этих вопросов, а также для переоценки результатов уже проделанной научной работы и придания им целостного вида. Англо-франко-русские тайные переговоры 1915-1916 гг., а также вытекающие из них вопросы будущего административно-политического статуса и устройства Западной Армении и Киликии были освещены рядом армянских историков в постсоветский период. В условиях новой общественно-политической обстановки их исследования обеспечили логическое развитие основных тезисов, разработанных советскими историками по данным вопросам. Более того, они восполнили тот научно-теоретический базис, который необходим для перемещения на практическую-конструктивную плоскость справедливого требования армянского народа о возвращении прав на свою историческую родину.

LILIT HOVHANNISYAN

Institute of History of NAS RA

THE INTERPRETATION OF 1915-1916 ANGLO-FRENCH-RUSSIAN SECRET NEGOTIATIONS IN POST-SOVIET ARMENIAN HISTORIOGRAPHY

The reestablishment of independent Armenia created the necessary prerequisites for liberating Western Armenia as well continuing the observation

¹¹ Այդ մասին տե՛ս Գеноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества. Документы и комментарий, т. 2, ч. 2. Составитель, ответственный редактор, автор предисловия и комментария доктор юридических наук, профессор **Ю.Г. Барцеров**, М., 2005, с. 225-226.

of the policy and diplomatic struggle of powerful States on such issues. It also created grounds for completing and reevaluating the results of the works done already. In post-soviet years a number of Armenian historians touched upon the 1915-1916 Anglo-French-Russian secret negotiations on division of Asian provinces of Ottoman Empire and analyzed the future administrative-political status and structure of Western Armenia and Cilicia in their works. Under the new public-political conditions those observations created grounds for logical development of the directions put forward by Soviet-Armenian historians on the issues mentioned above. Moreover, those directions came to prove that it is high time to transfer scientific-theoretical proposition into practical stage of the issue, i.e. the Armenians have just demand to return to their historical hometown.

ՀԱՄՈՍՈՒՔԻԱՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ

ԿՈՍՏԱՆՂՆՈՒՊՈԼՍՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊՍԿԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ՊՍԿԻՐԱՎՆԵՐԻ ՕՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ (1918 թ. ՀՈՒՆԻՍ-ՆՈՅԵՍԲԵՐ)

1918 թ. մայիսին անկախության հռչակումից հետո Հայաստանի Հանրապետությունը կանգնեց տարածքային-սահմանային վեճերի լուծման գերխնդրի առջև: Այս խնդիրը դարձավ նորանկախ հայկական պետության և նրա հարևանների միջև բարիդրացիական փոխհարաբերություններ հաստատելու անկյունաքարը:

1918 թ. հունիսի 4-ին Բաթումում Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի հետ Օսմանյան կայսրության կնքած պայմանագրերը քննարկվում էին Բեռլինում և Վիեննայում: Կայսրության դաշնակիցներ Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի համար ընդունելի չէր, որ նշյալ ակտը կատարվել էր առանց իրենց մասնակցության: Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի ղեկավարներին հանձնարարվել էր նախատեսվող կոնֆերանսում համախորհուրդ հանդես գալ: Գերմանացիները

տրամադիր էին կոնֆերանսին հրավիրել նաև Խորհրդային Ռուսաստանի և Ուկրաինայի պատվիրակություններին, որոնք ստորագրել էին Բրեստի հաշտությունը: Առանց Ռուսաստանի հնարավոր չէր վճռել ռուսական նախկին տարածքների հարցը: Մյուս կողմից՝ Ռուսաստանի մասնակցությունը կարող էր հակակշիռ լինել թուրքերի՝ չափ ու սահման չունեցող պահանջների նկատմամբ: Կոնֆերանսը պետք է թուրքերին ստիպեր կատարելու Բրեստի պայմանները, որից Օսմանյան կայսրությունը հրաժարվում էր՝ հակառակ նրան, որ 1918 թ. մարտին ինքն էր դա պահանջում Տրապիզոնում՝ Անդրկովկասյան կառավարությունից¹:

Ա. Խատիսյանն իր օրագրության մեջ գրում է, որ 1918 թ. հունիսի 9-ին Հայոց ազգային խորհուրդը Խալիլ բեյից կոնֆերանսին մասնակցելու հրավեր ստացավ: Խորհրդաժողովը բացվելու էր հունիսի 25-ին Կոստանդնուպոլսում՝ Քառյակ դաշինքի (Գերմանիա, Ավստրո-Հունգարիա, Բուլղարիա և Օսմանյան կայսրություն) և Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի և Լեռնականների պետության մասնակցությամբ:

Հունիսի 12-ին Հայոց ազգային խորհրդի նիստում քննարկվեց թուրքերի հրավերի հարցը և որոշվեց Ավետիս Ահարոնյան (պատվիրակության ղեկավար), Ալեքսանդր Խատիսյան, Միքայել Պապաջանյան (անդամներ) կազմով պատվիրակություն ուղարկել Կ. Պոլիս²: Հունիսի 13-ին հայկական պատվիրակության հիմնական կազմը մեկնեց Թիֆլիսից և հունիսի 19-ին հասավ Կ. Պոլիս, իսկ պատվիրակության մյուս մասն այստեղ ժամանեց հունիսի 24-ին: Ալ. Խատիսյանի վկայությամբ՝ հայկական պատվիրակության նպատակն էր «ցույց տալ մեր անվիճելի իրաւունքները Ախալքալաքի, Լոռիի, Չանգեզուրի, Ղարաբաղի եւ Նախիջևանի վրայ, որոնց վրայ յաւակնութիւններ ունէին մեր կովկասեան հարեւանները»³:

¹ Ավետիսյան Հ., Հայկական հարցը 1918 թվականին, Երևան, 1997, էջ 258:

² Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 222, ց. 1, գ. 141, թ. 253-254:

³ Խատիսյան Ա., Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Բեյրութ, 1968, էջ 99:

Կ. Պոլսում մնալով մինչև նոյեմբերի 1-ը՝ հայկական պատվիրակությունը բազմաթիվ հանդիպումներ ունեցավ Մեհմեդ VI սուլթանի, թուրք բարձրաստիճան պաշտոնյաների (Թավեաթ, Էնվեր, Ջեմալ, Խալիլ փաշաների, արտաքին գործերի նախարար Նեսիմիի), թուրքական մայրաքաղաքում Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի, Բուլղարիայի, Նիդերլանդների, Շվեդիայի, Իսպանիայի, Դանիայի դիվանագիտական ներկայացուցիչների հետ, սակայն այդպես էլ որոշակի արդյունքի չհասավ, իսկ կոնֆերանսը, որին մասնակցելու համար Կ. Պոլիս էին ժամանել հայ պատվիրակները, ձգձգվելուց հետո այդպես էլ չգումարվեց թուրք-գերմանական հակասությունների և ռազմաճակատներում Քառյակ դաշինքի երկրների բանակների պարտությունների պատճառով: 1918 թ. հոկտեմբերի 30-ին Միջերկրական ծովի Լեմնոս կղզու Մուղղոս նավահանգստում Դաշնակից երկրների և Օսմանյան կայսրության միջև կնքված զինադադարից երկու օր անց, չորս ամսից ավել օսմանյան մայրաքաղաքում անօգուտ մնալուց հետո, Ա. Ահարոնյանի գլխավորած պատվիրակությունը մեկնեց Կ. Պոլիս:

Հայկական պատվիրակության գործունեության ուսումնասիրման համար կարևոր աղբյուրներ են հանդիսանում պատվիրակության անդամների օրագրությունները: Օրագրություններ են հեղինակել ՀՀ արտաքին գործերի նախարար և պատվիրակության անդամ Ալեքսանդր Խատիսյանը, պատվիրակության առաջին քարտուղար Հակոբ Քոչարյանը և պատվիրակության քարտուղար ու դիվանագիտական ցրիչ Լևոն Լիսիցյանը: Ընդհանրապես, պատմական աղբյուրների շարքում կարևոր տեղ են գրավում օրագրությունները: Իսկ երբ օրագրության հեղինակը պետական-քաղաքական գործիչ, դիվանագետ է, առավել կարևորվում են նրա գրառումները: Այս դեպքում օրագրության ուսումնասիրությունն ունենում է ոչ միայն գիտական, այլ նաև ճանաչողական ու կիրառական նշանակություն:

Նշված օրագրությունները պատշաճ ուշադրության չեն արժանացել Հայաստանի Առաջին Հանրապետության պատմությունն ուսումնասիրող մասնագետների կողմից: Մի քանի բացառություններով՝ նույ-

նիսկ նրանցից ամենաարժեքավորը՝ Ա. Խատիսյանի օրագրությունը, մինչև վերջերս ծանոթ չէր ուսումնասիրողների լայն շրջանակներին: Ալեքսանդր Խատիսյանի և Հակոբ Քոչարյանի օրագրությունները 2010 թվականին հրատարակվել են Աստվածատուր Խաչատրյանի «Արևելահայ և թուրք դիվանագիտական հարաբերությունները» գրքի հավելվածում⁴: Ա. Խատիսյանի օրագրությունը հրատարակված է Հայաստանի ազգային արխիվում պահվող ռուսերեն մեքենագիր պատճենի, իսկ Հ. Քոչարյանինը՝ հայերեն ինքնագրերի հիման վրա: Լևոն Լիսիցյանի օրագրությունն անտիպ է: Նրա ռուսերեն ինքնագիրը պահվում է Հայաստանի ազգային արխիվի ֆ. 428-ում (Լիսիցյանների ընտանեկան ֆոնդ):

Լ. Լիսիցյանի օրագրությունը կարևոր տեղեկություններ է պարունակում Ա. Ահարոնյանի ղեկավարած պատվիրակության՝ Թիֆլիսից Կ. Պոլիս ճանապարհորդության վերաբերյալ: Օրագրությունն ունի հետևյալ խորագիրը. «Հայկական և վրացական պատվիրակությունների՝ Կ. Պոլիս ուղևորության մասին»:

Լևոն Լիսիցյանի օրագրությունը սկսվում է հունիսի 13-ին, գիշերվա ժամը 2⁰⁰-ին Թիֆլիսից ՀՀ պատվիրակության մեկնելու իրադարձությունների լուսաբանմամբ: Նա գրում է, որ մինչև գիշերվա ժամը 11⁰⁰-ը Հայոց ազգային խորհուրդը դեռևս տեղյակ չէր պատվիրակության մեկնելու ժամկետի մասին: Միայն Վրաստանի ներքին գործերի նախարար Նոյ Ռամիշվիլիի հետ հեռախոսազրույցից է Ա. Խատիսյանը տեղեկանում, որ վրացական պատվիրակությունը պատրաստվում է ճանապարհվել Փոթի, քանի որ շոգենավը հունիսի 14-ին մեկնելու է Կ. Պոլիս: Փաստորեն, վրացի գործիչները «մոռացել էին» իրենց երեկվա բախտակիցներին տեղեկացնել մեկնելու ժամկետների մասին: Այս հանգամանքը զայրացնում է ՀՀ ղեկավարներին: Լ. Լիսիցյանի գրառումից տեղեկանում ենք, որ ՀՀ պատվիրակության անդամներն այնքան հապշտապ

⁴ **Խաչատրյան Աստվածատուր**, Արևելահայ և թուրք դիվանագիտական հարաբերությունները, Երևան, 2010, հավելված, էջ 137-203, 204-217, 218-226:

էին պատրաստվել, որ գեներալ Գ. Ղորղանյանը, Ա. Աղաբաբյանը և Լ. Լիսիցյանը նույնիսկ համազգեստ հագնելու ժամանակ չեն ունեցել:

Արդեն հունիսի 14-ին հայկական և վրացական պատվիրակություններին տեղափոխող շոգենավը ծով է դուրս գալիս: Լիսիցյանը պատվիրակների հետաքրքիր բնութագրումներ ունի: Այսպես՝ գրում է. «Գվազավայի դեմքի արտահայտությունը շատ նմանություններ ունի Ն. Ռամիշվիլիի հետ. էգոիզմ, խորամանկություն, չարություն»⁵:

Օրագրությունն արժեքավոր աղբյուր է հայկական և վրացական պատվիրակությունների փոխհարաբերությունների, նորանկախ Հայաստանի և Վրաստանի միջև եղած հակասությունների ուսումնասիրման համար: Այսպես՝ հունիսի 16-ի ամսաթվով օրագրողն արձանագրել է վրացական պատվիրակության անդամ Պավլե Ինգորովայի հետ իր գրույցի մանրամասները: Վերջինս կրկին առաջ է քաշել հունիսի 11-ին հայ և վրացի գործիչների հանդիպման ժամանակ վրացական կողմի բարձրաձայնած տեսակետը, թե Անդրկովկասում հնարավոր չէ երկու ուժեղ քրիստոնյա պետություն ստեղծել, ուստի հենց հայերի օգտից է բխում Ախալքալաքն ու Բորչալուն Վրաստանին միացնելը⁶: Լ. Լիսիցյանը մեջբերում է գրույցին ներկա վրացական պատվիրակության զինվորական խորհրդական գեներալ Իլյա Օդիշելիձեի խոսքերը. «Դուք պետք է հրաժարվեք Ախալքալաքից ու Փամբակի կիրճից, եթե չեք ցանկանում, որ մեր միջև թշնամանք և հատկապես պատերազմ լինի»⁷: Ժամանակի շատ վրացի գործիչների նման՝ վերջինս ևս համարում էր, թե հայերը «գաղութացրել են Վրաստանը» և հետո տարածքային պահանջներ են ներկայացնում: Վիճելի հայտարարված տարածքների հայկականությունը փաստող Լ. Լիսիցյանի փաստարկներին ի պատասխան, վրացի գեներալը հիշեցնում էր Բորչալուի նկատմամբ նաև Ադրբեջանի ունեցած հավակնությունների մասին՝ կարծես հայերին վախեցնելու

⁵ ՀԱԱ, ֆ. 428, ց. 1, գ. 89, թ. 13:

⁶ Մանրամասն տե՛ս **Սուքիասյան Զ. Գ.**, Հայ-վրացական սահմանավեճը փաստաթղթերի լեզվով, Մաս առաջին. Միջպետական սահմանի հարցը 1918 թ. հունիս-հուլիսին, «Վեմ», 2012, N 4, էջ 201-203:

⁷ ՀԱԱ, ֆ. 428, ց. 1, գ. 89, թ. 14:

համար հայտարարելով, թե Վրաստանին առավել ձեռնտու կարող է լինել Բորչալուի գավառի տարածքում «ադրբեջանցիներին զիջել այդ «միջանցքը»», որով Հայաստանի և Վրաստանի միջև բուֆերային գոտի կստեղծվեր⁸:

Փաստորեն, վրացական ղեկավար շրջանակների մոտ եղած նման մոտեցումը ոչ մի լավ բան չէր խոստանում: Նաև այս մտածելակերպն ամիսներ անց հանգեցրեց վրաց-հայկական պատերազմի:

Լ. Լիսիցյանն արձանագրել է նաև Պ. Ինգորովայի հետ գրույցի մեկ այլ հետաքրքրական դրվագ: Վերջինս պատմել է, որ Բաթումի բանակցություններին մեկնելու ճանապարհին գնացքում ինքը Նասիբ-բեկ Ուսուբբեկովին և Հաբիբովին հարցրել է, թե «Ադրբեջանի տարածքում այդքան մեծաթիվ հայ ներառելուց» չեն վախենում, ինչին հետևյալ պատասխանն է հաջորդել. «Դա իրենց չի անհանգստացնում: Իրենք սկզբում կզինաթափեն հայերին, իսկ հետո մեկ զիջերվա մեջ նրանց հարցերը կլուծեն»: Զրույցի վերջում Ինգորովան շեշտել է, որ բառացի փոխանցում է ադրբեջանցի գործիչների խոսքերը և հարկ եղած դեպքում դրանք կվերահաստատի⁹:

Վերը բերվածը թաթար-ադրբեջանցիների ջարդարար քաղաքականությունը փաստող արժեքավոր վկայություն է: Փաստորեն, «Ադրբեջան» պետությունը ստեղծելու նախօրեին նրա ապագա ղեկավարները ծրագրել էին նշյալ պետության տարածքում մնացած հայերի սպանող: Ինչպես հայտնի է, նշյալ ծրագիրն իրականացվեց օսմանյան թուրքերի անմիջական մասնակցությամբ, որոնք Արևմտյան Հայաստանում ջարդերի «մեծ փորձ» էին ձեռք բերել¹⁰:

Լիսիցյանը ներկայացնում է պատերազմից ավերված Կոստանցան, ուր պատվիրակությունը կանգ էր առել հունիսի 17-ին, հաղորդում գերմանացիների կողմից ռումին ռազմագերիներին դաժանորեն աշխա-

⁸ Նույն տեղում, թ. 15:

⁹ Նույն տեղում, թ. 16:

¹⁰ Մանրամասն տե՛ս «Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918-1920 թթ., փաստաթղթերի և նյութերի ժողովածու» գիրք I, Երևան, 2003, գիրք II, Երևան, 2012:

տեցնելու մասին¹¹: Այնուհետև նկարագրում է հունիսի 19-ին, ցերեկվա ժամը 4⁰⁰-ին պատվիրակության ժամանումը Կ. Պոլիս, Ահմեդ Մուխթար բեյի կողմից նրանց դիմավորումը, հյուրանոցում պատվիրակության անդամների տեղավորվելը: Օրագրությունն ավարտվում է պատվիրակության՝ Կ. Պոլիս հասնելու հաջորդ օրվա՝ հունիսի 20-ի, իրադարձություններով՝ պատվիրակության առօրյայի, կատարվող նախապատրաստական աշխատանքների նկարագրմամբ¹²:

Օրագրությունն արժեքավոր աղբյուր է նաև տվյալ ժամանակի առօրեական պատմության ուսումնասիրման համար: Այստեղ անդրադարձ կա նույնիսկ պատվիրակության անդամների համար հագուստ, անհրաժեշտ պարագաներ ձեռք բերելու մասին: Այն տեղեկություններ է պարունակում նաև պատվիրակների թուլությունների, բնավորության զծերի մասին:

Ալեքսանդր Խատիսյանի օրագրությունն անփոխարինելի աղբյուր է Կ. Պոլսի հայ-թուրքական բանակցություններն ուսումնասիրելու համար: Հեղինակն օր առ օր գրի է առել թուրք գործիչների ու Կ. Պոլսում հավատարմագրված օտարազգի դիվանագետների հետ հանդիպումների մանրամասները: Օրագրությունում արձանագրված է նաև թուրքական ջարդարար բանակներից ցիրուցան եղած հայ փախստականներին հայրենի օջախներ վերադարձնելուն միտված պատվիրակության գործողությունները¹³:

Ա. Խատիսյանը չափազանց չեզոք կերպով, առանց հուզական ապրումների, անքննադատ ներկայացնում է Կ. Պոլսում երիտթուրք ջարդարանների առջև հայ պատվիրակների պահվածքը, երբ նրանք, մի բուռ արևելահայերի փրկության համար այլ տարբերակ չտեսնելով, ավելի քան մեկուկես միլիոն հայի սպանող կազմակերպած Թալեաթին, Էնվերին, Ջեմալին, Խալիլին ու մյուս թուրք բարձրաստիճան պաշտոնյաներին երախտագիտություն էին հայտնում հայ ժողովրդի նկատմամբ

¹¹ ՀԱԱ, ֆ. 428, ց. 1, գ. 89, թ. 16:

¹² Նույն տեղում, թ. 17-19:

¹³ "Дневник А. И. Хатисяна". – Խաչատրյան Աստվածատուր, Արևելահայ և թուրք դիվանագիտական հարաբերությունները, Երևան, 2010, հավելված, էջ 173, 179-180:

բարեկամական վերաբերմունքի, իսկ սուլթան Մեհմեդ VI-ին՝ «հայերի հանդեպ ունեցած բարեգթության» համար¹⁴: Պատվիրակության այս քայլերը քննադատվել է ինչպես ժամանակակիցների, այնպես էլ մասնագետ-պատմաբանների կողմից:

Ա. Խատիսյանի օրագրությունը տեղեկություններ է պարունակում Կ. Պոլսում Ղարաբաղի խնդրի քննարկումների մասին: Օրագրությունից ակնհայտ երևում է, որ ադրբեջանցիները մտադրված չէին հեշտությամբ զիջել Ղարաբաղը և ցանկացած ձևով պայքարում էին նրա համար: Խատիսյանը բազմաթիվ օրինակներ է բերում այդ հարցում Օսմանյան կայսրության կողմից Ադրբեջանին ցուցաբերված օժանդակության մասին: Օրագրությունից առավել քան հստակ երևում է, թե ինչպես էր կայսրությունը պաշտպանում նորահռչակ Ադրբեջանական Հանրապետության շահերը, իսկ կովկասյան թուրք-թաթարները (ադրբեջանցիներ) Անդրկովկասում «հինգերորդ շարասյան» դեր էին կատարում¹⁵: Մեր օրերի հետ համեմատելով՝ միանշանակ կարող ենք եզրակացնել, որ շուրջ 100 տարի անց էական փոփոխություն տեղի չի ունեցել նշյալ երկու պետությունների ու ժողովուրդների քաղաքականության մեջ:

Օրագրությունում արտացոլված է 1918 թ. աշնանը թուրքական կառավարող շրջաններում Հայաստանի Հանրապետության նկատմամբ եղած վերաբերմունքում տեղի ունեցած փոփոխությունը, մեծ վեզիր Թալեաթի, այնուհետև՝ հոկտեմբերի 14-ին, նրան փոխարինած Ահմեդ Իզզեթ փաշայի կաբինետների՝ ՀՀ պատվիրակության հետ համաձայնության եզրեր գտնելու փորձերը: Տեսնում ենք, որ թուրք ղեկավարները, զգալով պատերազմում Օսմանյան կայսրության մոտալուտ պարտությունը, ձգտում էին խուսափել ապագա հաշտության վեհաժողո-

¹⁴ Նույն տեղում, էջ 187: Այս մասին մանրամասն տե՛ս **Բաղայան Խ.**, Գերմանա-թուրքական օկուպանտները Հայաստանում 1918 թվականին, Երևան, 1962:

¹⁵ "Дневник А. И. Хатисяна", с. 193, 195-198.

վում Հայկական հարցի պատճառով կրելիք պատասխանատվությունից¹⁶: Սա հստակ էր նաև հայ պատվիրակների համար:

Մուդրոսի զինադադարի առնչությամբ Խատիսյանն օրագրում արձանագրել է, որ հայերն ու հույները ոգևորված էին Անտանտի հաջողություններով: Նա ներկայացնում է ամենուր տիրող ուրախությունը. թերթերը բացեիքաց հարձակվում էին երիտթուրքերի վրա, թերթերով և հաղորդակցության այլ միջոցներով հայտարարվում էր, որ Թալեայթը, Էնվերը, Ջեմալը, Նազըմը, Բեհաեդդին Շաքիրը փախել են: Հայ պատվիրակների ուրախությունը մեծ էր, Կ. Պոլսի հայերի վախճանաբար նվագում էր, նրանք խմբերով այցելում էին ՀՀ պատվիրակությանը¹⁷: Այնինչ, նախկինում պոլսահայերը պատվիրակության անդամների հետ շփումներից խուսափում էին:

Առանց ձեռքբերման՝ Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը 1918 թ. նոյեմբերի 2-ին թողեց համաշխարհային պատերազմում պարտված Օսմանյան կայսրության մայրաքաղաքը: Խատիսյանն օրագրությունն ավարտում է Կ. Պոլսից դեպի Բաթում հայկական պատվիրակության ճանապարհորդության նկարագրությամբ:

Հակոբ Քոչարյանի հեղինակած օրագրությունները երկուսն են՝ փոքր ընդմիջումով շարունակելով մեկը մյուսին: Առաջինի խորագիրն է՝ «Օրագիր հայկական խաղաղարար պատվիրակության» և ընդգրկում է 1918 թ. հունիսի 13-ից մինչև օգոստոսի 31-ը, իսկ երկրորդը վերնագրված է «Հայկական խաղաղարար պատվիրակության ունեցած տեսակցությունների համառոտ ամփոփում»՝ ընդգրկելով սեպտեմբերի 2-19-ը: Ինչպես երևում է նաև վերնագրերից, սրանք ոչ թե անձնական օրագրություններ են, այլ՝ ՀՀ պատվիրակության օրագրերը՝ կազմված պատվիրակության քարտուղարի կողմից: Ի տարբերություն Ա. Խատիսյանի և Լ. Լիսիցյանի օրագրությունների՝ սրանք պետք է վերապահումով օրագրություն համարել: Այդուհանդերձ, պատվիրակությանն առնչվող առանձին փաստեր ճշգրտելու տեսակետից կարևոր աղբյուրներ են:

¹⁶ Նույն տեղում, էջ 194, 198-199:

¹⁷ Նույն տեղում, էջ 201-202:

Առաջին օրագրությունում նախ համառոտ անդրադարձ է կատարվում հունիսի 13-19-ին հայկական պատվիրակության ճանապարհորդությունը Թիֆլիսից դեպի Կ. Պոլիս, ապա նշվում է հունիսի 22-ին Օսմանյան կայսրության մեծ վեզիր Թալեայթի, զինվորական նախարար Էնվերի, արտգործնախարար Նեսսիմիի, ծովային նախարար Ջեմալի, արդարադատության նախարար Խալիլի հետ հայ պատվիրակներ Ա. Ահարոնյանի, Ա. Խատիսյանի և զինվորական խորհրդական գեներալ Գ. Ղորղանյանի հանդիպումների մասին: Այնուհետև ներկայացված է ՀՀ պատվիրակության անդամների հանդիպումները Կ. Պոլսում հավատարմագրված գերմանական, բուլղարական, ավստրոհունգարական դեսպանների, չեզոք պետությունների (Հոլանդիա, Շվեդիա, Իսպանիա, Դանիա) ներկայացուցիչների հետ: Հ. Քոչարյանը գրառել է, որ այս հանդիպումների ժամանակ օտարազգի դիվանագետները տեղեկացվել են Հայաստանի անկախության հայտարարման մասին¹⁸: Խոսքը 1918 թ. հունիսի 13-ին Հայոց ազգային խորհրդի և ՀՀ կառավարության անունից Քառյակ դաշինքի անդամ և չեզոք պետություններին Հայաստանի անկախության մասին տեղեկացնող հեռագրի մասին է. «Անդրկովկասյան Հանրապետության լուծարման հետևանքով Կովկասի Հայոց ազգային խորհուրդը 1918 թ. մայիսի 28-ի իր ժողովում, հայ ժողովրդի կողմից իրեն տրված լիազորությունների հիման վրա, որոշեց հռչակել հայկական պետության անկախությունը և հիմնել Հայկական Դեմոկրատական Հանրապետություն»¹⁹:

Օրագրությունում համառոտ, չոր, պաշտոնական ոճով արձանագրված է պատվիրակության հանդիպումները: Ցավոք, բացի որոշ բացառությունների, նշված չէ այդ հանդիպումների ժամանակ քննարկված հարցերի մանրամասները: Հաճախ էլ նշվում է. «Խօսակցութեան նիւթը արձանագրուած է առանձին»:

¹⁸ «Օրագիր հայկական խաղաղարար պատվիրակության». – Խաչատրյան Աստվածատուր, Արևելահայ և թուրք դիվանագիտական հարաբերությունները, Երևան, 2010, հավելված, էջ 204-206:

¹⁹ Հայաստանի անկախության հռչակումը և իշխանության կենտրոնական մարմինների ձևավորումը (1918 թ. մայիս-հուլիս), երկրորդ հրատ., Երևան, 2009, էջ 76-77:

Հ. Քոչարյանի հեղինակած երկրորդ օրագրությունում առավել մանրամասն է ներկայացված ՀՀ պատվիրակության գործունեությունը: Այստեղից հետաքրքրական է սեպտեմբերի 6-ին նոր սուլթան Մեհմեդ VI-ի «սելամիքից» հետո հայկական պատվիրակության երեք անդամների (Ա. Ահարոնյան, Ա. Խատիսյան, Մ. Պապաջանյան) հանդիպումը սուլթանի հետ, որին ներկա է գտնվել նաև էնվեր փաշան: Օրագրությունում բերված է սուլթանին ուղղված Ա. Ահարոնյանի հայտնի ճառը, որ վերջինս մասնավորապես նշում էր. «Հայ ժողովուրդը իր կողմից և Հայկական Հանրապետությունը երբեք չեն մոռանա, որ իր անկախությանը նա պարտական է Օսմանյան կայսրության բարեհաճ ցանկությանը»²⁰: Այս խոսքերի պատճառով Ա. Ահարոնյանը հետագայում շատ է քննադատվել:

Օրագրությունը վկայություններ է պարունակում նաև երիտթուրք գործիչների պանթոնքական ծրագրերի վերաբերյալ: Մասնավորապես արձանագրված է սեպտեմբերի 11-ին ՀՀ պատվիրակության անդամների հետ հանդիպման ժամանակ օսմանյան պառլամենտի փոխնախագահ և մամուլի ընկերության նախագահ Հուսեյին Ջավիդ բեյի հայտարարությունը. «Մենք ... կորցնում ենք Արաբիան, բայց իբրև պանթոնքական գործիչներ պետք է ստանանք Կովկասյան Ադրբեջանը, Պարսկական Ադրբեջանը և Թուրքեստանը, դա է մեր իդեալը»²¹: Առաջին համաշխարհային պատերազմում Օսմանյան կայսրության և նրա դաշնակիցների պարտությանը պայմանավորված՝ չիրականացավ երիտթուրքերի փայփայած երազանքը:

Ամփոփելով՝ փաստենք, որ 1918 թ. հունիս-նոյեմբերին Կ. Պոլսում Հայաստանի Հանրապետության պատվիրակության գործունեության լուսաբանման համար չափազանց կարևոր և վստահելի աղբյուրներ են պատվիրակության անդամներ Ալեքսանդր Խատիսյանի, Հակոբ Քոչարյանի և Լևոն Լիսիցյանի օրագրությունները:

²⁰ «Հայկական խաղաղարար պատվիրակության ունեցած տեսակցությունների համառոտ ամփոփում» . – Խաչատրյան Աստվածատուր, Արևելահայ և թուրք դիվանագիտական հարաբերությունները, Երևան, 2010, հավելված, էջ 221:

²¹ Նույն տեղում, էջ 222:

АМО СУКИАСЯН

Институт истории НАН РА

**ОСВЕЩЕНИЕ ДЕЯТЕЛЬНОСТИ ДЕЛЕГАЦИИ РЕСПУБЛИКИ
АРМЕНИЯ В КОНСТАНТИНОПОЛЕ В ДНЕВНИКАХ ДЕЛЕГАТОВ
(ИЮНЬ-НОЯБРЬ 1918 Г.)**

13 июня 1918 г. делегация Республики Армения во главе с Аветисом Агароняном, прибыла в Константинополь, чтобы принять участие в международной конференции. Помимо армянской делегации в конференции должны были принять также участие делегации Германии, Австро-Венгрии, Болгарии, Османской империи, а также Грузии, Азербайджана, Горской Республики. Армянские делегаты провели встречи с турецкими высокопоставленными чиновниками и иностранными дипломатическими представителями, но конференция не состоялась, и 1 ноября они вернулись с пустыми руками.

Дневники членов делегации Александра Хатисяна, Акопа Кочаряна и Левона Лисицына являются важными и надежными источниками для изучения поездки армянской делегации из Тбилиси в Константинополь и деталей переговоров, которые были проведены там. Дневник Левона Лисицына еще не опубликован и представляется впервые.

HAMO SUKIASYAN

Institute of History of NAS RA

**THE ELUCIDATION OF THE ACTIVITY OF DELEGATION OF
REPUBLIC OF ARMENIA IN CONSTANTINOPLE IN THE
DELEGATES' DIARIES (JUNE - NOVEMBER, 1918)**

On 13 June 1918 the delegation of the Republic of Armenia, headed by Avetis Aharonyan departed for Constantinople to take part in a conference with participation of Germany, Austro-Hungary, Bulgaria, Ottoman Empire, as

well as Armenia, Georgia, Azerbaijan and the Mountainous Republic. But the conference was not held. The Armenian delegates had meetings with Turkish senior officials and foreign diplomatic representatives. On 1st of November they returned empty-handed.

Diaries of the members of delegation Alexander Khatisyan, Hakob Qocharyan and Levon Lisicyan are significant and reliable sources to study the travel of the Armenian delegation from Tbilisi to Constantinople and the details of negotiations held there. Levon Lisicyan's diary is still unpublished and put into scholarly circulation for the first time.

ТАТЬЯНА РЫБАЛЬЧЕНКО

Томский государственный университет

АРМЯНСКИЙ КОД В РОМАНЕ Д.М. ТОМАСА «АРАРАТ»

В романе британского прозаика, поэта и переводчика Доналда Макса Томаса (1935), «Арарат»¹, переведённом на русский язык, возникает сопоставление судеб России и судьбы Армении, что принципиально важно для понимания философии истории Томаса, для обнаруживания закона подавления и истребления в истории человечества. Судьба двух наций обнаруживает типологическое сходство, периодическое возобновление геноцида, а в связи с этим рождается вневременная проблема существования человека как носителя личностного и генетически обусловленного сознания во враждебных исторических обстоятельствах. Эта проблема важна и в современной ситуации мнимой толерантности, мультикультурализма, ведущего к утрате идентичности, к несвободе в либеральном обществе.

В центре романа – русский писатель Розанов, имеющий армянские корни. Национальная составляющая в романе важна как метафора двойного сознания: русский отец Розанова – продолжатель социальной

ангажированности, человек, осознающий социальный долг. С другой стороны, он получает влияние европейских революционных идей (был эмигрантом, и поэтому воспринял судьбу России как судьбу советского государства. В 1930-е годы он, вернувшись из Америки, служит сталинскому государству, становится охранником в лагере и убит заключёнными. Розанов – сын служителя системы несёт в постсталинском Советском Союзе груз вины за отца, участвовавшего в геноциде собственного народа. Вина отца делает Розанова диссидентом, хотя он вынужден идти на компромисс с государством, писать по заказу, чтобы получить право печатать настоящие книги. Мать Розанова – армянка, дочь погибшего в 1915 году армянина, поэта, оказавшаяся в вынужденной эмиграции и приехавшая с мужем в Советскую Россию, найдя в идеях коммунизма и интернационализма спасение от национальной ненависти. Её опыт и генетически переданный опыт деда, погибшего в период геноцида армян 1915 года, определяет трагизм мировосприятия Розанова. Дед-армянин в юности, став свидетелем насилия, стал заикаться и лечился от этого тем, что бродил по дальним уголкам Армении и рассказывал разные истории. Погиб он вместе с поэтами Варужаном и Сиаманто во время геноцида 1915 года. Выстраивается архетип поэта не как борца, а как выразителя чужой боли, поэта, расплачивающегося за напоминание о зле.

Соединение двух национальных культур в одном персонаже имеет значение не только для обозначения сходства исторического опыта двух наций, русской и армянской, но и для выявления общечеловеческого опыта, ибо с истории каждой нации сменяются периоды имперские и периоды подавления нации. Современная культура видится Томасом как тотальное смешение кровей и традиций, что опасно стиранием идентичности, исчезновением разных ценностей и способов существования. Кроме центрального персонажа, культурное и национальное смешение Томас указывает в армянке из Турции Наири, в американской писательнице Марьям Туманян-Ферфакс. Глобализация сняла границы стран и

¹ Томас Д. М. Арарат. Пер. Г. Яропольского. М.: Эксмо, 2003. 82 с.
http://bookz.ru/dl2.php?id=79717&e=rtf&t=z&g=44&f=ararat_802&a_id=16793

культур, как будто препятствуя насильственной депортации и геноциду наций, но создавая ситуацию свободного выбора иной культуры, смешения культур, а значит, угасания прежних культур.

Фабула романа символична – выбор личностного и национального самоопределения центрального персонажа: воображаемый путь в центр современной глобализации – США (на корабле или на самолёте изображены два возможных пути в эмиграцию русского писателя) и посещение им Еревана, путь к Арарату – символу праведного спасения в страданиях и расплате за чужое зло.

Нужно отметить приём Томаса – удвоение персонажа в его творческой саморефлексии: писатель Розанов в своих импровизациях создаёт образ-двойник, воображаемого автобиографического и автопсихологического персонажа – писателя Суркова. В судьбе своего персонажа Розанов имеет возможность проверить разные возможные варианты собственной судьбы. В том числе разные возможности самоидентификации: выбрать судьбу русского эмигранта (тем более, что родившийся в США во время эмиграции своих родителей Розанов/Сурков имеет гражданство США); приобщить себя к многострадальной прародине – Армении, русский писатель не был, но постоянно держит в сознании тот способ существования, который явлен армянами, сохраняющими в подвладном состоянии свою древнюю культуру; остаться в стране своего языка и традиций, искажённых государственной властью – в Советской России.

Острота самоопределения связана с тем, что индивид имеет три варианта существования в исторической ситуации: приспособление к условиям, устранение и нравственное существование, в частности, напоминание о истинных ценностях в неидеальном мире, путь сострадания и следования идеалам, неуютным в действительном мире.

Путь бегства связан не только с эмиграцией, но и с уходом в несоциальность, в сферу интимной жизни, в котором приближение к чуду природной жизни даёт подлинное наслаждение жизнью (и продолжение жизни вопреки её социальному истреблению). Один из

образов идеальной жизни в сознании Суркова/Розанова близок буколке – деревня в Бразилии на берегу океана, тело прекрасной молодой девушки и вторичное переживание счастья в письме о жизни в наслаждении. В реальной жизни отзывчивость человека, особенно художника, побуждает участвовать в социальной борьбе, сопротивляться. Так, Розанов готов отказаться от конформизма, позволяющего ему комфортно жить и писать собственные книги после исполнения социального заказа. Действие романа происходит в начале 1980-х годов. Томас пишет как о внутренней несвободе в СССР – гонения на диссидентов (Сахаров сослан в Горький, куда приезжает и герой романа, готовый следовать путём активного социального борца), – так и об имперской политике советских властей, подавляющей право других наций на свободное развитие (правительство готово ввести войска в Польшу, чтобы остановить демократическое движение в стране, «Солидарность»). Розанов готов рисковать, выдать замысел властей, чтобы остановить вмешательство в жизнь другого народа. Повторим, что в воображении Розанов проигрывает и путь эмиграции в США, и поездку в Армению.

Стремление увидеть Арарат имеет в романе множественную мотивацию. Самая явная – следовать Пушкину, Лермонтову, Мандельштаму и многим русским поэтам, стремившимся на Кавказ, в Армению как пространство иной культуры. В таком стремлении проявляется норма отношений между культурами и людьми – стремление расширить миропонимание, вступить в диалог с иным миром не для завоевания и не отказываясь от своего мира. А Армения – древнейшая культура в человечестве, и потому современный художник в стремлении к Армении реализует желание прикоснуться к общечеловеческой истории. Другой мотив стремления к Арарату связан с культурной символикой Арарата как места библейского спасения праведников. Розанов помнит о Ное и готов воспринимать Арарат не только как место спасения, но как место, хранящее истину о праведном человечестве.

Выбор своего места и своего способа существования русский писатель делает, возводя себя к древним армянским корням, то есть сравнивая свой более молодой национальный опыт (русский опыт) с опытом древней нации. Но этот опыт он хочет обнаружить в современных армянах, решая вопрос о том, передаётся ли генетически жизнестойкость нации, тогда какой урок могут дать современные армяне для самоопределения любого человека. Встречи с армянами на пути воображаемых и реальных путешествий Розанова/Суркова создают метафорические сюжеты о разных формах национального сознания, о спорах русского писателя с теми способами жизни, которые он встречает у современных представителей армянской культуры, и к поиску собственного способа существования.

Итак, Армения – это метафора страдания любой малой нации в межнациональной истории, метафора положения отдельного человека в множественных ценностях людей и наций. В армянском народе Розанов (и Томас) видит противоречивое соединение принятия судьбы, неутопическое смирение перед условиями существования, на которые их обрекает господствующая нация, и тайное сохранение своего (крови и традиции). Вначале Розанов, в соответствии с русской традицией бунтарства, не может принять армянского смирения перед силой и жестокостью, приспособления к насильственно данным условиям. Розанов саркастически осуждает готовность принять защиту чужой матери – жестокой, а не милосердной, только потому, что чужая нация обеспечивает хотя бы продолжения жизни. Так армяне остаются в эмиграции, где им предоставлен кров и хлеб; так часть из них возвращается в Советскую Армению, потому что в условиях неполной свободы они находят возможность хотя бы частичного сохранения своей культуры.

В сюжетах воображаемых путешествий Розанова / Суркова из Советской России раскрываются, во-первых, разные типы национального самосознания современных армян, во-вторых, выбор русским писателем

своего места в мире и своей не только национальной, но личностной идентичности.

Герой Томаса вынужден восстанавливать логику истории армян как истории насилия, геноцида – это армянский код любой нации. Прежде всего, в роман введены картины геноцида 1915 года. Они представлены, во-первых, как память потомков геноцида, хранимые семейные предания, родовая боль, какой бы способ жизни ни избрал потомок. Через рассказы матери о деде, картины страданий и гибели деда носит в сознании Розанов (сошедший с ума от вида мучений дед, претерпел и собственные муки); детские воспоминания хранит и фиксирует их на бумаге мать американского скульптора Донны Зарифьян. Воспоминания своих бабушек, спасшихся детьми от гибели в 1915 году, воскрешают внуки, Марьям Туманян, не знающая армянского языка американская писательница, и Арам Ханджиян, филолог, преподающий в Советской Армении русскую литературу. Но главное место занимают в романе рассказы о событиях 1915 года свидетеля и участника, некоего Финна, скандинава, бывшего офицером в войсках на стороне турок.

Значимы свидетельства именно европейца, скандинава, представителя нордической расы, который хладнокровно фиксирует подробности реальных событий геноцида армян: бойня в окрестностях Шуша, в Кемахском ущелье, в Байбурте, в Эрзрумской долине, в Харберде и других местах. Одно перечисление подробностей и цифр насилия достаточно, чтобы обнаружить неоправдываемость насилия, но Томас усиливает трагизм события тем, что современное сознание примиряется с насилием. С одной стороны, Финн признаётся, что его солдаты «прикрывали глаза ладонями, чтобы не видеть» те измышательства над армянами, которые совершали сами, Финн полагает, что меры насилия были несоразмерны с поводом. Томас обнаруживает страшную логику зла – его масштабы позволяют смириться с самим злом: по свидетельству Финна, Гитлер после сделанного фашистами над евреями заявления: кто теперь вспомнит об армянах.

Финн в романе Томаса вводит события в Армении 1915 года в череду насилия XX века. Финн был свидетелем того, что геноцид 1915 года возобновился в Баку в 1918 году, в Смирне 1922 году, в 1941 году в Бабьем Яре, в 1942 году в Югославии (геноцид армян). И везде свидетелем был европейский просвещенный человек, осуждающий, но не препятствующий насилию. Финн – символическая фигура современного просвещенного человека, который констатирует закон насилия как неотменимый и, осуждая насилие, принимает его как неизбежное: «...Я бывал в таких лагерях, как Дахау, Биренау, Бельзен, Аушвиц, Собибор, Майданек, Треблинка. Это не было лёгким делом. ... и ничего не стоит сейчас ... строго осуждать наши действия с моральной точки зрения; совсем другое, когда вы находитесь в самой гуще событий, пытаетесь действовать как можно лучше в труднейших обстоятельствах».

Финн (и Томас) отождествляют геноцид армян, холокост, истребление цыган с истреблением крестьян и интеллигенции в России (коллективизация, лагерная система). Геноцид возобновляется и в современном мультикультурном мире. Как пример – упоминание в романе Бейрута, мегаполиса, где будто бы сосуществуют разные культуры и веры, но кровавые события в Ливане 1975 года показали, как хрупок мир, как быстро желание самоопределения порождает насилие.

Томас воссоздаёт современное состояние мира как смешение культур. Ситуация рассеяния сближает историческую судьбу еврейского и армянского народов, в XX веке рассеяние стало судьбой русских, а во второй половине XX века – мировой тенденцией: африканцы и латиноамериканцы, исламская Азия. Культура и искусство (литература прежде всего) соединяет, ибо побуждают к чувственному переживанию чужого, к интеллектуальному пониманию другого. Мультикультуралистская идеология пронизывает романы Томаса, внося постмодернистскую толерантность, релятивность, вариативность как антитезу ортодоксальности, монологизма сознания, направленного на защиту «своего», побуждающего на вражду, на войну, на уничтожение другого

как чужого. Историческая травма геноцида толкает современных людей на отрицание границ между людьми и между культурами.

Между тем Томас, знакомый с фрейдистскими идеями, показывает архетипический след в сознании людей, власть первообразов, тяготение к генетической культуре и влечению крови, которые сохраняют восприятие чужого как враждебного, препятствует соединению людей. Два полюса в стремлениях русского героя Томаса – американский континент, метисизация людей, бежавших в европейского континента в мир свободы, и Армения, Арарат как символ места, неоднократно подвергнувшегося уничтожению, ассимиляции, но сохраняющее свою культурную идентичность: телесные черты, алфавит, способ мышления.

Иное в русской культуре – не кровная идентичность, не имитация древних традиций, а эмоционально-духовная отзывчивость, которая позволила воспроизводить человеческую душу самых разных культур, даже не достигнув чужого мира (пример Пушкина).

Сюжеты-встречи с современными армянами дают возможность автору романа показать судьбу армянской культуры в современном мире смешения культур. Современный мир – диполосный (напомним, речь о времени налета 1980-х годов, до распада Советского Союза). Но судьба Армении и армян, как и в древности, зависит от супердержав, и представители малых наций добровольно эмигрируют из генетической культуры в господствующую. Бегство ради спасения от Арарата, от родины – это тоже печальная традиция.

Три поколения – дети геноцида, дети детей геноцида и внуки геноцида – по-разному хранят генетическую память. Если старшее поколение хранит как чистоту крови, так и память о национальной беде (мать и отец Донны Зарифьян, оставившие рукопись о фактах геноцида в США; мать Армена Ханджияна в Советской Армении; мать Розанова/Суркова в Советской России), то среднее поколение нарушает традицию памяти. Донна Зарифьян. Американский скульптор, принимает коды нового и инокультурного мира (Сурков в её доме

увидел только одну картину со знаком Армении – горой Арарат), готова выставляться и в Штатах, и в Советском Союзе, быть понятной разным культурам. Толерантность и готовность отвечать на вызовы того мира, в котором найдено убежище, ведёт к утрате исконной культуры. Ещё более американизирована армянка, не знающая армянского языка, не знающая, что Арарат не в границах современной Армении, – Мариям Туманян-Ферфакс, американская писательница, сменившая имя. Несомненно, Томасу важно показать зов крови, зов Арарата, он даёт ситуацию сближения Мариям с армянским филологом, её чувство стыда, что она утратила армянскую речь. Тем не менее Томас фиксирует ассимиляцию армян с культурой проживания в глобальном мире. То же и в Советской Армении, где более сохраняется исконная память, но это тайные, не афишируемые ценности: так, Арам Ханджиян, благоговейно относясь к наследию Нарекаци, преподаёт русскую литературу в советской стране, стране интернационализма.

Молодое поколение, поколение послевоенного времени ориентировано на смешение культур, на интернационализм и марксизм, принимает террористические методы защиты не столько национальной культуры, сколько личной свободы. Левизна молодых (Наири, дочери Донны Зарифьян) отталкивает главного героя романа опасностью терроризма, возрождения насилия и останавливает его от активного диссидентства как коллективного спасения от социальной несвободы.

Особое сопоставление в романе отдано позициям Арама Ханджияна и русского Суркова: тайная любовь к выразителю армянской национальной скорби Нарекаци, требующая памяти, но останавливающая перед правом на собственное слово (гений сказал всё). И позиция русского писателя, который возвращается в Россию, чтобы писать свои песни скорби, песни скорби своей нации. Тем самым Томас утверждает позицию не политической борьбы, но и не тайного сохранения культуры, а позицию развития слова, культуры, в новых трагических условиях,

позицию быть не в стороне, но и не только разделить страдания, но составить своё осмысление страданий.

В цитируемых стихах Нарекаци, как ни странно, нет ни обвинений в бедах врагов, ни самооправдания. В этих стихах поэт армянского гуманизма исповедуется в собственном несовершенстве:

А если бы весы я мог построить
такие, что в одну легли бы чашу
Ливана кедры вместе с Араратом,
а все мои грехи легли б в другую,
то первая взвилась бы, как пушинка, –
грехи мои намного тяжелей.

Духовный опыт Нарекаци переводит вину с исторических и национальных противоречий на душу человека, её противоречия порождают и насилие, и соучастие в зле, и отказ от памяти. Поэтому поэту, как и человеку личностного сознания, невозможно ни отстраняться от социального зла, ни искать спасения в подавлении злых сил вовне, предназначение человека – искать правду о самом человеке, скорбеть о несовершенстве человека, имеющем исторические последствия. Именно поэтому нет места, где бы праведный человек нашёл пристанище.

Невозможно найти Арарат, можно только вечно стремиться к нему. Так Томас интерпретирует ненаходимость Арарата на территории Армении, но символическое присутствие Арарата в идеалах людей. Нет места спасения от людей в человеческом мире. Первое наказание (геноцид) идёт о Бога, который нашёл среди людей праведника и привел его на Арарат. Ковчег был спасением рода, собрал всё, что нужно для продолжения жизни. Но род Ноя сотворил историю, в которой геноцид повторялся, в которой страдали не за вину, а праведные люди. Следовательно, спасение на Арарате иллюзорно, пока несовершенен человек.

Герой Томаса отвергает путь внешнего и коллективного спасения. Нравственный путь отдельного человека – искать свою вину, знание своего несовершенства и свой Арарат, ориентир, который за границей

реальности. Розанов рассказывает притчу о носороге, который отказался войти в данный всем ковчег, остался в пучине потопа, в лаве греха. Для чего? Для верности неидеальной жизни или чтобы разделить страдания, или предпочёл индивидуальный поиск существования в неидеальном мире.

Символика недостижимой горы, недостижимого пристанища ковчега очевидна: экзистенциальная ситуация, неизменное желание человека, осознающего дисгармонию мира, бежать из Тут-бытия, недостижимо, религиозная вера в переход в лучший мир утрачена современным интеллектуалом, не верящим в миф о рае. Поэтому достичь Арарата невозможно, но он необходим как ценностная ориентация в ситуации мультикультур. Многообразие миров, ценностей (постмодернистская ризома), но человек не осколок бытия и стремится к собственным ценностям. Арарат (как и Пушкину) нужен для самоопределения в той культуре, которая сформировала сознание. Возможность воспринимать все языки мира требует выбора ценностей.

Роман Томаса – о пути художника к священному, к Арарату, к самому себе. Поэзия рождается как погружение в боль, в страдания других, но требует верности своему месту в бытии, смелости говорить правду и врагам, и несправедливостям своей родины. Томас обнаруживает в русской культуре ту отзывчивость и память, которые близки армянской верности себе, останавливают перед ответным насилием, открыты миру и развитию.

TATIANA RYBALCHENKO
Tomsk State University, Russia

ARMENIAN CODE IN THE NOVEL OF D.M. THOMAS “ARARAT”

The report is supposed to interpret the semantics of the national (genetic and cultural) roots of the individual in a situation of self-identification in the

novel by English writer David Michael Thomas "Ararat" (1983). Situation forced emigration and intention to return become metaphors personal self-determination, in the novel discusses the saving or illusory nature of the archetypes of consciousness and cultural archetypes. Armenia and Ararat are, on the one hand, the symbol of salvation (the semantics of the biblical ark), on the other hand, the symbols unreachable salvation. Cultural symbolism is based on the real story of Armenia as an ancient civilization subjected to scattering, but leaves the spiritual reference points. Armenian genocide relates to acts of genocide in the twentieth century which underwent many nations that defines the concept of the tragic history of the novel's author. The report analyzes the different ways of expressing the author's concept: semantics subject collisions; philosophical dialogues of characters; intertextual field.

ՂԱՎԻԹ ԳԱՄՊԱՐՅԱՆ
Կրթության ազգային ինստիտուտ

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՑՈՒՆԻՄԸ ԱՆԳԼԻՍԳԻՐ ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԻ ԵՐԿԵՐՈՒՄ

20-րդ դարում օտարագիր հայ գրողների առկայության փաստն իսկ ցեղասպանության հետևանք է: Սկսած 19-րդ դարի վերջերից, երբ սաստկացան համիդյան հալածանքները և հատկապես 1909-ի Ադանայի կոտորածներից ու 1915 թվականի ցեղասպանությունից հետո, հայրենի երկրից բռնի արտագաղթը օտարության մեջ հայ ժողովրդին կանգնեցրեց ազգային կեցությունը պահպանելու դժվարին խնդիրների առաջ: Աստիճանական և անխուսափելի ուժացումը հասցրեց լեզվական փոփոխության: Առաջնային և գործածական դարձավ տվյալ երկրի լեզուն: Առաջ եկան անգլիագիր, ֆրանսագիր, իսպանագիր, իտալագիր, ռուսագիր, բուլղարագիր, ռումինագիր, արաբագիր, պարսկագիր, թուրքագիր հայ գրողներ: Այդ գրողների առաջին, երկրորդ սերունդները թեև հեռացան մայրենի լեզվից, բայց պահպանեցին ազգային հիշողությունը, ինչի ակունքը ցեղասպանության պես մի այնպիսի համազգային ողբեր-

գության մեջ է, որից չխուսափեց և ոչ մի հայաբնակ քաղաք ու գյուղ, և ոչ մի գերդաստան ու ընտանիք:

Մինչ անգլիագիր հայ գրողներին անցնելը՝ պատկերն ամբողջական ներկայացնելու անհրաժեշտությամբ հիշատակենք մյուսներից մի քանիսին: Ֆրանսագիր գրողներից առավել հայտնի են Արթուր Ադամովը (Հարություն Ադամյան), Անրի Թրուայան (Լև Տարասով-Թորոսյան), Ռուբեն Մելիքը (Ռուբեն Մինասյան), Շարլ Ազնավուրը (Շահնուր Վաղինակ Ազնավուրյան), Վահե Քաչան (Խաչատրյան) և ուրիշներ: Իսպանագիր գրողներից առավել հայտնի Ալիսիա Կիրակոսյանն է, հիշատակենք նաև Ագուսթին Դավթյանին, Դավիթ Չերիսյանին, Ֆելիսիա Գույումճյանին և Ռոզալինա Միմոնյանին: Իտալերեն էր ստեղծագործում Հրանտ Նազարյանը: Ռուսագիր հայ գրողների թիվը անցնում է երեք տասնյակից, որոնց մեջ առավել նշանակալից է Մարիետա Շահինյանի ստեղծագործական ուղին: Բուլղարագիրներից առանձնանում է Սևդա Սևանը (Ֆրանսուզի Բախչեջյան), ռումինագիրներից՝ Վարուժան Ոսկանյանը: Կան նաև ուրիշ լեզուներով ստեղծագործող բազմաթիվ այլ հայ գրողներ:

Անգլիագիր հայ գրողների թիվը ամենից շատն է և վաղուց հատել է հինգ տասնյակի սահմանը: Գրողների այս շարքում են՝ Վիլյամ Սարոյանը, Մայքլ Արլենը (Տիգրան Գույումճյան), Լևոն-Չավեն Մյուրմելյանը, Դավիթ Խրոյանը, Լևոն Սրապյան Հերալդը, Արչի (Խաչիկ) Մինասյանը, Մերջրի Հուսեփյանը, Մայքլ Արլեն Կրոսերը, Դայանա Տեր-Հովհաննիսյանը, Հարոլդ Բոնդը (Բոնդուկյան), Ջարեհ Սուրյանը, Փիթեր Սուրյանը, Փիթեր Նաջարյանը, Հելեն Փիլիպոսյանը, Հակոբ-Միսաք Մերջյանը, Արամ Սարոյանը, Փիթեր Բալաքյանը, Բաֆֆի Մեթյանը, Լեոնարդո Ալիշանը և ուրիշներ: Նրանք բոլորն էլ, բացի Մայքլ Արլենից, Վիլյամ Սարոյանի գրական զավակներն են: Նրանց էթե ոչ բոլորի, ապա մեծ մասի ստեղծագործությունների մեջ այս կամ այն չափով, այսպես թե այնպես արատցովված է դարասկզբի հայոց ողբերգությունը:

Անդրադառնանք նրանցից մի քանիսի ստեղծագործության մեզ հետաքրքրող էջերին:

Անգլիագիր հայ գրողների հայրը, ինչպես ասացինք, **Վիլյամ Սարոյանն** (1908-1981) է, և նրա ազգային դիքորոշմամբ էլ պայմանավորված է շատերի գրական ուղղվածությունը: Այս հարցում նա շատ սուր բանավեճեր ունեցավ իրենից ավելի վաղ գրական գործունեությունն սկսած Մայքլ Արլենի հետ, ինչին դեռ կանդրադառնանք, պահպանեց իր գրական սկզբունքներն ու ստեղծեց հայաձայն գործող որոշակի ավանդույթ: Նրա ստեղծագործությունը հազեցած է հայկականությամբ: Նախնական կրթությունն ստացել էր հայերեն, ընտանիքում խոսում էին հայերեն և պատմում հին երկրի պատմությունները: Մարոյանի ասելով՝ «Իմ մեծ մայր Ամերիկայի մեջ ալ Բիթլիս կ'ապրեր»: Հայկականությամբ էր տոգորված ոչ միայն նրա ամբողջ ստեղծագործությունը, այլև ամբողջ կյանքը: 1935-ին և հետագայում մի քանի անգամ այցելելով Հայաստան՝ նա ճանաչեց Չարենցին, Թոթովենցին, Մահարուն, Շիրազին և ուրիշ գրողների, իսկ ժողովուրդը սիրեց նրան: Բեմերից խոսում էր էպոսի հայերենով, այն անաղարտ հայերենով, որ իր նախնիները տարել էին հայրենի երկրից: Հայկականությամբ են շնչում նրա «Մարդկային կատակերգություն» վիպակը, «Իմ սիրտը լեռներում է» թատերգությունը և բազմաթիվ պատմվածքներ՝ «Հայն ու հայր», «Նոնենիների պուրակը», «Վարսավիրը, որի քեռու գլուխը կրծել-պոկել էր կրկեսի վագրը», «Մալիտակ ձիու ամառը», «Յոթանասուն հազար ստորի», «Խեղճուկրակ արաբ», «Գյուղացին»...

Մի առիթով Սարոյանն ասել է. «Ես իմ կյանքը կը գրեմ: ... Չոնին ես եմ, բայց Մեք-Գրեգոր ալ ես եմ: ... Իմ մեծ մայր «Իմ սիրտը լեռներում է» - հոն է»: Իր բանաստեղծ հոր կերպարն, ըստ նրա, մարմնավորում է Բեն Ալեքսանդրը. «Կ'ըլլա հայոց անուն Բենիամին Ալեքսանդրյան»:

Լինելով հալածված ժողովրդի զավակ և ճաշակած լինելով դառնապատիիր կյանքի հալածանքները՝ Սարոյանը սկզբից նեթ կենսաբանորեն, ազգաբանորեն, մարդաբանորեն և հոգեբանորեն հակվեց դեպի կյանքից դուրս նետված մարդը, դարձավ այդպիսիների պաշտպանը, ինչն էլ իր հետ բերեց գույթ, կարեկցություն և համատարած կյանքի սեր: Այս ամենի հիմքերը նրա ազգային ծագման, օտար միջավայրում դժվա-

րությանը իր տեղը գտնելու, պահպանելու և հաստատելու տառապանքի մեջ է: Նոր աշխարհում, ըստ նրա՝ «Հայերին համարում էին երկրորդ կարգի մարդ. նրանց նեղում էին, բռնադատում, նրանց ասում էին, իսկ ես հայ եմ: ... Արհամարհվածների և աստվածների թվում լինելը ինձ մի դառը ուրախություն էր պատճառում»: Նրա համար մարդկային մեծ երջանկություն էր հայ լինելը և իր ու իր ազգի մասին բարձրաձայն խոսելը: Այդ իսկ պատճառով մեծ հպարտությամբ էր խոսում հայրենի Բիրթիսի, Հայաստանի, հայ գրողների, հայ ժողովրդի և այս մեծ աշխարհում հայ լինելու ու հայ մնալու մասին: Ահա այս դիրքերից էլ նա բանավիճեց ժամանակին մեծ համբավի հասած և իրենից տասներեք տարով տարեց Մայքլ Արլենի հետ, ով հատկապես «Կանաչ գլխարկը» վեպով հասել էր համաշխարհային ճանաչման: Եվ ասածն այս էր՝ ինչո՞ւ չէս գրում նաև քո ազգի կյանքից և տաղանդը ծառայեցնում ես սոսկ անգլիական բարձր հասարակության կյանքը պատկերելուն:

Մարոյանը շատ ազատ գրող էր. ըստ նրա՝ պետությունը, որ պատերազմներ է սանձագերծում, ամենևին այն մարմինը չէ, որպեսզի հովանավորի ազատ արվեստագետին: Այդ իսկ մտայնությամբ 1940-ին նա հրաժարվեց «Ձեր կյանքի ժամանակը» թատերախաղի համար նրան տրված Պուլիտցերյան մրցանակից, իսկ Պուլիտցերյանի հաջորդ քայլը հիմնականում Նոբելյանն է: Այդպես վարվեց, որովհետև ներքին ազատությունը մերժում էր ամեն տեսակի պայմանականություններ ու կաշկանդումներ: «Կ'ուզեմ մարդը վերադարձնել ինքն իրեն: ... Ամբողջ կյանքիս մեջ խնդացած եմ կանոններու վրա և հեզնած ավանդությունները, ձևականությունները, պաճուճանքները: Ինչպես կանոն մը կրնար կիրարկվել այնպիսի հրաշալի ստեղծագործության մը, ինչպես մարդը...»: Այսպես էլ Մարոյանը մոտեցավ հայկական նյութին և այն տարալուծեց համամարդկային արժեքային համակարգի մեջ: Դա է պատճառը, որ նրա հայ հերոսներն ընկալվեցին ու սիրվեցին հենց իրենց բուն ազգային կերպարներով ու յուրահատկությամբ: Իր նշված և այլ ստեղծագործությունների մեջ, ինչպես «Վեպի Ջեքսոնի արկածները»

վեպը, Մարոյանը հայրենասիրությունը, ազգային արժանապատվությունը դարձրեց մարդկային ամենավեհ զգացումը:

Այս տեսակետից բացառիկ ներգործության ուժի մի ստեղծագործություն է «Հայն ու հայը» պատմվածքը: Դոնի Ռոստովում պատահաբար հանդիպելով հողմի բերանն ընկած մի հայի, արյան կանչով ճանաչելով նրան՝ Մարոյանը շարունակում է. «Մեր ցեղը զարմանալի ցեղ մըն է, ու ես դեպի Հայաստան կ'երթայի»: 1915 թվականի ցեղասպանության կազմակերպիչներին և իրագործողներին ուղղված մի ապուսակ է այս երկու հայերի հանդիպումն օտարության մեջ, որոնց ամբողջ խոսք ու գրույցի առարկան հայրենի երկիրն է, որ կենդանի ապրում է նրանց հոգում: Սրա անմիջական անդրադարձն ասես լինի «Յոթանասուն հազար ասորի»-ն: Հայն ասորուն ասում է. «Մենք փոքր ժողովուրդ մըն ենք ու երբ մեզմե մեկը կը հանդիպի մյուսին, ատիկա դեպք մըն է: Մենք միշտ մեր շուրջը կը նայինք մեկու մը հետ խոսելու համար մեր լեզվով»: Իսկ խոսքի նյութը որքան էլ տարբեր, մշտապես նույնն է՝ հայրենի՞ք և մի՛միայն այս սկզբունքով. «Հայու ոգին գորավոր ոգի մըն է: Ատիկա չի պարտվիր չար աշխարհով մը»:

Այսքանից հետո, ահա, ավելորդ չէ հիշել նրա հայտնի խոսքերը. «Թեև անգլիերեն կը գրեմ ու հակառակ անոր, որ ծնունդով ամերիկացի մըն եմ, ինքզինքս կը նկատեմ հայ գրող մը: Գործածած բառերս անգլիերեն են: Միջավայրը, որու մասին կը գրեմ, ամերիկյան է: Ոգին, որ կ'ստիպե ինձ գրել, սակայն, հայ է: Ուրեմն հայ գրող մըն եմ ես: Խորապես կը սիրեմ հայ գրողներու մեծ ընտանիքին պատկանելու պատիվը»:

Մայքլ Արլենի (1895-1956) նախնիները Անիից գաղթել էին Պոլիս, այնտեղից վերահաստատվել Բուլղարիայի Ռուշուկ (ներկայումս՝ Ռուսե) քաղաքում, իսկ 1900-ին մեկնել Անգլիա: 1915-ի ողբերգությունը Արլենի է հասնում անարգված, ծաղրված, թշվառության մատնված և փողոցներում ապրուստ որոնող հայի կերպարով: Դա հոգեբանական ծանր ազդեցություն է թողնում նրա վրա: Բժիշկի ապահով մասնագիտությունը թողնելով մի կողմ՝ նա զբաղվում է լրագրությամբ ու գրականությամբ: Թղթակցում է նաև 1913-1920 թթ. Լոնդոնում լույս տեսնող

«Արարատ» հանդեսին: Մի քանի հոդվածներում պաշտպանում է իր ժողովրդի ազգային արժանապատվությունը և եղեռնագարկ ցնցոտիավոր հային հակադրում համաշխարհային քաղաքակրթության մեջ իր հետքը թողած պատմական հայի կերպարը: Ըստ նրա՝ «Հայը հայրենասիրության, ապստամբության և արքայականների նախահայրն է»:

Զգալով, որ հայի անունով դժվար է ճեղքել արևմտյան քաղաքակրթության պատնեշը՝ հանդես է գալիս Մայքլ Արլեն գրչանունով: 1922-ին ընդունում է բրիտանական քաղաքացիություն, 1928-ին ամուսնանում հույն կոմսի դստեր՝ Ատլանտայի հետ: 1941-ից բնակություն է հաստատում ԱՄՆ-ում:

1920-1930-ականներին տպագրած բազմաթիվ վեպերը («Լոնդոնյան արկածախնդրություն», «Վիպային տիկինը», «Ծովահենություն», «Այս հմայիչ մարդիկ», «Կանաչ գլխարկը», «Մեյ Ֆեյրը», «Միրահարված երիտասարդները», «Մանուկները անտառի մեջ», «Մարդիկ մահկանացու են», «Լիլի Քրիստին», «Տղամարդիկ մինչև վերջ չեն սիրում կանանց», «Հավիշտակված թագը», «Թռչող հովանդացին») հռչակեցին նրա անունը, բայց դրանց մեջ ոչ հայ կա, ոչ հայություն: Այստեղից էլ՝ Մարոյանի գայրույթը:

Մայքլ Արլենը ծագումով և խոսքի պատկանելությամբ հայ էր, բայց արևմտյան արժեքների կրող: 1930-ին Նյու Յորքի «Հայաստանի կոչնակ» թեթին տված մի հարցազրույցի մեջ նա շատ նախատական խոսքեր է ասել իր ժողովրդի հասցին, ինչը բխում էր հայրենասիրությանը հակադարձվող պարտության ցավից ու ամոթից: Բայց ահա նույն 1930-ին Փարիզի «Յառաջ»-ին տված մեկ այլ հարցազրույցում ավելացնում է. «Ես ինչպե՞ս կրնամ հայու կամ Հայաստանի դեմ նախատական բան գրել, չե՞ որ ատով ինքզինքիս նախատած կ'ըլլամ: Ամեն տեղ և միշտ ըսած եմ, թե հայ եմ: Շարունակ աշխատած եմ հայը ներկայացնել իբրև հերոսական ժողովուրդ մը... Կը ցավիմ, որ գրությանս ոգին չեն հասկացած: Ցեղս կը սիրեմ, բայց այդ սերս արգելք չէ, որ քննադատեմ անոր անցյալի և ներկայի թերությունները»: Ըստ նրա՝ այսօր էլ կան հայեր, ովքեր «պատիվ չեն բերեր հայ ազգին», որոնց «համբավը կ'արատավորե

ազգը»: Այս ամենը վկայություն է նրա լիարժեք հայ լինելու գիտակցության, ինչը նա դրսևորել է յուրովսանն. «Ես հայ ըլլալս ամեն օր չեմ ըսեր, ոչ ալ ամենուն»: Այստեղ է նրա ու Մարոյանի տարբերությունը, ով ասում էր ու կրկնում՝ «Ամեն մարդ հայ է» և «Ուր որ կ'երթաս, պոռա Հայաստան»:

Ավելացնենք նաև, որ հայության դատը Մայքլ Արլենը պաշտպանել է իր հակաֆաշիստական ելույթների ու հրապարակումների մեջ, այս դեպքում այն տեսնելով որպես մարդկության դատի մի մասը: Հիտլերի, Գեբելսի ու Գյորինգի հետ մեկտեղ նա տալիս է նաև ոճրագործներ էնվերի, Ջեմալի ու Թալեթի անունները և «Ես գիտեի դոկտոր Գեբելսին» խոհագրության մեջ հպարտությամբ ավելացնում. «Երիտասարդ հայ վրիժառուները սպանեցին նրանց և կոխկրտեցին նրանց դիակները»:

Լևոն-Զավեն Մյուրմեյանը (1905-1996) գրական ասպարեզ է մտել հայերեն տպագրված «Լույս Զվարթ» բանաստեղծությունների ժողովածուով (1924, Փարիզ): Նա այդ ժամանակ տասնինը տարեկան էր՝ խոստումնալից բանաստեղծ, ով վայելում էր Վահան Թեքեյանի, Հակոբ Օշականի և Կոստան Զարյանի խնամքն ու հոգատարությունը: Հայաստանում և Պոլսում դեգերումներից հետո, 1922-ին նա մեկնեց ԱՄՆ և Կանզաս Միթիում ուսանեց երկրագործություն: Նա խորացնում է անգլերենի իմացությունը, հետագայում հաստատվում Լոս Անջելեսում և տեղի համալսարանում դասավանդում անգլերեն:

Մյուրմեյանը գիտակցաբար է անցնում անգլերենի և իր հաջորդ վեպերն ու աշխատությունները՝ այդ թվում նաև հանրահայտ «Ձեզ եմ դիմում, տիկիններ և պարոններ» վեպը գրում անգլերեն: Սույն վեպը 1945-ին լույս է տեսել Նյու Յորքում, 1980-ին թարգմանվել հայերեն: Գրքի առաջաբանում մեծն Վիլյամ Մարոյանը գրեց. «Վեհ, քնքուշ, քաղաքակիրթ գիրք է սա, ... պարունակում է ամենալավ էջերը, որ երբևէ կարդացել եմ»: Հայ ընթերցողին ուղղված խոսքում հեղինակն իր հերթին ավելացնում է. մենք՝ ապրող սերունդներս, պարտավոր ենք հիշել 1915-ի նահատակներին. «Ամբողջ ժամանակ, որ գրում էի գիրքը, սև

ակնոց էի դնում ... որպեսզի թաքցնեի արցունքներս»: Ըստ հեղինակի մտահղացման՝ այս գիրքը Արևմտյան Հայաստանի կենդանի գիրքն է, որով պիտի վերականգնվեն անհետացած կյանքի հիշատակները, որով պետք է խոսի նահատակ սերունդի «մեծ լռությունը»: «Հայկական հիվանդությանը», այսինքն՝ ազգային ցավով տառապող գրողը համամարդկային հնչեղություն է տալիս մի տոհմի, մի քաղաքի, մի ժողովրդի պատմության և միաժամանակ անվարան հայտարարում. «Այն հայը, որ կորցնում է ազգային գիտակցությունը դադարում է մարդ լինելուց: Ես խղճում եմ նրան»:

Ինքնակենսագրական հունով հյուսվում է Տրապիզոն քաղաքում ապրող Սյուրմեյաններ ընտանիքի պատմությունը, որ գրողի մանկությունից հասնում է մնչև 1924 թ.: Գրքի 25 գլուխներն այդ պատմության առանձին դրվագներն են՝ մորական պապին սպանել էին նախորդ ջարդերի ժամանակ, հիմա քեռուն ջրատույզ են անում, ծնողներին սպանում, բայց անտերունչ երկու եղբայր և երկու քույր գտնում են իրար և, ազգավոխության դավերից մի կերպ խուսափելով, հարթում իրենց կյանքի դժվարին ուղին:

Վեպի անմիջական ու անկեղծ շունչը գերեց շատերին և պատահական չէ, որ այն թարգմանվեց իտալերեն, շվեդերեն, հունարեն, գերմաներեն, լույս տեսավ նաև Բիրմայում, իսկ հայտնի գրող Հենրիխ Մանն այն գնահատեց որպես «գեղեցիկ ավանդ համաշխարհային գրականության մեջ», քանի որ՝ «կենսական արժեք ունեցող պատմական երկ է և գրական մի լավ ստեղծագործություն»: Գիրքը բարձր գնահատեց ամերիկյան մամուլը, իսկ «Նյու Յորք թայմս»-ը գրեց. «Հավագյուտ գեղեցկություն ունեցող մի գիրք է սա՝ գրված Մենտ Էքզյուպերիի ստեղծագործության նման մանկական հիասքանչ հուզումով»:

Սյուրմեյանը նվիրված մնաց իր ժողովրդին: Անգլերեն թարգմանեց «Մասնա ծոեր»-ը և հայկական ժողովրդական հեքիաթների ընտրանին: Իր ստեղծագործական ուղին ձևակերպեց այս խոսքերով. «Ես կորսնցուցի հայ լեզվին կոփվը, որպեսզի իմ և ժողովրդիս բարիքների համար շահեմ կոփվը Հայ հոգիին, որ ավելի կարևոր է: ... Չկա մեկը, որ հայ լեզուն

սիրե ինձմե ավելի խորապես: Բայց ես կը հավտամ աշխատանքի բաժանումին: Եվ կրնամ որպես ամերիկյան գրող ավելի մեծ չավով ծառայել ժողովրդիս ու անգլերեն գրելով չեմ դադարի հայ գրող մ'ըլլալե»:

Ավագ սերունդի գրողներից այսօր ապրում և ստեղծագործում է **Դավիթ Խրոյանը** (ծնվել է 1931-ին): Նրա մասին մեր իրականության մեջ համեմատաբար քիչ գիտեն, ուստի անդրադառնանք քիչ ավելի հանգամանորեն: Խրոյանն ամենաբեղմնավոր անգլիագիր հայ գրողներից է: Վաթսունից ավելի տարիների ընթացքում նա ստեղծագործել է գրեթե բոլոր տեսակներով և հրատարակել է տասնյակ գրքեր՝ պոեզիա, վեպ, հուշ, մանկական գրականություն, կենսագրություն, մատենագիտություն: Նրա գործերը հրատարակվել են 9 հատորով: Հիմնադրել է 2 ամսագիր, 3 գրական հրատարակչություն, թարգմանել և վերապատմել նյութեր հայոց պատմությունից, վերջերս արձակ շարադրել է «Մասնա ծոեր»-ը:

Ծնվել է 1931-ին Ռասինում, Վիսկոնսինի նահանգ: Ծնողները փրկվել էին եղեռնից: Մայրը՝ Վերոնը, տնային տնտեսուհի էր, հայրը՝ Մելքոնը, Ռասինի մեքենաշինական գործարանի բանվոր: Քաղաքը միջին արևմտյան էր, չունեի բարձր մշակույթ: Բավականին «փոքր» էր՝ երեխաներին ապահով պահելու համար, բավականին «մեծ»՝ բավարարելու մարդկանց ճամփորդելու ցանկությունը: Դեպի արևմուտք «Այլնդ փարքն» էր, դեպի արևելք՝ Միչիգան լիճը, իսկ քաղաքի երկայնքով հոսում էր Ռուր գետը: Իր ծննդավայրի մասին Խրոյանը գրում է. «Մերը փոքրիկ այգիների և կամուրջների քաղաք էր»:

Խրոյանը գրքասեր աշակերտ չէր, նա ավագների վրա մինչև ուշ երեկո զամբյուղներ էր վաճառում, շաբաթ օրերն անց էր կացնում կինոսրահներում, երբեմն ձուկ էր որսում Միչիգանի լճում, իսկ աշնանը և ձմռանը ընկերների հետ որս էր անում մերձակա անտառներում: Բարձրագույն դպրոցն ավարտելուց հետո դարձավ դոնեդուո թերթի ու ամսագրի վաճառող, հետո Կորեական պատերազմի ժամանակ գորակոչվեց բանակ: Զինվորներին նստվով տարան ծովերից այն կողմ: 13 օրվա ուղ-

ևորությունից հետո նա անհավանականորեն փախավ բանակից: Բայց գտան և վերադարձրեցին Ճապոնիա:

Այնուհետև նրան տեսնում ենք Սան Ֆրանցիսկոյում: Դա 1960-ին էր, երբ քաղաքը կարծես պոեզիայի վերածնունդի մի ջերմոց լիներ, որի ալիքը տարածվում էր երկրով մեկ: Նա շփվում է Լև Ուելչի և Ալեն Գինզբերգի հետ, հաճախակի հանդիպում Ռիչարդ Ռոթիզանին և Ֆիլիպ Ուալենին: Այդ ժամանակ նա բանաստեղծություններ չէր գրում, փոխարենը կազմում և ի մի է բերում Վիլյամ Սարոյանի մատենագիտությունը (տպագրվեց 1965-ին): Դրան հետևեցին «Սան Ֆրանցիսկոյի վերածնունդի վեց բանաստեղծներ» դիմանկարների գիրքը, որ ընդգրկում էր բիտնիկ բանաստեղծներ Մնայդերի, Մեյթգերի, Ֆերլինգետի, Մըք Քլուրի, Ուելչիի և Անտոնինուս եղբայրների երկերը:

Ֆրեզնոյում Խրոյանը հիմնում է «Կիլիկիա» հրատարակչությունը և տպագրում իր բանաստեղծությունների առաջին գիրքը՝ «Հորս մահվան առթիվ»: Վիլյամ Սարոյանն այն բնորոշեց որպես ամերիկյան պոեզիայի լավագույն նմուշներից մեկը: Չնայած Խրոյանը բիտնիկների շարժման կենտրոնում էր և 60-ականների վերջին Ֆրեզնոյի պետական քոլեջում հանդես էր գալու առաջին դասախոսություններով բիտնիկների մասին, սակայն չդարձավ այդ ակումբի անդամ: 1995-ին հրատարակելով «Բիտնիկների ձայները»: «Բիտնիկների պոեզիայի անթոլոգիա»-ն՝ Խրոյանը բացատրեց. «Նրանք անկեղծ բանաստեղծներ էին, ունեին շտապ ասելու մի բան և մեծ ցանկություն՝ վճարելու իրենց դեմ ուղղված հարձակումների գինը»: Մնացածը, ինչ հետևում էր դրան (երկար մազեր, շեղված պահվածք, լուսնի շողեր), Խրոյանին չէր հետաքրքրում: Նա երբեք թույլ չտվեց, որ գրական ամենավերջին ուղղություններն իրենց կամքը թելադրեն իրեն, չնայած որոշ դեպքերում կանխատեսել էր այդ ուղղությունները:

1995-ին Խրոյանը նախաձեռնեց «Ֆորկոտուդս» («Խաչողիներ») ամսագրի ստեղծումը. առաջին պարբերականներից մեկը, որ պայքարում էր հանուն բազմամշակույթ արվեստի. ազգային ասպագայնացնող մի ուղղվածություն արվեստի մեջ, ինչն այսօր մերժվում է այնպիսի գերտե-

ությունների կողմից, կողմից, ինչպիսին են Գերմանիան, Ֆրանսիան և Անգլիան, բայց ոչ բազմազգ ԱՄՆ-ը և ՌԴ-ն: Դրանից շուրջ 20 տարի առաջ նա արդեն տպագրել էր առաջին համանման անթոլոգիան՝ «Ամերիկայի բնակեցումը: Ժամանակակից ամերիկյան բանաստեղծների ծագումը»:

Իր ծննդավայր Ռասինում Խրոյանը տպագրել է 12 գիրք: Առաջինը՝ «Պատիվ Ադանային» (1971) և վերջինը՝ «Նամակներ հորս» (2004): Գրական բոլոր տեսակներով՝ նորավեպ, վեպ, վիպակ, էսսե, բանաստեղծություն, հուշ, ամբողջացրեց քաղաքի հարուստ և մանրամասն նկարագրությունը: Այս շարքի շատ տեսարաններ գրված են հասուն մարդու հայացքով, ով, սակայն, աշխարհին նայում է պատանու աչքերով: Մյուսներն իր իսկ մանկության արտացոլումներն են:

Մանկության ամենավաղ հիշողությունները նա պատմում է «Ես կոչեցի այն տուն» և «Գետը հոսում է» գրքերում: Ըստ նրա՝ «Երեխայի աշխարհը բազմազան է, բայց նրա ծննդավայրը միակն է, որ կա աշխարհում: Հեռավոր վայրերը չեն գծագրվում նրա երևակայության մեջ, իսկ քաղաքի մյուս կողմն արդեն վեր է պատկերացումներից: Նետված լինելով կյանքի ավազանի մեջ՝ մենք ձգտում ենք կենտրոնաձիգ շրջանակներից դուրս գալ, որից հետո մեզանից յուրաքանչյուրը կամաց-կամաց կանգ է առնում տարբեր տեղերում, իսկ մեզանից ոմանք այլևս ի վիճակի չեն կանգ առնել, մինչև չպատվեն երկրագնդով մեկ: Դրանից հետո մենք վերադառնում ենք մեր միակ վայրը, ժամանակի բերումով նայում դրան նորից ուշադիր և նորից զարմանում՝ ինչն էր, որ տարել էր մեզ այնտեղ, և ինչն էր, որ մեզ վերստին ետ բերեց այստեղ»:

Խրոյանը գրեց նաև քնարական բանաստեղծություններ, կարճ, ազատ, պոռթկացող գործեր: Նրան չի կարելի կոչել փիլիսոփայորեն գունագեղ գրող, չնայած զգալի է այն խաղաղ, առեղծվածային լարվածությունը, որով լցված է նրա աշխարհը: Նրան չի կարելի համարել նաև փորձարարական գրող, որովհետև մխրձվում է ուղիղ երևույթների խորքը: Նրա ճիշտ տեղն ավանդապահ գրողների շարքում է:

Գիտակից հեզնանքը, ծաղրը, կոլաժը, մոնտաժը խելոք երևալը ժամանակակից ամերիկյան գրականության մեջ այն հիմնական գծերն են, որոնք երբեք տեղ չեն գտել Խրոյանի գրվածքներում: Ինչպես իր ուսուցիչ Մարոյանի, այնպես և նրա պարզ ու բաց ոճը շատ բան են տալիս ընթերցողներին:

Նրա պոեզիան արժանացել է ամերիկյան հեղինակավոր գրական մրցանակների:

1971 թ. Խրոյանը հրատարակեց «Արարատ» հայ-ամերիկյան գրական ամսագիրը և գրեց եղեռնից փրկվածների ու նրանց երեխաների մասին: 1974–1986 թթ. կնոջ՝ Նոնի Հոգրոգյանի հետ ուսումնասիրեց Գեորգի Գյուրջիևի ուսմունքը: Հետագայում հրատարակեց «Ստոպի-դե: Գյուրջիևյան ամսագիր մեր ժամանակների համար»: Հրատարակությունը ընդգրկում է Խերոյանների սեփական գրվածքներն ու նկարագրողումները: Հոդվածներից մեկն ավարտվում է Գանդիից մեջբերումով՝ ամփոփելով Խերոյանի աշխարհայացքը. «Հենց մենք պետք է լինենք այն փոփոխությունը, որն ուզում ենք տեսնել աշխարհում»: Այս մտտեցումը լավագույնս ներկայացնում է նրա կյանքի ուղին:

2004 թ. նա հրատարակեց 3 գիրք՝ «Բուդդա: Արթնացած կյանքի պատմությունը», «Արագիլի երգը և այլ վաղ ու հին երգեր», «Նամակներ հորս»: Վերջինը քառատողերի խորաթափանց մի հավաքածու է հայր ու որդի կապի մասին և նրա լավագույն բանաստեղծությունների գիրքն է: Նրա բանաստեղծությունների 20–րդ գիրքը՝ «Ավելի մոտ սրտին», հրատարակվել է Լոնդոնում 2006–ին: Բանաստեղծի գրքերը լի են հեզնանքով:

«Մոռացված հացը» (2007) անթոլոգիայում ամփոփել է ամերիկահայ առաջին սերունդի տասնյոթ անգլիագիր գրողների ստեղծագործությունները:

Դավիթ Խրոյանի հայկական շունչն առկա է նրա նաև այլ ստեղծագործություններում: Մանկական գրականության ասպարեզում Խրոյանն ու կինը մեծ վաստակ ունեն. միասին գրեցին գրավիչ հեքիաթներ երիտասարդ ընթերցողների համար՝ սկսած ձկնորսական պատ-

մություններից, մինչև կենդանական առակները և հայկական ժողովրդական հեքիաթները: Նոնիի Հոգրոգյանի նկարագրողումներն արժանացել են հեղինակավոր մրցանակների: Ստեղծագործում է նաև նա, մշակում է հայկական բանահյուսական հեքիաթներ և գրում կենսագրական պատմություններ:

Առանձնահատուկ ուշադրության է արժանի Խրոյանի «Ճանապարհ տնից» (“The Road from Home”, Նյու Յորք, 1971) ստեղծագործությունը, և դրա շարունակությունը «Տուն վերագտնելը» (“Finding Home”, Նյու Յորք, 1979): Առաջին վեպի կապակցությամբ նա հիշում է. «1971–ին, երբ ես և կինս մեկ ամսով Հայաստանում էինք՝ հատուկ հողված պատրաստելու «Արարատ» գրական ամսագրի համար (այն ժամանակ ես խմբագիրն էի), մի երեկո ճաշեցինք Երվանդ Քոչարի տանը: Մի պահ նա ինձ դիմեց և ինձ ուղղեց դեմքի զարմացած, խորիմաստ հայացքը: Այն նայելուց հետո նա նայեց ինձ ու ասաց. «Իու կարևոր գործ ունես անելու, գնա տուն»: Միգուցե այդ կարևոր գործը մորս պատմությունը գրե՞լն էր...»

«Ճանապարհ տնից» գեղարվեստականացված կենսագրությունը եղեռնից փրկված իր մոր մասին է: Այդ գիրքն ուղի հարթեց նմանատիպ երկերի համար, որոնցից են **Նենսի Գրիգորյանի (Գրիկորյանի)** «Զաբել», **Միշլին Մարքոս Ահարոնյանի** «Երեք խնձոր ընկավ երկնքից» և **Ադամ Բադդասարյանի** «Մոռացված կրակ» գործերը:

«Ճանապարհ տնից» գործը մորը տված խոստումն էր՝ պատմելու նրա կյանքը, եթե երբևէ գրող դառնար: Աղջիկը, կորցնելով ամբողջ ընտանիքը, ամուսնանում է Ամերիկայում բնակվող մի հայի հետ, ում երբեք չէր տեսել: Ամուսինները հաստատվեցին Վիսկոնսինում, որտեղ 7 տարի անց ծնվեց Դավիթը: Մանկությունիցս ի վեր մայրը նրան ասում էր. «Մի օր կմեծանաս և կպատմես իմ պատմությունը»: Գրողը շարունակում է. «Ինձ համար շատ ցավալի էր լսել նրա պատմությունը, դա մի դժոխք էր, որի միջով անցել էր մայրս, ուր ես մտադրություն էլ չունեի մտնելու: Բայց ես՝ 40 տարիս բոլորած մի մարդ, որ մորիցս լսել էի հետապնդումների, հալածանքների, սովահարության մասին, խոստում էի

տվել գրել նրա կյանքի պատմությունը իր իսկ աչքերով՝ որպես ականատես»։ Հետագայում Խրոյանը բացատրում է. «Երկար ժամանակ էս անգամ չէի ուզում նույնիսկ լսել մորս պատմությունը։ Ես շատ քիչ գիտեի այդ ամենի մասին։ Ես չգիտեի՝ արդյո՞ք իմ ուժերը կներեն գրել կենսագրություն, հատկապես մորս կենսագրությունը։ Ես չէի հաշտվում թուրքերի արածների հետ, բայց գիտեի, որ, ինչպես ցանկացած գրող, այնպես և էս, պետք է իմանայի, որ նախապաշարմունքը և զգացմունքայնությունը դեմ են պատմության փաստին։ Ուրեմն ի՞նչ անել. նշանակում է, որ վերջ ի վերջո որոշ բաներ պետք էր վերանայել իմ մեջ և գրել։ Այսպիսով, գիրք գրելը մի ծանր փորձություն էր և՛ ինձ համար, և՛ մորս համար, ով վերապրեց իր մեծ տառապանքը՝ պատմելով ինձ իր պատմությունը»։

Խրոյանի «Ճանապարհ տնից» վեպն ընդգրկում է տասը տարվա պատմություն։ 1907 թվականին ծնված Վերոն Դումեհյանը ներկայացնում է իր ու իր ամբողջ գերդասատանի կյանքի ճանապարհը 1914-1924 թթ.։ Ամեն ինչ սկսվում է 7 տարեկան աղջնակի ապահով մանկության առաջին ազդակներից, անցնում բռնագաղթի ու եղեռնի տառապանքի ուղիներով և ավարտվում արդեն 17 տարեկան օրիորդի նշանդրեքով։

Մա բնույթով խորապես հայեցի վեպ է թե՛ Առաջին համաշխարհային պատերազմի, հայերի տեղահանության, քստրի ու եղեռնի հավաստի փաստերով, որ այլ կերպ կոչվում է **Հայոց ցեղասպանություն**, թե՛ գլխավոր հերոսուհու՝ Վերոնի և մյուս կերպարների՝ տատի, պապի ծնողների, հորեղբայրների, նրանց կանանց, նրանց բուրբի երեխաների, նրանց հետ շփվողների հոգեկերտվածքով և թե՛ մահվան դժոխքից կյանքի բարեհուստ հրվանդան անցումով, ինչը հերթական անգամ նորոգում է խաչելության ու հարության առասպելը։

Այստեղ կա և՛ կենցաղ՝ կանանց խանդավառ երթը դեպի բաղնիք, և՛ խոհանոց՝ անուշահամ ճաշատեսակներով և ուտեստներով, և՛ բնություն ու բնապատկեր։ Գաղթի թափորն անցնում է գյուղերի ու քաղաքների միջով, սկսվում է Ազիզից ու Կոնիայից, հասնում մինչև Մեյ-

հան ու Եփրատ գետեր, մինչև Տեր Զոր, Բիրիջիք, Հալեպ, Զմյուռնիա, հունական կղզիներ ու քաղաքներ՝ Լեսբոս, Մամոս, Պիրեոս, Աթենք։

Հերոսուհին ներկայանում է ինչպես իր անմիջական ընտանիքի շրջանակում. հայրը՝ Բենյաթ, մայրը՝ Աղավնի, քույրը՝ Եղիսաբեթ-Եղսա, եղբայրները՝ Հարություն, Աբգար, ովքեր բոլորն էլ մեռնում են հիվանդություններից, տանջանքներից, ցավից ու վիրավորանքից, այնպես և գերդաստանի խմբանկարում, որոնց մեծ մասին պատուհասում է եղեռնը։ Նրան տեսնում ենք նաև այդ տարիների հայ կյանքի անբաժան մասը կազմող որբանոցներում, փախեփախի հրդեհների մեջ։

Ժամանակի պատկերը, որքան իրական-վավերական, նույքան էլ գեղարվեստական է։ Իրական դեպքերի ընթացքը, Հայոց ցեղասպանությունից հասնում է մինչև թուրք-հունական պատերազմ՝ քաղաքների ու մարտկոծություն, հույների պարտություն ու նահանջ, հույների հետ մեկտեղ նաև մյուս քրիստոնյաների, այդ թվում՝ հազարավոր հայերի հերթական ողբերգություն՝ հիմա արդեն 1922-ին։

Հերոսուհու ճակատագիրն այս ամենի մեջ է։ Նրա կյանքն անցնում է ոչ միայն փորձությունների, այլև այնպիսի տարատեսակ գայթակղությունների միջով, որպիսիք են որբանոցային «ապահովություն» ու որդեգրման երկու փորձը՝ մեկը զավակ չունեցող հույն գեներալի կողմից, ում քրոջ տնից Վերոնը փախչում է, և մյուսը՝ ամուսինը կորցրած և մի քանի երեխաների մայր տիկին Բոստանջանի կողմից, ում տնից նրան փրկում է տատը։ Այսպես փորձություններին ավելանում են նաև փորձառությունները, այդ թվում՝ նաև աշխատանքային ...

«Եվ լալիս ու լալիս էինք անվերջ»,- բնագրային այս արտահայտությունը լավագույնս ներկայացնում է վեպի շունչն ու շեշտը։ Լաց՝ տնից ու ծնողավայրից հեռանալու, ծնողներին ու հարազատներին կորցնելու, մահվան աչքերին նայելու, կենդանի մնացած ազգականների աջ ու ձախ սփռվելու, իր մանկահասակ բախտի, պատերազմի արհավիրքների, կյանքի անորոշության համար, նաև ուրախության արցունքներ՝ մահից փրկվելու, իրականության մեջ իրեն վերագտնելու և կյանքի փրկված շարունակության համար։

Վեպն այնքան հուզիչ է ու ներգործող, որ անհնար է կարդալ առանց հոգեկան ալեկոծության ու արցունքների, այնպես որ՝ «Եվ լալիս ու լալիս էինք անվերջ...»: Հեղինակը գտել է խոսքի շատ բնութագրական և ազդեցիկ ոճ, ինչի մեջ էլ պիտի որոնել ազնիվ ներգործության գաղտնիքը: Եվ պատահական չէ, որ կարճ ժամանակամիջոցում վեպը թարգմանվել է տասներեք լեզուներով:

Մայքլ Արլեն Կրոսերը (ծնվել է 1930-ին) հայտնի է «Դեպի Արարատ» (1975) վեպով, որը թարգմանաբար լույս է տեսել արևմտահայերեն՝ 1977-ին Բեյրութում և արևելահայերեն՝ 2002-ին Երևանում: Նա 1972 և 1989 թթ. այցելել է Հայաստան: Այս գիրքը ԱՄՆ-ում թարգմանվեց ամերիկացի դարձած այլազգիների մայրենի լեզուներով, որովհետև պատասխանում էր մի շատ կարևոր հարցի՝ թե ովքե՞ր են իրենք՝ նախկին հայրենիքներից և տոհմիկ մայրենի լեզվից հեռացած ազգությունների զավակները: Նրանք հիմա ունեն մեկ անուն՝ ամերիկացի, մինչդեռ արմատներով հայ են, ասորի, արաբ, ռուս, հրեա, չին, ճապոն: Մա բնությով փաստագրական-վավերագրական վիպակ է՝ կենսագրական նախահիմքով:

Ամբողջ շարադրանքի ընթացքում որդի Արլենը վրեժ է լուծում հայր Արլենից, ով ամեն կերպ ջանացել է որդու մեջ սպանել ազգայինը, մոռացության մատնել ժառանգորդական հիշողությունը, դրա հետ մեկտեղ՝ կտրել հայկական միջավայրից, լեզվից, պատմությունից: Իրական փաստի ազդակը գրականացվել ու խորացվել է՝ ձայնակցելով ամերիկայն գրականության մեջ լայն տարածում գտած հայրերի և որդիների ներհակության հիմնահարցին: Եվ ահա անհայտության առաջ կանգնած մարդը, պատահականորեն իմանալով իր ազգային պատկանելության մասին, որոշում է խորանալ դեպի արմատները, գնալ դեպի Արարատ: Այս դեպքում Արարատը ոչ միայն հայության համար սրբազան սար է, այլև խորհրդանշում է մարդկության նոր դարձը ազգաձուլման մարդահեղեղ-ջրհեղեղից:

Ընթացքում որդին հաճախակի է անդրադարձներով մտաբերում հորը. «Կյանքիս մեկ որոշ հանգրվանին ես ձեռնարկեցի ճանապարհոր-

դություն մը, անձիս հայտնագործելու, թե ինչ կը նշանակե հայ ըլլալ»: Եվ ապա. «Ես սկսա ատել հայրս իմ վախիս համար... Միշտ բան մը կար մեր միջև չխտված (ըստ երևույթին) անհասկանալի բան մը: Օտարականներ էինք իրարու: Կը հիշեմ, որ իր թաղման արարողությունը տեղի ունեցած էր հույն ուղղափառ եկեղեցիի մը մեջ (մոռս եկեղեցին) և ոչ թե հայկական»:

Ամերիկայի հայկական եկեղեցիներից մեկում բանախոսելուց հետո որդի Արլենը հանդիպում է հայերի, ովքեր նրան ասում են՝ դու հայ ես, քո հայրն էլ էր հայ և «այնքան ալ տարօրինակ բան մը չէ հայ ըլլալ»: Անելիքը ճշտելու համար որդի Արլենը այցելում է մեծ հային՝ Վիլյամ Մարոյանին: «Ուրախ եմ, ու որոշեցիր ճանչնալ հայերը, խենթանալիք ժողովուրդ է, զիտես»,- ասում է Մարոյանը ու նաև հանդիմանում. «Մեղք, որ հայերեն չես գիտեր, հրաշալի լեզու է, հրաշալի հնչյուններ» և խորհուրդ է տալիս անպայման մեկնել Հայաստան:

Ինքնաճանաչումն այս գրքում որքան դաժան, նույնքան էլ արդարացի է: Հայրենիքից առաջ, դեռ հայրենիքով չսպրած մարդը, այսինքն՝ որդի Արլենը, այսպես է խորհում իր ամերիկուսի կնոջ ներկայությամբ. «Գիտես, չեմ կարծեր, ու ես իսկուպես կը սիրեմ հայերը»: Արմատները ճանաչելու համար հայրենիքից առաջ, նա սկսում է կարդալ հայ ժողովրդի պատմությունը վերաբերող գրականություն՝ Դարեհի արձանագրությունից, հույն պատմիչների երկերից մինչև եղեռնին վերաբերող վավերագրերը: Այս ընթացքում, այսինքն՝ ինքնավերագտնման կես ճանապարհին, նա նորից քննադատական խոսքեր է ուղղում հոր հասցեին. «Միշտ ատած եմ հայ ըլլալս: Չեմ անտեսած զայն, ոչ ալ ամչցած եմ անոր համար, այլ ատած եմ զայն: Որովհետև ինձի տրված էին եվրոպական արժեքները: Եվ ես ատած եմ հայրս, որովհետև ան ընկրկած էր և զիս հանձնած եվրոպացիներուն»: Կա մի դրվագ. հայրը, շոկոլադի տուփը ձեռքին, այցելում է Փարիզի գիշերօթիկ դպրոցներից մեկում սովորող որդուն. որդին ուրախ-ուրախ վագում է հորն ընդառաջ և հայտնում ցնցող լուրը՝ տնօրենն ասել է, որ ինքը հայ է: Հայրը այլալվում-

մոայլվում է, որովհետև որդուց թաքցնում էր նրա ազգությունը: Դա հայր Արլենի ամենասև օրն էր:

Հայ ժողովրդի պատմությանը ծանոթանալով՝ աստիճանաբար նա հասու է լինում նաև այս աշխարհում հայ ծնվելու դժվարությանը. «Օ,~ հայեր: Որքան դժվար է հայ ըլլալ»: Այսպես հայրենիքի ուրացումից ամեն ինչ հասնում է հայրենիքի ոտնահարված դատը պաշտպանող որդու վիրավորված արժանապատվության ճիչը: Նրան հատկապես ցնցում և ազգային դարձի են բերում 1915 թվականի ցեղասպանության իրադարձությունները:

Խորհրդանշական է վեպի այն հատվածը, երբ երկար ճանապարհի եզրին կանգնում են երեք սերունդներ. ինքը՝ Մայքլ Արլեն Կրտսերը, հայրը՝ հայտնի գրող Մայքլ Արլենը, և պապը՝ ունևոր վաճառական Սարգիս Գույումճյանը, ով հենց դարասկզբին Ռուսեից ճանապարհ բռնեց դեպի Լոնդոն՝ որդուն միանգամից տալով օտար արժեքներին: Որդին մտաբերում է հոր պատմած երազը. հայրը երազում տեսնում է իր հորը, ով ճանապարհի եզրին կանգնած խոսում է նրա հետ ու կանչում: Բայց հայերեն է խոսում, և նա չի հասկանում մայրենի լեզուն: Մայքլ Արլենը իր հոր կանչն ու խոսքը չի հասկանում, բայց ահա Մայքլ Արլեն Կրտսերը հասկանում է, թե ինչ էր ուզում ասել պապը: Պապը ճանապարհի մի ծայրից ձայն է տալիս, հայրը նրան չի հասկանում, նրան լսում և ընկալում է ճանապարհի մյուս ծայրին կանգնած թռուր: Հայրը դուրս է մղվում ժառանգական շղթայից, իսկ ժառանգորդական կապը պապի ու թռռան միջև պահպանվում է ու շարունակվում:

Փիթեր Բալաքյանը (ծնվել է 1949 թ., Նյու Ջերսիում) բանաստեղծական հինգ ժողովածուից հետո անցավ արձակի և հաջորդաբար լույս ընծայեց «Ճակատագրի սև շունը» (1997, թարգմանությունը՝ 2003) վեպը և «Այրվող Տիգրիս» պատմահրապարագրական գիրքը: «Ճակատագրի սև շունը» վեպը նա բնորոշել է իբրև հուշագրություն: Իր տեսակով, գրական ծագումնաբանությամբ այն շատ նման է Մայքլ Արլեն Կրտսերի «Դեպի Արարատ» գրքի կառուցվածքին ու շարադրանքի ձևին՝ դիպաշարի զարգացում, ինքնակենսագրական հիմք, հերոսի հոգեբանական

արթնացման աստիճանական ընթացք, ազգային ճիչի վերածված լռած-խեղդված ձայն: Նույնը նաև շարադրանքի ոճի ու պատումի սկզբունքների մեջ՝ մանկան դիտարկումներ, հիշողություն, պատմության փաստ, վավերագրեր: Հուշագրությունից բացի, այն կարող է բնորոշվել նաև իբրև եղելություն, վկայություն, փորձագրություն, ինքնակենսագրություն:

«Ճակատագրի սև շունը», այսինքն՝ 1915 թ. ցեղասպանությունը, որ, ահա, տասնամյակներ շարունակ ուղեկցում է մեզ, մթագնում անցյալը, տրորում մեր ոչ միայն ցեղային, այլև մարդկային արժանապատվությունը, վտանգում ազգային միաբանության առաջնահերթ գաղափարը: Արևմտյան Հայաստան, ցեղասպանություն, պահանջատիրություն, սփյուռքահայության ուժացում, կորուսյալ երկրի կարոտ, նաև անտարբերություն՝ ազգային հոգեբանության փտածության կամ այլասերվածության աստիճանի, ըստ որի, եթե Արևմտյան Հայաստանն ունենանք, ո՞վ կզնա այնտեղ ապրելու: Այսինքն՝ համակերպվածություն կորուստին և փախուստ ազգային պատասխանատվությունից: Ահա այս ամենը մեզ պարտադրեց Ճակատագրի սև շունը՝ եղեռնը:

Այս գիրքը նույն հաջողությամբ կարող էր վերնագրվել Բալաքյան տոհմի պատմությունը, կամ «Դիարբեքի», որովհետև ներկայացնում է Դիարբեքի վերանավանված հայոց հնագույն Ամիդ քաղաքի ողբերգությունը, որն ավելի վաղ Ք.Ճ.ա. 6-րդ դարում ապրած հայոց արքա Տիգրանի անունով հայտնի է որպես Տիգրանակերտ, ինչը չպետք է շփոթել Տիգրան Մեծի մայրաքաղաք Տիգրանակերտի հետ՝ Աղձնիք նահանգում:

Բալաքյանի վեպում եղեռնը շարունակվում է այնքանով, որքանով հայությունը հեռանում է իր ազգային ինքնագիտակցությունից: Եվ միայն եզակիներն են, որ դարձ են կատարում դեպի իրենց արմատները: Ինքնակենսագրության և հուշագրության վավերականությունն ավելի իրական է դառնում Բալաքյան ընտանիքին ու գլխավոր հերոսին առնչվող կենդանի անունների և նրանց գործունեության հիշատակումով. նկարիչներ՝ Սարգիս և Վավա Խաչատյաններ, գրողներ՝ Ատոմ

Յարճանյան (Միամանթո), Վիլյամ Մարոյան, Մայքլ Արլեն Կրոսեր, Մարջրի Հովսեփյան-Դոբկին (հիշատակված Մերջրի Հուսեփյանն է), հանրահռչակ բանաստեղծ Ալեն Գինգբերգ, նկարիչ Արշիլ Գոբկի, երաժիշտ Ալան Հովհաննես, նաև Ռուբեն Նաքյան, Կոստան Զարյան և ուրիշներ: Պատանի հերոսը, որ ինքը՝ Փիթեր Բալաքյանն է, հակահայ անգլիտակցականությունից շրջադարձ է անում դեպի գիտակից հայկականություն և ԱՄՆ-ում դառնում հայոց դատի պաշտպան:

Տեսնում ենք նրա տատին, մորը, հորը, ամբողջ գերդաստանը, միջավայրը՝ դպրոց, համալսարան: Գոծողությունները կատարվում են ԱՄՆ-ում՝ Նյու Ջերսի, Թեննիսիլայ, Նյու Յորք, Եվրոպայում, մտաբերումների մեջ են Դիաբեթիքը, Կոստանդնուպոլիսը, պատմական Հայաստանի տարբեր վայրեր: Միահյուսվում են մայրական կողմի՝ Արուսյանների տոհմի և հայրական կողմի՝ Բալաքյանների պատմությունները: Այստեղ նաև սերնդային, ազգային համատեղության հարց կա, քանի որ կա նաև հրեական միջավայր, որ ձգում էր պատանուն, որովհետև «հայ լինելը» տարօրինակ էր մի փողոցում, ուր թվում էր, թե բոլորը պետք է հրեա լինեին. «Ես նույնպես հրեայի էի նման»: Ահա այս նամանության ու տարբերության մեջ խորանում է տարբերությունը, և նա, ի վերջո, հայտնաբերում է Հայաստանը: Այստեղից սկսած՝ ինքնաճանաչման տանջալի դեգերումներն են մինչև հրեությունից խուսափած գտարյուն հայկականություն:

Ամերիկա ու ամերիկացի դարձած հայ և հանկարծ նրա համար անձանոթ ու տարաշխարհիկ մի բառ՝ «Երկիր», ինչի վրա, սակայն, «կարծես կողպեք կար»: Ըստ ծնողների՝ այդ բառը պիտի խանգարեր ամերիկանացու տղայի ճակատագրին, ուստի ծնողներն այդ բառ-աշխարհը նրանից թաքուն էին պահում: «Գիտեի, որ նշանակում է Հայաստան... Եթե հանկարծ հարցեր էի տալիս երկրի մասին, մեծահասակները խոսակցության նյութը փոխում էին: Մի անգամ էլ մայրս ասաց. «Դա հնագույն բնակավայր է, հիմա այլևս համարյա չկա»: Բայց ի՞նչ եղավ այդ երկիրը: Ինքս ինձ էի հարցնում»: Օտար միջավայրի ապահովվածությունը, քաղքենիացեղ կենցաղը, նաև ազգային ցավով նոր սերուն-

դին չհիվանդացնելու նախապաշարվածությունը ծնողներին ստիպում է գավակներին հեռու պահելու այդ... հեռավոր և մի մեծ մասով անգո երկրից ու երկրի պատմությունից: Այդ անգո աշխարհի հետ միակ կապը տատն էր, ով դեռ կրում էր ազգային հիշողությունը: Ազգային գիտակցությունն արթնանում է աստիճանաբար, տարիքի ու փորձառության հետ մեկտեղ: Այստեղ ևս առկա է հոր և որդու միջև առաջացած ներհակություն: Ի վերջո, լավում է արյան կանչը և հազարամյակների խորքից հայոց քաղաքակրթությունն արթնացնում է տղայի ազգային ոգին: Նա խորասուզվում է իր «սեփական ոլիսի մեջ», հաստատում իր հայությունը, նվիրվում հայության դատին և ելույթներով պայքարում հայոց դատի միջազգային ճանաչման համար:

Մյուս հեղինակների ստեղծագործությունները ևս արժանի են լուրջ ուշադրության և պետք է դիտարկվեն բուն ամերիկյան իրականության մեջ հայագոյացման, հայապահպանման, հայակերտումի և հայաուրացման այս տեսադաշտում, ինչպես նաև ամերիկյան գրականության բեմահարթակում ու հանրային կարծիքի միջավայրում: Ամերիկահայ անգլիագիր գրականությունը հայերեն ընթերցողի առջև դեռևս բացվելու մեծ հեռանկարներ և չթերթված էջեր ունի, ինչպես Զարեհ Սուրյանի վիպասանությունը, Մերջրի Հուսեփյանի «Միրառատ տունը» վեպը, պատմվածքները, «Զմյուռնիայի դեպքը» պատմաբանասիրական ուսումնասիրությունը, Փիթեր Սուրյանի «Միրի», «Լավագույնը և վատթարը ժամանակներից» վեպերը, «Ընթրիք օտարների հետ» (2010) պատմվածքների հայերեն թարգմանական ժողովածուն, Դայանա Տեր--Հովհաննիսյանի և մյուսների պոեզիան:

ДАВИД ГАСПАРЯН

Национальный институт образования

**ОТРАЖЕНИЕ АРМЯНСКОГО ГЕНОЦИДА В ТВОРЧЕСТВЕ
АНГЛОЯЗЫЧНЫХ АРМЯНО-АМЕРИКАНСКИХ ПИСАТЕЛЕЙ**

В докладе подробно представляется тема Геноцида армян в творчестве Вильяма Сарояна, Левона-Завена Сюрмеляна, Майкла Арлена Младшего, Давида Хердяна, Даяны Тер-Оганесян, Питера Балакяна, Питера Наджаряна и других выдающихся писателей. Предки этих писателей, деды или отцы, пережили геноцид и, спасаясь от него, нашли убежище в чужой стране, впоследствии ставшей своей, в США. Ужасы геноцида они рассказали своим наследникам. Эти же сюжеты дали почву для создания произведений, имеющих мировое значение, что и нашло отражение в данном докладе.

Представим некоторых писателей и их произведения: Вильям Сароян - “Человеческая комедия”, “Мое сердце в горах”, “Армянин и армянин”, “Сквер гранат”, “Лето белой лошади”, “Семьдесят тысяч ассирийцев”, “Жалкий араб”. Левон-Завен Сюрмелян - “К Вам обращаюсь я, дамы и господа”, Майкл Арлен Младший - “Путь к Арарату”, Давид Хердян - “Дорога из дома”, Даяна Тер-Оганесян, сборники стихотворений “Как выбрать прошлое”, “Наконец”, “Песни хлеба и соли”, “Черные глаза в тумане зеленых глаз”, Питер Балакян - стихотворения, роман “Черный пес судьбы” и историческая публицистика “Горящий Тигрис”.

В докладе представляются отдельные произведения некоторых армянских англоязычных писателей, а также нескольких зарубежных авторов. Историями отдельных человеческих судеб эти писатели осуждают геноцид как преступление против человечества.

DAVID GASPARYAN

National Institute of Education

**THE REFLECTION OF THE ARMENIAN GENOCIDE IN THE
WORKS OF THE AMERICAN-ARMENIAN WRITERS**

The theme of the Armenian genocide has been from the very beginning the subject of works of not only Armenian writers, and of American authors of Armenian origin who create in English, but of many authors of other nationalities. Among foreign writers the names of Franz Werfel, Edgar Hilzenrat, Kemal Yalchin and others are worth mentioning. Authors of Armenian origin creating in foreign languages are also numerous: Alisia Kirakosyan, Vahe Qacha, Ruben Melik among them. The American authors of Armenian origin Levon-Zaven Surmelyan, William Saroyan, David Kherdyan, Michael Arlen Jr., Piter Balakyan will be referred to as this talk presentation is devoted to the above said writers in English. Their main works describing the Armenian genocide they have witnessed are introduced. In them the writers present the historical facts and events in a literary way based on their own experience or the experience of their parents, the parents who many years later had been able to narrate the horrible scenes of massacre and the long and torturous march. The cruel facts and events had to be depicted somehow, so they found their reflection in Armenian and American literature, as well as the literature of other peoples. Yet the theme they refer to is the same: the Armenian genocide.

ՎԱՀԱՆ ԱՂԱԲԱԹՅԱՆ

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ

ԵՂԵՌՆԻ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ ՄԵՐՈ ԽԱՆՁԱՂՑԱՆԻ

«ՄԵՈՒԱԾՆԵՐԸ ՀԻՇՈՒՄ ԵՆ» ՎԻՊԱԿՈՒՄ

1950-ականների վերջերին և 1960-ականներին հայ գրականության առանցքային թեմաներից էին 20-րդ դարասկզբի ողբերգական իրադարձությունները, որոնց մանրակրկիտ ուսումնասիրությունը, ճշգրտում-

ներն ու գեղարվեստական մարմնավորումներն արդեն իսկ օրվա հրամայական էին: Հենց այդ ժամանակ սրվեց հայ ժողովրդի պատմական հիշողությունը: Անցյալի դասերը ժամանակակից մոտեցումներով արժևորելու, հայ մարդու՝ ողբերգություններին դիմակայելու, ապրելու ու արարելու անկոտրում կամք դրսևորելու թեմաները գրողներին մղեցին նոր հետախուզումների:

Եղեռնի թեմայով է գրված Ս. Խանգաղյանի «Մեռածները հիշում են» վիպակը, որն ունի բավականին ուշագրավ կառուցվածք, կերպարաստեղծման ու պատկերավորման համակարգ: Վիպակը նվիրված է եղեռնի ու նրան հաջորդած տարիներին թուրք ոճրագործների բարբարոսություններին: Ուրվականների հանդիպման ու վերհուշի գրական հնարքի միջոցով Ս. Խանգաղյանը բացահայտում է դարասկզբին Արևմտյան Հայաստանում տեղի ունեցած ցեղասպանության քաղաքական դրդապատճառները, թուրքի տեսակի բուն էությունը:

Պատանի Սերոբ Կարաքեյանի և թուրք Օսմանի ուրվականների հանդիպումն ու գրույցը ահասարսուռ դեպքերից վաթսուն տարի անց «մի հեռավոր ու անյուրթեղ տեղ, ուր միայն մշուշ է՝ անէության ու չգոյության», առիթ է դառնում վիպակի պատանի հերոսի համար բացելու հուշերի կծիկը, նորից ապրելու դանթեական դժոխքի դաժան ժամանակները, անցնելու նրա բոլոր պարունակներով:

Հայոց մեծ եղեռնից հետո թուրքերը քաղաքակիրթ աշխարհին փորձում են համոզել, որ դա ոչ թե ցեղասպանություն է եղել, մի ողջ ժողովրդի՝ իր արմատներից կտրելու, տեղահանելու ու անապատներում ոչնչացնելու վաղօրոք խնամքով ու բժախնդրությամբ մշակված ծրագիր, այլ ազգամիջյան տեղական բնույթի բախումներ՝ երկուստեք հավասար կորուստներով:

Արևմտյան Հայաստանի Տրապիզոնի նահանգի Կաքավ (որի անունը թուրքերը փոխել են Քյոքլուկ) և Մանաստիր գյուղերում են ծնվել Սերոբն ու Օսմանը՝ տարբեր դավանանք ու մշակութային արժեքներ կրող պատանիները, որոնցից յուրաքանչյուրն ունի աշխարհընկալման՝ իր

տեսակին յուրահատուկ կերպ, մարդու, նրա գոյության իմաստի, չարի ու բարու վերաբերյալ յուրահատուկ պատկերացումներ:

Օսմանի մայրը ծննդաբերությունից հետո մահացել է, և Օսմանը Սերոբի մոր կաթով է սնվել: Հետո գաղթի ժամանակ Օսմանի հայրը Սերոբի հորը խնդրել է կնոջը հանձնել իր խնամակալությանը «Գոնե նա կփրկվի ձեր գերդաստանից» և բերել ու գազանաբար սպանել է նրան: «Հիշո՞ւմ ես իմ մոր կաթը, որով ես ու դու ենք սնվել: -Այո: Լուսիկ մայրիկին լավ եմ հիշում: -Հիշո՞ւմ ես իմ մոր արյունը»:

Թուրքերը միշտ էլ օգտվել են ոչ թե հայերի միամտությունից, ինչպես շատ շատերն են կարծում, այլ մարդու նկատմամբ ունեցած նրա հավատից, վստահությունից. «Հայրենիքը վտանգի մեջ է: Հայրենիքին զինվոր տվեք, հայեր: Տվին...»: Այսպես ոչ միայն Կաքավ-Քյոքլուկ գյուղում, այլև ողջ Արևմտյան Հայաստանում, նաև Տրապիզոնի նահանգում, որտեղ հարյուր հիսուն հազար հայ էր ապրում եղեռնից առաջ: Միայն Կաքավը երկու հարյուր հիսուն հայ գերդաստան ուներ, մոտ չորս հարյուր գենք կրելու ընդունակ տղամարդիկ: Եվ նրանցից միայն Տեր Միքայել Թահմազյանն ու Ջաքար Թումանյանն են համոզում մարդկանց զինվոր չտալ, ելնել լեռներն ու դիմադրել:

«Պետք է ենթարկվել իշխանությանը», - պնդում են գյուղի մեծահարուստները: «Երեսուն տարի առաջ չլսեցինք Մինաս օղլի Օհանեսին, հայեր: Ձենք չառանք, հլու հպատակ եղանք սուլթանին և սուլթանը մեզ կոտորեց: Երեսուն տարի առաջ երեսուն կես դառանք: Իսկ հիմա բնովին կջնջվենք: Ճանաչեցե՞ք միմյանց, մարդի՛կ, մանավանդ ճանաչեցե՞ք թուրքին: Մի՛ թողեք գյուղը և ...մի՛ հեռացեք: Դիմադրենք ու մեռնենք մեր տների շեմերին», - հակադարձում է Տեր Միքայել Թահմազյանը:

Ս. Խանգաղյանը առանց որևէ չափազանցության ներկայացնում է թուրքի թուրք տեսակին: Եղեռնից հետո՝ 1920-ականներին, երբ իշխանության եկավ Մուստաֆա Քեմալը, ու երբ հայերը նորից միամիտ կերպով սկսեցին հավատալ, որ վատ օրերն արդեն հետևում են մնացել, դարձյալ օրակարգում էր մնում աշխարհում թանգարանային նմուշի համար միայն մի հայ թողնելու թուրքական դարավոր երազանքը:

Անցյալի դաժան իրադարձությունները դարձյալ դաս չեղան հայերի համար: Վիպական կան բազմաթիվ դրվագներ, երբ հայերը հավատում են իրենց ծանոթ թուրքերին, հյուրընկալվում նրանց օջախներում և քնած ժամանակ սրախողխող լինում կամ կացնահարվում: Խիստ բնութագրական է թուրք պատանին, որի ձեռնապարկում զինյալները հայի կտրած գլուխ են հայտնաբերում: Բնութագրական է այն առումով, որ խնդրում է բաց թողնել իրեն, որպեսզի մի հայ սպանելու համար ստանա իրեն հասանելիք տասը ոսկին:

Այլգոն լեռան ստորոտում դիրքավորված հայ զինվորները մարտերից մեկի ժամանակ գերի են վերցնում նաև թուրք կանանց, նրանց հետ՝ բարձրաստիճան մի պաշտոնյայի «հանրմին»: «Գիշերը իմ տղաներից մի երկուսը ցանկացան հանրմին տանել իրենց դիրքերը... սակայն ես արգելեցի. –Չիշեցեք, մենք մեր ազգի զավակներն ենք և չպիտի այնպիսի վայրագություններ անենք, ինչպես այդ հանրմի ամուսինը կամ եղբայրը կանեին մեր նկատմամբ»¹:

Վիպական ներկայացված բազմաթիվ թուրքերից հենց այդ փափկասուն կինն է առավել օբյեկտիվ բնութագրում իր տեսակը: Հայերի մասին ունեցած նրա կարծիքը միայն իր կարծիքը չէ: Դա դարերով արմատավորված կարծրատիպ է, որի միջոցով թուրքին համոզել են, որ հային սպանելը մեղսագործություն չէ, այլ աստվածահաճո արարք. «Դուք վայրենի ցեղ եք, սովոր եք բաց երկնքի տակ ապրելու, իսկ մենք քաղաքակիրթ մարդիկ ենք: Մեզ մի համեմատեք ձեզ հետ»²,– ասում է գերված թրքուհին:

Թուրքի թուրք տեսակի համար ավելի բնութագրական են նույն կնոջ հետևյալ խոսքերը. «Իմացեք, հայեր, ձեր ծծկեր մանուկն անգամ ստելի է Մուստաֆա Քեմալ փաշայի կառավարության համար: Նա ձեզ չի թողնի, որ դուք կենդանի մնաք»³:

¹ Խանգալյան Մ., 1971, ամսաթ., 1979, էջ 389:

² Նույն տեղում, էջ 388:

³ Նույն տեղում, էջ 389:

«Քաղաքակիրթ» տեսակը վիպական բնութագրվում է որպես խաբեբայության, նենգության, ստորաքարշության, դաժանության մարմնացում: Դրվագներից մեկում նկարագրվում է, թե ինչպես են թուրքերը Մուհամեդի ծննդյան տոնին կանանցից ու երեխաներից կազմված ամբոխի առջև, որը հրճվանքից երանության զգացումով պարում է հսկայական խարույկի շուրջ, ողջակիզում հայ կանանց ու երեխաների:

«Առաջինը բակ մտավ Դալի խոջան: Թուրք ամբոխը ճեղքվեց, բաժանվեց, ապա ալիք-ալիք սկսեց ոռնալ, գուրթ աղերսել: Ես տեսնում եմ, թե ինչպես մարդը դարձել է անասուն, սողուն, ոչնչություն: Թուրքերից ոչ ոք չէր հոգում իր երեխայի մասին, ոչ ոք իր մորը չէր պաշտպանում: Յուրաքանչյուրն իր գլուխն էր փորձում ազատել: Սրանք մարդիկ չեն, այլ անուսարսափից եռացող սողուններ: Երեխաներն ընկան ամբոխի ոտքերի տակ ու ճմրթվեցին: Կանայք իրենց գրկի մանուկներին նետեցին ուր պատահեց: Այդ ժխորի մեջ հստակ հնչեց մեր խմբապետի ձայնը. –Վերջացրեք այդ խելագարներին: Մի քանի րոպե ևս, և թուրքերից ոչ ոք կենդանի չմնաց»⁴:

Մեր գրականության մեջ քիչ կարելի է հանդիպել դեպքերի, երբ հայերը համարժեք պատասխան են տալիս թուրք բարբարոսներին իրենց կատարած ոճրագործության դիմաց: Միշտ ներկայացվում է թշնամուն դեմ առ դեմ դիմակայելու, մարտերում սխրանքներ գործելու մեր ոգին, մեկը տասի դեմ ելնելու մեր քաջագործությունը, անզեն մարդկանց, հատկապես կանանց, երեխաների, ծերերի հանդեպ ցուցաբերած մեր տեսակին հատուկ մեծահոգությունը, ներողամտությունը: Քիչ կարելի է հանդիպել դրվագների, երբ մենք գործել ենք «ակն ընդ ական, ատամ առ ատաման» սկզբունքով:

«Մեռածները հիշում են» վիպական շատ-շատ են այն դրվագները, երբ հայերը, մտնելով թուրքերով բնակեցված իրենց հայրական գյուղերն ու այգիները, ճամփեզրերին տեսնելով բազմաթիվ գլխատված, բռնաբարված, մահից հետո անգամ ստորացված դիակներ, համարժեք վերաբերմունք էին ցուցաբերում:

⁴ Նույն տեղում, էջ 325:

Կիզնետեքստ անունով գյուղի տեր, քեմալական Վելի Չավուշ բեյը կառավարության անունից հավատացնում է մի խումբ կանանց ու երեխաների, որ գան ու իր գյուղում ապահով ապրեն: Խեղճ կանայք ու երեխաները հավատացել են բեյին, դուրս եկել թաքստոցներից ու իջել գյուղ: Բեյը նրանց հրավիրել է հայոց վանքի ագարակը՝ խոստանալով հագուստ ու հաց բաժանել: «Չորս հարյուր կին, երեխա, ծեր գնացել են «բարի» բեյի հրավերին: Բեյը զինվորներով շրջապատել է անգեն, անօգնական, տառապած կանանց ու երեխաներին և կոտորել կացիններով, բրերով, եռաժանիներով»⁵:

Սպանված 26 կանանց կրծքերի պտուկներից բեյը թզբեհ է սարքել տվել, իսկ գեղեցիկ աղջիկներին ու հարսներին առանձնացրել ու վաճառել է քոչվոր ցեղապետերին:

Արժանապատվություն չպիտի ունենային հայերը, եթե համարժեք պատասխան չտային. «Վելի Չավուշի ազգականներից քսանվեց հոգու կախաղան հանեցինք: Կանչեցի իմ քրոջ որդի Սեպուհին, նաև նրա տարեկից տասնչորս-տասնհինգ տարեկան հայդուկներին, Վելի Չավուշին ու ինը ոստիկանի հանձնեցի նրանց ու հրամայեցի իրենց ձեռքով վերջացնել:

- Պետք է ձեզ վարժեցնեմ թշնամու արյուն թափելուն, տղաներ: Դե, ձեզ տեսնեմ»⁶:

Թուրքերն իրենք են ստիպում հայ հայդուկներին դիմել համարժեք գործողությունների: Թեև որոշ դրվագներում դարձյալ դրսևորվում է հայի գրասրտությունը՝ «հայ աղջիկը վիրակապում է վիրավոր թուրք զինվորին, մի այլ դրվագում հայ հայդուկը կերակրում է թուրք երեխաներին և այլն»:

Յոթ տարի Ալիզոն լեռան լանջերին, շրջակա անտառներում ու քարանձավներում դիրքավորված հայ հայդուկները, նրանց հետ նաև կանայք ու երեխաներ, անասելի ծանր օրեր են ապրում, անհավասար բազմաթիվ մարտեր են մղում, շատ ու շատ զոհեր են տալիս, բայց

⁵ Խանգաղյան Ս., նշվ. աշխ., էջ 383:

⁶ Նույն տեղում, էջ 383-384:

ամուր են մնում իրենց հավատին, երբեք չեն խաբվում թուրք զինվորականների ու քաղաքացիական իշխանությունների կեղծ խոստումներով:

Մարտերի բովում է թրծվում վիպակի գլխավոր հերոս Մերոբ Կարաբեյանը, ով լեռները բարձրացավ, երբ ընդամենը տասնվեց տարեկան էր ու յոթ տարի շարունակ մղեց իր կռիվը, որը կռիվ էր ապրելու համար, հայրենիքը, հայ կանանց ու հայ երեխաներին պաշտպանելու կռիվ:

Մերոբի հասակակիցներից շատերն իրենց ընտանիքների հետ նահատակվել են գաղթի ճանապարհներին, իսկ ինքը թրծվել է բազմաթիվ մարտերում, դարձել ճանաչված հայդուկապետ, որից վախենում, սարսափում ու նրա հետ արդեն հաշվի են նստում թուրք բարձրաստիճան զինվորականները:

Մերոբի ամենամեծ նպատակը թուրքերի կողմից առևանգված երեխաների փրկության գործն է: Նա սարսափով է մտածում, որ հայ դեռատի աղջիկներին պիտի հարեմ տանեն, տղաներին դարձնեն ենիչերիներ և հետագայում նրանց միջոցով հաշվեհարդար տեսնեն քրիստոնյաների նկատմամբ: Մերոբը ջանք չի խնայում այդ երեխաներին ազատելու համար և շատ շատերին է փրկում գերության ճիրաններից:

Մերոբի և Օսմանի ուրվականների խորհրդանշական հանդիպման ընթացքում Ս. Խանգաղյանն ընդգրկում է մի քանի տարածաժամանակային հարթություններ, վերհուշի միջոցով անդրադառնում նաև հայոց պատմության հին անցքերին, ցույց տալիս ժամանակի շրջանաձև շարժման յուրահատկությունները:

Հայոց Ալիզոն լեռան ծերպերում են իրենց դիմադրությունը կազմակերպում Կաքավ-Քյոքլուկ գյուղի այն սակավաթիվ զինյալները, ովքեր չհավատացին թուրքերի երդումներին ու զինված պայքարի ուղին ընտրեցին՝ հայրենի հողի վրա կռվելու, արժանապատիվ կերպով զոհվելու ուղին՝ գերադասելով անապատներում անիմաստ ու անփառունակ կերպով նահատակվելուց:

Թուրքի թուրք տեսակին Ս. Խանգաղյանը հակադրում է հայի հայ տեսակը՝ ցավագին կերպով արձանագրելով, որ կա նաև հայի թուրք

տեսակ, որն ավելի վտանգավոր է բացահայտ կերպով գործող թշնամուց: Այս տեսակի ներկայացրած ամենամեծ վտանգն այն է, որ նրանք, գուցե նաև անկախ իրենցից, թուրքերի ձեռքին դառնում են միջոց ստոր նպատակների իրագործման ճանապարհին:

Վիպական այդպիսիք են դեղագործ Հովսեփ Էֆենդին և Մութաֆյան Գևորգ աղան, ովքեր թուրքերի հրահանգով մի քանի անգամ բարձրանում են հայերի դիրքերն ու համոզում վայր դնել զենքը, վերադառնալ իրենց բնակավայրերը՝ կառավարության անունից տալով կեղծ խոստումներ ու երաշխիքներ:

Նրանց միջոցով շատ ու շատ միամիտ հայերի են խաբել ու կոտորել թուրքերը, որի համար, բնականաբար, հայի այդ թուրք տեսակը ստացել է իր արժանի պատիժը: Մերոքի վրիժառուների ձեռքով, ի խրատ այդպիսիների, կախաղան են հանվում Հովսեփ Էֆենդին ու Գևորգ աղան, ստանում իրենց արժանի պատիժը, որին, մինևույնն է, վաղ թե ուշ պիտի արժանանային հենց թուրքերի ձեռքով:

«Մեռածները հիշում են» վիպական ներկայացված է պատմական ու գրական հերոսների մի բավականին պատկառելի շարք, և, բնական է, որ նրանցից ոչ բոլորն են ավարտուն կերպարներ: Օրինակ՝ բավականին անհամոզիչ է թրքուհի Սոնայի կերպարը: Վերջինս ամուսնանում է հայդուկապետ Մերոքի հետ, լիովին վերափոխվում, դառնում նրա զինակիցը, կռվում իր ազգակիցների դեմ: Տեսականորեն գուցե և հնարավոր է, որ մարդն ամբողջովին վերափոխվի, բայց վիպական գեղարվեստականորեն հիմնավորված չեն ո՛չ Սոնայի գործողությունները, ո՛չ էլ հատկապես այն դրդապատճառները, որոնք նրան մղում են այդպիսի քայլերի: Կարելի է թվարկել մի շարք այլ կերպարներ, որոնք բոլորովին էլ անհատականացված չեն ու ավելորդ տեղ են զբաղեցնում վիպական ընդհանուր կառույցում: Օրինակ՝ թուրքերի դեմ մղված պայքարին ինտերնացիոնալ բնույթ հաղորդելու և ընդգծելու համար, որ թուրքերը բոլոր քրիստոնյաների հանդեպ են դաժան ու անմարդկա-

յին*, գրողը ներմուծում է մի քանի հույների և վրացիների կերպարներ, որոնք չեն մերվում ու չեն տեղավորվում հեղինակային մտահղացումների շրջանակներում:

ВАГАН АГАБАБЯН

Иджеванский филиал ЕГУ

ТЕМА ГЕНОЦИДА В ПОВЕСТИ С. ХАНЗАДЯНА

«МЕРТВЫЕ ПОМНЯТ»

Повесть С. Ханзадяна «Мертвые помнят», написанная на тему геноцида имеет довольно интересное построение, систему образов. Повесть посвящена варварствам турецких преступников в годы Геноцида армян и последующие годы. С. Ханзадян раскрывает политические причины геноцида в начале века в Западной Армении.

С. Ханзадян без преувеличения представляет тип «турка». После геноцида в 1920 гг, когда к власти пришел Мустафа Кемал и когда армяне наивно начали думать, что тяжелые дни уже позади, по-прежнему на повестке дня оставалась вековая турецкая мечта: оставить одного армянина в качестве музейного экспоната.

Типу турка Ханзадян противопоставляет тип армянина, с болью отмечая, что есть турецкий тип армянина, который опаснее открыто действующего врага. Самая большая опасность этого типа заключается в том, что он в руках турок превращается в средство на пути осуществления низких целей.

* Միայն գերմանացիների ու անգլիացիների հետ թուրքերի ջերմ վերաբերմունքը բոլորովին այլ բան է հուշում:

VAHAN AGHABABYAN

YSU Ijevan Branch

**ECHOES OF GENOCIDE IN SERO KHANZADYAN'S
“THE DEADS REMEMBER” NOVELETTE**

Written with the theme of Genocide the S. Khanzadyan's "The Deads Remember" novelette (1971) has a remarkable structure, an image creating and notional system. The novelette devoted to the massacre barbarism of Turks in the years of Genocide and later years. S. Khanzadyan reveals the political motives of Genocide, happened in Western Armenia, the real essence of Turk type with the meeting of ghosts and literal trick of anamnesis.

S. Khanzadyan represents without any exaggeration Turk's Turk type. After Genocide in 1920s, when Mustafa Kemal came to the power, and Armenians in naive manner began to believe, that bad days had stayed in the past, again in agenda had been staying Turkish age-old dream to keep an only Armenian for museum sample.

ՍՈՒՄԱՆՆԱ ԱԲԱԶՅԱՆ

ԵՊԼՀ

**ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ
ԹՈՒՐԲ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՁ**

«Ես ոչ մեկի անունը չեմ տալիս, հայրի՛կ, բայց այս կյանքում ինչ-որ մի բան ինչ-որ մի տեղ սխալ է¹»: Այս բառերն արտասանում է ցեղասպանության արդյունքում օվկիանոսից այն կողմ հայտնված ամերիկացի հանճարեղ հայի՝ Վիլյամ Սարոյանի փոքրիկ հերոսը: Նա ոչ թե ոչ ոքի չէր դիմում, այլ դիմում էր համայն մարդկությանը՝ հասկանալու՝ որտե՞ղ և ի՞նչն է սխալ:

¹ Սարոյան Վ., Երկեր, հ. 2, Երևան, 1997, էջ 42:

Եվ փոքրիկի հարցին սկսեցին պատասխան որոնել աշխարհի շատ մտածողներ, նրա հարցին արձագանքեցին ֆրանսիացին, անգլիացին, ամերիկացին, նորվեգացին, շվեդը, թուրքը:

Այդ արձագանքը ամրագրվեց նաև թուրք ժամանակակից գրականության մեծերի՝ Օրհան Փամուկի, Քեմալ Յալչընի, Էլիֆ Շաֆաքի, Ֆերիյե Չեթինի և Այշե Գյուլ Ալթընայի, Թաներ Աքչամի, ադրբեջանցի գրող Աքբրամ Այլիալիի և մյուսների ստեղծագործություններում: Այս գրողները կատարեցին միայն մեկ համարձակ քայլ, հետևեցին մեծ լեհի՝ Բոգդան Գեմբարսկու խորհրդին և բացեցին «կախարդված» դուռը: Իսկ դնից այն կողմ Օրհան Փամուկը տեսավ հայաթափված Կարսը, տեսավ Կարսի ամեն փողոցում ողբերգական վեհությամբ կանգնած լքված հայկական և ռուսական շենքերը, որոնք հույսով նայում էին թափվող ձյան տակ քայլող Կային՝ «Չյունը» վեպի անձնուրաց հերոսին:

Օրհան Փամուկը Նոբելյան մրցանակի արժանացավ «Չյունը» վեպի համար: Այս հանրաճանաչ գրքում ի թիվս այլ թեմաների խոսվում է նաև Կարսից անհետացած հայերի մասին: Հանճարեղ գրողը համարձակորեն պատասխան է պահանջում թուրք կառավարությունից: «Ո՛ր են Կարսի և ամբողջ Անատոլիայի միլիոնավոր հայերը»²:

Թուրք վտարանդի բանաստեղծը Կարս է գալիս՝ իմանալու ճշմարտությունը խավարի մեջ թաղված այդ քաղաքի մասին, ինքնասպանություններ, հետապնդումներ, իսլամի աստվածացում կամ մերժում, առաջնորդ ձևացող, բայց իր իսկ առաքելությունը չիմաստավորող Լազիվերթը ճշմարտությունը բացահայտելու փոխարեն ավելի է խճճում. բանաստեղծ Կան ընդամենը երեք օր է մնում Կարսում: Ճիշտ նույնքան միտք կա հայերի մասին այս գրքում:

Գրքի բանալի կարող է հանդիսանալ «Չյունը» բանաստեղծությունը: Չյան փաթիլը նման է վեցաթև աստղի՝ տրամաբանության, հիշողության, հանճարեղ հայի՝ Վիլյամ Սարոյանի փոքրիկ հերոսը: Նա ոչ թե ոչ ոքի չէր դիմում, այլ դիմում էր համայն մարդկությանը՝ հասկանալու՝ որտե՞ղ և ի՞նչն է սխալ:

Գրքի բանալի կարող է հանդիսանալ «Չյունը» բանաստեղծությունը: Չյան փաթիլը նման է վեցաթև աստղի՝ տրամաբանության, հիշողության, հանճարեղ հայի՝ Վիլյամ Սարոյանի փոքրիկ հերոսը: Նա ոչ թե ոչ ոքի չէր դիմում, այլ դիմում էր համայն մարդկությանը՝ հասկանալու՝ որտե՞ղ և ի՞նչն է սխալ:

² Փամուկ Օ., Չյունը, Երևան, 2009, էջ 245:

դության, երևակայության առանցքներով: Ասիական միջնադարի դա-
ժան օրենքներով ապրող թուրք հասարակության հիշողությունը շատ
կարճ է, նրանց երևակայությունը չի անցել անհողաբաշխ նախամարդու
երևակայությունից: Կան, որի անունը խորհրդանշանական է, քանի որ
կապ ունի ձյան թուրքերեն անվանման և Կարս քաղաքի անվան հետ,
դառնում է Կարսի նորօրյա կենսագիրը. նա նայում է Կարսի հայերի
տների խավար պատուհաններին և սոսկում, որ այսօր էլ իր ժողովուր-
դը ուժ չունի հավատալու իր իսկ հորինած ազդագրին՝ «Մարդը Ալլահի
գլուխգործոցն է, իսկ ինքնասպանությունը՝ սրբապղծություն»³:

Ձյունը տեղում է վեպի ամբողջ ընթացքում. վեցաթև փաթիլի հիշո-
ղության, երևակայության և տրամաբանության առանցքների վրա նա
տեղադրում է սերը, խանդը, Ալլահին, ինքնասպանությունը և իշխա-
նությունը, անելանելի վիճակը: Հավում է ձյան փաթիլը, և բոլորը մոռա-
նում են այդ մասին:

Թուրք գրողը հիշեցնում է իր ժողովրդին, որ մոռացությունը տա-
ռապանք է, հիշել, նշանակում է ազատվել չարիքից. նա, իհարկե, մեծ
ցանկություն ունի, որ թուրք ժողովուրդը սրբի իր ճակատից մարդաս-
պանի, կողոպտիչի դրոշմը, բայց ի տրիտուր նրա ցանկության՝ այսօր
նա վտարանդի է: Գրքում հիշատակվում են քարաշեն հին ռուսական
շենքերը՝ կառուցված պետերբուրգյան ճարտարապետության ոճով.
դրանցից մեկը տանջարանի էր վերածվել: «Եղել են նաև մարդիկ, ովքեր
այստեղ ապրել են Հայկական պետության ժամանակներից և նրանց՝
դեռ հազար տարի առաջ կառուցած վանքերից մի քանիսն իրենց ողջ
հրաշագեղությամբ կանգուն են առ օրս»⁴:

«Այդ շենքերից մեկը պատկանել է մի մեծահարուստ հայի և ունե-
ցել է քառասուն սենյակ, հետագայում դարձել է ռուսական հիվանդա-
նոց»⁵:

³ Նույն տեղում, էջ 400:

⁴ Նույն տեղում, էջ 27:

⁵ Նույն տեղում, էջ 19:

Գրքում հայերի մասին հիշատակվում է երեք անգամ, բայց ամբողջ
վեպը բողոք է՝ ուղղված անարդարությանը, մատնությանը, արյունին,
ցեղասպանությանը:

Ընթերցողը ավելի քան համոզված է, որ քաղաքի այսօրվա տերերը
անհաղորդ են նրա պատմությանն ու չխամբող գեղեցկությանը:

Հեղինակը ցավով արձանագրում է. «Ասես կապ գոյություն ուներ
անվերջանալի ձմեռների և այն բանի միջև, որ քաղաքը վերափոխվում
էր ավերակների, աղքատանում և օրեցօր ավելի դժբախտանում»⁶:

«Ձյունը» վեպը ոչ միայն Օրհան Փամուկի լավագույն ստեղծագոր-
ծությունն է, այն Հայոց ցեղասպանությունը և, ընդհանրապես ցեղաս-
պանությունները, մերժող արթնամիտ ու արդարացի վկայարան է:

Փամուկը համոզված է. «Բոլորիս տրվում է այն, ինչին ձգտում ենք
ամեն բանից առավել»⁷:

Քեմալ Յալչնի երկու վեպերը՝ «Ավանդ տված օժիտը» և «Միրտս
քեզնով կը խայտայ», ավելի մանրամասն են ներկայացնում եղեռնից
մազապործ, ծպտյալ հայերի տառապանքները, սարսափը:

Թուրք գրողը կատարում է իր դասախոսի՝ հայուհի Մելինեի
խնդրանք-պահանջը և լինում է Վանում, Կարսում, Մուշում, Անիում.
թակում է դռներ, որոնց բնակիչները իրենց հոգիներն են բացում նրա
առաջ:

Մելինեն՝ գրքի հերոսուհին, հայուհի է: Գերմանիայի համալսա-
րաններից մեկում կարդում է «Աշխարհի ժողովուրդների բանահյու-
սություն» առարկան, սակայն հայ ժողովրդի բանահյուսության մասին
չի խոսում՝ սպասելով, որ ունկնդիրներից որևէ մեկը երբևէ կհե-
տաքրքրվի իր ազգությամբ:

Քեմալ Յալչնը, որ նրա ունկնդիրներից էր, անսպասելի հետաքրքր-
վում է դասախոսի ազգությամբ, և ծայր է առնում մի հրաշալի բարեկա-
մություն:

⁶ Նույն տեղում, էջ 28:

⁷ Նույն տեղում, էջ 126:

Յալչնը խոստանում է բացահայտել փակ գորոցների գաղտնիքները: Նա դա անում է բացառիկ նվիրումով ու պատասխանատվությամբ:

Գրքում առաջին անգամ խոսվում է ունևորության հարկի մասին, որը կրկնակի ցեղասպանություն էր:

Յաթաղանից մազապուրծ հայերը քշվում էին լեռները, ենթարկվում անլուր տանջանքների, նրանք թաքցնում էին իրենց ազգությունը. մինչ այսօր էլ կան միլիոնավոր ծպտյալ հայեր, որոնք իրենց պապերից են լսել իրենց ով լինելու մասին:

Յալչնը նույնպես ցանկանում է ջնջել իր ժողովրդի վրայից մարդասպանի պիտակը, նա նույնպես հատուցում է պահանջում. նրա հերոսը քսան տարի անց կարողանում է Հունաստանում գտնել իրենց հարևան հայի երեխաներին և նրանց հանձնել իրենց պահպանությանը ավանդ տրված օժիտը:

Յալչնը ցանկանում է վերականգնված տեսնել Ախուրյանի երկու ափերը միացնող կամուրջը և լսել Անիի մայր տաճարի զանգերը: Ուզում ենք հավատալ, որ նրա ցանկությունը իրականություն կդառնա:

Թուրք մտավորականներ Ֆեթիհյե Չեթինը և Այշե Գյուլ Ալթնայը լույս են ընծայել «Թոռները» գիրքը: Նախաբանում նրանք գտել են, որ գրքի ընթերցողները կլսեն 1915-ին կամ դրանից առաջ իսլամացված հայերի պատմությունները՝ հայ թոռների շուրթերից:

25-հայ թոռներ իրենց պատմություններով բազմաթիվ հարցեր են բարձրացնում. «Այսօր Թուրքիայում ապրողները որքանով զիտեն իրենց հետ պատահածների պատմությունները, ինչպե՞ս են քողարկում և այս գաղտնիքներն ինչպե՞ս են ազդում մեզ վրա: Գրեթե 100 տարի անց 1915-ին տեղի ունեցածները, թոռների համար ի՞նչ են նշանակում, տատիկների և պապիկների հայ լինելու մասին 100 տարի անց ասելն ինչու՞ է այդքան դժվար և ցավոտ: Այս ցավի և լռության մասին խոսելը կարո՞ղ է արդյոք օգնել, որպեսզի ուրիշ ցավեր և լռություններ էլ նկա-

տենք, խոսենք, հաղթահարենք, կարո՞ղ է արդյոք նպաստել դեռ չեղած այլ ցավերի և լռությունների կասեցմանը»⁸:

Իսկ գրքի վերջում հեղինակները փաստում են, որ «խաղաղ ապագայի չենք հասնի, մինչև ստերից ու իրական վախից փրկվելով, անցյալի հետ չառերեսվենք»:

Նախքան «Թոռները» հուշապատումը գրելը, Ֆաթիհյե Չեթինը գրել է «Մեծ մայրս» գիրքը. հենց այս գրքի մի պատմությունն էլ դարձել է «Թոռներ» գրքի մտահղացումը:

Էլիֆ Շաֆաքի «Մտամբուլի բիճը» վեպը կարծես ամբողջացնում է մյուս բոլոր վեպերի թեմատիկան:

Հետաքրքիր է, որ թուրք գրողը այս վեպը գրել է երկու անգամ. երկրորդը կոչվում է «Մտամբուլի ընկեցիկը» և նախատեսված է թուրք ընթերցողի համար: Երկու գրքերի միջև կան էական տարբերություններ, երևի հենց այսպես Շաֆաքը կարողացավ խուսափել թուրքական դատարանից:

Իր արմատները որոնող Արմանուշ Չաքմաքչյանը հեռավոր Արիզոնայից հասնում է Ստամբուլ և պատահաբար հայտնվում իր մոր ամուսնու՝ Մուստաֆայի թուրք ընտանիքում. կատարվում է անհավատալի:

Արմանուշի նախատատը եղել է այդ թուրք ընտանիքի հարսը, ուրեմն նրանք ինչ-որ չափով արյունակիցներ են:

Կալիֆորնիայի Բերքլիի համալսարանի պրոֆեսոր Սուրփուն Չաքմաքչյանի ընտանիքը ևս եղեռնազարկ հայերի ընտանիքներից է: Նրանք դեռ պահպանում են լեզուն, կենցաղը, սովորությունները: Բարսամ Չաքմաքչյանի և Ռոզի ամուսնությունից ծնվում է Արմանուշ Չաքմաքչյանը, որի անցած ողիսականը ծանոթ է եղեռնից մազապուրծ ցանկացած հայի:

Նրանց Շուշան տատիկը հավատում է, որ կյանքը ծայրեծայր գոյատևման պայքար է և ոչ մի պարտություն չէր ընդունում. էթե հայ են, պայքարը երեք անգամ ավելի դժվար է: Ծնողների բաժանության պատ-

⁸ Չեթին Ֆ., Ալթնայ Ա. Գ., Թոռները, Երևան, 2011, էջ 7:

ճառով թուրք Մուստաֆայի մոտ է մեծանում Արմանուշ Չաքմաքչյանը, դա էլ խիստ զայրացնում է քեռի Տիգրանին, նա բարձրաձայնում է իր զայրույթը. «Ամբողջ ընտանիքը 1915-ին մսագործ թուրքերի ձեռքով կորցրած, ցեղասպանությունից մազապուրծ տոհմի թոռն եմ, սակայն Մուստաֆա անունով թուրք է ինձ մեծացրել, այդ պատճառով էլ սովորեցի իմ արմատներին դավաճանելը, մեծացա, որ ժխտեմ հայոց ցեղասպանությունը: Անեկդոտ է. Աստված վկա»⁹:

Արմանուշը ընկնում է Քազանջըների ընտանիք և նրա համար բացահայտվում է դաժան ճշմարտությունը: Նրանք ազգակիցներ էին: Վեպում մանրամասն անդրադարձ է կատարված տեղահանությանը, ցեղասպանությանն ու սպանողին. «Միջին Արևելքից մինչև Անատոլիա հասիր, հետո կոնստն, հետո ամենուր կնայես: Այնտեղի բնիկ միլիոնավոր հայերին ի՞նչ պատահեց, լավ: Չուվեցին: Հավեցին: Որք մնացին: Վտարվեցին: Ջրկվեցին ունեցվածքից»¹⁰, ունեցվածքից զրկվելուն և զինաթափվելուն գուրջնաձայն՝ «Վտարվեցինք մեր հողից, զրկվեցինք մեր ունեցվածքից, մեզ հետ կենդանու պես վարվեցին, գառան պես մորթվեցինք: Մարդու պես մահանալու իրավունքից անգամ զրկվեցինք:

Տղամարդ չէր մնացել: Ձենք փնտրելու պատրվակով մտնում էին հայերի տներ, իսկ հետո թալանում էին»¹¹:

Չնայած հեղինակը կանգնեց դատարանի առջև՝ թրքությանը վիրավորելու մեղադրանքով, սակայն ողջունելի է, որ գրքի տպագրությունը չարգելվեց. սա Հրանտ Դինքի և նրա կողմնակիցների հաղթանակն էր:

Սակայն Դինքն էլ դարձավ մեկ ու կես միլիոնից մեկը. ավա՛ղ, թուրքերը չեն ուզում գտնել դեպի մարդ տանող ճանապարհը: Շաֆաքի հերոսը ընդհանրացնում է. «Ինչի՞ համար է գրվել գիրքը, եթե այժմյան սերունդները իրենց պապերի սխալներից չպետք է սովորեն»¹²:

Թուրք հայտնի գործիչ Թաներ Աքչամի անունը քաջ հայտնի է, նա առաջիններից էր, ով ասում էր, որ իր ժողովուրդը պարտավոր է ընդու-

նելու հայերի ցեղասպանությունը: Աքչամի «Երիտթուրքերի հանցագործությունը մարդկության դեմ. Հայոց ցեղասպանությունը և էթնիկ զտումները Օսմանյան կայսրությունում» աշխատությունը հայտնի է շատ երկրներում, ուստի չենք անդրադառնում դրան: Բայց չենք կարող չխոսել ադրբեջանցի գրող Աքրամ Այլիսլիի «Քարակերտ երագներ» գրքի մասին, որը սխրանք է այսօրվա Ադրբեջանի քաղաքականության ֆոնի վրա: Այլիսլի նշանակում է Ագուլիսցի. գրքում նկարագրվում են 1990 թվականի Բաքվի արյունալի դեպքերը. Հայոց ցեղասպանությունից անցել էր 75 տարի. պատմությունը կրկնվում է, և Այլիսլին փաստում է, որ «եթե յուրաքանչյուր սպանված հայի համար գեթ մի մոմ վառվի, այդ մոմերի ցուրը լուսնի լույսից վառ կլինի»¹³: Գրքի հերոսներից մեկը Չարենցին է վերագրում հետևյալ միտքը. «Մենք նրանց թույլ չտվեցինք այնտեղից մի կտոր անպետք կաշի կտրել, իսկ դա նրանց բացառիկ հնարավորություն ընձեռեց, որ մորթեն մեր ողջ ազգին»¹⁴: Այլիսլին բացառիկ հիացմունքով է խոսում հայերի մասին «Այլիսում այն ժամանակներում աստվածներին հավասար մարդիկ էին ապրում. նրանք ջրմուղ էին սարքել, այգի տնկել, իրենց փոքրիկ Ագուլիսի յուրաքանչյուր թիզ հողը վերածել դրախտի»¹⁵: Աքրամ Այլիսլին օգտվել է Ջաքարիա Քանաքեռցու օրագրից: Մեռնում է ճանաչված դերասան Մադայ Մադրդլին՝ իրեն տեսնելով միայն Ագուլիսի Քարակերտ եկեղեցում՝ իր մանկության անկրկնելի օրրանում:

«Էջմիածին մեկնելու, անձամբ կաթողիկոսի օրհնությամբ քրիստոնեություն ընդունելու, այնտեղ ընդմիջտ վանական դառնալու և հայերի հանդեպ մահմեդականների գործած չարիքը աղոթքով Աստծուց թողություն հայցելու ցանկությունը Մադրդլիի հոգում հանկարծակի հառնել էր սումգայիթյան իրադարձություններին հաջորդող մի գիշեր»¹⁶:

Սա բացահայտ ցավի, ամոթի, ներում հայցելու խոստովանություն է: Իսկ հայաթափված Ագուլիսի հայերի դատարկված տներում ապրող

⁹ **Շաֆաք Է.**, Մտամբուլի բիճը, Երևան, 2012, էջ 65:

¹⁰ Նույն տեղում, էջ 66:

¹¹ Նույն տեղում, էջ 70:

¹² Նույն տեղում, էջ 405:

¹³ **Այլիսլի Ա.**, Քարակերտ երագներ, էջ 130:

¹⁴ Նույն տեղում, էջ 145:

¹⁵ Նույն տեղում, էջ 15:

¹⁶ Նույն տեղում, էջ 50:

մահաբեղականները խելագարվում էին: Այլիսլին 1919 թ. Ագուլիսի և 1989 թ. Բաքվի ջարդերը իրավացիորեն նույնացնում է, բայց նշանավոր դերասանին ծեծողներին նա կոչում է «երազներ»՝ Հայաստանից գաղթած ադրբեջանցիներ, հավանաբար փորձելով մաքրել իր հայրենակիցների ոճրագործությունը, բայց մենք այնուամենայնիվ կարդում ենք տողատակերը. «1990 թ. Բաքվի արյունագույժ գիշերը ահագնորեն թաղվում էր խավարում, իսկ Ագուլիսի եկեղեցիներում աղավնիները աղավնատեսիլ երազներ էին տեսնում: Թող իրականություն դառնան այդ երազները, և ժողովուրդները նորից նայեն Սուրբ Արարատին, որտեղից թռավ նոյան աղավնին»¹⁷: Եվ վերջապես այս ամենի հանրագումարն է ռեժիսոր Ֆաթիհ Աքընի «Հատում» ֆիլմը. իր արմատները փնտրող Նազարեթ Մանուկյանը մարմնավորում է հայ ժողովրդի հիշողությունը:

Խոսքս ավարտում եմ մեծ մարդասերի՝ Նանսենի հրաշալի ձևակերպմամբ. «Հույսը, անկախ ամեն ինչից, այս ժողովրդի սրբությունն է»: Ուրեմն և հուսանք, որ բոլոր այն պետությունները, որոնք համառորեն չեն ուզում ընդունել Հայոց ցեղասպանությունը, վերջապես դեմքով կշրջվեն արդարության, իրավունքի, ազատ կամքի կողմը և միաձայն կասեն. «Այո, եղել է Հայոց ցեղասպանություն, մենք ընդունում ենք դա»: Սրան է միտված նաև այս պատմական հրաշալի ակնթարթը:

СУСАННА АБАЗЯН

ЕГЛУ

ОТГОЛОСКИ ГЕНОЦИДА АРМЯН В СОВРЕМЕННОЙ ТУРЕЦКОЙ ЛИТЕРАТУРЕ

В статье представлены отголоски Геноцида армян в турецкой литературе. Автор ссылается на романы “Снег” лауреата Нобелевской премии Орхана Памука, “Стамбульский подкидыш” Элифа Шафака,

¹⁷ Նույն տեղում, էջ 152:

“Тобою радуется сердце” Кемала Ялчина, “Каменные сны” Акрама Айлисли и на реакцию турецкой интеллигенции, которая в целом пытается встряхнуть вековую вину Геноцида армян с турецкого народа и жить в мире.

SUSANNA ABAZYAN

YSLU

THE ECHO OF THE ARMENIAN GENOCIDE IN THE MODERN TURKISH LITERATURE

This article refers to the echo of the Armenian Genocide in Turkish literature: Reference is made to the Nobel Prize winner Orhan Pamuk's "Snow", Elif Shafak's "The bastard of Istanbul", Kemal Yalchin's "You rejoice my heart" novels, to the Akram Aylisli's "Stone Dreams" story and to the reactions of Turkish intelligentsia in general.

The article claims to inform the participants of the International Conference about the desire of Turkish humanist thinkers to get rid of the century guilt of the Armenian Genocide of their people and live in peace.

ԱՆՆԱ ԱՍՍՏՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ

ԵՐԳԻՉ ԳՆԴԱՊԵՏԸ. ՎԱՀԱՆ ՏԵՐ-ԱՌԱՔԵԼՅԱՆ

«Փորձանքներ շատ եմ տեսել, հազար-հազար անգամ գրկախառնվել եմ մահվան հետ ու դեն հրել նրան ապրելու վճռականությամբ»:

Վահան Տեր-Առաքելյան¹

¹ ԳԱԹ, Վ.Տեր-Առաքելյանի ֆոնո, թիվ 49:

Առաջին համաշխարհային պատերազմը խեղեց միլիոնավոր մարդկանց կյանքն ու ճակատագիրը: Դժվար է ասել, թե ինչպես կդասավորվեր հայ անվանի երգիչ, ռազմական գործիչ, գրող և թարգմանիչ Վահան Տեր-Առաքելյանի (1883-1941) ստեղծագործական կյանքը, եթե չպայթեր այդ մեծ ու անհայտ՝ Առաջին համաշխարհային պատերազմը²:

Ինչպես գիտենք, Թուրքմենչայի պայմանագրի համաձայն՝ 1828-1829-ին Պարսկաստանից Անդրկովկաս ներգաղթեց շուրջ 45 հազար հայ: Նրանց թվում Վայոց ձոր է ներգաղթում որք Առաքել Տեր-Աստվածատրյանը և իր քրոջ հետ բնակություն հաստատում նոր հիմնադրվող Մալիշկա գյուղում: Մի քանի տարի անց մահանում է գյուղի Տեր Սարգիս անունով քահանան: Նրա մահվանից հետո քահանա է ձեռնադրվում հոգևորականների շառավիղ Առաքել Տեր-Աստվածատրյանը, և Վայոց ձորի Մալիշկա գյուղում սկզբնավորվում է Տեր-Առաքելյան տոհմը³:

Վահան Տեր-Առաքելյանը՝ Տեր Խաչատուրի երրորդ որդին, ծնվել է 1883թ. օգոստոսի 24-ին Դարալագյազ (այժմ՝ Վայոց Ձորի Մալիշկա) գյուղում: Սկզբնական կրթությունը ստացել է հոր մոտ, գյուղի դպրոցում: Դեռ պատանի՝ նա Մալիշկայում ճանաչված էր որպես երգիչ: Տեսնելով որդու արտակարգ ընդունակություններն ու ուսման անհագ ծարավը, հայրը որոշում է նրան ուղարկել Գևորգյան ճեմարան:

Հմայիչ և գերող ձայնով, երաժշտական նուրբ լսողությամբ աչքի ընկնող տասներեքամյա պատանին հոր ուղեկցությամբ 1896-ին գալիս է Էջմիածին և ընդունվում Գևորգյան ճեմարան, որն ավարտում է 1905-ին, 22 տարեկանում⁴:

² Վ.Տեր-Առաքելյանի մասին տե՛ս ԳԱԹ, Վ.Տեր-Առաքելյանի ֆոնդ: **Վահան Տեր-Առաքելյան** (նյութերի ժողովածու, կազմ. Խաչիկ Սաֆարյան), Երևան, 1998, 200 էջ: **Աղաջանյան Մ.**, Վահան Տեր-Առաքելյան, Նշանավոր ճեմարանականներ, Պրակ Բ, Էջմիածին, 2009, էջ 419-125:

³ **Առաքելյան Ա.**, Վահան Տեր-Առաքելյան, նյութերի ժողովածու, էջ 182:

⁴ Տե՛ս նույն տեղում:

Էջմիածնի Գևորգյան ճեմարանում ուսումնառության ընթացքում Կոմիտասը ջերմ հոգատարություն է ցուցաբերում և առանձնահատուկ ուշադրություն դարձնում «սև աչք ու ունքով, գանգրահեր, բարձրահասակ, թխադեմ, գեղեցկատես և շնորհաշատ պատանու վրա՝ նրան հաղորդակից դարձնելով երգի ու երաժշտության դժվարին արվեստին, բացահայտելով դրա յուրահատուկ հմայքն ու ծանոթացնելով նրան կատարողական արվեստին, երաժշտական գիտության նրբություններին, նրա մեթոդներին, եղանակներին և այլն»⁵: Շուտով Վ. Տեր-Առաքելյանը դառնում է Կոմիտասի ամենասիրելի սանն ու ճեմարանական երգչախմբի մեներգիչը: Վահանի ճեմարանական դասընկեր Մելքոն Քրիշչյանը հետագայում կհիշի. «Վահանը սիրելի էր ոչ միայն իր համակրելի արտաքինով և շենշող խառնուածքով, այլ և մանաւանդ իր արտակարգ զիլ, հնչել «հերոսական» թենոր (tenor heroique) ձայնով: Ան փայլն էր ո՛չ միայն ճեմարանի հանդեսներուն և Մայր Տաճարի հանդիսաւոր ժամերգութեանց, այլ և պարծանքը երգչախումբին»⁶:

Երգեցողության մեջ նա մրցակից չունեւ, ինչի շնորհիվ էլ շուտով դառնում է Կոմիտասի ամենասիրելի սանը: «...Կոմիտասի հետ կապված իմ հիշողությունները մեկը մյուսից ավելի վառ ու գունեղ են, որովհետև Էջմիածնի գորշ իրականության մեջ նա այնպիսի պայծառ մի դեմք էր, որի ցայտուն գծերը երբեք աղոտացնել չի կարող ժամանակը», - կխոստովանի Վ. Տեր-Առաքելյանը⁷:

1905 թ. ապրիլի 3-ին Թիֆլիսի արտիստական ընկերության դահլիճում տեղի է ունենում Կոմիտասի ստեղծագործություններին նվիրված համերգ, որի ընթացքում ելույթ է ունենում Էջմիածնի Գևորգյան ճեմարանի սաներից կազմված երգեցիկ խումբը՝ Կոմիտասի ղեկավարությամբ: Մեներգիչն էր Վ.Տեր-Առաքելյանը⁸: Այս բախտորոշ համերգը նոր,

⁵ Նույն տեղում:

⁶ **Քրիշչյան Մ.**, Խորտակուած քնար. Անմար կանթեղ, Կոմիտասը ժամանակակիցների հուշերում և վկայություններում, Երևան, 2009, էջ 93:

⁷ **Հարությունյան Գ.**, Վահան Տեր-Առաքելյան, նյութերի ժողովածու, էջ 159:

⁸ **Մազմանյան Ռ.**, Հայ երաժշտական կյանքի տարեգրություն. 1901-1910թթ., Երևան, 2006, էջ 99:

առանձին փայլ է տալիս Հայաստանում լավագույն տենորի համբավ ունեցող Վահանին: Հաջորդ օրվա թերթերում դրվատանքի խոսքեր են գրվում նրա մասին. «Երաժշտասեր հասարակայնության շրջանում ամենուր խոսակցության թեման Տեր-Առաքելյանն էր, նրա շողշողուն տաղանդը»⁹: Այդ օրերին էլ Վահանը ծանոթանում է Հովհաննես Թումանյանի հետ: Համերգից հետո Հովհաննես Թումանյանը, ձեռքը դնելով Վահանի ուսին, ասում է. «Հրաշալի է քո ձայնը, տղաս, հրաշալի, կոմիտասյան հայ երգը արժանի կատարող ունի»¹⁰: Հետագայում մեծ բանաստեղծի հետ թիֆլիսյան հանդիպումների արձագանքն ենք տեսնում «Իմ ծանոթությունը Հովհաննես Թումանյանի հետ» հուշերում, որը գրել է 1936 թվականի մարտի 3-ին: Իսկ մինչ այդ՝ 1919-ի փետրվարի 20-ին գրեց «Մեր Հովհաննես Թումանյանին» հոդվածը:

Ի դեպ՝ Վահանը ոչ միայն Կոմիտասի ղեկավարած երգչախմբի մեներգիչն էր, այլև նրա բազմաթիվ երգերի առաջին կատարողը: «Երբ Կոմիտասն ավարտում էր որևէ երգի վերջնական մշակումը, առաջին կատարման իրավունքը վերապահում էր Վահանին: Վերջինս մի տեսակ վերջնական սրբագրողի և փորձարկողի դեր էր կատարում, քանզի Վահանի կատարումներն այժի էին ընկնում ոճական մաքրությամբ և հարազատությամբ»¹¹:

Կոմիտասի և Վահանի բարեկամության արձագանքը հետագայում դարձան իր սիրելի ուսուցչի մասին նրա հուշերը՝ «Անհիշաչար մարդը» (1930), «Կոմիտասի ժառանգությունը» (1934) և «Վճռական ճակատամարտը» (1936): Երբ 1935-ին հայտնի դարձավ Կոմիտասի մահվան գույժը, բազմաթիվ տեղերում սգո երեկոներ կազմակերպվեցին: «Նման մի երեկո է տեղի ունենում նաև Թբիլիսիի կոնսերվատորիայի մեծ դահլիճում, ուր հակիրճ խոսք է ասում Վ. Տեր-Առաքելյանը: Վերջում կոմիտասյան երգերի կատարումներով հանդես է գալիս Հայկանուշ Դանիելյանը: Որքան էլ հանդիսատեսները խնդրում են, Վահանը թեև բեմ է

⁹ **Հարությունյան Գ.**, Վահան Տեր-Առաքելյան, նյութերի ժողովածու, էջ 158:

¹⁰ **Առաքելյան Ա.**, Վահան Տեր-Առաքելյան, նյութերի ժողովածու, էջ 184:

¹¹ **Մաֆադյան Խ.**, Կոմիտասի սիրելի սանը, Վահան Տեր-Առաքելյան, (նյութերի ժողովածու), էջ 6:

դուրս գալիս, սակայն մեծ վշտի ճնշման տակ մի տուն անգամ երգել չի կարողանում: Ստիպված բեմից հնչեցնում են Կոմիտասի և Վահանի գուգերգերի ձայնագրությունները, որոնք խորապես հուզում են ունկնդիրներին: Դրանից հետո մի խումբ երիտասարդներ ուսամբարձ Վահանին բեմ են բերում, սակայն նա խնդրում է, որ ներեն իրեն, նման հոգեպես հուզված վիճակում ինքը երգել չի կարող»¹²:

Իսկ մինչ այդ...

1908 թ. հունվարի 3-ին Կոմիտասը և Վ. Տեր-Առաքելյանը, համերգներ տալու և հայկական երաժշտության մասին դասախոսություններ կարդալու նպատակով, Վաղարշապատից մեկնում են Իգդիր: Հունվարի 4-ին Իգդիրի դպրոցի դահլիճում տեղի է ունենում Կոմիտասի դասախոսությունը հայկական ժողովրդական ու եկեղեցական երաժշտության մասին, որին մասնակցում է երգիչ Վահան Տեր-Առաքելյանը: Վ. Տեր-Առաքելյանը որպես մեներգիչ մասնակցում է Կոմիտասի ղեկավարությամբ երգեցիկ խմբի բոլոր համերգներին. Վաղարշապատում՝ 1908 թ. փետրվարի 20-ին, Երևանի ակումբի (կլուբի) թատրոնում՝ 1908 թ. փետրվարի 22-ին, Բաքվի ժողովարանի դահլիճում՝ 1908թ. ապրիլի 1-ին և 4-ին և այլն¹³: Երգչի ամենասիրելի ստեղծագործությունն ու կատարողական արվեստի գագաթն էր «Անտունին»: Ի դեպ՝ տարիներ անց իր գրախոսականները Վ. Տեր-Առաքելյանը ստորագրելու էր Անտունի, Վտարունի կեղծանուններով:

Ճեմարանն ավարտելուց հետո Վ.Տեր-Առաքելյանը մեկ տարի դասավանդում է հարազատ կրթօջախում:

Ընտրելով երգչի ուղին, Կոմիտասի խորհրդով 1909-ին տաղանդավոր տենորն ընդունվում է Պետերբուրգի կոնսերվատորիա՝ միաժամանակ երգելով Մարիինյան թատրոնում և Պետերբուրգի հայկական եկեղեցու երգչախմբում: Բայց առաջին աշխարհամարտը կտրուկ փոխում է Վ. Տեր-Առաքելյանի ճակատագիրը, իսկ հայ բեմը զրկվում իր ապագա

¹² Նույն տեղում, էջ 14:

¹³ Տե՛ս **Մազմանյան Ռ.**, Հայ երաժշտական կյանքի տարեգրություն. 1901-1910թթ., էջ 139, 141-142, 144:

հռչակավոր տենորից:

Կոնսերվատորիան չավարտած՝ 1914 թ. օգոստոսի 3-ին Վ. Տեր-Առաքելյանը գորակոչվում է պահեստից և նշանակվում իսկական զինվորական ծառայության Բելոստոկյան 50-րդ հետևակային գնդում՝ որպես 7-րդ վաշտի կրտսեր սպա: 1914 թ. նոյեմբերի 15-ից մինչև դեկտեմբերի 29-ը, ժամանակավորապես, նա 7-րդ վաշտի հրամանատարն էր, իսկ դեկտեմբերի 29-ից մինչև 1915 թ. փետրվարի 16-ը՝ 7-րդ վաշտի օրինական հրամանատարը: «Այստեղ՝ Գալիցիայում ու Կարպատներում, Բելոստոկյան 50-րդ գնդում ցուցաբերած բազմաթիվ սխրագործությունների համար նա պարգևատրվել է ցարական Ռուսաստանի այն ժամանակվա բոլոր շքանշաններով»¹⁴:

1914 թ. նոյեմբերի 28-ի մարտում՝ Կոբլիլե գյուղի մոտ հրետանային արևի պայթյունից ստանում է կոնտուզիա և կոտորակառումբից՝ աջ ականջի վիրավորում:

1914 թ. դեկտեմբերի 15-ին պարգևատրվում է սբ. Աննայի IV աստիճանի շքանշանով՝ «Արիության համար» մակագրությամբ, իսկ 1915 թ. փետրվարի 4-ին թշնամու դեմ մարտերում աչքի ընկնելու համար պարգևատրվում սբ. Ստանիսլավի III աստիճանի՝ սրերով և վարդակապով շքանշանով:

1915 թ. փետրվարի 16-ին, մարտում՝ 816 բարձունքի վրա, Ստեյնիցա գյուղի մոտ հրազենային գնդակով ստանում է միջմկանային վիրավորում ձախ ոտքի ազդրի միջին շրջանում:

Թշնամու դեմ մարտնչելիս աչքի ընկնելու համար «անվախ ու վեհանձն ասպետը» 1915 թ. ապրիլի 18-ին պարգևատրվում է Գեորգիևսկյան զենքով՝ 1914 թ. նոյեմբերի 28-ին Կրասնովո գյուղի մոտ, տեղանքի արտակարգ բարդ պայմաններում թշնամու դիրքերը գրոհելիս, վաշտի գլուխն անցած, սվիններով թշնամուն խրամատներից դուրս շարտելու համար: Վիրավոր վիճակում մնալով շարքում՝ գերի է վերցնում 1 սպա և 249 ցածրաստիճան զինվորականներ¹⁵:

¹⁴ Առաքելյան Ա., Վահան Տեր-Առաքելյան, նյութերի ժողովածու, էջ 185:

¹⁵ Արխիվային տեղեկանքներ, Վահան Տեր-Առաքելյան (նյութերի ժողովածու), էջ 194:

1915 թ. ապրիլի 19-ին Վ. Տեր-Առաքելյանը պարգևատրվում է սբ. Գեորգիի IV աստիճանի շքանշանով՝ 1915 թ. հունվարի 24-ի լույս 25-ի գիշերային մարտի ժամանակ՝ Ստեյնիցա գյուղի մոտ 682 ամրացված բարձունքը գրոհելիս, վաշտի գլուխն անցած, թևից թշնամուն շրջանցելու և արընթաց սվինամարտով նրա խրամատներին տիրանալու, երկու գործող գնդացիի առգրավելու, 3 սպա և 200 ցածրաստիճան զինվորական գերի վերցնելու համար¹⁶:

1915 թ. մայիսի 15-ին Վ. Տեր-Առաքելյանը պարգևատրվում է սբ. Աննայի III աստիճանի՝ սրերով և վարդակապով շքանշանով:

1915 թ. հունիսի 1-ին վերքերը բուժելուց հետո վերադառնում է գունդ: «Քաջ ու անվեհեր սպային առաջարկում են ծառայության անցնել կայսերական հատուկ գորագնդում, սակայն նա շնորհակալություն հայտնելով՝ հրաժարվում է և, առաջնորդվելով հայրենասիրական բուռն, անդիմադրելի ցանկությամբ, խնդրում է հրամանատարությանը իրեն փոխադրել թուրքական ռազմաճակատ. «Նրանք մեր ժողովրդի թշնամիներն են, ես կուզենայի չափվել հատկապես դրանց հետ», - ասում է Վահանը: Նրա խնդրանքը չի մերժվում, և նույն թվականի մայիսից կոչվում է թուրքերի դեմ, կովկասյան ռազմաճակատում»¹⁷: Կոչվում է՝ «ծոցագրպանում մի նամակ պահած, նամակ, որից նա իմացել էր իր թանկագին ուսուցչի և իր ժողովրդի ահավոր ողբերգության մասին»¹⁸:

Այսպես՝ 1915 թ. հունիսի 2-ին Վ. Տեր-Առաքելյանը գործուղվում է Կովկասյան բանակի շտաբի հրամանատարության տակ: Հուլիսի 22-ին ներկայանում է Բաքվի 153-րդ հետևակային գունդ՝ համալրման: Գրանցվում է գնդի և I վաշտի ցուցակներում: Հուլիսի 28-ին նրան շնորհվում է պողպորուչիկի կոչում: Օգոստոսի 4-ին հիվանդանում է և էվակուացվում:

1915 թ. դեկտեմբերի 7-ին՝ առողջանալուն պես, ներկայանում է գունդ:

¹⁶ Նույն տեղում, էջ 195:

¹⁷ Առաքելյան Ա., Վահան Տեր-Առաքելյան, (նյութերի ժողովածու), էջ 186:

¹⁸ Հարությունյան Գ., Վահան Տեր-Առաքելյան, (նյութերի ժողովածու), էջ 161:

1916 թ. հունվարի 31-ին նշանակվում է կապավորական խմբի հրամանատար, իսկ մարտի 28-ին՝ Կովկասյան բանակի թիվ 158 հրամանով, թուրքերի դեմ մարտերում աչքի ընկնելու համար պարգևատրվում սբ. Աննայի II աստիճանի սրերով շքանշանով:

1916 թ. մայիսի 4-ին թուրքերի դեմ մարտերում աչքի ընկնելու համար պարգևատրվում է սբ. Ստանիսլավի II աստիճանի սրերով շքանշանով: Հունիսի 13-ին նշանակվում է I վաշտի հրամանատար, իսկ հունիսի 16-ին հանձնում կապավորների խումբը:

1916 թ. օգոստոսի 19-ին նրան շնորհվում է պորուչիկի կոչում, դեկտեմբերի 20-ին՝ շտաբ-կապիտանի կոչում:

1917 թ. օգոստոսի 16-ից մինչև հոկտեմբերի 10-ը II գումարտակի ժամանակավոր հրամանատարն էր:

1917-ի դեկտեմբերի 2-ին Վ. Տեր-Առաքելյանը գործուղվում է հայկական 2-րդ հրաձգային բրիգադի շտաբ, Հայ ազատագրական բանակի կազմում մասնակցում Մարդարապատի ճակատամարտին: Հայաստանի Հանրապետության ստեղծումից հետո ստանձնում է Կարսի ռազմաճակատի շտաբի պետի պաշտոնը: Տարիներ անց գնդապետ Ա. Մելիք-Փարսադանյանը կիիշի. «Խորին հարգանքի ու հիացմունքի զգացումով եմ հիշում Վահան Տեր-Առաքելյանին, ում մեջ համեստությունը գուգորդված էր վճռականությամբ, հոգու մեղմությունը՝ իրական քաջությամբ: Շրջապատի նկատմամբ դրսևորած անբասիր ազնվությամբ ու պարզությամբ, դատողությունների անկեղծությամբ և սկզբունքայնությամբ նա ձեռք էր բերել համընդհանուրի հարգանքը և մտերիմների ու ընկերների սերը: Նրա մասին առաջին անգամ տեղեկացա 1914-18 թթ. Համաշխարհային պատերազմի ժամանակ, կարդալով նրա անունը ռուսական բանակի ռազմական գործողությունների մասին «Գերագույն գլխավոր հրամանատարի շտաբի հաղորդագրություններից» մեկում: Այնտեղ տպված էր, որ պողպորուչիկ Տեր-Առաքելյանը արևմտյան ճակատում գրոհով գրավել է ստրատեգիական կարևորություն ունեցող բարձունքը և դրանով ապահովել ամբողջ օպերացիայի հաջողությունը:

Ես չեմ հիշում մեկ ուրիշ դեպք, որ այդ պատերազմի ժամանակ

ռազմական տեղեկատվություններում հիշատակվեր որևէ մեկի անունը՝ առավել ևս մինչ այդ անհայտ հայ զինվորական սպայի:

Թուրքիայի կողմից Ղարսը գրավելուց 3 օր առաջ ծառայողական գործերով եղա բանակի շտաբում, որը տեղավորված էր բերդային ամրություններից մեկի մոտակայքում գտնվող շենքում: Այնտեղ ես ծանոթացա բերդի շտաբի պետ, գնդապետ Տեր-Առաքելյանի հետ: Նկատելով նրա կրծքին Գեորգիի սպիտակ շքանշանը, ես իսկույն կռահեցի, որ իմ առջև հերոս սպա է, ում ազգանունը կարդացել էին ռազմական գործողությունների հաղորդագրության մեջ և մտապահել¹⁹:

Այսպիսով՝ մարտնչելով Արևմտյան (1914-1915) և Կովկասյան (1915-1917) ռազմաճակատներում՝ հասնելով գնդապետի աստիճանի, մարտական գործողություններում ցուցաբերած արիության համար, որպես խիզախ ու հմուտ հրամանատար, Վ. Տեր-Առաքելյանը պարգևատրվել է սբ. Աննայի IV, III, II աստիճանի և սբ. Ստանիսլավի III, II աստիճանի շքանշաններով, մարտական սրերով և պատվոգրերով:

1921-ից Վ. Տեր-Առաքելյանը բնակվել է Թիֆլիսում: Թիֆլիսում, Երևանում և Լենինականում կայացած համերգներին կատարել է Կոմիտասի, Ռ. Մելիքյանի և Սայաթ-Նովայի երգերը: Նշենք դրանցից մի քանիսը: Այսպես՝ 1922-ի մարտի 14-ին Վահան Տեր-Առաքելյանը մասնակցում է Թբիլիսիի պետական կոնսերվատորիայում տեղի ունեցած՝ Մարգիս Բարխուդարյանի և Անուշավան Տեր-Ղևոնդյանի ստեղծագործությունների համերգին²⁰, ապրիլի 11-ին՝ Թբիլիսիի պետական կոնսերվատորիայի դահլիճում կայացած «Հայկական երգի երեկոյին»²¹:

1923 թ. մարտի 26-ին Երևանում տեղի է ունենում Վահան Տեր-Առաքելյանի և դաշնակահարուհի Մարիամ Տիգրանյան-Տեր-Մարտիրոսյանի համերգը, որի ընթացքում հնչում են Ն. Տիգրանյանի, Ս. Բար-

¹⁹ Մելիք-Փարսադանյան Ա., Հուշերի մի քանի պատառիկ Վահան Տեր-Առաքելյանի մասին, (կյութերի ժողովածու), էջ 170-172:

²⁰ Մազմանյան Ռ., Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1920-1945), Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1979, էջ 15:

²¹ Նույն տեղում, էջ 16:

խուղարյանի և Ալ. Սպենդիարյանի ստեղծագործությունները²²:

1926 թ. մարտի 28-ին երգիչը հանդես է գալիս Թբիլիսիի Հայարտանը տեղի ունեցած ժամանակակից հայկական երաժշտության երեկոյին²³, իսկ ապրիլի 30-ին նույն տեղում տեղի է ունենում Վահան Տեր-Առաքելյանի, դաշնակահարուհի Մարիամ Տիգրանյան-Տեր-Մարտիրոսյանի և Թբիլիսիի Հայարտան երգեցիկ խմբի (ղեկ.՝ Կ. Ջաքարյան և Վ.Տայյան) համերգը²⁴:

Որպես մեներգիչ Վ. Տեր-Առաքելյանը Երևանի պետական կոնսերվատորիայի երգեցիկ խմբի (ղեկ.՝ Սպ. Մելիքյան) հետ 1927 թ. նոյեմբերի 13-ին և 16-ին հաջողությամբ հանդես է գալիս Մոսկվայում, իսկ նոյեմբերի 23-24-ին՝ Բաքվի Բունիաթգադեի անվան թատրոնում²⁵:

1928 թ. հունիսի 30-ին Թբիլիսիում տեղի ունեցած համերգին Վ. Տեր-Առաքելյանի, Հ. Տեր-Դավթյանի (դաշնամուր) և Ս. Օգանեզաշվիլիի (քամանչա) կատարմամբ հնչում են Ալ. Սպենդիարյանի, Կոմիտասի, Ռ. Մելիքյանի և Սայաթ-Նովայի ստեղծագործությունները: Երգիչն օգուտոսի 1-ին մասնակցում է Թբիլիսիի կառուցողների ակումբում տեղի ունեցած հայկական երաժշտության և պարերի երեկոյին²⁶:

Վ. Տեր-Առաքելյանը 1929 թ. մայիսի 5-ին մասնակցում է Լենինականի պետթատրոնում տեղի ունեցած հայկական ժողովրդական երգի երեկոյին:

1931 թ. փետրվարի 12-ին Թբիլիսիի պետական կոնսերվատորիայի դահլիճում տեղի է ունենում Կոմիտասի ստեղծագործություններին նվիրված համերգ, որին մասնակցում է նաև Վ. Տեր-Առաքելյանը²⁷:

1935 թ. հունվարի 24-ին Թբիլիսիում կայացած երգիչ Վահան Տեր-Առաքելյանի, դաշնակահար Հովսեփ Տեր-Դավթյանի և Հրանտ Պապաջանյանի համերգի ընթացքում հնչում են Մոցարտի, Շուբերտի, Ռ. Մե-

լիքյանի Ա. Սպենդիարյանի ստեղծագործությունները²⁸:

1936 թ. ապրիլի 4-ին Թբիլիսիի հայկական կուլտուրայի տանը, Ռոմանոս Մելիքյանի մահվան տարելիցին նվիրված հուշ-համերգին իր հուշերով հանդես է գալիս նաև Վահան Տեր-Առաքելյանը²⁹, իսկ մայիսի 11-14-ը ՀԽՍՀ Ժողովուրդի կից արվեստի վարչության նախաձեռնությամբ՝ երաժշտական կուլտուրայի զարգացման հարցերին նվիրված խորհրդակցության ժամանակ, որտեղ հայկական ժողովրդական լավագույն երգերի հավաքման, մշակման, հրատարակման և ուսուցման խնդիրների մասին զեկուցումներով հանդես են գալիս Ռ. Թերլեմեզյանն ու Ա. Քոչարյանը, Վ. Տեր-Առաքելյանը մասնակցում է մտքերի փոխանակությանը³⁰:

Վ. Տեր-Առաքելյանը զբաղվել է գրական և թարգմանական գործունեությամբ: Նրա գրական ժառանգությունը ներառում է նրա ռազմական հուշագրությունը՝ հայերեն օրագրությունն ու ռուսերեն հիշողությունները, Կոմիտասի, Հովհ. Թումանյանի և Ավ. Իսահակյանի մասին հուշերը, հողավաճները ժամանակի թատերական և երաժշտական կյանքի վերաբերյալ ու նամականիներ: Գրական ժառանգության գոլտրիկ մասն են նրա արձակ էջերը («Մի գիշեր Սևանում», «Ինչ չգիտեին աստվածները», «Կնոջ ծագումը», ասույթները) և բանաստեղծությունները («Մայրենի լեզու», «Հովհաննես Հովհաննիսյանին», «Ժողովրդական մտիվներ» ևն): Արժեքավոր է նաև Վ. Տեր-Առաքելյանի թարգմանական ժառանգությունը. նա թարգմանել է Լ. Տոլստոյի «Աննա Կարենինան», Յա. Հաշեկի «Քաջ զինվոր Շվեյկի արկածները համաշխարհային պատերազմի ժամանակ» և այլն, Ա. Ս. Պուշկինի («Մարգարե», «Կյանքի սայլը», «Անչար», «Միբիր, դեկաբրիստներին», «Я Вас люблю» և այլն, բոլորը՝ 1936 թ. մարտ-ապրիլ) և Մ. Գորկու բանաստեղծությունները:

Ցավոք, երգչի բազմաթիվ կատարումներից պահպանվել են մի քանիսը, որոնցից ինը գտնվում են ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի ձայ-

²² Նույն տեղում, էջ 22:

²³ Նույն տեղում, էջ 51:

²⁴ Նույն տեղում, էջ 53:

²⁵ Նույն տեղում, էջ 68-69:

²⁶ Նույն տեղում, էջ 80-81:

²⁷ Նույն տեղում, էջ 104:

²⁸ Նույն տեղում, էջ 138:

²⁹ Նույն տեղում, էջ 159:

³⁰ Նույն տեղում, էջ 161:

նադարանում. 1927 թ. սեպտեմբերին գիտարշավի ընթացքում Քրիստափոր Քուշնարյանը ձայնագրել է Վահան Տեր-Առաքելյանի կատարմամբ Սայաթ-Նովայի «Ինչ կոնիմ հեքիմ» և «Մե խոսկ ունիմ» երգերը, երկու հատված աշուղական սիրավեպերից, «Արագ կուգաս Բինգյոլեն» քնարական երգը, «Ելա երթիս» պարերգը, «Բուդու գյալիտ» թուրքերեն երգը, ինչպես նաև մեկ քրդական սիրերգի կատարումը սուլելով:

Հանդիպումներից մեկի ժամանակ Ավետիք Իսահակյանը հարցրել է Վահան Տեր-Առաքելյանին, թե ինքն ի վերջո որ ճյուղն է նախընտրելու, գրականությունը, թե՛ երաժշտությունը: «Օպերան,- պատասխանել է Տեր-Առաքելյանը: Դա նրա երազն էր, որը սակայն այդպես էլ չիրականացավ»³¹: Չիրականացավ, քանզի նրա ճակատագիրն այդպես տնօրինեց Առաջին համաշխարհային պատերազմը, որի պատճառով հայ բեմը կորցրեց իր մեծ տենորին:

Եվ այսօր, առավել քան երբևէ, նաև մենք՝ արվեստագետներս, պետք է մեր ձայնը բարձրացնենք ընդդեմ պատերազմների, հանուն խաղաղության:

АННА АСАТРЯН

Институт искусств НАН РА

ПЕВЕЦ-ПОЛКОВНИК: ВААН ТЕР-АРАКЕЛЯН

Доклад посвящен известному армянскому певцу, военному деятелю, писателю и переводчику Ваану Тер-Аракеляну (1883-1941). По окончании Эчмиадзинской духовной семинарии, любимый ученик Комитаса, талантливый тенор В. Тер-Аракелян остается преподавать там в течение года. В 1909-м поступает в Петербургскую консерваторию, учебу в которой совмещает с певческой карьерой: в Мариинском театре и в хоре армянской церкви в Петербурге.

³¹ Հարությունյան Գ., Վահան Տեր-Առաքելյան, նյութերի ժողովածու, էջ 164:

Начавшаяся Первая мировая война резко меняет судьбу В. Тер-Аракеляна. Не успев окончить консерваторию, В.Тер-Аракелян призывается в армию, воюет на Западном (1914-1915) и Кавказском (1915-1917) фронтах, дослуживается до звания полковника, награждается орденами. Второго декабря 1917-го командировается в штаб Армянской 2-ой стрелковой бригады, принимает участие в Сардарapatской битве, назначается на должность начальника штаба Карсского фронта.

Сожалею, что из многочисленных исполнений певца в звукозаписи до нас дошли лишь несколько; девять из них хранятся в фонотеке Института искусств НАН РА.

ANNA ASATRYAN

Institute of Arts of NAS RA

THE SINGER COLONEL: VAHAN TER-ARAQELYAN

The presentation is dedicated to a renowned Armenian singer, military figure, author and translator Vahan Ter-Araqelyan (1883-1941). Upon graduating the theological seminary in Ejmiatzin, Komitas' favorite pupil and a talented tenor V. Ter-Araqelyan stays in the seminary as a teacher for a year. In 1909 he enters the Saint-Petersburg Conservatory, combining the education with a career as a singer at the Mariinsky Theatre and in the choir of the Armenian Church in Petersburg.

World War I had had a critical impact on V. Ter-Araqelyan's fate. The undergraduate V. Ter-Araqelyan got drafted, participated in military operations on the Western (1914-1915) and Caucasian (1915-1917) Fronts, reached the rank of colonel, was awarded decorations. On 2 December 1917 was seconded to the Headquarters of the 2nd Armenian Infantry Brigade, took part at the Battle of Sardarapat, and was appointed to the position of the Chief-of-Staff of the Kars Front.

We are sorry to state that only a few of the numerous recorded performances of the singer are now extant, yet luckily, nine of them are kept at the record library of the Institute of Arts, NAS RA.

**ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ԱՐՏԱՑՈՒՈՒՄԸ ՎԱՐԴԱՆ ՄԱԽՈՒԿԱՆԻ
ՄՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ**

20-րդ դարի առաջին տասնամյակներին եվրոպայի ամենահայտնի ծովանկարիչներից մեկն էր համարվում հայազգի Վարդան Մախոխյանը. նրան համեմատել են Լորենի, Կոնստեմբլի, Թյորների, Դելակրուայի, Կուրբեի, Մոնեի հետ: Նա արժանացել է Ֆրանսիայի ու Գերմանիայի կառավարությունների ու մշակութային հաստատությունների ամենաբարձր տիտղոսներին ու պարգևներին: Նման բացառիկ տաղանդով օժտված մարդը, ապրելով օտարության մեջ, ոգով անբաժան մնաց իր հայրենակիցների ճակատագրից, իր իսկ ձևով ձայնը բարձրացնելով դարաշրջանի ամենահրեշավոր ոճրագործության դեմ:

1914-18 թվականները ողբերգական իրադարձություններով լեցուն տարիներ էին հայոց պատմության մեջ: Այդ չորս տարիներից ընդհանրապես քիչ բան է հայտնի Վարդան Մախոխյանի կյանքի ու գործունեության վերաբերյալ: Կատարվեց 20-րդ դարի ամենասարսափելի ոճրագործություններից մեկը՝ Հայոց ցեղասպանությունը: Աշխարհի ուշադրությունը սևեռված էր հին մշակույթ ունեցող ժողովրդի ճակատագրի վրա: Ոճրագործությունը, որը կատարվեց Օսմանյան կայսրության կողմից նրա դաշնակից Գերմանիայի համաձայնությամբ, չէր կարող անտարբեր թողնել ազնիվ որևէ քաղաքացու, առավել ևս՝ մտավորականի:

Հայ մտավորականությունը ռուսական կայսրության սահմաններում ու այլուր ցասումի իր ձայնը բարձրացրեց դարի ոճրագործության դեմ: Դեռևս 1894-96 թթ. կազմակերպվել էր ավելի քան 300 000 հայերի կոտորած: 1908 թ. իշխանության գլուխ անցած երիտթուրքերը միավորված էին «Միություն և առաջադիմություն» /«Իթթիհաստ վե թերաքքի»/ կոչվող կուսակցության մեջ: Ըստ էության, «առաջադիմություն» հորջորջվող կուսակցությունը բռնել էր լկտի ստախոսության և դեմագո-

գիայի ուղին: Դավանելով պանթուրքիզմի հետադիմական գաղափարախոսությունը, նրա անդամները բռնությամբ ոչնչացնում կամ ձուլում և թրքացնում էին հպատակ ժողովուրդներին: Հատկապես կատաղի հալածանքների էին ենթարկվում հայերը: Երիտթուրքերը անամոթաբար հայտարարում էին, որ իրենց կայսրության մեջ ապրող բոլոր ժողովուրդները պետք է դառնան թուրքեր, հակառակ դեպքում՝ «մենք նրանց կկոտորենք»: Մախոխյանը տեղյակ էր, որ թուրքերը գազանաբար հաշվեհարդար են տեսել Գ. Զոհրապի, Դ. Վարուժանի, Սիամանթոյի, Ռուբեն Սևակի, Երուխանի, Ռ. Զարդարյանի և շատ այլ մտավորականների հետ: Այդ սպանդի մեջ նահատակվել էր նաև Մախոխյանի սիրելի եղբայրը՝ Քրիստափորը:

Եվրոպայի նշանավոր գրողներն ու գիտնականները՝ Մ. Գորկին, Վ. Բյյուսոն, Յա. Ռայնիս, Ա. Ֆրանսը, Ռ. Ռոլանը, Է. Վերհարնը, Ջ. Ռիդը, Է. Մարկվարտը, Յ. Լեֆսիուսը, Ժ. Մորգանը, Ֆ. Նանսենը, Ա. Մելեն և ուրիշները իրենց բողոքի ձայնը բարձրացրեցին: Դժվարանում ենք ասել՝ Վ. Մախոխյանը մամուլում հանդես եկավ այդ ոճրագործության դեմ. հավաստի փաստեր մեզ չեն հասել: Բայց որ մեծ արվեստագետն ու քաղաքացին ցասումի իր խոսքն ասաց երաժշտության հավերժական լեզվով, դա բոլորն իմացան:

Դեռևս Մանասարյան վարժարանում սովորելու տարիներին Մախոխյանը ստացել էր երաժշտական լուրջ կրթություն: Վարժարանն ավարտելուց հետո, վերադառնալով Տրապիզոն, երբեմն հանդես է եկել համերգներով՝ որպես ջութակահար: Նրա կատարողական արվեստի մասին ամենայն գովեստներով խոսել է մամուլը: Ասենք որ ինքը՝ Մախոխյանը, մի պահ նույնիսկ երկմտել է՝ շարունակել ուսումը նկարչության, թե՛ երաժշտության ուղղությամբ: Նախընտրվեց նկարչությունը, սակայն երաժշտությունը մնաց իր երկրորդ մասնագիտությունը: Գնալով Եվրոպա՝ նա, ըստ էության, ինքնակրթությամբ ավելի է կատարելագործվում երաժշտության ասպարեզում՝ թե գործնական և թե տեսական առումներով: Անտարակույս, եվրոպական չափանիշներով հայտնի արվեստագետն իր շրջապատում ունենալու էր ոչ միայն նկարիչ և քանդա-

կագործ, այլև երաժիշտ կատարող ու կոմպոզիտոր ընկերներ: Նա ամբողջովին մերված էր եվրոպական միջավայրին: Պատահական չէ, որ նրա մասին գրում էին. «Եւրոպական մթնոլորտի մէջ ապրած, ամենակիրթ եւրոպացիի մը տիպարը կը ներկայացնէ»³²: «Շանթ» հանդեսում կարդում ենք. «Նկարիչ մըն է ինք, բայց միևնույն ատեն քաջ երաժշտագետի մը հմտութիւնով կը խօսի ամբողջ երաժշտութեան վրայ, օրուան օրերաներու երաժշտագետներու, Վակնէրի, Պետիօվէնի, Ռիխարդ Շթրաուսի և այլնի մասին իր անձնական կարծիքն ու համոզումը յայտնելով ինձ: Միևնույն հմտութիւնով կը խօսի հետս գերման և օտար գրականութեան վրայ, ատեն ատեն ընկերական, իմաստասիրական և հոգեբանական հարցեր ալ քրքրելով»³³:

Ենթադրում ենք, որ Մախոխյանի ծովանկարների պլեկոծ խռովքը, ամպամած տխուր եղանակները մասամբ գալիս են նրա տրամադրությունից: Սակայն հայ ժողովրդի ողբերգական իրադարձությունները արտահայտություն գտավ երաժշտության միջոցով: Մեծ եղեռնի անհամար կորուստների, այդ թվում՝ նաև իր հարազատների, ողբերգական եղերագործության տպավորության տակ Մախոխյանը 1919 թ. ստեղծում է երաժշտական մի բողոք-պատկեր: Այդ կապակցությամբ «Բազմավեպը» գրել է. «Վարդան Մախոխյանը արդեն մեր Բազմավեպի և Գեղունիներու ընթերցողաց ծանօթացած ենք՝ իբրև քաջ ծովանկարիչ, իբրև՝ յաջորդը՝ գեղարուեստապետ Յ. Այվազովսքիին: Այժմ Վարդան ի յայտ կու գայ նաև իբր մեծ երգահան իր հրատարակած «La Plainte de l'Armée» նվագերգութեան ձայնագրութիւնովը: Մեզի քաղցր անակնկալ մը եղավ երբ ստացանք գեղարուեստագետի սրտին և մտքին այս քնքուշ արտադրութիւնը՝ որ Հայրենիքին՝ Հայաստանին նուիրած է: Մեր հայրենակիցներու տառապանքի այս արձագանքը ուղղուած է համաշխարհային Արդարության. այնպէս որ, երբ Յունուար 13/ին առաջին անգամ ի Օժնդէ Քառոյ նուագուած է՝ բանիմաց ունկնդիրները մեծապէս յուզուած և խոր տպավորութեան ներքն գովաբանած են հեղինակը: Անկէ հետոյ

³² Պառավլյան Ա., Վարդան Մախոխյան, «Շանթ», 1912, հ. 22, էջ 345:

³³ Նույն տեղում, էջ 345:

Մախոխյանի «Հայաստանի հեծեծանքը» Սօնաքոյի, Նիսի և ուրիշ քաղաքներու մէջ ստեղծ կը կրկնուին»³⁴:

Բողոքի ու ցասումի այդ ստեղծագործությունն այնպիսի հզոր թափով, խորը ներշնչանքով ու պրոֆեսիոնալ բարձր մակարդակով է գրված, որ նույնիսկ եվրոպացի մեծանուն երաժշտագետները շռայլանքի խոսքեր չեն խնայել: Համբավավոր ջութակահար Հ. Վագեմանսը այսպիսի տողեր է հղել Մախոխյանին. «Պատիւ ունիմ Ձեզ հաղորդելու իմ մեծ ուրախութիւնս այն փառաւոր յաջողութեան համար, որ մենք երէկ ունեցանք «La Plainte de l'Armée» նուագելով: Ձեր այս երկը, որ կը ցուցանէ տառապանքի մեջ հիանալի ժողովուրդի մը հոգին՝ զիս խորապէս զգացուցած է. - ես անոր մէջ բովանդակ արուեստագետի սիրտս ի ցոյց դրի... երաժշտութիւնը առանց «գոյնի» և նկարչութիւնը առանց «ներդաշնակութեան» չեն կարող կէտնք ունենալ... Դուք գիտցաք գոյնը և ներդաշնակութիւնը զուգորդել այնպէս, որ մարդ կշփոթի այլևս որուն աւելի գմայլի՝ նկարչի թե երաժշտի...»³⁵:

Մոնակոյի համերգի մասին «Le Petit Mone'gasque» լրագիրը հունվարի 19-ին գրում է «Հոյժ գեղեցիկ նվագածություն մեկ ջութակով և երաժշտախումբով տեղի ունեցած «La Plainte de l'Armée»-ն, գործ հայ վարպետ բնանկարիչ Վ. Մախոխյանի... Մախոխյանը ապացուցուց նաև թե ճարտար նկարիչ լինելուց բացի նաև ներշնչյալ երգահան է: Իր ձայնագրած «Հայաստանի հեծեծանքը» հոգու խորքերեն բխող՝ հայրենիքի անմխիթարելի տառապանքի մարմնացումն է... պարոն Մախոխյան իր երաժշտության մէջ այնքան անկեղծ և այնքան հուզիչ կտեսնվի, որքան վարպետ է ներկերը կտավի վրայ լույսի խաղերով ջրերի թափանցիկությամբ և ստվերով ներկայացնելուն մէջ»³⁶:

Պահպանված է «Հայաստանի հեծեծանքը» ստեղծագործության հայտագիրը, որի ձևկատին գրված է. «Հայաստանին, իմ հայրենիքին.

³⁴ Ներսես Հ., Մախոխյան եղբայրները, «Բազմավեպ» Վենետիկ, 1919, հունիս, էջ 174:

³⁵ Նույն տեղում:

³⁶ Նույն տեղում:

իմ հայրենակիցների տառապանքի արձագանքը. կոչ համաշխարհային արդարությանը»³⁷:

Նշենք, որ Մոնակոյի այդ համերգը կազմակերպել էր Բելգիայի թագավորական օպերայի գլխավոր դիրիժոր Ժորժ Լուինսը:

Մասնագետների և ականատեսների հուշագրություններից պարզվում է, որ Վարդան Մախոխյանի վերոհիշյալ ստեղծագործությունը գրված է եղել ոչ թե «մեծատաղանդ նկարչի կողմից, որը զբաղվում է նաև երաժշտությամբ», այլ՝ երաժշտական բարձր պրոֆեսիոնալիզմին տիրապետող իսկական երգահանի կողմից: «Հայաստանի հեծեծանքը» եղել է եվրոպական դասական երաժշտության ավանդույթներին համահունչ՝ մասամբ օգտագործելով արևելյան մեղեդիներ: Տպավորիչ է եղել հատկապես ջութակի պարտիան. մի բան, որը մեծապես պայմանավորված էր այդ գործիքի հնարամիջոցներին Մախոխյանի քաջ տիրապետմամբ: Մախոխյանն իր ստեղծագործությանը վերաբերվել է ակնածանքով, սիրով ու արժանապատվության զգացմամբ. վերջապես, այդտեղ խտացված էր նրա հոգու ու խղճի կանչը, Հայոց ցեղասպանության հետ կապված իր անձնական ողբերգությունը:

«E' claireur de Nice» լրագիրը մարտի 12-ի համարում հաղորդում է, որ Նիցցայի «Նեկրեսքոյ» հյուրանոցում տեղի է ունեցել նվագահանդես՝ ի նպաստ Մեծ եղեռնից փրկված հայ որբերի: Համաձայնական և հայկական պետությունների դրոշակներով զարդարված բեմի վրա հանդես են եկել նշանավոր կատարողներ ու երգիչներ, արվեստագետներ: Այստեղ, ցուցադրված նկարներից բացի կատարվել է Մախոխյանի «Հայաստանի հեծեծանքը»:

Նույն առիթի կապակցությամբ «Բազմավեպում» կարդում ենք. «Նվագաձուլիները՝ յուզեցաւ ու ծափահարեց հայուն հանճարը՝ որ քաղաքակիրթ ազգաց մրցակից հանդիսացած էր: Եւ Վարդան իր երաժշտական արտադրութեան գնահատումին պատասխանելու համար կը հարկադրուի բեմ բարձանալ և ողջունել հանդիսականները»³⁸:

Վարդան Մախոխյանը հուզական և ակտիվ վերաբերմունք է դրսևորել Մեծ եղեռնի կապակցությամբ, ցատումի վերաբերմունք՝ արտահայտված գույնի և երաժշտության միջոցով: Ընդհանրապես, Մախոխյանները միանգամայն այլ տեսանկյունով ու այլ միջոցներով են պայքարել օսմանյան ոճրագործությունների դեմ: Մախոխյանի բժիշկ եղբայրը՝ Պիեռ Մախոխյանը, Մեծ եղեռնից հետո հիմնականում զբաղվել է քաղաքականության հարցերով: Հայ մամուլը նշում է, որ նա ԱՄՆ-ի նախագահ Վիլսոնից առաջ, 1916 թ. վեր է բարձրացրել «Ազգերի ընկերակցության» գաղափարը /այժմ՝ Միավորված ազգերի կազմակերպություն/: Ըստ Պիեռ Մախոխյանի՝ բոլոր ազգերը պետք է ունենան քաղաքական հավասար իրավունքներ: Ընդ որում, զայրությամբ շեշտվում է այն անարդար պարագան, որ հզոր պետությունները օժտված են բոլոր իրավունքներով, մինչդեռ նույն իրավունքը Հայաստանը և մյուս փոքր ազգությունների համար ժխտված է³⁹:

Այս բոլորից հետո Վարդան Մախոխյանը հեռացավ Գերմանիայից, նախ մեկնեց Լոնդոն և որոշ ժամանակ անց մշտական բնակություն հաստատեց Նիցցայում: Սկզբունքային նշանակություն ունի նաև այն, որ լինելով օսմանյան պետության քաղաքացի, կրթություն ստանալով Գերմանիայում և 20-ից ավելի տարիներ ապրելով այդտեղ՝ նա չէր հրաժարվել թուրքական քաղաքացիությունից: Սակայն Մեծ եղեռնից հետո հեռանալով Ֆրանսիա՝ նա այլևս հրաժարվեց թուրքական քաղաքացիությունից՝ ընդունելով ֆրանսիականը:

АРА АКОПЯН

АГПУ

ОТРАЖЕНИЕ ГЕНОЦИДА АРМЯН В ПРОИЗВЕДЕНИИ ВАРДАНА МАХОХЯНА

В первом десятилетии 20-ого века самым знаменитым маринистом Европы является армянин по национальности Вардан Махохян. Траги-

³⁹ Նույն տեղում, էջ 175:

³⁷ Հայաստանի ազգային պատկերասրահ, ինվ. հ. 16512:

³⁸ **Ներսես Հ.**, Մախոխյան եղբայրները, «Բազմավեպ», Վենետիկ, 1919, հունիս, էջ 175:

ческие события армянского народа отразились также в его музыке. В годы учебы в училище Санасарян Махохян получил солидное музыкальное образование. Под влиянием трагических потерь армянского народа в годы Геноцида, Махохян в 1919 г. создает музыкальное произведение протест- изображение “Плач Армении”. Это произведение написано настолько профессионализмом, что даже великие европейские музыковеды не скупались на красноречивые слова, дав самую высокую оценку произведению Махохяна.

ARA HAKOBYAN

ASPU

THE IMPRESSION OF GREAT ARMENIAN GENOCIDE ON VARDAN MAKHOKHYAN'S WORK

Vardan Makhokhyan was believed to be the greatest and most famous marine painter of Europe for the first decade of 20th century. He has also expressed the tragic events of Armenian Genocide by means of music. Yet in the years of study at Manasaryan musical colleague, Makhokhyan received a sound musical education. Being under the stress of numerous victims of the great genocide, and family members as well, Makhokhyan created a musical composition protest “Hayastan-hetsatsanq”. That meticulous musical composition was created with such a strong power, deep emotions and with high professionalism and was highly appreciated by European famous musicians of the era, originating very positive feedback.

ԴԱՎԻԹ ՔԵՐԹՄԵՆՋՅԱՆ

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ

ՎՈՂՏԵՐ ԲԱՆՄԱՆԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՃԱՐՏԱՐԱԿԵՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Հայկական ճարտարապետության պատմության ուսումնասիրությունը որոշիչ փուլ անցավ Առաջին աշխարհամարտին նախորդող, ընթացիկ և հաջորդող տարիներին, որում աներկբայելի է հայկական ճարտարապետության պատմության ուսումնասիրության հիմնադիր Թորոս Թորոմանյանի դերը: Առանց վարանելու կարելի է ասել, որ սովյալ տարիներին հայկական ճարտարապետության պատմության ուսումնասիրությունը միջազգային գործընթաց էր, որին մասնակից էին բազմաթիվ ուսումնասիրողներ, որոնք միահամուռ իրենց գործունեությունը ծավալեցին ինչպես համաշխարհային ճարտարապետության փոխազդեցությունների հարցերով, այնպես էլ՝ Արևելյան և Արևմտյան քրիստոնեական ճարտարապետության հետազոտություններով: Այդ երախտավորների թվում է նաև Վ. Բախմանը:

Վ.Բախմանը ճարտարապետության պատմության և հուշարձանների վերականգման մասնագետ է: Ծնվել է 1883 թ. Լայպցիգում և վախճանվել է 1958 թ. Ռադերեուլում: Նա մասնագիտական կրթությունը ստացել է Դրեզդենի տեխնիկական համասարանում և ավարտել այն 1907 թ.: Մինչև իր ճանապարհորդությունը Վ. Բախմանը մեկ տարի ծառայել է գերմանական բանակում: Այնուհետև, մինչև 1915 թ. մասնակցել է Աշուր, Հատրա, Թուրուլ և Աքիր միջազգային պատմական բնակավայրերի պեղումներին: Այս ընթացքում էլ՝ 1911-1912 թթ. իրականացրել է իր հայտնի ճանապարհորդական հետազոտությունները: Փաստորեն, սովյալ տարիներին նա որպես սպա՝ դեպի Բաղդադ տանող երկաթգծի կառուցման գերմանաթուրքական համագործակցության մեջ էր, որ դեկավարվում էր Թեոդոր Վիգանդի կողմից: Վ.Բախմանը որպես Դրեզդե-

նի համալսարանի դոկտորանտ ծրագրային կարգով աշխատում էր քրիստոնեա-մահմեդական սահմանագծի վրա եղած ճարտարապետական հուշարձանների վրա, որ հրատարակվեց Լայպցիգում 1913 թ.:

Փաստորեն, Վ. Բախմանը Դրեզդենի համալսարանի դասախոս էր և դասավանդում էր Արևելքի ճարտարապետական մշակույթ: Այս առումով կարևորվում է նաև նրա մասնակցությունը Պետրայի և Տիգրոնի պեղումներին: 1920-ական թվականներից նա նվիրվում է Սաքսոնիայի հուշարձանների և բնակավայրերի պահպանության գործին, որտեղ ունեցել է բարձր գնահատված վաստակ: Վ. Բախմանի հեղինակությամբ լույս տեսած 10 աշխատություններից, հայկական ճարտարապետության համար կարևոր է նրա առաջին՝ որպես դիսերտացիա պատրաստված աշխատությունը, որ վերնագրվել է «Եկեղեցիները և մզկիթները Հայաստանում և Քուրդիստանում»¹ և ընդգրկում է Տրապիզոնից մինչև Մոսուլ հասնող միջնադարյան քարավանային երթուղին:

Շառլ Տեքսիեի՝ Հայաստանով և Պարսկաստանով անցնող նկարագրական ուղևորությունից հետո², Վ.Բախմանը եզակի ճանապարհորդներից է, որ հուշարձանները ներկայացնում է ճարտարապետության մասնագիտական բժախնդրությամբ: Որքան էլ բարձր են գնահատվում Հենրի Լինչի³ կողմից կատարված հայկական հուշարձանների մանրամասն նկարագրությունները, այնուամենայնիվ, նրա մասնագիտական ներդրումը քարտեզագրական էր՝ ներառելով նաև հայկական մի քանի բնակավայրերի հանույթները: Ի տարբերություն Հ. Լինչի՝ Վ. Բախմանի հաղորդման նյութը մասնագիտական չափագրություններով համադրված ճարտարապետական կոթողների փաստագրական վերլուծությունն է: Վ. Բախմանի երթուղին ընտրված է գիտահետազոտական մեծ հմտությամբ, այն փնջավորում է բյուզանդական, սելջուկյան, հայկական, նեստորական, և այլ մշակույթների գոտիներ: Սկսելով Պոնտոսի ափերից՝ Տրապիզոնից, անցնում է Կարինի տարածքը, ապա Վա-

նա լճի արևմտյան և հարավային ափերով՝ Խլաթ և Վան քաղաքների վրայով հասնում է ասորական Նինվեին և Խորսաբադին մերձակա Մոսուլ քաղաքը: Հայագիտականորեն, փաստ է, որ նյութի պակասի պատճառով և Ղևոնդ Ալիշանի տեղագրական հատորները Վ.Բախմանի այցելած հայկական տարածքները չեն խորացել, այստեղ, նկատի ունենք միջնադարյան Հայաստանի Բարձր Հայք, Տարոն և Վասպուրական նահանգները, որոնք հետագայում՝ 1940-ական և 1950-ական թվականներին փաստագրվել են Հ. Համագասպ Ոսկյանի համապատասխան հատորներում, բայց առանց գծագրերի⁴: Չնայած նրան, որ 19-րդ դարի երկրորդ կեսին ակնարկվող հայկական տարածքների մասին կարևոր նյութեր հրատարակվել էին հայտնի տեղագիրներ Հ.Ներսես Սարգսյանի (1864թ.) և Մանվել Միրախորյանի (1882-1885 թթ.) կողմից, այնուամենայնիվ, Վ. Բախմանի ներկայացրած հուշարձանափունջն իր բազմազանությամբ մի այլ տեսանկյուն ուներ: Առանձնապես ուշագրավ է աշխատության վերնագիրը, որ միահյուսում է եկեղեցիներն ու մզկիթները, այն էլ Հայաստանում և Քուրդիստանում: Փաստորեն, տվյալ տարիներին ներկայացված տարածքի հյուսիսը Հայաստան է, իսկ հարավը՝ Քուրդիստան և Միջագետք:

Փաստորեն, Վ. Բախմանի աշխատությունը որքան էլ գիտական հետազոտություն է, այն համարյա շրջանառության մեջ է դնում հետագայում՝ 1920 թ. հռչակված Սևրի պայմանագրի սահմանային բաժանումը, ինչպես նաև Վիլսոնյան քարտեզը: Այնուամենայնիվ, տվյալ հանգամանքը չի խանգարում նրա ճարտարապետահուշարձանային բովանդակության գիտական կարևորությանն ու հավաստիությանը: Մի շարք հուշարձաններ առաջին անգամ ներառնվելով հայկական ճարտարապետության համատեքստում, դարձան նրա մնայուն նյութերը, որոնց և նվիրվում է տվյալ հաղորդումը:

¹ **Bachmann W.**, Kirchen und Moschen in Armenien und Kurdistan, Leipzig, J.C. Hinrich'sche Buchhandlung, 1913.

² **Texier Ch.**, Description de l'Armenie et la Perse, t.I, Paris, 1865.

³ **Lynch H.F.B.**, Armenia, travels and studies, vol. I & II, London, 1901.

⁴ Տես՝ **Ոսկեան Հ.**, Վան-Վասպուրականի վանքերը, հտ. 1,2, 3, Վիեննա, Մխիթարեան ուխտ. Հաջորդաբար՝ 1940, 1942, 1947. Ինչպես նաև՝ Տարոն-Տուրուբերանի վանքերը, Վիեննա, Մխիթարեան ուխտ. 1953 և այլն:

Վ. Բախմանի ճանապարհորդությունը Տրապիզոնից մինչև Մոսուլ և հետդարձը ընթացել է նույն ճանապարհով: Այն սկսել է 1911 թ. հուլիսի 23-ին և տևել է մինչև սեպտեմբերի 14-ը: Ճանապարհը, ընդհանուր առմամբ, անցնում է Տրապիզոնից դեպի Բաբերդ, Կարին կամ Էրզրում, Հազարակն ու Խնուս, Կարաչոբան, Խլաթ, Նեմրոթ սար և Դասովան, Բաղեշ կամ Բիթլիս, հաջորդաբար՝ Վանա լճի հարավով՝ Առնոս և Արտոս լեռնաշխարհով հասնում է Աղթամարի Ախավանք և Ոստան, ապա ճյուղավորվում է դեպի Վան և Վարագավանք ու վերստին շարունակվում է դեպի Հայկաբերդ, Խոշաբի ամրոց, Դեյր վերանվանված Ադրակի Սբ. Բարթողոմեոսի վանքը, այնտեղից Հադամակերտ կամ Բաշկալե, Ջուլամերկ: Ճանապարհի շարունակությունը ընթանում է Ջեզիրայի կամ Միջագետքի տարածքով դեպի Գուտիկթա, Լիզան, Դուրի, Ամադիա, Շեյխ Ադի, Բաշ Ադրի և իվերջո Խորասբադի կամ պատմական Դուր-Շարուկինի հարևանությամբ գտնվող Մոսուլ քաղաքը:

Վ. Բախմանը Տրապիզոնից Մոսուլ երթի ժամանակ ամրագրել է հուշարձանատարածքները, որոնք ներկայացվել են գրքի առաջին մասում՝ 1-8 էջերում: Խնդրո առարկա հուշարձանները հիմնականում չափագրվել և դաշտային ուսումնասիրության են ենթարկվել ճանապարհորդի ետդարձին:

Աշխատության երկրորդ մասում ներկայացվել են նեստորական որոշ հուշարձաններ և այլ դավանանքի կառույցներ, այդ թվում՝ Շեյխ Ադիի (նշված է որպես Քուրդիստան), Դուրիի ժայռափորի, Լիզանի, Քերքուքի, Կարմիր կամ Ահմար տաճարները:

Աշխատության երրորդ մասում ներկայացվել են հայկական հուշարձանները, որոնք սկսում են Բաշքալեի մերձակա Սբ. Բարթողոմեոսով, հաջորդաբար ներկայացվել են՝ Վանի մերձակա Մալնապատ Կապանից Սբ. Գրիգորի վանքը, Վան քաղաքի Սբ. Պողոս ու Պետրոս հարակից եկեղեցիները, Վարագավանքը, Աղթամարի Սբ. Խաչը, Խնուսի-Կարմրակն կամ Ձորի եկեղեցին, Բաբերդի մերձակա Վարգահան ութանիստ եկեղեցին:

Աշխատության չորրորդ մասում ներկայացվել են տարածքի մահմեդական հիշատակարանները, այդ թվում՝ նաև հայկական մի շարք բնակավայրերում եղած մահմեդական դամբարանները, ինչպես՝ Խլաթի Մեծ (Ուլու), Իկի կուբե, Բայանդուր, Ոստանի Հալիմեի դամբարանները:

Աշխատության հինգերորդ մասում ընդգրկվել են հայկական քաղաքներում եղած մահմեդական պաշտամունքային շենքերը՝ Խլաթի միջնաբերդի գույգ մզկիթները, Վանի Ուլու ջամիև կամ երբեմնի Գագկաշեն Սբ. Միոնը, Կարինի Չիֆտե մինարեն: Աշխատությունը մանրամասնող նյութերը պատմագիտական և ճարտարապետա-չափագրական կարևորություն ունեն և միասնաբար ընդգրկում են 132 լուսանկար և 50 գծագիր:

Վ. Բախմանի կողմից ուսումնասիրված հայկական ճարտարապետության հուշարձանները մեկնաբանվել են 25 x 35 սմ ֆորմատի թղթաչափի 30 էջ ծավալով և 67 լուսանկարներով ու գծագրերով: Փաստագրումները մեթոդական են, նրանք ընդհանուրից դեպի մանրամասն հերթականությամբ չափագրական վերլուծություններ են, որ ունեն ներքոհիշյալ կազմն ու իյուստրատիվ բովանդակությունը:

Ադրակի Սբ. Բարթողոմեոսը (13-րդ դար, նկ.1), համալիրը ներկայացվել է գրքի 23-28 էջերում: Նյութը համադրված է 7 լուսանկարով և գծագրերով, այդ թվում՝ բնակավայրի և եկեղեցու հատակագիծը, ընդլայնական և երկայնական կտրվածքները, և 2 մանրամաս: Հետագայում հուշարձանը արտացոլված է՝ Ժ. Սորթիգովսկու հայտնի երկհատորյակում⁵, Ա. Յակոբսոնի «Հայկական ճարտարապետության պատմություն» հատորում⁶, Պաոլո Կունեոյի հայկական ճարտարապետության հանրագիտարանատիպ երկհատորյակում⁷ և այլ հանգուցային աշխատություններում:

Սալնապատ կամ Կոպանից Սբ.Գրիգորվանքը (13-րդ դար, նկ.2), հուշարձանախումբը ներկայացվել է գրքի 28-30 էջերում, համադրված է

⁵ Նույն տեղում, էջ 811-812:

⁶ Якобсон А.Л., Очерки историиизодчества Армении v-xviii вв, М-Л, 1950, стр.115.

⁷ Cuneo P., Architettura Armena, tomo I, Roma, 1988, pp. 526-527.

մի լուսանկարով և գծագրերով, այդ թվում՝ 2 եկեղեցիների հատակագիծն ու երկայնական կտրվածքները: Այն հետագայում գծագրերի կազմով լրացվել է Պ. Կունեոյի հայտնի երկհատորում⁸:

Վան քաղաքի Սբ. Պողոս և Սբ. Պետրոս հարակից եկեղեցիները (9-10-րդ դարեր), երկու եկեղեցիները ներկայացվել են գրքի 31-33 էջերում, համադրված են 4 լուսանկարով և Սբ. Պողոսի հատակագծով: Նշվածները հուշարձանների միակ պահպանված նյութերն են: Հետագայում չափագրված Սբ. Տիրամայր և Սբ. Վարդան եկեղեցիների հետ հանդիսանում են Վան քաղաքից պահպանված եկեղեցական ճարտարապետության եզակի նմուշներ⁹:

Ներքին Վարագավանքը (9-10-րդ դարեր, նկ. 3), վանական համալիրը ներկայացվել է գրքի 33-40 էջերում, համադրված է 5 լուսանկարով, հատակագծով ու կտրվածքով: Սրանք հուշարձանախմբի եզակի չափագրություններ են, որոնք ուղեցույց են ծառայել հետագա ուսումնասիրությունների համար: Նյութերը, արտացոլվել են Ժ. Ստրժիգովսկու¹⁰ (Երվանդ Լալայանցի հատակագծի հետ), Պ. Կունեոյի¹¹, Ժ. Մ. Թիերրիի¹², Թովմաս Սինկլերի¹³ և այլ հրատարակություններում:

Աղթամարի Սբ. Խաչ եկեղեցին (915-921 թթ., նկ. 4), ներկայացվել է գրքի 40-47 էջերում և համադրվել է 18 լուսանկարով, հատակագծով, երկայնական և լայնական կտրվածքներով: Վ. Բախմանը հուշարձանի առաջին չափագրողն է, ինչը հետագայում արտահայտվել է հայկական ճարտարապետության նվիրված բոլոր աշխատություններում, այդ թվում նաև՝ Ժ. Ստրժիգովսկու¹⁴, Թ. Սինկլերի¹⁵ աշխատություններում:

⁸ Նույն տեղում, էջ 536-537:

⁹ Տես նույն տեղում, էջ 549-551:

¹⁰ **Strzygovski J.**, Die Baukunst..., p. 83.

¹¹ **Cuneo P.**, Architettura Armena, pp.538-542.

¹² **Thierry J.-M.**, "Les Arts Armeniens", Principaux Armeniens par Patrick Donabedian, Edition Mazonod, Paris, 1987, pp. 474, 614.

¹³ **Sinclair T.A.**, Eastern Turkey an Architectural and Archeological Survey, Vol.1, London, 1987, p. 191.

¹⁴ **Strzygovski J.**, Die Baukunst..., p. 82.

¹⁵ **Sinclair T.A.**, Eastern Turkey an..., pp. 193, 196.

Գրաֆիկական նյութերով լրացվել է իտալական հրատարակություններում¹⁶:

Խնուսի Կարմրակն Սբ. Գևորգ եկեղեցին (9-րդ դար), ներկայացվել է գրքի 47-49 էջերում, համադրվել է 1 լուսանկարով, հատակագծով, կտրվածքով և մի մանրամասով: Վ. Բախմանը հուշարձանի առաջին և միակ չափագրողն է, ինչն արտահայտվել է Պ. Կունեոյի աշխատությունում¹⁷:

Վարզահանի ութանիստ եկեղեցին (10-11-րդ դարեր), ներկայացվել է գրքի 49-53 էջերում, համադրվել է 6 լուսանկարով, կտրվածքով, հատակագծով և մի մանրամասով: Վ. Բախմանը հուշարձանի միակ չափագրողն է, ինչը հետագայում արտատպվել է Ժ. Ստրժիգովսկու¹⁸, Ա. Յագորսոնի¹⁹, Պ. Կունեոյի²⁰ աշխատություններում:

Ներկայացված հուշարձաններից Աղթամարի Սբ. Բարթողոմեոսը, Վարագավանքը և Աղթամարն իրենց տեղն ունեն հայկական և միջնադարյան ճարտարապետության համընդհանուր պատմության էջերում: Աղթամարի Սբ. Խաչը համաշխարհային ճարտարապետության գանձարանին պատկանող կոթող է: Վ. Բախմանի աշխատությունում կան նաև տարածքի հայկական քաղաքների ու ամրոցների տեղագրական տվյալներ, ինչպես՝ Բաբերդն ու Կարինը, Խլաթը, Ոստանը, Վանն իր հնադարյան ամրոցով և այլն:

Ինչպես վերոհիշյալները, այնպես էլ Վ. Բախմանի աշխատության հայկական մասի վերջում բերված հայկական ճարտարապետության տիպագոյացումը հաճախ ներմուծվել է բազմաթիվ աշխատությունների տիպաբանական ծրագրերում²¹, այդ թվում նաև՝ ճանապարհորդի անցած տարածքի ակունքներից մեկն է եղել Ժոզեֆ Ստրժիգովսկու «Հայերի ճարտարապետությունը և Եվրոպան» հիմնարար աշխատության

¹⁶ Տես "Aghtamar", Documents of Armenian Architecture, 8, Milano, July, 1974. **Cuneo P.**, Architettura Armena, tom 1, Roma, 1988, pp. 556-560.

¹⁷ **Cuneo P.**, Architettura Armena, p.700.

¹⁸ **Strzygovski J.**, Die Baukunst..., p.490-492.

¹⁹ **Якобсон А.Л.**, Очерки истории зодчества Армении, стр. 72.

²⁰ **Cuneo P.**, Architettura Armena, p.703.

²¹ Տես **Strzygovski J.**, Die Baukunst..., Band 2, Wien, 1918, p. 331.

համար: Վ. Բախմանի աշխատությունը մինչև Ստրժիգովսկու աշխատությունը, արդեն հստակորեն ցույց էր տալիս հայկական ճարտարապետության որոշիչ նշանակությունը ոչ միայն քրիստոնեական մշակույթի համատեքստում, այլ նաև՝ Միջագետքի ու մասամբ մահմեդական ճարտարապետության տարածքային համատեքստերում:

Վ. Բախմանի նյութերը մասնագիտական են և՛ տեքստային, և՛ գրաֆիկական առումներով: Դրանք այսօր անփոխարինելի վավերագրեր են Տրապիզոնից դեպի Վանա լճի հարավային ափերը՝ Վան, Ջեզիրա և Մոսուլ երկարող մայրուղու վրա եղած մի շարք կարևոր կոթողների և համալիրների համար: Ակնարկվող հուշարձաններից հայկական և հայկականի հետ առանչվող նյութերն իրենց մնայուն տեղն ունեն հայկական ճարտարապետության պատմության ուսումնասիրությունների համար: Փաստորեն, որքան էլ գրքում ներկայացված հուշարձանները բազմազան են և դրանց մի մասն են կազմում հայկական հուշարձանները, այնուամենայնիվ, հայկական հուշարձաններն իրենց ոճով, կերպարով և ինֆորմատիվ բովանդակությամբ, փոխազդեցությունների առումով առանցքային դիրք են գրավում ուսումնասիրվող տարածքում և նրա սահմաններից շատ հեռու:

ДАВИД КЕРТМЕНДЖЯН

Институт искусств НАН РА

ИССЛЕДОВАТЕЛЬСКОЕ ПУТЕШЕСТВИЕ ВАЛЬТЕРА БАХМАНА И ЕГО ЗНАЧЕНИЕ В ИЗУЧЕНИИ АРМЯНСКОЙ АРХИТЕКТУРЫ

Фундаментальное изучение истории армянской архитектуры имело место в предшествующих и последующих Первой мировой войне нескольких десятилетиях. В этом процессе участвовало несколько ученых, в том числе архитектор, преподаватель Лейпцигского университета Вальтер Бахман. В данной статье рассматривается его исследование, напечатанное в 1913 году под названием “Церкви и мечети


в Армении и Курдистане”. Путешествие ученого началось с Трапезунда через западные и южные берега озера Ван до города Мосул. В описаниях и графических иллюстрациях Бахмана было представлено более десятка армянских архитектурных сооружений, которые являются весомым вкладом в историю армянской архитектуры. В. Бахман с четкостью и высоким профессионализмом показал мировое значение армянской архитектуры в контексте не только христианской, но и исламской архитектуры.

DAVID KERTMENJIAN


Institute of Arts of NAS RA

THE TRAVEL RESEARCH OF WALTER BACHMANN AND ITS INDICATION FOR THE STUDIES OF ARMENIAN ARCHITECTURE


The study of Armenian historical architecture passed its main formational phase in the years before, within and after First World War. The spread of Armenian studies was an international endeavor, where as contributed many scientist of Early Christian Architecture, concentrating on correlational, Eastern and Western Christianity issues. A corresponding intellectual of the indicated specialists is W. Bachmann, whose travel research was one of references fed many studies. W. Bachmann's work titled: “Kirchen und Moschen in Armenien and Kurdistan” (Leipzig, 1913) beforehand was showing the indication of Armenian medieval Architecture not only in Christian culture, but also in Mesopotamian and Islamic architectural contexts. Being an architect, W. Bachmann's materials were professional either in content and graphical presentations. They are irreplaceable documents of the historical values existed once on the route from Trebizond to the southern shores of Van Lake and Van city, Jazira and Mosul etc. The deposited monuments by W. Bachman are consisting parts of History of Armenian Architecture.




Նկ.1. Աղբակի Սբ. Բարթողոմեոսի վանքը (1911թ.)



Նկ. 3. Ներքին Վարագավանքի չափագրությունը ըստ Վ.Բախմանի (1912թ.)



Նկ. 2. Սալնապատ Սբ. Գրիգորի վանքը (1911թ.)



Նկ.4 Աղթամարի Սբ. Խաչ եկեղեցու չափագրությունը ըստ Վ.Բախմանի (1912թ.)

ՄԵՐԻ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ

ՓԱՆՈՍ ԹԵՐԼԵՄԵՉՅԱՆԸ ԵՎ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԸ

Փանոս Թերլեմեզյանը հայ կերպարվեստի թատերաբեմ իջավ XIX-XX դարերում և հանդիսացավ հայ կերպարվեստի ռեալիստական ուղղության կարկառուն ներկայացուցիչ:

Նկարչի բազմաժանր ստեղծագործական հարուստ ժառանգության մեջ գերակշռող ժանրը բնանկարն է. նա իր ուրույն ներդրումն է ունեցել հայ իրապաշտական բնանկարի զարգացման գործում: Նկարչի դժվարին՝ փորձություններով լի կյանքը նրան տարագրեց օտար երկրներ, և միայն 1928-ին նա վերադարձավ Հայաստան: Խորհրդային ժամանակաշրջանում Թերլեմեզյանը հանդիսացավ արդյունաբերական բնանկարի հիմնադիրներից մեկը: Պետք է հպարտությամբ փաստենք, որ Թերլեմեզյանը ոչ միայն տաղանդավոր, շնորհալի արվեստագետ էր, այլ նաև հայտնի հասարակական գործիչ, ով շոշափելի ներդրում է ունեցել թե՛ հայրենիքի, և թե՛ սփյուռքի հանրային կյանքում:

Ստեղծագործելով դժվարին ժամանակաշրջանում նկարիչը չէր կարող անտարբեր և անմասնակից մնալ երկրում տիրող քաղաքական իրադրությանը: Այդ պատճառով, 1889-ին Թերլեմեզյանը հարում է սուլթանական կառավարության դեմ պայքարող երիտասարդական խմբավորմանը: Երիտասարդ Թերլեմեզյանի հոգու խորքում հետզհետե ուժեղացող հախուռն զգացումը նրան մղեց դեպի ազատասիրություն, ու ազատատենչ մարտիկը պայքարեց այն նվաճելու համար: Թուրքական կառավարությունը երկու անգամ հեռակա կարգով նրան դատապարտեց մահվան: Բայց Թերլեմեզյանը իր գաղափարներով, համոզումներով, հեղափոխական տրամադրությամբ և գործունեությամբ մնաց հարազատ իր ժողովրդին, պայքարեց նրա ազատագրության համար: Թերլեմեզյանի համար ժողովրդի նկատմամբ ունեցած անհուն սերը, բարձր հայրենասիրությունը վեր էին ամեն ինչից, անհատական կյանքից, շա-

հից և անգամ սեփական երջանկությունից:

1897-ին, Պետերբուրգում ուսանելու տարիներին՝ Էստոնիայում գտնվելու ժամանակ, սուլթան Համիդի պահանջով ցարական ոստիկանությունը ձերբակալում է նրան և փոխադրում Ռևելի բանտ: Երկար ճանապարհ անցնելով՝ Պետերբուրգի, Մոսկվայի, Ռոստովի բանտերում փակվելուց հետո, հասնում է Թիֆլիս, յոթ ամիս Մետեխի բանտում մեկուսացվելով՝ ուղարկվում է Դիլիջան, Երևան և արքայվում Իրան, ուր կարճ ժամանակով կալանավորվելով՝ ազատ է արձակվում:

Քսան տարվա ընդմիջումից հետո՝ 1914 թվականին, Թերլեմեզյանը վերադառնում է Վան ստեղծագործելու և հայրենիքի հանդեպ անփարատելի կարոտը սփոփելու համար: Մեկնում է Շատախ, ապա վերադառնում Ախալանք, ուր զգացվում էր պատերազմի ազդեցությունը, շտապում է մտնել Աղթամար կղզի և նկարել:

Ահա, թե ինչ է գրում արվեստագետը իր հուշերում. «Գալով Ախալանք Աղթամարի ձեռագրերի մասին շատ էի մտախոզվում: Եզնիկ վարդապետը ինձ պատմեց, որ մի ժամանակ ձեռագրերը լցված էին զանգակատանը, որը չորս կողմից բաց լինելու պատճառով թրջվել և քամին էլ պոկել էր թերթերը, ուստի ձեռագրերը դուրս էին հանել և թափել մի փոքր սենյակում: Ներս մտնելուն պես տեսա թանձր փոշիների մեջ իրար վրա ընկած պատվական ձեռագրերը, մեկ այլ սենյակում լցված էին աշակերտների այբբենարանները: Այն բացելով նկատեցի, որ բոլորի երեսներին փակցված էին մագաղաթներից մկրատված նկարներ...»¹:

Այս գարհուրելի տեսարանը շատ է վշտացնում և զայրացնում նկարչին: Թերլեմեզյանը վճռում է փրկել ազգային մշակույթի այդ գանձերը և նրա պահանջով Ախալանքում գտնվող ձեռագրերը սնդուկների մեջ ամփոփելով առագաստանավով տանում են Ավանց գյուղի նավահանգիստը և հաջողացնում են երեք սնդուկը ուղարկել Էջմիածին, իսկ երկուսը՝ թուրքերի ձեռքը ընկնելուց խուսափելու համար նետում են ծովը: Ախալանքում արվեստագետը ստեղծագործում է մեծ եռանդով,

¹ Թերլեմեզյան Փ., Կյանքիս հուշերը // ՀԱՊ հուշաձեռագրային բաժին, 5-60, թպ. 3:

ուսումնասիրում է հայ միջնադարյան ձեռագրերը, որոնցից ընդօրինակում է ինը լավագույն նկարներ և լուսանցագրադեր, Աղթամարի Սբ. Խաչ եկեղեցու որմնաքանդակներից կատարում է արտանկարներ, ստեղծում է նաև բնանկարներ՝ վեհատեսիլ Սիփանի պատկերով, վրձնում է գյուղացի ընտանիքի՝ հին հայկական տարագով:

Ցավոք, հետագայում, նկարչի 70-ից ավել աշխատանքների շարքում, այս վերջին երփնագիր կտավը կորում է գաղթի ճանապարհին:

Թերլեմեզյանը կղզում մնում է հինգ շաբաթ և պատերազմական իրավիճակից դրդված պարտադրաբար վերադառնում է Վան: Այդ դրամատիկ իրադարձություններով հագեցած օրերին Թերլեմեզյանը շարունակում է աշխատել: Ավարտում է Հաջի աղայի դիմանկարը, ստեղծում է արշավույսների և մայրամուտների տեսարաններ: Այդ ժամանակ նկարիչը ցավով տեղեկանում է, որ Ջանոյանների տան համար ստեղծված, անավարտ մոնումենտալ աշխատանքն այրվել է: Նկարչի նկարագրության համաձայն, այն 2 մետր բարձրություն ունեցող գարնանային տեսարան ներկայացնող կտավ էր, առաջին պլանում՝ ծաղկած ծառեր, երկրորդում՝ Հանկույսների սքանչելի ձորը, երրորդում՝ վեհանիստ ժայեր: Այդ ծառերի տակ՝ նոր ծիլ ու բողբոջ արձակած վարդենիների ծառուղիում, խաղում էին դպրոցական աղջիկներ՝ շների հետ:

Ցավում ենք, որ ստիպված ենք բավարարվել լոկ այս նկարագրությամբ:

Փանոս Թերլեմեզյանն այն եզակի արվեստագետներից է, ով լինելով մեծ հայրենասեր նկարիչ, հայ ժողովրդի պատմության ամենաողբերգական, դրամատիկ իրադարձությունների ժամանակ մի կողմ դնելով նկարչական պարագաները՝ իր անմիջական մասնակցությունն ունեցավ Վանի ինքնապաշտպանական մարտերին:

1915-ի ապրիլի 18-ին Այգեստանում գումարվում է ազգային կազմակերպությունների միացյալ ժողովը, որտեղ կազմավորվում է «Վանի հայ ինքնապաշտպանության զինվորական բարձրագույն մարմինը»: Շտաբի կազմում ընդգրկվում են Բուլղարացի Գրիգորը, Կայծակ Առաքելը, Արմենակ Եկարյանը, խորհրդականներ են ընտրվում Հրանտ Գա-

լիկյանը, Գաբրիել Մեմիրջյանը, Արամ Մանուկյանը և Փանոս Թերլեմեզյանը²: Այս զինվորական մարմինը կազմակերպում էր թշնամու շարժումների հետախուզություն և ժամանակին ամրացնում այն դիրքերը, որտեղից սպասվում էր վտանգը:

Ապրիլի 4-ին ընդհատվում են Քաղաքամեջի և Այգեստանի հարաբերությունները, խզվում են երթևեկությունը և կապը գավառների հետ³:

Մարտերը ճիշտ կազմակերպելու համար չափազանց կարևոր դարձան թիկունքում ծավալվող աշխատանքները: Ժողովրդի գործունյա մասը մարտիկների սննդի և այլ կարիքները հոգալու համար կազմեց «Հայթայթիչ» անունով հանձնախումբ, որը պատասպարում և կերակրում էր գավառներից Այգեստան թափանցած տասնյակ հազարավոր սովալրով մարդկանց: «Հայթայթիչ»-ի կողքին հիմնվում են «Նպաստիչ», «Հայկական Կարմիր խաչ» և «Ամրաշեն» անվամբ խմբերը:

Պատկերը լիովին ամբողջացնելու համար նշենք, որ ստեղծվեց նաև Վարժապետանոցի մի խումբ աշակերտներից բաղկացած՝ «Ֆանֆառ» անունը կրող, Հովհաննես Բուժիկանյանի հիմնադրած նվագախումբը, որը հասնում էր ամենավտանգավոր դիրքերը և աշխույժ երաժշտությամբ ոգևորում և եռանդ ներշնչում մարտիկներին: «Ֆանֆառ»-ը դարձավ Այգեստանի հերոսամարտի խանդավառ ոգին⁴:

Չինվորական մարմնի առաջնահերթ նպատակը դարձավ ամեն գնով այրել թշնամու հենակետ հանդիսացող՝ հայկական թաղամասերում գտնվող ամուր դիրքերը⁵:

² Տե՛ս **Մուրադյան Հ.**, Վանի հայության 1915-ի ապրիլ-մայիսյան հերոսամարտերը // Բանբեր Հայաստանի արխիվների, Երևան, 1968, 1 (19), էջ 145-174, **Կեռքիզյան Ա.**, Վասպուրականի հերոսամարտը, Բեյրութ, 1965, էջ 92, **Եկարյան Ա.**, Հուշեր, Կահիրե, 1947, էջ 190-196, **Համբարձումյան Ա.**, Վանի 1915 թվականի հերոսամարտը // Պատմաբանասիրական հանդես, Երևան, 1985, 2(109), էջ 33-46:

³ Քաղաքամեջը հին քաղաքն է՝ պատմական Վան-Շամիրամակերտը, իսկ Այգեստանը գտնվում էր բուն քաղաքի արևելյան կողմում՝ շրջապատված ծառազարդ փողոցներով և այգեշատ տներով, տե՛ս **Կոստյան Հ.**, Քաղաքամեջի ապրիլեան կռիւները, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1992, էջ 23-31:

⁴ Տե՛ս **Փափազյան Հ. Ռ.**, Վան-Վասպուրականի հերոսամարտը-75, Երևան, «Հայաստան», 1990, էջ 31-34:

⁵ Տե՛ս **Կոստյան Հ.**, Քաղաքամեջի ապրիլեան կռիւները..., էջ 65-68:

Այգեստանում մարտերի առաջին տասնօրյակին թշնամին իր կրակային կարողության գլխավոր հարվածներն ուղղում էր հայկական Մահակ բեյ, Թովմադյանի և Շահբենդերյանի դիրքերի վրա, նպատակ հետապնդելով այդ դիրքերի գրավումով Այգեստանի ինքնապաշտպանական ուժերը կազմալուծել: Առաջին օրվա ընթացքում թշնամու հրետանու կրակով ավերվեց Մահակ բեյի դիրքը: Դեպքի վայր ժամանած Փանոս Թերլեմեզյանը երկու դիպուկ կրակոցով սպանում է թշնամու հրետանավորներին⁶:

Այս առիթով Այգեստանի հերոսամարտի մասնակից Օնիկ Մխիթարյանը գրում է. «Փանոս Թերլեմեզեան ջղայնոտ կը մոտենայ դիրքին մօտիկէն կը գննէ, կը ստուգէ թնդանօթի ծուխն ու վայրը, հետո մէկ, երկու կարճակէ հրացանը և ետ կուղուի յուսալով թէ սպանած է թուրք թնդանոթաձիգը: Դիրքը պարապ չի մնար: Հերթապահ զինուորը կանցնի Փանոսի տեղը և ակնդէտ կը հսկէ...»⁷:

«Այդ կռուի պանծալի օրերուն՝ գիւղացին գիշեր և ցերեկ խրամատներ կփորէր, 4-5 տարեկան երեխաներ տեսայ, որոնք գետինը քշփորելով թշնամու գնդակները կը հանէին հողերու մէջէն ու մեզ կը բերէին: 1915-ին Վանեցիք երգելով կը կռուէին թիւրք բանակին դէմ, բացարձակօրէն անհաւասար ուժերով: Կը կռուէին եղունգներով, ատրճանակներով, որսի հրացաններով, և կը դիմադրէին Կրուպի թնդանօթներուն, որովհետև հաւատքը իրենց կուրծքերէն պրօնգէ պատնէշներ կերտեց, և համերաշխ ու անձնուէր գործունէութիւնը յոյսի առաջնորդող ջահն

⁶ Տե՛ս **Մուրադյան Հ.**, Վանի հայության 1915-ի ապրիլ-մայիսյան հերոսամարտերը // Բանբեր Հայաստանի արխիվների, Երևան, 1968, թիվ 1, էջ 145-174: Հայտնի է, որ Թերլեմեզյանը եղել է առաջնակարգ նշանառու: 1915 թվականի Վանի հերոսական պաշտպանության ժամանակ, նրան տանում էին մի գծից մյուսը ու խնդրում դիպուկ գնդակով, հեռավից ոչնչացնել թշնամու դիրքերի սպաներին: Հետագայում, 1930-ական թվականներին, Երևանում, երբ նկարիչների միության ԴՈՍԱԱՑ-ի գծով անց էին կացնում հրաձգության պարապմունքներ, Թերլեմեզյանը, չնայած իր պատկառելի տարիքին և հիվանդության հետևանք՝ դողդոջուն ձեռքերին, կրակում էր դարձյալ բոլորից լավ, բոլորից դիպուկ: Թերլեմեզյանը այդ հանձնարարությունները կատարում էր ամենայն բարեխղճությամբ և ճշտությամբ Տես **Մարգարյան Ա.**, Փանոս Թերլեմեզյան «Ճննդյան 100-ամյակի առթիվ» // Պատմաբանասիրական հանդես, Երևան, 1965, N 4, էջ 19-20:

⁷ **Մխիթարյան Օ.**, Վանի հերոսամարտը, Մոֆիա, 1930, էջ 74:

եղաւ ...», - գրում է Փ.Թերլեմեզյանը⁸:

Իսկ հերոսամարտի վկա Օ. Մխիթարյանն այսպես է նկարագրում իր տեսածը. «Պետք է հանճարեղ նկարիչ մը՝ զծելու համար թրքական բռնութեան տասնեակ մը որջերու և թրքական բովանդակ շէնքերու բոցերը: Անհրաժեշտ է հանճարեղ երաժշտագետ մը, եղանակաւորելու համար 60 հազար սրտերէ միաժամանակ ու անընդհատ պոռթկացող բերկրանքի տարօրինակ աղաղակները...»⁹:

Արդէն առաջնորդարանում Փանոս Թերլեմեզյանը դիմում է հավաքվածներին հետևյալ խոսքերով. «Ողջու՛յն քաղաքացի հերոս ժողովրդին, պարծանք բոլոր կռուողներին, որոնք խիզախորեն կուրծք տվին թշնամուն և հաղթանակեցին: Մենք բերել ենք Ձեզ այգեստանցոց՝ ձեր զինակից ընկերներու, համբույրն ու հիացմունքը: Երկու տեղն էլ փառքով հաղթանակեցինք. թշնամին անգոր և խայտառակված փախավ: Մենք առանց սպասելու, դեռ ծանր պատասխանատվության և պարտականության առաջ ենք կանգնած. չմտածեք թե զենքը վայր պետք է դնեք, ո՛չ, այժմ ավելի քան առաջ պատրաստ պետք է լինենք հավանական բոլոր անակնկալների համար. փախչող թշնամին հեռու չէ, կարող է վերադառնալ և հարձակման փորձեր անել...»¹⁰:

Մայիսի 5-ին հայ կամավորական խումբը մտնում է Վան: Ռուսական բանակը հասնում է Վան միայն 3 օր հետո, երբ ընդդիմակիցը հալածված էր, երբ վանեցին տարել էր հերոսական, փայլուն հաղթանակ: Այգեստանի և Քաղաքամեջի կիսաքանդ դիրքերը, ռումբերից ծեծված պատնէշները դրա պերճախոս վկաներն էին: Ռուս հրամանատարը, գնահատելով ժողովրդի ռազմական արժանիքները, հրամանագիր է արձակում, որի համաձայն Արամը նշանակվում է Վանի և շրջակա գավառների կառավարիչ:

Ցավո՛ք, Վասպուրականի մանուկ կառավարությունը 70-օրյա կարճ կյանք է ունենում: Ռուսական բանակի հանկարծակի նահանջի

⁸ **Թերլեմեզյան Փ.**, Ժողովրդին ենք պարտական // Վան-Տոսպ, Թիֆլիս, 1916, N 22-23, էջ 11:

⁹ **Մխիթարյան Օ.**, Վանի հերոսամարտը..., էջ 204:

¹⁰ Տե՛ս **Փափագյան Հ. Դ.**, Վան-Վասպուրականի հերոսամարտը-75..., էջ 58, **Կոտայան Հ.**, Քաղաքամեջի ապրիլեան կռիւները..., էջ 129:

հրամանը հայրենասեր, անձնագոհ ժողովրդին ստիպում է ընդհատել իր վերաշինության ստեղծագործ աշխատանքները և բռնել արտագաղթի ծանր և դաժան ուղին¹¹:

Այսպիսով, հուլիսի 18-ին, անկախ ժողովրդի կամքից՝ մերժելով կառավարության և կամավորական գնդերի հրամանատարության դիմումը, Վանում մնալու և ինքնապաշտպանական մարտեր մղելու, արտագաղթ է հայտարարվում: Վասպուրականի 200 հազարանոց հայության հետ նաև Փանոս Թերլեմեզյանն է բռնում գաղթի մաշող ճանապարհը, որի ժամանակ ոչնչանում են նկարչի 76 աշխատանք: Գաղթականների հետ Թերլեմեզյանը հասնում է Էջմիածին:

Ինչպես համոզվեցինք, 33 օր տևած Վանի ինքնապաշտպանական մարտերում մեծ և նշանակալից է Փանոս Թերլեմեզյանի մասնակցությունը: Նա հայ կերպարվեստի պատմության մեջ առաջին և միակ արվեստագետն էր, ով իր անձնվեր և հայրենանվեր գործունեությամբ, տոգորված հայրենասիրական զգացումներով, պայքարեց այդ դաժան գոյամարտում:

Այգեստանում ծավալված մարտերի և դրանցում նկարչի մասնակցության մասին է գրում Գուրգեն Մահարին իր «Այրվող այգեստաններ» վեպում, մասնավորաբար, ստեղծագործության վերամշակված տարբերակի «Ճանապարհորդություն դեպի անցյալ. Փանոս Թերլեմեզյանի հետքերով» վերնագրված հատվածում, որը առաջին անգամ հրատարակվել է 1974 թվականին «Սովետական արվեստ» ամսագրում¹²: Այստեղ խոսվում է նաև Թերլեմեզյանի անցած ուղու մասին՝ շոշափվում է նկարչի բանտարկության պատմությունը: Նկարագրվում են Թերլեմեզյանի և Խրիմյան Հայրիկի ջերմ փոխհարաբերությունները, ակնարկվում է արվեստագետի գործունեության փարիզյան շրջանը, մեծ ակնածանքով է շարադրված նրա և Կոմիտասի բարեկամությանը նվիրված հատվածը:

¹¹ Տե՛ս **Փափագյան Հ.Ղ.**, Վան – Վասպուրականի հերոսամարտը – 75..., էջ 96-102:

¹² Տե՛ս **Մահարի Գ.**, Ճանապարհորդություն դեպի անցյալ. Փանոս Թերլեմեզյանի հետքերով // Սովետական արվեստ, Երևան, 1974, N 7, էջ 40-52, **Մահարի Գ.**, Այրուող այգեստաններ, Երևան, «Ապոլոն», 2004, էջ 717-740:

Այս գեղարվեստական երկը, թեպետ գրական աշխատանք է, բայց նրա կառուցվածքի հիմքում ընկած են իրական փաստեր: Նշված հանգամանքը թույլ է տալիս փաստելու, որ գրվածքը դուրս է գալիս սոսկ գեղարվեստական գործի հասկացության սահմաններից:

Հայրենի բնությունից ոգեշնչված, իրապաշտական ինքնատիպ բնանկարներից բացի, Թերլեմեզյանը նաև ստեղծել է իրեն հոգեհարազատ, նրան անդադար տանջող, անհանգստացնող թեմայով կտավներ՝ Արևմտյան Հայաստանում ծավալված արյունոտ տեսարանները պատկերող գործեր:

Նկարիչը, վերապրելով Մեծ եղեռնը, չէր կարող ընդհանրապես չանդրադառնալ հայի ամենացավալի և դժբախտ, մարդկային ահռելի կորուստներով կորսված հայրենիքի անդամանելի վշտին: Այդ հույզերով են տոգորված «Գաղթողները ողբում են իրենց հայրենիքը» (անթվակիր) և «Մայրը որոնում է դիակների մեջ իր որդուն» (անթվակիր) անավարտ աշխատանքները: Տառապանքից խենթացած մոր սևաֆիգուրն ուրվագծվում է գորշ մոխրագույնով տրված դիակներով լի տեսարանի ֆոնին: Նկարչի վրձինն անկարող է տալ պատկերի ռեալիստական նկարագիրը: Տեսարանի դժգոնությունը լրացնում է պատկերների անավարտ, էսքիզային բնույթը: Խավարի և հուսալքության մթագնած երանգներ է կրում հայրենիքի կորստի մեծ ցավն արտահայտող, վրձնի լայն քսվածքներով կատարված այս աշխատանքը:

1916-ին՝ Թիֆլիսում ստեղծագործելու տարիներին, նա նկարում է «Պատերազմի արհավիրքներ» (1916), «Հայկական կոտորած» (1916), «Հայ գաղթականները լուսնյակ գիշերին ողբում են իրենց հայրենիքը» (անթվակիր) աշխատանքները: Առաջին աշխատանքի էսքիզները ստեղծվել են 1916-ին, բայց վերամշակվել և մեծ կտավի է վերածվել 1929-ին: Թերլեմեզյանի թեմատիկ մռայլ, դրամատիկ աշխատանքներից է «Պատերազմի արհավիրքները» ստեղծագործությունը: Կրակի բոցերով լուսավորված մուգ պատկերում հազիվ նշարվում են ընկած մարդկային մարմինները: Թվում է, թե աշխատանքի կոմպոզիցիոն կենտրոնը բոցերի ֆոնին ուրվագծվող երկու անգղների պատկերներն

են: Ներկայացված թեմայի «խորհրդանշանը», կարծես, անգղների պատկերն է, որը ակամայից հիշեցնում է ռուս նկարիչ Վասիլի Վերեշչագինի «Պատերազմի փառաբանումը» (1871) հայտնի աշխատանքում նկարված ագռավների պատկերը: Պատերազմի դաժանության, մարդկային կորստի անդառնալի հետևանքների ցավը նկարիչը հաղորդում է գույնի միջոցով: Նկարի էության և ասելիքի հիմնական միջոցը երանգների ողբերգական, դրամատիկ հնչողությունն է:

Հայ արվեստի պատմության էջերում Փանոս Թերլեմեզյանը իր արժանի տեղն է զբաղեցնում որպես իրապաշտական բնանկարի ինքնատիպ վարպետ: Պատկերվող բնության թեմայի բազմազանության տեսանկյունից արվեստագետի բնանկարները հարստացրեցին հայ կերպարվեստի գանձարանը: Ինչպես համոզվեցինք Թերլեմեզյանը՝ կյանքի դժվարին «ողիսական» ապրած, պատերազմի բովով անցած, ճակատագրի բերումով օտար երկրներում ստեղծագործած, իրապաշտական գեղանկարչության ավանդույթների շատագով իրատես արվեստագետը, հայ ժողովրդի համար ճակատագրական տարիներին իր ողջ ներուժը անվարան դրեց իր ժողովրդի ազատագրության գոհասեղանին: Նա վառ հայրենասերի, ակտիվ հասարակական գործչի, ազնիվ քաղաքացու, կենսունակ ու տաղանդավոր արվեստագետի մի ներդաշնակ կերպար է: Կարծում ենք, որ հայրենադարձ նկարչի ապրած կյանքը, արվեստը և գործունեությունը այսօր երիտասարդ սերունդներին հայրենասիրական ոգով կրթելու տեսանկյունից կարող է ուսանելի լինել:

МЕРИ КИРАКОСЯН

Институт искусств НАН РА

ՓԱՆՈՏ ԹԵՐԼԵՄԵԶՅԱՆ Ի ՄԵՐՎԱԿԱ ՄԻՐՈՎԱԿ

В многожанровом творческом наследии одного из ярчайших представителей реалистического направления армянского изобразительного искусства XIX-XX веков Фаноса Терлемезяна превалирует пейзаж. В

1889 г. Терлемезян примыкает к молодежной группе, борющейся против султанского правительства. В 1914-м художник возвращается в Ван творить, тем самым стремясь смягчить неизбежную тоску по родине. В смежной с колокольной Ахаванка комнате он находит драгоценные рукописи Ахтамара, изображения на пергаменте, вырезанные из обложек азбук. Все это по требованию Терлемезяна отправляется в Эчмиадзин.

Ф. Терлемезян был первым и единственным в армянском изобразительном искусстве художником, принявшим непосредственное участие в самооборонительных боях Вана. О развернувшихся в Айгестане боях и участии в них художника писал Гурген Маари в своем романе “Горящие сады [айгестаны]”, в частности, в одном из фрагментов переработанного варианта произведения, озаглавленном “Путешествие в прошлое: по следам Фаноса Терлемезяна”. Художник, переживший Великий Геноцид, в своем творчестве обращался к беспредельному горю армян по бесчисленным, ничем не восполнимым жертвам, по утерянной Родине. Из работ этого цикла назовем “Мать ищет сына среди мертвых” (недатованная), “Бедствия войны” (1916), “Армянская резня” (1916), “Армянские сироты в лунную ночь скорбят о своей родине” (недатованная).

MERI KIRAKOSYAN

Institute of Arts of NAS RA

PANOS TERLEMEZYAN AND THE FIRST WORLD WAR

Among the multifarious creative legacy of Panos Terlemezyan, one of the brilliant representatives of the realistic trend of the Armenian visual arts of the XIX-XX centuries, landscapes prevail. In 1889, P. Terlemezyan affiliates with the youth grouping struggling against the sultan's regime. In 1914, the artist returns to Van to engage in creative work, thereby to soothe the pervasive longing for homeland. In the adjacent to the belfry of Akhavanq premise he came across priceless manuscripts of Akhtamar,

pictures on parchments, cut out from covers for ABC-books. All of these, on P. Terlemezyan's request, were moved to Ejmiatzin.

The artist, who had survived the Great Genocide, in his oeuvre addressed the boundless grief of Armenians for the countless victims and irreversible losses, for their lost Homeland. Among the works of this series worth mentioning are: "Mother Looking for Her Son among the Dead" (undated), "The Calamities of War" (1916), "The Armenian Massacre" (1916), "Wandering Armenians Grieve for Their Land in a Moonlit Night" (undated).

ԱՆԱՀԻՏ ԱՍՏՈՅԱՆ

*Հին ձեռագրերի գիտահետազոտական
ինստիտուտ - Մատենադարան*

ՀԱՅԵՐԻ ՌԻՆԵՉՐԿՄԱՆ ԹԵՄԱՆ ԹՈՒՐՔ ՊԱՏՄԱԲԱՆՆԵՐԻ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Շուրջ 100 տարի շարունակ թուրքական պատմագրությունը, ինչպես նաև լուրջ պատմական փաստերը, ժխտում է Հայոց ցեղասպանությունը: Սակայն վերջին տարիներին թուրքական գիտական շրջանակների մի փոքր հատված իր ուսումնասիրություններում պատմության նկատմամբ սկսեց հանդես բերել օբեկտիվ մոտեցում: Այդ հրատարակություններից ուշագրավ են Մեծ եղեռնի տարիներին երիտթուրքական, այնուհետև՝ քեմալական և հանրապետական իշխանությունների կողմից իրականացրած հայերի ունեզրկման թեմային նվիրված Նևզաթ Օնարանի, Ալի Սայիթ Չեթինօղլուի, Թաներ Աքչամի, Ուղուր Ումիթի, Մեհմեդ Պոլաթեյի և Ումիթ Քուրթի ուսումնասիրությունները:

2010 թ. Ստամբուլում հրատարակվեց Նևզաթ Օնարանի «Լքյալ գույքի դեպքը. հայկական և հունական ունեցվածքի թրքացումը օսման»

յան և հանրապետական շրջանում» մենագրությունը, որն ավելի ծավալուն էր կուր հատորով վերահրատարակվեց 2013-ին¹:

Ըստ Նևզաթ Օնարանի՝ 1910-ական թվականների կեսերից երիտթուրքական իշխանությունները սկսեցին իրականացնել Փոքր Ասիայի թրքացման քաղաքականությունը, որի տնտեսական քաղաքականությունն իրականացվեց հայերի և հույների սեփականության թրքացմամբ²:

Հեղինակն իր ուսումնասիրության մեջ անդրադառնում է երիտթուրքական իշխանությունների կողմից ընդունված «Լքյալ գույքերի մասին» իրավական ակտերին, որոնք հայերի տեղահանությունից հետո օրինական հիմքերի վրա դրեցին նրանց թողած շարժական և անշարժ գույքերի կողոպուտն և յուրացումը: Այսպես, 1915 թ. հունիսի 10-ին երիտթուրքական իշխանությունները հրապարակեցին հայերի թողած գույքերի հետ վարվելու վերաբերյալ «Լքյալ գույքերի մասին» 34 հոդվածից բաղկացած հրահանգները, այնուհետև 1915 թ. սեպտեմբերի 13-ին օսմանյան խորհրդարանն ընդունեց «Լքյալ գույքերի մասին» ժամանակավոր օրենքը, իսկ նույն թվականի հոկտեմբերի 26-ին՝ այդ օրենքի գործադրման կանոնադրությունը: Այսպիսով, օրինականացվեց հայերի շարժական և անշարժ գույքերի, ամբողջ հարստության բացահայտ կողոպուտն ու յուրացումը, որն արդեն իսկ իրականացվում էր Օսմանյան կայսրության ողջ տարածքով մեկ³:

Հեղինակն իր ուսումնասիրության մեջ կանգ առնելով այս իրավական ակտերի հիման վրա ստեղծված Լքյալ գույքերի հանձնաժողովների կողմից իրականացրած կողոպուտի և յուրացման գործողություններին՝ պնդում է, որ Լքյալ գույքերի հանձնաժողովների արձանագրությո-

¹ **Nevzat Onaran**, Emval-i metruke olayı, Osmanlı'da ve Cumhuriyette Ermeni ve Rum Mallarının Türkleştirilmesi, İstanbul, 2010.

² **Նևզաթ Օգյուն**, Թուրք ազգայնականության «արյունոտ» տնտեսական քաղաքականությունը, (Նևզաթ Օնարանի Emval-i metruke olayı, Osmanlı'da ve Cumhuriyette Ermeni ve Rum Mallarının Türkleştirilmesi գրքի մասին գրախոսական), <http://akunq.net/am/?p=3874>.

³ **Nevzat Onaran**, Emval-i metruke olayı, Osmanlı'da ve Cumhuriyette Ermeni ve Rum Mallarının Türkleştirilmesi, İstanbul, 2010. s. 33-34.

յունները կարող են իրական պատկերացում տալ հայերի կրած նյութական կորուստների մասին⁴:

Ըստ Նևգաթ Օնարանի՝ ողջ արևմտահայության հարստությունը հափշտակվել և բաժանվել է թուրքերին և, ընդհանրապես, մահմեդականներին: Հայկական ունեցվածքի կողոպուտի հաշվին միանգամից հարստացողների մի սովոր գանգված է գոյացել: Ողջ հասարակությունը լուր կերպով մեղսակից է եղել այդ ոճրին, որովհետև բոլորը համոզված էին, որ իրենց բաժին պետք է հասնի այդ համատարած կողոպուտից⁵:

1920 թ. հունվարի 8-ին Կ.Պոլսո կառավարությունը հայերի ունեցվածքը վերադարձնելու մասին որոշում է ընդունում, սակայն քեմալական իշխանությունները, 1923 թ. ապրիլի 15-ին հրապարակելով 333 թվակիր օրենքը, շարունակում են իրականացնել հայերի ունեզրկման երիտթուրքերի կիսատ թողնված գործը: Հանրապետական շրջանում կրկին գործողության մեջ է դրվում Լքյալ գույքերի հանձնաժողովը, որը պարտականություն ուներ իրականացնելու հայերի և հույների գույքերի լուծարման գործընթացը: Վերը նշված օրենքը ուժի մեջ է մնում մինչև 1988 թ. նոյեմբերը⁶:

Նևգատ Օնարանի բերած փաստերի համաձայն՝ թուրքական պետությունն իր տնտեսությունը թրքացնելուց գատ, հայերի ունեցվածքից իրացված գումարներով հոգացել է իր բազում կարիքները: Օրինակ՝ Ֆինանսների նախարարությունում պահվող հայկական հարստությունը հանրապետության շրջանում պարբերաբար փրկել է Թուրքիային՝ պետությանը դուրս բերելով տնտեսական ճգնաժամերից: 1928 թ. Թուրքիայի Հանրապետության կառավարությանը Ֆինանսների նախարարությունում պահվող, հայերից բռնագրավված գումարներից 1929 թ. տնտեսական ճգնաժամի սրման ժամանակ պետական բյուջե փոխանցեց 300.000 լիրա: Ի դեպ, եթե միայն բյուջեի բանկային աճը նկատի

⁴ Նույն տեղում, էջ 48, 74:

⁵ Նույն տեղում, էջ 65:

⁶ Նույն տեղում, էջ 153-157:

ունենանք, ապա այն այսօր կկազմի 300.000 000 լիրա⁷: Նման փոխանցումներ շարունակվել են նաև հետագա տարիներին⁸:

2011 թ. Լոնդոնում անգլերեն լեզվով հրատարակվեց Ուդուր Ումիթ Օնգյուրի և Մեհմեդ Պոլատելի «Բռնագրավում և գաղութացում» մենագրությունը, որում հեղինակները բազմաթիվ փաստերով հիմնավորում են, որ հայերի ունեզրկումը ղեկավարվել է երիտթուրքական իշխանությունների կողմից: Ահա այդ փաստերից: Ադանայի հայության տեղահանությունից հետո Թալեաթ փաշան 1915 թ. սեպտեմբերի 8-ին հրամայում է ադանահայերի գործարանները, արհեստանոցները և խանութները փոխանցել թուրքերին⁹: Թալեաթ փաշան հրաման է արձակել նաև հայերի տներում բնակեցնել Բալկաններից գաղթած թուրք գաղթականներին և հայերի ունեցվածքի վաճառքից գոյացած գումարներով ապրուստի միջոցներ տրամադրել նրանց¹⁰:

Ուդուր Ումիթը և Մեհմեդ Պոլատելը անդրադառնում են այն իրողությանը, որ հարուստ կողոպուտի հեռանկարը համախոհների լայն գանգվածներ է հավաքագրել երիտթուրքերի իշխանությունների շուրջ: Երիտթուրքերի վարչակազմը հայերի լքյալ գույքերը հանձնել է նրանց բնակավայրերի իշխանություններին, նախարարություններին շոայլուրեն տրամադրել շենքեր և հողատարածքներ, իսկ փոխարենը՝ գտել համախոհների հսկա բանակ և նրանցից ստացել աջակցություն, հայերի բնաջնջումն իրականացնելու համար¹¹:

Հիշատակության է արժանի այն իրողությունը, որ թուրք իշխանավորները, հայերից մեծ գումարներ վերցնելով, հետաձգել են նրանց տեղահանությունը: Օրինակ՝ Ադանայի իշխանությունները պարբերաբար գումարներ են վերցրել տեղի հարուստ հայերից և հետաձգել նրանց

⁷ Նույն տեղում, էջ 271:

⁸ Նույն տեղում, էջ 248:

⁹ **Uğur Ümit Üngör and Mehmet Polatel**, Confiscation and Distruction, Continuum International Publishing Group, London, 2011, p. 113.

¹⁰ Նույն տեղում, էջ 114:

¹¹ Նույն տեղում, էջ 167:

տարագրումը: Եվ այդ տևել է այնքան ժամանակ, մինչև սպառվել են հայերի գումարները, որից հետո նրանք տեղահանվել են¹²:

Գրքում տարբեր փաստերով հիմնավորվում է, որ Մուստաֆա Բեմալի ղեկավարած ազգայնական պայքարի շարժիչ ուժը եղել է հայերից բռնագրավված ունեցվածքը: Հայերի ինչքերի յուրացումով հարստացած թուրք ու քուրդ երևելիներն են ֆինանսավորել ազգայնական շարժումը: Նրանք ֆինանսավորել են նաև բանակից դուրս գործող ավագակախմբերին, որոնք ազգայնական շարժման հիմնական ուժն էին¹³:

Հեղինակներն անդրադարձել են նաև վերապրած հայության նկատմամբ քեմալական իշխանությունների վարած տեղահանության, կոտորածի և կողոպուտի քաղաքականությանը¹⁴: Երկիրը հայաթափելուց հետո, հայերի թողած ունեցվածքի յուրացման գործին օրինական հիմք տալու համար քեմալական իշխանությունները երիտթուրքական իշխանությունների նման իրավական հիմքի վրա են դրել այն: Անկախության Ազգային մեծ ժողովը 1922-1929 թթ. ընդունել է «Լքյալ գույքերի մասին» 9 օրենք¹⁵:

Ուղուր Ումիտն ու Մեհմեդ Փոլատելը գտնում են, որ ժամանակակից Թուրքիայի տնտեսությունը գրեթե ամբողջապես հենված է հայերից բռնագրավված ունեցվածքի վրա, և, որ հայերի տնտեսության ոչնչացումը հիմք է դրել թուրքական տնտեսության զարգացմանը¹⁶:

Ալի Սայիթ Չեթինօղլուն թուրքական և արտասահմանյան մի շարք հեղինակավոր պարբերականներում հրատարակած իր ուսումնասիրություններում, հողվածներում և հրապարակային ելույթներում բազմիցս անդրադարձել է օսմանյան և հանրապետական շրջաններում թուրքական իշխանությունների իրականացրած հայերի ունեզրկման թեմային: 2011 թ. Ստամբուլում հրատարակել է «Ունեցվածքի հարկը 1942-1944 թթ. տնտեսական և մշակութային ցեղասպանություն» աշխատությունը:

¹² Նույն տեղում, 117-118:

¹³ Նույն տեղում, էջ 124:

¹⁴ Նույն տեղում, էջ 145-146:

¹⁵ Նույն տեղում, էջ 124, 145-146:

¹⁶ Նույն տեղում, էջ 168:

տությունը: Չեթինօղլուն ներկայումս աշխատում է «Թուրք բուրժուազիան և թուրքական ունեցվածքի գաղտնի կողմը» գրքի վրա, որը նվիրված է հայկական և հունական ունեցվածքը զավթած թուրք-մահմեդական հարստության թեմային¹⁷:

Չեթինօղլուն առանձին հողվածներով հանդես է եկել երիտթուրքական իշխանությունների կողմից Մարդինի¹⁸, Տիգրանակերտի Արգանաբնակավայրի հայերի ունեցվածքի բռնագրավման և յուրացման պատմությանը¹⁹: Ուսումնասիրել է երիտթուրքական և հանրապետական իշխանությունների կողմից թուրքական բանկերում հայերի՝ ի պահ տրված ավանդների յուրացման մասին Թուրքիայի արխիվներում պահվող փաստաթղթերը և այդ թեմայով հրատարակել աշխատություն²⁰:

Սայիթ Չեթինօղլուն փաստերով ներկայացնում է, թե ինչպես հայերի ինչքերի և կավվածքների կողոպուտի հաշվին լցվել է Օսմանյան կայսրության պետական գանձանակը և պետական բյուջեն, հակառակ պատերազմական ծանր պայմաններին, հետևյալ աննախադեպ աճն է արձանագրել. 1913-1914 տարեշրջանում շուրջ 35 միլիոն օսմանյան ոսկի, 1915-1916 թթ.՝ 38 միլիոն, իսկ 1917-1918 թվականներին այն հասել է 85 միլիոնի: Ավելին, 1918 թ. կայսրության ողջ պատմության ընթացքում, առաջին անգամ, երիտթուրքական իշխանությունները թողարկել են 19 միլիոն օսմանյան ոսկուն համարժեք արժեթղթեր²¹:

Իր ուսումնասիրություններում Չեթինօղլուն մշտապես փաստում է հայերի ունեզրկման գործընթացին հանրապետական իշխանությունների մեծ մասնակցության մասին: Նա գրում է, որ միակուսակցական

¹⁷ Թուրք հայտնի պատմաբան Սայիթ Չեթինօղլուի հետ հանդիպում՝ Արևմտահայոց հարցերի ուսումնասիրության կենտրոնում, <http://akunq.net/am/?p=30660>

¹⁸ Տեղահանության ենթարկված Մարդինի հայերի՝ 1915 թ. բռնագրավված և 1915 թ. Ցեղասպանությունից հետո պետության ու մասնավոր անձանց կողմից օգտագործված հայկական գույքի օրինակներ, <http://akunq.net/am/?p=27529>

¹⁹ **Սայիթ Չեթինօղլու**, 1915 թ. ցեղասպանությունը Դիարբեքի իր գանձում (Արգանա) և հայկական ունեցվածքի բաժանումը, <http://akunq.net/am/?p=32813>.

²⁰ **Sait Çetioğlu**, 1915 Soykırımının T. C. Merkez Bankası Kayıtlarındaki İzleri-1. bölüm, <http://hyetert.blogspot.com/2011/08/1915-soykrimn-t-c-merkez-bankas.html>.

²¹ **Sait Cetinoglu**, Sermayenin Turkleştirilmesi, Resmi Tarih Tartışmaları -2, Ed. Fikret Başkaya, özgür niversite Kitaplığı, 2006- Ankara, s.131.

շրջանում Անկարայի Ազգային մեծ ժողովում կամ ժողովրդական կուսակցության բարձրաստիճան ղեկավարության կազմում գտնվող անձանցից բոլորը, գրեթե առանց բացառության, Հայոց ցեղասպանության միջոցով հարստացածներն են: Աթաթուրքն էլ բացառություն չի կազմում նրանց մեջ²²: Ավելին, այսօրվա Արդարություն և զարգացում կուսակցության անդամների մեջ ևս կան հայերի ունեցվածքը բռնագրաված անձանց երեխաներ և թոռներ²³:

Սայիթ Չեթինօղլուն գտնում է, որ ժամանակակից Թուրքիան կառուցվել է Հայոց ցեղասպանության ընթացքում ձեռք բերված նյութական, քաղաքական, ռազմական և այլ շահույթների հիմքի վրա²⁴:

2012 թ. Ստամբուլում հրատարակվեց Թաներ Աքչամի և Ումիթ Քուրտի «Օրենքների ոգին. հետևել ցեղասպանության հետքին «Լքյալ գույքերի մասին» օրենքներում» ուսումնասիրությունը, որում օսմանյան և հանրապետական օրենքների լուսի ներքո քննվում է Հայոց ցեղասպանության ընթացքում և հետո յուրացված հայկական ունեցվածքի խնդիրը²⁵:

Այս գրքում քննության է առնվել Լոզանի պայմանագրի այն հոդվածները, որոնք առնչվում են հայերի լքյալ գույքերին: Լոզանի պայմանագրով, Թուրքիան ընդունել է, որ իր կողմից բռնագրավված լքյալ գույքերը ետ է վերադարձնելու տերերին, եթե նրանք ողջ են, կամ՝ նրանց ժառանգներին: Լոզանի պայմանագրի հոդվածների կիրառումը թույլ չտալու և այդ պայմանագրի հոդվածների հիման վրա Ազգերի լիգայի միջատության հնարավորությունը բացառելու նպատակով՝ 1923 և 1927 թվականներին Թուրքիայի քեմալական իշխանությունները ընդունեցին օրենքներ, որով զրկեցին Արևմտյան Հայաստանից և Կիլիկիայից

²²Սայիթ Չեթինօղլու, 2015 թ.՝ 100-ամյա տարելիցի սինդրոմի շուրջ, <http://akunq.net/am/?p=30783>.

²³Ռուբեն Ադալը, Թուրքիայում գտնվող հարստության աղբյուրը բռնագրավված հայկական ունեցվածքն է (Հարցազրույց Սայիթ Չեթինօղլուի հետ), <http://akunq.net/am/?p=18338>.

²⁴ Սայիթ Չեթինօղլու, Համաշխարհային արդարությունը և Հայոց ցեղասպանությունը, <http://akunq.net/am/?p=31106>.

²⁵ Taner Akçam-Umit Kurt, Kanunların Ruhü: Emval-i Metruke Kanunlarında Soykırımın İzini Sürmek, İstanbul, 2012.

տարագրված հայերին իրենց պապենական հայրենիքը վերադառնալու իրավունքից: Այս օրենքները հանրապետական իշխանություններին հնարավորություն տվեցին ամբողջապես տիրանալու հայերի թողած շարժական և անշարժ ունեցվածքին²⁶:

Այս գրքի գլխավոր փաստարկներից մեկն այն է, որ Թուրքիայի Հանրապետության կողմից Հայոց ցեղասպանության ժխտողականության հիմքում ընկած է հայերի ունեցվածքի հարցը: Թաներ Աքչամը և Ումիթ Քուրտը գտնում են, որ եթե Թուրքիայի Հանրապետությունը ճանաչի 1915 թվականի հանցագործությունը, հարկադրված կլինի ընդունել հայերի կրած վնասները հատուցելու անհրաժեշտությունը: Այդ իսկ պատճառով նախընտրում է ժխտել Հայոց ցեղասպանությունը²⁷:

Վերը հիշատակված բոլոր այս պատմաբանները թուրքական ժխտողականության հիմքում տեսնում են բռնագրավված հայկական ունեցվածքի հարցը:

АНАИТ АСТОЯН

Институт древних рукописей Матенадаран

ТЕМА ЭКСПРОПРИАЦИИ АРМЯН В ИССЛЕДОВАНИЯХ ТУРЕЦКИХ ИСТОРИКОВ

В последних десятилетиях турецкие историки Невзат Онан, Али Саид Четиноглы, Танер Акчам, Унгур Умит, Мегмет Поятел и Уумит Курт опубликовали исследования об организованном младотуркской властью экспроприации имущества армян в годы Геноцида армян. Эти ценные исследования содержат богатый материал о материальных потерях армян в годы геноцида. Данные этих трудов могут быть использованы при рассмотрении вопроса компенсаций за материальный ущерб

²⁶ Թաներ Աքչամ. Լքյալ գույքի մասին բոլոր օրենքներում թե՛ օսմանյան և թե՛ հանրապետական կառավարություններն անընդհատ կրկնել են այն սկզբունքը, թե այդ ունեցվածքի իրական տերերը հայերն են, <http://akunq.net/am/?p=26815>.

²⁷ Նույն տեղում:

нанесенный армянскому народу во время осуществления политики геноцида.

ANAHIT ASTOYAN

Institute of Ancient Manuscripts -Matenadaran

THE TOPIC OF EXPROPRIATION OF ARMENIANS IN THE WORKS OF TURKISH HISTORIANS

Throughout the recent decade such Turkish historians as are Nevzat Onaran, Ali Sait Çetinoglu, Taner Akçam, Ungur Umit, Mehmet Polatel and Ümit Kurt have published works about expropriation of Armenians by Young Turk authorities during the years of Armenian Genocide. These valuable works are full of numerous data about material losses of Armenians. The aforesaid works may provide copious facts and information on the way of solving the problem of compensating material damages suffered during the Armenian Genocide.

ՔՐԻՍՏԻՆԵ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ ՍՓՅՈՒՈՔԱՀԱՅ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ (1945-1947 ԹԹ.)

Չնայած 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին հայ ժողովուրդը ենթարկվեց ծանրագույն փորձության և անցավ սարսափելի արհավիրքների միջով, սակայն կարողացավ վերապրել և չկորցնելով ազգային ինքնագիտակցությունը՝ շարունակեց պայքարը

հանուն ազգային գոյատևման, կորցված հայրենիքի իրավունքի վերականգնման, ցեղասպանության միջազգային ճանաչման:

1944-1945 թթ. ինչպես Սփյուռքում, այնպես էլ Խորհրդային Հայաստանում լայն թափ էր ստացել «ազգային ուժերի միասնության» գաղափարը: Դրան նպաստել էր նախ և առաջ Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին Թուրքիայի վարած հակախորհրդային քաղաքականությունը, որը պատերազմի ավարտից հետո հանգեցրեց խորհրդա-թուրքական հարաբերությունների վատթարացման: 1945 թ. ԽՍՀՄ-ը հրաժարվեց երկարաձգել 1925 թ. խորհրդա-թուրքական պայմանագիրը և փորձում էր խաղարկել հայկական տարածքների Խորհրդային Հայաստանին վերադարձնելու խաղաքարտը: Կրեմլը գիտակցում էր, որ դեռևս պատերազմի տարիներին արտերկրում ապրող հայերի կողմից Հայկական հարցի շուրջ սկսած գործընթացը պետք է օգտագործել ի նպաստ իր շահերի, այդ պատճառով Հայաստանի կառավարության միջոցով խրախուսում էր 1944-1945 թթ. հայկական ազգային կազմակերպությունների սկսած գործունեությունը:

Դեռևս 1944 թ., երբ խորհրդահայ հասարակությունը նեղ շրջանակում քննարկում էր հայկական տարածքների վերադարձի հարցը, սփյուռքահայությունը ակտիվ միջոցների դիմեց այն միջազգային հանրությանը ներկայացնելու համար: Սփյուռքում սկսվել էր մի շարժում, որը մի կողմից զլխավորում էր Հայ հեղափոխական դաշնակցություն (ՀՅԴ) կուսակցությունը, մյուս կողմից՝ Ռամկավար ազատական կուսակցությունը (ՌԱԿ), խորհրդամետ այլ կազմակերպությունների՝ Սոցիալ դեմոկրատական հնչակյան կուսակցության (ՄԴՀԿ) և Ամերիկահայերի առաջադիմական լիգայի հետ համատեղ: Արդյունքում՝ վերջիններիս նախաձեռնությամբ, սփյուռքահայերի շրջանում, ստեղծվում են ազգային խորհուրդներ, ՀՅԴ կուսակցությունն էլ իր հերթին ձևավորում է Հայկական ազգային կոմիտեն՝ Ռուբեն Դարբինյանի և Միմոն Վրացյանի ղեկավարությամբ:

Վերը նշված կազմակերպությունները այդ տարիներին հրատարակեցին գրքեր ու գրքույկներ, տպագրեցին հոդվածներ, թերթիկներ, պատրաստեցին հուշագրեր և դիմումներ, բացի այդ, ի նպաստ Հայ դատի կազմակերպեցին հանրահավաքներ ու հավաքույթներ: Հիմնականում սփյուռքահայ կազմակերպություններն ու գործիչները հուշագրերով և դիմումներով դիմեցին հաղթող տերությունների դեկավարներին, Միավորված Ազգերի Կազմակերպության (ՄԱԿ) Ման Ֆրանցիսկոյի հիմնադիր կոնֆերանսին (1945 թ. ապրիլ), ԽՍՀՄ, ԱՄՆ և Մեծ Բրիտանիայի դեկավարների Բեռլինի կոնֆերանսին (1945թ. օգոստոս), արտաքին գործերի նախարարների խորհրդի Լոնդոնի նստաշրջանին (1945թ. սեպտեմբեր), ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի Լոնդոնի 1-ին նստաշրջանին (1946թ. հունվար) և այլն: Այդ փաստաթղթերը վկայում են, որ սփյուռքահայությունը գիտակցում էր, որ աշխարհի հետպատերազմյան խաղաղության և անվտանգության հարցերը կախված են երեք մեծ տերությունների՝ ԽՍՀՄ-ի, ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի համագործակցությունից: Ավելին՝ բոլոր կարևոր միջազգային հարցերը կարող են լուծել այդ տերությունների համաձայնեցված գործողություններով, հատկապես Հայկական հարցի լուծմամբ կարող է զբաղվել Ազգերի լիգային փոխարինած նորաստեղծ ՄԱԿ-ը: Այդ նկատառումով, վերջիններիս մեծ թվով հուշագրեր և դիմում նամակներ են հղում, որոնք լայն քննարկման թեմա դարձան ոչ միայն հայ հասարակության, այլև միջազգային հանրության շրջանում:

Առաջինն՝ Ամերիկահայ ազգային խորհուրդի («Հայ ժողովրդի գործը») և Ամերիկահայ ազգային կոմիտեի («Հայկական հարցի առթիվ») հուշագրերն էին: Երկու փաստաթուղթն էլ իրենց կառուցվածքով նույնանման էին. կազմված էին մի շարք բաժիններից, որոնցում անդրադարձ է կատարվել Հայկական հարցի համառոտ պատմությանը: Եթե «Հայ ժողովրդի գործ»-ում մեծ տեղ էր հատկացվում հայ ժողովրդի ծագմանը և պատմական տարածքին, ապա «Հայկական հարցի առթիվ»-ում՝ Հայաստանի առաջին հանրապետությանը, Սևրի պայմա-

նագրին, Հայկական հարցի վերաբերյալ Ազգերի լիգայի բանաձևերին: Երկուսն էլ մեկ ընդհանուր նպատակ էին հետապնդում: Վերջիններս պահանջում էին Թուրքիայի կողմից բռնազավթված հայկական հողերի ազատագրումը ու դրանց կցումը Խորհրդային Հայաստանին¹:

Այս երկու փաստաթղթում Առաջին համաշխարհային պատերազմին վերաբերող բաժինները կրում էին «Առաջին համաշխարհային պատերազմի դաշնակից» ու «Հայերը և դաշնակից պետությունները Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին» խորագրերը: Դրանց բովանդակությունը կարելի է բաժանել երեք մասի: Նախ հիշեցնում էին, որ այդ պատերազմի ընթացքում հայերը Անտանտի երկրների դաշնակիցն են եղել և թե ինչպիսի ներդրում են ունեցել վերջիններիս հաղթանակման գործում: Այնուհետև բավականին հակիրճ անդրադարձ էր արվում 1915 թ. Օսմանյան կայսրության տարածքում հայերի նկատմամբ իրականացված ցեղասպանությանը, որտեղ օգտագործվում էր ոչ թե ցեղասպանություն եզրույթը², այլ «կոտորածներ» կամ «ջարդեր» բառերը: Վերջում էլ մեծ տեղ էր հատկացվում Սևրի պայմանագրին: Օրինակ՝ Ամերիկահայ ազգային խորհրդի ՄԱԿ-ին ներկայացրած «Հայ ժողովրդի գործը» պատմական հուշագրում այս բաժինը հետևյալ բովանդակությունն ուներ. «Առաջին Համաշխարհային պատերազմի ընթացքում, հայերը կռվում էին Դաշնակից երկրների զորքերի կազմում, և դիտվում էին որպես «Փոքր դաշնակից»: Այս նվիրվածությունը պատճառ հանդիսացավ մեկ միլիոն հայի սպանության, մնացած մեկուկես միլիոնն էլ տեղահան արվեց իր բնակավայրերից և այսօր ցրված են աշխարհով մեկ:

¹ Armenian National Council of America, The Case of the Armenian People, Memorandum to the United Nations Conference on International Organization in San Francisco, June 4, 1945, New York, 1945, p. 1-7. Հայ դատի հանձնախմբ, Հաղորդագրություն հայ դատի հանձնախմբի, թիվ 1, օգոստոս 1945, Կու Յոքք, էջ 1-7:

² Հիշեցնենք, որ «ցեղասպանություն» («genocide») եզրույթը շրջանառության մեջ է դրվել 1944 թ. պրոֆեսոր Ռաֆայել Լեմկինի կողմից: Իսկ ավելի ուշ՝ 1948 թ. ՄԱԿ-ն ընդունեց «Ցեղասպանության հանցագործության կանխման և պատժի մասին» կոնվենցիան, ըստ որի ցեղասպանությունը համարվում է միջազգային հանցագործություն և ենթակա է պատժի: Ուստի, տվյալ բառերը դեռևս չէր կարող օգտագործել:

Հաշվի առնելով հայերի զոհերի թիվը և ցուցաբերած ծառայությունները, մեծ դաշնակիցները պաշտոնապես խոստացել էին ազատագրել նրանց պատմական հողերը: Իրականում, դաշնակից տերությունների Գերագույն Խորհուրդը 1920 թ. հանձնարարեց ԱՄՆ-ի նախագահ Վ. Վիլսոնին գծել Հայաստանի սահմանները, որը թույլ էր տալու հայերին ազատվել թուրքական լծից: Նա գծեց սահմանները, որոնք ընդգրկում էին պատմականորեն հայկական տարածքները: Մինչդեռ Սևրի պայմանագիրը, որը ստորագրվել էր Թուրքիայի կառավարության կողմից ևս, մնաց թղթի վրա»³:

Նկատենք, որ 1945 թ. բոլոր ներկայացված փաստաթղթերը հիմնականում նույն բովանդակություն ունենին: Ուսումնասիրելով դրանք, հանգում ենք այն եզրակացության, որ 1945 թ. գրություններում 1915 թ. դեպքերին մեծ կարևորություն չէր տրվում, և սփյուռքահայերը բավարարվում էին Օսմանյան կայսրությունում հայերի նկատմամբ իրականացված ցեղասպանության թեմային ընդամենը մեկ կամ երկու նախադասություն նվիրելով: Լինում էին դեպքեր, որ նույնիսկ չէր հիշատակվում Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հայերի նկատմամբ իրականացրած ցեղասպանությունը: Օրինակ՝ 1945 թ. հուլիսի 17-ին Ամերիկահայ ազգային խորհուրդի Պոտսդամի խորհրդաժողովի մասնակցող հակահիտլերյան կռալիցիայի տերությունների առաջնորդներին ներկայացրած փաստաթղթում չէր հիշատակվում Հայոց ցեղասպանությունը, փոխարենը խոսվում էր հայերի ազատագրական պայքարի մասին՝ «Հայերը արժանապատիվ պայքար են մղել թուրքերի դեմ, երբեք չեն հնազանդվել ճակատագրին: Հայերը երկար տարիներ դիմադրել են, ինչը բարձրացնում է հայերի հեղինակությունը»⁴: Հիմնական շեշտը դրվում էր երկու պատերազմների ընթացքում դաշնակիցների

³ Armenian National Council of America, The Case of the Armenian People, Memorandum to the United Nations Conference on International Organization in San Francisco, June 4, 1945, New York, 1945, p. 5.

⁴ Text of memorandum to the Big Three in session in Potsdam, Germany, July 17, 1945, New York, 1945, p 2.

հանդեպ հայերի ցուցաբերված հավասարության և մեծ տերությունների ժամանակին տված խոստումների վրա: Պոտսդամի խորհրդաժողովին ներկայացված հուշագրում գրված էր նաև. «Առաջին աշխարհամարտի տարիներին հայերը դաշնակից երկրներին բարոյական և նյութական աջակցություն են ցուցաբերել: Նրանց որդիները ծառայել են դաշնակիցների բանակներում և առանձնացել են իրենց հավասարությամբ և խիզախությամբ: Դաշնակիցները հայերի ազատության և ժողովրդավարության ցուցաբերած աջակցության համար խոստացել են ինչպես ազատագրել թուրքական լծից, այնպես էլ՝ ձևավորել հայկական անկախ պետություն: Դաշնակիցները հանձնարարեցին նախագահ Վ. Վիլսոնին գծել ազատ ու անկախ Հայաստանի սահմանը: Սակայն այն իրավական ուժ չի ստացել, Սևրի պայմանագիրը մոռացության է մատնվել, քանի որ դա բխում էր հզոր պետությունների շահերից»⁵: Իսկ Ազգային կոմիտեն գրել է. «Հայերը չեն մոռացել Ձեր պատմական հայտարարությունը Թուրքահայաստանի իրավունքների մասին և հաստատ համոզված են, որ Դուք նորից կվերանայեք այդ իրավունքները համակրանքի նույն ոգով»⁶:

Այսպիսով, 1945 թ. սփյուռքահայերը շեշտադրում էին Թուրքիային ներկայացված տարածքային պահանջները: 1946-1947 թթ. որոշակի փոփոխություն նկատվեց սփյուռքահայ կառույցների ձևակերպումներում՝ փաստաթղթերում ավելի մեծ տեղ էր հատկացվում Հայոց ցեղասպանության թեմային: Օրինակ՝ 1946 թ. հունվարին Լոնդոնում կայացած ՄԱԿ-ի խորհրդաժողովին ներկայացրած սփյուռքահայ ազգային խորհուրդների հուշագրերում խոսվում էր Օսմանյան կայսրության ժամանակ հայերի նկատմամբ իրականացված կոտորածների մասին⁷: «1896 թ. կոտորածներին զոհ գնացին

⁵ Նույն տեղում, էջ 2-3:

⁶ ՀԱԱ, Հասարակական-քաղաքական կուսակցությունների փաստաթղթերի բաժին, ֆ. 1, ց. 26, գ. 47, թ. 146:

⁷ Armenian National Council of America, Text of Memorandum Sent by Cabel to the Assembly of the United Nations in London by the Armenian National Council of America and by the

300000 հայ, իսկ 1909 թ. Ադանայում գոհերի թիվը հասնում էր 30 000-ի: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներն ավելի դաժան էին. գոհերի թիվը հասել է 1.5 միլիոնի»⁸: Բացի այդ, վիճակագրական տվյալներ են ներկայացվում՝ հիմնվելով դիվանագիտական կորպուսների կողմից պատրաստված փաստաթղթերի հիման վրա: Դրանց համաձայն. «Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին հայերի թիվը կայսրությունում հասնում էր 2 միլիոն 500 հազարի, պատերազմի ավարտից հետո նրանց թիվը հասել է 300000-ի, կայսրության հայերի 1.5 միլիոնից ավելին կոտորվել է, իսկ 500000-ն էլ ցրված է ամբողջ աշխարհով մեկ»⁹: Եթե ամերիկահայ ազգային խորհուրդը բավարարվում էր միայն այս տվյալներով, ապա ֆրանսիահայ ազգային խորհուրդը իր հուշագրերում առավել մանրամասն անդրադարձ էր կատարում Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին և պատերազմի ավարտից հետո Հայկական վիլայեթների ժողովրդագրական և տնտեսական վիճակին, Հայոց ցեղասպանությանը՝ գալով հետևյալ եզրակացության. «Թուրքերու կողմէ 1915-ին գործուած ոճիրին հատուցումը այն օրը կատարեալ պիտի ըլլայ՝ երբ աշխարհի չորս կողմը ցրուած Հայերը կարելիութիւն ունենան վերադառնալու իրենց նախնիքներու երկիրը: ... Եւ Հայրենիքին վերստին գտնուած զաւակները պիտի կրնան վերջապէս իրենց ճիգերը միացնել Հայաստանի մեջ մնացող իրենց եղբայրներու ճիգերուն, որոնք կը կատարուին հայրենի հողին վրայ քսանհինգ տարիէ ի վեր՝ մեծամեծ զոհողութիւններով»¹⁰:

1946 թ. վերջին և 1947 թ. նկատվում է, որ սփյուռքահայերը իրենց հուշագրերում և դիմում-նամակներում Հայոց ցեղասպանութ-

Conference of Armenian Compatriotic Societies in New York, Jan. 31, 1946, New York, 1946, p. 2.

⁸ Նույն տեղում:

⁹ Text of memorandum sent to the Council of Ministers for Foreign Affairs in London, January 31, 1946, New York, 1946, p. 3.

¹⁰ ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 148 (Ֆրանսահայերի կողմից ՄԱԿ-ի ներկայացուցիչներին «Պատմական Հայաստանի հողերը Սովետական Հայաստանին միացնելու հարցի մասին»), թ. 17:

յան մասին խոսելիս մեծ թվով մեջբերումներ էին անում այդ դեպքերին ակնատես մեծ տերությունների քաղաքական գործիչների հայտարարություններից և հուշերից: Օրինակ՝ եգիպտահայերը 1946 թ. հրապարակած իրենց դիմում-նամակում հիշատակում էին ամերիկացի և բրիտանացի դիվանագետների հայտարարությունները, որոնք վերաբերում էին Հայոց ցեղասպանությանը¹¹: Մեջբերումներ կատարելով Օսմանյան կայսրությունում նախկին ԱՄՆ-ի դեսպան Հ. Մորգենթաունի հիշողություններից, գրում էին, որ վերջինիս գնահատմամբ համաշխարհային պատմությունը երբեք ակնատես չի եղել նման սարսափելի դրվագների¹²:

Բացի այդ, մեկ այլ հետաքրքիր դիտարկում ևս, Ամերիկահայ ազգային խորհուրդը, ի տարբերություն Ֆրանսիահայ, Սիրիահայ ու Լիբանանահայ, Եգիպտահայ ազգային խորհուրդների, հիմնականում մեծ կարևորություն էր տալիս Սևրի պայմանագրին, իսկ վերջիններս՝ հայկական կոտորածներին: Դա պայմանավորված էր այն հանգամանքով, որ այդ կերպ ամերիկահայ հասարակությունը ցանկանում էր հիշեցնել պաշտոնական Վաշինգտոնին, որ ժամանակին Սևրի պայմանագրի իրողությունները ամրագրելու նպատակով Ազգերի լիգան հանձնարարեց ԱՄՆ-ի նախագահ Վ. Վիլսոնին գծել հայ-թուրքական սահմանագիծը, որը հայտնի է «Վիլսոնի իրավարար վճիռ» անունով: Այլ կերպ ասած, ըստ իրենց գնահատմամբ՝ Միացյալ Նահանգները որոշակի պարտավորություն ունեին հայ ժողովրդի առջև:

Այսպիսով՝ 1945-1947 թթ. սփյուռքահայերի հրապարակած հուշագրերի ուսումնասիրումը թույլ է տալիս եզրակացնել, որ 1945 թ. Հայոց ցեղասպանության հարցի չլեշտադրումը պայմանավորված էր այն հանգամանքով, որ հայկական կողմը տարածքների պահանջը դիտում էր որպես արդարացի պահանջ և էական կարևորություն չէր

¹¹ Armenian Claims in the Light of Documents, Memorandum Submitted to the United Nations Organization Meeting in London, January 10, 1946, p. 6.

¹² Նույն տեղում:

տալիս կոտորածների հիշատակմանը: Իսկ ավելի ուշ, երբ 1945 թ. վերջին Մեծ տերությունները հայտարարեցին, որ հայերի հողային պահանջը չի կարող բավարարվել, քանի որ այդ տարածքներում հայեր չեն ապրում՝ սփյուռքահայերը որոշեցին փոխել շեշտադրումը և ընդգծել, թե ինչով է պայմանավորված հայկական տարածքներում հայերի չլինելը: Այլ կերպ ասած՝ 1946-1947 թթ. փաստաթղթերում խոսելով Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Օսմանյան կայսրությունում հայերի նկատմամբ իրականացված ցեղասպանության և տեղահանության մասին, վերջիններս հիմնավորում էին, որ դա է հիմնական պատճառը, որի հետևանքով այսօր այդ տարածքներում հայեր չեն ապրում: Միջազգային հանրությանը մեկ անգամ էլ հարցնելով. «Կարելի՞ է մեկ ազգ բնաջնջել, որպեսզի տիրեն իրենց տարածքներին», հայկական ազգային խորհուրդներն այդ առիթով 1947 թ. իրենց հուշագրերում հիմնականում գրում էին. «Հայկական հարցը քարոզչություն չէ: Դա արդարացի պահանջ է, որ երբևիցե մարդկությունը գիտե: Աշխարհի բոլոր հայերը պահանջում են, որ Խորհրդային Հայաստանին միացվեն Թուրքիայի կողմից զավթված արևելյան նահանգները: Այդ հողերը բնակեցված են եղել հայերով և 4000 տարվա ընթացքում՝ մինչև 1915 թ., ծաղկել են: Եթե այս հողերը հայկական չեն թուրքերի կոտորածի պատճառով, ապա նրանք ևս զրկված են այստեղ ապրելու և կյանքի իրավունքից: Ցանկացած դեպքում կոտորածները նրանց թույլ չեն տալիս սեփականացնել այս տարածքները»¹³:

КРИСТИНЕ МЕЛКОНЯН

Институт востоковедения НАН РА

ГЕНОЦИД АРМЯН В ДОКУМЕНТАХ ОРГАНИЗАЦИЙ АРМЯНСКОЙ ДИАСПОРЫ (1945–1947 ГГ.)

После победы СССР над фашистской Германией среди армян, проживающих в Америке, Европе, на Ближнем и Среднем Востоке, возродилась вера в решение Армянского вопроса и возвращение их на родину. В диаспоре начали создаваться армянские национальные советы, которые в 1945-1947 гг. представили меморандумы главам великих держав и ООН, стремясь обратить их внимание на необходимость восстановления исторической справедливости в отношении армянского народа.

CHRISTINE MELKONYAN

Institute of Oriental Studies of NAS RA

THE ISSUE OF THE ARMENIAN GENOCIDE IN THE DOCUMENTS OF THE ORGANIZATIONS OF THE ARMENIAN DIASPORA (1945–1947)

After the victory of the USSR over fascist Germany among the Armenians living in America, Europe, Near and Middle East, the belief of the solution of the Armenian Question and their returning to homeland increased. In the Diaspora began to create the Armenian National Council, which presented a memorandum to heads of great powers and the UN in 1945-1947, trying to draw their attention to the need to restore of historical justice towards the Armenian people.

¹³ A Memorandum on the Armenian Question, March 7, 1947, New York, 1947, p 7.

ԱՐՄԵՆ ՄԱՐՈՒՔՅԱՆ

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՎ ՄԱԿ-Ի ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴՏԱՐԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼԻՔ ՀԱՅՑԱՐԻՄՈՒՄԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱՂԱՂԻԶՆԵՐԸ

Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ժխտողականությունը այդ հանցագործության գոհ դարձած հայ ժողովրդի իրավունքների ներկայացուցիչ Հայաստանի Հանրապետությանն այլ ելք չի թողնում, քան հարցը իրավական դաշտ տեղափոխելը և ՄԱԿ-ի միջազգային դատարան նրա դեմ հայց ներկայացնելը: Հայոց ցեղասպանության գործով ՄԱԿ-ի Միջազգային դատարան դիմելու համար Հայաստանն իբրև հայցվոր կողմ պետք է նախ նախապատրաստի դատարանին ներկայացվելիք հայցադիմումը, որին պետք է կցվեն ներկայացված դրույթներն ապացուցող և հաստատող համապատասխան փաստաթղթեր: Ընդհանրապես, միջազգային դատական ատյաններին ներկայացվող հայցադիմումն իր կառուցվածքով նման է ազգային դատարաններին ներկայացվող համապատասխան փաստաթղթերին, սակայն, անշուշտ, կան որոշակի առանձնահատկություններ: Հայցադիմում հայցվոր պետությունը նախ պետք է նշի, թե որոնք են, իր կարծիքով, տվյալ գործը քննելու դատարանի իրավասության հիմքերը, այնուհետև պետք է ներկայացվեն հայցի փաստական հանգամանքները՝ իրավունքի տեսակետից տալով դրանց գնահատականը, և վերջում փաստաթուղթը եզրափակվում է դատարանին ներկայացվող պահանջներով¹:

Հայցադիմումի սկզբնամասում Հայոց ցեղասպանության գործը քննելու միջազգային դատարանի իրավասությունը Հայաստանը կարող է հիմնավորել նախ ՄԱԿ-ի Ցեղասպանության մասին կոնվենցիայի 9-րդ հոդվածի դրույթներով, որոնց համաձայն կոնվենցիայի կիրառելիության և այդ հանցագործության հետ կապված պետությունների պա-

տասխանատվության շուրջ կոնվենցիայի անդամ պետությունների միջև առկա վեճերը կարգավորվում են միջազգային դատարանի կողմից²: Կարելի է մեջբերել նաև «Բոսնիան և Հերցեգովինան ընդդեմ Հարավսլավիայի» գործով 1996 թ. միջազգային դատարանի որոշումը, որում երկու կողմերի ծայրահեղ դիրքորոշումները որակվեցին որպես նրանց միջև առկա վեճ, արձանագրվեց, որ կողմերը որպես Ցեղասպանության կոնվենցիայի անդամ պետություններ այդ փաստաթղթի ստորագրմամբ ու վավերացմամբ որոշակի պարտավորություններ են ստանձնել, հետևաբար՝ դատարանը կոնվենցիայի 9-րդ հոդվածի հիման վրա իրեն իրավասու համարեց քննելու տվյալ գործը³: Թվարկված բոլոր հանգամանքներն առկա են նաև Հայոց ցեղասպանության գործի հետ կապված, ուրեմն՝ միջազգային դատարանն իրավասու է քննելու նաև այս գործը:

Հայցադիմումը կազմելիս հարկ է հաշվի առնել, որ ներկայացվող ապացույցների գնահատման հարցում միջազգային դատարանն առաջնորդվում է հետևյալ չափորոշիչներով՝ ա.) տեղեկության ստացման աղբյուրը (կողմնակալ մարմին է, թե չեզոք), բ.) տեղեկության ստացման մեթոդները (անանուն հաղորդումներ են մամուլում, թե դատական կամ նախադատական մարմինների կողմից տրված տեղեկություններ), գ.) տեղեկության որակն ու բովանդակությունը (փոխադարձաբար ընդունելի են արդյոք վիճող կողմերի համար փաստերը, կամ արդյոք դրանք դրվել են կասկածի տակ)⁴: Առաջնորդվելով այս չափորոշիչներով և պահպանելով ժամանակագրական կարգը, ներկայացնենք փաստական հանգամանքներ, որոնք կարող են դրվել Հայոց ցեղասպանության գործով հայցադիմումի հիմքում:

² Տե՛ս Права человека. Сборник международных договоров, том 1 (часть вторая). Универсальные договоры ООН, Нью Йорк и Женева, 1994, с. 782.

³ Տե՛ս Վարդանյան Վ., Հայերի դեմ իրագործած ցեղասպանության համար Թուրքիայի Հանրապետությանը միջազգային իրավական պատասխանատվության հիմքերը, եղանակները, ձևերը և տեսակները, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի տեղեկագիր, № 1 (17), Եր., 2006, էջ 55-56:

⁴ Տե՛ս www.un.org/ru/icyj/who_sits.shtml

¹ Տե՛ս Международное право, отв. ред. Г.В., Игнатенко, О.И., Глузов, М., 2009.с. 713.

Հայոց ցեղասպանության գործով միջազգային դատարանին ներկայացվող հայցադիմումի առաջին կարևոր բաղադրիչը, հիրավի, պետք է լինի 1915 թ. մայիսի 24-ին Անտանտի դաշնակից տերությունների երեք մայրաքաղաքներում՝ Փարիզում, Լոնդոնում և Պետրոգրադում միաժամանակ հրապարակված հայերի զանգվածային սպանությունները դատապարտող համատեղ հռչակագիրը, որում դրանց տրվում էր «մարդկության դեմ կատարված հանցագործություն» իրավական գնահատականը և պատահական չէ, որ այս ձևակերպումը հետագայում միջազգային իրավունքում նույնականացվեց ցեղասպանության հանցագործության հետ⁵:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ միջազգային դատարանը արժանահավատ է համարում դատական ասյանների որոշումներն ու վճիռները⁶, հայցադիմումում անկյունաքարային տեղ պետք է հատկացվի թուրքական ռազմական տրիբունալներում երիտթուրքերի դատավարության նյութերին, որոնք պետք է համադրվեն միջազգային դատարանի՝ «Բոսնիան և Հերցեգովինան ընդդեմ Հարավսլավիայի» գործով նախադեպային որոշման, ինչպես նաև՝ Միջազգային քրեական դատարանի փաստաթղթերի հետ:

Օրինակ, միջազգային դատարանի «Բոսնիան և Հերցեգովինան ընդդեմ Հարավսլավիայի» գործի նախադեպային որոշման մեջ հստակեցվում է, թե ինչ է նշանակում ցեղասպանության զոհ խմբի մի մասին ոչնչացնելը: Այս առումով դատարանն առանձնացրեց երեք գլխավոր հատկանիշներ՝ քանակական, որակական և հնարավորության: Առաջին հատկանիշի հետ կապված նշվեց, որ զոհ խմբի մի մասի կորուստը պետք է էական քանակական հետևանքներ ունենա ամբողջ խմբի համար: Երկրորդը վերաբերվում էր խմբի ոչնչացված մասի նշանակալիությանը ամբողջ խմբի համար, իսկ երրորդը՝ սահմանում էր, որ զոհ

⁵ Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, документы и комментарий. Сост., отв. ред., автор предисловия и комментария Ю.Барцеров, т. 2, ч. 2, М, 2005, с. 651.

⁶ St' u Barnett P.R., Res judicata, Estoppel and Foreign Judgement, Oxford University Press, 2001, p. 18.

խմբի մասի ոչնչացումը կարող է տեղի ունենալ նաև սահմանափակ աշխարհագրական տարածքում⁷: Այսինքն, երբ ցեղասպանության իրագործողները հնարավորություն չեն ունեցել հանցագործությունը տարածել ավելի ընդարձակ տարածքների վրա, և այն կատարվել է միայն կոնկրետ տարածքում բնակվող տվյալ խմբի մի մասի նկատմամբ, ապա միևնույն է, խոսքը ցեղասպանության հանցագործության մասին է: Դժվար չէ նկատել, որ նշված բնութագրիչները լիովին համապատասխանում են հայ ժողովրդի ցեղասպանության ենթարկված հատվածին, քանզի քանակական առումով բնաջնջվեց հայության նշանակալի մասը, որակական առումով՝ ոչնչացվեց հայության կարող ու գործունյա հատվածը, այդ թվում՝ ազգի սերունդը կազմող մտավորականությունը: Հանցագործության իրականացման հնարավորության վերաբերյալ էլ պետք է նշենք, որ եթե պատերազմի սկզբնական շրջանում թուրքական իշխանությունների հանցավոր գործողությունները կատարվում էին Օսմանյան կայսրության և Պարսկաստանի գրավված տարածքներում, ապա պատերազմի ավարտական փուլում՝ ռուսական բանակի հետքաշման ու քեմալականների Արևելյան Հայաստան ու Անդրկովկաս ներխուժման հետևանքով, այդ հանցագործությունները տարածեցվին նաև այս տարածքներում բնակվող հայության վրա:

Հայոց ցեղասպանության գործով հայցադիմումում երիտթուրքերի դատավարության նյութերն անհրաժեշտ է համադրել նաև ՄՔԴ-ի «Հանցագործությունների բաղադրատարրերի» փաստաթղթի հետ, քանզի դրանցում հստակեցվում են ցեղասպանության հանցագործության հանցակազմի օբյեկտիվ կողմի հատկանիշները: Օրինակ, այդ փաստաթղթի 6-րդ հոդվածի կետերում ներկայացված են ՄԱԿ-ի Ցեղասպանության մասին կոնվենցիայում այդ հանցագործության հինգ հանցավոր գործողությունների կոնկրետ բնութագրիչները, որոցից հետևյալ երեքն ընդհանուր են՝

⁷ St' u **Межаев А.Б.**, Решение Международного суда по делу Босния и Герцеговина против Сербии и Черногории, <http://old.tisbi.org/science/Layout/2007/Liss1/Mezjaev.html>

ա) հանցավոր գործողության կանկրետ ազգային, էթնիկ, ռասայական կամ կրոնական խմբի ներկայացուցիչների նկատմամբ կատարված լինելը;

բ) հանցավոր գործողության կատարողը մտադրություն է ունեցել տվյալ գործողությամբ ամբողջությամբ, կամ մասնակի ոչնչացնել տվյալ ազգային, էթնիկ, ռասայական կամ կրոնական խումբը որպես այդպիսին;

գ) հանցավոր գործողությունը կատարվել է տվյալ խմբի դեմ ուղղված նույնբովանդակ վարքագծի շրջանակներում կամ հանդիսացել է առանձին գործողություն, որն ինքնին կարող էր հանգեցնել տվյալ խմբի ոչնչացմանը:

Բացի նշված ընդհանուր դրույթներից ՄՔԴ-ի «Հանցագործությունների բաղադրատարրերում» հստակեցված են նաև կոնկրետ հանցավոր գործողությունների մասնավոր հատկանիշները: Այսպես, 6 (b) կետով խմբի անդամներին մտավոր խեղում պատճառելու տակ հասկացվում են ինչպես կոտորածները, բռնաբարությունները և սեռական բռնությունները, այնպես էլ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը, սակայն ընդգծվում է, որ այդ գործողությունը չի կարող սահմանափակվել միայն նշվածներով⁸: Ցեղասպանության հանցագործության անմարդկային կենսապայմաններ ստեղծելուն վերաբերող 6 (c) կետի համաձայն, դրա մեջ ներառվում են ինչպես խմբին գոյության անհրաժեշտ միջոցներից, մասնավորապես, պարենից կամ բժշկական սպասարկումից զրկելը, այնպես էլ բնակավայրից պարբերաբար տեղահանելը, և կրկին նշվում է, որ այդ գործողությունը չի սահմանափակվում նշվածներով⁹:

«Հանցագործությունների բաղադրատարրերի» 6 (e) կետը հստակեցնում է ցեղասպանության հանցագործության՝ մի խմբից մեկ այլ խումբ երեխաների բռնի փոխանցման հատկանիշները: Հատուկ պար-

զաբանվում է, որ «բռնի» եզրույթը չի սահմանափակվում միայն ֆիզիկական ուժի գործադրմամբ, այլ արտահայտվում է նաև ուժի սպառնալիքի կամ հարկադրանքի ձևով, ինչը կարող է դրսևորվել բռնություն կիրառելու վախով, հոգեբանական ճնշմամբ, այլ խումբ տեղափոխվողների նկատմամբ իշխանության չարաշահմամբ կամ հարկադրանք պարունակող իրավիճակի օգտագործմամբ: Բացի դրանից, կոնկրետացվում է տարիքային վերին շեմը՝ 18 տարին, և որպես տվյալ հանցավոր գործողության հատկանիշ շեշտվում է, որ հանցագործության կատարողն իմացել է կամ չէր կարող չիմանալ երեխաների մինչև 18 տարեկան լինելու մասին¹⁰:

Թուրքական ռազմական տրիբունալի երիտթուրքերի դատավարության նյութերում՝ մեղադրական եզրակացություններում, սղագրություններում և դատավճիռներում կան բազմաթիվ սպացույցներ ու վկայություններ, որոնք լիովին համընկնում են հայերի նկատմամբ կատարված հանցավոր գործողություններում ցեղասպանության հանցագործության հանցակազմի օբյեկտիվ կողմի վերը թվարկված հատկանիշներին¹¹:

Հայոց ցեղասպանության գործով հայցադիմումի հաջորդ կարևոր բաղադրիչը Սևրի պայմանագրի համապատասխան հոդվածներն են: Պայմանագրի 230-րդ հոդվածով թուրքական կառավարությունը ճանաչում էր դաշնակից տերությունների իրավունքը քրեական պատասխանատվության կանչելու ոչ միայն այն անձանց, ովքեր մեղադրվում էին պատերազմի օրենքների և սովորույթների դեմ կատարված հանցագործությունների մեջ, այլև պարտավորվում էր նաև դաշնակից տերություններին հանձնել կոտորածների մեջ մեղադրվող անձանց, ովքեր պատերազմի ընթացքում հանցագործություններ էին կատարել այն տարածքներում, որոնք 1914 թ. օգոստոսի 1-ի դրությամբ հանդիսանում էին

¹⁰ Տե՛ս նույն տեղում:

¹¹ Տե՛ս Հայերի ցեղասպանությունն ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի: Առաջաբանը, թարգմանությունը և ծանոթագրությունները **Ա. Հ. Փափազյանի**, Եր., 1988, էջ 126:

⁸ Տե՛ս «Элементы преступлений Международного уголовного суда», с. 125. <http://www.mup-info.com/mup/sites/all/themes/newspro/docs/elementy-prestypleniy.pdf>

⁹ Տե՛ս նույն տեղում:

Օսմանյան կայսրության մի մասը¹²: Այս դրույթը չափազանց կարևոր էր այն առումով, որ Թուրքիան չէր կարող խուսափել Միջագետքի անապատներում հայերի զանգվածային կոտորածներում մեղադրվող անձանց հանձնելուց այն պատճառաբանությամբ, թե դրանք կատարվել են իրեն չպատկանող տարածքներում:

Սևրի պայմանագրի մեկ այլ՝ 144 հոդվածով Թուրքիան պարտավորվում էր ոչ միայն ուժը կորցրած ճանաչել օսմանյան կառավարության «Լքյալ գույքի» մասին 1915 թվականի օրենքն ու դրա լրացումները, որոնցով փորձել էր «օրինականացնել» ցեղասպանության ենթարկված արևմտահայության զանգվածային ունեզրկման քաղաքականությունը, այլև արգելում է նման օրենքների ընդունումն ապագայում¹³: Այս հոդվածի նշանակությունը չափազանց կարևոր է ցեղասպանության զոհ դարձած հայ զգաբնակչության իրավունքներն իր իսկ սեփականության նկատմամբ վերականգնելու տեսակետից: Տվյալ հոդվածում սահմանվում էին նաև հայության սեփականության իրավունքների վերականգնման կոնկրետ մեխանիզմներ:

Թեև Սևրի պայմանագիրը չվավերացվեց և ուժի մեջ չմտավ, ինչպես Թուրքիայի ներքաղաքական վիճակի փոփոխության, այնպես էլ աշխարհաքաղաքական գործընթացների պատճառով, այն միանգամայն օրինական փաստաթուղթ է: Չնայած որ այդ պայմանագրի ստորագրման պահին Թուրքիայում փաստացի իշխանությունը քեմալականների ձեռքում էր, այդուհանդերձ, 1920թ. հուլիսի 22-ին երկրի օրինական իշխանությունն, ի դեմս Կ.Պոլսում սուլթանի խորհուրդի, լրիվ կազմով քվեարկեց խաղաղության պայմանագիրը ստորագրելու օգտին և լիազորեց թուրքական պաշտոնական պատվիրակությանը ստորագրել Սևրի պայմանագիրը¹⁴: Ինչպես հայտնի է, անգամ չվավերացված

¹² Տե՛ս **Տերնոն Բ.**, Անպատժելիություն, վրեժ և ժխտում. Հայկական ցեղասպանությունը միջազգային ատյանների առջև, Եր., 2003, էջ 11:

¹³ Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1917), խմբագիր **Ջ. Կիրակոսյան**, Եր., 1972, էջ 678:

¹⁴ **Барцеров Ю.**, Геноцид армян – преступление по международному праву, М., 2000, с. 184.

պայմանագիրն այն ստորգրած պետություններին ամբողջությամբ չի ազատում պարտավորություններից: Բացի այդ, պետք է արձանագրենք, որ անգամ չվավերացված վիճակում Սևրի պայմանագրի դրույթները մասնակիորեն գործածվեցին՝ արաբական տարածքները Օսմանյան կայսրությունից անջատելու առումով, ինչը նախատեսված էր Սևրի պայմանագրով և տեղի ունեցավ հաջորդ՝ Լոզանի պայմանագրի ստորագրումից առաջ¹⁵:

Հայցադիմումի հաջորդ բաղադրիչը հայ-թուրքական սահմանի սահմանագծման վերաբերյալ ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնի 1920 թ. նոյեմբերի 22-ի իրավարար վճիռն է, որը Հայոց ցեղասպանության իրագործման համար հանցագործ պետությանը՝ Թուրքիային քաղաքական պատասխանատվության ենթարկող կարևոր միջազգային իրավական ակտ է: Չնայած այն հանգամանքին, որ իրավարար վճիռի կայացման ու դրա ուժի մեջ մտնելու ժամանակ ստեղծված նոր աշխարհաքաղաքական պայմաններում հնարավոր չեղավ կենսագործել դրա դրույթները, սակայն այն շարունակում է մնալ Հայոց ցեղասպանության գլխավոր հետևանքը՝ հայրենագրկումը, հաղթահարող ու հայ-թուրքական տարածքային-սահմանային վեճը կարգավորող ուժը չկորցրած միջազգային իրավական փաստաթուղթ:

Քանի որ միջազգային դատարանը որոշակի նշանակություն է տալիս նաև հեղինակավոր միջազգայնագետ-իրավաբանների ուսումնասիրություններին, ապա կարելի է որպես հայցադիմումի բաղադրիչ օգտագործել նաև «Հայ գաղթականների կենտրոնական կոմիտեի» խնդրանքով միջազգային իրավունքի նշանավոր մասնագետների հայ գաղթականների իրավունքների պաշտպանության վերաբերյալ 1929 թ. օգոստոսի 2-ի խորհրդատվական եզրակացությունը, որով Թուրքիայի կառավարության կողմից բռնագաղթի ենթարկված հայերին քաղաքացիությունից ու վերադառնալու իրավունքից զրկելը որակվում էր որպես միջազգային իրավունքի նորմերի կոպիտ խախտում¹⁶: Դրանից ելնելով,

¹⁵ Տե՛ս **Թորիլյան Շ.**, Հայկական հարցը և միջազգային օրենքը, Պեյրոթ 1976, էջ 132:

¹⁶ Տե՛ս **Барцеров Ю.**, Геноцид армян – преступление по международному праву, с. 209.

միանգամայն իրավաչափ էր համարվում թուրքական կառավարությանն ուղղված հայերից բռնագրավված ունեցվածքը վերականգնելու պահանջը¹⁷:

Հայցադիմումի հաջորդ բաղադրիչը Թուրքիայի ոչ մահմեդական բնակչության իրավունքների պաշտպանության վերաբերյալ Լոզանի պայմանագրի համապատասխան հողվածներն են, որոնցով նա պարտավորվում էր իր ներպետական օրենսդրությունը համապատասխանեցնել Լոզանի պայմանագրի հողվածներին, երաշխավորելով ոչ մահմեդական բնակչության կյանքի, գույքի, կրոնի, լեզվի, ինչպես նաև քաղաքացիական և քաղաքական իրավունքների պաշտպանությունը¹⁸: Թուրքական իշխանությունները պարտավորվում էին նաև ապահովել ոչ մահմեդական փոքրամասնությունների կրոնական հաստատությունների, մասնավորապես եկեղեցիների պաշտպանությունն ու պահպանությունը¹⁹:

Վերջապես որպես լրացուցիչ արժանահավատ ու անկողմնակալ փաստարկներ հայցադիմումին կարող են կցվել միջազգային ոչ կառավարական կազմակերպությունների՝ Խաղաղության կողմնակիցների համաշխարհային կոնգրեսի (1965թ.), Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի (1983, 1989թ.), Ժողովուրդների մշտական տրիբունալի (1984թ.), Ցեղասպանագետների միջազգային ասոցիացիայի (1997, 2005, 2007թ.), Երիտասարդների քրիստոնեական ասոցիացիայի (2002թ.), Նոբելյան մրցանակակիրների կազմակերպության (2007թ.) Հայոց ցեղասպանությունը ճանաչող ու դատապարտող բանաձևերը՝ այդ կառույցների ղեկավարների ուղեկցող նամակներով:

Վերընշված բաղադրիչների միջոցով փաստական հանգամանքների ու ապացույցների ներկայացումից ու իրավունքի տեսակետից դրանց գնահատական տալուց հետո հայցադիմումը պետք է եզրափակվի Հայոց ցեղասպանության իրագործմամբ հայ ժողովրդին հասցված

¹⁷ Տես նույն տեղում, էջ 211:

¹⁸ **Թորիկյան Շ.**, Հայկական հարցը և միջազգային օրենքը, էջ 186:

¹⁹ **Պասյան Ա.**, Հայոց պահանջատիրության իրավական հիմքերը (հողվածների ժողովածու), Եր., 2007, էջ 38:

կորուստներն ու դրանց հետևանքները արտահայտող դատարանին ներկայացվող պահանջներով: Կորուստները բաժանվում են հետևյալ խմբերի՝ ա.) հայրենագրվում, բ.) մարդկային կորուստներ, գ.) մշակութային ժառանգության կորուստ, դ.) նյութական կորուստներ, ե.) հոգեկան խեղումներ ու հոգեբանական բարդույթներ:

Ելնելով վերոգրյալից, Հայաստանն իր հայցադիմում դեռ մինչև վերջնական որոշման կայացումը դատարանից կարող է պահանջել նախ Թուրքիայի նկատմամբ կիրառել ժամանակավոր միջոցներ, հարկադրելով վերջինիս՝

1. դադարեցնել Հայոց ցեղասպանության ժխտողական քաղաքականությունը, որը կատարված հանցագործության շարունակությունն է, դրա նոր դրսևորումը, ինչը Ցեղասպանության մասին կոնվենցիայով այդ երկրի ստանձնած պարտավորությունների կոպիտ խախտում է;

2. կասեցնել իր Քրեական օրենսգրքի 301 հոդվածի գործողությունը:

3. օրինական ճանաչել թուրքական ռազմական տրիբունալների վճիռները և ուժը կորցրած համարել Քեմալի վարչակարգի կողմից այդ վճիռների վերանայման որոշումները;

4. դադարեցնել Առաջին աշխարհամարտի տարիներին հանցագործություններ կատարած անձանց հերոսացումը Թուրքիայի տարածքում՝ նրանց հրապարակայնորեն հայտարարելով հանցագործներ:

5. կատարել Լոզանի պայմանագրի 38-44-րդ հոդվածներով ստանձնած ոչ մահմեդական բնակչության իրավունքների պաշտպանության պարտավորությունները:

Իսկ որպես հիմնական պահանջներ Հայաստանի կողմից դատարանին կարող են ներկայացվել հետևյալները՝

1. ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնի հայ-թուրքական սահմանի սահմանագծման վերաբերյալ կայացրած իրավարար վճիռը ճանաչել որպես Հայոց ցեղասպանության գլխավոր հետևանքի՝ հայրենագրվման, հաղթահարման իրավական հիմք:

2. անօրինական համարել Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության պտուղներից օգտվելը, մասնավորապես ցեղասպանված հայերի ունեցվածքին տիրանալը, ինչից էլնելով հարկադրել Թուրքիային նյութական հատուցում տալ Հայոց ցեղասպանության զոհերի ու վերապրածների ժառանգներին կամ նրանց շահերի ու իրավունքների ներկայացուցիչներին: Հրապարակայնորեն դատապարտել Օսմանյան կայսրության կողմից ընդունված «Լքյալ գույքի մասին» օրենքը և Հայոց ցեղասպանության զոհերի ու վերապրածների ժառանգներին ու նրանց ներկայացուցիչներին տրամադրվելիք նյութական հատուցման իրավական մեխանիզմ ճանաչել Սևրի պայմանագրի 144-րդ հոդվածի համապատասխան դրույթները:

АРМЕН МАРУКЯН

Институт истории НАН РА

ОСНОВНЫЕ СОСТАВЛЯЮЩИЕ ВОЗМОЖНОГО ИСКОВОГО ЗАЯВЛЕНИЯ В МЕЖДУНАРОДНЫЙ СУД ПО ДЕЛУ ГЕНОЦИДА АРМЯН

Возможное исковое заявление – меморандум, который может быть представлен в Международный суд ООН по делу Геноцида армян может быть составлен на основе следующих документов: декларация держав Антанты от 24-ого мая 1915 года, документы турецких военных трибуналов по делу главарей младотурок, Севрский мирный договор, Арбитражное решение президента США Вудро Вильсона, статьи Лозаннского договора о защите прав немусульманского населения Турции, консультативное заключение авторитетных специалистов международного права от 2 августа 1929 года и другие.

После представления фактических обстоятельств и доказательств и их оценки с точки зрения права, исковое заявление должно завершиться представленными суду требованиями, которыми предусматривалось бы

преодоление последствий Геноцида армян и восстановление поправных прав армянского народа.

ARMEN MARUKYAN

Institute of history NAN RA

THE MAIN COMPONENTS OF THE POSSIBLE STATEMENT OF CLAIM IN THE INTERNATIONAL COURT OF JUSTICE IN THE MATTER OF THE GENOCIDE OF ARMENIANS

The possible statement of claim – the memorandum which can be brought into the International Court of Justice can be made by the UN in the matter of Genocide of Armenians on the basis of the following documents: the declaration of powers of the Entente of May 24th, 1915, documents of the Turkish military courts in the matter of leaders a mladoturok, the Sevres peace treaty, the Arbitral award of the U.S. President Woodrow Wilson, Article of the Lozansky contract on protection of the rights of the non-Muslim population of Turkey, the advisory opinion of authoritative experts of international law of August 2, 1929 and others.

After representation of the actual circumstances and proofs and their assessment from the point of view of the right, the statement of claim has to come to the end with the requirements presented to court by which overcoming of consequences of Genocide of Armenians and restoration of the violated rights of the Armenian people would be provided.

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Առաջին աշխարհամարտը և հայ ժողովուրդը. Պատմություն և արդիական խնդիրներ» միջազգային գիտաժողովի մասնակիցների

Առաջին համաշխարհային պատերազմի 100-ամյակի բոլորման կապակցությամբ համայն մարդկությունը, մասնավորապես՝ գիտական հանրությունը և քաղաքական շրջանակներն առանձնակի հետաքրքրություն են ցուցաբերում այդ խնդրի նկատմամբ: Նման հետաքրքրությունը պայմանավորված է ոչ միայն իրադարձության դարաբոլոր դառնալու հանգամանքով, այլև երկիր մոլորակի վրա մարդկության հետ տեղի ունեցած այդ աննախադեպ ծավալային ողբերգության իրողությունից դասեր քաղելու, Երկրորդ աշխարհամարտի կրկնության առեղծվածը խորությամբ հասկանալու և համանման նոր արհավիրքներից խուսափելու մտահոգությամբ: Այդ մտահոգությունն ավելի օրախնդիր է դառնում այսօր, երբ աշխարհը, հազիվ ձերբազատված սառը պատերազմի պայթյունավտանգ ժամանակներից, կրկին վերադառնում է Արևմուտք-Արևելք հակամարտության վտանգավոր դաշտ, կանգնում քաղաքակիրթ աշխարհ – իսլամական արմատականություն անխուսափելի բախման իրողության առջև:

Առաջին աշխարհամարտում զոհվել է ավելի քան 20,5 միլիոն մարդ, որից շուրջ 10 միլիոնը՝ ռազմի դաշտում: Իսկ 10,5 միլիոն կազմում են խաղաղ բնակիչներ: Պատերազմը տանուլ տված Գերմանական խմբավորման կորուստների մեջ 3,4 մլն խաղաղ բնակիչներից 2,8 միլիոնը վերաբերում էր Օսմանյան կայսրությանը: Դրա մեծ մասը բաժին է ընկել կայսրության քրիստոնյա ժողովուրդներին՝ 1,5 միլիոն հայերին,

500-800 հազարը՝ ասորիներին, 100-350 հազարը՝ հույներին: Այսինքն, բնակչության թվաքանակի համեմատությամբ ոչ մի ժողովուրդ չի ունեցել այնպիսի կորուստներ, ինչպիսին՝ հայությունը: Փաստն այն է, որ սին են բոլոր թուրք քաղաքական ու «գիտական» շրջանակների այն պնդումները, թե Օսմանյան կայսրության բոլոր ժողովուրդները, այդ թվում՝ թուրքերը պատերազմի ընթացքում հավասարապես կրել են մեծ կորուստներ:

Առաջին աշխարհամարտի արհավիրքները և հատկապես Հայոց ցեղասպանությունը ցնցեցին միջազգային հանրությանը: Համաշխարհային պատերազմի սարսափներն ու մասնավորապես Հայոց ցեղասպանությունն իր արտացոլումը գտավ ինչպես հայ, այնպես էլ օտար արվեստագետների, գրողների ստեղծագործություններում, որոնք իրենց բողոքի ձայնն էին բարձրացնում հայ ժողովրդի նկատմամբ կատարվող այդ հրեշավոր հանցագործության դեմ՝ պահանջելով միջազգային հանրությունից օգնության հասնել բարձր քաղաքակրթության կրող հայ ժողովրդին:

Հաղթանակած Անտանտի երկրները աշխարհին պարտադրեցին իրենց մշակած Վերսալ-Վաշինգտոնյան համակարգը: 1920 թ. այդ համակարգի մեջ փաստորեն ընդգրկվեցին նաև դաշնակից Հայաստանի Հանրապետության շահերը: Սևրի դաշնագրով, ապա՝ վիլսոնյան իրավարար վճռով Հայաստանին տրվում էին հողային այնպիսի սահմաններ, մասնավորապես՝ ելք դեպի Սև ծով, որով ցեղասպանության ենթարկված ժողովուրդը ստանում էր կենսագոյության ու զարգացման հնարավորություններ: Սակայն Առաջին համաշխարհային պատերազ-

մից հետո մնացած ամենաձանր հետևանքներից մեկը՝ Հայոց ցեղասպանության ու հայրենագրկման խնդիրը դեռևս լուծում չի ստացել:

Ելնելով վերընշվածից գիտաժողովի մասնակիցները գտնում են, որ

1. Հայոց ցեղասպանության իրագործմամբ հայ ժողովրդին հասցված վնասների ու կորուստների չհաղթահարման պատճառով հայությունն իր ուսերին շարունակում է կրել այդ հանցագործության հետևանքները, որոնք պայմանականորեն կարելի է բաժանել հետևյալ խմբերի՝ ա) հայրենագրկում, բ) մարդկային կորուստներ, գ) մշակութային ժառանգության կորուստ, դ) նյութական կորուստներ, ե) հոգեկան խեղումներ ու հոգեբանական բարդություններ:

2. Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարումը ոչ միայն համայն հայության իրավունքների վերականգնման ու Հայաստանի ազգային անվտանգության ապահովման կարևորագույն հարց է, այլ նաև սրբազան պարտք է Հայոց ցեղասպանության անմեղ զոհերի հիշատակի առաջ:

3. Թեև քաղաքական հանգամանքների բերումով Սևրի պայմանագիրն ու ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնի իրավարար վճիռը Հայոց ցեղասպանության իրագործումից անմիջապես հետո չկենսագործվեցին, սակայն այդ փաստաթղթերը մինչ օրս էլ չեն կորցրել իրենց արդիականությունն ու իրավական նշանակությունը:

4. Հայոց մեծ եղեռնի 100-րդ տարելիցից սկսյալ հայության գործելակերպի գլխավոր ուղղությունը պետք է դառնա այդ հանցագործության հետևանքների հաղթահարումը:

Երևան, 2 հոկտեմբերի 2014 թ.

ЗАЯВЛЕНИЕ

участников Международной научной конференции «Первая мировая война и армянский народ. История и актуальные проблемы»

В связи со 100-летием Первой мировой войны все человечество, в частности, научная общественность и политические круги, проявляют особый интерес к этой проблеме. Подобный интерес обусловлен не только тем, что после этого события прошел целый век, но и извлечением уроков из этой беспрецедентной по своей масштабности трагедии, произошедшей с человечеством на планете земля, более глубоким пониманием причин повторения Второй мировой войны, обеспокоенностью и стремлением избежать новых подобных катастроф. Эта обеспокоенность становится особенно актуальной сегодня, когда мир, едва миновав взрывоопасные времена холодной войны, вновь возвращается в опасное поле противостояния Запад - Восток, встает перед неизбежным столкновением цивилизованного мира и исламского радикализма.

В Первой мировой войне погибло более чем 20,5 миллионов человек из которых 10 миллионов – на полях сражений, а 10,5 миллионов – мирных жителей. В потерях проигравших войну стран германской группировки из 3,4 миллионов погибших мирных жителей 2,8 миллиона приходится на Османскую империю. Их большую часть составили христианские народы империи – 1,5 миллиона армян, 500-800 тысяч айсоров, 100-350 тысяч греков. То есть, по сравнению с численностью населения ни один народ не понес столько человеческих потерь, как армяне. Следовательно, тщетны утверждения турецких политических и «научных» кругов о том, что все народы империи, в том числе турки, во время войны понесли одинаковые человеческие потери.

Ужасы Первой мировой войны, и особенно Геноцид армян, потрясли мировую общественность, и не случайно эти события нашли свое отражение в творчестве как армянских, так и иностранных деятелей искусства, писателей, поднявших свой голос протеста против осуществлявшегося по отношению к армянскому народу чудовищного преступления, требуя прийти на помощь армянскому народу – носителю высоких цивилизационных ценностей.

После окончания войны страны-победительницы Антанты установили выработанную ими Версальско-Вашингтонскую мировую систему. В 1920 г. в этой системе фактически учитывались и интересы союзницы – Республики Армении. По Севрскому договору, а затем по Арбитражному решению Вудро Вильсона для Армении определялись такие границы, включая выход к Черному морю, которыми обеспечивались возможности жизнедеятельности и развития для пережившего геноцид армянского народа. Однако, самые тяжкие последствия Первой мировой войны для армянского народа – геноцид и патрицид (лишение родины) до сих пор не были преодолены.

Исходя из этого, участники научной сессии считают:

1. В результате непреодоления последствий геноцида – причиненных армянскому народу потерь армянство до сих пор несет на своих плечах последствия этого злодеяния: а) потеря родины, б) людские потери, в) потери культурного наследия, г) материальные потери, д) психические травмы и психологические комплексы.
2. Преодоление последствий Геноцида армян является не только важнейшей задачей для восстановления прав всего армянства и обеспечения безопасности Армении, но и священный долг перед памятью невинных жертв Геноцида армян.
3. Несмотря на то, что в результате политических обстоятельств, положения решения Севрского договора и Арбитражного решения президента США Вудро Вильсона не были осуществлены сразу же после совершения Геноцида армян, эти документы по сей день не потеряли своей актуальности и правового значения.
4. Начиная со 100-летней годовщины Геноцида армян главным направлением деятельности армянства должно стать преодоление последствий этого преступления.

Ереван, 2 октября 2014 г.

THE ANNOUNCEMENT

of the Participants of the International Conference “The First World War and the Armenians. History and Actual problems.”

On the occasion of the one hundred anniversary of World War I the whole humanity particularly scientific community and political circles focus their attention on that problem. This great interest is not only connected with the fact that it is one century anniversary of that event but people have already made their conclusions and learned a lot from that unprecedented dimensional tragedy, people have realized the mystery of the repetition of World War II and they have preoccupation to avoid new similar disasters. Nowadays, these preoccupations have become more topical because the world has hardly got rid of severe times of Cold War and has to return again the field of confrontation of West and East and face the unavoidable collision of civil world and Islamic fundamentalism.

More than 20,5 million people died during World War I. Approximately 10 million of them died in the field of war, and 10,5 million people were peaceful civilians. Among the loss of the Germany group who had lost the war from 3,4 million - 2,8 million people were peaceful civilians who relate with Ottoman Empire. The majority of them were Ottoman Christians: 1,5 million Armenians, 500-800 thousand Assyrians, and 100-350 thousand Greeks. As it is concluded, no nation had as great losses as the Armenians. The fact is that all the claims of Turkish political and scientific circles about the affirmation that Turks bore equal damage during the war are absolute lie.

The disasters of the World War I and particularly the Armenian Genocide shocked international community. The horrors of World War and Armenian Genocide found their reflection not only on Armenian but also on foreign artists, in the works of writers who protested against the monstrous crimes implemented towards Armenians. They demanded from international community to help Armenians.

Victorious Entente countries obliged the world their Versailles-Washington System. The interests of the allied Armenia were actually involved in that system in 1920. According to the Treaty of Sevres then according to the Arbitral Award of Woodrow Wilson land borders were defined for Armenia, particularly access to the Black Sea, due to which the victims of Armenian Genocide got opportunities for survival and development. But one of the most serious consequences remained after the World War I is the fact that the problem of Armenian Genocide and dispossession didn't find their solutions.

On the base of the above mentioned the participants of the international conference conclude that:

1. The damage and the loss that the Armenians had as a result of the implementation of the Genocide aren't overcome at present thus the Armenians continue to bear the consequences of that crime. These consequences can be conventionally divided into following groups: a) dispossession b) human loss c) loss of cultural heritage d) material losses e) psychological traumatized and psychological complexes.

2. The overcome of the consequences of the Armenian Genocide is not only an important issue for the restoration of the rights and the protection of Armenian security but it is our sacred duty towards the victims of Armenian Genocide.

3. Though under the political circumstances the Treaty of Sevres and the Arbitral Award of Woodrow Wilson weren't accomplished immediately after the Armenian Genocide, all those documents haven't lost their contemporary status and legal significance.

4. Starting from the one hundred commemoration of the Armenian Genocide the general direction of the actions of Armenians must be the overcoming of the consequences of the crime.

Yerevan, October 2, 2014

ԲՈՎԱՆՆԱԿՈՒԹՅՈՒՆ – СОДЕРЖАНИЕ – CONTENTS

ԱՇՈՏ ՄԵԼԿՈՆՅԱՆ – ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏ – ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊՊԱՆՈՒԹՅՈՒՆ. ՊԱՏՃԱՌՆԵՐ ԵՎ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ.....3

АШОТ МЕЛКОНЯН – ПЕРВАЯ МИРОВАЯ ВОЙНА – ГЕНОЦИД АРМЯН: ПРИЧИНЫ И ПОСЛЕДСТВИЯ.....11

ASHOT MELKONYAN - THE FIRST WORLD WAR AND THE ARMENIAN GENOCIDE: REASONS AND CONSEQUENCES.....12

ԳԵՂԱՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ – ՀԱՅ ԱՅԳԱՅԻՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՔՐ ՀԱՅՔՈՒՄ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՆԱԽՕՐՅԱԿԻՆ (1908-1914 ԹԹ.).....13

ГЕГАМ ОГАННИСЯН – ДЕЯТЕЛЬНОСТЬ АРМЯНСКИХ НАЦИОНАЛЬНЫХ ПАРТИЙ В МАЛОЙ АРМЕНИИ НАКАНУНЕ ПЕРВОЙ МИРОВОЙ ВОЙНЫ (1908-1914).....19

GEGHAM HOVHANNISYAN - THE ACTIVITY OF ARMENIAN NATIONAL POLITICAL PARTIES IN LESSER ARMENIA ON THE EVE OF THE FIRST WORLD WAR (1908-1914).....20

ՌՈՒԲԵՆ ՍՍՀԱԿՅԱՆ – ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՌՈՒՍ-ԹՈՒՐԿԱԿԱՆ ՌԱԶՄԱՃԱԿԱՏԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ21

РУБЕН СААКЯН – ЗНАЧЕНИЕ РУССКО-ТУРЕЦКОГО ФРОНТА В ПЕРВОЙ МИРОВОЙ ВОЙНЕ.....30

RUBEN SAHAKYAN – THE SIGNIFICANCE OF THE RUSSIAN-TURKISH FRONT DURING THE WORLD WAR I.....31

ՍՈՒՍԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ – ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ ՌՈՒՍ ԲԱՐՉՐԱՍՏԻՃԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ՀԵՏ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ.....32

СУСАННА ОВАНЕСЯН – ВСТРЕЧИ ТУМАНЯНА С ВЫСОКОПОСТАВЛЕННЫМИ ОФИЦЕРАМИ РУССКОЙ АРМИИ В ГОДЫ ПЕРВОЙ МИРОВОЙ ВОЙНЫ.....40

SUSANNA HOVHANNISYAN - TUMANYAN'S MEETINGS WITH RUSSIAN HIGH-RANKING MILITARY OFFICERS DURING THE FIRST WORLD WAR.....41

ՔՆԱՐԻԿ ԱՎԱԳՅԱՆ – ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԸ ԵՎ ԱՍԵՐԻԿԱՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ.....42

ԿՆԱՐԻԿ ԱՎԱԿՅԱՆ – ПЕРВАЯ МИРОВАЯ ВОЙНА И АМЕРИКАНСКИЕ АРМЯНЕ.....	52
KNARIK AVAKIAN - THE FIRST WORLD WAR AND THE ARMENIAN-AMERICANS.....	53
ՎԵՐՋԻՆԵ ՍՎԱԶԼՅԱՆ - ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԸ ԵՎ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ ԱԿԱՆԱՏԵՍ ՎԵՐԱՊՐՈՂՆԵՐԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ.....	53
ВЕРЖИНЕ СВАЗЛЯН – ПЕРВАЯ МИРОВАЯ ВОЙНА СОГЛАСНО СВИДЕТЕЛЬСТВАМ ОЧЕВИДЦЕВ.....	64
VERJINE SVAZLIAN – THE FIRST WORLD WAR ACCORDING TO THE TESTIMONIES OF THE EYEWITNESS SURVIVORS.....	64
ԻՆԳԱ ԱՎԱԳՅԱՆ – ՄԵՐ ԳՆԻԻ ՆԱՀԱՆՁԸ (ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՉՈՒՆՅԱՆ - ՀՈՎՀԱՆՆԻԲՍՅԱՆԻ ՀՈՒՇԱՊԱՏՈՒՄԸ).....	65
ИНГА АВАГЯН - ОТСТУПЛЕНИЕ НАШЕГО ПОЛКА (МЕМУАРЫ ОВАНЕСА ОВАННИСЯНА-ТРЧУНЯНА).....	74
INGA AVAGYAN - THE RETREAT OF OUR REGIMENT (MEMORIES OF HOVNANNES HOVNANNISYAN-TRCHUNYAN).....	75
ԱՐՄԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ - ԱՐԵՎՍՏԱՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԳԱՎԱՌՈՒՄ 1914-1918 թթ.....	76
АРМЕН АЙРАПЕТЯН - ЗАПАДНОАРМЯНСКИЕ БЕЖЕНЦЫ В АЛЕКСАНДРАПОЛЬСКОМ УЕЗДЕ В 1914-1918гг.....	84
ARMEN HAYRAPETYAN - WESTERN ARMENIAN'S MIGRATION IN THE PROVINCE OF ALEXANDRAPOL (1914-1918).....	85
ՎԱՐԻՆԵ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ - ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՕԺԱՆԴԱՎՈՒԹՅՈՒՆՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԳԱՎԱՌՈՒՄ ԱՊԱՍՏԱՆԱԾ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻՆ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ.....	86
КАРИНЕ АЛЕКСАНИЯН - СОДЕЙСТВИЕ ОБЩЕСТВЕННЫХ СТРУКТУР БЕЖЕНЦАМ ПРИЮТИВШИХСЯ В АЛЕКСАНДРАПОЛЬСКОЙ ГУБЕРНИИ В ГОДЫ ПЕРВОЙ МИРОВОЙ ВОЙНЫ.....	97
KARINE ALEKSANYAN - THE ASSISTANCE PROVIDED BY PUBLIC INSTITUTIONS TO REFUGEES SHELTERED IN THE PROVINCE OF ALEXANDROPOL DURING THE FIRST WORLD WAR.....	98
ՆՈՐԱՅՐ ՍԱՐՈՒԿՅԱՆ - «АРМЯНСКИЙ ВЕСТНИК» ՊԱՐԲԵՐԱԿԱՆԸ (ՇԱԲԱԹԱԹԵՐԹԸ) ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԵՎ	

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ.....	98
НОРАЙР САРУХАНИЯН - ОСВЕЩЕНИЕ ПЕРВОЙ МИРОВОЙ ВОЙНЫ И АРМЯНСКОГО ВОПРОСА В ПУБЛИКАЦИЯХ ЕЖЕНЕДЕЛЬНИКА «АРМЯНСКИЙ ВЕСТНИК».....	105
NORAYR SARUKHANYAN - PUBLICIZING OF THE FIRST WORLD WAR AND THE ARMENIAN QUESTION IN PUBLICATIONS OF THE “ARMYANSKY VESTNIK” WEEKLY.....	106
АЛЕКСАНДР ШУБИН - ОСМАНСКОЕ НАСТУПЛЕНИЕ 1917-1918 ГГ.....	106
ALEXANDER SHUBIN - OTTOMAN AGGRESSION OF 1917-1918.....	117
АНУШАВАН ЗАКАРЯН - СВИДЕТЕЛЬСТВО РУССКОГО ПИСАТЕЛЯ – ОЧЕВИДЦА ТРАГИЧЕСКИХ СОБЫТИЙ В БАКУ 1918 Г.....	118
ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ - ԲԱՔՎԻ 1918 Թ. ՈՂԲԵՐԳԱԿԱՆ ԴԵՊՔԵՐԻ ԱԿԱՆԱՏԵՍ ՌՈՒՄ ԳՐՈՂԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ.....	125
ANUSHAVAN ZAKARYAN - THE TESTIMONY OF THE RUSSIAN WRITER, THE WITNESS OF THE BAKU 1918 TRAGIC EVENTS.....	126
ԱՆԱՀԻՏ ԽՈՍՐՈՒԵՎԱ - ԱՍՈՐԻՆԵՐԻ ԿՈՏՈՐԱԾՆԵՐՆ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1914-1918 թթ.). «ՄՈՌԱՑՎԱԾ» ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ.....	127
АНАИТ ХОСРОЕВА - РЕЗНЯ АССИРИЙЦЕВ В ОСМАНСКОЙ ИМПЕРИИ ВО ВРЕМЯ ПЕРВОЙ МИРОВОЙ ВОЙНЫ (1914-1918 ГГ.). ЗАБЫТЫЙ ГЕНОЦИД.....	133
АНАИТ KHOSROEVA - THE ASSYRIAN MASSACRES IN THE OTTOMAN EMPIRE DURING THE FIRST WORLD WAR. FORGOTTEN GENOCIDE.....	134
ԳԵՎՈՐԳ ՊՈՂՈՍՅԱՆ - ՀԱՅԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎԴԴԱԳՐԱԿԱՆ ԿԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ԺԱՄԱՆԱԿ (ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԵՎՍՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ).....	135
ГЕВОРК ПОГОСЯН - СОЦИАЛЬНО-ДЕМОГРАФИЧЕСКОЕ СОСТОЯНИЕ АРМЯН ВО ВРЕМЯ ПЕРВОЙ МИРОВОЙ ВОЙНЫ (ОСМАНСКАЯ ИМПЕРИЯ И ЗАПАДНАЯ АРМЕНИЯ).....	141
GEVORG POGHOSYAN - SOCIAL AND DEMOGRAPHIC SITUATION OF ARMENIANS DURING THE WORLD WAR I (OTTOMAN EMPIRE AND WESTERN ARMENIA).....	142
ԼԵՎՈՆ ՇԻՐԻՆՅԱՆ - ԲԱԼԿԱՆՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ ԵՎ ԱՐԵՎՍՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ (ԵՐԿՐԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԷՏՅՈՒԴ).....	143

ЛЕВОН ШИРИНЯН - БАЛКАНСКИЕ ВОЙНЫ И ЗАПАДНАЯ АРМЕНИЯ (ГЕОПОЛИТИЧЕСКИЙ ЭТЮД).....	151
LEVON SHIRINYAN - BALKAN WARS AND WESTERN ARMENIA (GEOPOLITICAL ETUDE).....	152
ՀԱՅԿ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ - «ՄԻՋԻՆ ԵՎՐՈՊԱՅԻ» ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱԴՐԸ ԵՎ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԸ.....	153
АЙК СУКИАСЯН - НЕМЕЦКАЯ КОНЦЕПЦИЯ "СРЕДИННОЙ ЕВРОПЫ" И ПЕРВАЯ МИРОВАЯ ВОЙНА.....	157
HAJK SUKIASYAN - THE GERMAN CONCEPT OF "MIDDLE EUROPE" AND THE FIRST WORLD WAR.....	158
ԳՍՅԱՆԵ ՄԱՍՍՈՒՐՅԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆԸ ՈՒ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԱՄԵՒ- 1917-1918 ԹԹ. ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՈՐՏՈՒՄ.....	158
ГЯНЭ МАХМУРЯН - АРМЕНИЯ И АРМЯНСКИЙ ВОПРОС В ПОЛИТИКЕ США 1917-1918 ГГ.....	170
GAYANE MAKHMOURIAN - ARMENIA AND ARMENIAN QUESTION IN THE U.S. POLICY OF 1917-1918.....	170
ՖԵԼԻՔՍ ՍՈՎՍԻՍՅԱՆ - ԱՐԵՎՍՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱ- ՄԱՐՏԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՈՐՏՈՒՄ.....	171
ФЕЛИКС МОВСИСЯН - ЗАПАДНАЯ АРМЕНИЯ В СФЕРЕ ВНЕШНЕЙ ПОЛИТИКИ РОССИИ В ГОДЫ ПЕРВОЙ МИРОВОЙ ВОЙНЫ.....	182
FELIKS MOVSISYAN - WESTERN ARMENIA IN THE YEARS OF THE FIRST WORLD WAR IN THE FIELD OF RUSSIAN AFFAIRS.....	183
ԼԻԼԻԹ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ - 1915-1916 ԹԹ. ԱՆԳԼՈ-ՖՐԱՆՍ-ՌՈՒՍԱԿԱՆ ԳԱՂՏԻ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ՀԵՏԵՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅ ՊԱՍՏԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ.....	183
ЛИЛИТ ОГАНЕСЯН - ОСВЕЩЕНИЕ АНГЛО-ФРАНКО-РУССКИХ ТАЙНЫХ ПЕРЕГОВОРОВ 1915-1916 ГГ. В ПОСТСОВЕТСКОЙ АРМЯНСКОЙ ИСТОРИОГРАФИИ.....	192
LILIT HOVNANNISYAN - THE INTERPRETATION OF 1915-1916 ANGLO- FRENCH-RUSSIAN SECRET NEGOTIATIONS IN POST-SOVIET ARMENIAN HISTORIOGRAPHY.....	192
ՀԱՍՈ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ - ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ	

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ՊԱՏՎԻՐԱԿՆԵՐԻ ՕՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ (1918 Թ. ՀՈՒՆԻՍ-ՆՈՅԵՄԲԵՐ).....	193
АМО СУКИАСЯН - ОСВЕЩЕНИЕ ДЕЯТЕЛЬНОСТИ ДЕЛЕГАЦИИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ В КОНСТАНТИНОПОЛЕ В ДНЕВНИКАХ ДЕЛЕГАТОВ (ИЮНЬ-НОЯБРЬ 1918 Г.).....	204
НАМО SUKIASYAN - THE ELUCIDATION OF THE ACTIVITY OF DELEGATION OF REPUBLIC OF ARMENIA IN CONSTANTINOPLE IN THE DELEGATES' DIARIES (JUNE - NOVEMBER, 1918).....	204
ТАТЬЯНА РЫБАЛЬЧЕНКО - АРМЯНСКИЙ КОД В РОМАНЕ Д.М. ТОМАСА «АРАРАТ».....	205
TATIANA RYBALCHENKO - ARMENIAN CODE IN THE NOVEL OF D.M. THOMAS "ARARAT".....	215
ԴԱՎԻԹ ԳԱՍՊԱՐՅԱՆ - ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՑՈՒՄԸ ԱՆԳԼՎԱԳԻՐ ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԻ ԵՐԿԵՐՈՒՄ.....	216
ДАВИД ГАСПАРЯН - ОТРАЖЕНИЕ АРМЯНСКОГО ГЕНОЦИДА В ТВОРЧЕСТВЕ АНГЛОЯЗЫЧНЫХ АРМЯНО-АМЕРИКАНСКИХ ПИСАТЕЛЕЙ.....	237
DAVID GASPARYAN - THE REFLECTION OF THE ARMENIAN GENOCIDE IN THE WORKS OF THE AMERICAN-ARMENIAN WRITERS.....	238
ՎԱՀԱՆ ԱՂԱԲԱԲՅԱՆ - ԵՂԵՌԻ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ ՄԵՐՈ ԽԱՆԶԱԴՅԱՆԻ «ՄԵՌԱՍՏԵՐԸ ՀԻՇՈՒՄ ԵՆ» ՎԻՊԱԿՈՒՄ.....	238
ВАГАН АГАБАБЯН - ТЕМА ГЕНОЦИДА В ПОВЕСТИ С. ХАНЗАДЯНА «МЕРТВЫЕ ПОМНЯТ».....	246
VAHAN AGHAVABYAN - ECHOES OF GENOCIDE IN SERO KHANZADYAN'S "THE DEADS REMEMBER" NOVELETTE.....	247
ՍՈՒՍԱՆՆԱ ԱԲԱԶՅԱՆ - ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹՈՒՐԲ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ.....	247
СУСАННА АБАЗЯН - ОТГОЛОСКИ ГЕНОЦИДА АРМЯН В СОВРЕМЕННОЙ ТУРЕЦКОЙ ЛИТЕРАТУРЕ.....	255
SUSANNA ABAZYAN - THE ECHO OF THE ARMENIAN GENOCIDE IN THE MODERN TURKISH LITERATURE.....	256
ԱՆՆԱ ԱՍՏՏՐՅԱՆ - ԵՐԳԻՉ ԳԼԴԱՊԵՏԸ ՎԱՀԱՆ ՏԵՐ-ԱՌԱՔԵԼՅԱՆ.....	256
АННА АСАТРЯН - ПЕВЕЦ-ПОЛКОВНИК: ВААН ТЕР-АРАКЕЛЯН.....	267

ANNA ASATRYAN - THE SINGER COLONEL: VAHAN TER-ARAQELYAN	268
ԱՐՄ ՆԱԿՈՒԹՅԱՆ - ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ԱՐՏԱՑՈՆՈՒՄԸ ՎԱՐԴԱՆ ՄԱՆՈՒԹՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԵԶ.....	269
АРА АКОПЯН - ОТРАЖЕНИЕ ГЕНОЦИДА АРМЯН В ПРОИЗВЕДЕНИИ ВАРДАНА МАХОХЯНА	274
ARA HAKOBYAN - THE IMPRESSION OF GREAT ARMENIAN GENOCIDE ON VARDAN MAKHOKHYAN'S WORK	275
ԴԱՎԻԹ ԹԵՐԼԵՄԵՅԱՆ - ՎՈՒՏԵՐ ԲԱԽՄԱՆԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ.....	276
ДАВИД КЕРТМЕНДЖЯН - ИССЛЕДОВАТЕЛЬСКОЕ ПУТЕШЕСТВИЕ ВАЛЬТЕРА БАХМАНА И ЕГО ЗНАЧЕНИЕ В ИЗУЧЕНИИ АРМЯНСКОЙ АРХИТЕКТУРЫ	283
DAVID KERTMENJIAN - THE TRAVEL RESEARCH OF WALTER BACHMANN AND ITS INDICATION FOR THE STUDIES OF ARMENIAN ARCHITECTURE	284
ՄԵՐԻ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ - ՓԱՆՈՍ ԹԵՐԼԵՄԵՅԱՆԸ ԵՎ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԸ.....	287
МЕРИ КИРАКОСЯН - ФАНОС ТЕРЛЕМЕЗЯН И ПЕРВАЯ МИРОВАЯ	295
MERI KIRAKOSYAN - PANOS TERLEMEZYAN AND THE FIRST WORLD WAR	296
ԱՆԱՀԻՏ ԱՍՏՈՅԱՆ - ՀԱՅԵՐԻ ՈՒՆԵԶՐԿՄԱՆ ԹԵՄԱՆ ԹՈՒՐԲ ՊԱՄԱՐԱՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ.....	297
АНАИТ АСТОЯН - ТЕМА ЭКСПРОПРИАЦИИ АРМЯН В ИСЛЕДОВАНИЯХ ТУРЕЦКИХ ИСТОРИКОВ	304
ANAHIT ASTOYAN - THE TOPIC OF EXPROPRIATION OF ARMENIANS IN THE WORKS OF TURKISH HISTORIANS	305
ՔՐԻՍՏԻՆԵ ՄԵԼԿՈՆՅԱՆ - ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ (1945-1947 ԹԹ.).....	305
КРИСТИНЕ МЕЛКОНЯН - ГЕНОЦИД АРМЯН В ДОКУМЕНТАХ ОРГАНИЗА- ЦИЙ АРМЯНСКОЙ ДИАСПОРЫ (1945–1947 ГГ.)	314
CHRISTINE MELKONYAN - THE ISSUE OF THE ARMENIAN GENOCIDE IN THE DOCUMENTS OF THE ORGANIZATIONS OF THE ARMENIAN DIASPORA (1945–1947)	314

ԱՐՄԵՆ ՄԱՐՈՒԿՅԱՆ - ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՎ ՄԱԿ-Ի ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՏԱՐԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼԻՔ ՀԱՅՑԱԴԻՍՈՒՄԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱՂԱԴԻՉՆԵՐԸ.....	315
АРМЕН МАРУКЯН - ОСНОВНЫЕ СОСТАВЛЯЮЩИЕ ВОЗМОЖНОГО ИСКОВОГО ЗАЯВЛЕНИЯ В МЕЖДУНАРОДНЫЙ СУД ПО ДЕЛУ ГЕНОЦИДА АРМЯН	325
ARMEN MARUKYAN - THE MAIN COMPONENTS OF THE POSSIBLE STATEMENT OF CLAIM IN THE INTERNATIONAL COURT OF JUSTICE IN THE MATTER OF THE GENOCIDE OF ARMENIANS	326
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ «Առաջին աշխարհամարտը և հայ ժողովուրդը. Պատմություն և արդիական խնդիրներ» միջազգային գիտաժողովի մասնակիցները	327
ЗАЯВЛЕНИЕ участников Международной научной конференции «Первая мировая война и армянский народ. История и актуальные проблемы»	330
THE ANNOUNCEMENT of the Participants of the International Conference “The First World War and the Armenians. History and Actual problems”	332